

ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅԻՎ

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ,  
ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ,  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Սուրբ Էջմիածին

2016

1

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ՔԱՐԵՔԻՆ Բ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՏԴ 27

ԳՄԴ 86.37

**Ադամ քահանա Մակարյան**

**Ա 191** Ոչ միայն հացիվ. կրոնական հարցեր, արդիական խնդիրներ, քրիստոնեական պատասխաններ / Ադամ քահանա Մակարյան:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հեղինակային հրատարակություն, 2016. 443 էջ:

Գիրքը ներկայացնում է արդիական խնդիրների ու երևույթների վերաբերյալ քրիստոնեական տեսակետներ, դիրքորոշումներ՝ Սուրբ Գրքի, եկեղեցական հեղինակների, ինչպես և տարբեր Եկեղեցիների Սոցիալական հայեցակարգի հիմունքների և ընդունված եկեղեցական փաստաթղթերի հիման վրա: Նախատեսված է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատացյալների, ինչպես նաև ժամանակակից իրողությունների վերաբերյալ քրիստոնեական տեսակետներով և հոգևոր ուսուցումներով հետաքրքրվողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 27  
ԳՄԴ  
86.37

ISBN 978-9939-0-1686-3

© Ադամ քահանա Մակարյան, 2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....	6
ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԻ, ԴՐԱ ՀԱՆԴԵՊ ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ .....	9
ՀԱՎԱՏՔԻ, ԴՐԱ ԷՈՒԹՅԱՆ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԻ ՄԱՍԻՆ .....	14
ԱՍՏՕՈ ԱՆՎԱՆ ԵՎ ԷՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	22
ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ՊԱՍԻՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	29
ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	39
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	47
ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՎԻՃԵՑՄԱՆ, ՓՈԽՆԱԿ (ՍՈՒՐՈԳԱՏ) ՄԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	57
ՕՐԳԱՆՆԵՐԻ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ .....	76
ԷՖԹԱՆԱԶԻԱ. ՄԱՐԴԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՀՈՒՄԱՆԻԶՄ .....	82
ԴԻԱԿԻԶՈՒՄ .....	88
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԵԴԻԱ ԵՎ ՄԻՋԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	103
ԷԿՈԼՈԳԻԱ. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՄԱՍԻՆ .....	113
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	123
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ .....	136
ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ .....	147
ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ .....	157
ԷԿՈՒՄԵՆԻԶՄ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ .....	164
ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ .....	177
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ, ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ .....	184
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ....	193
ԿԻՆԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ .....	200
«ԱԶԳ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	209
ՅՈԳԱՅԻ ՄԱՍԻՆ .....	220

ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ .....	232
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ .....	239
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	250
ՆԱՐԵԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ .....	259
ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ՝ ԳԻՐՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ .....	263
ՍՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՇՏԱՐՄՈՒՆՔ .....	271
ՈԳԻՆԵՐԻ ԵՎ ՈԳԵՀԱՐՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	279
ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ .....	288
ԱՍՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ, ՋՈՒՅԳԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՍՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	298
ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ԱՍՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ .....	308
ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	318
ԳՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ .....	322
ԼԻՆԵԼ ՀՈԳԵՎՈՐ ԱՆՁՆԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ .....	327
ԱՂՈԹՔ .....	334
ԽԱՉԻ ՄԱՍԻՆ .....	342
ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ .....	349
ՎԱԽ ԵՎ ԵՐԿՅՈՒՂ .....	359
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍԻՐՈ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԹՂԹՈՒՄ .....	365
ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ԻՄԱՍՏԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ .....	371
ՏԱՌԱՊԱՆՔ ԵՎ ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ. ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ .....	380
ԵՐԴՈՒՄ .....	388
ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	393
ՆԱԽԱՆՁԻ ԵՎ ԽԱՆԴԻ ՄԱՍԻՆ .....	399
ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ .....	411
ԲԱՄԲԱՍԱՆՔ .....	418
ՅՈԹ ՄԱՀԱՅՈՒ ՄԵՂՔԵՐ .....	424
ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	435

## ԱՌԱՋԱԲԱՆ

«Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր միածին Որդուն տվեց աշխարհի փրկության համար» (Յովհ. 3.16): Քրիստոս Իր փրկագործությամբ պարզեց նաև Իր վարդապետությունը, որը վեհագույն սկզբունքներ է հաստատում մարդկության կյանքում, ամրապնդում ճշմարիտ աստվածաշտությունը, նորովի բացահայտում Աստծո մեծագույն սերն արարչագործության հանդեպ: Քրիստոսի առաքյալները Տիրոջ ուսմունքի հիման վրա Սուրբ Յոզու ներշնչումներով ուսուցումներ, խրատներ ու հորդորներ ուղղեցին հավատացյալներին իրենց թղթերի միջոցով, որոնք ամփոփված են Նոր Կտակարանում: Եկեղեցու Սուրբ Յայրերը, եկեղեցական նշանավոր հեղինակները Սուրբ Գրքի, Տիրոջ վարդապետության պատգամներն իրենց գրվածքներով մատուցեցին հավատացյալներին, ողջ աշխարհին:

Ժամանակների փոփոխմամբ քրիստոնեական վարդապետությունը նոր տեսանկյուններով անդրադարձավ անձին, աշխարհին, մարդկությանը վերաբերող հարցերին, արտահայտվեց նաև այլ ձևակերպումներով, նոր բառապաշարով: Մարդկության պատմության մեջ հատկապես 20-րդ դարից սկսած և մանավանդ 21-րդ դարում աննախընթաց կերպով զարգացան գիտության տարբեր ճյուղերը՝ տեխնոլոգիաները, բժշկագիտությունը, կենսաբանության ոլորտը և այլն: Այդ իրողությունը, աշխարհում դրական դերակատարությամբ հանդերձ, մեծապես ազդեց մարդու մտածելակերպի, աշխարհայացքի, վարքագծի վրա: Ձևավորվեցին նոր փոխհարաբերություններ, առաջ եկան նաև տարբեր խնդիրներ, որոնք առնչվում են բարոյականությանը, էթիկային, ինչպես և կրոնի հանդեպ վերաբերմունքին, աշխարհիկ ու նյութական երևույթների բացարձականացմանը, հոգևոր արժեքների անտեսմանը և այլն: Այս իրադրության մեջ անհրաժեշտ դարձավ աստվածաշնչյան և հոգևոր գրականության հիմնավորումներով

պատասխաններ տալու արդիական խնդիրներին, ինչպես նաև նոր պայմանների նկատառումով բացատրելու մարդ և Աստված հարաբերությունների, մարդկային վարվեցողության, քրիստոնեական բարոյականության ուսուցումները: Այսպիսով, հավատացյալը կարիք ունի ոչ միայն հոգևոր-խրատական, ջատագովական, քարոզչական խոսքի ու գրականության, այլև ներկային, կրոնին առնչվող արդիական հարցերի պատասխանների:

Այս գրքում ամփոփված են մարդու, շրջակա աշխարհի, միջանձնական փոխհարաբերությունների, գիտության զարգացմամբ ի հայտ եկած խնդիրների, արդիական երևույթների վերաբերյալ հոգևոր տեսակետներ, ուսուցումներ, դիրքորոշումներ: Մարդկային հարաբերություններին, կյանքի տարբեր կողմերին վերաբերող հարցեր, որոնք լայնորեն մեկնաբանված են Եկեղեցու Սուրբ Չայրերի կողմից, այստեղ ներկայացված են նոր պայմանների և հասկացությունների, աշխարհում տիրող ներկա իրավիճակի նկատառումով:

Գրքի շարադրանքը զգալի չափով բովանդակում է «Լույս» հեռուստաընկերության հետ միասին պատրաստած «Ոչ միայն հացիվ» հաղորդաշարի ընթացքում տրված հարցերն ու դրանց պատասխանները: Սակայն հրատարակության համար դրանք լրամշակվել են, ավելացվել են նաև նոր թեմաներ և ուսումնասիրություններ, որոնք հատկապես վերաբերում են քրիստոնեությանն ու հոգևոր կյանքին առնչվող ժամանակակից երևույթներին: Գրքի շարադրանքը կազմված է հիսուն թեմաներից և համապատասխան վերնագրերից, դրանց ներքո գտնվող հարցերից ու պատասխաններից: Ըստ ասելիքի տարողունակության՝ հարցերը և տրված պատասխանները հինգից ութն են, որոնք ծավալվելով՝ համապատասխան պատկերացում են տալիս տվյալ թեմայի ու դրա հետ կապված խնդիրների, դրանց սուրբգրական առնչությունների, քրիստոնեական տեսակետների մասին:

Լիահույս ենք, որ այս ձեռնարկը պիտի նպաստի քրիստոնեական դիրքորոշումների վերաբերյալ իմացությանը,

հոգևոր-կրոնական գիտելիքների զորացմանը և կօզնի մեր Սուրբ Եկեղեցու հավատացյալներին՝ կողմնորոշվելու ժամանակակից աշխարհի բազմազան իրողություններում քրիստոնեական կենցաղավարություն, մեր Տեր Հիսուս Քրիստոսի վարդապետությանը հավատարիմ ապրելակերպ հաստատելու գործում:

Ադամ քահանա Մակարյան

## **ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԻ, ԴՐԱ ՀԱՆԴԵՊ ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՔԻ ՄԱՍԻՆ**

### **1. Կյանքի իմաստի մասին խոսելիս հաճախ ծագում է մեկ այլ հարց, իսկ ի՞նչ է կյանքը:**

Կյանքը, գիտության տեսակետով, մատերիայի գոյության գործուն ձևն է և այն հատկանիշը, որը տարբերակում է ազդանշան տալու, զգալու, սեփական գոյությունը զարգացնելու հատկություններն ունեցողներին այդ հատկությունները չունեցողներից: Գիտության ճյուղերից այս հարցով հիմնականում զբաղվում է կենսաբանությունը: Ըստ Աստվածաշնչի՝ կյանքն Աստծո պարզևն է՝ կենդանության շնչով օժտված արարածների և նրանց բնականության ու գոյության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումով: Սուրբ Գիրքն ուսուցանում է, որ կյանքի հեղինակը, շնորհատուն Աստված է և «կյանք» հասկացությունը նախ բացատրում է կենդանության շունչ ունենալու հատկությամբ: Այդ հատկությունն ունեցող ջրային, ցամաքային, օդային արարածները ստեղծվել են Աստծո ստեղծարար խոսքով, որը զորություն ունի անգոյությունից գոյավորման բերելու և արարելու (Ծննդ. 1.20-25): Նույն կերպ ստեղծվել է նաև մարդը, որը համարվում է արարչագործության պսակը, քանզի արարվել է ըստ Աստծո պատկերի և նմանության (Ծննդ. 1.26-27): Տիեզերքը և կյանքի գոյությունն ունեցող արարածներին աստվածային խոսքով ստեղծելու իրողությունն աստվածաբանության մեջ կապվում է Քրիստոսի հետ, ով կոչվում է Աստծո Խոսք, Բան, ինչպես հայտնում է նաև Հովհաննես Ավետարանիչը (Հովհ. 1.1-3):

### **2. Երբ ասում ենք «կյանքի իմաստ», նկատի ունենք անհատի՞ կյանքը, թե՞ կյանքն ընդհանուր առմամբ:**

Կյանքն առանձին գոյություն չունի, այն կայանում է արարածների վրա, ինչպես որ ժամանակը, ըստ իս, անկախաբար գոյություն չունի, այլ կայանում է միայն իրերի ու էակների շարժումային փոփոխությամբ: Կյանքի իմաստն Աստծուն հաճելի լինելու մեջ է (Հռոմ. 11.36, Ա Թեսաղ. 4.1), և աստվածահաճո կյանքն է, որ մեզ երջանկություն ու ներդաշնակութ-

յուն է բերուն, արժանի դարձնում նաև հավիտենական կյանքի: Իհարկե, ամեն մարդ անհատաբար նախ իր կյանքի իմաստի մասին է խորհում, սակայն կյանքի իմաստ ասելով՝ կարող ենք հասկանալ նաև հավաքական կյանքը, այսինքն՝ հասարակական, պետական, համամարդկային: Կյանք հասկացության այս երկու իմաստները փոխշաղկապված են այն առումով, որ յուրաքանչյուր մարդ իր կյանքով պիտի նպաստի համընդհանուր կյանքի բարօրությանն ու բարեկեցությանը: Այդ իրողությունը երևում է հատկապես ընտանիքում, երբ միասնականության մեջ է իմաստավորվում կյանքը: Ահա այդպես ավելի լայն ըմբռնումով պետք է ընկալվի կյանքի իմաստը, նպատակները, գործերը՝ անձնականից վեր բարձրանալով դեպի համընդհանուրը:

### **3. Ինչո՞ւ Աստված ստեղծեց մարդուն:**

Կիրակի օրվանից հաշված՝ շաբաթվա վեցերորդ՝ ուրբաթ օրը, արարչության վեցերորդ օրվան և Քրիստոսի խաչելության օրվան նվիրված շարականը (հեղինակը Սուրբ Ներսես Շնորհալին է) գեղեցիկ կերպով ասում է, որ Իր բնությամբ բարի Աստված, չհանդուրժելով, որ միայն Ինքն ունի բարին ու բարիքը, Իր պատկերով մարդ ստեղծեց՝ նրան ևս բարիքներ տալու համար: Աստվածային սերն է պատճառը մարդու, աշխարհի գոյության, որովհետև իրական սերն ինքնանպատակ չէ, այլ տարածվող է դեպի ուրիշները: Կան սիրո տարբեր դրսևորումներ, որոնք արտահայտվում են եսասիրական, շահամոլական, սեփական անձի օգտին առնչվող միտումներով: Սակայն սիրո բարձրագույն դրսևորումը հատկությունն ունի տալու, տարածվելու, և սիրո այս բարձրագույն արտահայտությունն է աստվածային սերը: Այդպիսի սերը նաև զոհաբերվող է, անձնվիրումի, անգամ հանուն մեկ ուրիշի կատարված անձնագոհության գործողություններով: Այդպիսի սիրո մասին է խոսում Հովհաննես Ավետարանիչը՝ ցույց տալով մարդկության հանդեպ աստվածային սերը. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը. որովհետև Աստված Իր Որդուն չու-

ղարկեց աշխարհ, որ դատապարտի աշխարհը, այլ որպեսզի աշխարհը նրանով փրկվի» (3.16-17): Ահա այդ սիրով է, որ իրականացվեց նաև Քրիստոսի փրկագործությունը հանուն մարդկության փրկության, և այդ սիրով Աստված մարդուն արժանացրեց հավիտենական կյանքի, հնարավորություն ընծայեց երկնքի արքայությունը ժառանգելու:

**4. Կյանքն իմաստ ունի այն պահից, երբ մեզ տրվում է, թե՞ մենք ենք այն իմաստավորում:**

Կյանքը միշտ իմաստ ունի, բայց սկզբնավորման պահից այն իմաստ ունի այլոց համար, իսկ անձի համար՝ միայն գիտակից դառնալուց հետո, քանզի իմաստն առանց գիտակցության հնարավոր չէ ընկալել: Կյանքն իմաստավորելը նաև նշանակալի ինչ-որ բանով կյանքն արժևորելն է: Կյանքի իմաստավորումը աստվածահաճո ընթացքի, գործերի միջոցով է կայանում, չնայած որ մեղսասեր մարդիկ կարծում են, թե կյանքի իմաստը մեղավոր հաճույքների, վայելքների մեջ է: Սա նշանակում է, որ մենք ենք իմաստավորում մեր կյանքը՝ կախված հավատքից, բարոյական ընկալումներից, կրթվածությունից, ինչպես և շրջապատի, հասարակության ազդեցությունից, գերիշխող պատկերացումներից և անգամ պայմաններից բխող թելադրանքներից: Հետևաբար, հաճախ մարդու կողմից իր կյանքի իմաստի փնտրտուքը կամ կյանքի իմաստի ճշգրտումը միայն անհատական նշանակություն չունի, այլ կրում է տարբեր գործոնների կնիքը:

**5. Ինչպե՞ս կարելի է հասկանալ այն մարդկանց, որոնց համար կյանքի իմաստը մահվան մեջ է:**

Քրիստոնեական տեսակետով կարելի է ասել, որ այս երկրային կյանքի իմաստն աստվածահաճո կերպով ապրելով և մահվամբ հավիտենական կյանք անցնելու ու հավերժական երանությանն արժանանալու մեջ է: Դավիթ Անհաղթը Պլատոնի նման ուսուցանում էր, որ փիլիսոփայությունն Աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության և մտածում է մահվան մասին: Սակայն այլ տեսակետից կարող ենք խոսել ինք-

նասպանների մասին, որոնց համար ոչ թե կյանքի իմաստը, այլ կյանքի վերջնական նպատակը մահվան մեջ է, ինչը դատապարտելի է: Հավատացյալի համար այս կյանքն արհամարհելու և միմիայն մահվամբ հավիտենություն անցնելու մասին մտորելու, այս կյանքի իրողություններին ընդհանրապես անհաղորդ լինելու վարմունքը ևս անընդունելի է: Կյանքը մեծագույն պարգև է՝ Աստծո կողմից շնորհված, և պետք է այն ապրել բարեպաշտ ընթացքով, ինչու չէ, նաև հաճույք ստանալով կյանքի շնորհած բարիքներից, ընտանեկան կյանքից, մարդկանց հետ ազնիվ հաղորդակցությունից, օգտակար գործերի իրականացումից:

**6. Ընդունված է ասել, որ կյանքի իմաստի մասին անհատի պատկերացումը պայմանավորված է սոցիալական դիրքով, կենսակերպով, աշխարհայացքով, ինչպես նաև կոնկրետ պատմական ժամանակաշրջանով: Այս տեսանկյունից արդյո՞ք կարող է կյանքի իմաստը նույնը լինել բոլորի համար:**

Նախ պետք է տեսնել, թե ընդհանրապես ինչ է նշանակում կյանքի իմաստ: Այս կապակցությունը կարող ենք նույնական համարել կյանքի նպատակ արտահայտության հետ, որով և կյանքի իմաստ նշանակում է կյանքում նպատակներ ունենալ, քանզի կյանքի անիմաստությունը նպատակների և դրանք ունենալու կամքի բացակայությունն է: Կյանքի իմաստի մասին հարցը նաև փիլիսոփայական հարց է: Ըստ Պլատոնի՝ կյանքի իմաստն իմացության բարձրագույն ձևին հասնելն է, որը իդեան է բարու մասին, որից բխում են բոլոր բարի և արդար բաները: Մեկ մտքով կարող ենք ասել, որ ամեն մարդու համար իր կյանքի նպատակը երջանկությունն է, որն ամեն մարդ յուրովի է հասկանում: Ըստ Աստվածաշնչի արտահայտած գաղափարների՝ կյանքի նպատակն Աստծուն հաճոյանալու, Նրան փառավորելու և գոհացնելու մեջ է (Ա Մնաց. 16.9-10, Սաղմ. 85.12, Հռ. 11.36, Փիլիպ. 1.11, Բ Թեսաղ. 1.12, Ա Պետ. 4.11): Առաքյալն ասում է. «Արդ, ուտեք թե խմեք, կամ ինչ էլ անեք, ամեն ինչ արեք Աստծու փառքի համար» (Ա Կորնթ. 10.31): Սա կարող է անցանկալի թվալ մար-

դուն, քանզի մարդը կարծես նկատվում է խաղալիք՝ Աստծուն զվարճացնելու համար: Սակայն Աստված մարդուն ստեղծեց իբրև սիրո արտահայտություն, այդ մեծագույն սիրով նաև եղավ մարդկության փրկությունը: Հետևաբար, խոսքն Աստծո և մարդու միջև փոխադարձ սիրո մասին է: Սա հասկանալի է հատկապես ծնողներ-երեխաներ փոխհարաբերության մեջ. ծնողներն ստեղծել են երեխային իբրև սիրո արտահայտություն և ցանկանում են զգալ նաև երեխաների սերը, ուրախանալ նրանցով: Կյանքի նպատակը կամ իմաստն այս կերպ կարելի է բացատրել՝ ըստ քրիստոնեության, սակայն այն չի կարող ընդհանուր լինել բոլորի համար այն պարզ պատճառով, որ ամեն մարդ չէ, որ ընտրում և ճշմարտացի է համարում քրիստոնեական տեսակետը:

Ճշմարիտ աստվածապաշտի համար կյանքը նաև Քրիստոսն է, որովհետև Նրանով արժանի դարձանք մարմնավորի և հոգևորի ներդաշնակությունը հաստատող ու զարդարող շնորհների և հավիտենական կյանքի: «Նա նույն ինքը կյանք էր, որ հայտնվեց» (Ա Յովհ. 1.2), «կործանեց մահը և լուսավոր դարձրեց կյանքն ու անմահությունը Ավետարանի միջոցով» (Բ Տիմ. 1.10): «Ով ընդունում է Որդուն, ընդունում է նաև կյանքը» (Ա Յովհ. 5.12), «և մենք ճշմարտի՝ Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ ենք. որովհետև Նա՛ է ճշմարիտ Աստված և հավիտենական կյանք» (Ա Յովհ. 5.20):

Վերոնշյալ հարցին տրված պատասխանին ի հավելումն՝ կյանքի նպատակը Աստծուց երկյուղելն է և Նրա պատվիրանները պահելը, քանի որ դա է մարդու ողջ պարտականությունը (Ժողովող 12.13): Այս ամենը պետք է հասկանանք մարդու և Աստծո միջև հարաբերություններում փոխադարձ սիրո արտահայտման իմաստով:

**7. Կյանքի իմաստի վերաբերյալ հարցին առանձին փորձել են պատասխանել և՛ հոգեբանությունը, և՛ փիլիսոփայությունը, և՛ մարդաբանությունը: Եզակի չեն այն դեպքերը, երբ գիտությունը լրացնում, հաստատում է կրոնական տեսակետը: Ինչպիսի՞ն է պատկերն այս դեպքում:**

Կյանքի իմաստի մասին փիլիսոփայության կամ հոգեբանության պատասխանները քրիստոնեության սկզբունքներին չհակադրվելու դեպքում պարզապես նկատվում են համապատասխանող աստվածային պատվիրաններին կամ Քրիստոսի ուսմունքին, սակայն չեն դիտվում իբրև լրացումը այն գերագույն նպատակի, որ հայտնում է Աստվածաշունչը: Արիստոտելի խոսքով, թե կյանքի իմաստը երջանկությունն է, որը գիտության և իմացության մեջ է, համապատասխան է գիտելիք ունենալու բարի ձգտումին: Էպիկուրի ասածը՝ չարչարանքներից հեռու լինելու, կյանքի իմաստը ոչ թե մարմնական հաճույքներին տրվելու, այլ հոգևոր անհանգստությունից, մահվան հանդեպ վախից ազատվելու հաստատումը համապատասխան է ողջախոհության, հոգևոր խաղաղության և հարուցյալ կյանքի ձգտելու հորդորին: Պրագմատիզմի մեջ արտահայտված տեսակետը, թե կյանքի իմաստն այն նպատակներն են, որոնք ձեզ ստիպում են գնահատել կյանքը, համապատասխանում են եկեղեցական Յայրերի ուսուցումներին: Յայրերն ասում են, որ մարդու կյանքի նպատակն աստվածանալու մեջ է, Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա: Սակայն նոր աստվածաբանական միտքը շեշտում է նախ մարդու մարդացման կարևորությունը, քանի որ աստվածային պատկերը հենց մարդու մեջ է և դրանով՝ աստվածացման հասնելու հնարավորությունը: Սակայն սա էլ Աստծո փառքի համար արվող բան է, որովհետև Աստծո համար հաճելի է մարդու աստվածացումը, և դա երանություն ու բարիք է բերում մարդուն:

### **ՅԱՎԱՏՔԻ, ԴՐԱ ԷՈՒԹՅԱՆ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԻ ՄԱՍԻՆ**

#### **1. Ի՞նչ է հավատքը: Ո՞րն է հավատի իմաստն ու նշանակությունը:**

Մարդկության պատմության մեջ՝ սկսյալ հնագույն ժամանակներից, մարդը մինչ այսօր ձգտում ունի դեպի Աստված, որովհետև միշտ եղել են հավատացյալ ժողովուրդներ, հասարակություններ, իսկ անհավատները, աթեիստները բացա-

ռութիւններ են կազմել այդ ժողովուրդների մեջ: Պողոս առաքյալը Եբրայեցիներին ուղղված թղթում հավատի էության վերաբերյալ հարց է առաջ քաշում և ինքն էլ տալիս է պատասխանը՝ ասելով. «Հավատը հուսացված բաների հաստատումն է և ապացույցը այն բաների, որոնք չեն երևում» (Եբր. 11.1): Իհարկէ, այստեղ առաքյալը չի խոսում այն ապացույցի մասին, որ ուզեց թովմաս առաքյալը հարություն առած Քրիստոսին կամ Քրիստոսի Հարությանը հավատալու համար (Հովհ. 20.24-25): Թովմաս առաքյալը ցանկացավ նյութական ապացույցներ, իսկ Պողոս առաքյալը խոսում է հոգևոր իրողությունների շրջագծում առկա ապացույցների մասին: Հավատացյալ մարդը, ունենալով կրոնական զգացողություններ, Աստծո հետ հարաբերության փորձառություն, դրանք իր համար դիտարկում է ապացույցներ հոգևորի, Աստծո մասին:

Հավատի վերաբերյալ առաքյալի սահմանումը հակիրճ է: Այն ընդլայնելով՝ կարող ենք ասել, որ «հավատ» և «վստահություն» բառերը հոմանիշներ են, որով և հավատը վստահություն է որևէ վկայության հանդեպ, լինի այն գրավոր, թե բանավոր: Հավատի մեջ կարևոր տեղ ունի մարդու անձնական կամքը, որով մարդն ընտրում է վստահություն ցուցաբերելը իրեն հայտնած այս կամ այն վկայության հանդեպ: Կրոնական իմաստով այդ վկայությունը վերաբերում է գերբնական իրողություններին: Հավատը մարդուն փրկում է անհուսությունից կյանքի ընթացքում և հատկապես կյանքի վախճանին, որովհետև անհավատի համար իր կյանքի վախճանը կորչում է անհուսության, ոչնչացման մեջ, իսկ հավատացյալի համար երկրային կյանքի վախճանով սկսվում է հավիտենական կյանքը:

Հավատի սկզբնավորման հիմք են ծառայում բնական և գերբնական հայտնությունները: Բնական հայտնությունը տիեզերքի, բնության առկայությունն է, որը դիտելով՝ մարդը հասկանում է, որ դրանք ստեղծվել են աստվածային բանականության միջոցով: Իսկ գերբնական հայտնությունն Աստծո մասնակի և ուղղակի հայտնությունն է, որ լինում է առանձին անձանց, սրբերի: Դրա մասին կարդում ենք Սուրբ Գրքում, սրբերի վարքագրություններում: Այդպիսի հայտնություն է նաև հենց Սուրբ Գիրքը, որը բերում է վկայությունը Աստծո

գոյության, Աստծո կողմից տիեզերքի, մարդու ստեղծման և աստվածային նախախնամությամբ ողջ արարչագործության հանդեպ խնամքի մասին:

**2. Հավատը բնածի՞ն էրևույթ է, թե՞ այն ձևավորվում, դաստիարակվում է տարիների ընթացքում:**

Այս մասին երկու տեսակետներ կան, որոնք լրացնում են միմյանց: Սուրբ Գրիգոր Տաթևացին Մկրտության խորհրդի բացատրության մեջ ասում է, որ մարդու հավատը հաստատվում է մկրտության խորհրդի ժամանակ: Երբ դառնում ենք դեպի արևմուտք, որը չարի, խավարային գործերի խորհրդանշանն է, և հրաժարվում ենք սատանայից ու ապա դառնում դեպի արևելք և խոստովանում հավատի հանգանակը, այդ ժամանակ մկրտվողի հոգում հաստատվում է հավատը: Բոլոր չափահաս տարիքում մկրտվածները եկեղեցում՝ սուրբ խորանի առջև, խոստովանել են հավատքը և դրանով ուխտել հավատարիմ մնալ այդ հավատքին: Ինչ վերաբերում է փոքր երեխաներին, ապա նրանք մկրտվում են իրենց ծնողների հավատով և նրանց պարագայում հատկապես, եկեղեցական սուրբ հեղինակի խոսքով, երբ մկրտվում են Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, նրանց մեջ ծածկապես ծագում է հավատի լույսը: Այսինքն՝ նաև այս տեսակետի համաձայն՝ հավատը շնորհ է, որ տրվում է մարդուն Աստծո կողմից: Դա նշանակում է, որ բոլոր մարդիկ ունեն հավատք ունենալու կարողությունը, բայց արդյո՞ք բոլորն են, որ ունեն դրա ցանկությունը: Մարդիկ կան, որ մերժում են հավատքը: Այդպիսիները, սակայն, առանձին անհատներ են և ոչ՝ հասարակություններ կամ ժողովուրդներ: Մյուս կարծիքն արտահայտում է Պողոս առաքյալը՝ ասելով, որ հավատքն առաջանում է լսելուց, այսինքն՝ վկայությունից և մարդու անձնական ընտրությունից՝ այդ վկայությանը վստահելու: «Իսկ ինչպե՞ս կանչեն նրան, ում չհավատացին. կամ՝ ինչպե՞ս հավատան, ում մասին չլսեցին. կամ՝ ինչպե՞ս լսեն առանց մեկի քարոզելուն: Ապա ուրեմն հավատը լսվածից է, և լսվածը՝ Քրիստոսի խոսքից» (Հռոմ. 10.14, 17),- ասում է առաքյալը: Հավատքը մեծ զգացմունք է, սեր, հավատարմություն, որդիական նվիրում Աստծո հանդեպ:

**3. Հաճախ ասում են, թե հավատի միջոցով մարդն ընդամենը փորձում է հաղթահարել սեփական կեցության անցողիկությունը, բարձրանալ բացարձակի մակարդակի և դրանով իսկ սեփական գոյությանը տալ կայունություն, իմաստ և նշանակալիություն: Ո՞րն է այս տեսակետի եկեղեցական պատասխանը:**

Այս երեքն էլ կարող են ճիշտ նկատվել, եթե ավելի կրոնական ձևակերպումներ տանք տվյալ հարցի մեջ ներկայացված մտքերին: Հավատացյալ մարդը ձգտում է հաղթահարել իր անցողիկությունը և գնալ դեպի հավիտենություն ու արժանանալ հավիտենական կյանքի: Բարեպաշտ մարդը ձգտում է նաև Քրիստոսի պատվերի համաձայն լինել կատարյալ, ինչպես որ Երկնավոր Հայրն է կատարյալ (Մատթ. 5.48), և սեփական գոյությունն իմաստավորել Աստծո հետ հաղորդակցությամբ՝ Նրա կամքի համաձայն ապրելով: Սակայն ընդունելի չէ շահամոլությունը հավատքի մեջ: Մարդիկ կան, որոնց համար հավատքը դառնում է առևտրի առարկա: Աղոթքով դիմում են Աստծուն՝ ասելով. «Ես այս բարի գործն եմ արել, Դու էլ ինձ համար այս կամ այն արա»: Եվ կամ բարեպաշտ կյանքով են ապրում կամ էլ բարեգործություն անում նրա համար, որ Աստծուց ավելի մեծ ողորմությունների արժանանան: Այսպիսով, հավատքը առևտուր է դառնում Աստծո հետ, ինչն ընդունելի չէ: Մարդու աստվածահաճո կյանքը պետք է լինի իր կենսակերպը, որի արդյունքում կարժանանա աստվածային ողորմությունների ու պարգևների, և ոչ թե նպատակ հետապնդի ներկա կյանքում հոգևոր ուրրտի միջոցով զգացական կամ նյութական իրողություններով շահույթ ունենալու:

**4. Կրոնին հատուկ է պահպանողականությունը, դրան հակառակ գիտությունը կատարում է շրջադարձային քայլեր: Արդյո՞ք հավատքն ու գիտությունն այսօր չեն հակասում իրար:**

Կրոնը (նկատի ունենք քրիստոնեությունը), որի մասին խոսում ենք, պահպանողական է միայն կրոնական բարձր արժեքները և գաղափարները պաշտպանելու և դրանց խեղա-

թյուրունը կանխելու մեջ: «Պահպանողական» հասկացության տակ երբեմն նկատի առնվող հետադիմությունը հատուկ չէ քրիստոնեությանը: Այլ հարցերում քրիստոնեությունը միշտ եղել է արդիական, յուրաքանչյուր ժամանակաշրջանում բերել իր համապատասխան հորդորներն ու պատասխանները՝ ըստ Սուրբ Գրքի: Հավատքն ու գիտությունը երբեք չեն հակասել իրար, որովհետև բոլոր մեծ գիտնականները գրեթե բոլոր ժամանակներում եղել են հավատացյալ այն իմաստով, որ առնվազն խոստովանել և հայտարարել են գերբնական ուժի գոյությունը: Եթե օրինակի համար վերցնենք միջնադարից սկսվող ժամանակաշրջանը մինչև մեր օրերը, կտեսնենք, որ բոլոր ակնառու, նշանավոր գիտնականները հավատացյալներ են եղել, եթե ոչ քրիստոնեական իմաստով, ապա գոնե հավատացել են գերբնականի գոյությանը և տիեզերքի՝ գերբնական բանականության կողմից ստեղծված լինելուն: Օրինակ՝ Գալիլեյից մինչև Նյուտոն և ապա 20-րդ դարում՝ էյնշտեյն և ուրիշներ հավատացել են Աստծո գոյությանը: Իսկ քրիստոնեական կրոնը և գիտությունը կամ դրա բացահայտումները հիմնական անհամապատասխանություններ չեն ունեցել, դեռ ավելին, կրոնը տալիս է ավելի շատ պատասխաններ, քան ունի գիտությունն իր կողմից ուսումնասիրվող իրերի ու երևույթների մասին: Գիտությունն այսօր էլ չի կարողանում ամբողջականորեն բացատրել տիեզերքի ծագման, կյանքի առաջացման հարցերը, այլ պարզապես առաջ է քաշում տեսություններ, որոնք սպառնիչ պատասխաններ չեն բերում: Սուրբ Գիրքը գիտական հիմնական տեսակետներին չի հակադրվում: Օրինակ՝ գիտության կարծիքը աշխարհի փուլային առաջացման ու զարգացման մասին համապատասխան է Սուրբ Գրքի վկայությանը: Աստվածաշունչը խոսում է տիեզերքը և աշխարհը օրերի ընթացքում ստեղծվելու մասին, բայց այդ օրերը որոշակի շրջաններ են ենթադրում և ոչ թե մեր պատկերացրած օրերը, որոնք քսանչորսժամյա հատված են ներկայացնում, քանի որ մեր ընկալմամբ օրը կապ ունի Արեգակի նկատմամբ Երկրի պտույտի հետ: Աստվածաշունչը ևս նշում է, որ այդ օրերը խորհրդանշական ժամանակահատվածներ են, որովհետև Արեգակն ստեղծվեց միայն չորրորդ օրը (Ծննդ. 1.16-19):

Կրոնի և գիտության հակասություն եղել է միջնադարում, հատկապես արևմտյան Եվրոպայում, երբ Կաթոլիկ Եկեղեցու հոգևորականներն իրենց հետադիմական հայացքների պատճառով հալածում էին գիտական տեսակետներ ունեցողներին և այրում ինկվիզիցիայի խարույկների վրա: Մինչդեռ հայ իրականության մեջ տեսնում ենք, որ Հայ Առաքելական Եկեղեցին եղել է գիտության օրրանը, հովանավորն ու զարգացնողը: Եվ գիտությունը՝ լինի պատմաբանություն, լեզվաբանություն, մաթեմատիկա, տոմարագիտություն, տիեզերաբանություն և այլն, զարգանում էր Եկեղեցու ծոցում և հենց Եկեղեցականների կողմից, քանի որ Եկեղեցու վարդապետներն էին զարգացնում գիտության տարբեր ճյուղերը:

**5. Հավատացյալն ընդունում է գերբնականի գոյությունը, որը վեր է կանգնած նյութական աշխարհից, ավելի զորեղ է և կարող է ազդել այս աշխարհի իրադարձությունների, մեզանից յուրաքանչյուրի ճակատագրի վրա, երբ և ինչպես ցանկանա: Արդյոք այս մտածելակերպը սեփական կյանքի պատասխանատվությունից խուսափելու ձև չէ՞:**

Խոսքը գուցե սկսնակ հավատացյալի մասին է, ով մտածում է, թե Աստված ամեն ինչի վրա ուղղակիորեն ազդում է և ուն ճակատին ինչ գրված է, այն էլ լինում է: Շատ բաներ թողնված են մարդու ազատ կամքին, որով չարիքներ են պատահում մարդու մեղքով: Եկեղեցին բոլորովին մերժում է ճակատագրի գաղափարը, քանի որ այդ դեպքում բոլոր մեղքերի, հանցագործությունների պատասխանատուն մնում է միմիայն Աստված: Բոլոր այն եկեղեցական հեղինակները, որոնք անդրադարձել են ճակատագրի թեմային, խստորեն դատապարտել են այս գաղափարը: Ճակատագրի հասկացությունն ընդունելու դեպքում բոլոր չարիքների հեղինակը դառնում է Աստված և ոչ թե մարդը, որովհետև, ըստ այդ տեսակետի, մարդն անում է այն, ինչ նրա ճակատագրով որոշել է Աստված: Մինչդեռ մարդն ստեղծված է ազատ կամքով և իր արարքների պատասխանատուն է: Ազատ կամքը դառնում է նաև չարիքի պատճառ: Բայց Աստված մարդուն անձնիշխան է ստեղծել, որպեսզի արարչագործության պսակ հանդիսա-

ցող մարդն անգիտակից, անբան կենդանու չվերածվի, այլ հասկանա բոլոր բարիքները, քանզի միայն ազատ կամքի ընտրությունն է արժևորում և ընկալելի դարձնում բարիքը:

Աշխարհում չարիքների գոյության և Աստծո կողմից դրանք իսպառ չվերացնելու մասին Քրիստոս թերևս առավել պատկերավոր և հասկանալի ասում է որոմների մասին առակում (Մատթ. 13.24-30): Տերն իր արտում բարի սերմ սերմանեց, այսինքն՝ ինչ որ Աստված ստեղծեց բարի էր (Ծննդ. 1.31): Այնուհետև եկավ թշնամին և որոմ ցանեց: Հետևաբար չարիքը ծագում է ոչ թե Աստծուց, այլ չարից: Արտի մշակները գնում են տիրոջ մոտ և առաջարկում արմատախիլ անել չար սերմերը, բայց տերը պատվիրում է դրանք պահել մինչև հունձը: Հունձն աշխարհի վախճանն է և Աստծո դատաստանը, ինչը նշանակում է, որ աշխարհում չարիքներն ու բարիքները լինելու են միասին: Պատճառն այն է, որ Աստված կարող է անգամ չարիքներից մեծագույն բարիքներ վեր հանել, բացի դրանից եկեղեցին իր սրբարար, մաքրագործող և պայծառակերպող զորությամբ կարող է որոմները մաքուր ցորեն դարձնել, այսինքն՝ չարագործ մարդկանց վերափոխել բարեպաշտների և անգամ սրբերի:

**6. Ի՞նչ հիմունքներով կամ սկզբունքներով է քրիստոնյան համարվում իրապես հավատքին հետևող կամ հավատավոր մարդ:**

Աստված է միայն քննում սրտերը (Ա Մնաց. 28.9, 29.17, Բ Մնաց 6.30, Սաղմ. 7.10, Առակ. 21.2, 24.12, Սիրաք. 42.18), իսկ մենք տեսնում ենք արտաքին դրսևորումները և մարդու անձնական խոստովանությունը: Հավատքը պետք է լինի ոչ միայն զգացում, այլև մարդու կենսակերպը, և նրա յուրաքանչյուր գործ ու արարք՝ համաձայն աստվածային կամքին: Գրիգոր Լուսավորիչը, երբ իր քարոզչությամբ քրիստոնեության սկզբունքներն էր ուսուցանում, նորադարձների համար դժվար բաներ չսահմանեց, այսպես նաև, ըստ Գործք առաքելոցի, Երուսաղեմում տեղի ունեցած առաքյալների ժողովը դժվարին պայմաններ չդրեց կռապաշտությունից քրիստոնեության դարձածների համար (15.19-20, 28-29): Սա նշա-

ճակում է, որ հավատացյալ մարդու վրա սկզբնապես չափից ավելի ծանր «բեռ» չպետք է դնել, նրան ստիպել, որ ապրի վանականի կամ ճգնավորի պես: Ոմանք երբեմն շփոթում են հավատացյալ և ճգնավոր հասկացությունները՝ կարծելով, թե հավատացյալ լինելու համար պետք է հրաժարվել երկրային բազում իրողություններից ու նույնիսկ միանգամայն ընդունելի հաճույքներից և ապրել մշտական կրոնական կյանքով: Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Քրիստոսի առաքյալների օրինակով, նրանց կատարած որոշումներով տեսնում ենք, որ հավատացյալ, Քրիստոսի հետևորդ լինելու համար բավական է անկեղծ հավատքը և կյանքում դրսևորվող գործերը, որոնք բարի են, առաքինի, կատարվում են Աստծո կամքի համաձայն: Աղոթքի հաճախականությունը, կրոնական զգացումների խորությունը, բարեպաշտության տարբեր դրսևորումները պետք է լինեն ըստ անձի ազատ կամքի ընտրության, հոգևորականի կամ հոգևոր խորհրդատուի (կարող է լինել և մկրտության կնքահայրը) հորդորով ու առաջնորդությամբ:

### **7. Կարելի՞ է հավատացյալ համարել այն մարդուն, ով պարբերաբար եկեղեցի չի հաճախում:**

Մարդկային հասարակության կյանքը նախկինում կենտրոնացած էր եկեղեցու շուրջ: Հիմա հոգեորսություն են իրականացնում ոչ միայն աղանդները, այլև մեղսահարույց կամ չափազանց աշխարհիկացված իրողություններն ու ձեռնարկները, որոնք բթացնում են մարդու հավատքի զգացումը: Ցանկալի է մարդու հաճախակի այցելությունը եկեղեցի: Սիմեոն Երևանցի Կաթողիկոսը նզովյալ էր համարում այն քրիստոնյային, ով հատկապես ամեն կիրակի չի տեսնում եկեղեցու դուռը: Այսօրվա իրադրությունները նկատի ունենալով՝ եկեղեցին չի կրկնում այդ նզովքը՝ միևնույն ժամանակ հորդորելով հաճախակի այցելել աղոթավայրեր: Եկեղեցի այցելությունը նպաստավոր է ոչ միայն Աստծո հետ անձնական հարաբերությունն առավել ամրապնդելու, աստվածային ներկայությունը զգալու, այլև աշխարհային, կենցաղային հոգսերից, նյութականի մասին մտածելուց վեր բարձրանա-

լու, խորհելու մեծ արժեքների, հոգու, հավիտենության մասին: Սա մեծապես նպաստում է բարեպաշտ, բարոյական, գթասիրտ, ազգասեր ու հայրենասեր ընթացքի հաստատմանը և դրանով շահեկան է նաև մարդու անձնական, ընտանեկան կյանքի համար:

## **ԱՍՏՕՈ ԱՆՎԱՆ ԵՎ ԷՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

### **1. Ո՞րն է «Աստված» բառի մեկնաբանությունը:**

Խոսքով Անձնացին՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու հայրը, իր «Ժամակարգության մեկնության» մեջ ասում է, որ «Աստված» բառն արարչագործության ակնարկումն ունի, նշանակում է «աստ էած», այսինքն՝ գրաբարից թարգմանաբար՝ մեզ այստեղ բերեց, այս կյանքի բերեց: Ըստ մեկ այլ կարծիքի՝ Խոսքով Անձնացին իր բացատրության մեջ նկատի ունի ոչ թե «աստ»՝ «այստեղ» բառը, այլ «աստ» ասելով՝ հաստումն, ստեղծումն, ինչը նշանակում է, որ ստեղծման բերեց, ստեղծեց, ընդհանուր իմաստով՝ արարչագործեց:

Ներսես Լամբրոնացին Պատարագի իր մեկնության մեջ նշում է, որ «Աստված» նշանակում է այստեղ բերող, այսինքն՝ չգոյությունից այս գոյությանը բերող: Մեկ այլ բացատրությամբ «Աստված» նշանակում է աս տված՝ ասել, խոսել, շունչ տված:

### **2. Հին Կտակարանում հիշատակվող Աստծու անունը՝ Եհովա, Աստվածաշնչի թարգմանություններից շատերում «Տեր» է թարգմանվում: Ի՞նչ է նշանակում Եհովա:**

Աստված հայտնվեց Մովսես մարգարեին անկեզ մորենու միջից և հայտնեց իր անունը՝ «Ես եմ՝ Ես այն Աստվածն եմ որ է» (Ելք 3.2, 6, 14): Սա «Ես» դերանվան ներկա ժամանակի բայաձևի հետ գործածումն է, որը եբրայերենում օգտագործված է միայն տետրագրամմայի՝ չորս տառերի տեսքով («տետրագրամմա» բառը հունարեն «չորս» և «տառ» բառերի միացությամբ է առաջացել), քանի որ եբրայերենում չէին գրում ձայնավորները: Այս պատճառով տետրագրամման փոխադրում կամ արտասանում են երկու ձևով՝ Եհովա կամ

Յահվե: Եբրայական գիտնականներն ավելի ճիշտ են համարում «Յահվե» ձևը: Ներկա ժամանակաձևով «Ես եմ, որ Է» արտահայտությունը՝ ասված Մովսեսին Աստծո կողմից, ցույց է տալիս Աստծո հավերժական գոյություն ունենալը:

«Աստված» բառին իբրև հոմանիշ եբրայական Աստվածաշնչում գործածված են «Ադոնայ» և «Էլոհիմ» եբրայական բառերը, որոնք թարգմանվում են՝ Ադոնայ – իմ Տեր, Էլոհիմ – Աստված: Հրեաները Եհովա անվան արտասանության փոխարեն հաճախ նախընտրել են «Ադոնայ» բառը: Այս պարագայում բավականին հետաքրքրական է, որ «Ադոնայ», «Էլոհիմ» բառերը հոգնակի են, սակայն գործածվում են եզակի թիվ ցույց տվող բայի հետ, ինչպես օրինակ մարդու արարման պատմության մեջ: «Ադոնայ» բառի եզակին է «Ադոնա»: «Էլոհիմ» բառը ևս միաժամանակ և՛ եզակիության, և՛ հոգնակիության նշանակությունն ունի, գործածվում է ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվով բայերի հետ՝ եզակի թվով բայերի հետ գործածման պարագայում շեշտելով Աստծուն, հոգնակիության դեպքում՝ առավելաբար կուռքերին՝ չաստվածներին կամ իշխանություններին: «Էլոհիմ» բառի մեջ եբրայական «իմ» վերջավորությունը բառը հոգնակի է դարձնում: Աստվածաշնչում Աստծո համար գործածված է նաև «Էլ» բառը, որին հանդիպում ենք եբրայական հատուկ անունների բաղադրիչներում, ինչպես օրինակ՝ Իսրայել - Աստծո հետ մարտնչող, Եզեկիել - Աստված կգորացնի, Դանիել - Աստված է իմ դատավորը, Միքայել – ո՞վ է Աստծո (Էլ-ի) նման, Գաբրիել - Աստված է իմ զորությունը, Ռաֆայել - Աստված բժշկում է:

Եկեղեցական հեղինակները հատկապես «Էլոհիմ» հոգնակի բառի և դրան վերաբերող եզակի բայի գործածումը, որը թարգմանության մեջ նաև արտահայտվում է «Աստված» եզակի և բայի հոգնակի ձևով, բացատրում են Սուրբ Երրորդության և մի Աստվածության նախանշման փաստով, մանավանդ, որ մարդու արարչագործության պատմության մեջ բացի Աստծուն նշանակող հոգնակի թվով բառի և եզակի բայի օգտագործումից, Աստված ևս հոգնակիության գործածումով ասում է. «Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ»...»: Այստեղ գործածված է «Էլոհիմ» (եբրայերեն գրությամբ՝ օ'փ'օ'օ) հոգնակի ձևը (օճնդ.

1.26-28): Եսայի մարգարեն Քրիստոսին առնչվող մարգարեության մեջ Նրան կոչում է «սքանչելի խորհրդակից» (9.6)՝ ցույց տալով աշխարհի արարման գործողությամբ Սուրբ Երրորդության անձերի գործակցությունը, որը և երևում է մարդու ստեղծման ժամանակ Աստծո խոսքից:

Մուսուլմանության մեջ Աստծուն ասում են «ալլահ»: Այն արաբերեն ձևն է «Էլի» բառի, որը նշանակում է Աստված իմ: «Էլի» ձևն Աստվածաշնչից հայտնի է հատկապես 21-րդ սաղմոսից և խաչի վրա Քրիստոսի արտասանած խոսքից. «Էլի՛, Էլի՛, լա՞մա սաբաքթանի», այսինքն՝ Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մատթ. 27.46, Մարկ. 15.34, Սաղմ. 21.2): Աստվածաշնչում գործածվող «Էլոհիմ» բառի եզակին առանց եբրայական հոգնակիակերտ «իմ» ածանցի կլինի «Էլոահ», որտեղից էլ և արաբական ձևը՝ «ալլահ»:

Հինդուիզմում կան բազմաթիվ աստվածություններ, որոնցից է Բրահմանը՝ գերագույն, տիեզերական հոգին: Այստեղ «աստված» հասկացության համար գործածվում է նաև «Իշվարա» բառը, որը նշանակում է գերագույն էակ, բացառիկ զորությամբ էակ: Հինդուիզմում կրոնական տարբեր ճյուղեր օգտագործում են իրենց պատկերացմամբ աստծո համար տարբեր անուններ, որոնցից են Վիշնու՝ Բարձրագույն Աստված, Կրիշնա՝ Վիշնուի ութերորդ մարմնացումը և այլն:

**3. Ի՞նչ է ուսուցանում քրիստոնեությունն Աստծո մասին: Մի կողմից ասում է, որ Աստված հոգի է և չի կարող արտահայտվել մարդկային բառերով ու հասկացություններով, քանի որ ցանկացած բառ լիովին չի կարող արտահայտել կամ բովանդակել «Աստված» հասկացությունը, մյուս կողմից՝ մենք կանգնած ենք Սուրբ Գրքում և բազում սրբերի փորձառությամբ տրված Աստծո Հայտնության, Աստծո Ինքնահայտնության փաստի առաջ:**

«Աստված հոգի է» (Հովհ. 4.24),- ասում է Հովհաննես Ավետարանիչը՝ ամփոփ ներկայացնելով Սուրբ Գրքի հայտնութեցանական նկարագիրն Աստծո մասին: Աստծո հոգի լինելն է նաև, որ բացահայտում է Նրա ամենուրեքությունը, քանզի մարմնավորի և նյութականի հետ անպայմանորեն առնչվում է սահմանափակությունն ու որոշակի տարածության մեջ լինե-

լը: Հին և Նոր Կտակարաններում Աստծո մասին պատկերացում կազմում ենք մարդկության պատմության մեջ Աստծո ներգործության վերաբերյալ տեղեկություններից, ինչը նաև ցույց է տալիս, որ Աստված, Իր արարչագործության ընթացքին անմասնակից դիտորդ չէ, այլ մուտք է գործում մարդկության պատմության, արարչագործության մեջ, Իր նախախնամությամբ ուղղորդում, Իր պատվիրաններն ու հորդորները բերում:

Աստծո մասին հինկտակարանյան և նորկտակարանյան պատկերացումների որոշ տարբերությունը բացատրվում է Հին Կտակարանում գործածված անթրոպոմորֆիզմով՝ Աստծո պարագային մարդկային մտքին ընկալելի լինելու համար մարդակերպական բնութագրումների գործածմամբ: Օրինակ՝ Աստծո բարկությունը կարող ենք բացատրել որպես մեղքի պատճառով մարդու հեռացում երկնային ողորմությունից և ոչ թե Աստծո զգացումների կամ տրամադրության փոփոխություն, քանզի Աստված անայլայլելի է: Այսպես նաև Աստծո զղջալը բացատրելի է իբրև աստվածային կամքի դրսևորման, վճռի արտահայտություն, Աստծո՝ որևէ մեկին հիշելը՝ Իր ողորմությանն արժանացնելը և այլն:

«Մատյան ողբերգության» մեջ Սուրբ Գրիգոր Նարեկացին մեկտեղված թվարկում է Աստծո հատկանիշները, որոնք կարելի է համախմբել նաև եկեղեցական հեղինակների, աստվածաբանների տարբեր աշխատություններից: Սուրբ Գրիգոր Նարեկացու գործում համատեղ բերված բնութագրումները կարող ենք ներկայացնել ըստ դասակարգման:

**Աստծո էության կամ ինչպիսին լինելու մասին՝** անսկիզբն, անժամանակ, անսահման, ամենակալ, ամենակարող, ամենազոր, զորեղ, հզոր, անըմբռնելի, անհմանալի, անճառելի, անտեսանելի, անշոշափելի, ճշմարիտ, կատարյալ, սուրբ, ամենազետ, անտեսանելի, ինքնաբուն բարի, սուկալի, ահեղ, ահավոր, ահարկու, ծածկազետ, անեղծ, անզննելի, անքնին, անըմբռնելի, անհմանալի, անճառելի, փառավորյալ, բարերար, ամենաստեղծ, ամենակատար:

**Աստված-մարդ հարաբերության մեջ Աստծո դրսևորման մասին՝** արդար, արդարացնող, բարձր և խոնարհ, անշամանդաղ գիտություն, անտարակույս վստահություն,

աներկբա խոստում, աննվազելի շնորհ, անպակասելի գանձ, բժշկություն, աղքատասեր պաշտպան, ստրկամեծար թագավոր, մշտահարուստ տվիչ, ամենաբաշխ աջ, արդարակշիռ ձեռն, անաչառատես ական, մխիթարության ձայն, բերկրության բերումն, նախախնամող մատն, կենդանարար կամք, աննենգելի խրատ, անզուգական գութ, բազմազեղ ողորմություն, անոխակալ և երկայնամիտ, ներող, բարեգութ, ողորմած, մարդասեր:

**Մարդու կողմից Աստծուն ուղղված գոհաբանությամբ հատկանիշներ՝** օրհնյալ, օրհնաբանելի, գովյալ, բարեբանյալ, քարոզյալ, ավետարանյալ, ապավեն գովյալ, օրհնաբանելի գոյություն, անստվեր ծագում:

**4. «Ես եմ քո Տեր Աստվածը... Ինձնից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար» (Ելք 20.2-3): Ի՞նչ է նշանակում «Ես եմ»՝ անձնական դերանվան գործածությունը: Արդյո՞ք դա նշանակում է, որ Աստված ոչ թե տիեզերական կամ վերտիեզերական գերբնական ուժ է, այլ կոնկրետ անձնավորություն:**

Աստված Իրեն հայտնում է որպես անձ, ում հետ մարդու հաղորդակցությունը կայանում է անձնական հարաբերության շրջանակում: Աստվածաշնչում անձնային այս հատկության շեշտումով Աստված պատկերվում է որպես սիրող հայր, հոգատար ծնող, ով իր խնամքի ներքո է պահում իր զավակներին՝ մարդուն և ողջ արարչագործությունը (Բ Օր. 32.6, Ես. 63.16, 64.8, Մաղաք. 2.10, Երեմ. 3.19, 31.9, Մատթ. 6.9, 26, 7.11, Ղուկ. 6.35-36, 12.32, Հովհ. 16.27, Հռ. 8.15-16, Ա Հովհ. 3.1): Քրիստոնեության մեջ Աստծո ընկալման բացառիկությունն անձնավորյալ և սիրող ու ներող, բայց նաև արդար ու ճշմարիտ Աստծո գաղափարն է, ով հայտնվել է մարդկության պատմության մեջ աստվածային հայտնութենական ներգործություններով, ինչպես նաև Իր մասնավոր հայտնությունն է բերում հավատացյալի կյանքում: Այս ընկալումով Աստծո լինելիության և գործունեության պատկերացումը դուրս է դեիզմի՝ մարդկային կյանքին անմասնակից վերին գերբնական ուժի վերաբերյալ պատկերացումից, և հիմնվում է թեիզմի գաղափարի վրա, որն ուսուցանում է Աստծո ներկայությունն

ու մասնակցությունը մարդու անհատական կյանքին, աշխարհի պատմությանը: Պետք է նշել, որ թեիզմից տարբերվող հասկացություններ են նաև պանթեիզմը՝ ըստ որի՝ բնությունն ու տիեզերքը նույնական են աստվածության հետ, և պանենթեիզմը, որը շեշտում է աստվածայինի ներթափանցված լինելը նաև բնության, տիեզերքի մեջ:

**5. Քրիստոնեությունից դուրս զանազան պատկերացումներ կան Աստծո մասին. ի՞նչ տարբերություններ կան Աստծո քրիստոնեական ըմբռնողության և դրանից դուրս գտնվողների միջև:**

Աշխարհում առկա բազմաթիվ կրոնների վերաբերյալ պետք է իմանալ, որ դրանք նույն Աստծուն չեն ներկայացնում տարբեր անուններով, ինչպես ոմանք սխալմամբ թյուր տեսակետ են արտահայտում: Այդ տարբեր աստվածները տարբեր հասկացություններից են գալիս և բոլորովին անհամապատասխան են Աստծո մասին քրիստոնեական ընկալմանը, աստվածաշնչյան հայտնության ճշմարտություններին: Տարբեր կրոններում տարածված ընկալումներն «աստված» հասկացության մասին նույնիսկ հակառակ են քրիստոնեական աստվածհայեցողությանը: Քրիստոնեությունն ուսուցանում է Ամենակարող, Բարի, Ամենողորմ, Մարդասեր Աստծո մասին, որը սեր է, հոգի է, անձ է՝ միաստվածություն բարդ մեկությանը, Սուրբ Երրորդություն է՝ կրակի կամ արևի լույսի և ջերմության միաժամանակյա գոյությամբ և միավորությամբ մեկ լինելու օրինակով: Քրիստոնեությունից հետո և քրիստոնեության հիմքի վրա առաջացած մուսուլմանությունն ուսուցանում է մեկ Աստծո՝ Ալլահի մասին, որն ամենազոր է, անսահման, ամենուր, սակայն մերժում է քրիստոնեության հիմնական հավատալիքը Սուրբ Երրորդության, որով և՛ Քրիստոսի աստվածությունը, Նոր Կտակարանում Քրիստոս-Աստծո կերպարը: Հինդուիզմում բարձրագույն էակը Բրահմանն է, ով դրսևորվում է բազմաթիվ աստվածների և աստվածուհիների միջոցով: Ջայնիզմն ուսուցանում է բազմաթիվ աստվածների գոյության մասին: Ճապոնական հնագույն կրոն սինտոիզմն ընդունում է բազմաստվածությունը, հին աստվածների կամ

ոգիների գոյությունը: Բուդդայականությունն «աստված» հասկացությունը բացատրող հատուկ վարդապետություն չունի:

**6. Ինչպիսի՞ն է Աստծո քրիստոնեական ընկալման բացառիկությունը: Դա արտահայտվո՞ւմ է «Երրորդության» գաղափարով:**

Ըստ քրիստոնեական վարդապետության՝ Աստծուն չի կարելի պատկերացնել որպես պարզ մեկություն, այլ Աստված բարդ մեկություն է: Աստված պարզունակ չէ: Քրիստոնեական աստվածաբանությունը սովորեցնում է մի Աստվածության երեք Անձերի՝ Զոր, Որդու և Սուրբ Զոգու մասին, որոնք ունեն մեկ և նույն բնությունը, համագո են, միավորյալ մեկ աստվածություն լինելով՝ տարբերվում են նրանով, որ Զայրը պատճառն է Որդու ծննդյան և Սուրբ Զոգու բխման: Այդ պարագան, սակայն, ստորակայության կամ ժամանակայնության հատկություն չի ենթադրում:

Պատարագամատույցում քրիստոնեական հավատքի հանգանակի արտասանությունից հետո նզովք է ասվում նրանց, ովքեր ժամանակային տարբերություն, անհավասարություն և կամ ստեղծված, փոփոխելի լինելու տեսակետ կարտահայտեն Աստվածության վերաբերյալ: Եկեղեցական հայրերը Սուրբ Երրորդությունը որոշ չափով հասկանալի լինելու համար բերել են կրակի օրինակը, որը լույսի և ջերմության հետ է լինում: Լույսն ու ջերմությունը չեն լինում կրակից առաջ կամ հետո, այլ միաժամանակ, և կրակն էլ, ըստ իր բնության, առանց լույսի և ջերմության չի կարող գոյություն ունենալ: Այսպես Զայրը, Որդին և Սուրբ Զոգին մի Աստվածություն են: Աստված հոգի է (Հովհ. 4.24), հավիտեանական է (Սաղմ. 89.2, Ես. 40.28, Զե. 14.25), ամենուր է (Սաղմ. 138.7-12, Գործք 17.27), բարի է (Սաղմ. 24.7, Սարկ. 10.17, Ղուկ. 18.19):

## **ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ՊԱՍԻՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**1. Մեր օրերում հաճախ են ահազանգում կրոնական արժեքների անկման մասին: Իտալիայում կաթոլիկությունն այլևս չի միավորում մարդկանց, Նիդերլանդների ընդունած հանդուգն դիրքը՝ բարոյականության և էֆթանազիայի հարցում, ոմանց կարծիքով վկայում է այն մասին, որ այդ երկիրը կտրուկ հեռանում է քրիստոնեությունից: Հոգևոր-կրոնական արժեքների անկումը համատարած բնույթ ունի:**

«Կրոնական արժեքների անկում» ասելով՝ հիմնականում պետք է հասկանալ այդ արժեքների հանդեպ բացասական վերաբերմունքը կամ հարգանքի նվազումը, քանի որ արժեքներն ինքնին կան, գոյություն ունեն և չեն կարող արժեզրկվել: Նշված երկրները հիմնականում արևմտյան Եվրոպայի երկրներն են, որտեղ իրականությունն այլ է Հայաստանից: Հատկապես արևմտաեվրոպական երկրներում մենք տեսնում ենք, որ քրիստոնեական բարոյականությանը զուգահեռ ստեղծվում է աշխարհիկ բարոյականություն, և այս գործընթացը հովանավորվում է պետության, իշխանության կողմից: Դա է պատճառը, որ նման երկրներում ընդունվում են օրենքներ միասեռականների ամուսնության, նույնասեռականների կողմից երեխաների որդեգրման, անասնապղծության, կենդանիների հետ կենակցության ընդունելի լինելու մասին, որոշ պետություններում նույնիսկ օրենքի ուժով պարտադրվում է եկեղեցիներին օրհնել ոչ ավանդական ամուսնությունները: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ կարող ենք խոսել կրոնական և աշխարհիկ կամ թեիստական ու աթեիստական զուգահեռ բարոյականությունների մասին, որոնք կարող են և հակառակ սկզբունքներ պարունակել: Երբ աստվածը նկալումը մերժվում է բարոյականության ըմբռնման մեջ, ապա այդպիսի բարոյականությունը հաճախ վերածվում է անբարոյականության: Մարդու իրավունքների անվան տակ հասարակության մեջ ներմուծվում են նաև անբարո արարքների ճշմարտացի լինելու գաղափարախոսություններ, աշխատանք է տարվում այդ մերժելի իրողությունը որպես սովորա-

կան և ընդունելի երևույթ ներկայացնելու: «Մարդու իրավունքներ» ասելով՝ այսօր հասկանում են պետության, միջազգային օրենքների հնազանդություն և միանգամայն ազատություն բարոյական օրենքների հարցում, բարոյական և հատկապես քրիստոնեական պատվիրաններից կախվածության վերացում: Կրոնական իմաստով այսպիսի ազատությունը բարոյականությունից, ընդհակառակը, հանգեցնում է մեղքին ծառայության ու ստրկության և ամբողջապես հակառակ է ազատության քրիստոնեական ընկալմանը, որի մասին ուսուցանում է առաքյալը՝ ասելով. «Մեղքի ծառաներ էիք, բայց ի սրտե հնազանդվեցիք այնպիսի վարդապետության, որ ձեզ ավանդվեց: Արդ, մեղքից ազատագրվածներդ ծառայեցեք արդարության» (Հռ. 6.17-18), «Եղբայրներ, դուք կոչված եք ազատության. միայն թե ձեր ազատությունը սոսկ մարմնի ցանկությունների համար չլինի, այլ սիրով ծառայեցեք միմյանց» (Գաղ. 5.13): Նաև Պետրոս առաքյալն է կոչ անում. «Ապրեցեք որպես ազատներ և ազատությունը իբրև չարիքի պատրվակ մի՛ բռնեք, այլ ապրեցեք որպես Աստծու ծառաներ» (Ա Պետ. 2.16):

Կրոնական արժեքների հանդեպ նվիրումի, հարգանքի նվազումը կապված է նաև եկեղեցական պատմության հետ, որը բոլորովին այլ է Հայաստանում, այլ եվրոպական, ամերիկյան երկրներում: Կաթոլիկ եկեղեցու միջնադարյան շրջանի պատմությունից գիտենք, որ այդ եկեղեցին (այստեղ եկեղեցի ասելով նկատի ունենք եկեղեցական հաստատության կառավարմանը տիրապետող անձանց) իրահրել է պատերազմներ, շահագործել ու նեղությունների մատնել ժողովրդին, ինկվիզիցիայի խարույկների վրա վառել ոչ միայն հերետիկոսներին, ինչը ևս դատապարտելի է, այլև գիտության ներկայացուցիչներին, առաջադեմ միտք և մտածողություն ունեցող անձանց: Մեր եկեղեցական պատմությունը բոլորովին այլ է: Հայ եկեղեցին խնամել ու առաջնորդել է մեր ժողովրդին, և դրա համար էլ մեր ժողովուրդը մեր եկեղեցուն կոչում է նաև Մայր եկեղեցի: Մեզ մոտ նույն միջնադարյան շրջանում գիտությունը, առաջադեմ միտքը ոչ միայն չէին հալածվում, այլև գիտությունը, դպրությունը, արվեստը, մշակույթը զարգանում էին հենց եկեղեցուն, եկեղեցականների կող-

մից կամ Եկեղեցու հովանու ներքո: Պետականության բացակայության պայմաններում գիտենք, որ Հայ Եկեղեցին առաջնորդել է մեր ժողովրդին խնամքով ու ծնողական հոգածությամբ՝ բերելով մինչև անկախ պետականության վերահաստատումը և այսօր էլ շարունակելով իր հոգածու առաքելությունը:

Եկեղեցական պատմությունը, անցյալի իրադարձությունները ևս վերաբերմունք են ձևավորում Եկեղեցու, քրիստոնեական արժեքների հանդեպ: Կաթոլիկ երկրներում Եկեղեցու և կրոնական արժեքների նկատմամբ հակասական վերաբերմունքի պատճառ են նաև հատկապես վերջին տարիներին կաթոլիկ հոգևորականների մեղսալի գործերի, հատկապես մանկապղծության դեպքերի աղմկալի բացահայտումներն ու դատավարությունները: Ոմանք սրա պատճառ են համարում կուսակրոնությունը, քանի որ հատկապես Կաթոլիկ Եկեղեցու բոլոր հոգևորականներն անխտիր իրավունքն չունեն ամուսնանալու: Բայց մեղավոր ընթացքները խոսում են ոչ թե կուսակրոնության ինստիտուտի թերության, այլ մարդկային գործոնի, մարդու կողմից մեղքն առավել սիրելու արատի մասին: Այսօր Եկեղեցական ասպարեզում կուսակրոնությունը բարձրացնում է Եկեղեցական նվիրապետության աստիճաններով, ճանապարհ է բացում դեպի Եկեղեցու վարչական լծակները կամ Եկեղեցու կառավարումը, այսինքն՝ Եկեղեցուն վարչական լծակներ ունենալու համար պայման է դրվում առաջին հերթին կուսակրոնությունը: Անցումը Եկեղեցու կառավարման այսպիսի համակարգի նախապես հիմնված չէր ո՛չ Աստվածաշնչի, ո՛չ էլ Եկեղեցական վաղ ավանդության վրա, եթե նկատի ունենք վաղ շրջանի Եկեղեցին մինչև 4-րդ դարը: Անցումն այսպիսի համակարգի սահուն եղավ մեր Եկեղեցուն 4-րդ դարում: Կարծիք կա, որ դա արվեց Եկեղեցու կալվածքները պահպանելու համար, որպեսզի ամուսնացյալների պարագայում նյութական կարողությունները, կալվածքները նրանց զավակներին իբրև ժառանգություն տալիս չմասնատվեր Եկեղեցու ունեցվածքը: Սակայն մեր Հայրերը, իհարկե, առաջին հերթին կարևորել են ամբողջական նվիրումի, համապարփակ նվիրվածությամբ Աստծուն և Եկեղեցուն ծառայելու գաղափարը: Եկեղեցական կառա-

վարման այդ համակարգին անցումը շատ ցավոտ եղավ Կաթոլիկ եկեղեցում 11-րդ դարում: Գրիգոր 7-րդ պապը, իր կրոնական և տնտեսական հայացքներից ելնելով, ճիշտ համարեց, որ բոլոր եկեղեցականները ոչ ամուսնացյալ հանգամանքով ծառայեն, նույնիսկ նրանք, ովքեր արդեն իսկ ամուսնացած էին: Եվ նա բռնի կերպով քահանաներին բաժանեց իրենց ընտանիքներից: Այդ քաղաքականությունը շարունակեց նաև Ուրբանոս 2-րդ պապը: Կարճ ժամանակ անց քահանաների կանայք և երեխաները մեռան սովի, աղքատության, համաճարակների մեջ դաժան պայմաններում՝ զրկվելով ընտանիքի խնամակալից: Ուրբանոս պապն անգամ քահանաների կանանց վաճառեց ստրկության, գումարը գնաց եկեղեցու զանձանակ, երեխաները փողոց նետվեցին կամ կրկին ստրկության վաճառվեցին:

Կուսակրոնության օգտին բերվող փաստարկներից է Պողոս առաքյալի այն խոսքը, թե ամուսնացածներն առաջին հերթին ձգտում են հաճելի լինել իրենց կանանց, ամուսիններին, իսկ կույսը հոգում է Տիրոջ գործերի մասին (Ա Կորնթ. 7.33-34): Բայց Պողոս առաքյալն այստեղ չի խոսում նախանձախնդիր կերպով հոգևոր ծառայություն մատուցող անձանց մասին, քանի որ նա նույնիսկ չէր էլ համարձակվի դա ասել Քրիստոսի առաքյալների վերաբերյալ, որոնց մեծ մասն ամուսնացած էր (Մատթ. 8.14-15, Մարկ. 1.29-31, Ղուկ. 4.38-40, Ա Կորնթ. 9.5): Հովհաննու հայտնության մեջ ասվում է, որ կուսակրոն կյանքով ապրածները միշտ Քրիստոսի հետ են լինելու (Հայտն. 14.4): Բայց այդ խոսքերից դեռ շատ առաջ Քրիստոս իր առաքյալներին, որոնց մեծ մասն ամուսնացած էր, ավելի մեծ խոստում տվեց՝ ասելով, որ կնստեն Իր հետ Իր արքայության մեջ Իր սեղանից ուտելու, և նրանց նույնիսկ իշխանություն տվեց դատելու մյուսներին (Մատթ. 26.29, Ղուկ. 22.30): Պողոս առաքյալը վկայում է, որ Քրիստոսի առաքյալները նույնիսկ իրենց կանանց հետ էին շրջում (Ա Կորնթ. 9.5) և, հետևաբար, աշխարհում քրիստոնեության տարածման գործն իրականացվել է ընտանեկան նվիրումով ու քարոզչությամբ, երբ առաքյալների ընտանիքների անդամները նրանց լծակից և օգնական են եղել: Ինչևէ, այժմ ունենք այն իրականությունը, որ կա, և գոհություն ենք հայտ-

նում Աստծուն, որ մեր Եկեղեցուն Աստված արժանավոր կուսակրոններ է վեր հանում հատկապես նաև երիտասարդ, նոր սերնդի մեջ, ովքեր ամբողջամիտումի այդ գաղափարով պիտի ծառայեն Աստծուն և ժողովրդին: Կաթոլիկ Եկեղեցու առնչությամբ պետք է նշել, որ Եկեղեցին ինքնին սրբարար է և կարող է սրբել մաքրել անգամ սայթաքած, մեղք գործած հոգևորականներին, և այստեղ չպետք է նույնացնել Եկեղեցին և եկեղեցականներին: Մենք տեսնում ենք, որ Կաթոլիկ Եկեղեցին՝ իբրև Եկեղեցի իր բուն նշանակությամբ, տարածում է Քրիստոսի խոսքը, Ավետարանի լույսը, պայքարում է աշխարհում նաև արդիական խնդիրների դեմ, որոնց առնչությամբ առաքելահաստատ Եկեղեցիների դիրքորոշումները համընկնում են: Այսինքն՝ Եկեղեցին առաքելություն է իրականացնում, որպեսզի մարդկությունն ապրի աստվածահաճո կյանքով, Քրիստոսի պատգամների համաձայն:

**2. Արևմտյան մասնագետները հաճախ իրենց դիտարկումներում հիմնվում են վիճակագրական այն տեղեկության վրա, որ օրեցօր նվազում է եկեղեցի հաճախողների թիվը: Ինչպիսի՞ն է պատկերը մեզ մոտ:**

Այս հարցին պատասխանելուց առաջ նախ կցանկանայի անդրադառնալ բնակչության կենսամակարդակի խնդրին: Լավ է, երբ կենսամակարդակը բարձր է, բայց դա երբեմն անուղղակի կերպով բերում է մեղքերի ավելացման: Սա չի նշանակում, որ չպետք է պայքարենք աղքատության դեմ, բայց կենսամակարդակի բարձրացումը, երբ զատված է կրոնական նախանձախնդրությունից, անուղղակի կերպով բերում է նաև մեղսալի ընթացքի: Դժվար պայմաններում ապրողն աշխատում է իր գոյությունը պահպանելու համար, իսկ առատ նյութական ունեցողը, եթե հեռու է քրիստոնեական արժեհամակարգից, ընկնում է տարբեր մեղքերի մեջ, որով էլ և հեռանում Եկեղեցուց: Գուցե հենց նաև սա նկատի ունենալով Քրիստոս, երբ ասում էր, որ ավելի հեշտ է պարանը ասելի անցքով անցնի, քան հարուստը մտնի Երկնքի արքայություն (Մատթ. 19.24, Մարկ.10.25, Դուկ. 18.24): Կապիտալիստական հասարակարգի խիստ քննադատությամբ հայտնի, գիտ-

նական, հոգեբան էրիխ Ֆրոմն իր «Առողջ հասարակություն» աշխատության մեջ ներկայացնում է վիճակագրական տվյալների տարբեր պետություններում հանցագործությունների, կյանքի արատավոր բարքերի թվի վերաբերյալ: Չարմանալի է, բայց սպանությունների, ինքնասպանությունների, տարբեր հանցագործությունների, հարբեցողության ամենաբարձր ցուցանիշներն աշխարհի տնտեսապես զարգացած երկրներում են՝ Ղանիա, Շվեյցարիա, Ֆինլանդիա, Շվեդիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և այլն: Սա նշանակում է, որ մարդը, եթե հեռու է կրոնից, բավարարելով իր բնական կարիքները՝ անցնում է անբնական, մեղսալի կարիքների բավարարմանը: Հատկապես արևմտյան երկրներում եկեղեցի հաճախողների թվի նվազումը պայմանավորված է նաև այս հանգամանքով: Մեզ մոտ՝ Հայաստանում, կա արտագաղթի խնդիրը, որը բավականին մտահոգիչ է, և պետության, հասարակության, քաղաքացիների համար պատասխանատու բոլոր այրերը, հաստատությունները, երկրի իշխանությունները, եկեղեցին պետք է ջանադիր աշխատանք տանեն այս խնդրի լուծման ուղղությամբ: Արտագաղթը, իհարկե, իր ազդեցությունն է ունենում Հայաստանում եկեղեցի հաճախողների թվի նվազումով, և սա տեսանելի է նաև եկեղեցական արարողությունների հաշվարկում: Բայց նվազման տարբերությունը քիչ է, որովհետև քարոզչական գործունեությունը, որ իրականացնում են եկեղեցականները, նաև քարոզչական այնպիսի միջոցները, որոնցից են հեռուստա և ռադիո հաղորդումները, տալիս են իրենց արդյունքները: Արտագաղթողների մեջ շատ են ակտիվ հավատացյալները, ովքեր արդեն եկեղեցի կհաճախեն Հայաստանից դուրս, իսկ այստեղ, ովքեր մինչ այդ պասիվ էին հոգևոր-եկեղեցական կյանքում, քարոզչության շնորհիվ դառնում են ակտիվ հավատացյալներ: Եվ դա է պատճառը, որ հատկապես մեծ տոների մեր եկեղեցիները միշտ լի են լինում բազմաթիվ հավատացյալներով:

**3. Պասիվությունը կրոնական կյանքում նշանակո՞ւմ է, որ մարդիկ ընդհանրապես կորցրել են իրենց վստահությունը կրոնի հանդեպ:**

Պասիվությունը նշանակում է, որ մարդիկ ավելի շատ հետաքրքրվում են այլ արժեքներով, որոնք նյութական են և անցողիկ: Երբ մարդը նյութականը վեր է դասում մնացած ամեն ինչից, նա, ինչպես ասում է Քրիստոս, ծառայում է ոչ թե Աստծուն, այլ մամոնային (Մատթ. 6.24, Ղուկ. 16.13): Այսինքն՝ միայն նյութականի վրա կենտրոնանալը վնասում է հավատքը և մարդուն հեռացնում կրոնական բարձր արժեքներից: Քրիստոս չմերժեց նյութականի կարևորությունը մարդու կյանքում: Այս տեսակետից կարող ենք նույնիսկ ասել, որ քրիստոնեությունն անգամ նյութական, մատերիալիստական կրոն է, քանի որ Աստված, որ հոգի է, մարդացավ՝ նյութականացավ, Աստված ստեղծեց ոչ միայն հոգևոր, երկնային աշխարհը, այլև այս երկիրը, նյութական աշխարհը, տիեզերքը: Քրիստոս «Չայր մեր» աղոթքի մեջ սովորեցրեց աղոթել հանապազօրյա հացի համար (Մատթ. 6.11, Ղուկ. 11.3), ուտելիքի բազմացումով կերակրեց բազմաթիվ մարդկանց (Մատթ. 14.17-21, 15.32-38, Մարկ. 6.41-44, 8. 1-10, Ղուկ. 9-13-17, Յովհ. 6.9-13), սակայն սովորեցրեց նախ և առաջ խնդրել Աստծո արքայությունը, կամքը և Նրա արդարությունը (Մատթ. 6.10, 33, Ղուկ. 11.2): Երբ խախտվում է այս հերթականությունը, և մարդը նյութականը վեր է դասում մնացյալ առավել արժեքավոր իրողություններից, վնասում է իր հավատքը: Չեստևաբար, կրոնի հանդեպ վստահության պակասի խնդիրը նախ պետք է տեսնել մարդու անհատական կյանքի դիտարկումով:

**4. Ո՞վ պետք է սահմանի բարոյական ու հոգևոր արժեքները: Որքա՞ն մեծ է եկեղեցու ու հոգևոր հայրերի դերն այս հարցում:**

Բարոյական և հոգևոր արժեքներ, անշուշտ, պետք է սահմանի այդ բարձր արժեքները գիտակցողն ու կրողը կամ դրանց վերաբերյալ գիտելիքի աղբյուր հանդիսացողը: Այդպիսի բարձրագույն ատյան է գերմարդկային ատյանը, որտե-

դից դեռևս երեխայական զարգացման փուլում գտնվող մարդկությանը տրվել են հատուկ սկզբունքներ և պատվիրաններ բարոյական ու հոգևոր արժեքների վերաբերյալ: Այսպես նաև մանուկը իրենից մեծի, հասունի կարիքն ունի դաստիարակության ու կրթության համար: Ֆրանսիացի քրիստոնեական գրողներից Ֆրանսուա Ռընե դը Շատոբրիանն ասում է. «Քրիստոնեությունը կատարյալ է, մարդիկ են անկատար, իսկ կատարյալ որևէ բան չի կարող անկատարից սկիզբ առնել. հետևաբար, քրիստոնեությունն աստվածային կրոն է»: Իրոք, քրիստոնեության մեջ հրաշքներ են համարվում ոչ միայն նյութական, երևելի, գերբնական զարմանահրաշ նշանները, այլև հոգևոր բարձրագույն գիտելիքները, պատվիրանները, և եթե քրիստոնեությունից հեռացնենք նյութական հրաշքները, այնուամենայնիվ, մնում են հոգևոր-գաղափարական հրաշքները: Քրիստոնեության մեջ հիանալիորեն տրված են այնպիսի գերագույն արժեքներ, ուսուցումներ, որպիսիք չկան այլ կրոններում: Եկեղեցին և հոգևորականները պահպանողն ու տարածողն են այդ գաղափարների ու արժեքների Քրիստոսի կողմից տրված իշխանությամբ ու լիազորությամբ: Այդ մեծ պարտականությունը կատարելու համար հոգևորականներն իրենք պիտի օրինակ լինեն՝ որպես կրողն այդ արժեքների ու սկզբունքների, հեռու մնալով այնպիսի քայլերից, որոնք կարող են թեկուզ փոքր-ինչ գայթակղության առիթ դառնալ և մարդուն հեռացնել Աստուծուց, Եկեղեցուց:

**5. Արևմտյան հասարակության մեջ կարծես սովորական է դիտվում, երբ մեկն իր համար ցանկալի հավատալիք է ընտրում կամ ստեղծում՝ հիմնվելով Սուրբ Գրքի վրա: Քրիստոնեությունը նախընտրողներից լինում են մարդիկ, ովքեր իրենց հարմար թվացող ուսուցումներն ընդունում են, իսկ մյուսները՝ մերժում: Այդպիսի դիրքորոշում ունեցող մարդը կարող է իրեն քրիստոնյա կոչել:**

Նման խնդիր կա հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այնտեղ խրախուսվում է հավատացյալ լինելը, չի քաջալերվում աթեիստական դիրքորոշում ունենալը: Բայց այսպիսի քաղաքականությամբ դրական է համարվում որևէ

հավատալիք ունենալը: Ամերիկայում նույն փողոցի վրա կարելի է տեսնել տարբեր եկեղեցական շինություններ, որոնք պատկանում են տարբեր եկեղեցիների ու աղանդների, մարդը, որը որ նախընտրի, կարող է այնտեղ մտնել: Այսպես կրոնը կամ հավատքը կարծես ապրանք է դառնում՝ որը հավանել էս, այն էլ կարող էս վերցնել: Այսպիսի հասարակություններում կանայք և տղամարդիկ պատահում է, որ ապրում են միասին, ազատ հարաբերություններով՝ ոչ եկեղեցում պսակվելով և ոչ էլ նույնիսկ հետագայում ընտանիք կազմելու որոշումով, բայց իրենց համարում են քրիստոնյաներ, որովհետև իրենց այդ կրոնն է դուր եկել: Այդպիսի հասարակություններում նաև արվամուլները կամ իգացողները կարող են եկեղեցու անդամ լինել, մասնակցել եկեղեցական արարողությունների, հաղորդություն ստանալ և իրենց համարել բարեպաշտ քրիստոնյաներ: Քրիստոնյա լինելը միայն բարեպաշտություն և եկեղեցի հաճախել չէ, այլ նաև ամբողջությամբ կատարելն է այն պատվիրաններն ու պատգամները, որոնք կան Աստվածաշնչում, ապրելն է այն կյանքով, որը հաճելի է Աստծուն: Յետևաբար, չի կարելի քրիստոնեությունից դուր եկածն ընտրել, իսկ մյուսներն անտեսել, Սուրբ Գիրքը պետք է տեսնել և ընկալել իր ամբողջության մեջ: Աստվածաշնչի հատվածական ընկալումն է նաև, որ բերում է աղանդավորության ծնունդի, և կամ ինչպես կարող ենք տեսնել որոշ բողոքական արդի եկեղեցիներում՝ արվամուլ, նույն սեռի մարդու հետ ամուսնացած հոգևորականների, եպիսկոպոսների, կանանց քահանայազործության և եպիսկոպոսության վերաբերյալ ազատ մոտեցումների: Այսպիսով, Աստվածաշունչը պետք է հասկանալ և նրա պատվիրանները պահպանել ամբողջությամբ և ոչ թե ընտրողաբար:

**6. Աստվածաշունչը մեզ հիշեցնում է, որ Աստված է հաստատում վարքի և բարոյականության ընդունելի նորմերը, բայց Նա ազատություն է տալիս մարդկանց հետևելու դրանց կամ ոչ: Մարդկանց մեծամասնությունը հաճախ կառչած է մնում իր ընտանիքում ընդունված կրոնին և արժեքներին: Մի՞շտ է ճիշտ ծնողների փոխանցած կրոնական արժեքներին հավատարիմ մնալը:**

Ճշմարտությունը, հատկապես կրոնի պարագայում, չի կայանում ծնողների կրոնական դիրքորոշման և ոչ էլ կրոնի հնության կամ նորության մեջ: Եթե հակառակ ընկալումով մեր քրիստոնյա հայրերն առաջնորդվեին, ապա երբեք քրիստոնեությունը չէին ընդունի, որովհետև պիտի նայեին իրենց ծնողների հեթանոսական հավատին և մանավանդ կրոնի հնությանը, որովհետև հեթանոսությունն ավելի հին է, քան քրիստոնեությունը: Սա նշանակում է, որ պետք է առաջնորդվել ոչ միայն ավանդությանը, այլև գիտակցությանը՝ տեսնելու, թե որն է առավել ճիշտը, վեհագույնը, առաքինին և աստվածատուրը: Հեթանոսության մեջ կային տարբեր աստվածներ, որոնք մարդկային սահմանափակ մտածողության արդյունք էին: Օրինակ՝ այսօր ոչ ոք ճիշտ չի համարի արևի աստծո գոյությունը և չի պաշտի արևային աստվածության: Մինչդեռ հնում մարդիկ մտածում էին, որ արևն աստված է՝ հունական դիցաբանության մեջ Հելիոս անունով, ով իր հրե կառքով երթևեկում է երկնքում: Եվ կամ կայծակի երևույթը ներկայումս ոչ ոք չի բացատրի բարձր լեռան կատարին նստած մի աստծո առկայությամբ, ով զայրույթի պահին վերևից կայծակե զենքով հարվածում է երկրի վրա գտնվողներին: Քրիստոնեությունը նախ իր բարձր գաղափարներով և աստվածային շնորհով հաղթեց հեթանոսությանը: Այսօր մարդկանց համար լրացուցիչ օգնող են նաև գիտության նվաճումներն ու բացատրությունները բնության երևույթների մասին, որոնք նախկինում անհասկանալի էին և պաշտվում էին որպես հեթանոսական աստվածներ:

**7. Ինչո՞ւ են մարդիկ պարբերաբար հարցականի տակ դնում բարոյականությանն ու դավանանքին առնչվող տեսակետները:**

Հարցականի տակ դնել՝ նշանակում է կասկածել: Կասկածն ունի տարբեր պատճառներ՝ կրոնական, հոգեբանական, փիլիսոփայական: Կրոնական տեսակետով կասկածը կարող է լինել սատանայի փորձություն, ինչպես սերմնացանի առակում է ասվում, որ սերմանված բարի սերմերը չարը ջանում է ոչնչացնել (Մատթ. 13.19): Սուրբ Գրքում կասկածի

պատճառներից նշվում են նաև գոռոզամտությունը, անբարեպաշտությունը (Ա ՏԻՄ. 6.4), եկեղեցական հեղինակների մոտ՝ մեղավոր ընթացքը, անօրինությունները: Հոգեբանական պատճառներից են մարդու բնավորության գծերը: Մարդիկ կան, ովքեր կասկածի հակվածություն ունեն: Ընտանեկան դաստիարակությունը, անձնական կյանքի հանգամանքները մարդուն դնում են տարբեր հոգեկան վիճակների մեջ, որոնցով կարող է սրվել կասկածամտության զգացումը: Մեկ այլ բացատրությամբ՝ կասկածները կարող են պայմանավորված լինել կրոնական իմաստով ֆունդամենտալիզմի բարձր և ցածր աստիճաններով: Այս ոլորտում ֆունդամենտալիստները՝ կրոնական հավատալիքներին, ավանդույթներին նվիրված անձինք, ցուցաբերում են ֆունդամենտալիզմի բարձր և առավել նվազ աստիճաններ: Ընդգծված ֆունդամենտալիզմով մարդիկ չեն կասկածում Աստծո գոյությանը, եկեղեցուն, այլ նրանց կասկածները վերաբերում են առավելապես կրոնական իդեալները ապրելու, եկեղեցական ասպարեզում կրոնական բարելավումներ իրականացնելու գործընթացներին: Իսկ նվազ ֆունդամենտալիզմով մարդիկ կարող են կասկածել նաև կրոնի հիմնարար գաղափարներին: Սակայն կասկածը կամ ինչ-որ բան հարցականի տակ դնելը կարող է նաև դրական ազդեցություն ունենալ հավատքի զորացման գործում, որովհետև կասկած կա, որ կրոնական-ստեղծագործական է. այն օգնում է մտահորիզոնը և ուշադրությունն ավելի սևեռել կասկածի առարկայի վրա, առավել հասկանալ դեռ չըմբռնված իրողությունը և դեպի Աստված ընթանալ ոչ միայն երեխայական վստահությամբ, այլև հասուն ու մտածված քայլերով:

## **ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

### **1. Ի՞նչ է բարոյականությունը, ինչպե՞ս կարելի է սահմանել այն:**

Բարոյականությունը մարդկային վարվելակերպի, վարվեցողության և դրանց առնչվող հասկացությունների համակարգ է, որն աշխարհիկ ընկալումով պետք է ընդունելի և գո-

վելի համարվի հասարակության կողմից, իսկ կրոնական տեսակետով՝ պետք է հաստատված, ընդունելի ու գովելի համարվի Աստծո կողմից: Քանի որ աշխարհիկ ընկալմամբ հասարակությունն է սահմանում բարոյականության նորմերը, ապա տարբեր հասարակությունների պարագայում բարոյականության հասկացություններն ու վարվելաձևերը կարող են արմատականորեն տարբերվել և նույնիսկ բոլորովին միմյանց հակառակ լինել: Այսպիսի հակադրություն ակնհայտ է արևմտյան և արևելյան հասարակությունների բարոյական ընկալումներում և հասկացություններում, ըստ այդմ էլ՝ արտաքին վարվելակերպի մեջ:

Բարոյականություն ասելով՝ մարդիկ հաճախ պատկերացնում են առավելաբար սեռական կյանքին առնչվող իրողությունները, և հասարակությունների տարբերություններով էլ կարող են հակադրվել արտաամուսնական և մինչամուսնական կյանքի ու ապրելակերպի մասին պատկերացումները: Արևմտյան հասարակություններում ավելի ազատ մոտեցում կա այս հարցին, մինչդեռ արևելյան հասարակություններն ավելի պահպանողական ու ավանդական են ընտանիքին վերաբերող հարցերում:

**2. Կախված միջավայրից, ժամանակաշրջանից և մարդկային մտածելակերպի փոփոխությունից՝ երբեմն ոչ բարոյական ընկալված երևույթներն օրինականացվում են՝ դառնալով նոր ժամանակների համար բոլորովին ընդունելի ու բարոյական: Ուրեմն, բարոյականության սահմանումը լի է հարաբերականություններով:**

«Բարոյականություն» հասկացությունը հարաբերական է դառնում, երբ զրկվում է կրոնական հիմքից: Բարոյականության նորմերը պետք է հաստատվեն բարոյական բարձր գաղափարներ և իդեալականություն ունեցող անձի, ատյանի կողմից, որպիսին իր կատարելության մեջ կարող է լինել միմիայն Աստված: Երբ մարդն է իր տրամաբանությամբ բարոյականության չափանիշներ սահմանում, կրոնական-քրիստոնեական բարոյականության հետ համեմատած՝ ապաբարոյականացվում է, ընկնում նույնիսկ պղծության մեջ: Արևմուտ-

յան զարգացած երկրների տարբեր օրենքներ, որոնք վերաբերում են բարոյական կյանքի կողմերին, հասնում են նույնիսկ անհեթեթության և պղծության՝ աստվածաշնչյան-քրիստոնեական բարոյական սկզբունքների հետ համեմատությամբ ցույց տալով, թե իրական բարոյականության ինչպիսի գահավիժումներ են եղել արդի աշխարհում:

**3. Ո՞րն է կրոնական և ոչ կրոնական բարոյականության տարբերությունը:**

Բարոյականությունը հիմնվում է ազատության հասկացության վրա, սակայն ազատության ընկալումը բոլորվին տարբեր և անգամ հակադիր է աշխարհիկ ու կրոնական տեսանկյուններից: Եվ քանի որ ազատության հասկացությունն աղավաղվում է, ըստ այդմ էլ՝ աղավաղվում են բարոյականության հասկացությունն ու ընկալումը:

Աշխարհիկ տեսակետով ազատությունն նշանակում է ցանկացածն անելու թույլտվություն, իհարկե, սահման է դրվում օրենքին հակառակ ցանկությունների իրագործումը: Սակայն կրոնական տեսակետից ազատությունը նշանակում է ազատություն մեղքից և ոչ թե՝ թույլտվություն ցանկությունների իրագործման: Քանզի եթե մեղքի մեջ ենք, նշանակում է, որ ծառաներն ու կամակատարներն ենք մեղքի: Եվ ահա ազատության հասկացության այս տարբերությունն է պատճառը, որ աշխարհիկ ընկալմամբ բարոյականության ազատությունը տանում է բարոյականությունից ազատության, խղճի ազատությունը՝ խղճից ազատության, խոսքի ազատությունը՝ խոսքի սանձարձակության և այլն:

**4. Մարդուն տրվում է ազատություն՝ մտածելու և ազատ գործելու համար, բայց միշտ կարևորվում է՝ «չկորցնելով բարոյականության սահմանը»: Ո՞վ է գծում այդ սահմանը: Մարդն ինչպե՞ս պետք է հասկանա կամ զգա, որ մոտենում է այն հատելուն:**

Բարոյականության հարցերում սահմաններ գծում են օրենքը և կրոնը: Օրենքի գծած սահմանները հաճախ կարող են խիստ թերի լինել բարոյականության հասկացության

առնչությամբ: Քրիստոնեությունը բարոյականությունը, ի տարբերություն պետական օրենքի, բարձրացնում է ավելի բարձր աստիճանի՝ նշելով նույնիսկ մտավոր ոլորտում բարոյականության նախանձախնդրության մեծ անհրաժեշտությունը: Այսպիսին են Աստօր տասը պատվիրաններից հատկապես վերջինը՝ «մի ցանկացիրը»՝ մերձավորի ունեցվածքի վրա աչք չունենալը, որը բերում է բարոյականության բարձրագույն դրսևորման հորդորը: Պողոս առաքյալը, խոսելով տասնաբանյայի այս վերջին պատվիրանի մասին, ասում է, թե որտեղի՞ց պիտի իմանար, որ ցանկանալը մեղք է, եթե օրենքը չասեր (Յո. 7.7): Նաև Քրիստոս մտքում արդեն իսկ կատարված անբարոյականությունը համարժեք է համարում իրականության մեջ կատարված մեղքին (Մատթ. 5.28): Եթե համեմատելու լինենք հին աշխարհի տարբեր օրենքների հետ, ինչպիսին օրինակ Համուրապպիի օրենքներն են, որոնք հայտնի են իրենց իմաստությամբ և հասարակական կյանքի կարգավորության համար անհրաժեշտ ներունակությամբ, ապա այստեղ էլ չի նկատվում մարդու ոչ միայն արտաքին արարքներից, այլ դեռ ներաշխարհից բարոյականության դրսևորման պահանջը: Կրոնական ըմբռնումն է, որ բերում է բարոյականության բարձր ընկալումներն ու պատկերացումները:

Այսօրվա պետական օրենքի և տասը պատվիրանների միջև համեմատություն կատարելով՝ կտեսնենք, որ պետական օրենքները տասը պատվիրանների կրճատված ու աղավաղված տարբերակն են: Պետական օրենքներից դուրս են նետված այնպիսի կարևոր պատվիրաններ, ինչպիսիք են «մի շնացիրը» (Ելք 20.14), «ուրիշ Աստվածներ մի ունեցիրը» (Ելք 20.3), «կուռքեր մի սարքիրը» (Ելք 20.4), որի պատճառով աղանդավորների, կրոնական խեղաթյուրումների, հոգևորապես աղավաղված կյանքերի և բացահայտ անառակության դրսևորումների ականատեսներն ենք դառնում:

Պետության օրենքները վերաբերում են հիմնականում անձին կամ պետությանը և անձի կամ պետության ունեցվածքին պատճառված վնասին՝ որպես «մի՛ սպանիր» (Ելք 20.13), «մի՛ գողացիր» (Ելք 20.15), «սուտ վկայություն մի՛ տուր» (Ելք 20.16) պատվիրանների արտահայտություն: Սակայն չի

կարելի պետական-հասարակական կյանքում դեն նետել մյուս պատվիրանները, որովհետև այդպիսի վարմունքը կարող է բերել ընտանիքների, հասարակության բարոյազրկման, բարոյական ընկալումների աղճատման: Բարոյականության հարցում պետությունը չի կարող Պիդատոսի պես ձեռքերը լվանալ և մի կողմ կանգնել, այլ պետք է նախանձախնդիրը լինի բարոյականության ամրապնդման: Պետության ոչ նախանձախնդիր վերաբերմունքը բարոյականության ամրապնդման հարցում վնասում է երեխաներին, որոնք մեր ապագան են, և հետևաբար՝ վնասվում է մեր ապագան, ազգի, երկրի ապագան: Երեխաներն այսօր մեր երկրում ապահովված չեն բարոյալքման տանող ընթացքներից: Ցավոք սրտի, այսօր երեխաներն ավելի շատ բան գիտեն մեղքի մասին, քան մենք գիտեինք նրանց տարիքում: Երեխաների համար նախատեսված հեռուստահաղորդումները կարող են հանկարծակի ընդհատվել անպարկեշտ գովազդով, երեխաների համար նախատեսված քաղաքային այգում կամ զբոսավայրերում անառակաբարո գործունեություն է ծավալվում: Պետական պաշտոնյաները և բոլորը գիտեն, թե որ վայրերում են հավաքվում անառակները, միասեռականները և պղծություն տարածում, սակայն մինչ օրս հիմնավոր ոչինչ չեն ձեռնարկում նրանց արատավոր քայլերը կանխելու և վերացնելու համար: Պետությունների օրենքներն անգամ լուրջ պատիժ չեն սահմանում անբարոյականությամբ զբաղվողների, անբարոյականություն տարածողների համար: Մինչդեռ քրիստոնեության տված պատվիրանները, որոնք շատերին արգելքներ, սահմանափակումներ են թվում, հիմնականում զգուշացումներն են առկա վտանգներից, կորստյան տանող ճանապարհներից և ուղեցույց դեպի կյանքի բարօրություն ու հավիտենություն:

**5. Հոգևոր կյանքում ովքե՞ր կարող են ազատ համարվել:**

Հոգևոր իմաստով ազատ համարվում են մեղքից ազատ եղողները, մեղսալի ընթացքից դուրս եկածները, մեղքերի բեռից ազատվածները: Ազատության ոչ կրոնական ընկալումը

հիմնվում է մարդու իրավունքների վրա՝ պնդումով, որ մարդը, եթե չի վնասում պետությանը կամ պետության քաղաքացուն հիմնականում կյանքի և ունեցվածքի առումով, իրավունք ունի անելու իր ամեն ցանկացածը: Այս ընկալման մեջ մարդու իրավունքների շեշտումը հաճախ հակասում է հասարակության իրավունքներին, ինչպես օրինակ սեռական փոքրամասնության մեջ գտնվող անձերի իրավունքների պաշտպանությամբ ոտնահարվում են իրավունքները հասարակության, որին պարտադրվում են առանձին անձերի իրավունքները՝ հասարակության մեջ ընդունված ավանդույթներին, պատմական ընկալումներին և հասկացություններին հակառակ:

## **6. Նյութական արժեքները կարող են անբարո լինել:**

Նյութական արժեք ասելով՝ հասկանում ենք նյութից պատրաստված, ստեղծագործված արժեքավոր իրեր, ստեղծագործություններ, ինչպիսիք են մշակույթի, արվեստի ստեղծագործությունները, գլուխգործոցները: Նյութական արժեքներն ինքնին անբարո չեն, սակայն դրանց բովանդակությունը կարող է հակասել քրիստոնեական բարոյականության ընկալումներին կամ դրսևորման ձևերին, ինչպես նաև մեկի համար նյութական գերագույն արժեք է փողը, ինչը քրիստոնեական ընկալմամբ արծաթասիրության մեղքի արտահայտումն է:

Նյութի միջոցով դրսևորվող նկարչության, քանդակագործության մեջ կարող են պատկերվել մերկ մարդիկ կամ մարդկանց մերկության տեսարաններ, որոնց բացահայտ ցուցադրումն ընդունելի չէ քրիստոնեական տեսակետից: Անգամ կրոնական բովանդակությամբ նկարներ կամ քանդակներ ազատական մոտեցմամբ պատկերում են մերկ մարդկանց, մինչդեռ այսպիսի մոտեցում չենք տեսնում քրիստոնեական վաղ շրջանի մշակույթի մեջ, որտեղ մանրանկարները կամ պատկերաքանդակները կատարված են միայն մարդկային կերպարների պատկերումով և դրանցով ասելիքի խորհուրդը վեր հանելու տաղանդով: Սակայն Վերածննդի շրջանում նույնիսկ կրոնական բովանդակությամբ ստեղծագործութե-

յուններն սկսեցին հակասել կրոնական որոշ գաղափարների վաղքրիստոնեական ընկալումներին, քանի որ այդ դարաշրջանը բերում էր վերածնունդը ոչ թե մշակութային վերելքի, այլ հեթանոսական ընկալումների և գաղափարների: Ըստ այդմ՝ կրոնական թեմայով ստեղծագործություններն արդեն պատկերում էին ոչ միայն աստվածաշնչյան դրվագներ, այլ հատկապես նպատակ ունեին դրանց միջոցով պատկերելու մարդուն, նրա մարմնի գեղեցկությունը, կառուցվածքը, ուժը, նրբությունը: Դա է պատճառը, որ անգամ Քրիստոսին վերաբերող թեմայով նկարներում մարդիկ կիսամերկ են, կանայք դրսևորում են իրենց մարմնի մերկության տեսարանները: Ուրեմն, նյութական արժեքները կարող են անբարո լինել իրենց բովանդակությամբ:

**7. Բարոյագիտությունը կամ էթիկան գիտություն է բարոյականության մասին. մարդը բարոյական ծնվո՞ւմ է, թե՞ դա ներարկվում է իր աշխարհայացքի մեջ գիտության, գիտելիքի միջով:**

Մարդը ծնվում է առանց գիտելիքների և բարոյականության կամ դրան հակառակ պղծության հակումների: Հետագա դաստիարակության, գաղափարների ընկալման ժամանակ արդեն ձևավորվում են համապատասխան հակումներ: Պողոս առաքյալն ասում է, որ հավատը լսելուց է, իսկ լսելը քարոզելուց (Հռոմ. 10.14, 17): Առաքյալի խոսքն է նաև. «Աստծու շնչով գրված ամեն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանության, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար, որպեսզի կատարյալ լինի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» (Բ Տիմ. 3.16-17): Սա ցույց է տալիս, որ առանց ուսուցման մարդը կարող է մոլորվել, ընկնել մեղքի ծուղակը, քայլել անբարոյականության զարտուղի ճանապարհներով:

Հնում փիլիսոփաները վիճում էին այն հարցի շուրջ, թե առաքինությունն արդյոք բնածի՞ն է, թե՞ ձեռքբերովի: Այն օրինակն էր տրվում, որ բժշկությունն իմացող մարդը բժիշկ է, բայց արդարությունն իմացող մարդը կարող է և արդար չլինել: Ուրեմն, միայն իմացությունը բավարար չէ, այլ անհրաժեշտ է

նան կամքի դրսևորումը: Առաքյալի խոսքով՝ մինչև Քրիստոս մարդիկ օրենքի տակ էին, իսկ Փրկչի գալստից հետո՝ շնորհի (Հռ. 6.14-15, Գաղ. 3.24-26), այսինքն՝ մարդիկ օրենքի խիստ պատիժներից վախենալով է, որ պահպանում էին առաքինի ապրելակերպի շատ կանոններ: Սակայն այժմ մարդը նաև կարող է շնորհը, կարողությունն ունենալ ոչ թե իրեն վախից զսպելու, այլ ներքնապես և ամբողջապես բարոյական ու առաքինի լինելու, որովհետև Քրիստոս ոչ միայն ուսուցանեց և ցույց տվեց ճիշտ ճանապարհը, այլև դրա հետ մեկտեղ շնորհներ տվեց վերափոխվելու և կարողություն ունենալու՝ աստվածահաճո կյանքով ապրելու և գործելու համար: Հետևաբար, բարոյականությունը կամ անբարոյականությունն ի ծնե չեն լինում, այլ ուսուցմամբ ու քարոզչությամբ, և բարոյականությունն ու առաքինությունը հաստատվում են աստվածային շնորհի գործակցությամբ:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ,  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՍԵՆՈՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1. Որո՞նք են հիմնական բարոյական արժեքները: Ինչ-պե՞ս կարելի է որոշել՝ ինչն է ճիշտ, լավ ու բարի:**

«Բարոյական արժեք» ասելով՝ հասկանում ենք այն վեհ գաղափարները, պատվիրանները, ուսուցումները, որոնք ապահովում են մարդու բարոյական, առաքինի կյանքն ու նկարագիրը: Այդպիսի բարձրագույն արժեքներ են հոգևոր-բարոյական արժեքները՝ տրված Աստծո կողմից, հաստատված Քրիստոսի պատվիրաններով, ուսուցումներով: Այլ կրոններ կամ պետական համակարգեր ևս ունեն բարոյական արժեքների մոլոր օրենքներ ու պատվերներ, սակայն քրիստոնեության բարոյական արժեքներն անհամեմատ վեր են մնացյալ բոլորից: Բացի այդ, բարոյականության, առաքինության օրենքներ կարելի է շատ հաստատել, սակայն դրանց ամբողջական կատարման, ոչ միայն գործողության օրինակելիության, այլև մտքի ու սրտի մաքրությամբ իրագործելու համար մարդկային ներուժը բավարար չէ: Քրիստոնեությունը խոսում է աստվածային շնորհի մասին, որով մարդն իր կամքով, գործակից լինելով աստվածային նախախնամությանն ու զորակցությանը, կարողանում է ապրել բարոյական ու առաքինի կերպով, իսկ սայթաքելու դեպքում էլ մաքրվել ու սրբվել կատարված մեղանշումներից: Մինչդեռ միայն օրենքի հաստատումը այս շնորհն ու զորությունը չի տալիս մարդուն:

Սովորական օրենքների հետ համեմատությամբ՝ տասնաբանյա պատվիրանների առավելությունը երևում է հատկապես վերջին պատվիրանով, որը հրահանգում է չցանկանալ ուրիշի ունեցվածքը, կնոջը, ծառայողներին (Ելք 20.17): Պողոս առաքյալը, խոսելով այս պատվիրանի մասին, նշում է, որ ցանկության մեղավոր բնույթը ճանաչելի չէր լինի, եթե օրենքն ասած չլիներ՝ մի՛ ցանկացիր (Յո. 7.7): Քրիստոնեությունը բարոյականության համար անհրաժեշտ արտաքին դրսևորումները փոխադրեց ներքին արտահայտման մեջ՝ մեղքը դիտարկելով մարդու հոգևոր ներաշխարհում: Դրա համար է, որ Քրիստոս բարկությունը կարծես համարժեք հա-

մարեց մարդասպանությանը, իսկ կնոջը ցանկությամբ նայելը՝ շնությանը (Մատթ. 5.21-22, 27-28): Սուրբ Ներսես Շնորհալին «Չավատով խոստովանիմ» խորագրով իր քսանչորս աղոթքներից մեկում խնդրում է, որ Աստված իրեն զորություն տա, որպեսզի աչքերը չնայեն արատավոր բաների, և ականջները չլսեն մեղսալի, անպարկեշտ, չար խոսքեր: Քրիստոնեությունն անգամ լսելու և տեսնելու մեջ է դնում բարոյական սկզբունքներ՝ ի տարբերություն այլ օրենքների, որոնք ուշադրություն են դարձնում միայն արտաքին արարքներին, արտաքին գործողություններին: Այսօր ոչ միայն մարդկանց հետ հաղորդակցության մեջ, այլև հաճախ համացանցից օգտվելիս, հեռուստացույց դիտելիս կանգնում ենք այն անցանկալի իրողության առջև, որը շեշտել էր Ներսես Շնորհալին՝ անպարկեշտ, մեղսալի բաներ տեսնելու կամ լսելու վտանգը: Պետք է զգոն լինել. առօրյայի, ներկա տեղեկատվության ու զվարճանքների հորձանուտում գայթակղություններ, մեղսալի տեսարաններ են աչքի զարնվում, բայց այլ է դրանց հանկարծակի աչքի ընկնելը, և այլ է, երբ մարդը հավանություն է տալիս այդ պատկերներին ու տեսարաններին՝ դրանք մեղավոր հաճույքով դիտելով, ընդունելով և դրանով իսկ ընկնելով մեղքի մեջ:

**2. Պե՞տք է արդյոք ծնողներն առաջին հերթին հատկապես բարոյական բարձր արժեքներ սերմանեն իրենց երեխաների մեջ:**

«Յոգին է կենդանարար» (Յովի. 6.64): Յոգին է, որ մարմնին կենդանություն է տալիս: Եվ ինչպես, Եղիշե պատմիչի խոսքերով, հոգին առավել է, քան մարմինը, այդպես էլ պետք է առավել ջանադրություն ցուցաբերել հոգևորի համար: Այդ պատճառով Յայ Առաքելական Եկեղեցին ճիշտ է համարում մանկամկրտությունը, երեխաների հոգևորի համար ծնողների հոգալը դեռևս վաղ հասակից: Կրոնական տեսակետից մեղքի հակառակը բարոյականությունը չէ, այլ հավատը, և ծնողներն առաջին հերթին չպետք է փորձեն բարոյական բարձր ուսուցումներ տալ երեխաներին, որոնք մանուկներին անհասկանալի կարող են թվալ, այլ զորացնել նրանց հավատ-

քը: Սրա ակնարկը տեսնում ենք Պողոս առաքյալի խոսքի մեջ. «Իբրև մանուկներ ի Քրիստոս կաթ տվեցի ձեզ և ոչ՝ կերակուր, քանի որ դեռ կարող էլ չէիք» (Ա Կորնթ. 3.2):

Եթե կրոնը լիներ միայն բարոյական պահանջներ ներկայացնող, ապա այդ դեպքում քրիստոնեությունը կվերածվեր սովորական բարոյագիտության կամ բարոյական, էթիկական ուսուցումների համակարգի: Մինչդեռ հավատքի զորացումը բերում է Աստծո վեհ, առաքինի, բարոյական պատվիրանների համաձայն ապրելու վճռականությունը, ինչպես նաև շնորհը և ուժը՝ այդ պատվիրաններով ապրելու համար:

**3. Համարվում է, որ բարոյական արժեքները այն համարողկային արժեքներն են, որ գոյություն ունեն տեսականորեն և որոնց բովանդակությունը կապ չունի հասարակության զարգացման որևէ կոնկրետ պատմական շրջափուլի կամ էթնիկական ավանդույթի հետ: Իսկապես՝ այդ արժեքները համընդհանուր են բոլորի համար:**

Քրիստոս իր համբարձումից առաջ առաքյալներին ասաց. «Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի» (Մատթ. 28.19-20): Հետևաբար, Քրիստոս իր պատվիրաններն ու ուսուցումներն ընդհանուր է համարում աշխարհի բոլոր ժողովուրդների համար: Քրիստոսի պատվիրաններն ընդհանուր են, որովհետև դրանք վերաբերում են Աստծո կողմից ստեղծված մարդու հոգուն, զգացումներին, առ Աստված ձգտումին և այլ հատկանիշներին, որոնք համընդհանուր են բոլոր մարդկանց համար: Պողոս առաքյալը նույնպես ասում է, որ Քրիստոսով այլևս խտրություն չկա հրեայի և հեթանոսի միջև (Գաղ. 3.28): Հրեաները խտրություն էին դնում իրենց և այլ ժողովուրդների միջև՝ շեշտելով Աստծո կողմից ընտրյալ ժողովուրդ լինելու հանգամանքը: Բայց Քրիստոսի պատվիրանով, նաև առաքյալի ուսուցումով վերացվում էր ժողովուրդների միջև խտրականությունը, որով և բոլորի համար ընդհանուր էին դառնում քրիստոնեական արժեքները:

Կրոնական-բարոյական արժեքները վեր են նաև ժամանակի իշխանությունից, քանզի Քրիստոս ասում է. «Երկինք ու երկիր կանցնեն, բայց Իմ խոսքերը չեն անցնի» (Մարկ. 13.31): Սա նշանակում է, որ Քրիստոսի պատվիրանները տրված են բոլոր ժողովուրդների համար բոլոր ժամանակներում:

**4. Երբ փոքր երեխան նոր է քայլել սովորում, սովորաբար ծնողները հատուկ ուշադրություն են դարձնում տան անվտանգությանը՝ փակելով վարդակները, թաքցնելով սուր առարկաները և այլն: Ինչպե՞ս կարելի է ապահովել երեխայի բարոյական անվտանգությունը պատանեկության տարիներին:**

Երեխայի հոգևոր-բարոյական անվտանգությունն ապահովելու համար երեխան պետք է լինի եկեղեցու ներսում: Եկեղեցի ասելով՝ մենք նախ հասկանում ենք հավատացյալների հավաքականությունը: Այս իմաստով երեխան պետք է շրջապատված լինի հավատավոր մարդկանցով, զգա նրանց բարերար ազդեցությունը, ստանա բարի խրատներ և օրինակներ: Սակայն շատ կարևոր է նաև եկեղեցի-աղոթավայրի ներսում երեխայի հաճախակի գտնվելը: Միայն եկեղեցում է մարդն ունենում այնպիսի հոգեվիճակ, մտքի այնպիսի ընթացք, հոգու անդորր ու խաղաղություն, որ որևէ այլ տեղ ունենալ չի կարող: Եկեղեցու ներսում հոգևոր երգեցողությունը, հնչող աղոթքները, արարողություններն այնպիսի ներդաշնակություն և հանգստություն են բերում մարդու մտքին ու հոգուն, որը մեկ այլ վայրում զգալ հնարավոր չէ: Ճիշտ է, կարող ենք ցանկացած տեղում էլ աղոթել, և Աստված Իր ամենակարողությամբ ու ամենագիտությամբ մեզ ամեն տեղից էլ կլսի, բայց եկեղեցու ներսում է լինում արդյունավետ աղոթքը, որ միասնություն ու հաղորդակցություն է Աստծո հետ: Եկեղեցու ներսում սրբապատկերները, խաչի պատկերները, հավերժություն խորհրդանշող առարկաները չեն թողնում, որ մեր միտքը ցրվի այլ բաներով և այն բարձրացնում են դեպի Աստված: Նաև այս իրողությամբ եկեղեցու ներսում մարդը կարող է հոգով առավել զորանալ: Հետևաբար, երեխայի հո-

գևոր և բարոյական անվտանգության, առաքինի կյանքի հաստատման համար շատ կարևոր է, որ երեխան լինի եկեղեցու ներսում:

**5. Որոշ ծնողներ փորձում են քսանչորսամյա հսկողության տակ պահել իրենց դեռահաս զավակներին՝ պատվելով նրանց շուրջը և հսկելով յուրաքանչյուր քայլը: Երբեմն ծնողների նման պահվածքն է դրդում պատանուն հմտորեն թաքցնել արդեն գործած արարքը: Պարզ է, որ հսկողությունը հարցի լուծում չէ: Իսկ որո՞նք են լուծումները:**

Մշտական հսկողությունը, պարտադրանքը կարող են հակառակ հետևանքների հանգեցնել: Քրիստոնեությունը պարտադրանքներով չի հաստատում իր ճշմարտությունը և մեծապես կարևորում է ազատ ընտրությունը: Երբ Քրիստոս իր առաքյալներին երկու-երկու ուղարկեց քարոզչության (Մարկ. 6.7, Ղուկ. 10.1), ասաց. «Եթե մի քաղաք չընդունի ձեզ և չլսի ձեր խոսքերը, այդ քաղաքից դուրս գնալիս ձեր ոտքերից փոշին թոթափեցե՛ք» (Մատթ. 10.14, Մարկ. 6.11, Ղուկ. 10.11): Քրիստոս սովորեցրեց, որ ազատ կամքի ընտրությամբ պետք է հաստատվեն քրիստոնեական բարձր արժեքները, ապրելակերպը: Այսպես նաև երեխային պետք է ոչ թե պարտադրել, այլ թողնել ազատ ընտրության՝ ճիշտ ուղղորդելով նրա ընտրությունը: Պետք է քրիստոնեական պատվիրանները, ապրելակերպը մատուցել հրապուրանքով, որպեսզի դրանք ցանկալի լինեն երեխաներին: Երբ երեխաները սկսում են հավատալ, նրանց հավատը մեծահասակների հավատից ավելի ուժեղ է լինում առ Աստված վստահության մեջ, որովհետև նրանց մտքերը, հոգին, հայացքը պարզ ու վճիտ են և դեռ չեն ընդարմացել մեղքերով: Սրա համար էր, որ Քրիստոս իր մոտ կանչեց մի մանուկ և նրան ցույց տալով՝ ասաց աշակերտներին. «Եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. 18.2-3):

Երեխան մեծապես սիրում է Աստծուն: Մենք երեխային չենք սովորեցնում սիրել լույսը. նրանում արդեն այդ ձգտումը, հակումը կա: Այսպես և երեխային չենք սովորեցնում սիրել Աստծուն, այլ փոքրիկը, իմանալով Աստծո մասին և հա-

վատալով Նրան, մեծապես սիրում է: Դրա համար երեխաների դաստիարակությունը հարկ է իրագործել մանկական հոգեբանության լուրջ գիտակցումով: Չպետք է չոր ու կտրուկ կարգադրություններ անել՝ սա չի՛ կարելի, սա արգելված է, պե՛տք է անես այս կամ այն, ինչը բռնության զգացում և հակառակություն է բերում: Այլ հարկ է սովորեցնել և ասել՝ Աստված պատվիրել է անել այս կամ այն, Աստված ուզում է, որ այսպես վարվենք, Աստծուն դուր չի գա, երբ այդ արարքը գործես, Աստծուն կտխրեցնես քո այս մի քայլով: Եվ երեխան, իմանալով Աստծո կամքը, Աստծո հանդեպ իր մեծագույն սիրով կջանա անել Աստծուն հաճելի արարքներ և հեռու մնալ այն քայլերից, որոնք տանում են դեպի մեղքը:

## **6. Ինչի՞ց է երևում, որ պատանի դարձած երեխան բարոյական բարձր արժեքներ ունի:**

Երեխաների և մեծերի համար հոգևոր-բարոյական արժեքների հետևորդ լինելու նշանները տարբեր չեն, դրանք բոլորի համար էլ նույնն են: Քրիստոս ասում է. «Ամեն բարի ծառ բարի պտուղ է տալիս, և չար ծառ չար պտուղ է տալիս» (Մատթ. 7.17, Ղուկ. 6.43), «փշերից թուզ չեն քաղում և ոչ էլ մորեմուց՝ խաղող: Բարի մարդը իր սրտի բարի գանձերից բարին է բխեցնում, իսկ չար մարդը՝ չարն է բխեցնում» (Ղուկ. 6.44-45): Այսպես, գործերով երևում է մարդկանց այս կամ այն արժեքի կրող լինելը: Սակայն միայն գործերը չեն կարող վկայել հավատքի մասին, որովհետև աթեիստները ևս կարող են գովելի գործեր անել: Գործերի դեպքում սրտի ու մտքի մաքրությունն է դրանք արժևորում, ներքին մտայնությունն է, մտադրությունն է դրանք պայմանավորում, որոնք անտեսանելի են տեսանելի գործերի ետևում: Այդ իսկ պատճառով պետք է արտահայտվի նաև մարդու կրոնական բարեպաշտությունը, որը ենթադրում է ոչ միայն ներքին հավատք և արտաքին գործեր, այլև նախանձախնդրություն կրոնական արժեքների տարածման, հոգևոր-բարոյական կյանքի զորացմանն ուղղված քայլեր: Այսօր շատ են պասիվ հավատացյալները, որոնք այլ կերպ կոչվում են նաև գաղջ հավատացյալներ: Այս վիճակը Քրիստոս մեծապես դատապարտում է՝ ա-

սելով. «Գիտեմ քո գործերը, դու, որ ո՛չ սառն ես և ո՛չ տաք. երանի դու սառն լինեիր և կամ տաք. իսկ դու գաղջ ես՝ ո՛չ տաք, ո՛չ էլ սառն» (Յայտն. 3.15-16): Գաղջությունը կարծես բնորոշ է դարձել այսօրվա շատ հավատացյալների. այն վերացնելու համար հավատք ունենալուց և երբեմն հավատքին համարժեք գործեր անելուց բացի պետք է ցուցաբերել նախանձախնդրություն՝ կրոնական արժեքները տարածելու, դրանցով շրջապատը բարեփոխելու և համընդհանուր հոգևոր նկարագիրը զորացնելու:

**7. Որտե՞ղ է երեխան ստանում պատկերացումներ բարոյական արժեքների մասին: Որի՞ դերն է առաջնային՝ ընտանիքի՞, դպրոցի՞, շրջապատի՞ կամ միգուցե ինքնակրթությա՞ն:**

Երեխան նախ և առաջ մեծանում է ընտանիքում, այստեղ առաջին անգամ տեսնում ծնողների վարվելաձևը, զգում նրանց արժեհամակարգը: Նախ ընտանիքում երեխան պետք է դաստիարակություն ստանա, որովհետև ընտանիքը ևս եկեղեցի է, ինչպես ասում է Կաթողիկոս Գարեգին Յովսեփյանցը, և այդ եկեղեցու քահանան ընտանիքի մայրն է: Դպրոցում հաճախ տրվում են գիտելիքներ, որոնք որևէ կապ չունեն հոգևոր-զգացական ոլորտի հետ, հոգևոր նկարագիր կերտելու հետ, այլ վերաբերում են միայն մտքին, բերում գիտելիքներ և իմացություն՝ ինչպես օրինակ քիմիան, ֆիզիկան, մաթեմատիկան, քերականությունը և այլն: Բայց այստեղ կարևոր է ուսուցչի կերպարը, որովհետև ուսուցիչը հատկապես երեխայի համար օրինակման, իդեալական կերպար լինելու աղբյուր է և իր օրինակով կարող է դաստիարակել երեխաներին, նրանցում ամրապնդել հոգևոր-բարոյական արժեքներ, կերտել աստվածահաճո դիմագիծ: Շրջապատը նույնպես կարող է լավ կամ վատ ազդեցություն ունենալ՝ ըստ այդ շրջապատի բնութագրի: Սակայն երեխայի մեջ դրված ամուր հիմքը հետագայում անսասան է մնում շրջապատի կողմից: Այսպիսի օրինակներ մենք ունենք Աստվածաշնչից: Դովտն իր ընտանիքով ապրում էր Սոդոմ քաղաքում, որ կորած էր անբարոյականության, անառակության մեղքերի մեջ, ինչի պատճառով

էլ և կործանվեց: Սակայն այդ քաղաքում ապրելով՝ Ղովտը պահպանել էր իր և ընտանիքի նկարագիրը (Ծննդ. 13.12-13, 18.20, 19.1-3, 7, 16): Քրիստոս վայ է տալիս մեղսալի քաղաքներին, որոնցից էր Բեթսայիդան (Մատթ. 11.21, Ղուկ. 10.13): Բայց հենց այդ քաղաքից էին Քրիստոսի հինգ առաքյալները՝ Պետրոսը, Անդրեասը, Փիլիպպոսը (Հովհ. 1.44, 12.20), ինչպես նաև Հակոբոսն ու Հովհաննեսը: Սակայն հակառակ պարագան էլ կարող ենք տեսնել: Հուդան իր կյանքի մի կարևոր հատված եղավ Քրիստոսի և առաքյալների շրջապատում, սակայն դա չբարեփոխեց նրան, քանզի նա գող էր (Հովհ. 12.4-6) և ի վերջո նաև ուրացող ու մատնիչ դարձավ:

Երեխայի, ինչպես և մեծահասակների մեջ հավատքի և բարոյական արժեքների ամրապնդման համար մեծ դեր ունի Սուրբ Գրքի ընթերցանությունը, որը հոգևոր շահ է բերում մարդկանց, և փոխակերպում ու դարձնում առավել լավը, որովհետև այդպիսին է Աստծո խոսքի զորությունը: Քրիստոս ևս ասում է. «Միայն հացով չի ապրի մարդ, այլ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից» (Մատթ. 4.4, Ղուկ. 4.4):

**8. Ներկա ժամանակներում բարոյական արժեքների աղավաղում է տեղի ունեցել: Շատ երկրներում քրիստոնեական ավանդական պատկերացումներով անբարոյականություն համարվող գործողությունները կամ վարքն արդեն սովորական են դիտվում, ամրագրվում անգամ օրենքներով: Խոսքը հատկապես միասեռականության մասին է: Ո՞րն է Հայ Առաքելական Եկեղեցու տեսակետը, դիրքորոշումը միասեռականության վերաբերյալ:**

Այսօր, ցավոք սրտի, քրիստոնեական արժեքներից նահանջ է նկատվում: Անգամ կրոնը կարիք է համարվում մարմնական պահանջմունքները բավարարելու անհրաժեշտության նմանողությամբ, և քրիստոնեական տեսակետից անբարոյականության մեջ ապրողներն իրենց մերժելի վարքագծին են հարմարեցնում քրիստոնեական ընկալումները: Սուրբգրական թյուր մեկնաբանություններով աղճատվում են քրիստոնեական արժեքներն ու գաղափարները: Այսօր արևմտյան երկրներում սովորական են միասեռականություն քարոզող,

միասեռականներին պասկող եկեղեցիները, այդ եկեղեցիներում միասեռականների՝ նույնիսկ որպես հոգևորական կամ որպես եկեղեցու պետ ծառայությունները, միջեկեղեցական կառույցներում նման անձանց կամ նրանց համակրողների անդամական և առաջնորդական դերակատարությունները:

Մինչև 20-րդ դարի 70-ական թվականները միասեռականությունը հիվանդություն էր համարվում նաև արևմտյան երկրներում: Սակայն 1973 թ. Ամերիկյան հոգեբուժական ասոցիացիան, այնուհետ՝ 1992 թ. Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն այն ջնջեցին հիվանդությունների ցանկից: Ակնհայտ է, որ այդ ամենը կատարվել է հատկապես այդ կազմակերպություններ մուտք գործած և դրանց շարքերում տեղ զբաղեցնող ու նշյալ կողմնորոշումն ունեցող անձանց ջանքերով ու ազդեցությամբ:

Վերջին տարիներին միասեռական դիրքորոշում ունեցողներն իրենց մասին բարձրաձայնում են նաև Հայաստանում՝ պահանջելով հասարակության կամ ժողովրդի կողմից իրենց ընդունում և իրենց իրավունքների հարգում, դժգոհում են իրենց հանդեպ հակակրական վերաբերմունքից: Տարօրինակ է սեփական տեսակետը, նեղ անձնական, մարմնական կյանքին վերաբերող իրողությունը հասարակության առջև բարձրաձայնելը և այն պարտադրելը: Նրանք իրենց տեսակետին անհամաձայնությունն անվանում են խտրականություն, մեղադրում հասարակության լայն հատվածին խտրականության, ինչպես նաև հոմոֆոբիայի դրսևորման մեջ և դա պատճառ են համարում նաև ժողովրդի իրավական գիտակցության պակասի: Իհարկե, քրիստոնեական ըմբռնումով անընդունելի են բռնությունների, վիրավորանքների դրսևորումները, քանի որ քրիստոնյան, եկեղեցին պայքարում է մեղքի և ոչ թե մարդու դեմ: Սակայն արևմտյան երկրները, արևմուտքում գործող կառույցները, որոնց պետական կառավարման համակարգում, պատասխանատու պաշտոններում միասեռականներ են ընդգրկված, ջանում են Հայաստանի ներքին կյանքում խրախուսել այս երևույթը և անգամ պաշտոնապես աջակցել և հովանավորել այն:

Միացյալ Ազգերի Կազմակերպության Հայաստանյան գրասենյակը պարբերաբար իր կոչերն է հրապարակում՝ ի

պաշտպանություն Չայաստանում միասեռականության, նաև այդ հրապարակումներում, հաղորդագրություններում պաշտոնապես կոչ է անում Չայաստանի իշխանություններին քննության առնել ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ ոտնձգությունների ու վատ վերաբերմունքի դեպքերը և քրեական պատասխանատվության ենթարկել մեղավորներին: Իսկ Գերմանիայի դեսպանությունը 2015 թ. հունիսի 9-ին, հրապարակված տեղեկությունների համաձայն, զգալի դրամական աջակցություն տրամադրեց Չայաստանում միասեռականների պաշտպանության համար:

Նկատի ունենալով նաև Չայաստանում այս խնդրի ի հայտ գալը և դրա մտահոգիչ լինելը Չայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատացյալների համար՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգը 2012 թ. հրապարակեց Մայր Աթոռում բանաձևված հետևյալ կարծիքը միասեռականության վերաբերյալ.

«Չայ Եկեղեցին չի կարող ունենալ այլ դիրքորոշում, քան սուրբգրային հայտնությունն է: Ըստ այդմ՝ նույն սեռի մարդկանց սեռական հարաբերությունների առնչությամբ Սուրբ Գիրքը նմանատիպ ընթացքը հռչակում է Աստծո կամքին հակառակ. «Այր մարդու հետ չպառկես, ինչպես պառկում ես կնոջ հետ, որովհետև դա պղծություն է» (Ղևտ. 18.22):

Հովվական առաքելության մեջ, սակայն, Չայ Եկեղեցին դաստիարակչական, քարոզչական և բացատրողական աշխատանք է իրականացնում՝ Աստծո կամքն ու կրոնական ճշմարիտ տեսակետը համասեռամուլ (միասեռական, նույնասեռական) անձանց հասանելի դարձնելու և ըստ այդմ օգնելու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատվիրաններին և քրիստոնեական բարոյականության սկզբունքներին հավատարմությամբ կազմակերպելու իրենց կյանքը:

Ինքն իրեն համասեռամուլ (միասեռական, նույնասեռական) հռչակող մարդը չի կարող քրիստոնյա լինել, սակայն քրիստոնյաների մեջ կարող են ի հայտ գալ միասեռականության ախտով վարակված անձեր: Վերջիններիս Աստվածաշունչը հորդորում է մեղքից մաքրվելու, զղջումով ու ապաշխարությամբ Տիրոջը դառնալու, «քանի որ մեղքի վարձը մահն է, իսկ Աստծո շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր

Չիսուս Քրիստոսի միջոցով» (Չռ. 6.23): Եկեղեցին, սուրբգրային պատգամին հավատարիմ, կոչ է անում միասեռականներին ապաշխարելու՝ Եկեղեցուն անդամագրվելու համար, հաստատականություն դրսևորելու՝ նման հակումներից ձերբազատվելու և Աստծո կամքի համաձայն ապրելու»:

**ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ՎԻԺԵՑՄԱՆ,  
ՓՈԽՆԱԿ (ՍՈՒՐՈԳԱՏ) ՄԱՅՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՅՈՎ ԾՆՎԱԾ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ  
ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**1. Հղիության արհեստական ընդհատումն օրենքով արգելված չէ Հայաստանում: Ինչպիսի՞ն է Հայ Առաքելական Եկեղեցու դիրքորոշումը:**

Դեռևս քրիստոնեության վաղ շրջանում հաստատված եկեղեցական կանոններն արգելում են արհեստական վիժեցումը: Բարսեղ Կեսարացու կանոններով արհեստական վիժեցումը կապվում է երկու մեղքի հետ՝ ինքնասպանության և մարդասպանության: Արհեստական վիժեցման գնացող կինը վտանգում է իր կյանքը, իսկ կյանքն Աստծո կողմից տրված պարգև է յուրաքանչյուր մարդու: Անգամ բժշկության զարգացած մեր դարում քիչ չեն դեպքերը, երբ կանայք, դժբախտաբար, մահացել են արհեստական վիժեցման պատճառով: Արհեստական վիժեցումը նաև մարդասպանություն է համարվում, որովհետև քրիստոնեական ընկալմամբ՝ ձևավորված սաղմն արդեն մարդ է և հոգի ունի, ինչպես ասում են եկեղեցական հեղինակները: «Նա, որ պիտի մարդ լինի, արդեն իսկ մարդ է», - ասում է քրիստոնեության վաղ շրջանի եկեղեցական հեղինակներից Տերտուղիանոսը:

Հոգին առկա է մարդկային բեղմնավորված սաղմի մեջ, ինչպես որ կրակի մեջ առկա է նրան հատուկ լույսը: Դրա համար էլ արհեստական վիժեցումը դիտվում է նաև մարդասպանություն կամ մանկասպանություն: Եկեղեցական կանոններով այս քայլին դիմած կանանց արգելվում է եկեղեցի մտնել, նրանք զրկվում են Սուրբ Հաղորդություն ստանալուց, և այդպիսիներին միայն վերջին հաղորդություն է տրվում մահվան մահճում: Այս կանոնը մինչև այսօր խստությամբ

պահպանվում է Կաթոլիկ Եկեղեցուն, որի հավատացյալներից արհեստական վիժեցման դիմած կանայք զրկվում են Եկեղեցուն Սուրբ Հաղորդություն ստանալուց: Սակայն եկեղեցական այդ կանոնը ներկայումս չի գործադրվում մեր Եկեղեցուն, այլ առավել չափով ներողամտություն է ցուցաբերվում՝ զուգահեռաբար դաստիարակչական, կրթական աշխատանքի կատարմամբ, որպեսզի կինը և տղամարդն առավել լավ հասկանան կրոնական մոտեցումը և մարդու գերագույն արժեքը: Մինչդեռ Կաթոլիկ Եկեղեցուն վերստին շեշտվեց արհեստական վիժեցում կատարող կանանց Հաղորդությունից զրկելը, և անգամ Բենեդիկտոս 16-րդ Հռոմի պապը 2007 թ. Հարավային Ամերիկա իր այցելության ժամանակ հատուկ կերպով հաստատեց այս տեսակետը՝ այդ քայլին դիմած կանանց Սուրբ Հաղորդությունից զրկելու դիրքորոշումով: Հռոմի ներկա պապ Ֆրանցիսկոսը, սակայն, քայլեր է ձեռնարկում եկեղեցական ժողովի միջոցով այդ մոտեցումը մեղմելու համար:

**2. Քրիստոնեությունն ազատությունը սահմանափակող կրոն չէ: Իսկ մարդն ազատ է՝ իր մարմինը տնօրինելու: Ուրեմն, ինչո՞ւ է մեղք համարվում աբորտը՝ արհեստական վիժեցումը:**

Արհեստական վիժեցումը կյանքի դեմ գործվող մեղք է համարվում: Մարդն ազատ է տնօրինելու իր մարմինը միայն իր անձի, իր մարմնի բարօրության, խնամքի համար, այլ ոչ թե վնասելու և սպանելու համար: Մինչդեռ արհեստական վիժեցումն անգամ կյանքին է վնաս բերում, առողջության դեմ գործողություն է: Բացի դրանից, չծնված երեխայի մարմինը, որ ձևավորման ընթացքի մեջ է, մոր մարմնի հետ նույնական չէ, և իր մարմինը տնօրինելու կնոջ իրավունքը չպիտի խախտի իր զավակի ապրելու իրավունքը և չպիտի վերաբերի զավակի մարմնին: Այսինքն՝ կինը, վիժեցման գնալով, միայն իր մարմինը չէ, որ տնօրինում է, այլև իր զավակի մարմինը, ինչն անթույլատրելի է:

Քրիստոնեական ազատության հասկացությունը տարբեր է ազատության աղճատված ընկալումներից, քանզի շատերը

«ազատություն» հասկանում են որպես սանձարձակություն, ամեն ինչ անելու թույլտվություն: Մինչդեռ քրիստոնեության մեջ ազատությունը նախ և առաջ ազատություն է մեղքից ու չարից, իսկ մեղք գործելու թվացյալ ազատությունը մարդուն գերի է դարձնում հենց մեղքին և հպատակ՝ չարին: Պետրոս առաքյալը հակիրճ բացատրում է ազատության իրական գաղափարը՝ ասելով. «Ազատությունը չարիքի պատրվակ մի՛ դարձրեք» (Ա Պետ. 2.16): Ուրեմն, մարմինը տնօրինելու ազատությունը ևս պետք է դիտարկել այս գաղափարով:

Պետք է տեսնել նաև պատճառները, որոնք կանանց դրդում են արհեստական վիժեցման: Սովորաբար միայն կանանց չպետք է մեղադրել, որովհետև ընտանիքներում նաև ամուսիններն են մասնակից այս մեղքին: Արհեստական վիժեցման պատճառներից է անցանկալի հղիությունը, երբ զույգերի համար անսպասելի է լինում ապագա զավակի լույս աշխարհ գալու փաստը, և որոշում են ազատվել զավակից: Անմահության ձգտումը, այս աշխարհում սեփական գոյությունը չդադարեցնելու մահկանացու մարդու ցանկությունը բերում է սևեռուն միտքը տղա երեխա ունենալու, ով շարունակելու է իր արմատները, ազգը, սերունդը, իր տեսակը: Այդ իսկ պատճառով, երբ բոլորովին վերջերս բժշկական տեխնոլոգիաների զարգացումով մարդիկ կարողացան կանխատեսել երեխայի սեռը, ավելի շատացավ արհեստական վիժեցումների քանակը, քանի որ մարդիկ սկսեցին ազատվել չծնված աղջիկ զավակներից: Սա խնդիր դարձավ նաև Հայաստանում, որի առնչությամբ անգամ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը դիտողություն արեց Հայաստանին: Եվ այսօր մեր երկրում փորձում են համապատասխան օրենք սահմանել՝ չծնված երեխայի սեռը բժշկի կողմից ծնողներին բացահայտելն արգելելու համար, որպեսզի կանխվեն աղջիկ երեխաների սպանությունները: Կարծում եմ՝ մեր ժողովուրդը, որ ազգային ավանդույթների, բարոյական արժեքների կրողն է, աշխարհում առաջինը քրիստոնեությունն ընդունողը, չպետք է հասներ այն վիճակի, որ դրսից մեզ դիտողություն անեին, և մենք էլ ուրիշների արած դիտողությամբ փորձեինք շտկել իրավիճակը: Այս փաստը պատշաճ չէ մեր ազգի համար: Հայաստանում կատարված

մի ուսումնասիրության համաձայն՝ շատերն էլ ցանկանում են տղա ունենալ ոչ թե ազգի շարունակելիության համար, այլ այն նպատակով, որ իրենց ունեցվածքը, ողջ կյանքում աշխատածը չթողնեն փեսաներին, այլ իրենց արյունն ունեցող որդիներին: Այսպիսի մտածումներն են, որ խթանում են արբորտների կատարումը: Սակայն մեր ցանկությունն իրագործելուց առաջ պետք է փնտրենք կյանքը ստեղծող Աստծո կամքը և վարվենք Տիրոջ կամքի համաձայն:

**3. Իսկ եթե արհեստական վիժեցման որոշում ընդունող կինը կամ ընտանիքը զուտ սոցիալական կամ առողջական խնդիրներ ունի և պարզապես չի կարող երեխային պահե՞լ:**

Սոցիալական խնդիրները չեն կարող արդարացնել չծնված երեխաների սպանությունը: Այլապես մենք կարող ենք արդարացնել աղքատության պատճառով արդեն իսկ ծնված երեխաների, կամ մի քանի տարեկան մանուկների սպանությունը ծնողների կողմից: Հետաքրքրական է, որ սոցիալական պատճառներով իր նորածին երեխային սպանած մորը հասարակությունը, օրենքը դատապարտում են, իսկ դեռ չծնվածի սպանությունն առ ոչինչ է համարվում: Սա ցույց է տալիս, որ ընկալման սխալ կա, քանի որ բժշկության մեջ հայտնի են դեպքեր, երբ երեխաները վաղահաս են ծնվում և հատուկ պայմաններում պահվում են բժիշկների խնամքի ներքո հատուկ տարաներում, մինչև որ վերջնականապես ձևավորվում են և հանձնվում ծնողներին: Ուրեմն, սխալ հասկացողությունն այն է, որ մոր որովայնում գտնվելը մարդուն մարդ չի դարձնում, իսկ հիվանդասենյակում գտնվելը մարդու արժեք է տալիս, կամ՝ դեռ չծնվածը, մոր որովայնից դեռևս դուրս չեկածը մարդ չէ, իսկ հենց մոր ծնվածն արդեն մարդ է: Այս սխալ ընկալման դեմ է, որ պայքարում է եկեղեցական, քրիստոնեական դիրքորոշումը, քանի որ կենդանություն ունեցող մարդկային էակը մարդ է՝ լինի ծնված, թե դեռ չծնված:

Արհեստական վիժեցմանն առնչվող Աստվածաշնչի մի դրվագ կա, որում խոսվում է վիճող տղամարդկանց կողմից

պատահաբար հղի կնոջը վնասելու մասին: Ըստ Սուրբ Գրքի՝ եթե պտուղը ձևավորված չէ, այսինքն՝ շատ վաղ հղիություն է, ապա վնասող մարդը պատժի ենթակա չէ, այլ պետք է տա այն, ինչ կնոջ ամուսինը հարմար գտնի, այսինքն՝ որևէ ունեցվածք կամ դրամական փոխհատուցում վնասի դիմաց: Սակայն եթե պտուղն արդեն ձևավորված է, ապա ձևավորված պտղին մահ պատճառելը համարվում է մարդասպանություն, և այդ արարքը գործած մարդը ենթարկվում է մահապատժի՝ «կյանքի դիմաց կյանք» Հին Կտակարանի սկզբունքի համաձայն (Ելք 21.23): Բայց ամեն պարագայում պետք է հիշել, որ նման դեպքերում գործ ունենք ձևավորված կամ դեռևս չձևավորված, սակայն մարդկային էակի հետ:

Նոր Կտակարանում հիանալի պատմություն կա հղի Աստվածածնի մասին: Երբ նա հանդիպում է Եղիսաբեթին՝ Հովհաննես Մկրտչի մորը, ով նույնպես հղի էր, մանուկը խաղում է Եղիսաբեթի որովայնում Սուրբ Մարիամի ձայնից: Եվ Եղիսաբեթը մարգարեանալով՝ ասում է. «Օրհնեա՛լ ես դու կանանց մեջ, և օրհնեա՛լ է քո որովայնի պտուղը: Որտեղի՞ց ինձ այս ուրախությունը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մոտ գա. որովհետև ահավասիկ, երբ քո ողջույնի ձայնը հասավ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնում» (Ղուկ. 1.42-44): Գիշտ է, այստեղ խոսքը մանուկ Հիսուսի, Հովհաննես Մկրտչի պես մեծությունների մասին է, ովքեր պիտի ծնվեին, սակայն սա ևս ցույց է տալիս, որ երեխաները կապված են իրենց մոր հետ, դեռ վաղահաս շրջանում նույնիսկ ազդվում են այն ամենից, ինչ կատարվում է իրենց մայրերի հետ: Սա ապացուցել է նաև բժշկությունը, իսկ բժշկական հետազոտությունները ցույց են տվել, որ հղիության արհեստական ընդատման ժամանակ պտուղները ջանում են հեռու փախչել և զգում են պատառոտվելու ու սպանվելու ցավը: Այնպես որ պետք է լավ մտածել արհեստական վիժեցում կատարելուց առաջ, քանի որ դեռ չծնված փոքրիկները նույնպես մարդ են, և նրանց սպանելը մարդասպանություն է: Այսօր շատ բժիշկներ կան աշխարհում, ովքեր, նորովի մտածելով մարդկային կյանքի մասին, երկար տարիների պրակտիկայից հետո արդեն հրաժարվել են արհեստական վիժեցում կատարելուց: Առողջական խնդիրների պատճառով մոր կյանքին սպառնա-

ցող վտանգի դեպքում եկեղեցական տեսակետով ոչ թե ճշմարտացի, այլ թույլատրելի է համարվում հղիությունն ընդհատելը՝ կնոջ կյանքը փրկելու համար:

#### **4. Եթե կնոջը բռնաբարել են, և նա համարում է, որ պտուղը մեղքի արդյունք է...**

Նման պարագաներում փոքրիկ երեխան չէ, որ պետք է պատժվի, այլ հանցանքը գործած անձը: Երեխան ինքնին անմեղ է և չի կարող պատասխանատվություն կրել իր ծնողի կամ ծնողների մեղքերի համար և պատժի կամ առավել ևս մահապատժի ենթարկվել: Ենթադրենք, որ կնոջն ինչ-որ պատճառով չի հաջողվել արհեստական վիժեցում կատարել և երեխան ծնվել է: Արդյո՞ք մենք այս դեպքում էլ կարող ենք պնդել, որ կինն իրավունք ունի սպանելու իր պտղին, քանի որ բռնաբարության հետևանք է: Իհարկե, ո՛չ: Հետևաբար, պետք է գիտակցել, որ արդեն ծնվելու ենթակա մարդկային էակը նույնպիսի մարդ է, ինչպես որ հենց նոր ծնված մարդը:

Կաթոլիկ եկեղեցին մի քանի տարի առաջ Բրազիլիայում այս հարցի հետ կապված պայքարի մեջ էր բրազիլական կառավարության հետ: Այդ երկրի կին նախագահը, ով հավատացյալ կաթոլիկ քրիստոնյա է, նույնպես չի ընդունում արհեստական վիժեցումը, սակայն նա ցանկանում էր իշխանությունների հետ միասին օրենք ընդունել՝ հաստատելու կնոջ իրավունքը արհեստական վիժեցման դիմելու այն դեպքում, երբ հղիությունը եղել է բռնաբարության պատճառով: Օրենքն ի վերջո ընդունվեց՝ հակառակ Կաթոլիկ եկեղեցու առարկությանը, և հավելվեց կյանքի փրկության համար արհեստական վիժեցում կատարելու թույլտվությունը սահմանող օրենքին: Այս դեպքերից բացի, Բրազիլիայում արհեստական վիժեցման կատարումը պատժվում է օրենքով՝ մեկից չորս տարի ազատազրկմամբ, թե՛ կնոջ և թե՛ բժշկի պարագայում: Բրազիլիայի օրենքում, ինչպես նաև սահմանադրության մեջ հաստատվում է մարդկային սաղմի ապրելու իրավունքը՝ հղիության առաջին պահից սկսած: Բացառություն է արվել նաև անենցեֆալիայի՝ գլխուղեղի բնածին բացակայությամբ սաղմի արհեստական վիժեցման համար:

Օրենքով ևս այս դեպքի համար վիժեցումը թույլատրելի է նկատվում, ինչի դեմ, սակայն, հանդես են եկել կրոնական կողմորոշում ունեցող կազմակերպությունները՝ պնդելով, որ այդպիսի երեխաները նույնպես ունեն ապրելու իրավունք: Արհեստական վիժեցումն օրենքով արգելված է աֆրիկյան, Մերձավոր Արևելքի շատ երկրներում, հարավամերիկյան երկրներում՝ որոնցից են Բրազիլիան, Չիլի, Վենեսուելան, Նիկարագուան, Պարագվայը, Պանաման և այլն, Եվրոպայում՝ Իռլանդիայում, Մալթայում, Վատիկանում, իսկ եվրոպական և հյուսիսամերիկյան այլ երկրներում կան հզոր շարժումներ արհեստական վիժեցման դեմ:

Եկեղեցու կողմից անընդունելի է արհեստական վիժեցման կամ հղիության արհեստական ընդհատման ցանկացած դեպք, բացի կյանքի փրկության համար կատարված գործողությունից: Աստվածաշնչում նշվում է, որ Աստված հայրերի մեղքերի համար զավակներին, եթե մասնակից չեն մեղքերին, երբեք չի պատժում (Բ Օր. 24.16, Երեմ. 31.29-30, Եզեկ. 18.19-20): Եվ մարդիկ էլ պետք է աստվածանմանությամբ չպատժեն անմեղ փոքրիկներին հայրերի մեղքերի համար:

### **5. Ի՞նչ հետևանքներ, առողջական-հոգեբանական վնասներ կարող են հետևել արհեստական վիժեցմանը:**

Արհեստական վիժեցմանն իրապես հաջորդում են առողջական և հոգեբանական խնդիրներ: Լավ է, երբ կանայք շուտ կազդուրվում են, սակայն հաճախ էլ առողջական բարդացումներ են լինում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քիչ չեն այն կանայք, ովքեր տարբեր բարդացումներով արհեստական վիժեցումից հետո նորից բժշկի են դիմում: Հոգեբանական-զգացական խնդիրները ևս ակնհայտ են դառնում: Եթե ամուսինները հավատացյալ են, բայց սոցիալական կամ այլ պատճառներով դիմել են արհեստական վիժեցման, միևնույն ժամանակ իմանալով Եկեղեցու դիրքորոշումը, ապա այդուհետ ապրում են մեղքի մշտական գիտակցությամբ, դեպքը հիշելիս՝ ճնշված կամ տխուր զգացումներով: Դրա հետևանքով կարող են տուժել ամուսինների փոխհարաբերությունները, իսկ դրանից արդեն՝ իրենց երեխաների հանդեպ վերաբերմունքը:

Մեր եկեղեցուն աշխատանքներ են տարվում՝ պատրաստելու Հայ եկեղեցու սոցիալական հայեցակարգը, որն անդրադառնալու է նաև այսպիսի հարցերի: Կաթոլիկ, Ուղղափառ եկեղեցիներն ունեն իրենց սոցիալական հայեցակարգը՝ տարբեր դեպքերի, հանգամանքների համար սահմանված պատասխաններով: Սակայն դրանցում բացասական երևույթ կա: Այդ պատասխանները հիմնված են եկեղեցական հեղինակների, Աստվածաշնչի դիրքորոշման վրա, բայց երբեմն սեղմ են և միայն ժխտական և ոչ՝ ուսուցողական բնույթի: Այդպես է պարագան նաև արիեստական վիժեցման առնչությամբ: Ասվում է, որ դա ընդունելի չէ եկեղեցու կողմից աստվածաշնորհ կյանքի, ապրելու իրավունքի նկատառումով: Սակայն չի ասվում, թե ինչպե՞ս պետք է վարվեն ամուսիններն իրենց ամուսնական կյանքի ընթացքում: Ամուսնացյալ կինն ու տղամարդն ամեն օր չեն կարող ճգնավորի պես ապրել, բայց նաև տասնամյակների ամուսնության ընթացքում ամեն տարի չեն կարող երեխա ունենալ: Հայտնի է, որ կանայք երբեմն մինչև 50 տարեկան, իսկ տղամարդիկ մինչև 80-90 տարեկան ընդունակ են երեխա ունենալու: Կաթոլիկ եկեղեցին վերջին տարիներին արիեստական վիժեցման դեմ խիստ դիրքորոշումը վերահաստատելուց հետո նաև արգելեց և դատապարտելի համարեց բեղմնավորումը կանխող միջոցների օգտագործումը, քանի որ դրանք նպաստում են անբարոյականության և սեռական անբուժելի հիվանդությունների, ինչպես օրինակ՝ ՄԻՎՎ և ՁԻԱՀ վարակների տարածմանը:

Արիեստական վիժեցման խնդիրներին վերաբերող եկեղեցական կանոնները հիմնականում հաստատվել են ամուսնական կյանքով չապրած, միջնադարյան եկեղեցական հեղինակների, գործիչների կողմից, ովքեր այդպես էլ մանրամասն չեն բացատրել ամուսինների կեցության և արիեստական վիժեցումից խուսափելու քայլերը՝ բերելով միայն արգելող կամ դատապարտող հայտարարություններ: Սա բավական չէ և ուղղորդող չէ ամուսինների համար: Հոգևորականները պետք է բացեն փակագծերը և բացահայտ ցուցումներ տան հավատացյալ ամուսիններին՝ հիմնված քրիստոնեական վարդապետության, Սուրբ Գրքի ուսուցման վրա: Եթե ասելի-

քը պատշաճ չէ կամ տեղին չէ հոգևորականի բառապաշարի համար, ապա Եկեղեցին ամուսինների դաստիարակությունը պետք է իրականացնի նաև հավատավոր բժիշկների միջոցով, ովքեր մասնագիտորեն խորհուրդներ կտան: Արհեստական վիժեցման խնդրի լուծումը մարդկային գիտակցության մեջ ամրապնդելն է մարդու կյանքի գերագույն արժեք լինելու գաղափարի, կյանքի աստվածաշնորհի լինելու և դեռ չծնված երեխայի արդեն իսկ մարդ լինելու և հաստատելու ընկալումն ապրելու իրավունքի մասին:

**7. Անդրադառնանք փոխնակ՝ սուրոգատ մայրությանը: Մասնագետների գնահատմամբ՝ այսօր Հայաստանում անպտղությունը լուրջ խնդիր է, և այս տեսակետից փոխնակ մայրությունն անպտղության դեմ պայքարի մեթոդ է: Պետք չէ՞ այն դիտարկել որպես մարդասիրական քայլ և ի վերջո մեր երկրի ժողովրդագրական խնդիրների լուծման արդյունավետ տարբերակ: Եկեղեցին ինչո՞ւ է դեմ փոխնակ մոր ինստիտուտին:**

Փոխնակ մայրությունը կարող է լուծում լինել անպտղության խնդրի և բնակչության թվաքանակի բարելավման համար: Սակայն կան խնդիրներ, որոնք դրական լույսի ներքո չեն ներկայացնում փոխնակ մայրության երևույթը: Բեղմնավորված էմբրիոնները, որոնք կրոնական հասկացությամբ հոգի ունեցող մարդկային գոյություն են, ենթարկվում են փորձերի, և դրանցից միայն մեկն է տեղադրվում փոխնակ մոր օրգանիզմում, մյուսները ոչնչանում կամ ոչնչացվում են: Խախտվում է երեխայի իրավունքը՝ ծնվելու ամուսնական միությամբ իրար կապված ծնողներից: Ծագում են հոգեբանական լուրջ խնդիրներ հատկապես փոխնակ մայր հանդիսացած անձի մոտ: Այսինքն՝ կարող են բժշկական առումով խնդիրներ չլինել, սակայն ծագում են բիոէթիկայի խնդիրները: Փոխնակ մայրերին ներկայացվող պահանջներն են՝ տարիքը 20 – 35 տարեկան, ինքնուրույն ծննդաբերած մեկ կամ ավելի երեխայի առկայություն, հոգեկան և սոմատիկ, այսինքն՝ մարմնական առողջություն: Ապագա փոխնակ մայրերը բժշկական քննություն են անցնում առողջության և հոգեկան վիճակի ստուգման համար: Սակայն մարմնական վիճա-

կի և հոգեկան հավասարակշռության վերաբերյալ բժշկական քննությունից զատ պետք է նաև հոգեբանական խորը քննություն: Երեխայի հետ գենետիկական կապի բացակայությունը չի վերացնում երեխայի հետ փոխնակ մոր հոգեբանական և զգացական մեծ կապվածությունը: Բացի դրանից, նույնիսկ եթե հոգեբանական հավասարակշռվածությունը կամ չափավորված զգացմունքայնությունն ու բարձր ինքնատիրապետումը հաստատվում է, ապա միևնույն է, այդ քննությունը երբեք չի կարող ճշգրիտ լինել, քանի որ հղիության ընթացքում փոխվում են կնոջ հոգեբանությունն ու ընկալումները:

Այս իրողության լրջագույն խնդիր լինելն ակնհայտ դարձավ 1986 թ., երբ Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Նյու Ջերսիում, փոխնակ մայրը, որը հղիության ընթացքում զգացականությամբ կապվել էր իր որովայնում կրող երեխայի հետ, հրաժարվեց երեխային տալ պատվիրատուներին: Դատական երկար գործընթացներ սկսվեցին, և ի վերջո՝ երեխան տրվեց կենսաբանական ծնողներին, իսկ փոխնակ մորը իրավունք վերապահվեց երեխային այցելելու: Այս խնդիրներից զատ՝ խնդիր է առաջանում սահմանելու, թե ինչ է մայրությունը. դեպքերից մեկում տատիկը ևս իր թոռնիկի մայրն է դառնում՝ կրելով և ծննդաբերելով իր դստեր երեխային: Մի քանի մայրեր ունենալու իրողությունն իր ծնվելու ձևի մասին իմացած երեխայի կամ պատանու մոտ ինքնագիտակցության ճգնաժամ է առաջացնում՝ «մայր» հասկացության հետ կապված: Փոխնակ մայրությունը որդեծնությունը վերածում է բժշկական տեխնիկական գործողության և առևտրի, քանի որ կարծես երեխա են արտադրում ու վաճառում, ինչպես որ խանութում արտադրված ապրանքներ են ծախում: Այս կարծիքը տեղին է, քանի որ փոխնակ մայրերը դրան աշխատելու համար են դառնում ուրիշի երեխայի կրողներ, և այս երևույթի մեջ առևտրի առկայությունն առավել քան ակնհայտ է:

Եկեղեցու՝ փոխնակ մայրության դեմ լինելը նաև երևույթի ընկալման հետ է առնչվում: Այն, ինչ բժիշկը սահմանում է անպտղություն, Աստվածաշունչը բացատրում է որպես Աստծո օրհնության հապաղում: Աստվածաշնչում նշվում է, որ Զակարի կին Ռաբելը դժգոհում էր ամուսնուց երեխա չունենալու

համար, իսկ Հակոբը պատասխանում է. «Մի՞թե Աստծո փոխարինողն եմ ես, որ զրկել է քեզ ծննդաբերելուց» (Ելք 30.1-2): Այսպես նաև Աբրահամի կին Սառան մինչև ծերություն երեխա չէր կարողանում ունենալ: Սակայն Աստծո օրհնությամբ, ասում է Սուրբ Գիրքը, և՛ Ռաբելն է զավակ ունենում (30.22-24), և՛ Սառան, ով սկզբում նույնիսկ ծիծաղեց այն մտքի վրա, թե այդ տարիքում մայր է դառնալու (Ծննդ. 18.11-15, 21.1-2): Նաև Սամուել մարգարեի մայր Աննան, Սուրբ Սարիամ Աստվածածնի ծնողները երկար տարիներ զավակ չէին ունենում, բայց աղոթքով Աստված նրանց արժանացնում է այդ օրհնությանը (Ա թագ. 1.9-13, 19-20): Եկեղեցում հանդիպում ենք ծնողների, ովքեր իրենց երեխաներին բերում են մկրտության կամ օրհնության՝ ուրախությամբ հայտնելով, որ մեկ և անգամ երկու տասնամյակից ավելի երեխա չունենալուց հետո Աստված իրենց զավակ է պարգևել: Իսկ փոխնակ մայրությանը դիմող շատ զույգեր ամուսնական կյանքի կարճ ժամանակից հետո արդեն զավակ ունենալու այլ տարբերակներ են փնտրում: Իհարկե, բժիշկներն ախտորոշում են կնոջ անկարողություն՝ զավակ ծննդաբերելու, կամ կնոջ և կամ ամուսնու առողջական խնդիր, որի պատճառով հնարավոր չէ զավակ ունենալ: Սակայն բժշկական հետազոտությամբ նույնպիսի ախտորոշում կլիներ նաև Սառայի, Ռաբելի, Աննայի, Սուրբ Աստվածածնի ծնողների պարագայում, ովքեր, սակայն, զավակներ են ունեցել:

Այսօր մեր հասարակության մեջ տարածված է անպտղության պատճառով ամուսինների բաժանումը՝ հիմնական մեղքը բարդելով կնոջ վրա: Սակայն Եկեղեցին, մի քանի դեպքեր նշելով ամուսինների բաժանման, չի պարտադրել զավակ ունենալու անկարողության պատճառով բաժանումը, քանի որ որդեծնությունն աստվածային օրհնությամբ է լինում, և այդ օրհնությունն ի վերջո զավակների ծննդյան ուրախությունը կբերի ընտանեկան կյանքում: Սա է փաստում տասը, քսան և ավելի տարիներ զավակներ չունեցած, բայց, ի վերջո, որդեծնության բերկրանքին արժանացած ամուսինների պատմությունը: Հղիության արհեստական ընդհատման պարագայում կնոջ կյանքի փրկության համար Եկեղեցին թույլ է տալիս արհեստական վիժեցման դիմել: Փոխնակ մայրության պա-

րագայում էլ գուցե կարելի է հարցը խորը ուսումնասիրմամբ մի բացառություն կարգել՝ նկատի ունենալով և՛ ամուսնու, և՛ կնոջ անկարող լինելը որդեծնության համար: Այս հարցը դեռ քննարկելի է, իսկ մինչ այդ Կաթոլիկ և Ուղղափառ եկեղեցիներն իրենց դիրքորոշումներով արդեն հստակորեն անընդունելի են համարել փոխնակ մայրությունը: Եթե ամուսինները զավակներ չեն ունենում, ապա լուծումներից մեկը, որ համապատասխան կլինի քրիստոնեական ընկալումներին, նախ և առաջ գուցե որբ երեխա որդեգրելն է՝ մեկին ծնողական սեր և հոգածություն պարգևելը, այդ հնարավորությունից զրկված երեխային երջանկություն մվիրելը: Այս հիանալի բարեգործությունը մեծապես հաճելի և ընդունելի է Աստծո համար: Հիշենք Քրիստոսի խոսքը. «Ով որ իմ ամուսնով մի այսպիսի մանուկ ընդունելու լինի, Ինձ կընդունի» (Մատթ. 18.5, Մարկ. 9.36, Ղուկ. 9.48): Հայտնի են դեպքեր, երբ երեխաներ որդեգրած ամուսիններն իրենք են շուտով երեխաներ ունեցել:

Պետք է նշել, որ Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեդիայում, Ամերիկայի որոշ նահանգներում փոխնակ մոր ծառայություններ մատուցելն օրենքով արգելված է: Սակայն Հայաստանում 2002 թվականից փոխնակ մայրությունն օրենքով թույլատրելի է դարձել: Սա մեկ անգամ ևս վկայում է, որ Եվրոպան, պատահում է, ավելի նախանձախնդիր մոտեցում է ցուցաբերում արդի երևույթների նկատմամբ, ինչպիսին է նաև Ֆրանսիայում Եհովայի վկաներ աղանդի պետականորեն գրանցման արգելումը: Մինչդեռ, ինչպես երևում է, Եվրոպականացման ձգտող Հայաստանը թե՛ փոխնակ մայրության, թե՛ աղանդավորներին պետական գրանցում տալու և թե՛ այլ երևույթների հարցում ձգտում է Եվրոպացուց ավելի Եվրոպացի լինել, ինչը կարող է մեծ վնաս բերել մեր ժողովրդին՝ քրիստոնեական արժեքների ընկալման, բարոյականության հաստատման, հոգևոր կյանքի աղճատման տեսակետից:

**8. Փոխնակ մայրության ճանապարհով ծնված մանկանը եկեղեցին մկրտո՞ւմ է, համարո՞ւմ է իր համայնքի լիարժեք անդամ:**

Եկեղեցին մկրտում է երեխաներին, քանի որ նրանք մասնակից չեն իրենց ծնողների մեղքերին և չի գրկում Աստծո շնորհներն ընդունելու, Երկնքի արքայության ժառանգորդ դառնալու հնարավորությունից: Երբ առաքյալներն արգելեցին երեխաներին Քրիստոսին մոտենալ, մեր Տերը՝ Քրիստոս, երեխաների մասին ասաց. «Թո՛ւյլ տվեք այդ մանուկներին ինձ մոտ գալ և մի՛ արգելեք, որ նրանք Ինձ մոտ գան, որովհետև Երկնքի արքայությունը այդպիսիներինն է» (Մատթ. 19.13-14): Բացի դրանից Քրիստոս երեխաներին օրինակ բերեց բոլոր հավատացյալների համար՝ ասելով. «Ճշմարիտ են ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. 18.3): Ուրեմն, Եկեղեցին հայրերի ու մայրերի մեղքերը չվերագրելով զավակներին՝ մկրտում է երեխաներին, որպեսզի Աստծո շնորհները սփռվեն երեխաների վրա, և նրանք դառնան լավ ու բարի մարդիկ, աստվածահաճո քրիստոնյաներ և արժանի լինեն փրկության ու հավիտենական կյանքի:

Կարծիք կա, որ այդ երեխաներին չպետք է մկրտել, որովհետև նրանց լույս աշխարհ գալը հակառակ է բնությանը, և հետևանք է աստվածային կամքին հակառակ գնալու ծնողների մեղքի: Ըստ այդ տեսակետի՝ եթե ամուսինները երեխաներ չեն ունենում, ապա դա նշանակում է, որ Աստված չէր ցանկանում նրանց երեխա ունենալը, քանզի գրկել էր որդեծնության օրհնությունից՝ միևնույն ժամանակ նրանց կարծես թե ուղղորդելով որբ երեխաների որդեգրության, սերն ու խնամքը ծնողազուրկ երեխաների վրա տարածելու: Սակայն միայն Աստծո չկամենալը որպես պատճառաբանություն բերելն իրողության ճշգրիտ արտացոլում չի լինի, քանզի այսօր զարգացել է բժշկությունը, և տարբեր վիրահատական, բժշկական այլ միջամտություններ են կատարվում՝ մարդկանց կյանքը փրկելու, կյանքը երկարացնելու, առողջացնելու համար: Վերոնշյալ տրամաբանությամբ կարելի էր ասել, որ Աստված չէր կամենում ծանր հիվանդության մեջ ընկած

մարդկանց ավելի երկար ապրելը կամ որևէ տկարություն հաղթահարելը, դրա համար նրանց զրկել էր առողջությունից՝ հնարավորություն տալով ավելի շուտ ավարտելու այս երկրավոր, անցողիկ կյանքը և փոխադրվելու դեպի հավիտենություն: Բայց մենք ընդունում և ճիշտ ենք համարում գիտության, բժշկության նոր նվաճումներն ու ձեռքբերումները և դրանց կիրառումը մարդկային կյանքում, եթե դրանք լուրջ վտանգներ չեն պարունակում և հակառակ չեն մարդու, կյանքի վերաբերյալ աստվածաշնչյան վարդապետությանը, չեն հակադրվում աստվածային կամքին: Փոխնակ մայրության ճանապարհով ծնված երեխաների պարագայում, սակայն, պետք է շեշտել ոչ թե Աստծո չցանկանալը երեխայի ծննդի, այլ ամուսինների հակառակ ընթացքը մարդկային բնությանը, ինչպես նաև ընտանեկան, ամուսնական փոխհարաբերությունների, որդեծնության քրիստոնեական գաղափարներին:

Փոխնակ մայրության խնդրին պաշտոնապես անդրադարձել է Ռուս Ուղղափառ Եկեղեցին և իր դիրքորոշումն ու տեսակետը հայտնել նախ 2000 թ. Եպիսկոպոսական հորեյլանական ժողովի կողմից հաստատված՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սոցիալական հայեցակարգի հիմունքներում, ապա՝ 2013 թ. դեկտեմբերի 25-26-ին Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Սինոդի նիստին ընդունված հատուկ փաստաթղթով: Քննարկվել է նաև սերմնաբջիջների դոնորության խնդիրը:

Ըստ Ռուս Եկեղեցու սոցիալական հայեցակարգի՝ սերմնաբջիջների դոնորությունը խախտում է ամուսնական հարաբերությունների բացառիկությունը՝ դրանցում երրորդ կողմի ներխուժում թույլ տալով, խրախուսում է անպատասխանատու հայրությունը կամ մայրությունը: Դոնորական նյութի օգտագործումը խաթարում է ընտանեկան փոխհարաբերությունների հիմքերը, քանզի բացի երեխայի «սոցիալական» ծնողներից ենթադրում է նաև «կենսաբանական» ծնողների առկայությունը:

Փոխնակ մայրությունը, այսինքն՝ բեղմնավորված ձվաբջջի կրումը մի կնոջ կողմից, ով ծննդաբերությունից հետո երեխային վերադարձնում է «պատվիրատուներին», հակա-

բնական է և բարոյապես անթույլատրելի է նույնիսկ այն դեպքերում, երբ իրականացվում է ոչ առևտրային հիմքի վրա: Այդ մեթոդիկան ենթադրում է ոչնչացումը խորը զգացմունքային և հոգևոր մերձավորության, որը հաստատվում է մոր և մանկան միջև արդեն հղիության ընթացքում: Այս ճանապարհով ծնված երեխան հետագայում կարող է ինքնագիտակցության ճգնաժամ ապրել:

Բարոյապես անթույլատրելի են նաև էքստրակորպորալ, այսինքն՝ արտամարմնային բեղմնավորման բոլոր տարատեսակները, ինչը ենթադրում է սաղմերի պատրաստումը, պահպանումը և «ավելցուկ» սաղմերի դիտավորյալ ոչնչացումը: Հատկապես նույնիսկ սաղմի պարագայում մարդկային արժանապատվության ընդունման վրա է հիմնված Եկեղեցու կողմից դատապարտվող արհեստական վիժեցման բարոյական գնահատականը:

Դոնորական սերմնաբջիջների գործածումով միայնակ կանանց բեղմնավորումը կամ միայնակ տղամարդկանց, ինչպես նաև այսպես կոչված ոչ ստանդարտ սեռական կողմնորոշում ունեցող անձերի «վերարտադրողական իրավունքի» իրացումը զրկում է ապագա երեխային հայր կամ մայր ունենալու իրավունքից: Աստծո կողմից օրհնյալ ընտանիքի շրջանակից դուրս վերարտադրողական մեթոդների կիրառումը դառնում է աստվածամարտության ձև, որն իրականացվում է մարդու ինքնավարության և անձի թյուրըմբռնված ազատության քողի ներքո:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սինոդի փաստաթուղթը, հիմնականում անդրադառնալով փոխնակ մայրության օգնությամբ ծնված երեխաների մկրտության խնդրին, վկայակոչումներ է կատարում նաև Սոցիալական հայեցակարգից:

Եկեղեցին հասկանում է ամուսնությունը որպես ի սկզբանե աստվածային սահմանում՝ արմատավորված մարդկային էության մեջ: Քրիստոնեական ըմբռնմամբ ամուսնությունը տղամարդու և կնոջ հոգևոր-մարմնավոր միությունն է, որը նրանց թույլ է տալիս ամբողջության մեջ իրացնել իրենց մարդկային բնությունը: Եկեղեցին օրհնում է ամուսնությունը՝ այն նմանեցնելով Քրիստոսի և Նրա Եկեղեցու հոգևոր միությանը (Եփ. 5.22-25, 29-30, 32): Ամուսնական սիրո պտուղն են

դառնում երեխաները, որոնց ծնունդն ու դաստիարակությունն ըստ ուղղափառ ուսմունքի՝ հանդիսանում են ամուսնության կարևորագույն նպատակներից մեկը:

Երեխայի ծնունդը ոչ միայն ամուսնական հարաբերությունների բնական արդյունք է, այլև իր մեջ Արարիչ Աստծո պատկերն ու նմանությունը կրող նոր մարդու աշխարհ գալու մեծ իրադարձություն: Երեխաներին կյանք տալով՝ տղամարդն ու կինը բացառիկ պատասխանատվություն են հանձն առնում, քանզի կոչված են մեծագույն հոգատարություն ցուցաբերելու միաժամանակ նրանց ֆիզիկական և հոգևոր առողջության՝ սկսյալ ներարգանդային զարգացման շրջանից և կյանքի առաջին օրերից մինչև չափահասություն:

Երեխաների ծննդյան և դաստիարակության մեջ հատուկ դեր ունի մայրը, ով սերտորեն կապված է իր երեխայի հետ մարմնավոր, հոգեկան և հոգևոր կապերով: Եկեղեցին մայրության մեծ օրինակ է տեսնում Սուրբ Աստվածածնի մեջ, որի կերպարը բացահայտում է կնոջ բարձրագույն արժանիքը, նրա մայրական կոչման բացառիկությունը:

Լուրջ խնդիրներից մեկը, որին ոչ հազվադեպ բախվում են ընտանիքները, ամուսիններից մեկի կամ երկուսի անպտղությունն է: Եկեղեցին կարեկցում է երեխա չունեցող ամուսիններին՝ օրհնելով նրանց աղոթելու, որ Աստված սերունդ պարգևի, և դիմեն բժիշկներին անպտղության բուժման համար, ինչպես նաև երեխաներ որդեգրեն:

Երեխա չունեցող ամուսիններին բժշկական օգնության թույլատրելի միջոց է Եկեղեցին համարում ամուսնու սերմնաբջիջներով արհեստական բեղմնավորումը, եթե դա չի ուղեկցվում բեղմնավորված ձվաբջիջների ոչնչացմամբ, քանզի դա չի խախտում ամուսնական միության ամբողջականությունը, սկզբունքային ձևով չի տարբերվում բնական բեղմնավորումից և կատարվում է ամուսնական հարաբերությունների շրջանակներում:

Փոխնակ մայրությունը միանշանակորեն դատապարտվում է Եկեղեցու կողմից: «Փոխնակ մայրություն» եզրն ինքը ցույց է տալիս մայրական պարտքի և կոչման բարձր հասկացության աղավաղումը: Այն ստորացում է նաև երեխայի համար, ով լիարժեք մոր փոխարեն կան ունենում է երկու ոչ

լիարժեք մայրեր, կամ ոչ մի մայր չի ունենում, ինչպես միայնակ տղամարդու պարագայում, ով ցանկացել է «կենսաբանական սերունդ» ունենալ:

Փոխնակ մայրության կիրառման հասարակական վտանգը կապված է մարդու բնության մասին պատկերացման արմատական փոփոխության հետ: Տվյալ դեպքում մարդու հասկացությունը՝ որպես բացառիկ անձի, փոխվում է մարդու պատկերով՝ որպես կենսաբանական էակի, որը կարելի է ինքնակամորեն կառուցել՝ շահարկելով «գենետիկական նյութի» տարրերը: Աշխարհում աստիճանաբար մշակվում է վերաբերմունք մարդկային կյանքին՝ որպես արտադրանքի, որը կարելի է ընտրել՝ համաձայն սեփական հակումների, և որը կարելի է տնօրինել նյութական արժեքներին հավասար:

Վերարտադրողական տեխնոլոգիաների զործածումն անպտուղ զույգերին, միայնակ տղամարդկանց կամ կանանց «երեխաներով ապահովելու» նպատակով աստիճանաբար վերածվում է շահութաբեր բիզնեսի, որը միջոց է տալիս գումար աշխատելու սերմնաբջիջների դոնորներին և փոխնակ մայրերին: Դրա հետևանքով մարդու ծնվելու խորհուրդը դառնում է առևտրա-գումարային հարաբերությունների առարկա: Սիրո և հավատարմության վրա հաստատված աստվածապատվեր ամուսնությանը փոխարինելու է գալիս «վերարտադրողական ծառայությունների շուկան», որը պատրաստ է բավարարելու սպառողի՝ երեխայի արհեստական ծննդի ցանկացած պահանջմունք՝ տրված ցուցանիշներին համապատասխան:

Եկեղեցին բաց է բոլոր մարդկանց համար, ովքեր ձգտում են փրկության: Մկրտությունը Եկեղեցի մուտք գործելու խորհուրդն է և ենթադրում է մկրտվածների համաձայնությունն իր հավատքի և ուսմունքի հետ, ինչպես և՛ նրանց հետագա մասնակցությունը եկեղեցական կյանքին: Մկրտության խորհուրդը Եկեղեցում կատարվում է ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների համար: Երեխայի մկրտության համաձայնությունը նրա փոխարեն տալիս են մեծահասակները՝ ծնողները և կնքահայրը: Երեխայի մկրտության պայման է դրվում նաև նրա դաստիարակությունը քրիստոնեական հավատքի մեջ և քրիստոնեական բարոյականության կանոններ:

րի համաձայն, ինչը ենթադրում է ծնողների, երեխայի, հոգևոր դաստիարակների կանոնավոր մասնակցությունը եկեղեցական պաշտամունքներին և հորհուրդներին:

Ինչ վերաբերում է փոխնակ մորից ծնված երեխաների մկրտության հնարավորության հարցին, ապա դրան պատասխանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ գործոնները: Մի կողմից՝ ցանկացած ծնված երեխա կարող է մկրտված լինել ըստ նրանց հավատքի, ովքեր նպատակադրվում են նրան մկրտել: Երեխան չի կարող պատասխան տալ իր ծնողների արարքների համար և մեղավոր չէ, որ իր լույս աշխարհ գալը կապված է Եկեղեցու կողմից դատապարտվող վերարտադրողական տեխնոլոգիայի հետ: Մյուս կողմից՝ երեխայի քրիստոնեական դաստիարակության համար պատասխանատվություն են կրում ծնողներն ու կնքահայրերը: Եթե ծնողները գործածի համար ակնհայտ չեն ապաշխարում, իսկ կնքահայրը փաստացիորեն համաձայնություն է արտահայտում կատարված մեղավոր գործին, ապա քրիստոնեական դաստիարակության մասին խոսքն ավելորդ է: Նման դեպքում երեխաների մկրտության մերժումը կհամապատասխանի ուղղափառ ավանդությանը, որը ենթադրում է մկրտվողի համաձայնությունը, իսկ երեխաների մկրտության պարագայում՝ նրա ծնողների և կնքահոր համաձայնությունը Եկեղեցու ուսմունքի հետ: Այդպիսի մերժումը նաև հովվական նշանակություն կունենա, քանի որ դրանով հասարակությունը Եկեղեցուց հստակ ազդանշան կստանա, որ փոխնակ մայրության կիրառումը քրիստոնեական տեսակետից անհանդուրժելի է:

Փոխնակ մայրության օգնությամբ ծնված երեխան կարող է մկրտվել նրան դաստիարակող անձանց ցանկությամբ, եթե այդպիսիք հանդիսանում են կամ նրա «կենսաբանական ծնողները», կամ՝ «փոխնակ մայրը», միայն այն բանից հետո, երբ նրանք գիտակցեն, որ քրիստոնեական տեսակետից նման վերարտադրողական տեխնոլոգիան բարոյապես դատապարտելի է, և Եկեղեցական ապաշխարություն կբերեն՝ անկախ նրանից գիտակցված, թե՞ անգիտակցաբար են անտեսել Եկեղեցու դիրքորոշումը: Միայն այդ դեպքում Եկեղեցին կարող է ակնկալել, որ մկրտված երեխան կդաստիա-

րակվի ուղղափառ հավատքի մեջ, և նրան կհաղորդեն քրիստոնեական բարոյական պատկերացումները: Եթե այդպիսի գիտակցում չի լինում, ապա մկրտության որոշման հարցը հետաձգվում է մինչև երեխայի գիտակից, անձնական ընտրությունը: Վերջին դեպքում «փոխնակ ծննդյան» փաստն ինքնըստինքյան արգելք չի հանդիսանում մարդու մկրտության համար, քանի որ նա պատասխանատվություն չի կրում իր ծնողների վարմունքի համար:

Այն դեպքում, երբ փոխնակ մորից ծնված երեխա են բերում եկեղեցի, նրա մկրտության հարցը կարող է վճռվել թեմական եպիսկոպոսի ցուցման համապատասխան, ով պարտավոր է առաջնորդվել եկեղեցական փաստաթղթի դրույթներով:

Մահացու վտանգի դեպքում թույլատրվում է երեխաների մկրտությունը՝ անկախ նրանց ծննդյան հանգամանքներից:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու պաշտոնական տեսակետները բավականին հստակեցում են տալիս փոխնակ մորից ծնված երեխաներին մկրտելու հարցում: Ռուս Եկեղեցու փաստաթղթի մեջ, սակայն, մի հանգամանք նկատի չի առնվել: Երբ փոխնակ ճանապարհով ծնված երեխային ծնողները բերում են եկեղեցի մկրտության և հայտնում են իրենց երեխայի ծնվելու հանգամանքի մասին, դա արդեն իսկ ապաշխարության կամ զղջման նշաններից մեկը կարող է լինել, որովհետև Եկեղեցին, ինչքան էլ պաշտոնական տեսակետներ բարձրաձայնի այս հարցի վերաբերյալ, ինչպես՝ պիտի իրականացնի իր դիրքորոշման համաձայն գործողությունները, եթե ծնողները չհայտարարեն երեխայի ծննդյան կերպի մասին: Երբեմն կարող են լինել հասարակության մեջ հնչեղություն ստացած դեպքեր, որոնցով հայտնի կլինի ոմանց հանգամանքը, բայց չէ՞ որ բոլորի ծննդյան պատմությունը Եկեղեցին իմանալ չի կարող:

Հայ իրականության մեջ վերջին տարիներին բազմաթիվ երեխաներ են ծնվել այս ճանապարհով, ինչպես վկայում են համապատասխան մասնագետները, բժիշկները: Սակայն չափազանց հազվադեպ է լինում, երբ ծնողները եկեղեցում քահանային հայտնում են իրենց երեխայի ծնվելու ձևի մասին: Չէ՞ որ փոխնակ մայրության ճանապարհով երեխաներ ունե-

ցած շատ ծնողներ բավականին հանգիստ կարող են այդ մասին չհայտարարել, քանզի եկեղեցում ոչ ոք չի հարցնում. «Ինչպե՞ս է ծնվել ձեր երեխան՝ բնակա՞ն, արտամարմնայի՞ն բեղմնավորումից, թե՞ փոխնակ մորից»: Եվ եթե ծնողները եկեղեցում հատուկ կերպով հայտնում են այդ մասին, նշանակում է, որ զղջման ինչ-որ զգացում, սխալ գործած լինելու մտատանջություն ունեն: Այդպիսի ծնողներին անմիջապես չպետք է հանդիմանել, այլ նրանց հայտնածը զղջման սկիզբ համարել, հովվական հոգատարությամբ խոսել ու բացատրել, ապաշխարություն նշանակել, նաև հորդորել առաջիկա ուրախության՝ զավակի մկրտության հետ կապված: Այն իրողությունը, որ եկեղեցում հայտնի չի լինում երեխաների ծնվելու կերպը, ներկա պայմաններում առկա խնդիրների նկատառումով արդեն առավել ուշադիր գործելակերպի անհրաժեշտությունն է բերում՝ կասկածի դեպքում իմանալու երեխայի ծննդյան հանգամանքները և համապատասխան հովվական հորդոր ու վերաբերմունք ցուցաբերելու:

### **ՕՐԳԱՆՆԵՐԻ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

**1. Արդի բժշկության զարգացումը լայն հնարավորություններ է ընձեռել հիվանդների բուժման գործում, և շատ հիվանդություններ, որոնք նախկինում անբուժելի էին, ներկայումս կարող են կարճ ժամանակում բուժվել զարգացած բժշկական տեխնոլոգիաների և բժիշկների մասնագիտական մեծ կարողությունների շնորհիվ: Այդ հիվանդությունների բուժման լուծումներից մեկն օրգանների փոխպատվաստումն է: Ինչպիսի՞ն է Հայ Առաքելական Եկեղեցու տեսակետը օրգանների փոխպատվաստման վերաբերյալ:**

Օրգանների փոխպատվաստման վերաբերյալ Հայ Առաքելական Եկեղեցու տեսակետը չի կարող արմատապես տարբերվել այլ քրիստոնեական եկեղեցիների պաշտոնական հայտարարություններից՝ հիմնված Սուրբ Գրքի, քրիստոնեական վարդապետության սկզբունքների վրա: Սույն խնդրի վերաբերյալ Հայ Առաքելական Եկեղեցին դեռևս պաշտոնական տեսակետ չի արտահայտել, քանի որ Հայ Եկեղե-

ցու սոցիալական հայեցակարգը, որում արձանագրվում և որով հրապարակվում են Եկեղեցու պաշտոնական տեսակետները, դեռ կազմության փուլում է: Այնուամենայնիվ, այդ տեսակետը բանաձևվելու է քրիստոնեության հիմնարար դրույթների նկատառումով, ինչպես որ դա կատարվել է այլ առաքելահաստատ Եկեղեցիների պարագայում:

Օրգանների փոխպատվաստման երևույթը Եկեղեցիները դիտարկում են մեծ վերապահումներով՝ հիմնվելով հատկապես մարդու աստվածաշնորհ կյանքի գերագույն արժեք լինելու իրողության և այդ կյանքը խնամելու ու պահպանելու կարևորագույն պարտականության վրա: Սա նշանակում է, որ Քրիստոնեական Եկեղեցին միայն բացառիկ պայմաններում է ամբողջապես ընդունելի համարում բժշկության մեջ կիրառվող օրգանների փոխպատվաստման երևույթը:

**2. Օրգանների փոխպատվաստումը հնարավորություն է տալիս փրկել մարդկային կյանքը: Ուրեմն, ո՞րն է բժշկության մեջ միանգամայն առաջատար համարվող այս գործողության նկատմամբ Եկեղեցու վերապահություն ունենալու պատճառը:**

Օրգանների փոխպատվաստում կատարելու նպատակով հիվանդ մարդու վնասված օրգանն առողջ օրգանով փոխարինելու համար այն վերցնում են նոր մահացած մարդու դիակից կամ դոնորից՝ անձից, ով համաձայնություն է տալիս՝ հրաժարվելու իր օրգանից կամ դրա մի մասից (ինչպես օրինակ՝ լյարդի փոխպատվաստման դեպքում):

Երկու դեպքում էլ՝ նոր մահացած մարդուց կամ դոնորից օրգաններ վերցնելիս մտահոգիչ խնդիրներ են առկա: Առաջին լուրջ հարցը մարդու մահվան հաստատումն է բժիշկների կողմից: Արդի բժշկության՝ մահվան հասկացության սահմանումով տարբերակվում է կլինիկական մահը, որի մեջ գտնվելիս մարդը վերստին կարող է կենդանանալ: Նախկինում սրտի կանգը մահվան ստույգ փաստ էին համարում: Հիմա սրտի աշխատանքի դադարն արձանագրելիս բժիշկներն անմիջապես ջանքեր են գործադրում մարդուն կյանքի բերելու, վերակենդանացնելու նպատակով: Մահացած մարդու օր-

գանձերը վերցնելու համար մահից անմիջապես հետո պետք է կատարել համապատասխան բժշկական գործողությունը, այլապես այդ օրգանները փոխպատվաստման պիտանի չեն լինի: Այստեղ խնդիր է առաջանում մահվան ստույգ պահն արձանագրելու առնչությամբ: Անհրաժեշտ է տարբերակել՝ արդյո՞ք մահը վերջնական է, թե՞ կլինիկական, քանզի եղել են դեպքեր, երբ մահվան արձանագրումից բավականին զգալի ժամանակ հետո մարդը կյանքի է վերադարձել: Սա նշանակում է, որ մահվան արձանագրումը միշտ չէ, որ կարող է ստույգ լինել: Եվ այդ դեպքում ստացվում է, որ դեռ ապրելու հնարավորություն ունեցող մարդը ենթարկվում է սպանության՝ իր օրգանների օգտագործման համար:

Դոնորի պարագայում մտահոգություն է ի հայտ գալիս որևէ օրգանի հեռացումից հետո նրա առողջության պահպանման վերաբերյալ, որովհետև կենսականորեն կարևոր օրգաններ են հեռացվում, որոնք մարդու առողջության վատթարացման պատճառ կարող են դառնալ: Դոնորից օրգան վերցնելը թույլատրելի է, եթե միանգամայն բժշկական հստակ վստահություն կա, որ նրա առողջությանն ու կյանքին վտանգ չի սպառնում: Մինչդեռ այսպիսի բացարձակ վստահության բացակայության դեպքում հետևյալ խնդիրն է հառնում: Օրգանների փոխպատվաստման նպատակը հիվանդ մարդու կյանքը փրկելն է: Սակայն ինչպես կարիք կա փրկելու հիվանդի կյանքը, այնպես էլ անհրաժեշտ է պահպանել դոնորի առողջությունն ու կյանքը, այլապես կստացվի, որ մի մարդու կյանքը փրկելու համար զոհում են մեկ այլ մարդու կյանքը, ինչն այս պարագայում անընդունելի է:

Այս ամենից զատ՝ արևմտյան երկրներում մարդիկ հիվանդանոցներում բժշկական հարցաթերթիկներ են լրացնում, որտեղ նշում են իրենց մասին տվյալներ և համաձայնություն արտահայտում՝ մահից հետո իրենց մարմնի օրգանները փոխպատվաստման համար օգտագործելու: Որևէ հիվանդի համար տվյալ մարդու օրգանի համապատասխանության պարագայում նրա մասին բժշկական արձանագրություններում հաստատված տվյալները կարող են գործածվել օրգանների վաճառքով զբաղվող ինչ-որ խմբավորման կողմից՝ այդ մարդու հետապնդումը, սպանությունը (թեկուզ և պատահարի ձևով) կազմակերպելու և նրա օրգաններին տիրանալու համար:

**3. Եթե խնդիրներ կան օրգաններ փոխապատվաստելու իրողության մեջ, ուրեմն ինչպե՞ս պետք է վարվել, երբ մարդկային կյանք փրկելու համար հառնել է օրգանների փոխապատվաստման անհրաժեշտությունը:**

Մահացած մարդու պարագայում մահվան արձանագրումը պետք է որքան հնարավոր է ստույգ լինի, սակայն ամեն դեպքում առկա է վտանգը օրգանների հեռացմամբ կենսունակություն ունեցող մարմնի սպանության: Դոնորների պարագայում թույլատրելի է ողջ մարդու օրգանների հեռացումը միայն բժշկական խորը հետազոտություններից հետո՝ հավաստիացումով, որ դոնորի կյանքին լուրջ վտանգ չի սպառնա ապագայում ևս և կամ դոնորին մանրամասն տեղեկացնելով հնարավոր անցանկալի հետևանքների մասին: Այլապես, ինչպես նշվեց, անընդունելի է կյանք փրկել՝ մեկ այլ կյանք կործանելով:

Դոնորների մասին վերևում ասվածը նույնպես ընդարձակենք: Դոնորները լինում են երկու տեսակի: Կան մարդիկ, ովքեր իրենց հարազատի, բարեկամի համար են ինքնահոժար կերպով, սիրուց մղված պատրաստակամություն հայտնում սեփական մարմնի մի օրգանը տրամադրելու: Սակայն շատ տարածված է նաև այն, որ հիվանդին ընդհանրապես չճանաչելով, անգամ նրա մասին չմտածելով՝ մարդն օրգան է տրամադրում՝ դրա դիմաց վճարվող մեծ գումարի դիմաց: Այս արարքը թեկուզ և առաջին հայացքից մարդասիրական է թվում, որովհետև, այնուամենայնիվ, դրանով մեկ այլ մարդու կյանք է փրկվում, սակայն իրական դոնոր հանդիսացող անձին հեռացնում է քրիստոնեական մարդասիրությունից, քանզի արարքի հիմնական դրդապատճառը ոչ թե սերն է մերձավորի հանդեպ, այլ փող վաստակելու հեռանկարը: Նման տեսանկյունով օրգանների նվիրաբերումը վերածվում է մարդկային օրգանների վաճառքի:

Օրգանների փոխապատվաստման բժշկական գործողությունը երբեմն սերտաճում է մարդկային օրգանների ձեռքբերումով ու վաճառքով զբաղվող հանցագործ կազմակերպությունների հետ: Օրգանների փոխապատվաստման բժշկական նորարարությունը, որը, ինչ խոսք, փրկարար եղավ և է շատ

մարդկանց համար, ճանապարհ է բացել նոր հանցավորության ու ոճիրների: Օրգանների փոխապատվաստման հնարավորությամբ սկզբնավորվեցին նաև փոխապատվաստման հետ կապված հանցագործություններ՝ մարդկանց առևանգումներ, անգամ կազմակերպված սպանություններ օրգանների ձեռքբերման համար: Հանցավոր խմբավորումների կողմից մարդն սկսեց նկատվել որպես պահեստամաս օրգանների, որոնց ձեռքբերումն ու վաճառքը հսկայական դրամական շահույթներ է ապահովում:

**4. Հստակեցրինք, որ եկեղեցին, օրգանների փոխապատվաստումը մարդու կյանքի փրկության համար թույլատրելի համարելով, միաժամանակ լուրջ զգուշացումներ է հնչեցնում: Եթե ամփոփելու լինենք՝ որո՞նք են օրգանների փոխապատվաստման դրական և բացասական կողմերը:**

Օրգանների փոխապատվաստումը ծանր հիվանդություններին ժամանակ փրկարար է լինում մարդու առողջության վերականգնման համար, դառնում մերձավորի նկատմամբ սիրո և նվիրումի արտահայտություն ու վկայություն, ինչպես նաև նմանություն Հիսուս Քրիստոսի ինքնազոհաբերվող, աստվածային սիրո, որով մեր Տերը փրկություն պարզեց մարդ արարածին: Բացասական և անընդունելի իրողություններ են մարդու մահվան ոչ ստույգ արձանագրմամբ, նոր մահացած մարդու օրգանների հեռացումով վերստին կյանքի դառնալու ունակ մարդու սպանությունը: Դատապարտելի են նաև օրգանների ձեռքբերման նպատակով մարդկանց առևանգման դեպքերը, օրգանի դոնոր հանդիսացող անձի առողջության և անգամ կյանքին սպառնացող վտանգը, նյութական շահի նպատակով մարդասիրությունը և մերձավորի հանդեպ սերն արծաթասիրության վերածելը, մարդու կողմից իր սեփական օրգանը վաճառելը, այն սոսկ նյութականի ձեռքբերման միջոց համարելը: Առկա բացասական իրողություններով հանդերձ՝ օրգանների փոխապատվաստումը բժշկության մեծագույն ձեռքբերումներից է, որը պետք է գործադրվի մեծ զգուշավորությամբ, մարդու առողջության պահպանման և մարդու կյանքի գերագույն արժեքի գիտակցությամբ:

**5. Եկեղեցիներն իրենց պաշտոնական տեսակետը բարձրաձայնելով՝ որևէ այլ նախաձեռնություն իրականացնողն են նմանատիպ խնդիրների, հարցերի լուծման ուղղությամբ:**

Միայն կարծիքի բարձրաձայնումը բավական չէ: Եզեկիել մարգարեն խոսում է Աստծո սպասավորի դետ կարգվելու մասին՝ զգուշացնելու մարդկանց մեղքեր գործելուց: Եթե դետը չի զգուշացնում անօրենին, ապա Աստված իր սպասավորից է պատասխանատվություն պահանջում, իսկ եթե զգուշացում է արվում, ապա սպասավորն անպարտ է (տե՛ս Եզեկ. 3.16-21): Սակայն երբ մարդկային կյանքին է վտանգ սպառնում, զգուշացում կատարելը բավական չէ, այլ պետք են ջանադիր գործողություններ՝ վտանգից հեռացնելու, քայլեր ձեռնարկելու՝ մարդկային կյանքի աղճատումը կամ վնասումը կանխելու համար:

Օրգանների փոխպատվաստման իրողությունը բարձրացնում է նաև մեկ այլ խնդիր, որի լուծման համար անհրաժեշտ է ողորմության առաքինությունը: Օրգանների փոխպատվաստումն իրենց կարող են թույլ տալ միայն հարուստները, քանզի այս նպատակով կատարվող վիրահատությունը բավականին թանկ արժե: Արևմտյան երկրներում, որտեղ առողջության ապահովագրության համակարգ է գործում, օրգանների փոխպատվաստումն այնքան էլ անհասանալի չէ շարքային քաղաքացիների համար: Սակայն օրգանների սպասողների մեծ հերթը նույնպես խնդիրներ է հարուցում, և այս դեպքում էլ միայն մեծահարուստներն են երբեմն կարողանում իրենց առողջության վերականգնման համար հոգալ: Նման իրավիճակում Եկեղեցին պետք է կոչ անի ողորմության, մարդասիրության՝ բարերարությամբ օգնելու անկարող հիվանդներին, զորակցելու բժշկության բուն առաքելության իրականացմանը, վերացնելու բժշկության մեջ առևտրի ներթափանցումը, նպաստելու բժշկական էթիկայի պահպանմանը:

## **ԷՖՔԱՆԱԳԻԱ. ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԶՈՒՄԱՆԻՉՍ**

### **1. Ի՞նչ է էֆթանագիան, ե՞րբ է առաջին անգամ գործածվել այս եզրը և ո՞րն է էֆթանագիայի նպատակը:**

«Էֆթանագիա» բառի հիմքում ընկած է հունարեն «θάνατος - թանատոս - մահ» բառը: Էֆթանագիա նշանակում է հեշտ, առանց չարչարանքների մահ: Ըստ տեղեկությունների՝ այս բառն առաջին անգամ գործածել է հռոմեացի պատմիչ Սվետոնիուսը Օգոստոս կայսեր մահվան նկարագրության համար՝ հաղորդելով, որ կայսրը հեշտ և թեթև մահ է ունեցել: Դրանից հետո «էֆթանագիա» բառը գործածվում էր հեշտ մահվան նկարագրության համար: Սակայն հետագայում, երբ բժշկության մեջ սկսեց կիրառվել մեկի կողմից ցավերի, չարչարանքների մեջ գտնվող հիվանդին մահ պատճառելը, բառը գործածվեց այս երևույթի համար:

Էֆթանագիան լինում է կամավոր և ոչ կամավոր: Այն կամավոր է, երբ հիվանդը գիտակից է և ինքն է խնդրում՝ իրեն մահ պատճառելով ազատել հիվանդության ցավերից, չարչարանքներից: Էֆթանագիան ոչ կամավոր է, երբ հիվանդը գիտակից վիճակում չէ, և նրա հարազատներն են և կամ բժիշկն է նմանատիպ որոշում կայացնում: Էֆթանագիան մարդկային բարձր բարոյականության, ինչպես և կյանքի գերագույն արժեքի հանդեպ վերաբերմունքի առումով անընդունելի է և ավելի շատ դատապարտության, քան ընդունելության է արժանանում:

**2. ԱՄՆ-ի որոշ նահանգներում, Եվրոպական առաջադեմ երկրներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում ընդունվել և ընդունվում են օրենքներ, որոնք, մի շարք չափանիշներ հաշվի առնելով, թույլատրել են էֆթանագիան: Սակայն Կաթոլիկ եկեղեցին դեմ է այս երևույթին: Հայ Առաքելական եկեղեցին ևս անընդունելի է համարում այն, թեև Հայաստանի Հանրապետությունում էֆթանագիան թույլատրող օրենք չի ընդունվել: Էֆթանագիայի վերաբերյալ ի՞նչ է ասում Աստվածաշունչը, եկեղեցին:**

Էֆթանագիան օրինականացվել է միայն մի քանի երկրներում՝ Բենեյուքիսի երեք երկրներում (այս անունն այդ երկրների մեջ մտնող պետությունների անվանումների հապավումն է՝ Բելգիան, Նիդերլանդները, Լյուքսեմբուրգը), Շվեյցարիայում և ԱՄՆ-ում՝ Վաշինգտոնում, Օրեգոն, Կալիֆորնիա, Վերմոնտ նահանգներում, իսկ Մոնտանա նահանգում թույլատրելի է համարվել հիվանդի ինքնասպանությանը սատարելը, երբ մարդը որոշում է կայացրել իր ձեռքով իր հանդեպ կիրառել էֆթանագիան:

Ըստ Աստվածաշնչի՝ կյանքն Աստծո պարգևն է, Աստված Ինքն է կյանքի արարիչը: Ծննդոց գրքում կարդում ենք, որ Աստված է ստեղծել ու կյանք տվել բոլոր կենդանի արարածներին (1.1-27): Այս իմաստով մարդն իրավունք չունի մերժել Աստծո պարգևը և կամ դրան վերաբերվել ըստ իր հայեցողության: Սա վերաբերում է անգամ կենդանիների կյանքին: Դրախտում, այնուհետ մարդկության գոյության սկզբնական շրջանում մարդկանց թույլատրված չէր կենդանիների սպանություն կատարել, իսկ կենդանակերությունը միայն ջրհեղեղից հետո թույլատրվեց Աստծո կողմից (Ծննդ. 9.3): Հին Կտակարանում մենք տեսնում ենք նաև մահապատժի սահմանումներ մովսիսական օրենքում (Ելք 19.12, 21.16, 22.20, 35.2; Ղևտ. 20.2, 20.9-16, 21.9, 24.16; Բ Օր. 13.6-10, 17.12, 21.20-21), սակայն այս ամենի վրա գերիշխում էր «մի՛ սպանիր» (Ելք 20.13) պատվիրանը: Մահապատիժների, ինչպես նաև այլազգիների դեմ ելնելու և նրանց ոչնչացնելու լիազորությունը տալիս էր Աստված, և մարդուն արտոնված չէր իր կամեցողությամբ սպանություններ կատարել:

Աստծո հայացքի առջև միաժամանակ ներկա են երկու իրականություններ՝ այս երկրային, ժամանակավոր աշխարհը և հավիտենությունը, մինչդեռ մենք հիմնականում ականատես ենք երկրայինին, իսկ հավիտենականին հավատում ենք: Մարդու համար սպանությունը մեկին ոչնչացնելու արարք է, իսկ Աստծո պարագայում՝ որևէ մեկին այս իրականությունից հավիտենական իրականություն փոխադրելն է: Եկեղեցական կանոնների համաձայն՝ անգամ պատերազմների ժամանակ հավատքը, հայրենիքը, սրբազան արժեքները պաշտպանելու ելած զինվորների կողմից կատարված սպանությունը թեև

մարդասպանության մեղք չի համարվում, սակայն նկատվում է մի արարք, որի պատճառով տվյալ անձին երեք տարի արգելվում է մոտենալ Սուրբ Հաղորդության՝ կատարած արարքից ինքնամաքրումով սրբվելու համար:

Ձինվորի ծառայությունը Քրիստոսի կողմից հայտարարված մեծագույն սիրո արտահայտությունն է ըստ տերունական հետևյալ խոսքի. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Յովհ. 15.13): Սակայն նույնիսկ մեծագույն սիրո դրսևորման այս դեպքում, անգամ հայրենիքի, սրբազան արժեքների պաշտպանության համար կատարված սպանությունը մաքրագործման ենթակա է համարվում: Ուրեմն, առավել ևս չարչարանքների, ցավերի մեջ գտնվող հիվանդի սպանությունը դիտվում է որպես մարդասպանություն և անընդունելի է կրոնական տեսակետից:

**3. «Էֆթանագիա» եզրը երբեմն փոխարինվում է «թեթև մահ» կամ «գթասրտությունից մղված սպանություն» արտահայտություններով, երբ խոսքը վերաբերում է հիվանդին, ով ապրելու հետագա հնարավորություն չունի, իսկ ներկա կյանքն անցնում է աննկարագրելի ցավերի ու տառապանքների մեջ: Մի՞թե էֆթանագիան այս պարագայում ինչ-որ առումով օգնություն չէ հիվանդին:**

Հիշենք Քրիստոսի խաչելությունը: Նրա կողքին՝ աջ և ձախ կողմերում, խաչեցին երկու ավազակների: Այդ ահավոր չարչարանքների մեջ ավազակներն անդրադարձան իրենց կյանքին և տանջանքների ներկա վիճակին: Չախակողմյան ավազակը չարչարանքների մեջ անգամ անզեղջ մնաց և իր բիրտ բնույթը ցույց տվեց: Սակայն աջակողմյան ավազակի համար իր ամբողջ կյանքի համեմատ չարչարանքների այս փոքր ժամանակահատվածը բավական եղավ, որպեսզի նա զղջումով արժանանա մեղքերից մաքրվելու և սրբվելու: Դիմելով Քրիստոսին՝ աջակողմյան ավազակն ասաց. «Հիշիր ինձ, Տե՛ր, երբ որ գաս Քո թագավորությամբ»: Եվ Քրիստոս նրան ասաց. «Ծնարիտ եմ ասում քեզ, այսօր Ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. 23.40-13): Ուրեմն, չարչարանքները հնարավորություն տվեցին ավազակին ինքնաանդրադար-

ծունով գղջալու և նույնիսկ դառնալու առաջին մարդը, ով Քրիստոսի հետ հավիտենության բացված դռներով մուտք գործեց դրախտ:

Քրիստոս ևս խաչի վրա չարչարանքների մեջ էր: Այդ տառապանքների պահին Նա ձայնեց. «Էլի՛, էլի՛, լա՞մա սաբաբանի», այսինքն՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մատթ. 27.46, Մարկ. 15.34): Այս խոսքերը նաև 21-րդ սաղմոսի խոսքերն են (2): Ըստ ավետարանիչների՝ այս խոսքից հետո խաչի մոտ հավաքվածներից մեկը վազում է, սպունգը թրջում քացախի մեջ, անցկացնում եղեգի ծայրին և մեկնում Քրիստոսին, որ խմի (Մատթ. 27.48, Մարկ. 15.36, Յովհ. 19.29): Յովհաննես Ավետարանիչն ասում է, որ այդ հավաքվածները զինվորներն էին: Առաջին հայացքից անհասկանալի է, թե ինչու է զինվորն այդ խոսքերից հետո շտապում Քրիստոսին ընպելիք տալու: Սակայն Ավետարանիչների հաղորդած ընդհանուր տեղեկություններն ընթերցելով՝ տեսնում ենք, որ Քրիստոս յոթը խոսք ասաց խաչի վրա: Յովհաննես Ավետարանիչը հստակեցնում է այս դեպքը՝ նշելով, որ Քրիստոս վերոնշյալ խոսքերից հետո ասաց՝ Ծարավ եմ (Յովհ. 19.28): Եվ հենց այս խոսքը լսելով էր, որ զինվորը՝ գթասրտությունից դրդված, շտապեց Նրան ընպելիք տալու: Քրիստոս ընպեց իրեն մեկնված ընպելիքից, ինչը հավանաբար ահավոր չարչարանքների մեջ ֆիզիկական որոշ թեթևություն բերեց և դրանից հետո հոգին ավանդեց:

Խաչելության այս դրվագի մեջ մենք կարող ենք տեսնել ցավերի մեջ գտնվող հիվանդներին առնչվող հարցերի պատասխաններ: Չարչարանքները հնարավորություն են տալիս անցած կյանքին անդրադառնալու, և այդ ծանր պահերին առանձնահատուկ կերպով Աստծուն դիմելու, ինչպես նաև փոքր մի շրջանի նեղություններով քավելու մեղքերը, որոնց պատճառով մարդը կարող է զրկվել հավիտենական երանությունից: Բացի դրանից, ծանր հիվանդին շրջապատող մարդիկ այդպիսի պահերին է, որ դրսևորում են սեր, հոգածություն, խնամք, և դա առիթ է մարդուն իր լավագույն վարմունքները, մեկի հանդեպ հոգատարությունն ու սերը դրսևորելու, նաև այդպիսի գթասրտությամբ Աստծո առջև երևալու համար: Իսկ հիվանդության ցավերը կարելի է մեղմել որոշ

դեղամիջոցներով: 1800-ական թվականներից բժշկության մեջ սկսեց գործածվել մորֆինը, որը լավագույն միջոցներից մեկն է ծանր ցավերը մեղմելու համար: Սակայն բժիշկների կողմից մտավախություն կա նման դեղամիջոցների տրամադրման, ինչպես նաև խնդիրներ են առաջանում ըստ գրանցման վայրի միայն համապատասխան ցավազրկող միջոցի թույլատվության, որով նույնպես անտեսվում է տառապանքների մեջ գտնվող հիվանդի վիճակը թեթևացնելու անհրաժեշտությունը: Ուրեմն, խնդիր կա բժշկության ոլորտում այս հարցը կարգավորելու: Հազվադեպ լինում են դեպքեր, երբ հզոր ցավազրկողները չեն մեղմում ահռելի ցավերը: Այս իրավիճակի համար երկրի օրենքը, կրոնական ընկալումները ևս նկատի ունենալով, կարող է որոշ բացառող հանգամանքներ դիտարկել՝ լիազորելով բժշկին, էֆթանազիան կիրառելուց զերծ մնալով, հատուկ սահմանափակ դեղամիջոցների գործածմամբ առանձին կերպով զբաղվելու հիվանդի խնամքով:

#### **4. Իսկ Եկեղեցին ինչո՞վ կարող է սատարել անհուսալի վիճակում գտնվող հիվանդին, ով կամավոր ընտրել է էֆթանազիայի մեթոդը:**

Հայաստանում Եկեղեցին էֆթանազիան ընտրած հիվանդին օգնելու անհրաժեշտության առջև չէ, որովհետև այն մեզ մոտ չի կիրառվում: Սակայն մարդը կարող է մտովի նախընտրել էֆթանազիան, այսինքն՝ մտածել, որ ավելի լավ է մեռնի, քան այսքան չարչարանքների մեջ լինի: Այս դեպքում հոգևորականը պետք է հիվանդի հոգեվիճակը մեղմի աղոթքով, Ավետարանի խոսքով, մխիթարություն բերելով:

Ցավոք սրտի, Հայաստանում հոգևորականների հիվանդանոցային ծառայությունները կանոնակարգված և բավարար չեն հոգևորականների խիստ սակավության պատճառով: Կան հոգևորականներ, ովքեր այցելում են հիվանդանոցներ, աղոթում, Աստծո խոսքը բերում հիվանդներին: Նաև հավատավոր երիտասարդներ, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ օգնում են հոգևորականներին այս հարցում, նրանց հետ հիվանդանոցներ այցելում և

կամ որտեղ հնարավոր չէ եկեղեցականի այցելությունը, իրենք են գնում հիվանդների մոտ, աղոթում, Սուրբ Գրքի խոսքերով մխիթարում: Մեր եկեղեցին անհրաժեշտություն ունի ավելի շատ հոգևորականների՝ համալրելու բանակային, բանտային և հիվանդանոցային ծառայություն իրականացնող հոգևորականների շարքերը: Արտասահմանում հիվանդանոցները մշտական այցելու հոգևորականներ ունեն, ովքեր հատուկ պատրաստված են հիվանդներին ծառայություն բերելու համար: Այս նմանությամբ, ինչպես նաև նման սպասվորության առկա փորձը նկատի ունենալով, հուսով ենք, որ մեր եկեղեցուն ևս առաջընթաց կլինի այս ոլորտում, և հատկապես ծանր վիճակի մեջ գտնվող հիվանդները նաև հոգևոր աջակցություն կստանան եկեղեցականների համապատասխան ծառայությամբ:

**5. Որո՞նք են էֆթանագիայի հետևանքները. չէ՞ որ երբեմն դրան դիմում են ոչ միայն անհուսալի հիվանդները, այլև հոգեկան հավասարակշռությունը կորցրած մարդիկ, կամ երբեմն նույնիսկ բժիշկն է սխալվում իր բժշկական եզրակացության մեջ և դրանով հուսահատ քայլերի մղում մարդուն:**

Էֆթանագիայի հետևանքները բազմաթիվ ինքնասպանություններն ու մարդասպանություններն են: Եկեղեցական կանոնների համաձայն, որոնք խստորեն պահպանվում էին միջնադարում, ինքնասպանություն գործած անձնաց անգամ թաղում էին քրիստոնեական գերեզմաններից դուրս, որովհետև նրանք մերժել են աստվածային գերագույն պարգևը՝ կյանքը, որով նաև՝ աստվածուրացության ու աստվածմեծության մեղքի մեջ ընկել: Այսօր, ինչպես և հնում, ինքնասպանների վրա թաղման եկեղեցական կարգ չի կատարվում: Մինչդեռ էֆթանագիան թե՛ հիվանդի անձնական ընտրությամբ ու մասնակցությամբ ինքնասպանություն է, և թե՛ դրան սատարողների ու կիրառողների դեպքում՝ մարդասպանություն:

Հիվանդի չարչարանքների պարագայում հարկ է հիշել մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչին, ով ահավոր տանջանքների ենթարկվեց, այնուհետ տասներեք, կամ ըստ այլ տեղեկության՝

տասնհինգ տարով նետվեց խոր վիրապի՝ խորը փոսի մեջ: Բայց Աստծո օգնությամբ հաղթահարեց բոլոր փորձությունները, լուսավորություն բերեց մեր ազգին և ապրեց փառքի ու պատվի մեջ: Մենք ամեն դեպքում չպետք է բացառենք հրաշքը բժշկվելու գործում, ինչպես նաև հիշենք աջակողմյան ավագակին, ում համար տանջանքներն առիթ եղան մեղքերից մաքրվելու և հավիտենական երանության արժանանալու:

Երբեմն պատահում են նաև սխալ բժշկական ախտորոշումներ և կամ սխալ խորհրդատվություններ, մանավանդ երբ բժիշկն էֆթանագիայի կողմնակից է: Էֆթանագիայով կյանքից հեռացած շատ հիվանդների վերաբերյալ պարզվել է, որ վերջնականապես անհուսալի հիվանդներ չեն եղել, ումանք էլ ցավեր չեն ունեցել, այլ պարզապես հոգնել են հիվանդագին վիճակից, շատերն էֆթանագիայի կիրառման որոշում կայացրել են նման խորհրուղ տվող բժշկի հետ հանդիպումից կարճ ժամանակ անց: Մինչդեռ հավատավոր բժիշկների, հոգեբանների և հատկապես հոգևորականների հետ հանդիպումները բազմաթիվ դեպքերում այլ որոշման կհանգեցնեին: Այս մտահոգություններն են նաև պատճառը, որ էֆթանագիան օրինականացված է ընդամենը մի քանի երկրներում, և ընդունելի չի համարվում պետությունների, ժողովուրդների մեծամասնության կողմից: Ամեն դեպքում պետք է հիշել, որ հատկապես կյանքին վերաբերող և կյանքին սպառնացող վարմունքներում պետք է առաջնորդվել կյանքը ստեղծած Աստծո կամքի համաձայն:

## **ԴԻԱԿԻԶՈՒՄ**

### **1. Հայ ժողովուրդը մահացած մարմնի նկատմամբ վերաբերմունքի ի՞նչ փուլեր է անցել մինչև թաղման կարգը որդեգրելը:**

Պեղումները ցույց են տալիս, որ հայ ժողովրդի մոտ ավելի շատ տարածված է եղել հողի մեջ թաղումը, իսկ դիակիզումն ամենայն հավանականությամբ չի գործածվել, քանի որ այդ պարագայում պիտի լինեին համապատասխան մոխրային կուտակումներ, որպիսիք չեն հայտնաբերվել: Հրեաների

մոտ, ի տարբերություն հայերի, կիրառվել է և՛ թաղումը հողի մեջ, ինչպես նաև թաղումը քարանձավում՝ դամբարանային թաղումները, բայց նաև՝ եգիպտացիների նման մարմնի զմռսումը:

Աստվածաշունչն ասում է, որ Աբրահամն ու նրա կին Սառան, Իսահակն ու նրա կին Ռեբեկան, Յակոբն ու նրա կին Լիան թաղվել են Քանանացիների երկրում՝ Մամբրեի կաղնու դիմաց գտնվող քարայրում, որն Աբրահամը գնել էր իբրև սեփական շիրմավայր (Ծննդ. 49.28-32): Եգիպտոսի կառավարիչ դարձած Յոզեփի կարգադրությամբ Յակոբ նահապետին, ըստ եգիպտական սովորության, զմռսել են, այնուհետ տեղափոխել՝ թաղելու Աբրահամի շիրիմը հանդիսացող քարայրում՝ Մամբրեի կաղնու դիմաց (Ծննդ. 50.2-6, 13): Քրիստոսի թաղումը ևս դամբարանային բնույթի էր, որովհետև Տիրոջը դրեցին քարանձավում և մուտքի դուռը մեծ քարով փակեցին (Մատթ. 27.57-60, Մարկ. 15.43, 45-46, Ղուկ. 23.50-53, Յովհ. 19.38-42): Այսպես էր թաղված նաև Ղազարոսը (Յովհ. 11.38), որին Քրիստոս հարություն տվեց, և Ղազարոսը քարանձավից դուրս եկավ նմանատիպ թաղումների ժամանակ գործածվող պատանքով փաթաթված (Յովհ. 11.43-44): Յրեաները կիրառում էին դամբարանային թաղումները, որից որոշ ժամանակ անց մահացածի ոսկորները դուրս էին բերում և թաղում հողի մեջ: Սա արվում էր այն հավատալիքի համաձայն, ըստ որի՝ քանի դեռ մահացած մարդու ոսկորներն առկա են, ապա նրա հոգին՝ եբրայերեն ռուահը, գորացյալ կլիմի: Ուղղափառ Եկեղեցիներում ևս դամբարանային թաղումները և հողի մեջ թաղումները զուգահեռաբար կիրառվել են՝ դամբարանային թաղումները վերապահելով առավելաբար հոգևորականներին: Միջնադարյան շատ ուղղափառ վանքերում մահացածների ոսկորները վանքերի ստորին հարկերում են զետեղվել, ինչպես նաև հատուկ անոթների մեջ են պահվել սրբակենցաղ վանականների կամ հոգևորականների զանգերը կամ ոսկորները: Այս ավանդույթն ուղղափառության մեջ մինչ այժմ էլ շարունակվում է: Նաև Կաթուղի Եկեղեցում Կապուցիների միաբանության անդամները բարձրաստիճան հոգևորականներին զմռսում էին և իրենց Եկեղեցական զգեստներով կանգնեցնում վանքի կամ եկեղե-

ցու ստորին հարկերում գտնվող հատուկ խորշերում, որոնց այսօր էլ կարելի է ականատես լինել: Կաթոլիկ եկեղեցում այսօր էլ գործում է որոշ սրբերին չթաղելու, նրանց մարմիններն ի ցույց դնելու սովորույթը, ինչպես կաթոլիկ սրբերից Բեռնադեթի մարմինը Ֆրանսիայի հարավում գտնվող Լուրդի եկեղեցում կամ Յովհաննես 23-րդ պապի աճյունը Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում: Հնդկական իրականության մեջ առավել շատ տարածված է եղել դիակիզումը, եգիպտացիների մոտ՝ դիակների գմբուսումը և դամբարանային թաղումները:

**2. Հուղարկավորությունը աստվածաբանական իմաստով ընդգծված խորհուրդ չէ, սակայն ունի խորը հոգևոր իմաստ: Ինչպե՞ս է այն մեկնաբանվում:**

Հովհան Ոսկեբերանն ասում է, որ մահացածին թաղողները նույն գործն են անում, ինչ սերմնացանները, որոնք հողի մեջ են նետում դժվարին աշխատանքով հավաքած սերմերը: Նրանք նույնիսկ աղոթում են, որ Աստված անձրև ուղարկի, որպեսզի այն կազմալուծի սերմերը, որով և ավելի շատ արդյունք կլինի: Այսպես նաև հողի մեջ դնում ենք մահացածի մարմինը, որ այնտեղից հարության ժամանակ մարդը հարություն առնի նոր, կատարյալ մարմնով: Ոսկեբերանն ասում է, որ մարմինները փտում են, որպեսզի մարդն իմանա, որ հողից է ստեղծված: Նաև՝ եթե մարմինները չփտեին, ապա ի հայտ կգային մեռյալների քաղաքներ, մարդիկ կապված կմնային իրենց սիրելի ննջեցյալ հարազատների մարմիններին՝ նրանց գետեղելով գերեզմաններում կառուցված հատուկ տների մեջ և կկտրվեին իրական կյանքից, վշտով և մահացածին մշտապես տեսությամբ կվնասեին իրենց անձնական կյանքի ընթացքը՝ առավել շատ ժամանակ անցկացնելով մեռյալների այդ տեղանքում: Անդրադառնալով այն խնդրին, որ մարդկանց համար տիպի է մտածելը, թե իրենց մարմինները փտելու են, Ոսկեբերանն ասում է, որ դրա համար, ընդհակառակը, ուրախանալ է պետք, ինչպես որ հին ու խարխուլ տնից մարդիկ դուրս են գալիս և ուրախանում, որ այդ տունը պետք է ավերվի և փոխարենը նորը կառուցվի իրենց բնակության համար:

Պողոս առաքյալն ուսուցանում է ննջեցյալների և հարուցյալ մարմինների մասին դարձյալ հողի մեջ սերմեր ցանելու օրինակով՝ ասելով, որ սերմանվածն այն նույն մարմինը չէ, որ ծնվելու է. սերմանվում է ապականությամբ և հարություն է առնում առանց ապականության, սերմանվում է շնչավոր մարմին, և հարություն է առնում հոգևոր մարմին (Ա Կորնթ. 15.35-44): Հոգեհանգստյան արարողությունների ժամանակ ընթերցվում է Հովհաննու Ավետարանում արձանագրված Քրիստոսի ուսուցումը, ըստ որի՝ «եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կմնա, իսկ եթե մեռնի, բազում արոյունք կտա» (Հովհ. 12.24): Այս օրինակները կապ ունեն հողի մեջ ամփոփման, հողի մեջ թաղման հետ, որով և քրիստոնեական ավանդություն առավել տարածվել է ննջեցյալներին հողի մեջ թաղելու սովորությամբ, որն առնչված է կրոնական հավատալիքի, ննջեցյալների՝ հողից հարություն առնելու, սերմանված սերմից նոր բույսի ծլարձակելու օրինակով ապականացու և անապական, շնչավոր և հոգևոր, հարուցյալ մարմինների իրողության բացատրությամբ:

**3. 2007 թ. փետրվարին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում երկրորդ ընթերցմամբ ընդունվեց «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքը: Դուք, որպես հայ եկեղեցական, ինչպե՞ս եք մոտենում դիակիզման հարցին: Ինչպիսի՞ն է Հայ Առաքելական եկեղեցու դիրքորոշումը:**

Պետական օրենքների ընդունման պարագայում մի մտահոգիչ իրողություն է նկատվում: Այն օրենքները, որոնք վերաբերում են կյանքի հոգևոր կողմին, հավատքին ու հավատալիքներին, կարող են կազմվել և ընդունվել առանց եկեղեցու հետ սկզբնական խորհրդակցության, քննարկման և երբեմն՝ նույնիսկ առանց եկեղեցու համաձայնության: Կրոնական փոքրամասնությունների՝ աղանդավորների պարագայում պետությունը զգուշավոր մոտեցումներ է ցուցաբերում՝ նկատի առնելով նրանց կրոնական համոզմունքները, որպեսզի չլինի թե մեղադրվի կրոնական փոքրամասնության հանդեպ խտրականություն դրսևորելու և հալածանքի մեջ: Սակայն

համապատասխան օրենքներ ընդունելիս առավելաբար պետք է հաշվի առնել մարդկանց կրոնական ընկալումները, սովորույթները: Տարբեր ուսումնասիրություններ հայաստանյան և օտարերկրյա մասնագետների կողմից ցույց են տալիս, որ Հայաստանի բնակչության իննսուն տոկոսը և ավելին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու անդամներ են, որով և բնակչության մեծ մասին վերաբերող, հոգևորին առնչվող օրենքներ ընդունելիս պետությունը պետք է հաշվի նստի Հայ Եկեղեցու կարծիքի հետ, ինչպես որ վարվում է աղանդավորների պարագայում: Օրինակ՝ Եհովայի վկաների առնչությամբ, նկատի ունենալով նրանց կրոնական համոզմունքները, պետությունն օրենք է ընդունում զինվորական ծառայությունը փոխարինելու այլընտրանքային ծառայությամբ, խղճի ազատության օրենքով որոշակի լիազորություններ են տրվում կրոնական բնույթի խմբակցություններին: Այսպիսի զգուշավոր մոտեցում սկսեց դրսևորվել հատկապես այն բանից հետո, երբ Եհովայի վկաները դատական հայտ ներկայացրին ընդդեմ Հայաստանի Հանրապետության և պետությունը ստիպված Եվրոդատարանի կայացրած որոշումով այդ աղանդին վճարեց հարյուր հազար եվրոյից ավելի գումար պետական գանձանակից, այն գանձանակից, որի կայացման համար մենք՝ այս երկրի քաղաքացիներս, մշտապես հարկեր ենք վճարում: Գիշտ է, ՀՀ սահմանադրությամբ ընդգծված է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային Եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում, նաև Եկեղեցի-պետություն հարաբերությունների շրջագծում պետությունը բավականին աջակից է Եկեղեցու գործունեությանը, սակայն կարևոր օրենքների ընդունման մեջ լինում է, որ շրջանցվում է Եկեղեցու կարծիքը: Այդպես եղավ և՛ Եհովայի վկաների պետականորեն գրանցման, և՛ «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքների ընդունման դեպքում, ինչպես նաև գենդերային օրենքի նախագծի ստեղծման գործընթացներում:

Եհովայի վկաներին պետական գրանցում տալու առնչությամբ այն ժամանակվա արդարադատության նախարարն ուշադրություն չդարձրեց հոգևորականների բողոքներին, Հայ Առաքելական Եկեղեցու դեմ լինելուն և վստահեցնում էր, որ դա պետք է իրականացվի, քանի որ դրանով իբր ավելի մեծ հնարավորություն է ընձեռվում նրանց գործունեությունը վերահսկելու: Այդ ժամանակ մեզ չէր ասվում, որ մեր հարևան երկրներից Վրաստանը մերժել է այդ աղանդի պետական գրանցումը և նույնիսկ ավելին՝ այնտեղ չէին ընդառաջում նաև Հայ, Ուղղափառ, Կաթոլիկ Եկեղեցիների գրանցման խնդրանքին: Լայնորեն չէր լուսաբանվում նաև, որ եվրոպական որոշ երկրներ նույնպես արգելել են Եհովայի վկաների գրանցումը՝ դա նպաստավոր չհամարելով պետության համար: Եվ այսօր պարզվում է, որ Հայաստանում այդ աղանդը գրանցելու համար ներկայացված հիմնավորումներից մեկը նույնպես ձևական է եղել՝ նրանց գործունեությունը վերահսկելը, քանի որ այդ աղանդավորները շարունակում են տնից տուն մտնելով քարոզել՝ խախտելով Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքը, ըստ որի՝ իրավունք ունեն քարոզչություն իրականացնել միմիայն իրենց համայնքի ներսում: Ահա այսպես եղավ նաև դիակիզարաններին առնչվող օրենքի ընդունումը:

Դիակիզման առնչությամբ Եկեղեցու պաշտոնական տեսակետի վերաբերյալ պետք է ասել հետևյալը: Այսօր ոչ մի հոգևորական հատկապես արդիական հարցերի ու խնդիրների վերաբերյալ չի կարող արտահայտել Հայ Առաքելական Եկեղեցու պաշտոնական տեսակետները, որովհետև դրանք բանաձևված և արձանագրված չեն. սոցիալական հայեցակարգի կազմումն ընթացքի մեջ է: Յուրաքանչյուր եկեղեցական արտահայտում է իր կարծիքը, որով կարելի է ներկայացնել Եկեղեցու դիրքորոշումը, եթե այն հստակ է:

Այս պարագայում ևս կարող ենք հստակորեն արտահայտել Հայ Առաքելական Եկեղեցու դիրքորոշումը դիակիզման վերաբերյալ, քանի որ խնդիրը բավականին քննարկվել է: Դիրքորոշումը հետևյալն է՝ Հայ Առաքելական Եկեղեցին չի խրախուսում դիակիզումը: Այն լայնորեն ընդունելի չէ, որովհետև չի համապատասխանում հայոց կյանքում քրիստոնեա-

կան ընդունված հավատալիքներին, ավանդույթներին, ծիսաարարողական կարգին: Գերեզմաններում բոլոր հանգուցյալները թաղված են դեմքով դեպի արևելք, այսպես նաև հուղարկավորության ժամանակ ննջեցյալին տանը կամ եկեղեցում դեմքով դեպի արևելք են դնում: Քրիստոս ասաց, որ երկրորդ գալստյան ժամանակ գալու է արևելքից (Մատթ. 24.27): Դրա համար էլ ննջեցյալներին դեմքով դեպի այդ կողմն ենք թաղում, որպեսզի երկրորդ գալստյան ժամանակ գերեզմանից հարուստուն առնեն դեմքով դեպի Փրկիչը: Դիակիզման պարագայում այս ամենը կիրառել հնարավոր չէ, որովհետև մոխրի մեջ չի կարելի որոշել՝ որտեղ է գլուխը, դեմքը, որտեղ՝ ոտքերը: Բացի դրանից, քրիստոնեության մեջ մահացածներին կոչում են ննջեցյալներ, որովհետև հավատում ենք, որ մահացածը չի ոչնչացել, այլ կարծես ննջել է, ողջ է հոգով և մեռյալների հարության ժամանակ նաև մարմնապես պիտի արթնանա, հարուստուն առնի: Եվ հուղարկավորության ժամանակ մահացածի մարմինը ևս ննջեցյալ, ննջած լինելու իրողությունն է ցույց տալիս: Մինչդեռ դիակիզման ժամանակ ննջած լինելու այդ պատկերացումը ջնջվում է, մարդն արդեն դառնում է ոչ թե ննջեցյալ, այլ մոխրացյալ, և արդեն պետք է խոսենք ոչ թե ննջեցյալների, այլ մոխրացյալների մասին:

**4. Դիակիզումն ընդունելի չէ և խորթ է քրիստոնեական մեր աշխարհայացքին, սակայն, օրինակ, համաճարակի դեպքում դիակիզումը բացառությամբ թույլատրելի է: Այսօր այն դեպքում, երբ օրենքը հիմնավորում է տարածքային խնդիրը, ինչն՞ է բացառության սկզբունքը չի կարող գործել:**

Տարածքային խնդիրը, որով ավելի շատ պայմանավորում էին դիակիզարանների մասին օրենքի ընդունումը, ամբողջապես ճիշտ չէ: Երբ 2006 թվականին դիակիզարանների հարցը բարձրացվեց, խնդիրն այնպես էր ներկայացվում, որ կարծես թե պայմաններն օրհասական են, և պետք է շտապ միջոցներ ձեռք առնել: Սակայն հետո պարզվեց, որ դիակիզարանի կառուցումը հսկայական դրամական միջոցների հետ է կապ-

ված, որով և գործընթացը բավականացավ միայն թղթի վրա օրենքի գրությամբ: Մտավախություն կա, որ դիակիզարանների վերաբերյալ օրենքից գուցե ինչ-որ մեկը փորձում էր օգտվել՝ հիմքեր դնելու իր բիզնես ծրագրերի իրականացման համար: Սակայն այդ օրենքի ընդունումից մինչ այսօր թաղումները շարունակվում են ինչպես նախկինում, որից ակնհայտ է դառնում, որ տարածքների խնդիրը ներկայացվում էր ուռճացված կերպով: Իհարկե, տարածքների խնդիր կա հատկապես մայրաքաղաք Երևանում, որտեղ շատ են գերեզմանները, և գուցե նոր հողատարածքները գերեզմանների համար տրամադրելը նպատակահարմար չէ: Ոչ ոք էլ չի ցանկանում, որ մեր մայրաքաղաքի հողերի մեծամասնությունը գերեզմանների տրամադրվեն, և մայրաքաղաքը վերածվի հսկայական գերեզմանոցի: Երևանում խնդիր կա նաև գերեզմանների և բնակելի տարածքների հետ կապված, քանի որ գերեզմանները բնակելի տարածություններից պետք է լինեն առնվազն քսան մետր հեռավորության վրա և պատված խիտ բուսականությամբ: Կան գերեզմանատներ, որոնք արդեն դուրս են եկել դեպի փողոցներ, որտեղով մեքենաների երթևեկություն է իրականացվում: Նաև աննպատակահարմար վայրում հաստատված գերեզմանատուն կա, որ գտնվում է ծանր հիվանդների համար հատկացված հիվանդանոցների մոտ: Դեպի հիվանդանոց տանող բանուկ ճանապարհներից մեկն անցնում է այդ գերեզմանատան հենց հարևանությամբ, և հիվանդանոցային պալատների պատուհաններից էլ երևում են գերեզմանները: Ծանր հիվանդների պարագայում այս ամենն ընկճող կարող է լինել:

Ճիշտ է, քրիստոնեական տեսակետով նաև հակառակ դիրքորոշումը կա: Օրինակ՝ մեր հիմնվուրց եկեղեցիների գավիթներում թաղումներ են կատարված, գավիթները պատված են շիրմաքարերով, և մարդը եկեղեցի մտնելիս պետք է անցնի այդ տապանաքարերի վրայով՝ իր մեջ հաստատելու գիտակցությունը, որ մահկանացու է, այս կյանքի ժամանակը թանկ է, և ինքը պետք է բարի ընթացքով ու գործերով արժևորի իր կյանքը, ինչպես նաև մտածի հավիտենականի մասին: Նաև Սուրբ Ներսես Շնորհալի Զայրապետն է իր «Հավատով խոստովանիմ» աղոթքներից մեկում խնդրում, որ Աստված բևեռի

իր հոգում մահվան սոսկալի օրվա մասին մտածումը, որովհետև մահկանացու լինելու մասին գիտակցությունը մարդուն հեռու է պահում մեղքից, առավել խթանում բարի, առաքինի ապրելակերպին, գործերին: Սակայն ծանր հիվանդությամբ տառապողների և նրանց հատկացված հիվանդանոցի հետ կապված մտահոգությունը գերեզմանների մոտ լինելու առկայության վերաբերյալ նաև խիստ մտահոգիչ է: Եթե մայրաքաղաքում տարածքներ չկան գերեզմանների համար, ուրեմն պետք է տարածքներ տրամադրել միջքաղաքային ճանապարհներին ևս, որոնք համապատասխան կլինեն երթևեկելի մասից որոշ հեռավորության պայմանը պահելով: Բայց տարածքներին առնչվող, բարձրաձայնվող խնդիրն ամբողջապես չէ, որ համապատասխանում է իրականությանը: Գերեզմանատներում տեսնում ենք հարուստների գերեզմաններ, որոնք մեծ տարածք են զբաղեցնում և որոնց վրա հսկայական արձաններ կամ դամբարաններ են սարքված, մինչդեռ այդ հողատարածքը կարելի էր բաժանել մի քանի գերեզմանների համար: Նույն մայրաքաղաք Երևանում կամ շրջակայքում մեծահարուստներին տրամադրում են մեծ հողատարածություններ կամ ամբողջական բլուրներ, նրանց շքեղ առանձնատների և դրանց կից մեծատարածք այգիների կամ կալվածքների համար: Այս փաստը նշելով՝ չենք դատապարտում հարուստներին, թող վայելեն իրենց ունեցածը և իրենց ունեցվածքից նաև կարիքավորներին բաժին հանեն: Բայց եթե տարածքներ կան նրանց կալվածքների, առանձնատների, գերեզմանոցներում ունևորների մեծ գերեզմանների համար, ուրեմն տարածքների մասին հարցը օրհասականորեն ներկայացները ճիշտ չէ: Նաև միջքաղաքային ճանապարհներին տեսնում ենք, որ բավականին հողատարածքներ են տրամադրված խաղատների և տարբեր «օբյեկտների» համար: Յետևաբար, գերեզմանատների մասին խոսելիս տարածքների հարցը բարձրացնելու պարագայում պետք է ազնիվ լինել և ճիշտը ասել, որ ըստ որոշ պաշտոնյաների՝ տարածքներ չկան գերեզմանների համար, սակայն տարածքներ կան հարուստների հսկայական գերեզմանների, առանձնատների, կալվածքների և խաղատների համար:

**5. Եթե մարդն ընտրել է դիակիզման մեթոդը, Հայ Առաքելական Եկեղեցին հրաժարվելո՞ւ է հոգեհանգստի և թաղման կարգը կատարելուց:**

Եթե Հայ Առաքելական Եկեղեցու անդամներից մեկն ընտրի դիակիզումը, ապա մահից հետո նրա համար թաղման կարգ չի կատարվի, որովհետև այն արվում է ննջեցյալի աճյունի և ոչ թե մոխիրների առկայությամբ: Տվյալ դեպքում կատարվում է միայն հոգեհանգստյան արարողություն: Մարդ կարող է նախընտրել դիակիզումը՝ իր պատկերացումներից ելնելով. ոմանք երբեմն մտածում են, որ ավելի լավ է դիակիզվել, քան մարմինը փտեցնել և որդերի կեր դարձնել: Այս պատկերացումով է Շեքսպիրի հերոսներից Համլետը պատասխանում թագավորի՝ սենեկապետի որտեղ գտնվելու մասին հարցին: Համլետն ասում է, որ նա ընթրիքի է, բայց ոչ թե այնտեղ, որտեղ ուտում են, այլ այնտեղ, որտեղ ուտվում են: Շեքսպիրյան հերոսի խոսքով մարդու կայսրը կերակրի տեսակից որդն է: Մենք պարարտացնում ենք կենդանիներին մեր ուտելու համար, և մեզ ենք պարարտացնում, որ հետո որդերի կերակուր դառնանք: Այսպիսով, գեր թագավորը և նիհար մուրացկանը մի սեղանի երկու տարբեր կերակուրներ են: Նույն մոտեցմամբ, ինչպես նշվում է «Համլետ» ստեղծագործության մեջ, մարդը կարող է ձուկ բռնել որդով, որը կերել է մի թագավորի և հետո ուտել ձկանը, որը կերել է այդ որդը: Նմանատիպ պատկերացումները ոմանց դրդում են դիակիզումը նախընտրելուն: Սակայն մարդկանց պետք է ամբողջ ճշմարտությունն ասել դիակիզման մասին: Դիակիզումով խոշոր ոսկորները, գանգը չեն փոշիանում, դրանք մանրացնում են հատուկ սարքով: Եթե փորձենք մենք էլ ոսկորներ վառել, կտեսնենք, որ դրանք մանր փոշու, մոխրի չեն վերածվում, այլ վառվածը պետք է այդպիսին դարձնել: Եվ չնայած դիակիզարաններում շատ բարձր աստիճանի է հասցվում կրակը վառարաններում, այնուամենայնիվ, դա բավական չէ խոշոր ոսկորների մոխրացման համար: Բացի դրանից դիակիզարանների խնդիրների շարքում նշվում է այն հանգամանքը, որ վառարանները հաճախ բավականին կեղտոտ են լինում՝ լցված մոխրով ու փոշիով: Միանգամայն օգտագործու-

մից հետո կիզարանները պետք է լավ մաքրել, իսկ դա հնարավոր է տևական ժամանակ հետո, երբ դրանք սառչում են: Սակայն շատ դեպքերում մաքրում տեղի չի ունենում, որով և մի վառված դիակի մոխիրները խառնվում են հաջորդ վառվածի մոխիրների հետ: Ուրեմն, դիակիզարանների մասին նախ պետք է ամբողջական և ընդարձակ տեղեկություններ տրամադրել՝ ներկայացնելով դրանց դրական և բացասական կողմերը, որպեսզի մարդիկ կարողանան ընտրություն կատարել:

Սփյուռքի մեր թեմերում պատահում են Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդների դիակիզման դեպքեր՝ նրանց իսկ ընտրությամբ: Այդպիսիներին Եկեղեցին չի մերժում, նրանց հարազատներին չի հեռացնում Եկեղեցուց, չի զրկում Հաղորդությունից, և հոգևորականները ներկա են լինում գերեզմաններում: Թաղման կարգ չի կատարվում, սակայն կատարվում է հոգեհանգստյան կարգ: Հոգևորականն աղոթում է մահացածի հոգու խաղաղության և հանգստության համար, խնդրում Աստծո Սուրբ Հոգու մխիթարությունը մահացածի հարազատներին: Հարության պարագայում Աստված, իհարկե, կարող է նաև մոխիրները վերածել հարուցյալ մարմինների, քանի որ Նա, Ով ոչինչից ստեղծեց աշխարհը, մարդուն, տիեզերքը, կարող է նաև արդեն գոյություն ունեցող տարրերից նոր գոյավորման բերել: Այսպես է բացատրում նաև Սուրբ Գրիգոր Տաթևացին, երբ խոսում է մի ձկան մասին, որը մարդ է կերել, և հետո մի ուրիշ մարդ բռնել և կերել է այդ ձկանը: Բայց և այնպես, ամեն դեպքում պետք է հիշել, որ Հայ Առաքելական Եկեղեցին չի խրախուսում դիակիզումը:

**6. Մի՞թե մարդն ազատ չէ իր մարմնի ճակատագիրը տնօրինելու և ինքը որոշելու, թե մահանալուց հետո ինչպես է ուզում թաղվել: Չէ՞ որ հոգին ավելի կարևոր է, քան մարմինը, և, հետևաբար, մարմնին վերաբերող հարցը պետք է երկրորդական համարել:**

Երբ ասում ենք, որ հոգին ավելի կարևոր է, քան մարմինը, նկատի ունենք, որ մարմինը ևս կարևորություն ունի, և հոգին առավել կարևոր է: Այդ խոսքով շեշտվում է նաև մարմնի կա-

րևորությունը: Քրիստոս ևս այսպես ուսուցանեց՝ ասելով. «Ձեր հոգու համար հոգ մի՛ արեք, թե ի՞նչ պիտի ուտեք կամ ի՞նչ պիտի խմեք, և ոչ էլ ձեր մարմնի համար, թե ի՞նչ պիտի հագնեք. չէ՞ որ հոգին ավելին է, քան կերակուրը, և մարմինը՝ քան զգեստը» (Մատթ. 6.25): Քրիստոնեությունը տարբերվում է մյուս կրոններից մարմնի և նյութի վերաբերյալ հարցերում: Բուդդայականության մեջ մարմինն արգելք է հոգևոր աշխարհի անցնելու, և այս կրոնի հետևորդը նպատակ ունի կյանքի ավարտին ի վերջո ազատվելու նյութական աշխարհից և հասնելու երանելի վիճակի, խաղաղության՝ նիրվանայի: Բուդդայական ավանդության մեջ նիրվանան նկարագրվում է որպես տանջանք պատճառող կրակի՝ կապվածության, անգիտության հանգչում, որով տանջանքները վերջանում են և գալիս է լիակատար հանգիստը: Հինդուիզմում նպատակն է ի վերջո ազատվելու վերամարմնավորումներից և միանալու Բացարձակ հոգևորին: Մարմնի մասին յուրահատուկ պատկերացում կար նաև հույների մոտ, հունական փիլիսոփայության մեջ: Պլատոնը հունարեն «մարմին՝ սոմա» բառը ստուգաբանում է որպես «գերեզման՝ սեմա» բառից առաջացած՝ ուսուցանելով, որ մարմինը հոգու բանտն է, և կյանքի ավարտին հոգին ազատություն է գտնում ու հեռանում բանտից: Դրա համար էլ, երբ Արիսպագոսում Պողոս առաքյալն աթենացիների դիմաց խոսում էր Քրիստոսի մասին, նրան ուշադրությամբ լսում էին, բայց հենց առաքյալն սկսեց խոսել հարության մասին, նրան ծաղրեցին (Գործք 17.32), որովհետև հույների համար հարությունը նույնն էր, ինչ բանտից ազատված մարդը, ազատություն գտնելով, նորից վերադառնար բանտ:

Սակայն քրիստոնեական ընկալումը բոլորովին այլ է: Քրիստոնեության մեջ մեծապես կարևորվում է նյութը: Աստված ոչնչից ստեղծեց նյութը, տիեզերքը, աշխարհը, մարդուն: Աստված, որ հոգի է և մարմին չունի, հանուն մարդկության փրկության նյութականացավ, մարմին առավ: Նաև համընդհանուր հարության ժամանակ մարդիկ հարություն են առնելու գերեզմաններից նոր, կատարյալ մարմիններով: Այս առումով կարելի է ասել, որ քրիստոնեությունը նաև մատերիալիստական կրոն է, որովհետև քրիստոնեության մեջ մեծ

կարևորություն է տրվում նյութին, և մարդը համարվում է ոչ միայն հոգի, այլ հոգու և մարմնի՝ այս երկուսի միավորությունը: Դրա համար էլ նաև թաղման արարողությունը կատարվում է մարդու մարմնի առկայությամբ:

### **7. Ինչպիսի՞ն է դիակիզման հանդեպ դիրքորոշումն այլ կրոններում և Կաթոլիկ եկեղեցում:**

Դիակիզումը մեծապես ընդունված է բուդդայականության մեջ, հինդուիզմում, ջայնիզմում: Հնդկական կրոնափիլիսոփայությունը կարևորում է դիակիզումը, որովհետև այդ աշխարհայացքի համաձայն՝ մարդն ստեղծված է հինգ տարրերից՝ հողից, օդից, ջրից, կրակից և եթերից: Երբ մարդը մեռնում է, նրա բաղադրիչ տարրը կազմող կրակը հանգչում է, դրա համար էլ կրակ են վառում և դիակիզումը կիրառում: Չորս տարրերից կազմված լինելու պատկերացում կա քրիստոնեական հեղինակների, հայ եկեղեցական հեղինակների մոտ, սակայն նրանց տեսակետը արմատականորեն տարբերվում է հնդկական փիլիսոփայության կարծիքներից՝ քրիստոնեական վարդապետության վրա հիմնված լինելով: Դիակիզումը կիրառվում է նաև այն մտայնությամբ, որ դա օգնում է հոգուն արագ ազատվել մարմնից: Սակայն հնդկական կրոններում երբեք չեն դիակիզում սրբերին ու երեխաներին, այլ նրանց հիմնականում թաղում են: Բացատրությունն այն է, որ սրբերն արդեն կապվածություն չունեն մարմնի, մարմնականի հետ և նրանց հոգիները կարող են հեշտությամբ ազատվել մարմնից, նույնպես և երեխաներն իրենց վաղ տարիքի բերումով չեն հասցրել մարմնին, նյութականին մեծապես կապվել և հարկ չկա նրանց մարմինները վառելու՝ հոգիներին մարմիններից ազատվելու գործում օգնելու համար: Հնդկաստանում մահացած ամուսինների դիակիզման ժամանակ նաև նրանց կանայք են նետվում կրակը՝ ամուսինների հետ վառվելու: «Սատի» կոչվող այս սովորույթի ծագման պատճառը, ըստ կարծիքներից մեկի, ոչ միայն կրոնական է, այլև սոցիալական, քանի որ հնդկական հասարակության մեջ մեծ դժվարություններ են ծագում այրիների համար: Այս իրողությունը հակադրվում է Աստվածաշնչին, որը բազում

պատվերներ ունի այրիների իրավունքը հարգելու, պաշտպանելու, նրանց հոգ տանելու համար (Ելք 22.22, Բ Օր. 10.18, 27.17, Սաղմ. 67.6, 145.9, Առակ. 15.25, Եսայի 1.17, 10.2 և այլն): Մինչև 1947 թվականը Հնդկաստանում օրենքով չէր արգելվում ողջ կանաց վառվելը դիակիզվող ամուսինների կրակի մեջ, սակայն հետո դա արգելվեց: Այդ արգելքը, սակայն, հիշյալ սովորույթը չդադարեցրեց, և գյուղական, գավառական շրջաններում, չնայած մտավախությունը կա օրենքով պատժվելու, դարձյալ շարունակվում է ողջ կանանց՝ ամուսինների դիակների հետ վառելու սովորույթը: Հնդկաստանում կիրառվում է բաց տարածության մեջ կատարվող դիակիզումը, սակայն մեծ քաղաքներում գործում են դիակիզարանները:

Բողոքական եկեղեցիները և Կաթոլիկ եկեղեցին այսօր ընդունում են դիակիզումը, սակայն Կաթոլիկ եկեղեցուն արարողություն է կատարվում միայն մարմնի առկայության պարագայում, դիակիզումից առաջ: Սուրբ Գրիգոր Տաթևացին Վերջին օծման խորհրդի, ննջեցյալ քահանաների մարմինը մյուռոնով օծելու մասին խոսելիս մեծապես կարևորում է հուղարկավորության արարողության համար մարմնի ներկայությունը: Մարմնի օծումով, մարմնի վրա կատարվող արարողությամբ հոգու վրա ներգործելու փաստը բացատրելով՝ Տաթևացին ասում է. «Երբ հոգին միավորված էր մարմնին, միությամբ ներգործ էին ամենայն մարմնական իրողությունները: Իսկ այժմ, երբ բաժանված են մարմինն ու հոգին՝ բաժանմամբ ևս հոգուն հասնում են բոլոր սրբությունները»: Եկեղեցուն պատարագի ընթացքում դրվում է մարմինը, որի ներկայությամբ հոգևորականը համապատասխան կարգն է կատարում, այնուհետ մարմինը տանում են դիակիզարան: Սակայն Կաթոլիկ եկեղեցուն արտոնություն կա նաև արդեն դիակիզված մոխրով աճյունասափորի առկայությամբ կարգը կատարելու, եթե բացառիկ անհրաժեշտություն է եղել մինչև եկեղեցական կարգի մատուցումը մարմինը դիակիզելու: Այս պարագայում արարողությունն անելու հնարավորությունը թողնվում է հովվական գթասրտությանը: Այսինքն՝ եկեղեցու հովիվը, քննելով պարագան, լիազորություն ունի իր որոշմամբ թաղման կարգը դիակիզված մարմնի մոխիրների վրա

կատարելու: Այդ դեպքում աճյունասափորը եկեղեցում դրվում է այնտեղ, որը նախատեսված է ննջեցյալի համար, և նույնությամբ կատարվում է ծեսը: Կաթոլիկ եկեղեցում արգելված է դիակիզումը նախըտրած ննջեցյալի համար որևէ կարգ կատարել, եթե նրա նախընտրությունը կապված է մարմինների հարությունը մերժելու համոզմունքի հետ: Բայց եթե հայտնի է, որ մարդու նման նախընտրությունը հարության մերժում չէ, ապա հուղարկավորության կարգ կատարվում է:

#### **8. Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ դիակիզման նախապատվությունն ընդհանրապես:**

Քրիստոնեության մեջ մեծ դերակատարություն ունեն արարողությունները, որոնց ընթացքում գործածվող առարկաները, խորհրդանշանները օգնում են կրոնական կարևոր գաղափարները, գիտելիքները մատուցել նաև արարողության պերճախոս լեզվով և դրանք ամրապնդել հավատացյալների գիտակցության մեջ: Թաղման արարողության ժամանակ մահացածի մարմինը հիշեցնում է ննջեցյալ լինելու, փոխաբերական իմաստով քնած, ննջած վիճակում լինելու, մահացածի՝ հետագայում մարմնով հարություն առնելու մասին: Դեմքով դեպի արևելք դրվելը և գերեզմանոցում այդ դիրքով թաղվելը հուշում է արևելքից Քրիստոսի երկրորդ գալստյան մասին, երբ պիտի տեղի ունենա ընդհանրական հարությունը (Յովհ. 11.23-24, Գործք 17.31, 24.15, Ա Կորնթ. 15.12, 20-22, 51-53): Յովհի մեջ դրվելը, «հող էիր և հող պիտի դառնաս» (Ծննդ. 3.19) արտահայտությունը՝ կրկին բերում են ակնարկը Աստծո արարչագործության, ողջ տիեզերքի և մարդու՝ Աստծո կողմից ստեղծված լինելու, մարդ արարածի՝ հողից արարված լինելու (Ծննդ. 2.7) և հետո հոգևոր ու կատարյալ մարմնով հողից վեր հառնելու մասին (Ա Կորնթ. 15.42-44):

Դիակիզման լայնորեն կիրառման դեպքում թաղման ու հարության հետ կապված արարողության խորհրդանշանները կդադարեն գործադրվելուց, որով ամեն հուղարկավորության ժամանակ շեշտվող և բացատրվող վերոնշյալ իրողությունների մասին գիտակցությունը կարող է աղոտանալ հավատացյալների մոտ, և գուցե միտում ի հայտ գա մարմնի հարությունը մերժելու կամ անտեսելու:

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԵԴԻԱ ԵՎ ՄԻՋԱՆՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մի քանի տարի առաջ ամբողջ աշխարհում կատարված մի ուսումնասիրություն ցույց տվեց, որ մարդիկ միջին հաշվով օրական 3 ժամ հեռուստացույց են դիտում: Այսօր շատ ավելի տարբեր վիճակագրություն է ձևավորվում համակարգչի, բջջային հեռախոսի առջև օրական անցկացվող ժամերի վերաբերյալ: Դա նույնը չէ, ինչ թմրամոլ լինելը, թեև նմանություններ կան: Արդյո՞ք մարդիկ դրանից իսկապես անվնաս հաճույք կամ օգուտ են ստանում, թե՞ ուղղակի թմրամոլի պես չեն կարողանում հրաժարվել վատ սովորությունից:

Աշխատանքի, դասընթացների մեջ օրական լարվածությունը պահանջում է մտքի լիցքաթափում, հանգիստ, օրվա բերած մտավոր լարվածության թոթափում: Դրա համար մարդիկ հատկապես երեկոյան ժամերն անցկացնում են հեռուստացույցի կամ համակարգչի, ոմանք էլ՝ արդեն հեռուստացույցի և համակարգչի ֆունկցիաներն ունեցող բջջային հեռախոսների առջև: Երբ զբաղմունքի այս ձևը կլանում է մարդու ողջ ուշադրությունն ու ժամանակը, կտրում է իրականությունից, հարազատների հետ շփումից, ընտանիքի հետ հաղորդակցվելուց, այն դառնում է մոլուցք: Դա չի նույնանում թմրամոլության հետ, բայց շատ նման է դրան այն իմաստով, որ մարդն անպայման իրեն հաճույք պատճառող, բայց և իր առողջությանն ու շրջապատին վնասող մի միջոցի համապատասխան քանակ պիտի ստանա, որ հանգստանա:

Ֆիլմեր դիտելը հոգեբանության բացատրությամբ կապված է նաև մարդու ինքնավստահության հաստատման, իրեն հերոսների հետ նույնացնելու, ճնշող կամ մտահոգիչ իրականությունն այլ կերպ ընկալելու, գործելու շարժառիթներ գտնելու ու ոգևորվելու և նման այլ իրողությունների հետ: Բայց ֆիլմերը, համակարգչային խաղերը, գովազդները ցուցադրում են նաև բռնության տեսարաններ, անբարոյականություններ, սեռական սանձարձակություններ, որոնք վնասում են մարդու հոգևոր վիճակը: Մեղավոր տեսարանը կարող է բերել մեղսալի մտածում, դառնալ չարի գայթակղութ-

յան միջոց կամ պատճառ: Մտքով շնութունն իրականում կատարվածի հետ հավասարեցնելու ավետարանական հաստատումը (Մատթ. 5.27-28) վերաբերում է նաև շնության ու սպանության տեսարանների դիտմանը՝ հոգևոր վիճակին վնասելու, մեղքին հակվածություն առաջացնելու առկա վտանգի նկատառումով: Եկեղեցական հեղինակներից մեկի խոսքերով՝ հաճույքի զգացումով սպանության տեսարան դիտած անձըն ինչպե՞ս կարող է հաջորդ օրը եկեղեցում աղոթել Աստծուն, որի անունն է Սեր: Ուրեմն, շնության հակվելու վտանգից պետք է զգուշանալ և աչքերը զսպել ոչ միայն անձնական հարաբերություններում, որի մասին խոսում է Քրիստոս, ինչպես նաև՝ Հոբ Երանելին (31.1), Սիրաք իմաստունը (25.28), այլև ֆիլմեր դիտելիս: Այն միտքը կա, որ սիրողները նրանք են, ովքեր ոչ թե նայում են իրար, այլ նայում են միևնույն ուղղությամբ: Բայց դա ամենևին էլ չի նշանակում հեռուստացույցի կամ համակարգչի առջև իրար կողքի նստած, նույն ուղղությամբ նայելով, ժամեր շարունակ ֆիլմեր դիտել: Այլ խոսքը վերաբերում է անձանց զգացումների, մտածումների, հարաբերությունների մեջ ներդաշնակությամբ:

Երբ մարդն իր ողջ ազատ ժամանակը կամ ժամանակի մեծ մասն անցկացնում է անշունչ առարկաների հետ, անշունչ ու անկենդան է դառնում նաև նրա կապը ընտանիքի անդամների հետ, մարդն ավելի քիչ է զբաղվում երեխաներով: Ֆիլմը կամ սերիալն այդ պահին համարվում է առավել կարևոր, որի հետևանքով ծնողներն անտեսում են երեխաներին: Դա կարող է հանգեցնել և փոքրիկ երեխաներին առընչվող ողբերգական դեպքերի, ինչպիսիք որ, դժբախտաբար, եղել են մեր իրականության մեջ: Երեխաներին նույնպես չպետք է քաջալերել ժամեր շարունակ համակարգչի, հեռուստացույցի կամ հեռախոսի առջև անցկացնելը, այլ ծնողները երեխաների հետ պետք է պահպանեն կենդանի շփումն ընտանիքում՝ միասին Սուրբ Գիրք ընթերցելով, խաղեր խաղալով, ինչքան էլ որ տարիքի բերումով ծնողներին պարզունակ թվա մանկական զբաղմունքներին մասնակցելը: Բայց այդ ամենը պետք է անել հանուն երեխաների առողջ հոգեվիճակի ձևավորման, ճիշտ դաստիարակության մատուցման, հեռուս-

տացույցի ու համացանցի բերած վտանգներից հեռու պահելու, ինչպես և դրանով երեխաների տեսողությանն ու առողջությանը պատճառվող վնասները կանխելու:

Տարիներ շարունակ հեռուստացույցին կամ համակարգչին կպած մարդու համար դժվար է պոկվել այդ ամենից, բայց նա պետք է գիտակցի նման վատ սովորության վտանգն ու սպառնալիքը, և գիտակցումը այդ մոլությունից ազատվելու առաջին քայլն է:

**2. Եթե երեսուն վայրկյան տևող գովազդն ազդում է տեսակետների և վարքագծի վրա, ապա նման հանգամանքներում կարո՞ղ ենք արդյոք վստահ լինել, որ ժամերով հեռուստացույցի առջև կամ համացանցում գտնվելով՝ չի փոխվի անձի մտածելակերպը: Չէ՞ որ շատ հաճախ տեղեկատվության բովանդակությունը հակառակ է այն սկզբունքներին և չափանիշներին, որ ուսուցանում է Աստվածաշունչը:**

Անձի մտածելակերպը հաճախ կարող է փոխվել ըստ այն տեղեկության, որով լցնում է իր գլուխը: Մարդկությանը և հասարակարգերը փոխել են ոչ այնքան հեղափոխությունները, որքան նոր մտքերն ու փիլիսոփայական ընկալումները: 18-րդ դարում լուսավորականության փիլիսոփաները փոխեցին մարդկանց մտածելակերպը, ոմանք սկիզբ դրեցին կասկածամտության ու սկեպտիցիզմի հատկապես կրոնի հանդեպ, Կանտը բերեց ավելի բանականության գերակայությունը, քան հավատքի և զգացմունքների: 19-րդ դարում Եվրոպան ներթափանցվեց աթեիզմով ընդամենը մեկ փիլիսոփայի՝ Նիցշեի գրվածքներով: Մտքի հզոր ալիքների բերած այս փոփոխությունները վնասում են դեռևս անկայուն, սեփական հաստատուն արժեհամակարգ ու հստակ հայացքներ չունեցող մարդկանց, որոնց այսօր էլ սպառնում են հեռուստացույցի կամ համակարգչի մատուցած հաճախ բարոյազուրկ տեղեկությունները:

Ինչ վերաբերում է հեռուստատեսությամբ տրվող լուրերին, լրաբերներին և նման հաղորդումներին, ապա այստեղ, եթե դիտենք միջազգային ասպարեզով սփռվող մեծագույն լրատվական ընկերությունների թողարկումները, կարող ենք փաս-

տել, որ այսօր աշխարհում չկա տեղեկատվություն, այլ մեծ մասամբ՝ տեղեկատվությանն առնչվող մեքենայություններ: Ամեն երկիր ըստ իր քաղաքական շահերի ու հետաքրքրությունների է մատուցում կամ ձևափոխում տեղեկությունը: Ընդհանուր առմամբ լուրերն առավելաբար վատ իրողությունների կամ իրադարձությունների հայտարարումն են՝ վթարներ, հակամարտություններ, ահաբեկչություններ, տնտեսական խնդիրներ, հասարակական մարտահրավերներ և այլն: Դրական երևույթներ լրատվական բաժինների հաղորդումներով հաճախ մատուցվում են որպես իշխող համակարգի կամ կուսակցության գովազդներ, ինչն առավել ակնբախ է հատկապես տոտալիտար համակարգ ունեցող երկրներում, որոնցից ամենահայտնին այսօր Չյուսիսային Կորեան է: Այսօրվա լրաբերներն այդպիսով վերածվում են գույժ բերողների: Մեր երկրի լրատվական դաշտում լուրերի նոր տեսակ է ի հայտ եկել՝ լուրերի վթարային բաժինը, որով մանրամասնորեն ներկայացնում են ավտովթարները: Մեկ մեքենա վթարվել է, բայց հազարավոր մեքենաներ բարեհաջող և երջանիկ հասել են իրենց նպատակային վայրերը: Սակայն լուրերը մեծ մասամբ կենտրոնանում են բացասական իրողությունների վրա:

Միջազգային նորությունները նույնպես կենտրոնանում են բացասական երանգավորման վրա՝ ինքնաթիռ է վայր ընկել, ահաբեկչությունները շարունակվում են, նորից այսինչ երկիրը ռմբահարել է այնինչ երկրին, ֆինանսական ճգնաժամը խեղդում է մարդկանց, այսինչն ինքնասպան է եղել հենց այդ պատճառով: Կարծես թե աշխարհում ընդհանրապես ոչ մի լավ բան չկա: Լուրերը մեկնաբանվում են հոռետեսական դիրքերից, և այսօրվա լուրերին հատուկ է հոռետեսական ժանրը: Մարդկանց հետաքրքրությունը մեծ է ողբերգության հանդեպ, և կարծես թե այս հատկության շահարկմամբ ջանում են լուրերը ներկայացնել ողբերգության ժանրին հատուկ բովանդակությամբ: Գրականության մեջ նույնպես մեծ հաջողություն են ունեցել ողբերգությունները, ինչպես օրինակ՝ Շեքսպիրի հայտնի ստեղծագործությունները: Բայց Շեքսպիրը բացի «Ռոմեո և Ջուլիետ», «Լիր արքա», «Մակբեթ» «Օթելլո», «Համլետ» և այլ ողբերգություններ գրելուց, գրել է նաև «Սխալների կատակերգություն», «Շատ աղմուկ

ոչնչից», «Երկու վերոնացի ազնվականներ», «Վեներտիկի վաճառականը», «Տասներկուերորդ գիշեր» և այլ կատակերգություններ, որոնք նույնպես մեծ ընդունելության են արժանացել: Այնպես որ լուրեր մատուցելիս կարելի է նկատի առնել, որ դրականը ևս հետաքրքրական է, նույնիսկ՝ օգտակար: Այլապես այս ամբողջ իրողությունը նմանվում է մի մարդու, ով Նոր տարվա գեղեցիկ տոնի մեջ տեսնում է միայն տոնածառի փչացած լույսերը:

Առօրյայում մեծ մասամբ հեռուստացույցի և համացանցի կողմից տարածվող բացասական լուրերին շփվելիս տկարանում է Աստծո հետ հաղորդակցվելու մարդու հոգևոր ձգտումը: Եվ երբ միտքը սնվում է հիմնականում հոռետեսության ու անբարոյականության տարածման աղբյուրներից, ունայնանում քրիստոնեական արժեքներից, բարոյագրկվում կամ ապաբարոյականացվում է և ենթարկվում չարի ազդեցությամբ բերվող հուսահատության ու հիասթափության, երբեմն՝ նույնիսկ հասնում Աստծուն մեղադրելու, անգամ՝ աստվածմեծության:

### **3. Տեխնիկան լավ բան է, բայց դրան պետք չէ շատ ժամանակ հատկացնել. այն կարող է բաժանել ընտանիքից և ընկերներից: Իրո՞ք վտանգը մեծ է:**

Վտանգը մեծ է և լուրջ սպառնալիք է ներկայացնում նաև մարդու հավասարակշռված հոգեբանության ու ցանկալի հոգեվիճակի համար: Մարդը դադարեցնում է շփումը ոչ միայն շրջապատի, այլ նաև՝ ինքն իր հետ: Դադարեցնում է իր մտորումները, քննությունն իր արարքների ու գործերի, անդրադարձը կյանքին կամ օրվա ընթացքին և վերջապես՝ հաղորդակցությունն Աստծո հետ: Արևմտյան երկրներում հատուկ հիվանդանոցներ կան համակարգչային կախվածություն ունեցողներին բուժելու համար: Սեզ մոտ, ցավոք, դեռ չկան նորմալ պայմաններ ու բավարար մասնագետներ նույնիսկ ալկոհոլից կախվածություն ունեցողներին բուժելու, էլ ուր մնաց համակարգչից կախվածությունը բուժելու համար: Այսօր առաջադեմ երկրներում սկսում են մտածել նույնիսկ հեռուստացույցից հոգեբանական կախվածությունը բուժելու մասին:

Նախկինում թագավորներին զվարճացնում էին տարբեր ներկայացումներով, և հին ժամանակներում հասարակ ժողովուրդը չէր կարող հաճախ իրեն նման զվարճալիքներ թույլ տալ: Այսօր ժամանցային ներկայացումների հասանելիությունը հեռուստացույցի և համացանցի շնորհիվ դարձել է բավականին մատչելի, և դրական է զվարճանքի, լիցքաթափման համար այդ տեսարանները դիտելու հնարավորությունը: Բայց դրա չափազանցումն է արձանգրվում այսօր: Եկեղեցու Յայրերը խիստ են արտահայտվել թատրոնի մասին, որովհետև այն մարդկանց կտրում էր իրականությունից, հաճախ անբարոյական տեսարանների ներկայացումով տկարացնում մարդկային առաքինությունը, սպառում կյանքի թանկ ժամանակը: Նույն զգուշացումներն արդիական են նաև այսօր: Սակայն Եկեղեցին խիստ դիրքորոշում չունի կինոարվեստի և թատերարվեստի մասին, որովհետև եթե դրանք արվեստի դրսևորումներ են և ցուցադրում են մարդկային բարձրագույն, վսեմ զգացմունքներ ու գործողություններ, նպաստում բարու, առաքինության տարածմանը, ուրեմն նպաստավոր են նաև արժեքների քարոզչության առումով: Բայց այդպիսի գեղարվեստական ֆիլմեր այնքան էլ շատ չեն, համեմատաբար թվաքանակով ավելի են բարձր արժեքների մասին պատմող վավերագրական ֆիլմերը: Ամեն դեպքում պետք է զգույշ լինել չափազանցությունից գերծ մնալու համար:

Պետք է նաև նկատի ունենալ, որ նման զվարճանքներին ժամեր նվիրելով՝ սպառում ենք մեր կյանքի թանկ ժամանակը: Ուրեմն, հարկ է չափավոր լինել այս հարցում: Փիլիսոփաներից մեկն ասել է. «Մենք դառնապես գանգատվում ենք, թե մեր ժամանակը կարճ է: Միշտ դժգոհ ենք, թե մեր օրերը սակավաթիվ են, բայց գործում ենք այնպես, իբր թե դրանք վերջ չունեն»: Սուրբ Եփրեմ Ասորին ասում է, թե մարդիկ չեն հիշում, որ ժամանակը կարճ է՝ չհոգալով Աստծո հետ հաշտվելու մասին: Իսկ Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է. «Ոչինչ ավելի պատվական չէ, քան ժամանակը. դրա համար էլ պետք է այս կյանքի ժամանակն ի բարին օգտագործել, որովհետև այս ժամանակը ոչ ոք չի կարող վերստին ստանալ»:

**4. Էլեկտրոնային մեդիայի միջոցով հնարավոր է ստեղծել և ձեռք բերել կարևոր հարաբերություններ՝ գործնական կամ անձնական: Այսօր նման համացանցային կապերից պարզապես հնարավոր չէ խուսափել: Ինչպե՞ս վարվել:**

Այսօր մեծ տարածում ունեն սոցիալական ցանցերը, որոնք հնարավորություն են տալիս նոր հարաբերությունների հաստատման: Բայց հանուն ինչի՞ են հաստատվում այդ հարաբերությունները, շատ դեպքերում՝ հանուն շատախոսության, գրույցների, զվարճալի ժամանակ անցկացնելու, բանբասանքների: Ավելի շատ սա է գերակշռում սոցիալական ցանցերի բովանդակության մեջ: Ճիշտ է, նման կայքերում ներկա են նաև հոգևորականներ, ովքեր ունեն շատ հետևորդներ և այդ ոլորտում են քարոզչություն իրականացնում: Բայց դա իր մեջ վտանգ ունի, քանզի այդպիսով մարդկային հարաբերությունները և հաղորդակցությունը իջեցվում են ցածր աստիճանի և վերածվում պարզապես նամակագրության: Գրավոր խոսքի բացասական գնահատականն այս դեպքում, իհարկե, գրական ստեղծագործությունների կամ աշխատությունների մասին չէ: Պողոս առաքյալը, մյուս առաքյալները նամակներ էին գրում, երբ հարկավոր էր, և այդպես է, որ կազմվել է Նոր Կտակարանի մեծ մասը: Բայց նրանք կենտրոնանում էին ավելի շատ կենդանի քարոզչության, մարդկանց հանդիպելու, նրանց հետ հաղորդակցություն հաստատելու վրա:

Ճիշտ է այն դիտարկումը, որ Հայաստանից մարդիկ արտագաղթում են ոչ միայն արտերկիր, այլև արտագաղթում են սոցիալական ցանցեր ու այնտեղից էլ դուրս չեն գալիս: Սոցիալական ցանցերի օգտագործումն արդարացված է մեծ տարածություններ ունեցող երկրներում, տարբեր երկրների բնակիչների հետ հարաբերություններում, բայց Հայաստանում, որտեղ տարածությունը փոքր է, մարդիկ անում են նույնը, ինչ տարբեր երկրներում ապրողները միմյանց հետ շփումներում: Պետք է հաճախ դուրս գալ այդ ցանցերից, նաև՝ սեփական տանը պարփակվելուց, հանդիպել միմյանց անձնապես, հաստատել միջանձնային կենդանի հարաբե-

րություններ, հավաքվել միասին մեկ տեղում, լինել կենդանի շփման իրագործողները: Քարոզչության առումով առավել նպատակահարմար է այդ քարոզչությունն իրականացնել եկեղեցիներում, իսկ սոցիալական ցանցերը նպատակահարմար են այդ ժամադրությունները կազմակերպելու համար:

Քրիստոս ասաց. «Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մեջ» (Մատթ. 18.20), և ոչ թե ասաց՝ ուր երկու կամ երեք հոգի իրար նամակ գրեն: Այսինքն՝ մարդկային համախմբման մասին է Քրիստոսի խոսքը, և այդ համախմբումով է, որ կայանում է եկեղեցին՝ հավատացյալ ժողովրդի հավաքականությունը: Բացի դրանից, մարդիկ ցանցային շփումներում հաճախ թաքցնում են իրենց ինքնությունը, հոգեբանական խնդիրների առջև կանգնում, վախենում իրենք իրենց բացահայտելուց իրենց նամակային զրուցակցի առջև: Ինչպես նաև շատերը հոխորտում են համարձակ քննադատություններով պետության, եկեղեցու և եկեղեցականների դեմ, բայց սոցիալական ցանցերից դուրս գալով իրականություն՝ անմիջապես կորցնում են բանբասելու, փնտվելու ու վիրավորելու իրենց համարձակությունը և քաջություն չեն գտնում անգամ բարձրաձայնելու այն վիրավորական խոսքերը, որոնցով լցնում են համացանցը: Ուրեմն, համացանցից, սոցիալական ցանցերից կախվածությունը ևս հոգեբանական շեղումների է հանգեցնում: Բացասական են ցանցային մեծածավալ և ժամանակատար շփումները, մարդիկ պետք է դուրս գան այդ վիրտուալ շրջանից և վերադառնան դեպի իրականություն՝ մարդկային շփման ու հարաբերությունների վերահաստատման համար:

**5. Երբ օգտվում ես համակարգչից, բջջային հեռախոսից կամ մեկ այլ սարքից, հնարավոր չէ վերահսկել տրվող տեղեկատվության բովանդակությունը: Մեր օրերում անգամ երեխաները բջջային հեռախոսներ ունեն կամ տարված են համակարգչային, համացանցային՝ ինտերնետային խաղերով: Կա՞ այլընտրանք և համացանցին փոխարինող բովանդակալից այլ գործունեություն:**

Երեխաներին չափից շուտ հեռախոսներ տալը, եթե խիստ անհրաժեշտությունը չկա, խրախուսելի չէ: Երեխայի համար դա հաճախ ոչ թե շփման միջոց է, այլ մեծերին նմանվելու, ինքնահաստատման փորձ: Վատ է, երբ երեխայի ինքնահաստատումը հիմնվում է ոչ թե հավատքի, հոգևոր արժեքների հիմքի, այլ բջջային հեռախոսի, համակարգչի կամ նյութական հիմքի վրա: Բժիշկները զգուշացնում են, որ երեխաների համակարգչային խաղերը չպետք է գերազանցեն կես ժամը, համակարգչի առջև նստողները տասը րոպեն մեկ պետք է մեկ-երկու րոպեով հանգստություն տան աչքերին: Ծնողները պետք է ուշադիր լինեն՝ թույլ չտալով երեխաներին ժամանակի մեծ մասը սխալ կերպով անցկացնելու:

Համակարգիչը երեխային հիպնոսացնում է: Փորձիր նրան պոկել իր սիրած խաղից, և երեխան հոգեկան ցնցումների մեջ կընկնի, կսկսի գոռոռալ ու լաց լինել, ոտքերը գետնին խփել, իր գվարձալիքը պահանջել: Այն ծնողները, ովքեր թույլ են տալիս իրենց երեխաներին ժամեր ու ժամեր անցկացնել համակարգչի առջև, ճիշտ չեն կատարում իրենց դաստիարակությունը, թերանում են ծնողական պարտականությունների մեջ: Երեխան լուռ է, իրենց գլուխն էլ ազատ է երեխաների աղմուկից, դրանով բավարարվում են: Բայց ընդհանուր առմամբ իրենց երեխաներին անուշադրության մատնող ծնողներն արժանի չեն ծնող կոչվելու բարձրագույն պատվին: Պետք է երեխաներին քաջալերել միմյանց հետ շփվելու, բնության մեջ լինելու, դրսում խաղալու, թեկուզ և ավազով, հողով փոշոտվելու, այլապես վիրտուալ իրականությունը կկլանի նաև երեխային, և նա կկորցնի կապն այս աշխարհի իրականության հետ: Հոր Երանելին շեշտում է, որ Տերն է զավակներ տալիս (Հոր 1.22): Արդ, մենք պատասխանատու ենք աստվածային այդ մեծագույն պարզևի համար, և հարկ է երեխաներին չզայրացնելով և չհուսահատեցնելով, ըստ աստվածային պատվիրանի (Կող. 3.21), բացատրելով հեռու պահել վատ սովորություններից:

**6. Բրիտանացի մի հեռուստահաղորդավար ժամանակին ասել է. «Հեռուստացույցը մի հայտնագործություն է, որի շնորհիվ ձեր իսկ սենյակում ձեզ գվարձացնում են**

**մարդիկ, որոնց դուք երբեք չէիք հրավիրի ձեր տուն»:** Այսօր համակարգիչները, բջջային հեռախոսները, հեռուստացույցն ու ինտերնետը սովորական ու հասանելի բաներ են: Ինչպե՞ս թույլ չտալ, որ էլեկտրոնային մեդիան խլի այն ժամանակը, որ կարող է տրամադրվել ընտանիքին, ընկերներին, աշխատանքին կամ պարզապես բարի գործերին:

Խորհուրդ տալն այստեղ ավելի հեշտ է, քան այն իրագործելը: Մեծ մասը, կարծում են, ունի այս խնդիրը, զգում է, որ էլեկտրոնային բաներն ավելի շատ են խլում իր ժամանակը՝ իրեն հեռացնելով ընտանիքից ու իրական կյանքից: Սա վերաբերում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց, քանի որ կանայք էլ տարվում են իրենց սերիալներով կամ կարող են ժամերով կորչել համակարգչային լաբիրինթոսներում, սոցիալական կայքերում:

Ասում են, որ մարդկությունը շատ է սովոր ստրուկներ ունենալու: Երբ ստրկատիրական հասարակարգի ժամանակը վերջացավ, մարդն իր փոխարեն աշխատողներ ունենալու, ստրուկներ ունենալու ցանկությունը չկորցրեց: Ստեղծվեցին նոր ստրուկներ՝ մեքենաներ, սարքեր, որոնք եկան փոխարինելու մարդկային ստրուկներին: Այսօր լվացքն անում են ոչ թե ստրկուհիները կամ աղախիները, այլ լվացքի մեքենաները, կրակը վառ է պահում գազօջախը, մարդուն տեղափոխում են ոչ թե ստրուկների ուսերին դրված պատգարակները, այլ մեքենաները, զվարճացնում են ոչ թե տարբեր երկրներից ստրկության բերված գլադիատորները կամ ծաղրածուները, այլ հեռուստացույցն ու համակարգիչը: Եվ մեր օրերում տեսնում ենք, որ հատկապես այս վերջինները, լինելով մարդուն ծառայության համար, դառնում են մարդու տերերը, իսկ մարդիկ՝ դրանց գերիները: Կարծես թե արդի ազատության հասկացության պայմաններում ձևավորվում է շատերին անտեսանելի ստրկական մի հասարակարգ՝ տեխնոլոգիական առարկաների տիրապետության ներքո: Եվ նման պայմաններում այս իրողությունը տեսնելու կարողություն ու մեծ ձգտում է պետք այդ ստրկությունից ազատվելու, այդ կախվածությունից բուժվելու համար:

## ԷԿՈԼՈԳԻԱ. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ

**1. Մարդկությունն իր գոյության ողջ ընթացքում օգտվում է բնության բարիքներից՝ բուսական, կենդանական աշխարհից, իր կենսական կարիքներն ապահովելու համար: Սակայն բնության օգտագործումը հանգեցնում է նաև բնական ռեսուրսների սպառման, բնության աղտոտման ու վնասման: Ինչպիսի՞ն է քրիստոնեական տեսակետը բնության հանդեպ վերաբերմունքի մասին:**

Բնությանն ու դրան առնչվող խնդիրների վերաբերյալ գիտությունն անվանում են էկոլոգիա: Էկոլոգիան կենդանի օրգանիզմների, նրանց համակեցության և նրանց շրջապատող միջավայրի միջև փոխհարաբերությունն ուսումնասիրող գիտություն է: «Էկոլոգիա» բառը ծագում է հունարեն «οἶκος»՝ կացարան, բնակավայր նշանակող բառից և «λόγος» բառից, որը թարգմանվում է խոսք, նաև՝ կապակցությունների մեջ գիտության իմաստն ունի: Այս եզրն սկսել է օգտագործվել 19-րդ դարի կեսերից, սակայն հետագայում դրա իմաստն ընդլայնվել է և այսօր ներառում է նաև բնապահպանության, շրջակա միջավայրի պահպանության հարցերը:

Բնապահպանության խնդիրների լուծման համար կարևոր է բնության մասին քրիստոնեական տեսակետի իմացությունը: Աստված առաջին մարդկանց իշխանություն տվեց բուսական և կենդանական աշխարհի վրա. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցե՛ք ծովի ձկների, երկրների թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա», - ասվում է առաջին մարդկանց (Ծննդ. 1.28): Այս նույն իշխանությունը տրվում է նաև ջրհեղեղից հետո Նոյին և նրա ընտանիքին (Ծննդ. 9.1-3): Քրիստոնեական տեսակետի համաձայն՝ «իշխանություն» հասկացությունը բացատրվում է կարող մեկի կողմից հոգատարության, հոգածության ցուցաբերման նշանակությամբ: Այդպիսին է «իշխանություն» հասկացությունը բացատրվում քրիստոնեության շրջանակներում գտնվող թե՛ տիրոջ ու ծառայի, թե՛ ամուսնու և կնոջ և թե՛ Քրիստոսի ու Եկեղեցու միջև հարաբերություններում (Մատթ. 20.28, Մարկ. 9.34, 10.45, Եփ. 5.22-25, 32): Յետևաբար, բնության հանդեպ իշխանութ-

յունը, որը Սուրբ Գրքի հավաստմամբ մարդուն տրվեց Աստծո կողմից, նույնպես պետք է հասկանալ ոչ թե տիրելու, տիրապետելու, վնասելու, այլ հոգածության ու խնամքի դրսևորման իմաստով: Բնության բարիքներից պետք է օգտվել և ոչ թե բնությունն անխնա օգտագործել, և կամ՝ բնության պարզևած բարիքները խնայողությամբ ու հոգատարությամբ օգտագործել և ոչ թե բնությունը շահագործել:

Քրիստոնեական վարդապետության համաձայն՝ Ծննդոց գրքի վերոնշյալ խոսքերը մեկնաբանվում և ընկալվում են որպես արարչագործության վրա մարդու՝ իբրև տնտես ու խնամակալ հաստատումը: Քրիստոսի պատմած անիրավ տնտեսի մասին առակը (Ղուկ. 16.1-8), երբ տերն իր կողմից տնտես կարգված մարդուց հաշիվ է պահանջում, կարող ենք հասկանալ ոչ միայն մարդու անձնական, աստվածաշնորհ կյանքի տնօրինմանը վերաբերող հաշվետվության առնչությամբ, այլև ընդհանուր իմաստով՝ աշխարհի տնտես հաստատված մարդուց հաշվետվության պահանջի նկատառումով, քանզի Աստված մարդուց պահանջում է նաև խնամք ու հոգատարություն ցուցաբերել բնության հանդեպ:

**2. Բնության շահագործումն իրապես հանգեցնում է բնության օրինաչափ վիճակի խաթարման: Որո՞նք են հիմնական վտանգները և ինչպե՞ս պայքարել դրանց դեմ:**

Մարդու կողմից բնության անխնա շահագործման հետևանքներն իրենց զգացնել են տալիս հենց մարդկության կյանքում բացասական ազդեցություններով և իրողություններով: Այսօր բնության հետ կապված մտահոգիչ խնդիրներից են գլոբալ տաքացումը, կլիմայական օրինաչափությունների խաթարումը, դրա հետևանքով բնական աղետների ավելացումը, երկրազնդի հյուսիսային ու հարավային բևեռների սառույցների հնարավոր մեծամասշտաբ հալչելը, ինչն անցանկալի և անդառնալի լուրջ հետևանքների կարող է հանգեցնել ընդհանրապես ողջ մոլորակի վիճակը, երկրի աղտոտվածությունը, որը մեծապես վտանգում է ոչ միայն մարդկային, այլև ցամաքային, ջրային կենդանիների, թռչունների կյանքը:

Մարդկային գործոնով բնությանը վնասներ են հասցվում ոչ միայն երկրի, հողի վրա, ջրային տարածքներում՝ գետերում, լճերում, ծովերում և օվկիանոսներում, այլև օդային տարածության մեջ: Գիտության զարգացմամբ նոր տեխնոլոգիաների օգտագործումն ապահովում է մարդու կամ մարդու կողմից ստեղծված սարքերի հասանելիությունն օդային տարածքներ: Դա պատճառ է դառնում ավտոմեքենաների, գործարանների արտանետումների պատճառով օդի աղտոտումից զատ նաև՝ տիեզերքի ուսումնասիրման նպատակով անցնելի անցքով տեսանելի երկնքից ավելի վեր բարձրացող սարքավորումների կողմից քայքայման օգոնային շերտի, որը պաշտպանում է երկիրն արեգակի վնասակար, ուլտրամանուշակագույն ճառագայթներից: Օգոնային շերտի քայքայումը վտանգավոր է ողջ բնության, ներառյալ մարդկային կյանքի համար. այն հանգեցնում է բուսականության աճի նվազման, օրգանիզմի գենետիկ ձևափոխումների, մաշկի քաղցկեղի, վարակիչ հիվանդությունների, աչքի ոսպնյակի մթազրնման, իմունիտետի թուլացման և այլն:

Մարդու կողմից նաև ոչնչացվել են շատ կենդանատեսակներ, շատեր գտնվում են ոչնչացման եզրին, ինչը լուրջ վնաս է հասցնում էկոհամակարգին՝ կենդանի օրգանիզմների, նրանց բնակության միջավայրի, միմյանց միջև կապի և նյութի փոխանակության կենսաբանական ընդհանրությամբ: Այս ամենը, իհարկե, չի կարող բացասաբար չանդրադառնալ մարդկության կյանքի վրա: Հարկ է նշել, որ կենդանական աշխարհի սպառումն ու ոչնչացումը կապված է եղել և է ոչ միայն մարդու կենսական պահանջների, անհրաժեշտ կարիքների բավարարման, այլև մարդկային հաճույքի կամ քմահաճույքի հետ, ինչպիսիք են զվարճանքի համար կատարվող որսորդությունը, կենդանիների մորթիների կամ գլուխների, կենդանիներից պատրաստվող խրտվիլակների անհարկի գործածումը, զարդեղենների պատրաստման համար փղոսկրի օգտագործումը և այլն:

Այս տխուր իրողության դեմ պայքարելու, բնության շահագործումից արդեն առաջ եկած անցանկալի հետևանքները վերացնելու համար գործում են բնապահպանական կազմակերպություններ, որոնց խնամատար, բացատրողական, քա-

րոզչական գործունեությունը միանգամայն խրախուսելի է Եկեղեցու կողմից: Կենդանական աշխարհի չարաշահման դեմ ներկայումս հանդես են գալիս նաև «կենդանիների իրավունքների» պաշտպանության կազմակերպություններ, որոնք, սակայն, երբեմն որոշ ծայրահեղ դիրքորոշումներ են արտահայտում: Իսկ օզոնային շերտի քայքայման վերաբերյալ լուրջ մտահոգությամբ դեռևս 1994 թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան սեպտեմբերի 16-ը հռչակել է օզոնային շերտի պահպանության միջազգային օր: Օզոնային շերտի պահպանման մասին կազմվել են տարբեր միջազգային համաձայնագրեր, որոնց անդամակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը:

**3. Նկատի ունենալով արդի աշխարհում բնության վիճակը, բնության, շրջակա միջավայրի հանդեպ հանդիպող անընդունելի վերաբերմունքն ու վարմունքը՝ Եկեղեցին ինքն ուղղակիորեն ի՞նչ է անում էկոլոգիական խնդիրների լուծման ուղղությամբ:**

Մարդու հոգևոր վիճակը, մտածելակերպն արտահայտվում են նրա վարվեցողության արտաքին դրսևորումներով: Աստծո կամքին հակառակ ընթացքները՝ մեղքը, մեղավոր արարքներն են, որ մարդուն ու բնությանը վնասներ են պատճառում: Հետևաբար, անձին, ժողովրդին, աշխարհին հասցըվող հարվածները չարի ու չարիքի հարձակում են, մարդու ձեռամբ կատարված ու կատարվող չարագործություններ: Եկեղեցին ավելի խորն է տեսնում խնդիրը՝ այն որպես մեղք արմատավորված համարելով հոգևոր ոլորտում, որտեղից մեղքը պետք է մաքրել, մեղավոր, անկյալ վիճակն ու մտածելակերպը հաղթահարել ու մարդուն սրբության առաջնորդել: Քրիստոս հաղթեց մահվանն ու մեղքին, մարդուն զորություն տվեց գերության մեջ չմնալու մեղքի ու մահվան ճիրաններում և Իր շնորհները բաշխեց՝ չարին հաղթելու, բարին հաստատելու, սրբության հասնելու համար:

Մարդու փրկության համար իրականացվող Եկեղեցու առաքելությունը զորացնում է հոգևոր կյանքն ու գիտակցությունը, բերում Աստծո պատվիրանների իրագործման ու աստ-

վածային կամքի համաձայն ապրելու կարևորության ընկալումը: Ճշմարիտ աստվածամաչողության ու աշխարհընկալման հաստատումը, այլոց կամ շրջակա միջավայրը վնասող շահամոլ և նյութապաշտ նկրտումներից զգուշացումները, աստվածաշնորհ կյանքի հանդեպ խորին հարգանքն ու Աստծո պատկերով ստեղծված մարդուն որպես մեծագույն արժեք ընկալելը էկոլոգիական խնդիրների հիմնական լուծումներից են:

#### **4. Կյանքի հանդեպ հարգանքի անհրաժեշտությունն ի՞նչ անմիջական առնչություն ունի բնության հետ կապված խնդիրների լուծման գործում:**

«Կյանք» ասելով՝ մենք միայն մարդկային կյանքը չենք հասկանում, այլև բույսերի, կենդանիների: Ընդհանրապես կյանք երևույթի հանդեպ գիտակցություն ունեցող, բանականությամբ օժտված մարդու կողմից մեծագույն հարգանք և խնամք պետք է դրսևորվի: Բույսերը, կենդանիները նույնպես ապրում են, ցանկանում են վայելել արևի լույսն ու ջերմությունը, օդը, կենդանիները (ծագերն իրենց ծնողների և ծնողներն իրենց ձագերի) անասուններին հատուկ սերը, հոգատարությունն ու քնքշությունը:

Մարդու և կենդանիների տարբերակումը կատարվում է նաև «ասուն» և «անասուն» բառերով, որոնք նշանակում են՝ ասելու, խոսելու ունակությամբ օժտված բանական և այդ ունակությունը չունեցող, անբանական, ոչ բանական: Կենդանիների ոչ բանական լինելը, սակայն, չի բացառում նրանց հատուկ զգացականությունը: Սա համաձայն է քրիստոնեական ուսուցմանը հոգու մասին, ըստ որի՝ հոգին լինում է տնկական կամ բուսական, զգացական և բանական: Մարդու հոգու մեջ առկա են այս երեք զորությունները, որոնցից բանականը բարձրագույնն է, և այդ հատկությունն ունեցող հոգին օժտված է անմահությամբ: Մինչդեռ բույսերի մեջ առկա է միայն տնկականը՝ աճելու, շնչելու զորությամբ, կենդանիների մեջ՝ տնկականն ու զգացականը՝ նաև զգալու, վերաբերմունք արտահայտելու, տխրելու և ուրախանալու, անգամ արտասվելու ունակությամբ: Տնկական և զգացական հոգին

չունի աննահուօթյան հատկությունը, այն սոսկ կենդանութիւն, կենսունակութիւն հաղորդելու ուժն ունի: Սակայն բուսերի ու կենդանիների ապրելու, կյանք ունենալու գիտակցունով պետք է հոգատարութեամբ ու փայփայանքով վերաբերվել այդ կյանքին, ընդհանրապես Աստծո կողմից շնորհված կյանք երևոյթին և կենսական խիստ անհրաժեշտ կարիքների համար խնամքով ու խնայողութեամբ օգտվել բուսական ու կենդանական աշխարհից:

**5. Մարդն իր սննդակարգում օգտագործում է կենդանիներին ու բույսերին: Բույսերն ու կենդանիները, օրինակի համար, ծառերի փայտը կամ կենդանիների կաշին գործածվում են կենցաղային իրերի պատրաստման համար: Աստվածաշնչում նշվում է, որ Աստված Ինքը մարդուն թույլատրեց այդպես օգտվել բնութիւնից: Սա նշանակում է արդյոք, որ մարդն Աստծո կամքին հակառակ ոչինչ չի անում՝ բնութիւնն իր շահերի համար օգտագործելով:**

Մարդն այսօր բնութիւնն օգտագործում է հաճախ անխնայ կերպով՝ այն նկատելով իբրև մի պահեստ, որտեղ օգտակար նյութեր ու նթերքներ կան իր կյանքի համար: Բնութիւնից օգտվելիս այն իբրև պահեստ դիտարկելը հակառակ է ոչ միայն քրիստոնէական վարդապետութեանը, այլև ողջ Աստվածաշնչի դիրքորոշմանը: Եհիշտ է, Հին Կտակարանում տրվեց բույսերն իբրև կերակուր գործածելու, ապա՝ ջրհեղեղից հետո նաև կենդանիներին որպես ուտելիք, ինչպես նաև զոհաբերութիւնների համար օգտագործելու պատվերը: Սակայն Աստված մարգարեի միջոցով ասաց. «Ողորմութիւն են կամենում և ոչ թե՛ զոհ» (Օսեե 6.6): Սա կրկնեց նաև Քրիստոս Նոր Կտակարանում (Մատթ. 9.13, 12.7): Թեև Աստվածաշնչում կան բույսերն ու կենդանիներին մարդու համար օգտագործելու թույլտվութիւնները (Ծննդ. 1.28, 2.16, 9.1-3), բայց Սուրբ Գրքում արձանագրված են նաև Աստծո կողմից տրված հրահանգներ՝ բնութեան և հատկապես զգացականութեամբ օժտված կենդանիների հանդէպ խղճահարութեամբ ու խնամքով վարվելու համար (Ելք 20.10, Ղևտ. 25.1-7, 23-24, Բ Օր. 5.14, 22.6-7,10, Առ. 12.10, Հովհ. 10.2-4): Ուրեմն,

բնությունը մարդու համար նյութ և ուտելիք հայթայթելու պահեստ չէ, այլ ենթակա է խնամակալության, սիրո և հոգածության:

Կաթոլիկ Եկեղեցին սրբեր ունի, ովքեր բնության հետ խորը, ներքին կապ են պահպանել, խոսել, անգամ քարոզել են կենդանիներին, ինչպիսիք են Ֆիլիպ Ներին, Ֆրանցիսկո Ասիզացին, ում անունը նախընտրել և կրում է ներկայիս Յոզմի Պապը: Այս սրբերի օրինակով ևս Կաթոլիկ Եկեղեցին իր հավատացյալներին ուսուցանում է սեր և հարգանք դրսևորել բնության հանդեպ: Բնությունը սոսկ որպես պահեստ նկատելու և միայն սպառողականության դիրքորոշմամբ վերցնելու, օգտագործելու, սպառելու նպատակով կատարվող հսկայական և համընդհանուր ընթացքները տանում են ոչ միայն բնական աշխարհի խաթարման, այլև շատ բնական ռեսուրսների սպառումով հետագա սերունդներին զրկում են բնության պաշարներից օգտվելու իրավունքից և հնարավորությունից:

**6. Հասկանալի է, որ մարդու կողմից պետք է հարգանք դրսևորվի նաև բնության մեջ առկա կյանքի հանդեպ: Սակայն մարդկությունը լայնորեն օգտագործում է նաև հողը, երկրի ընդերքը, որն ինքը կյանք չի պարունակում: Այս դեպքում ինչպիսի՞ն պիտի լինի վերաբերմունքը:**

Հողը շնչավոր և զգայական չէ այն իմաստով, ինչ բույսերն ու կենդանիները: Քարը, քարածուխը, երկաթը և այլ մետաղներ ու հանածոներ ընդհանրապես անկենդան ու անշունչ են: Սակայն հողի հորատումներով օգտակար հանածոների ձեռքբերումը բնության ծայրահեղ շահագործումով ընդունելի չէ: Թեկուզ և հանածոներն անկենդան են, բայց բնության աղճատումով դրանց ձեռքբերումը վնասում է շրջակա բուսական ու կենդանական, ինչպես և մարդկային կյանքը:

Հողի ու ընդերքի օգտագործումն առանց բնությանը կործանարար վնաս հասցնելու գովելի է և օգտակար է մարդկության բարձր գոյության ապահովման համար: Բայց հաճախ բնության մեջ մարդու բացասական գործողությունների հետևանքներն անդառնալի են: Դրանք ազդում են ոչ միայն

անշունչ, այլև շնչավոր բնության վրա: Հանածոների մշակման պրոցեսները, որոնք կատարվում են քիմիական տարբեր նյութերով, հաճախ թունավորում են շրջապատը, տարածքում ապրող ոչ միայն բույսերի ու կենդանիների, այլև մարդկանց կյանքը, քայքայում բնակիչների առողջությունը: Ուրեմն, ոչ միայն բուսական ու կենդանական աշխարհի գործածումը, այլև հողի, երկրի ընդերքի օգտագործումը պետք է կատարվի բնության հանդեպ խնամքի և մարդու՝ մեծագույն արժեք լինելու գիտակցությամբ:

**7. Մարդու արժեք լինելու ընկալումն ի՞նչ կապ ունի բնապահպանական խնդիրների կամ դրանց լուծման հետ:**

«Մարդն իբրև արժեք» գաղափարի շուրջ տարբեր մտորումներ կան: Ըստ մի կարծիքի՝ արժեքն ինքնին չի արտահայտվում, այլ մարդու նկատմամբ հարաբերության մեջ է դրսևորվում, որով մարդը, ինքն իր հանդեպ իրեն գնահատող լինելով, ինքնահռչակվում է որպես արժեք: Եվ մարդու հայտարարումը որպես գերագույն արժեք՝ բերում է ավելի ցածր կամ ցածրագույն արժեքների առկայության հաստատումը: Աշխարհիկ, հումանիստական տեսակետի համաձայն՝ արժեք են մարդն ու իր իրավունքները: Նմանատիպ մոտեցմամբ վերածննդի ժամանակաշրջանում մարդն արժեք էր համարվում մարդակենտրոնությամբ, մարդկային արժանիքները, տաղանդը սոսկ մարդուն վերագրելու, աստվածային շնորհի ներգործությունը կարևոր չհամարելու, իր սեփական կյանքի ու ճակատագրի արարողը լինելու հաստատումներով: Հավանաբար վերոնշյալ դիրքորոշումն է պատճառը, որ այսօր աշխարհում մարդու իրավունքների վկայակոչումով անտեսվում են քրիստոնեական-բարոյական արժեքները, քանզի նման դիրքորոշմանը հարողներն ընդունելի են նկատում մարդու կողմից իր կարիքների բավարարման իրավունքը, եթե նույնիսկ դրանք հակասում են քրիստոնեության բարոյականության ընկալումներին: Հանուն այդ արժեք հանդիսացող մարդու և իր իրավունքների՝ նոր ժամանակներում կարող են անգամ այլ «քրիստոնեական» մեկնաբանություն տալ բա-

րոյականութեանը, ինչն ակնհայտ է արևմտյան երկրներում և այդտեղ հաստատված եկեղեցիների գործունեության մեջ: Մեկ այլ կարծիքով՝ մարդն արժեք է, քանզի գերագույն արժեք հանդիսացող մարդկային կյանքն է կրում իր մեջ: Այստեղ նույնանում են մարդու և կյանքի արժեք լինելու հաստատումները, ինչի եզրահանգումն այն է, որ մարդկային կյանքն է արժեքը: Սա համահունչ է քրիստոնեության մեջ արտահայտված տեսակետին մարդկային կյանքի գերագույն արժեք լինելու վերաբերյալ: Սակայն մարդկային կյանքն ինքնին չի գոյավորվում, այլ կայանում է մարդու վրա, մարդու միջոցով: Այս իմաստով ևս կարող ենք ասել, որ մարդն արժեք է:

Կաթոլիկ եկեղեցին հայտարարում է, որ մարդկային կյանքը սուրբ է, և մարդկային անձի արժանապատվությունը հասարակության համար բարոյական տեսլականի հիմքն է: Կաթոլիկ եկեղեցու պաշտոնական «Կատեխիզիսուն»՝ «Մարդ» ենթավերնագրի ներքո, 6-րդ պարբերության 363-րդ կետում արձանագրված է հետևյալը: Սուրբ Գրքում «հոգի» եզրը հաճախ վերաբերում է մարդկային կյանքին կամ ողջ մարդկային անձին: Բայց «հոգին» նաև վերաբերում է մարդու ներքին կողմին, ինչը նրանում ամենամեծ արժեքն է, որով նա հիմնականում արտահայտում է իր աստվածային պատկերը. «հոգին» նշանակում է մարդու հոգևոր սկիզբը: Այստեղ մեջբերվում է միայն Կաթոլիկ եկեղեցու պաշտոնական տեսակետը, քանզի Օրթոդոքս եկեղեցիները, ինչպես և Հայ Առաքելական եկեղեցին Կատեխիզիսներ՝ քրիստոնեական հավատքի պաշտոնապես հաստատված ուսուցարաններ չունեն: Սակայն մարդու վերաբերյալ Կաթոլիկ եկեղեցու արտահայտած այս ուսուցումն ընդհանուր քրիստոնեական վարդապետության արտահայտումն է: Ըստ այդմ՝ կարող ենք ասել, որ քրիստոնեական տեսակետով մարդն արժեք է աստվածաշնորհի կյանքով, իր աստվածային պատկերով, նաև հոգևոր լինելու իրողությամբ:

Բնապահպանական խնդիրների և դրանց լուծման հետ մարդու արժեք լինելու ընկալումն առնչվում է հետևյալ կերպ: Բնության վնասումը բերում է մարդու և նրա կյանքի վտանգման: Մարդիկ հաճախ անտեսվում են բնության խոշոր շահա-

գործողների կողմից: Բացի այդ, մարդիկ նաև ստորադասվում են բնության բարիքներից ստացվող օգուտներին: Այսպես, օրինակ, հանքափորները երկրի ընդերքից օգտակար հանածոներ են հանում: Հանքատերերը կան ոչինչ չեն անում, եթե բաժնետերեր են, կան զբաղվում են աշխատանքի կազմակերպմամբ, ինչը, հանքերում աշխատողների գործի դժվարության հետ համեմատած, թեթև, թեև անհրաժեշտ զբաղմունք է: Հանքատերերը հանքերից խոշորագույն շահույթներ են ստանում: Հանքափորներն այդ շահույթի համեմատ տաժանակիր ու քրտնաջան աշխատանքով միայն հասցնում են իրենց և իրենց ընտանիքների կենսական կարիքները հոգալ: Հանքատերերը մեծահարուստներ են, մինչդեռ նրանց իշխանության տակ աշխատող հանքափորները հանապազորյա հացի համար աշխատում են՝ վտանգելով իրենց առողջությունը, անգամ՝ կյանքը:

Այս օրինակի մեջ հարուստ սեփականատերերը կարող են իրենց շահույթներից մշտական շահութաբաժին հատկացնել քրտնաջան աշխատողներին՝ նրանց ու նրանց ընտանիքների կենսամակարդակն ավելի բարձրացնելու համար: Բայց շատերն այդպիսի «շռայլություն» չեն անում: Նրանց հետաքրքրում է առավելաբար ստացվող նյութական շահը, որի համար օգտագործում են ոչ միայն բնությունը, այլև մարդուն ու մարդկային կյանքը: Հանքերի և դրանց մշակման գործարանների շուրջը վնասվում է միջավայրը, ըստ որոշ տվյալների՝ նաև՝ բնակիչների առողջությունը: Այս դեպքում հանում շահի անտեսվում են ոչ միայն աշխատողները, այլև շրջակա բնակիչները: Բնության շահագործումը, որից առաջացած բարիքներն օգտակար են մարդկանց համար, նույնպես կատարվում են առհասարակ մարդկանց անտեսումով, քանզի հաճախ նկատի է առնվում և նպատակ լինում այդ գործողությունից ստացվող նյութական շահը և ոչ թե առաջին հերթին մարդկանց, մարդկությանը, աշխարհին օգուտ բերելու վեհ ու առաքինի ձգտումը:

Այսպիսի իրավիճակներում մարդը կան մարդկային կյանքն արժեքից վերածվում է միջոցի: Մարդը դառնում է գործիք շահույթների ձեռքբերման: Մարդն օգտագործվում է տարբեր նպատակների համար, որոնք ավելի են արժևոր-

վում, քան մարդը, որը դիտարկվում է սոսկ միջոց՝ նախատեսված օգուտներին հասնելու: Այսպիսով, մարդու արժեքը ոչնչացվում է հանուն նյութականի, կենդանի մարդը վերածվում է միջոցի նյութական արժեքների համար, որոնք ավելի են մեծարվում, քանի մարդն ու մարդկային կյանքը: Այս է պատճառը, որ հասարակություններում թշվառությունների, աղքատությունների առկայությունը կասկածի տակ է դնում արդի աշխարհում մարդու կամ մարդկային կյանքի արժեք լինելու ընկալման ներկայությունը: Գործատուների կողմից աշխատանքի, դրա արդյունքի և դրանից ստացված շահույթի գերարժևորումը և աշխատողներին այդ նպատակի համար միջոց նկատումն առանց նրանց հանդեպ հատուկ հոգածության, կենսամակարդակի ու բարօրության առավել բարելավման ջանքերի և այլ հոգատարության դրսևորման, վկայությունն է նյութի նախապատվությանը աստվածային պատկերով ստեղծված մարդու ստորակարգման ու շահագործման: «Սիրեցեք միմյանց» քրիստոնեական սկզբունքը (Հովհ. 13.34-34) և դրա գործադրումը հաստատումն է մարդու և մարդկային կյանքի արժեքի, որի հանդեպ մտահոգությունը նաև բարերար է բնության ու շրջակա միջավայրի համար:

## **ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**1. Աշխարհում շատ քիչ են եղել համընդհանուր խաղաղ ժամանակներ, պատերազմները մոլեգնել են բոլոր դարերում՝ իլելով անհամար մարդկային կյանքեր, բազմաթիվ մարդկանց մատնելով թշվառությունների, վշտերի, նեղությունների: Ինչո՞ւ է պատերազմն առկա Աստծո կողմից ստեղծված աշխարհում:**

Աստված ստեղծեց տիեզերքը, մեր աշխարհն ու մարդուն և ասաց, որ ամեն ինչ բարի է (Ծննդ. 1.31): Սակայն չարը եկավ աշխարհ և մարդուն գայթակղելով՝ ձգեց դեպի իր չար մտադրությունները, և անկում ապրեց արարչագործությունը (Ծննդ. 2.1-13, 17): Մեղքի հակումը հաստատվեց մարդու մեջ և տարածվեց մարդկային սերունդների վրա: Չարի, մեղքի ազդեցությամբ և ազատ կամքով սխալ ճանապարհի ընտրությամբ մարդկանց միջև հակամարտություն և մարդասպա-

նություն կատարվեց: Կայենը սպանեց իր եղբայր Աբելին (Ծննդ. 4.8): Մարդկության մեկ նախահորից առաջացած լինելը, ապա ջրհեղեղից հետո արդար Նոյի սերունդներից մարդկության գոյության շարունակությունը (Ծննդ. 9.19) եղբայրության գաղափարն է հաստատում մարդկանց ու ժողովուրդների միջև: Այս իմաստով պատերազմներն ու հակառակորդների՝ միմյանց սպանելը եղբայրասպանություն է: Բայց մարդասպաններ չեն համարվում նրանք, ովքեր պատերազմի ժամանակ սպանություն են գործել հայրենիքի, մարդկանց, սրբազան արժեքների պաշտպանության նպատակով:

Պատերազմը աղետ է և չարիք: Դա չարի՝ սատանայի դրդմամբ մեղսագործության հետևանք է, այն չարի, որի մասին Փրկիչն ասում է. «Նա ի սկզբանե մարդասպան էր» (Յովհ. 8.44): Քրիստոս խաչի վրա Իր մահվամբ և փառավոր Չարությամբ պարտության մատնեց չարին, շնորհները տվեց մեղքին հաղթելու: Սակայն Աստծո կամքին հակառակ ընթացողները սատանայի ազդեցության տակ են այս աշխարհում: Նրանց վրա իշխում է չարը: Դրա համար էլ Յովհաննես Ավետարանիչը սատանային կոչում է այս աշխարհի իշխան (Յովհ. 12.31, 16.11) և իր թղթում ասում է. «Ամբողջ աշխարհը չարի մեջ է» (Ա Յովհ. 5.19): Քրիստոս որոմների մասին առակով և դրա մեկնությամբ շեշտում է այս իրողությունը. «Այն, որ սերմանում է բարի սերմը, մարդու Որդին է, իսկ արտը այս աշխարհն է. բարի սերմը նրանք են, որ արքայության որդիներն են, իսկ որոմը չարի որդիներն են. և թշնամին, որ այն ցանեց, սատանան է» (Մատթ. 13.36-39):

**2. Եթե մեղսագործությունների և հատկապես պատերազմների պատճառը նաև ազատ կամքն է, որով կատարվում է չարին գործակից լինելու ընտրությունը, ինչո՞ւ Աստված չի խափանում ազատ կամքը և թույլ է տալիս մանավանդ պատերազմների և դրանց բերած թշվառությունների պատահումը:**

Ազատ կամքով է նաև կայանում մարդու աստվածամանությունը: Ի սկզբանե մարդն այդպես է ստեղծված՝ ըստ Աստծո պատկերի և նմանության (Ծննդ. 1.26-27): Ազատ կամքով է մարդն ընկալում բարիքը: Պարտադրանքը կամ

անգիտակից վիճակն ի գորու չէ արժևորելու շնորհված պարզվաներն ու բարերարությունները: Ազատ ընտրությամբ է մարդն արժանի լինում նաև հավիտենական կյանքի: Ուրեմն, ազատ կամքի վերացումը կնշանակեր անհմաստ դարձնել աստվածաշնորհ բարիքները, մարդուն վերածել ինչ-որ ծրագրով աշխատող անկամ մեքենայի: Չարիք գործողների կամքը ևս Աստված չի խափանում, որովհետև նրանցից նաև զղջման ու ապաշխարության ճանապարհի միջոցով սրբեր են ելնում, ինչպիսի օրինակներ որ կան Սուրբ Գրքում և վարքագրություններում:

Աստված չի ցանկանում չարիք, պատերազմներ: Սակայն դրանց պատահելը թույլ է տալիս, որովհետև անգամ մանատիպ իրողություններից բարիք է վեր հանում: Հավատքի համար նահատակություններով սրբանում են մարդիկ, նեղությունների ժամանակ զրկանքներ ու չարչարանքներ կրելով՝ մաքրվում են գործած մեղքերից, ավելանում են հավիտենության մեջ փառքն ու պսակը: Պատերազմները նաև խրատ են որոշ ժողովուրդներին: Այս կարծիքն է արտահայտում Սուրբ Բարսեղ Կեսարացին՝ ասելով. «Աստված պատերազմներով պատիժներ է ուղարկում պատժի արժանիներին»: Բարսեղ Կեսարացին Սուրբ Գրքից և պատմությունից օրինակներ է բերում Սողոմոնի ու Գոմորի կործանումը (Ծննդ. 19.23-25) և Քրիստոսի խաչելությունից հետո Երուսաղեմի կործանումն ու հրեական տաճարի ամայացումը: Սուրբ Գրքի հորդորն է ազատ կամքը ճիշտ օգտագործել, չարիքների պատճառ չդառնալ: Քրիստոս ասում է. «Լավ ծառը չի կարող վատ պտուղ տալ, ոչ էլ վատ ծառը՝ լավ պտուղ տալ» (Մատթ. 7.18), «սրտից է, որ ելնում են չար խորհուրդներ, սպանություններ...» (Մատթ. 15.19), «բարի մարդը իր սրտի բարի գանձերից հանում է բարի բաներ, իսկ չար մարդը իր սրտի չար գանձերից հանում է չար բաներ» (Մատթ. 12.35):

**3. Հին Կտակարանում Աստծո կողմից տրված տասը պատվիրաններից վեցերորդն ասում է՝ մի՛ սպանիր (Ելք 20.13): Պատերազմների ժամանակ անգամ պաշտպանության համար իրականացվող գործողություններում հնարավոր չէ այս պատվիրանը չխախտել: Ստացվում է,**

**որ նույնիսկ հարձակվողներից պաշտապանվողներն են Աստծո կամքին հակառակ գնում: Ինչպե՞ս է եկեղեցին բացատրում այս հանգամանքը:**

Աստված է կյանք պարգևողը և միայն Նա կարող է այդ կյանքը ետ վերցնել: Տասնաբանյա պատվիրաններից վեցերորդն արգելում է մարդու կյանքի վրա ձեռք բարձրացնել (Ելք 20.13): Սակայն եկեղեցական հեղինակներն ուսուցանել են, որ պատերազմների ժամանակ «մի՛ սպանիր» պատվիրանը չեն խախտում նրանք, ովքեր պատերազմում են Աստծո լիազորությամբ կամ Նրա օրենքների համաձայն: Քրիստոնեական վաղ շրջանի եկեղեցական ակնառու հեղինակներից այսպես է բացատրել մասնավորապես Օգոստինոսը «Աստծո քաղաքի մասին» իր աշխատության մեջ: Մեր հայ եկեղեցական հեղինակներից սուրբ Եղիշե պատմիչը ոչ միայն Սուրբ Գրքի տեսական մեկնաբանությամբ, այլև մեր պատմության մեջ ծավալված պատերազմական իրադարձությունների նկարագրությամբ է պատասխան տվել այս հարցին: 451 թ. Վարդանանց պատերազմը նկարագրող պատմիչը հիշատակում է, որ Սուրբ Ղևոնդ Երեցը հավատքի և հայրենիքի պաշտպանության համար պայքարի ելած հայորդիներին քաջալերում է Սուրբ Գրքից վկայակոչումներով՝ ոգեշնչելով ժողովրդի, սրբությունների հանդեպ նախանձախնդրությամբ գործած անձանց օրինակներով, ովքեր գովեստի են արժանի: Մովսեսը սպանեց եգիպտացուն, և նրա կողմից դրսևորված նախանձախնդրության համար Աստված նրան ժողովրդի առաջնորդ կարգեց (Ելք 2.12-14, 3.2-12): Փենեես քահանան սպանությամբ վերացրեց պղծությունը ժողովրդի միջից, և Աստված նրա սերունդների քահանայությունը հաստատեց (Թվ. 25.6-13): Եղիա մարգարեն, արդար նախանձախնդրությամբ, կռապաշտների ոչնչացրեց և այնուհետ հրեղեն կառքով երկինք համբարձվեց (Գ Թագ. 18.37-40, Դ Թագ. 2.11): Դավիթն իր մանկության ժամանակ քարով սպանեց հսկա Գողիաթին՝ պատերազմից ու դրա արհավիրքներից փրկելով իր ժողովրդին, և Աստծո կողմից Իսրայելի թագավոր կարգվեց, Աստծո Որդու հայր անվանվեց (Ա Թագ. 17.4-10, 40-52, Բ Թագ. 5.3-4, Մատթ. 1.1, 9.27, 12.23, 15.22, 20.30-31, 21.9,

15, 22.42, Մարկ. 10.47-48, 12.35, Ղուկ. 1.32, 69, 18.38, Յովհ. 7.42): Պաշտպանության համար պատերազմելը համարվում է Քրիստոսի պատվիրանի կատարում. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Յովհ. 15.13):

**4. Պատերազմական հանգամանքներում թշնամու դեմ ելնող քրիստոնյա մարդը մարդկային կյանքի գերագույն արժեքի, մարդու՝ աստվածային պատկերով ստեղծված լինելու գիտակցությամբ գուցե դժվարություն, ներքին մտատանջություն ունենա իր գործողությունների կատարման պահին: Ի՞նչ խորհուրդ է տալիս եկեղեցին թշնամու հետ վարվելու կերպի վերաբերյալ:**

Ռուս եկեղեցու սոցիալական հայեցակարգում նշվում է, որ եկեղեցական պատկերագրության մեջ Սուրբ Գևորգ զորավարը պատկերվում է ճերմակ ձիով, որի սմբակների տակ պարտված սև վիշապն է: Գույների այս հակադրությունը և զատորոշումն այն խորհուրդն է հաղորդում, որ չարիքը և դրա դեմ պայքարը պետք է միանգամայն տարբերակված լինեն, քանի որ մեծապես կարևոր է մեղքի դեմ պայքարելով՝ չհաղորդակցվել դրան: Մարդու սիրտը չպետք է հայտնվի մերժելի զգացումների իշխանության, որևէ մեկի նվաստացման կամ կործանման ցանկության ներքո:

Պատերազմի՝ սխրանք կամ ավազակային գործողություն լինելը երևում է պատերազմողների բարոյական վիճակի և արարքների դիտարկումով: Այդ իրողության սուրբգրական հիմնավորման համար Ռուս Ուղղափառ եկեղեցու սոցիալական հայեցակարգը մեջբերում է կատարում Սիրաքի գրքից. «Մի՛ ուրախացիր մարդու մահվան համար, թեկուզ նա լինի առավել թշնամական քո հանդեպ. հիշի՛ր, որ մենք բոլորս մեռնելու ենք» (Սիրաք 8.8): Սիրաքի գրքի այս խոսքերը, սակայն, չկան հայերեն Աստվածաշնչում: Բայց Առակաց գիրքն ասում է. «Եթե թշնամիդ ցած գլորվի, մի՛ տրորիր նրան, և եթե սայթաքի, ամբարտավանությամբ մի՛ վարվիր նրա հետ, քանզի Տերը կտեսնի և դա հաճո չի լինի Նրան, և Իր բարկությունը կհեռացնի նրանից» (24.17-18): Պատերազմի մեջ թշնամուն պարտության մատնելու դեպքում պետք է ուրախանալ

ոչ թե մարդու, մարդկային կյանքի ոչնչացման համար, այլ բարու և արդարության հաղթանակի համար: Այստեղ մտադրության, ներքին դիրքորոշման տարբերություն կա, որով արտահայտվում է մարդու հավատքը, արժեհամակարգը, չարիքի կամ բարիքի կողմը հակված լինելը:

Սուրբ Գրքով առաջնորդվելու նախանձախնդրությամբ հրեաները մեծապես կարևորում են Առակաց գրքի վերոնշյալ խոսքերը: Թեև հրեական պատմության մեջ շատ հաղթանակներ են նաև արձանագրված, այդուամենայնիվ, հրեաները հաղթանակի տոն չունեն: Պասեքը, օրինակ, եգիպտական գերությունից ելքի ու ազատության տոնն է և ոչ թե եգիպտացիների հանդեպ իսրայելցիների հաղթանակի տոնը: Դեռ ավելին, Պասեքի գիշերը գինու բաժակ բարձրացնելով և ուրախանալով ստրկությունից ազատվելու համար՝ հրեաները, այնուամենայնիվ, տասը կաթիլ են հեղում՝ ի հիշատակ նրանց ստրկացնողներին՝ եգիպտացիներին պատուհասած տասը հարվածների (Ելք 7.14-11.10): Դրանով հրեաները ցավ են հայտնում նաև եգիպտացիների զոհվելու առիթով, ովքեր հետապնդեցին նրանց և խեղդվեցին Կարմիր ծովի ջրերում: Ըստ հրեական Թալմուդի՝ իրավական և կրոնական-բարոյական դրույթների բազմահատոր հավաքածուի, երբ հրեաներին հետապնդող եգիպտացիները խեղդվեցին Կարմիր ծովում, հրեշտակները ցանկացան գովաբանական երգ երգել՝ Արարչի արդարությանը նվիրված: Սակայն Բարձրյալն ասաց նրանց. «Իմ արարածները խեղդվում են ծովում, իսկ դուք ուզում եք գովաբանություն երգել»: Սա դատապարտում է նրանց, ովքեր ուրախանում են թշնամու կործանման համար:

Իսկ հակառակորդ կողմից վիրավորների և գերիների հանդեպ քրիստոնյաների վերաբերմունքը հիմնված է Հին ու Նոր Կտակարանների ուսուցման, Առակաց գրքի և Պողոս առաքյալի խոսքերի վրա. «Եթե քաղցած է քո թշնամին, հա՛ց տուր նրան, և եթե՝ ծարավ, ջուր տուր նրան. այս անելով՝ կրակի կայծեր կկուտակես նրա գլխին: Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիով հաղթիր չարին» (Առակ. 25.21-22, Հռ. 12.20-21):

**5. Պատերազմին մասնակցելու վերաբերյալ Նոր Կտակարանն ուղղակի հորդոր կամ պատվիրան չի տալիս: Որքանով է պատերազմը, իբրև երևույթ, ընդունելի քրիստոնեության համար:**

Պաշտպանության, արդարության նպատակով պատերազմին մասնակցությունը վաղ քրիստոնեական շրջանից թուլատրելի է համարվել: Եկեղեցական կանոններում ամրագրվել է պատերազմում մարդ սպանած քրիստոնյա զինվորի ազատումը մարդասպանության մեղադրանքներից: Նրա համար, սակայն, կարգվել է երեք տարի ապաշխարության շրջան՝ ինքնամաքման և Սուրբ Հաղորդությանը մոտենալու համար: Եկեղեցու դիրքորոշումը երևում է նաև զինվորական սրբերի տոնի հաստատումով և դրա հիմնավորումը նորկտակարանյան իրողություններով՝ Քրիստոս մեծ հավատքի համար գովեց հարյուրապետին (Մատթ. 8.10, Ղուկ. 7.9), Աստծո կողմից տեսիլքի արժանացավ և ապա Սուրբ Հոգին ընդունեց Կոռնելիոս հարյուրապետն իր ընտանիքով (Գործք 10.1-8, 30-33, 44, 47-48):

Կաթոլիկ Եկեղեցուն պատերազմը դրական երանգավորում և հատկանիշ ստացավ: Օգոստինոսի և Ամբրոսիոսի կողմից հաստատվեց «արդար պատերազմի» ուսմունքը, մինչդեռ արևելյան հայրաբանական ավանդույթի մեջ պատերազմին հիմնականում դրական որակավորում չի տրվում: Ուղղափառության մեջ միայն 19-20-րդ դարերում ռուս կրոնական փիլիսոփաները պատերազմի արդարացիության վերաբերյալ մտորումներ հրապարակեցին, իսկ արդեն 21-րդ դարում Ռուս Ուղղափառ Եկեղեցին իր Սոցիալական հայեցակարգի հիմունքներում ներառեց «արդար պատերազմ» հասկացությունը՝ հետևելով Կաթոլիկ Եկեղեցուն և անգամ վկայակոչելով Օգոստինոսին: Արդար պատերազմի գաղափարը հիմնավորվում է Քրիստոսի հետևյալ խոսքի վրա. «Սուր վերցնողները սրով կրնկեն» (Մատթ. 26.52): Ըստ այս գաղափարի՝ պետք է պատերազմել և կամ պատերազմ հայտարարել արդարության, խաղաղության վերահաստատման համար՝ խաղաղ ճանապարհով խնդիրները լուծելու բոլոր միջոցներից հետո:

Արդար պատերազմի հասկացությունը, սակայն, բավականին շահարկվել է Կաթոլիկ Եկեղեցու կողմից այլադավանների, ինչպես նաև հրեաների հալածանքների, խաչակրաց արշավանքների կազմակերպմամբ և իրականացմամբ: Փաստորեն Կաթոլիկ Եկեղեցին, պատերազմի վերաբերյալ իր ստեղծած ուսմունքն իր նյութական և ամբողջատիրական շահերին համապատասխան մեկնաբանելով, արյունահեղությունների, պատերազմների պատճառ է դարձել: Նոր ժամանակներում Կաթոլիկ Եկեղեցին, անդրադառնալով իր պատմության ամոթալի էջերին, ներողություն խնդրեց քրիստոնեական տեսակետից անընդունելի գործողությունների համար:

Յովհաննես-Պողոս Երկրորդ Պապը քանիցս հրապարակավ ներողություն է խնդրել Կաթոլիկ Եկեղեցու կողմից իրագործված ինկվիզիցիայի, խաչակրաց արշավանքների, ինչպես նաև ֆաշիզմին հանդուրժողաբար վերաբերվելու և դրա դեմ բոլոր միջոցներով չպայքարելու համար: Պաշտոնական Վատիկանի ներողության հայցումը և անցյալի սխալներն ընդունելու Կաթոլիկ Եկեղեցու դիրքորոշումն առավել հաստատելու համար 2000 թ. մարտի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Յովհաննես Պողոս Երկրորդ Պապը պատարագ մատուցեց, որի ընթացքում կաթոլիկ բարձրաստիճան հոգևորականները ներման հայցումով բարձրաձայնեցին կատարված մեղքերը՝ անհանդուրժողականություն և բռնություն այլախոհների հանդեպ, կրոնական պատերազմների և խաչակրաց արշավանքների կազմակերպում, ինկվիզիցիայի կողմից կիրառված բռնություն ու դաժանություն, քրիստոնյաների միության խախտում, հրեաների դեմ հալածանքներ, մեղքեր ժողովուրդների իրվունքների դեմ՝ այլ նշակույթների և կրոնների հանդեպ անհարգալից վերաբերմունքով, մարդկային արժանապատվության դեմ, կանանց, առանձին ռասսաների և ազգությունների, անձի իրավունքների, սոցիալական արդարության դեմ: Այս ներողությունների մեջ կարող ենք հասկանալ նաև Հայ Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի դեմ Կաթոլիկ Եկեղեցու իրականացրած գործողությունները՝ Հայ Եկեղեցուն իր վարդապետությունները պարտադրելու, Կաթոլիկ Եկեղեցու տիրապետության տարածման համար միարարական շարժումներ ստեղծելու, հայ ժողովրդ-

դի ծանր ու օրհասական պահերին օգնության տրամադրման համար կաթոլիկ դավանանքի ընդունման պայմանը դնելու: Այդ ըմբռնումը թերևս առավել ակնհայտ բարձրաձայնեց Յովհաննես Պողոս Երկրորդ Պապը, երբ Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տոնակատարությունների առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հրավերով եղբայրական այցով գտնվում էր Հայաստանում: Սեպտեմբերի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բաց խորանին մատուցված պատարագի ընթացքում Յովհաննես Պողոս Պապն իր խոսքում ասաց. «Այս խորանից, որը ձեր խորանն է, ես խնդրում եմ Տիրոջը ներելու մեզ մեր անցյալի սխալներն ընդդեմ միության և առաջնորդել մեզ սիրո, որը հաղթահարում է բոլոր արգելքները»: Կաթոլիկ Եկեղեցու անցյալի սխալների համար տարբեր առիթներով ներողություն է հայցել նաև ներկայիս Պապ Ֆրանցիսկոսը: Կաթոլիկ Եկեղեցու կողմից իրապես մեծ քայլ էր հրապարակավ ներողության հայցումն այդ Եկեղեցու ծառայողների կողմից կատարված պատմական սխալների համար:

Կաթոլիկ Եկեղեցու օրինակով տեսնում ենք, թե ինչպես է շահարկվել արդար պատերազմի գաղափարը: Այսօր նույնպես տարբեր երկրներ, ոչ միայն իրենց ներսում, այլև օտար պետություններում ապրող բնակչությանը պատշպանելու, բռնությունից, բռնապետությունից փրկելու նշանաբանով, արդարություն կամ խաղաղություն հաստատելու պատրվակով կարող են շահարկել արդար պատերազմի գաղափարը՝ աշխարհաքաղաքական շահերից ելնելով: Այդ իսկ պատճառով Եկեղեցին որևէ ռազմական գործողության վերաբերյալ տեսակետ բարձրաձայնելուց առաջ հանգամանորեն պետք է քննարկի առկա խնդիրը:

**6. Խաղաղությունը նախապատրաստումն է նո՞ր պատերազմի, թե՞ պատերազմները միջոցներ են խաղաղության հաստատման համար: Ո՞րն է խաղաղության մասին պատկերացումը, և ո՞րն է մարդկության առաքելությունը՝ հանուն խաղաղության:**

Խաղաղության մասին աշխարհիկ և քրիստոնեական պատկերացումները տարբեր են: Քրիստոս ասում է. «Իմ խաղաղությունն են տալիս ձեզ. ձեզ չեն տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս» (Յովհ. 14.27): Նաև Պողոս առաքյալի խոսքն է. «Աստծո խաղաղությունը վեր է, քան ամենայն միտք» (Փիլիպ. 4.7): Այդ խաղաղությունն աստվածաշնորհ է և միայն մարդկային ջանքերով չի հաստատվում: Խաղաղությունը կապված է Աստծո հետ մարդու հաղորդակցությամբ, և խաղաղության խաթարումը մարդու ներաշխարհում խաղաղ զգացումների, հոգու խաղաղության աղճատումն է վկայում:

Աստծո կամքին հակառակվելը հանգեցնում է հակառակությունների, խաղաղության վնասման: Խաղաղ մի վայրում անհանդուրժողականություն, կռիվներ են ծագում: Սա նշանակում է, որ արտաքին խաղաղությունն անհնար է առանց ներքին խաղաղության: Սա է ակնարկում Երեմիա մարգարեն՝ ասելով. ««Խաղաղություն է, խաղաղություն», բայց ո՞ր է խաղաղությունը» (6.14): Եսայի մարգարեն մարդկության խաղաղ, ապահով ու ստեղծագործ աշխարհի երազանքն է պատկերում. «Նրանք իրենց սուսերներից խոփեր պիտի ձուլեն և իրենց սվիններից՝ մանգաղներ. ազգ ազգի վրա սուր չպիտի բարձրացնի, և նրանք այլևս չեն սովորելու պատերազմել» (2.4): Այս մարգարեությունը կանխատեսումն է այն ապագայի, երբ մարդկությունն առ Աստված ապավինությամբ ամբողջապես հանձնառու և նախանձախնդիր կլինի իրականացնելու խաղաղության իր դարավոր երազանքը: Առ Աստված համընդհանուր դարձը համընդհանուր խաղաղության գրավականն է, սրտի և հոգու ներքին խաղաղությունը՝ արտաքին խաղաղության երաշխավորը: Խաղաղություն հաստատելու ձգտումն ընթացք է դեպի քրիստոսանմանություն: Քրիստոս Իր փրկագործությամբ խաղաղություն հաստատեց մարդկանց և Աստծո միջև. «Հիսուս Քրիստոսի միջոցով, դուք, որ մի ժամանակ հեռացած էիք, մերձավորներ եղաք Քրիստոսի արյամբ, որովհետև Նա է մեր խաղաղությունը, նա, որ երկուսը մեկ դարձրեց. քանդեց իր մարմնի մեջ միջնորմը՝ թշնամությունը, և հրամաններով տրված ապավինականների օրենքը ջնջեց, որպեսզի իրենով երկուսին դարձնի

մի նոր մարդ և խաղաղություն հաստատի ու իր խաչով հաշտեցնի երկուսին մեկ մարմնի մեջ Աստծու հետ. քանզի թշնամությունն սպանեց իր խաչով» (Եփ. 2.13-16): Խաղաղության համար ջանքերի գործադրումը նմանվում է Տիրոջ առաքելությանը: Դրա համար էլ Քրիստոս Լեռան քարոզում ասում է. «Երանի՜ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն» (Մատթ. 5.9):

### **7. Աշխարհում ստեղծված պատերազմական իրավիճակների հաղթահարման համար Եկեղեցին ի՞նչ է անում:**

Եկեղեցին, միջեկեղեցական կազմակերպությունները, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը հանդես են գալիս պատերազմներն ու ահաբեկչությունները դատապարտող հայտարարություններով, զգաստության, խաղաղության վերահաստատման կոչերով, պատերազմից տուժածներին, փախստականներին խնամելով, օգնություն ու զորակցություն տրամադրելով: Հակամարտությունների խաղաղ կարգավորման համար Եկեղեցու սպասավորները նաև բանակցում են պատասխանատու կողմերի ներկայացուցիչների հետ, գործունեություն ծավալում միջկրոնական ասպարեզում՝ տարբեր կրոնների ներկայացուցիչների հետ ևս ջանքեր ներդնելու աշխարհում խաղաղության, ապահովության հաստատման համար:

Վերջին տասնամյակներում հայ ժողովրդին անմիջականորեն առնչվող դարաբաղյան հիմնախնդրի լուծման համար Հայ Առաքելական Եկեղեցու Կաթողիկոսները լուրջ ջանքեր են ներդրել: Ռուս Ուղղափառ Եկեղեցին նույնպես իր անմիջական գործուն սատարումն է դրսևորել արցախյան հակամարտության կարգավորման ուղղությամբ: Երջանկահիշատակ Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետ Ալեքսի Երկրորդի միջնորդությամբ հանդիպեց Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Ալլահշուքյուր Փաշազադեի հետ: Այսպիսի հանդիպում ունեցավ նաև Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետության տարիներին այդ հանդիպումները և բանակ-

ցությունները շարունակվեցին կրկին Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Երկրորդի, այնուհետ՝ Ռուս Եկեղեցու նորընտիր Պատրիարք Կիրիլի միջնորդությամբ: Այդ հանդիպումների ընթացքում ստորագրվեցին և հրապարակվեցին կարևոր հայտարարություններ հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ: 2010 թ. ապրիլի 26-ին Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատվիրակությամբ մեկնեց Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու՝ մասնակցելու կրոնապետների համաշխարհային գագաթաժողովին, որտեղ իր խոսքում Նորին Սրբությունը վերստին բարձրաձայնեց արցախյան հարցը, աշխարհում խաղաղության հաստատման կարևորությունը: Վեհափառ Հայրապետը հանդիպեց նաև Ադրբեջանի նախագահին և իր հորդորը բերեց դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման համար:

Սա ցույց է տալիս, որ Եկեղեցին հոգևոր ասպարեզի միջոցով կարևոր ջանքեր է բերում պատերազմների դադարեցման, մարդկության կյանքում աստվածաշնորհի խաղաղության հաստատման առաքելության մեջ: Սակայն քրիստոնեական երկրներում Եկեղեցու սպասավորները նաև իրենց հոգևոր ծառայությունն են իրականացնում բանակում՝ քաջալերելու և զորացնելու զինվորներին, որպեսզի նրանք բարձր պահեն մարտական ոգին, մշտաբար լինեն հայրենիքի, հավատքի, սրբազան արժեքների պաշտպանության նվիրական գործուն և իրենց արիասիրտ ծառայությամբ պահապանները լինեն խաղաղության, կանխեն պատերազմի վերսկսման փորձերը: Հավատքի զորացումով անպարտելի է դառնում ոգին և գովարժան սխրանքներ գործում: Ոմանք կարծում են, որ սպառազինությունների մրցավազքը և ռազմական ասպարեզում զենքի պաշարի կուտակումը կարող է վճռական լինել: Մինչդեռ առաջին հերթին հավատքն է հաղթական, ինչպես որ պատանի Դավիթը հավատքով զորացած և պարզունակ մի զենքով հաղթեց հսկա Գողիաթին, փրկեց ժողովրդին պատերազմի վտանգից, պահպանեց խաղաղությունը (Ա թագ. 17.4-10, 40-52):

**8. Ինչո՞ւ եկեղեցու աղոթքները չեն դադարեցնում պատերազմները: Հավատքի տկարությունն է պատճառը:**

Հարությունից հետո Քրիստոս հայտնվեց վերնատանը հավաքված աշակերտներին և ասաց. «Խաղաղություն ձեզ» (Ղուկ. 24.36, Հովհ. 20.19): Քրիստոսի եկեղեցին ևս մշտապես աղոթում է խաղաղության համար: Սուրբ պատարագի ընթացքում քահանան քանիցս շրջվում է դեպի ժողովուրդը և ասում՝ խաղաղություն բոլորին: Սակայն մինչ օրս շարունակվում են արյունահեղություններ, հակամարտություններ, մոլեգնում են պատերազմներ: Ո՞րն է պատճառը: Արդյո՞ք եկեղեցին լավ չի աղոթում խաղաղության համար, արդյո՞ք քահանաները և հավատացյալ ժողովուրդը սրտանց չեն հայցում Աստուծոց խաղաղություն: Սակայն հիշենք Քրիստոսի խոսքերը. «Լսելու եք պատերազմների ձայներ և պատերազմների լուրեր... Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորություն՝ թագավորության դեմ, և պիտի լինեն սով, համաճարակ ու տեղ-տեղ երկրաշարժներ» (Մատթ. 24.6-7): Տերը նաև ասաց. «Աղքատներին ամեն ժամ ձեզ հետ ունեք» (26.11): Ուրեմն, պատերազմների և աղքատությունների, զրկանքների լինելն աշխարհում Քրիստոս ևս հաստատեց:

Մենք կարծում ենք, որ պատերազմներ պատճառողները բռնապետներն են, պատերազմների պատասխանատվությունն ընկնում է քաղաքական գործիչների վրա, և ապրում ենք՝ մտածելով, որ մեղքի բաժին չունենք աշխարհի սոսկալի իրողություններում: Սակայն չարիքը, ինչպես ցույց են տալիս եկեղեցու Հայրերը, առանձին գոյացություն չէ, այլ բարու պակասությունը, ինչպես որ խավարն առանձին գոյավորում չէ, այլ լույսի պակասությունը: Այսպես յուրաքանչյուր մեղք ավելացնում է չարիքի խավարն աշխարհում: Ինչպես որ Ադամի անկումով ողջ տիեզերքը նրա հետ անկում ապրեց, այդպես էլ նրա սերունդների՝ մարդկանց անկումով, մեղսագործությամբ հավելվում է խավարային չարիքն աշխարհի մեջ: Նմանապես Քրիստոսի խաչելության պատճառը քաղաքական գործիչ Պիղատոսից խարդավանքով մահապատիժ կորզած հրեաները չէին, և կամ՝ Քրիստոսի խաչելությունն իրականացրած հռոմեական զինվորները, որոնց հրամայվել

եր ի կատար ածել վճիռը՝ իբր երկրի ներսում ապստամբությունների ու խռովությունների ալիք չբարձրանալու համար: Այլ Քրիստոսի խաչելության ու մահվան պատճառն ամբողջ մարդկության մեղքերն էին, քանզի Փրկիչը չարչարվեց, խաչվեց ու մեռավ բոլոր մարդկանց փոխարեն՝ քավություն ու փրկություն բերելու աշխարհին: Պատերազմների պատասխանատվությունն այս ընդհանուր իմաստով ընկնում է բոլորի վրա, ովքեր սրբությամբ չեն ապրում, ընկնում է նաև քրիստոնյա ողջ աշխարհի վրա, որը ևս հաճախ պատերազմներ է հրահրել և իրականացրել: Այդ պատասխանատվության տակ է այն քրիստոնյա աշխարհը, որն այժմ վերածվել է տնտեսական միջավայրի, որտեղ իշխում են ոչ թե Քրիստոսի պատվիրանները, այլ շուկայի կանոնները, անգամ՝ կիրքն ու մարմնական զգացումները: Մինչդեռ յուրաքանչյուր քրիստոնյայի սրբությունն ավելացնում է բարիքի լույսն աշխարհում՝ ցրելու անօրինությունների, պատերազմների մթությունն ու խավարը մարդկության կյանքից:

### **ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ**

**1. Իշխանության հանդեպ հարգալից վերաբերմունքի և հատկապես սիրո ու վստահության պակասն ավելի ու ավելի ակներև է: Ինչո՞ւ է պակասել հարգանքն իշխանության հանդեպ:**

«Իշխանություն» ասելով՝ այն նկատի ունենք ոչ միայն քաղաքական ասպարեզում, այլև տարբեր ոլորտներում: Իշխանության հանդեպ հարգանքի նվազումը պայմանավորված է այն կրողների անձնական վարվեցողությամբ, զբաղեցրած պաշտոնի, ստանձնած պատասխանատվության մեջ անհամապատասխան վարքագծով: Հաճախ տարբեր բնագավառներում իշխանություն ունեցողներն այդ իշխանությունը պարտադրում են իրենց վիճակված հանգամանքի բերումով և ոչ թե անձի՝ այդ իշխանությունը կրելու արժանիքների ցուցադրումով և դրանց գործադրումով: Իշխանության հեթանոսական ընկալումները բերում են վերադասի և ստորադասի, գերակայության և ստորակայության հասկացությունների վրա կառուցված հարաբերություններ: Մինչդեռ Քրիստոս ա-

սում է. «Ազգերի թագավորները տիրում են իրենց ժողովուրդների վրա, և նրանք, որ իշխում են նրանց վրա, բարերարներ են կոչվում: Բայց դուք այդպես չլինեք, այլ ով որ մեծ է ձեր մեջ, թող լինի ինչպես կրտսերը, իսկ առաջնորդը՝ ինչպես սպասավորը» (Ղուկ. 22.25-26), «Եթե մեկն ուզում է առաջին լինել, բոլորից վերջինը և բոլորի սպասավորը պիտի լինի» (Մարկ. 9.34): Ուրեմն, սերն ու ծառայանվիրումն է, որ քրիստոնեական տեսակետից, հոգևոր ընկալումով օրինական և ընդունելի է դարձնում իշխանությունը: Իշխվողների վրա իշխանությունն առավելաբար հրամանների, վախի մթնոլորտի, պատժի սպառնալիքի, օրենքով խստորեն պատժելու սկզբունքներով տարածելը պատճառ է դառնում իշխանություններից դժգոհության, դրանցից ազատվելու ձգտման, առերևույթ հնազանդության տակ հակակրանքի և անգամ թշնամության ու ատելության զգացումների առկայության: Այսպիսով, իշխանությունը պիտի լինի իշխանություն՝ ծառայանվիրումի, սիրո ու խնամքի հիմքի վրա հաստատված, և ոչ թե հիմնված վախի ու իշխողին վիճակված հանգամանքի առջև հնազանդվելու պարտադրանքի վրա, այսինքն՝ պետք է լինի ոչ թե օրենքի, այլ շնորհի իշխանություն: Պողոս առաքյալի ուսուցումը, թե այլևս օրենքի տակ չեք, այլ շնորհի (Յուդ. 6.14), տարածվում է նաև իշխանության քրիստոնեական ընկալման վրա, որով իշխանությունը բանեցվում է ոչ թե օրենքի սահմանած անհնազանդության պատժի հիշեցմամբ, որը բերում է դժգոհություն ու հակակրանք, այլ իշխվողների հանդեպ սիրո ու ծնողական հոգածության դրսևորումով: Այս դեպքում արդեն իշխանությունը դառնում է բարոյական իշխանություն և ոչ թե միմիայն օրենքի վրա հիմնված իշխանություն: Իշխանության այս տեսակն է, որ իր հանդեպ հարգանք ու սեր է վայելում:

## **2. Իշխանությունը կարող է ծառայել միայն բարի նպատակների համար:**

«Իշխանություն» նշանակում է որևէ բնագավառում ինչ-որ մեկից տրված գործելու մեծ լիազորություն: Իշխանությունն աստվածատուր է, այսինքն՝ տրվում է Աստծո կողմից: Այս-

տեղ պետք է նշել երկու հանգամանք: Աստծո կողմից որևէ մարդու կամ մարդկանց խմբի տրվում է իշխանություն քաղաքական կամ այլ ոլորտներում երկու ձևով՝ Աստծո տնօրինական կամ թույլատու կամքով: Աստվածաբանության մեջ աստվածային կամքի այս տարբերակումներն են արվում այն բացատրությամբ, որ Աստված էր տնօրինական կամքով տնօրինում է, որպեսզի բարին լինի աշխարհում, մարդկության կյանքում, իսկ թույլատու կամքով թույլ է տալիս, որպեսզի բացասական առումով ինչ-որ մի իրողություն տեղի ունենա հեռահար բարի նպատակի համար, քանի որ Աստված կարող է փոքր չարիքից մեծ բարիքներ հանել մարդկության, հասարակության, երկրի համար: Այստեղ խոսքն Աստծո կամքի թվային ավելացման մասին չէ, այլ նույն կամքի տարբեր դրսևորումների մասին: Պողոս առաքյալը Հռոմեացիներին ուղղված թղթում ասում է. «Ամեն մարդ, որ իշխանության տակ է, թող հպատակվի նրան. քանզի չկա իշխանություն, որ Աստծուց չլինի. և եղած իշխանությունները Աստծուց են կարգված» (13.1): Աստվածաշնչից կարող ենք հիշել Հովսեփի օրինակը: Նա դրվեց ստրկավաճառների իշխանության տակ, ովքեր նրան վաճառեցին Եգիպտոսում, այնուհետև՝ բանտապետի իշխանության տակ, ով նրան բանտ գցեց, այնուհետ՝ փարավոնի իշխանության տակ, ով նրան մեծ պաշտոնի արժանացրեց: Եվ տեսնում ենք, որ այս ամենը աստվածային կամքով եղավ ավելի մեծ բարիքի համար, որովհետև այս իշխանությունների տակ գտնվելով՝ Հովսեփը հասավ մի վիճակի, երբ փրկություն բերեց իր ծնողներին, եղբայրներին, ազգակիցներին, ինչպես նաև բազմաթիվ ժողովուրդներին: Այսպես և հրեա երեխաների դեմ ուղղված հալածանքներով Մովսեսը մանուկ հասակում տարագիր եղավ իր ծնողներից և մուտք գործեց Եգիպտական իշխանության վերին օղակները, այնուհետև նաև հարյուրամյակների գերությունից փրկության առաջնորդեց իր հարազատ ժողովրդին: Ուրեմն, ըստ Աստվածաշնչի, իշխանությունն Աստծուց է, որ տրվում է աստվածային թույլատու կամ տնօրինական կամքով՝ ծառայելու համար մարդկանց բարիքին: Իսկ իշխանության չարաշահմամբ մարդկանց հանդեպ գործադրվող բռնությունները, անարդարությունները, տարբեր չարիքները հաճելի չեն Աստ-

ծուն, բայց Նա այդպիսի չարիքներից անգամ Իր նախախնամությանը բարիքներ է վեր հանում:

**3. Կարծիք կա, որ միշտ հատկապես նոր սերունդն է ըմբոստանում ամեն տեսակի իշխանության դեմ: Արդյո՞ք իշխանության հանդեպ անվստահությունը հատկանշական է միայն երիտասարդներին:**

Իշխանության հանդեպ անվստահությունը դրսևորվում է տարբեր տարիքի մարդկանց մոտ, եթե կա դժգոհություն այդ իշխանություններից: Այս դեպքում խոսքն առավելաբար քաղաքական իշխանության մասին է: Այնպես որ իշխանության հանդեպ անվստահություն կամ իշխանությունից դժգոհություն հատուկ է ոչ միայն երիտասարդությանը: Նմանատիպ երևույթ, որ հատուկ է միմիայն երիտասարդներին, տարբեր սերունդների միջև առկա հակասությունը կամ դժգոհությունն է: Հետևաբար, դժգոհության զգացումը, որն առնչվում է միայն նոր սերնդին, պետք է տեսնել հայրեր-որդիներ հակադրության և ոչ թե քաղաքացիներ և պաշտոնյաներ հակադրության մեջ: Երիտասարդներին ավելի շատ հատուկ է նախորդ սերնդին կամ հայրերին չհասկանալու, ավելի ճիշտ՝ նախորդների ունեցածով կամ ձեռքբերումներով չբավարարվելու և ավելիին ձգտելու հատկանիշը: Հայրեր-որդիներ հակադրության խնդիր եղել է բոլոր ժամանակներում: Մենք ինքներս էլ կարող ենք հիշել մեր կյանքից, որ հաճախ չենք հասկացել ծնողների այս կամ այն տեսակետը, այն համարել ժամանակից հետ մնացած, փորձել առաջնորդվել ոչ թե ծնողների, այլ մեր մտածելակերպով՝ մերը համարելով ավելի ճիշտ և տրամաբանական: Նման իրողությունը թեև բացասական տարրեր ունի իր մեջ, սակայն հաճախ դառնում է նաև խթան նոր զարգացման և առաջընթացի: Այսպես է, որ նախորդների ձեռքբերումներով չբավարարվելով կամ դրանց հետ համաձայն չլինելով՝ եղել են նոր նվաճումներ, ինչպես օրինակ մտքի ոլորտում՝ գիտության, փիլիսոփայության, տեխնիկական նոր գյուտերի առումով: Եվ քանի որ հայրեր-որդիներ խնդիրը միշտ առկա է, ապա Աստվածաշնչում տրվում են երկուստեք պատվիրաններ՝ ուղղված և՛ ծնողներ-

րին, և՛ զավակներին: Տասնաբանյա պատվիրաններից մեկն ասում է՝ պատվիր թո՛ հորն ու մորը (Ելք 20.12), բայց նաև ծնողներին է պատվիրան տրվում. «Հայրե՛ր, մի՛ զայրացրեք ձեր որդիներին, որպեսզի չհուսալքվեն» (Կող. 3.21): Հետևաբար, և՛ զավակները պետք է պատվեն ծնողներին, և՛ ծնողները պետք է չվշտացնեն իրենց զավակներին, այսինքն՝ պետք է փոխադարձ հարգանք, սեր, վստահություն լինի: Քրիստոս հանդիմանում է փարիսեցիներին և օրենսգետներին, ովքեր հորդորում էին, թե տաճարին տրվող ընծայի, այսինքն՝ նախատեսված նվիրատվության պատճառով օգնություն չցուցաբերեն ծնողներին, այլ հօգուտ տաճարի նախապես որոշված ծրագրերն իրականացնեն: Քրիստոս վեր է դասում որդիական սերն ու աստվածային պատվիրանի կատարումը առաքինի տարբեր ծրագրերի իրականացումից (Մատթ. 15.3-6, Մարկ. 7.11):

Հայրեր-որդիներ հակադրությունը սրվում է նաև այն ժամանակ, երբ որդիների համար ծնողները դադարում են իդեալներ լինելուց: Փոքրիկ հասակում ծնողները երեխաների համար մեծագույն հեղինակություններն են, նրանց իդեալները: Երեխան մինչև դպրոցական տարիքը հոգեբանորեն չի կարողանում իրեն նույնիսկ ծնողներից անջատ համարել: Կարելի է ասել, որ ծնողների մոտ էլ այսպիսի զգացում կա. փոքրիկ հասակի երեխաներ ունեցողներն զգում են, որ նրանք կարծես թե իրենց մի անբաժանելի մասնիկն են: Բայց տարիների հետ երեխաները մեծանալով տեսնում են, որ ծնողները սովորական մարդիկ են մյուսների պես, ունեն նույնիսկ թերություններ, որոնք հաճախ դուրեկան չեն զավակների համար: Սակայն սա երբեք պատճառ չպիտի դառնա ծնողների հանդեպ հարգանքի և սիրո նվազման: Սա է մեզ ուսուցանում Աստվածաշունչը նաև Նոյի օրինակով: Նոյ նախապես իր զավակների համար մեծ հեղինակություն էր նաև այն պատճառով, որ Աստված խոսում էր նրա հետ: Եվ Նոյն աստվածային պատվերի համաձայն էր, որ կառուցեց տապանը և փրկեց իր ընտանիքին ջրհեղեղից: Բայց մի օր կրտսեր որդին՝ Քամը, տեսնում է իր հորը հարբած և մերկ ընկած ու գնում ասում է այս մասին եղբայրներին (Ծննդ. 9.22): Քամն արհամարհում է հորը՝ մտածելով, որ այս մարդն իբր

մարգարե է, խոսում է Աստծո հետ, բայց ահա հիմա այն աստիճանի է հարբել, որ նույնիսկ մերկացել ու ընկել է գետնին: Սակայն ավագ եղբայրները, ետ-ետ գնալով, որպեսզի հոր մերկությունը չտեսնեն, մոտենում են և ծածկում նրան: Նոյն արթնանալով անհծում է Քամին նրա վերաբերմունքի համար (Ծննդ. 9.23-25): Այս խրատական դրվագը ցույց է տալիս, որ ծնողներին պետք է հարգել, սիրել, պատվել, եթե անգամ նրանք ունենում են թերություններ, որովհետև Աստված մեզ ասում է, որ ծնողներին պատվելը հաճելի է Իրեն: Առակաց գրքում շատ խրատներ կան ծնողներին հարգելու և պատվելու, ինչպես նաև զավակների հանդեպ հոգատարությամբ վերաբերվելու մասին:

**4. Այսօր կան զգալի թվով մարդիկ՝ անկախ տարիքից, ովքեր անվստահությամբ, նույնիսկ արհամարհանքով են վերաբերվում ցանկացած տեսակի իշխանության: Եթե իշխանությունը, որը սահմանվում է որպես ուժ կամ իրավունք՝ վերահսկելու, դատելու կամ ոմանց գործողություններն արգելելու, ճիշտ գործադրվի, կլինի՞ արդյոք համատարած սեր իշխանության հանդեպ:**

Պողոս առաքյալն ասում է. «Իշխանավորները վախ չեն ազդում բարի գործերի համար, այլ չար գործերի: Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանությունից. բարի՛ն գործիր և նրանից գովասանք կստանաս, որովհետև նա Աստծու պաշտոնյա է քեզ՝ բարի գործերի համար. իսկ եթե չար գործես, վախեցիր. քանի որ սուրը մեջքին ի գուր չէ կապված. Աստծու սպասավոր է նա, վրեժխնդիր՝ բարկության համար, նրա դեմ, որ չարն է գործում. դրա համար պետք է հնազանդվել ոչ միայն բարկության համար, այլ նաև խղճմտանքի պատճառով» (Յո. 13.3-5): Չարը, հանցագործությունը պատժելու և հասարակական կյանքը կարգավորելու համար իշխանության գործունեությունը լիովին համընկնում է այս նպատակով Աստծո գործունեության հետ, դրա համար էլ իշխանությունը կոչվում է նաև Աստծու պաշտոնյա՝ բարի գործերի համար: Սակայն որտեղ կա ժողովրդավարական հիմունքներով ընտրված պաշտոնյաների կողմից իշխանության չարաշահում, այդտեղ մենք կարող ենք խոսել ժողովրդավարության ճգնաժամի

կամ ժողովրդավարության խեղաթյուրման մասին: Այսպես են եղել օրինակ ամերիկյան իշխանությունները մինչև 60-ական թվականները, որոնք քաջալերում էին ռասիզմը, սևամորթների խտրականությունը, կամ գերմանական իշխանությունները 30-ական թվականներից մինչև Համաշխարհային երկրորդ պատերազմի ավարտը, որոնք նացիզմ, ֆաշիզմ, ռասիզմ էին քարոզում: Պողոս առաքյալը խոսում է օրենքի հանդեպ վերաբերմունքի, որով և անուղղակի կերպով իշխանությունների նկատմամբ դիրքորոշման մասին: Նա ասում է. «Եղա օրենքի տակ, ինչպես օրենքի տակ եղածները. ոչ թե նրա համար, որ օրենքի տակ էի, այլ որպեսզի շահեմ նաև նրանց, որ օրենքի տակ են: Օրենքի տակ չեղողների հետ եղա ինչպես օրենքի տակ չեղող մարդ» (Ա Կորնթ. 9.21): Առաքյալն անդրադառնում է օրենքի հետ կապված երեք վիճակների՝ օրենքի տակ չեղող - նրանք են, ովքեր ապրում են առանց նկատի ունենալու օրենքը, օրենքի տակ եղող - նրանք են, ովքեր ապրում են օրենքով՝ օրենքի խախտումի պատճառով պատժվելու վախից, և կյանք օրենքի մեջ կամ ինչպես նաև այլ խոսքով է ասում՝ այլևս «օրենքի տակ չեք, այլ շնորհի» (Ղե. 6.14): Օրենքի տակ եղող մարդը վախենում է, որ կպատժվի, եթե հանցանք անի, դրա համար էլ չի խախտում օրենքը, իսկ օրենքի մեջ, կամ շնորհի մեջ եղողին կարող է նույնիսկ չհետաքրքրել պետական օրենքի, քրեական օրենսգրքի առկայությունը, որովհետև նրա կյանքը համաձայն է օրենքի բարի պահանջներին: Օրինակ՝ իրական քրիստոնյային պետք չէ, որ օրենքը ասի՝ մի՛ սպանիր, որպեսզի ինքը մարդասպանություն չգործի, կամ օրենքն ասի՝ մի՛ գողացիր, որպեսզի ինքը գող և ավազակ չլինի: Այլ նրա ապրած կյանքը բարի է ու առաքինի, որը չի առնչվում վատ արարքներին և դրանց համար օրենքի կողմից սահմանվող պատիժներին: Օրենքի տակ լինելու իրողությունը, ցավոք, առկա է ոչ միայն պետական օրենքները վախից պահելու կենսածնում, այլև հավատավոր կյանքում, քանի որ կան շատ մարդիկ, ովքեր չեն շնանում, գողանում, կամ Աստծո այլ պատվիրանները պահում են առաջին հերթին Աստծուց չպատժվելու և դժոխքի կրակներում չվառվելու համար: Մինչդեռ իրականում պատվիրանները պետք է իրագործել

Աստծո հանդեպ սիրուց, պետք է առաջնորդվել տերունաշնորհի պատվիրաններով, քանի որ դա է ճիշտ, բարոյական, առաքինի կենսաձևը:

**5. Աստվածաշնչում շատ որոշակի է խոսվում ընտանիքում գլխավորության մասին: Ի՞նչ կարելի է ասել ընտանիքում գոյություն ունեցող իշխանության վերաբերյալ:**

Ընտանիքի անդամների հարաբերություններն ավելի շատ հիմնվում են սիրո և հեղինակության, քան իշխանության վրա: Եթե ընտանիքներում որևէ մեկ անդամի, ի մասնավորի ընտանիքի հոր կողմից իշխանություն է բանեցվում, ապա այդ պարագայում հարաբերությունները կառուցվում են տեր և ծառա, տիրակալ և ստրուկ հասկացությունների վրա: Ընտանիքներում սխալ է իշխանության նման ընկալումը, նույնիսկ քրիստոնեական համարվող պետություններում տիրոջ և ծառայի, տիրակալի և ստրուկի հոգեբանությունն չպետք է լինի պաշտոնյա և քաղաքացի շփումներում, քանի որ Քրիստոս ասաց. «Ազգերի թագավորները տիրում են իրենց ժողովուրդների վրա, և նրանք, որ իշխում են նրանց վրա, բարերարներ են կոչվում: Բայց դուք այդպես չլինեք, այլ ով որ մեծ է ձեր մեջ, թող լինի ինչպես կրտսերը, իսկ առաջնորդը՝ ինչպես սպասավորը» (Ղուկ. 22.25-26): Սա պետք է կիրառի նաև քրիստոնյա պաշտոնյան իր գործունեության ընթացքում, քանի որ պաշտոնյա կամ իշխանավոր դառնալով՝ չի դադարում քրիստոնյա լինելուց, հետևաբար և պաշտոնի մեջ պետք է լինի քրիստոնեական ընկալումն ու վարվելաձևը: Աստվածաշունչն ասում է. «Եվ դուք, տերե՛ր, ... իմացե՛ք, որ և՛ նրանք, և՛ դուք Տեր ունեք երկնքում, և Նրա առաջ աջառություն չկա» (Եփ. 6.9): Բացի այդ, «պաշտոն» բառը գրաբարից թարգմանաբար նշանակում է ծառայություն: Ահա այսպես բառի բուն իմաստով և քրիստոնեական ճիշտ ընկալմամբ իշխանավորը կամ ընտանիքի հայրը պետք է բարի սպասավորություն բերի իր խնամքի տակ գտնվողներին:

Ընտանիքներում իրողությունն ավելի շատ վերաբերում է հեղինակությանը, քան իշխանությանը: Մեր ակնառու հոգևորականներից երկու մեծ Կաթողիկոսներ հատկանշական

խոսքեր ունեն ընտանիքի մասին: Գարեգին Յովսեփյան Կիլիկիո Կաթողիկոսն ասում է, որ ընտանիքը եկեղեցի է, որի քահանան ընտանիքի մայրն է: Այսինքն՝ ինչպես եկեղեցին քահանայի սպասավորությամբ է գործում, այնպես էլ ընտանիքում մոր սպասավորությունն ու ծառայությունն է ամուր հիմքի վրա պահում ընտանիքը: Իսկ Խրիմյան Յայրիկն ասում է. «Ընտանիքը և օջախը փոքրիկ թագավորություն է երկրիս վրա, որի գահի վրա բազմած են հայրը՝ իբրև թագավոր, և մայրը՝ իբրև թագուհի, ու կառավարում են իրենց իշխանության տակ եղած ընտանիքը»: Ընտանիքի անդամները, հատկապես կինը պետք է լսեն, հարգեն ընտանիքի գլխավորի խոսքը՝ ընդունելով նրա հեղինակությունը: Նրա խոսքը պետք է հարգվի և ոչ թե արհամարհվի կամ անտեսվի: Օրինակ՝ մենք չենք ասում Սուրբ Գրքի իշխանություն, եկեղեցու Յայրերի իշխանություն, այլ հավատացյալները Սուրբ Գրքի ավանդած պատվիրանները պահում են կամ առաջնորդվում են Սուրբ Յայրերի խրատներով՝ ընդունելով նրանց հեղինակությունը: Այդպես էլ ընտանիքի անդամները պետք է ընդունեն ընտանիքի հոր հեղինակությունը, և ընտանիքի հայրը պետք է սիրով բարի հոգատարություն ցուցաբերի բոլորի հանդեպ:

**6. Այն եզրահանգմանն ենք գալիս, որ համապատասխան իշխանությունն ընտանիքում, հասարակության և պետության մեջ հաստատված է մեր իսկ օգտի համար: Ի՞նչ չափով է անհրաժեշտ հարգանք ցույց տալ իշխանությանը:**

Պողոս առաքյալն ասում է. «Ահա թե ինչու հարկեր եք վճարում. որովհետև նրանք Աստծու սպասավորներ են՝ այդ բանին կանխապես նշանակված: Արդ, հատուցեցե՛ք յուրաքանչյուրին իրենց պարտքերը. որին հարկ՝ հարկը, որին մաքս՝ մաքսը, որին երկյուղ՝ երկյուղը, որին պատիվ՝ պատիվը» (ՅՁ. 13.6-7): Առաքյալը նաև նշում է. «Ով հակառակվում է իշխանությանը, Աստծու հրամանին է հակառակվում» (ՅՁ. 13.2): Շատ զարմանալի է, երբ ընթերցում ենք այս խոսքերը՝ հատկապես անդրադառնալով, որ դա ասում է առաքյալը

քրիստոնյաներին, ովքեր հալածվում էին իշխանություններից հավատքի համար: Կարող ենք առավել զարմանալ՝ ընթերցելով Պետրոս առաքյալի խոսքերը. «Ի սեր Տիրոջ հնազանդ եղեք նարդկային ամեն իշխանության» (Ա Պետ. 2.13), «Ծառաներ՝ ամեն ինչում երկյուղով հնազանդ եղեք տերերին, ոչ միայն բարիներին և հեզաբարոներին, այլև դաժաններին» (Ա Պետ. 2.18): Պատրանք է ստեղծվում, թե քրիստոնեությունն ինչ-որ կույր հնազանդության, ամեն չար իրողության հետ հաշտվելու կոչ է անում: Բայց Քրիստոսի համարձակ պայքարն անարդարությունների համար, օրենսգետների ու փարիսեցիների դատապարտումը (Մատթ. 23.1-36), տաճարից առևտուր անողների նտրակով վտարումը (Մատթ. 21.12-13, Մարկ. 11.15-16, Ղուկ. 19.45-46, Յովհ. 2.14-17) ցրում է այդ պատրանքը: Առաքյալների հորդորն ավելի խոր իմաստ ունի. եթե կարիք կա փոխելու իշխանությունը կամ հասարակարգը, դա պետք է անել ոչ թե բռնությամբ, այլ հոգու ուժով: Առաքյալների հորդորը հիմնված էր Քրիստոսի ուսուցման և օրինակի վրա: Երբ Քրիստոսի վրա եկան Գեթսեմանիի պարտեզում, Պետրոսը թրով կտրեց մեկի ականջը, սակայն Տերը հանդիմանեց նրան և բուժեց տուժածին (Ղուկ. 22.50-51, Յովհ. 18.10): Պատմության իրադարձություններից մենք տեսնում ենք, թե ինչի են հանգեցրել բռնի կերպով, հեղափոխություններով իշխանություններ տապալելու, նոր կարգեր հաստատելու փորձերը: 1789 թ. ամենաառաքինի նշանաբանով՝ «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսով տեղի ունեցած Ֆրանսիական մեծ հեղափոխությունը բերեց ավելի մեծ արյունահեղություններ և ավելի ծանր իրավիճակ: Նույնը եղավ նաև 20-րդ դարասկզբին բուլղարիայի հեղափոխության ժամանակ, նույնն ենք տեսնում նաև ներկայումս արաբական աշխարհում իշխանափոխությունների արյունոտ պայքարների բովում, երբ նոր կարգերի հաստատումով շարունակվում են առավել արյունահեղություններն ու հակամարտությունները: Իշխանություններին քրիստոնյաների հնազանդությունը վերջանում է այնտեղ, երբ ստիպում են ուրանալ Աստծուն: Այսպես Սուրբ Գևորգ, Սուրբ Սարգիս զորավարները հակառակվում են իշխանություններին, ջարդում են կուռքերը, այսպես Սուրբ Գրիգոր Լուսավո-

րիչը, ով հավատարմությամբ ծառայում էր Տրդատ թագավորին, հակառակվում է՝ հեթանոսական կուռքերին զոհաբերություն անելու հրաման ստանալով: Մենք տեսնում ենք, որ առաքյալները հեղափոխեցին ողջ աշխարհը՝ տարածելով քրիստոնեությունը: Մինչ հռոմեական հզոր կայսրության դեմ այլ երկրներ իրենց բանակներով չէին կարողանում դուրս գալ կամ միշտ պարտվում էին, քրիստոնյաներն իրենք մարդկանց փոխելով հաղթեցին կայսրությանը, քրիստոնյա դարձրեցին նույնիսկ կայսրերին:

Այսօր էլ շատերը ցանկանում են, որ Եկեղեցին կողմնակից լինի իշխանափոխության բռնի ձևերի կամ ծածանի ապստամբության դրոշմը: Սակայն Եկեղեցին չի կարող ուրանալ Ավետարանի սկզբունքները, Քրիստոսի վարդապետությունը և այլ բան քարոզել: Այսպես էր վերաբերմունքը նաև Քրիստոսի հանդեպ: Նրան շատերն ընկալում էին որպես աշխարհիկ մեսիայի, ով պետք է գար և փրկեր Իսրայելի ժողովրդին հռոմեական տիրապետության լծից: Քրիստոսին նույնիսկ ցանկանում էին ներքաշել քաղաքական խարդավանքների մեջ: Փարիսեցիներն այդ նպատակով անգամ մի նենգ հարց հորինեցին, որպեսզի ողջ ժողովրդի առջև այն ուղղեն Քրիստոսին: Փարիսեցիները Քրիստոսին ասացին. «Վարդապետ, զիտե՞ք, որ ճշմարտախոս ես և Աստծու ճանապարհը ճշմարտությամբ ես ուսուցանում. և ոչ մեկից չես քաշվում ու ոչ մի մարդու աջառություն չես անում: Արդ, ասա՛ մեզ, ինչպե՞ս է քեզ թվում. պե՞տք է հարկ տալ կայսրին, թե՞ ոչ» (Մատթ. 22.16-17, Մարկ. 12.14, Ղուկ. 20.21-22): Հարցը բավականին նենգ էր և հատուկ էր մտածվել քաղաքական մեքենայությունների համար: Եթե Քրիստոս պատասխաներ, որ օրինավոր է, ողջ ժողովուրդը կելներ Նրա դեմ, որովհետև հրեաները ստիպողաբար էին հռոմեացիներին հարկեր վճարում, քանզի հռոմեցիները ոչ թե օրինաբար էին իշխում Իսրայելում, այլ բռնությամբ եկել և հաստատել էին իրենց իշխանությունը: Եթե Քրիստոս պատասխաներ՝ կայսերը հարկ տալը օրինավոր չէ, ապա այդ դեպքում կասեին, որ ժողովրդին ապստամբության է պատրաստում Հռոմի դեմ և հռոմեական իշխանությունների ներկայացուցիչներին կհանեին Քրիստոսի դեմ: Դրա համար Քրիստոս Իր մեծագույն իմաս-

տությամբ նրանց պատասխանեց. «Գնացե՛ք, տվե՛ք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. 22.21, Մարկ. 12.17, Ղուկ. 20.25): Եվ այսօր էլ եթե ցանկանում են Եկեղեցուց խոսք լսել, Եկեղեցին այլ բան չի կարող ասել, քան՝ Քրիստոս, այլապես կդադարի Քրիստոսի Եկեղեցի լինելուց: Դրա համար մենք էլ, պատմության դառը իրադարձությունները ցույց տալով, առաքյալների, քրիստոնյաների աստվածային ներգործությամբ հաղթանակները մատնանշելով, Քրիստոսի պես ասում ենք. «Գնացե՛ք և տվե՛ք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն»:

### **ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**1. Հոգևոր իշխանությունը նման չէ քաղաքական կամ ֆինանսական իշխանությանը: Ինչո՞վ է այն տարբերվում:**

Հոգևոր իշխանությունը քաղաքական կամ այլ տեսակի իշխանություններից տարբերվում է Քրիստոսի ուսուցանած սկզբունքով. «Եթե մեկն ուզում է առաջին լինել, բոլորից վերջինը և բոլորի սպասավորը պիտի լինի» (Մարկ. 9.34): Քրիստոս, սա սովորեցնելով, բերում է Իր օրինակը՝ ասելով, որ չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու (Մատթ. 20.28, Մարկ. 10.45): Ուրեմն, հոգևոր իշխանությունը կայանում է ծառայության մեջ, և որքան մեծ է իշխանությունը, այնքան մեծ է ծառայելու անհրաժեշտությունը, պատասխանատվությունն ու պարտականությունը՝ ըստ կրոնական ընկալման:

Առաքյալները, Եկեղեցու Հայրերն այսպես են բացատրել բարձրաստիճան հոգևորականի սպասավորությունը: Սուրբ Գրիգոր Աստվածաբանն ասել է, որ ինչպես ծովն ալեկոծվում է փոթորիկներով, այդպես էլ եպիսկոպոսի միտքն ալեկոծվում է իր հոտի համար մտահոգություններով: Նա եպիսկոպոսի ծառայությունը կոչել է նաև փոթորիկ մտաց: Այսինքն՝ որքան բարձր աստիճան ունի հոգևորականը, այնքան նա պարտականություն ունի առավել ծառայելու Աստծուն ու Եկեղեցուն, հավատավոր ժողովրդին: Բայց այստեղ չի կարելի ընդունել,

որ հոգևորականը դառնում է հավատացյալի ծառան ֆեոդալական ժամանակաշրջանի տեր և ծառա հասկացությամբ: Հոգևոր ասպարեզում եկեղեցականների ծառայությունն ընկալվում է հայր և որդի հարաբերությունների ձևով: Մեր մարմնավոր հայրերը, ծնողներն իրենց ծառայությունն են բերել մեզ՝ փոքր հասակից խնամելով, սպասավորելով, նաև այդ ծառայությունը այլ ձևով շարունակվում է, երբ մեծահասակ ենք դառնում: Եվ ինչպես մեզ ծառայող ծնողների հանդեպ ցուցաբերում ենք հարգանք և ընդունում ենք նրանց հեղինակությունը, այդպես էլ պետք է վարվենք հավատացյալների հոգևոր սպասավորների հանդեպ:

**2. Յուրաքանչյուրը, ով ընտրում է հոգևոր ուղին, պետք է շատ հստակ պատկերացնի իր քայլի կարևորությունը: Շատերն ունեն հնարավորություն՝ կրթություն ստանալու հոգևոր ուսումնական հաստատությունում: Հաճախ այդ ընտրությունն անում են դպրոցն ավարտելուց անմիջապես հետո: Ո՞ր տարիքն է բարենպաստ նման որոշման համար:**

Հոգևոր կրթօջախում կրթություն ստանալու որոշումը դպրոցական ուսումնառության շրջանն ավարտելուց հետո ճիշտ է, որովհետև նույն ժամանակ երիտասարդները նաև ընդունվում են այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ ընտրելով լուրջ մասնագիտություններ, ինչպես, օրինակ, բժիշկ, դիվանագետ, իրավաբան և այլն: Այսպես նաև որևէ մեկը, հակում ունենալով հոգևոր ծառայության, կարող է դպրոցից հետո ընդունվել հոգևոր կրթական հաստատություն: Սակայն քահանայական ձեռնադրության համար եկեղեցական կանոնագրքով հատուկ տարիք է սահմանված՝ երեսուն տարեկանը, քանի որ քահանայական ծառայության անցնելը լուրջ որոշում է և պետք է կատարվի լրջորեն խորհելուց հետո, հասուն տարիքում: Մեր ժամանակներում, նկատի ունենալով հոգևորականների մեծ անհրաժեշտությունը, ձեռնադրության տարիքը մի փոքր իջեցվել է, և քսանվեց-քսանյոթ տարեկանից, այսինքն՝ երեսուն տարեկանից քիչ ցածր տարիքից սկսյալ արդեն կարող են քահանաներ ձեռնադրվել: Մեր պատմության մեջ եղել են դեպքեր, երբ ավելի

փոքր տարիքից նույնիսկ կաթողիկոս են դարձել, ինչպես, օրինակ, Ներսես Շնորհալու եղբայրը՝ Գրիգոր Պահլավունին, ով Կաթողիկոս ձեռնադրվեց քսան տարեկանում: Այսպիսի դեպքերը բացառություններ են եղել: Գրիգոր Պահլավունին դաստիարակված էր իր նախորդ երկու կաթողիկոսների կողմից և նրանց վկայությունն ուներ՝ իբրև կաթողիկոսության լավագույն թեկնածու: Պատմությունը ցույց տվեց, որ Գրիգոր Պահլավունին իր գործունեությամբ և առաքելությամբ մեծապես կարողացավ պայծառացնել Եկեղեցին, և մեր եկեղեցական պատմության մեջ նրա կաթողիկոսության տարիները հիշատակված են կարևոր ազգաշահ ու եկեղեցաշահ ձեռքբերումներով:

**3. Հոգևոր իշխանության հետ տրվում է նաև հոգևոր զորություն և այն գործածելու միջոցներ: Որո՞նք են հոգևորականի հիմնական զերխնդիրները և դրանց լուծման միջոցները, զենքերը:**

«Իշխանություն» նշանակում է ինչ-որ մի բան անելու լիազորություն: Եկեղեցական ասպարեզում հոգևոր զործունեություն իրականացնելու այդ լիազորությունը հոգևորականներն ստացել են ուղղակիորեն Քրիստոսից և առաքյալներից հաջորդաբար: Քրիստոս այդ լիազորությունը տվեց առաքյալներին, ովքեր և այն ձեռնադրությամբ փոխանցեցին իրենց հաջորդներին: Ուրեմն, առաքյալների կողմից հիմնադրված եկեղեցիների սպասավորների նմանատիպ լիազորությունն ստացված է առաքելական հաջորդականությամբ: Առաքելական հաջորդականությունն է նշաններից մեկը վավերական եկեղեցականի ու դրա բացակայությունը՝ կեղծ եկեղեցականի, վավերական եկեղեցու և ինքնակոչ եկեղեցու: Հոգևորականի հիմնական զենքն աղոթքն է, իհարկե, դրան համարժեք գործերով: Սակայն աղոթքի կարևորությունն էական է: Աստվածաշնչում կարող ենք հիշել Մովսես մարգարեի աղոթական զորությունը. երբ նա, ձեռքերը երկինք բարձրացրած, աղոթում էր, այդ ժամանակ ամաղեկացիների դեմ կռվող իսրայելացիները հաղթում էին, իսկ երբ նա հոգնում և ձեռքերն իջեցնում էր, նրանք սկսում էին պարտվել (Ելք 17.11):

Հոգևորականների առաքելության նպատակը մարդկանց հոգիների փրկությունն է, Տիրոջ Ավետարանի լույսի տարածումը մարդկության մեջ, աշխարհի ու հասարակությունների բարօր ու խաղաղ կյանքը զորացնելը, Աստծո կամքի համաձայն մարդկանց կյանքն ուղղորդելը: Ի՞նչ կարող է արդյոք քրիստոնեությունը տալ արդիականությանը: Այս հարցադրումն արել է 20-րդ դարի ռուս նշանավոր եկեղեցականներից Ալեքսանդր Շմեմանը: Նրա ճիշտ դիրքորոշումն այն է, որ քրիստոնեությունն արդիականությանը ոչինչ չի կարող տալ: Քրիստոնեությունը չի ուղղված փոփոխվող իրողությունների, այլ անփոփոխին՝ հավիտենականին: Այն, ինչ արդիական է այսօր, վաղը դառնալու է հնացած և պատմություն: Այն, ինչ արդիական էր 18-րդ դարում, այսօր արդեն պատմություն է և անցյալ: Հետևաբար, քրիստոնեությունն ուղղված չէ արդիականությանը, այլ ուղղված է այն իրողությանը, որը գերարդիական է, հավիտենական է: Արդիականության հետ կապված՝ կարող ենք հիշել մեր մեծ բանաստեղծներից Պարույր Սևակի խոսքը. «Լինել ապարդի, նշանակում է լինել քայլող դի»: Այս իմաստով եկեղեցին հեռու չի մնում արդիականությունից, այլ այն օգտագործում է իր առաքելության համար, ինչպես օրինակ՝ տեխնիկական և տեխնոլոգիական նվաճումները, համացանցը, հեռուստատեսությունն ու ռադիոն՝ քարոզչության համար: Ուրեմն, եկեղեցին հոգևորականի միջոցով, աղոթքի ուժով և աստվածահաճո գործերով իր սպասավորությունն է բերում՝ հավատացյալներին դեպի հավիտենություն առաջնորդելու համար:

#### **4. Ո՞րն է հոգևոր իշխանության դերն աշխարհիկ պետությունում:**

Ինչ բնույթի էլ լինի պետությունը, հոգևոր իշխանության դերը մնում է նույնը: Եթե «հոգևոր իշխանություն» ասելով՝ նկատի ունենք բարձրաստիճան հոգևորականներին, ապա նրանք քահանայական ծառայությունից զատ լծված են եկեղեցու վարչակազմակերպական գործին, աշխատանք են տանում, որպեսզի իրենց հոգևոր իշխանության ներքո ծառայող քահանաների առաքելությունն ավելի արդյունավետ լի-

նի, կազմակերպված լինի հոգևոր-եկեղեցական կյանքը, արգասավորվի Քրիստոսի կողմից պատվիրված հոգևոր սպասավորությունը՝ ի շահ հավատացյալների և ի պայծառություն Սուրբ Եկեղեցու: Հաճախ որոշ հոգևորականներ հավատավոր ընթացքը պատկերացնում են սոսկ որպես կյանքի սրբացում, դրա համար հրահանգում են ապրել՝ իրագործելու այն նպատակները, որոնք հոգևոր շահ կբերեն՝ հաճախակի այցելել եկեղեցի, Սուրբ Գիրքն ընթերցել, հաճախ հաղորդություն ստանալ, աղոթել: Սակայն քրիստոնեության նպատակը միայն կյանքի սրբացումը չէ, այլ Երկնքի արքայության արժանացնելն է մարդկանց: Հետևաբար, քրիստոնեական հավատքը պետք է ոչ թե նպատակ ունենա կյանքի սրբացումը, այլ Երկնքի արքայությունը, այսինքն՝ այն պետք է մարդու հայացքը կենտրոնացնի ոչ թե ներկային, այլ դրա միջոցով՝ հավիտենականին և հիմնվի ոչ թե առօրյայի, այլ վախճանաբանության վրա: Կյանքի սրբացումը միջոց է դեպի վախճանաբանություն, որով և՛ դեպի հավիտենություն ու Երկնքի արքայություն: Հոգևոր իշխանությունը, եթե նկատի ունենք եկեղեցական մկրտապետության բարձր աստիճանը, այս ամենին միտված առաքելության կազմակերպողն է և վերահսկողը, որպեսզի հոգևորականների ծառայությունը զերծ լինի թերություններից, և Եկեղեցին անխաթար շարունակի իր առաքելությունը՝ հանուն մարդկության փրկության:

**5. Հոգևոր իշխանությունը տարբերվում է ամեն տեսակի իշխանություններից նաև նրանով, որ այն կրողներն իրենց անվանում են սպասավորներ, այսինքն՝ իշխանությունն օգտագործում են ծառայելու համար: Սակայն մյուս բոլոր իշխանությունների պես հոգևոր իշխանությունը և հոգևորականները երբեմն հանդիպում են հասարակական սուր քննադատության: Ինչո՞ւ:**

Հոգևորականների կամ Եկեղեցու հասցեին ուղղված քննադատություններին չի կարելի հասարակական բնույթ վերագրել: Երբ հատկապես եկեղեցական մեծ տոներին մեր եկեղեցիները լի են լինում բազմահազար հավատացյալներով, իսկ Սփյուռքի եկեղեցիներն էլ ներառյալ՝ միլիոնավոր հավատացյալներով, դա այն հասարակությունը չէ, որ քննա-

դատում է հոգևորականին ու Եկեղեցուն: Դրանք այն մարդիկ են, ովքեր մեծապես հարգում և սիրում են մեր Մայր Եկեղեցին և, կարևորելով հոգևորականների ծառայությունը ազգային մեր կյանքում, համախմբվում են եկեղեցիներում՝ Աստծուն փառաբանելու և իրենց աղոթքներն Աստծուն ուղղելու: Քննադատությունները զալիս են ավելի փոքր քանակի մարդկանցից, ովքեր միտում ունեն այդ քննադատությունները տարածել ողջ ժողովրդի վրա կամ դրանք սերմանել ժողովրդի մեջ: Երբ ոմանք չեն կարողանում Եկեղեցին և հոգևորականներին ծառայեցնել իրենց քաղաքական կամ եսասիրական շահերին, ապա սկսում են քննադատել Եկեղեցին և հոգևորականությանը: Նմանատիպ քննադատությունները հիմնականում բամբասանքի ժանրից են և հաճախ ճշմարտության հետ քիչ առնչություն ունեն: Այդպիսի հոդվածներ ընթերցելիս մանուկում կամ համացանցային կայքէջերում՝ արդեն իսկ գրվածքի սկզբից պարզ է դառնում, որ տվյալ լրագրողը խիստ սուբյեկտիվ մոտեցում է ցուցաբերում և արդեն իսկ եկել էր հարցազրույցի կամ որևէ եկեղեցական միջոցառման՝ հոգևորականին կամ Եկեղեցին սևացնելու նախապես մտածված նպատակով:

Հոգևորականներին առնչվող քննադատություններ եղել են նաև հին ժամանակներում և ընդհանրապես այդ քննադատությունները մի քանի տեսակի են: Մեր Կաթողիկոսներից Սուրբ Հովհան Օձնեցին իր շքեղասիրության համար քննադատվել է նույնիսկ օտարներից, արաբ իշխանավորի կողմից նրա հետ հանդիպման ժամանակ: Սակայն Օձնեցին, լսելով քննադատությունը, մի կողմ է դրել իր շքեղությունը և ցույց տվել իր մարմնի վրա հագուստի տակ խարազանազգեստը, որը միշտ կրում է իր մարմնի վրա շքեղ հագուստի տակից: Սրանով նա արժանանում է արաբ իշխանավորի մեծ հարգանքին, և բավարարվում են Հայոց Կաթողիկոսի պահանջները հալածանքների դադարեցման, կրոնական պաշտամունքի ազատության, հարկերի նվազեցման:

Այսօր հոգևորականներին կարող են քննադատել որևէ խոսքի կամ անհաջող արարքի համար: Պետք չէ մարդուն դիտարկել հատվածական արարքի կամ գործողության մեջ. այդ մեկ արարքը կամ վարվեցողությունը չէ, որ ամբողջա-

պես բնութագրում է տվյալ հոգևորականին, նրա ապրած հավատավոր կյանքն ու գործունեությունը: Եթե ամբողջականության մեջ եկեղեցականի գործն ու կյանքը հակառակ են Ավետարանի սկզբունքներին, ապա բոլորը՝ և՛ հոգևականներ, և՛ աշխարհականներ, պետք է պահանջեն այդպիսի մեկի անհապաղ հեռացումը եկեղեցական ծառայությունից: Բայց եթե նրա ողջ կյանքը ծառայություն է Ավետարանին, Աստծուն ու ժողովրդին, ապա նրա կյանքի ու գործի հատվածական դիտարկումը չի կարող լինել նրա անձի ամբողջական բնութագիրը: Եթե հատվածական դիտարկումը վերցնենք իբրև անձի բնութագիր և նրա գործունեությունը որակավորող, ապա այդ դեպքում, ուրեմն, պետք է մերժենք նաև առաքյալներին: Պետրոս առաքյալը ուրացավ Քրիստոսին այն էլ երեք անգամ (Մատթ. 26.69-75, Մարկ. 14.66-72, Ղուկ. 22.56-62, Յովհ. 18.17, 25-27): Սակայն այս հատվածական տեսակետից ուրացման խոսքերը և Տիրոջից երես թեքելը չէին, որ նրա նկարագիրն էին արտահայտում, որովհետև մենք հետո տեսնում ենք, որ Պետրոս առաքյալը դառնապես լաց եղավ (Մատթ. 26.75) ու զղջաց իր ուրացման համար, այնուհետ իր ողջ կյանքն ընծայեց Տիրոջ Ավետարանի տարածման, Եկեղեցուն, հավատացյալ ժողովրդին ծառայության և նահատակվեց՝ հանուն Քրիստոսի: Կյանքի և գործի կամ խոսքի հատվածական դիտարկումը մարդուն որակելու սկզբունք դիտելու դեպքում պետք է նաև մերժենք բոլոր առաքյալներին և հրաժարվենք Նոր Կտակարանից, քանի որ Նոր Կտակարանի մեծ մասը գրվել է առաքյալների կողմից: Առաքյալները վախկոտությամբ Քրիստոսին մենակ թողեցին և փախան (Մատթ. 26.56, Մարկ. 14.50, ), սակայն պահի ազդեցության տակ մարդկային թուլությամբ գործված այս արարքը չէր, որ նրանց անձի իսկությունն էր բացահայտում, որովհետև բոլոր առաքյալները մեծագույն նվիրումով և անձնազոհությամբ Քրիստոսի Ավետարանը տարածեցին, եկեղեցիներ հաստատեցին, մարդկության կյանքը վերափոխեցին: Ոչ հատվածական, ամբողջական դիտարկումով տեսնում ենք, որ անգամ երբեմն քննադատվող հոգևոր սպասավորները մեծագույն նվիրումով են իրականացնում իրենց առաքելությունը՝ հանուն Աստծո, Եկեղեցու և հարազատ ժողովրդի:

Դժգոհության և քննադատության տեղիք են տալիս նաև Եկեղեցի-պետություն հարաբերությունները: Քիչ չեն մարդիկ, ովքեր դժգոհ են պետությունից՝ կապված սոցիալ-տնտեսական վիճակի, արտագաղթի և այլ իրողությունների հետ, և Եկեղեցի-պետություն հարաբերությունները տեսնելիս պետության հետ կապված նրանց դժգոհություններն անուղղակիորեն անցնում են նաև պետության հետ հարաբերություններ պահպանող Եկեղեցուն: Եկեղեցական տեսակետից ճիշտ չէ Եկեղեցի-պետություն հարաբերությունների խզումը, և Եկեղեցու գործունեության մեջ ոչինչ չի արվում Ավետարանի սկզբունքներին հակառակ:

**6. Մեր երկրի կրոնական գաղափարախոսական հիմքը համարվում է քրիստոնեությունը, սակայն հոգևորն ու աշխարհիկը տարանջատված են: Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորներն առաջին հերթին ենթարկվում են Եկեղեցու գլուխ կանգնած Հովվապետին: Ինչքանով է հնքուրույն հոգևոր իշխանությունը:**

Հոգևորականները նախ ենթարկվում են Հովվապետին, որովհետև գտնվում են նրա անմիջական ենթակայության ներքո: Այսպես նաև որևէ կազմակերպության աշխատակիցներն իրենց աշխատանքի մեջ նախ ենթանկվում են անմիջականորեն իրենց տնօրենին: Սակայն պետք է միշտ իմանալ, որ Հովվապետը հոգևոր հայր է բոլորի՝ Եկեղեցական սպասավորների և հավատացյալների համար: Եկեղեցին աստվածահիմն հաստատություն է, բայց իր առաքելությունն իրականացնելու համար անհրաժեշտություն ունի նաև վարչական բաժինների, վարչակազմակերպական գործունեության: Այդ ընկալումով հոգևորականները ենթարկվում են Եկեղեցու պետին, սակայն այդ ենթակայությունը կայանում է ի հոգևոր և ըստ Եկեղեցական կանոնների: Բայց հոգևոր հնազանդությունը չի վերացնում աշխարհիկ հնազանդությունը կամ չի բացառում հնազանդությունն աշխարհիկների հանդեպ: Այսպես հոգևորականը կարող է ենթարկվել, օրինակ, ոստիկանի, քաղաքային իշխանությունների, պետության կառավարության օրինական ցուցումներին, հրահանգներին: Ինչպես հոգին առավել է, քան մարմինը, և հավիտենականը առավել,

քան ժամանակավորը, այդպես և հոգևորի հանդեպ հնազանդությունը՝ առավել է, քան աշխարհական իրողությունների ու իշխանավորների առջև հնազանդությունը: Բայց առաքյալներն ուսուցանեցին հնազանդվել մարդկային ամեն իշխանության, և Քրիստոս ևս ասաց. «Տվե՛ք կայսրին՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. 22.21, Մարկ. 12.17, Ղուկ. 20.25):

Հոգևոր իշխանությունը, սակայն, չի ամփոփվում միայն կրոնական ասպարեզում: Ինչպես ասել է բողոքական հեղինակներից մեկը՝ պահանջել քրիստոնեությունից, որ այն սահմանափակվի միայն կրոնական ոլորտով, նշանակում է պահանջել քրիստոնեությունից, որ այն ինքնասպան լինի: Քանի որ քրիստոնեության սկզբունքները, ուսուցումները, պատվիրանները տարածվում են և՛ հոգևորականների, և՛ աշխարհականների վրա, այդպես և հոգևոր իշխանությունն ի հոգևորս տարածվում է բոլորի վրա:

### **7. Որո՞նք են ամենամեծ մոլորությունները՝ կապված հոգևոր իշխանության, հոգևորականների և Եկեղեցու հետ:**

Կարող ենք նշել մոլորություններ Եկեղեցու և հոգևորականության հանդեպ, ինչպես և մոլորություններ հոգևորականների կողմից: Եկեղեցու և հոգևորականների հետ առնչված մոլորություններից մեկն այն է, որ հաճախ կարող ենք տեսնել հոգևորականի անձի և Եկեղեցու նույնացում, ինչը ճիշտ չէ: Հոգևորականին նույնացնում են նաև ճգնավորի հետ, որը ևս սխալ ընկալում է: Հոգևորականն ու ճգնավորը միմյանցից տարբերվում են իրենց առաքելության և կյանքի ու ծառայության բնույթի մեջ: Ճգնավորը միայնակյացն է, ով մարդկանցից հեռու գնալով՝ ապրում է հարատև աղոթքների, աստվածաշտության մեջ: Հոգևորականն իր ծառայությամբ սպասավորում է մարդկանց: Այսպիսի շփոթում կար նաև Քրիստոսի ժամանակ, և Տերն Ինքը խոսեց այդ տարբերությունների մասին՝ բերելով Իր և Հովհաննես Մկրտչի համեմատությունը: Հովհաննես Մկրտչին ապրում էր անապատում ճգնավորի կյանքով, սնվում խիստ չափավոր, միայն մորեխ

ու վայրի մեղր էր ուտում, հագնում էր ուղտի մազից պատրաստված զգեստ (Մատթ. 3.1-4, Մարկ. 1.4,6, Ղուկ. 3.2): Քրիստոս ասաց. «Եկավ Հովհաննես Մկրտիչը, չէր ուտում և չէր խմում. և դուք ասացիք՝ նրա մեջ դե կա: Եկավ մարդու Որդին. ուտում է և խմում. և դուք ասում եք. "Ահա ուտող և խմող մի մարդ, մաքսավորների և մեղավորների բարեկամ"» (Մատթ. 11.18-19, Ղուկ. 7.33-34): Ճգնավորները սովորաբար ունեցվածք չէին ունենում, իսկ հոգևոր ծառայություն իրականացնողները կարող էին նաև ունեցվածք ունենալ: Հոգևորականի և ճգնավորի բնույթի շփոթում կար դեռևս վաղ քրիստոնեական շրջանում, երբ Եկեղեցու Սուրբ Հայրերից Գրիգոր Նազիանզացին ասում էր, որ մարդիկ սխալմամբ դժգոհում են իր դեմ, քանի որ ունի մի փոքր տուն և հարակից այգի: Ավետարանը նշում է, որ հարուստ կանայք իրենց ունեցվածքից մատակարարում էին Քրիստոսին (Ղուկ. 8.3), առաքյալները Տիրոջ հետ ունեին գանձանակ, որից ողորմություն էին բաժանում աղքատներին (Հովհ. 12.6, 13.29):

Մյուս մոլորությունը՝ հոգևորականների հետ կապված, հոգևորականի կերպարի չափազանց իդեալականացումն է: Մարդիկ պահանջում են, որ հոգևորականները լինեն հրեշտակների պես մշտադուրս և միշտ անհոգնաբեկ: Բայց հոգևորականը ևս մարդ է ուրիշների պես, կարող է ունենալ մարմնի տկարություն, հիվանդություն, տրամադրության անկում, հոգսերի, մտահոգությունների մեջ լինել, որով և երբեմն հնարավորություն չի ունենում իր ամբողջական ժամանակն ամենայն ընդառաջումով տրամադրել որևէ հավատացյալի: Երբ չենք շփոթում ճգնավորի և հոգևորականի կերպարները և դիտում ենք եկեղեցականի ծառայությունն առանց հոգևորականի կերպարի չափազանց իդեալականացման, տեսնում ենք, որ ունենք լավ հոգևորականներ, ովքեր ծառայում են՝ ի փառս Աստծո, հանուն ազգի և Սուրբ Եկեղեցու: Հնարավոր մոլորությունների դրսևորումից խուսափելու համար եկեղեցականներն իրենք պետք է մեծապես զգույշ լինեն, որպեսզի գայթակղության առիթ չդառնան այս կամ այն հավատացյալի համար: Եպիսկոպոսի ձեռնադրության կարգի մեջ հրահանգ է տրվում այնպիսի վարք դրսևորելու, որպեսզի հավատացյալների շրջանում սին բամբասանքների տեղիք չտան: Հո-

գևորականները պետք է միշտ պահպանեն հավատացյալների հետ հարաբերությունները հայր և որդի հարաբերությունների օրինակով և ոչ թե բարձրի ու ցածրի, պաշտոնական հանգամանք ունեցողի և հասարակ մարդու հարաբերությունների նմանությամբ, որպեսզի եկեղեցական նվիրապետությունը չվերածվի սովորական չինովնիկության:

## ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

### 1. Ի՞նչ է եկեղեցին: Ի՞նչ է նշանակում քրիստոնեական եկեղեցի:

«Եկեղեցի» բառը հունարեն «էկլեսիա - εκκλησία» բառից է, որը նշանակում է մարդկանց հավաքականություն, կրոնական իմաստով՝ հավատացյալ մարդկանց հավաքականություն: Ուրեմն, եկեղեցին՝ լայն իմաստով, բոլոր հավատացյալներն են: Պողոս առաքյալը եկեղեցի հասկացությունը պարզ ձևով բացատրելու համար համեմատություն է անում մարդկային մարմնի հետ՝ նշելով, որ եկեղեցին խորհրդանշական իմաստով Քրիստոսի մարմինն է, և մենք՝ նրա անդամները (Ա Կորնթ. 12.27; Եփես. 1.23, 4.12; Կող. 1.24, 2.19): Քրիստոս եկեղեցու գլուխն է (Կող. 1.18):

Սակայն «եկեղեցի» բառը հոմանուն բառ է և այլ նշանակություններ ևս ունի: Եկեղեցաբանության մեջ եկեղեցի հասկացության մի քանի բացատրություններ կան: Հայ եկեղեցական հեղինակներից դրան ավելի մանրամասն անդրադարձել են Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը: Բացի հավատացյալների հավաքականություն լինելուց, եկեղեցին նաև հոգևորականների հավաքականությունն է կամ հոգևոր իշխանությունը, ինչպես ասվում է Մատթեոսի Ավետարանում խրատվելու ենթակա մարդկանց մասին. «Ապա թե և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր» (Մատթ. 18.17): Ինչպես նաև «եկեղեցի» ասելով՝ հասկանում ենք աղոթքի, պաշտամունքի վայրը (Հուդիթ 6.12,19, Ա Կորնթ. 11.18): Դրա համար էլ այդ նպատակով նվիրագործված շինությունները կոչում ենք եկեղեցիներ:

Հավատամքի մեջ, որն արտասանվում է պատարագի արարողության ընթացքում, նշվում է, որ մենք հավատում ենք մեկ, ընդհանրական, առաքելական, սուրբ եկեղեցու: Սակայն այդ մեկ անբաժան եկեղեցու մեջ կան մի քանի մասեր՝ Հաղթական եկեղեցի և Ջինվորյալ եկեղեցի: «Հաղթական եկեղեցի» ասելով՝ հասկանում ենք վախճանված սրբերի հավաքականությունը, և բառը ցույց է տալիս, որ սա այն հավատացյալների ժողովն է, ովքեր աշխարհի դեմ պատերազմելով՝ հաղթանակ են տարել: Այս եկեղեցու մաս են կազմում նաև այն ննջեցյալները, որոք եկեղեցու աղոթքի շնորհիվ կարող են հավիտենական փրկության արժանանալ: Այդ ննջեցյալների համար է, որ հոգեհանգստյան կարգ է կատարվում: Ջինվորյալ եկեղեցին այս աշխարհում ապրող հավատացյալների հավաքականությունն է, և զինվորյալ է կոչվում, որովհետև այդ եկեղեցու անդամները դեռ աշխարհի փորձությունների, չարիքների դեմ պատերազմի մեջ են և պետք է հոգևոր մարտ մղեն՝ կռվելով զինվորյալ բանակների նման: Ջինվորյալ եկեղեցին իր հերթին բաժանվում է երկու մասի՝ Ուսուցանող եկեղեցի, որ հոգևորականներն են, և Ուսանող եկեղեցի՝ հավատացյալների ամբողջությունը:

## **2. Ո՞րն է եկեղեցու և վանքի տարբերությունը:**

Եկեղեցին, եթե շինությունը նկատի ունենք, աղոթավայրն է, որ կառուցված է հատուկ օրհնությամբ ու նվիրագործումով, օծումով և հաստատված է հավաքական կամ ընդհանրական աղոթքների, աստվածպաշտական արարողությունների համար: Եկեղեցիները լինում են բնակավայրերում՝ հավատացյալների հոգևոր կարիքների համար: Վանքերն առավելաբար լինում են նաև բնակավայրերից դուրս և նախատեսված են վանականների կեցության, վանականների աղոթական կյանքի համար: Վանքն ունենում է եկեղեցի՝ պաշտամունքային վայր, ինչպես նաև վանաբնակների համար հատուկ կացարաններ: Վանքերը հիմնականում շինության առումով վանական համալիրներ են, որտեղ բացի եկեղեցուց կան նաև վանական կյանքի համար անհրաժեշտ շինությունները, կացարանները, ուսումնարանները, դպրանոցները,

գրադարանները և այլն: Այսպիսին են եղել միջնադարյան մեր զարգացած վանքերը:

Ցավոք սրտի, Հայոց Ցեղասպանության տարիներին, ինչպես նաև խորհրդային իշխանության աթեիստական տարիներին շատ եկեղեցիներ ու վանքեր ավերվեցին, վանական հաստատությունները դադարեցրին իրենց գործունեությունը, բազմաթիվ եկեղեցականներ, վանականներ սպանդի ենթարկվեցին: Այսօր աշխատանքներ են իրականացվում եկեղեցաշինության հետ մեկտեղ նաև վանքերը վերանորոգելու, վանական կյանքը հաստատելու, որտեղ վանականները մշտական աղոթք պիտի հնչեցնեն և կրոնական մտքի աշխատություններ պատրաստեն:

### **3. Եկեղեցիներն իրենց կառուցվածքով լինում են բազիլիկ, խաչաձև, բուլորաձև... Ի՞նչ խորհուրդ ունեն յուրաքանչյուրը:**

Եկեղեցական ճարտարապետության մեջ խորհուրդ ունի հատկապես եկեղեցիների խաչաձև հիմքը, ինչը նշանակում է, որ եկեղեցին հիմնված է Քրիստոսի՝ խաչելությամբ իրագործված փրկագործությամբ: Բազիլիկ եկեղեցիները համեմատաբար առավել վաղ շրջանի եկեղեցիներ են, որոնք պարզապես ավելի պարզ կառույց ունեն: Սակայն եկեղեցական ճարտարապետությունը միշտ միացած է հոգևոր-կրոնական խորհրդանշաններին: Եկեղեցու քարերը, որ շաղախով միանում ու եկեղեցու կառույցն են կազմում, խորհրդանշում են տարբեր տարիքի և սեռի մարդկանց, որոնք, միանալով իբրև հավատացյալներ, կազմում են Քրիստոսի եկեղեցին: Եկեղեցիների դուռը հիմնականում բացվում է դեպի արևելք, և եկեղեցիների խորանը, որի վրա մատուցվում է պատարագը, լինում է արևելյան կողմում, որովհետև, ըստ Աստվածաշնչի, Քրիստոսի երկրորդ գալուստը լինելու է արևելքից (Մատթ. 24.27): Բացի դրանից արևելքը հոգևոր լույսի, լուսավորության խորհրդանշան է:

Եկեղեցիները կառուցվում են հիմնօրհների արարողությամբ, այսինքն՝ օրհնվում են եկեղեցու հիմքերը և հիմքերի մեջ տեղադրվում են քարեր՝ Ավետարանիչների, առաքյալներ-

րի, Պողոս Առաքյալի և Գրիգոր Լուսավորչի անուններով, ինչը նշանակում է, որ Եկեղեցին հիմնված է առաքյալների, մարգարեների, Քրիստոսի ուսուցման հիմքի վրա: Եկեղեցու ներսի սյուները խորհրդանշում են առաքինությունները, իսկ սյուները միացնող կամարները՝ սերը, որով գործվում են առաքինությունները: Սլացիկ գմբեթը ցույց է տալիս դեպի երկինք բարձրանալը, և գմբեթների վրա խաչի զետեղումը՝ խաչով, խաչի զորությամբ Եկեղեցու պսակված լինելը:

Եկեղեցական հեղինակները եկեղեցին իր խորհրդով նմանեցնում են նոյյան տապանին. ինչպես որ տապանում պատասպարվողները փրկվեցին ջրհեղեղից, այնպես էլ եկեղեցու ներսում գտնվողները, այս ակեկոծ կյանքի հորձանքները հաղթահարելով, փրկության են արժանանալու: Եկեղեցական շինությունը ոմանք դիտում են որպես միայն ճարտարապետական կառույց: Սակայն եկեղեցին իր բուն էությանը վեր է սուկ ճարտարապետական կառույց լինելու իրողությունից և այն վայրն է, որտեղ աստվածային ներկայությունն է, որտեղ երկնային շնորհները տրվում են հավատացյալներին աղոթքների, եկեղեցական խորհուրդների, արարողությունների միջոցով:

#### **4. Եկեղեցու ճարտարապետական դիմագիծը կարող է ուղիղ կապ ունենալ հավատքի, դավանանքի ուղղության հետ:**

Եկեղեցական կառույցներն արտահայտությունն են նաև տվյալ ժողովրդի կրոնական դավանության, հոգևոր ապրումների ու ըմբռնումների: Մեր եկեղեցիները համեմատաբար ավելի պարզ են, երբեմն ավելի ցածր, քան եվրոպական հսկայական տաճարները: Հայկական եկեղեցիներում մարդը չի փոքրանում եկեղեցական շինության մեծության ու բարձրության մեջ, այլ Աստծո տունն մուտք գործած լինելու տպավորությունն է ունենում: Ուղղափառ կամ կաթոլիկ դավանության եկեղեցիները հաճախ լինում են խիստ բարձր և երբեմն նույնիսկ ծանրաբեռնված պատկերաքանդակներով ու արձաններով թե՛ եկեղեցու արտաքին պատերին և թե՛ եկեղեցու ներսում: Այստեղ մարդն ավելի փոքր է թվում եկեղեցու

հսկա տարածության մեջ: Բացի դրանից, այդ եկեղեցիներին հատուկ է շքեղազարդումը, որը երբեք մաս չի կազմել հայ եկեղեցական ճարտարապետության: Հայկական եկեղեցիները, կարելի է ասել, իրենց մեծությունն ու վեհությունը ցույց են տալիս իրենց պարզության մեջ:

Այսօր, իհարկե, եկեղեցական ճարտարապետությունը նաև արդիական կառույցներ է կերտում, և աշխարհի տարբեր երկրներում, ավանդական եկեղեցիներից առավելաբար Կաթոլիկ եկեղեցում կարող ենք տեսնել արդիական ճարտարապետության դրսևորումներ, ինչը, սակայն, չի արվում եկեղեցական ճարտարապետության ավանդական ըմբռնմանը դեմ գնալու հաշվին: Ներկայումս հայ եկեղեցական ճարտարապետությունը ևս կարող է զարգացումներ ապրել, նորովի եկեղեցական շինությունների նախագծեր ներկայացնել՝ նոր, արդիական լուծումներով, բայց հավատարիմ մնալով հայ ճարտարապետության նվիրագործված ավանդույթներին:

### **5. Ինչո՞ւ են եկեղեցիների շենքերը շքեղ, լի բազում խորհրդանիշներով, այլ ոչ՝ հասարակ ու համեստ:**

Մեր եկեղեցիները համեստ կառույցներ են, եթե համեմատենք օրինակ Քյոլնի կաթոլիկ տաճարի, Սիլանի տաճարի, Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարի կամ ռուսական հայտնի եկեղեցիներից Մոսկվայի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու հետ: Այս եկեղեցիներում հաճախ սովորություն կա ճոխ սրբապատկերների, ոսկե զարդերի, ոսկեջրած գմբեթների օգտագործման, ինչը հատուկ չէ մեր եկեղեցական կառույցներին: Այս իմաստով մեր եկեղեցիները համեստ են, բայց ճոխ են իրենց ճարտարապետական հորինվածքի և ինքնատիպության մեջ:

Եկեղեցում զետեղված առարկաները խորհրդանշաններ են, որոնք պատկերում են Քրիստոսի խաչը, հիշեցնում երկնային արքայության, հանդերձյալ կյանքի, անդրաշխարհյան իրողությունների մասին: Այդ խորհրդանշաններն օգնում են նաև հավատացյալներին սովորական կենցաղային առարկաներից անցնել դեպի հավերժություն պատկերող առարկաները և եկեղեցում աղոթելիս չշեղվել առօրյա մտածումների պատճառով ու հոգու խորին ապրումով զրուցել Աստծո հետ:

**6. Եկեղեցին կարող է նպաստել երկրի ոչ միայն հոգևոր, մշակութային, այլև տնտեսական, քաղաքական առումով զարգացմանը:**

Եկեղեցու հիմնական առաքելությունը հոգևոր է: Եկեղեցին ծառայություն է իրականացնում մարդու փրկության, հավիտենական կյանքին պատրաստելու, աստվածային շնորհները բաշխելու՝ այս կյանքի ընթացքի համար կանոններ կարգելով, հորդորներ տալով, մարդուն կատարելության և նույնիսկ սրբացման առաջնորդելով: Այս իմաստով Եկեղեցին հիմնականում նպաստում է հոգևոր զարգացմանը, իսկ մշակույթը միջոց է այդ նպատակի համար:

Ճիշտ է ասված, որ կրոնը համար է առանց մշակույթի: Այստեղ գիրքն ու գրականությունը, երաժշտությունը, ճարտարապետությունն ու արվեստը, նկարչությունը Եկեղեցու լեզուն են, որով Եկեղեցին խոսում է իր հավատացյալների հետ: Եվ սրանով է, որ անքակտելի է Եկեղեցու ու մշակույթի կապը, քանի որ մշակույթը նաև Եկեղեցու արտահայտչաձևերից մեկն է: Ինչ վերաբերում է տնտեսական և քաղաքական զարգացմանը, ապա Եկեղեցին ուղղակիորեն անելիք չունի այս բնագավառներում: Քրիստոսի հեղինակությունից ևս զգուշանում էին քաղաքական լծակներ ունեցողները, սակայն Քրիստոս ասաց. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ» (Յովհ. 18.36): Ուրեմն, Եկեղեցին ուղղակիորեն չի կարող առնչություն ունենալ այս աշխարհի թագավորության գործառնությունների հետ: Իհարկե, պետականության բացակայության պայմաններում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին է, որ նաև աշխարհաքաղաքական իրողություններում առաջնորդել է իր ժողովրդին, ստանձնել այլ պետությունների հետ հայ ժողովրդի համար բանակցողի, հայրենիքում ազգային կյանքի կարգավորության, այլև ազատության ու անկախության համար անհրաժեշտ նախաձեռնողի դերը: Բայց Եկեղեցին միշտ գիտակցել է, որ իր հիմնական առաքելությունը հոգևոր է, մարդկանց փրկության առաջնորդելն է, Քրիստոսի Ավետարանն ուսուցանելը:

Քաղաքական և տնտեսական բնագավառների զարգացման կամ բարելավման համար Եկեղեցին իր ազդեցությունն

է բերում հոգևոր ուլորտի միջով՝ քրիստոնեական դաստիարակությամբ կրթելով, աստվածային շնորհներով վերափոխելով մարդկանց, որպեսզի լինեն ազնիվ ու արդար, բարեսեր ու ողորմած, առաքինի և ծառայասեր: Աստծո օգնականությամբ և այս հատկությունների զորացումով քաղաքական ու տնտեսական կյանքում էլ կարձանագրվեն բարի արդյունքներ:

### **7. Ո՞րն է հոգևորականի առաքելությունը երկրի վրա և Եկեղեցում:**

Քրիստոս համբարձվելիս առաքյալներին ասաց. «Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Յոր և Որդու և Սուրբ Յոգու անունով: Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի» (Մատթ. 28.19-20): Ուրեմն, հոգևորականի առաքելությունը մարդկանց Քրիստոսի ուսմունքը սովորեցնելն է կամ Ավետարանը քարոզելը, մկրտելը, որ մարդկանց դարձնում է քրիստոնյա, երկնքի արքայության ժառանգորդ, մարդկանց աստվածային շնորհները փոխանցելը: Քրիստոս նաև մեղքերը ներելու իշխանությունը տվեց առաքյալներին՝ ասելով. «Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի. եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Յովհ. 20.22-23)», «ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում: Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, թող արձակված լինի երկնքում» (Մատթ. 18.18): Առաքելական հաջորդականությամբ այս լիազորությունները, ինչպես և ծառայության պարտականությունները ձեռնադրությամբ անցնում են հոգևորականի սպասավորությունն ստանձնող մարդկանց, և այս ծառայությունն իր բնույթով վախճանաբանական է, այսինքն՝ միտված է մարդկանց պատրաստելու հավիտենության մեջ կեցությանը, գոյությանը: Ճիշտ է, Քրիստոսի պատվիրանները վերաբերում են այս երկրում ապրելու և գործելու ձևերին, ուղղորդումներ են տալիս հավատացյալներին, ներդաշնակություն բերում երկրային կյանքում, բայց դրանք նպատակ ունեն մարդուն արժանի դարձնելու և պատրաստելու հավիտենության: Այս առումով հոգևորականի առաքելությունը երկրի վրա և Եկեղեցում

նպատակ ունի մարդուն հոգևոր խնամք մատուցելու, պարզևելու աստվածային շնորհներն ու օրհնություն բարձրացնելու երկինք և անդամ դարձնելու նաև երկնային Եկեղեցու, ուր հոգևոր վայելքները, երջանկությունը, սերն ու խնդությունը պարուրելու են մարդու հավիտենական գոյությունը Աստծո մշտական բերկրալի ներկայության մեջ:

### **ԷԿՈՒՄԵՆԻԶՄ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՉԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

#### **1. Ի՞նչ է նշանակում «Էկումենիկ» բառը, և ի՞նչ է իրենից ներկայացնում էկումենիկ շարժումը:**

Էկումենիկ բառը ծագում է հունարեն οἰκουμένη բառից, որ Չռոմեական կայսրության շրջանում օգտագործվում էր բնակեցված երկիր հատկանշելու համար: Այն արտահայտում է նաև համախմբվածության, միասնության իմաստ և եկեղեցական ոլորտում այսօր գործածվում է Եկեղեցիների միասնությանը միտված շարժումը բնութագրելու համար: Էկումենիկ շարժում հաստատելու փորձեր արել է Ուղղափառ Եկեղեցին, սակայն ներկայումս էկումենիկ շարժման հեղինակներն առավելաբար բողոքականներն են: Էկումենիզմը ձևավորվել է «Կյանք և գործ», «Չավատք և կարգ» երկու եկեղեցական, բողոքական հոսանքներից, որոնք 1937 թ. Օքսֆորդի և Էդինբուրգի համաժողովներից հետո որոշեցին վերածվել մեկ կազմակերպության՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, որը վերջնականապես հաստատվեց 1948 թ.: Եկեղեցիների համաշխարհային խորհուրդն էկումենիկ շարժման գլխավոր մարմինն է, որի առաջնորդները՝ գլխավոր քարտուղարները, խորհրդի ստեղծման օրվանից մինչև հիմա երբեք չեն եղել անմիջական առաքելական հիմնադրություն ունեցող եկեղեցիների անդամներ, այլ եղել են միայն բողոքական եկեղեցիների անդամները: Նրանց ղեկավարության ներքո է հիմնականում ընթացել և այսօր էլ ընթանում այդ շարժման աշխատանքները:

## **2. Որո՞նք են այս շարժման կարևորագույն հիմնահարցերը:**

Էկոմենիկ շարժումը ձգտում է Եկեղեցիների համագործակցության սերտացման՝ Ավետարանի քարոզչության, սոցիալական ծառայության, կրթական բնագավառներում, լինում են նաև աստվածաբանական, եկեղեցաբանական երկխոսություններ՝ Քրիստոսի մեկ Եկեղեցու միությունը և Եկեղեցիների միջև հաղորդական միությունը վերահաստատելու համար, քանի որ դավանաբանական տարբերություններ ունեցող Եկեղեցիների անդամներն այլ Եկեղեցիներում Սուրբ Հաղորդություն չեն ստանում: Էկոմենիկ շարժումը, իհարկե, նաև ուշադրություն է դարձնում աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, բարեգործական բազում ձեռնարկներով ջանքեր ներդնում աղքատության դեմ պայքարի, մարդկանց խնամքի գործում, իր ձայնը բարձրացնում անարդարությունների դեմ, կոչ անում խաղաղության հաստատման, մարդկանց միջև համերաշխության: Այսինքն՝ բացի կրոնական հարցերից, Էկոմենիկ շարժումը նաև իր գործունեության շրջանակով առնչվում է քաղաքական, տնտեսական, ընկերային հարցերի, փորձում նպաստել նաև այդ ոլորտներում լուծումներ գտնելուն: Տարբեր էկոմենիկ համաժողովներով արժևորվում է նաև Եկեղեցիների հոգևոր-մշակութային, եկեղեցական-գրական հարուստ ժառանգությունը, քննարկվում են հոգևոր կյանքի զորացման նպատակով Եկեղեցիների առաքելության առաջնահերթությունները, առկա մարտահրավերները և դրանց հաղթահարման ճանապարհները:

## **3. Ի՞նչ առնչություն ունի էկոմենիզմի հետ Հայ Առաքելական Եկեղեցին:**

Հայ Առաքելական Եկեղեցին էկոմենիկ շարժման մեջ ներգրավվել է Վազգեն Ա Կաթողիկոսի օրոք՝ 1962 թվականից, երբ Ամենայն Հայոց Հայրապետն ապրիլի 26-ին ԵՅԽ-ին անդամակցելու դիմում է ներկայացրել: Եկեղեցիների համաշխարհային խորհրդի աշխատանքներին Հայ Առաքելական Եկեղեցին մասնակցել է 1962 թ. օգոստոսին փարիզյան

նստաշրջանում: Այս նույն ժամանակ ԵՅԽ-ին անդամակցելու դիմում էր ներկայացվել նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կողմից: Խորհրդային ժամանակաշրջանում լարված էին հարաբերությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միջև, քանի որ դրսում կարծում էին, որ կունունիստական ռեժիմի ներքո Սուրբ Էջմիածինը պիտի ծնկի գա, և փորձում էին Էջմիածնին հակակշիռ ստեղծել Կիլիկիո կաթողիկոսության միջոցով: Ցավոք, Եկեղեցու պառակտման և ժողովրդի ի հոգևորս մասնատման այս բացասական գործընթացին լծվել էր 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին մեր ժողովրդի գոյության պայքարներում աչքի ընկած «Չայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը, որի ներկայացուցիչներն արտասահմանում այսօր էլ երբեմն, դժբախտաբար, փորձում են ազդեցության տակ պահել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, նրա թեմերի և եկեղեցականների գործունեությունը: Էկունենիկ շարժման մեջ նույնպես Չայ Եկեղեցու պառակտման վտանգը կասեցնելու համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատվիրակները հայտարարություն են արել ԵՅԽ-ի Փարիզի նստաշրջանի դիվանին՝ Սուրբ Էջմիածնի գերագահության ներքո Չայ Եկեղեցու մեկ ամբողջություն լինելու և դրանով հանդերձ միաժամանակ Նվիրապետական Աթոռների առանձին իրավասություններ ունենալու վերաբերյալ, որպեսզի Չայ Եկեղեցուց ստացված երկու դիմումները տպավորություն չթողնեն երկու տարբեր և անջատ եկեղեցիների: Այս հայտարարության տակ ստորագրել էր նաև Անթիլիասի ներկայացուցիչը՝ Գարեգին վարդապետ Սարգիսյանը, ով հետագայում դարձավ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը, այնուհետ՝ Գարեգին Ա Ամենայն Չայոց Կաթողիկոս: Այսուհանդերձ, հայտարարության ընթերցումից հետո ժողովը, այնուամենայնիվ, ընդունել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դիմումը, իբրև առանձին եկեղեցու դիմում, և կարծում են՝ ոչ առանց Անթիլիասի ներկայացուցիչների երկակի քաղաքականության:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության առանձնաբար հանդես գալն էկունենիզմի մեջ շարունակվեց տասնամյակներով: Սակայն հիմա, երբ վերահաստատված է Չայաստանի

անկախությունը, խանգարող աթեիստական, եկեղեցամարտ քաղաքականություն չի տարվում պետության կողմից, որը պատճառ էր բերվել ժամանակին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հակակշիռ ուժ ստեղծելու համար, և եկեղեցական շրջանակներում աշխատանքներ են կատարվում մեր Սուրբ Եկեղեցու միությունը հաստատուն դարձնելու, նաև էկումենիկ շարժման մեջ կարտահայտվի Հայ Եկեղեցու միասնաբար հանդես գալը և համատեղ գործունեությունը:

Հայ Եկեղեցու ներկայացուցիչները մասնակցում են էկումենիկ բոլոր կարևոր համագումարներին, որոնց ընթացքում ընթերցվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը և հորդորները էկումենիկ ժողովների մասնակիցներին: Նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում են էկումենիկ բնույթի հանդիպումներ և ժողովներ կազմակերպվում: Միջեկեղեցական համագումարների ընթացքներում մեր Եկեղեցու ներկայացուցիչները մասնակցություն են ունենում հարցերի քննարկմանը, տարբեր բնագավառներում Եկեղեցիների համագործակցության ամրապնդման գործում, աստվածաբանական քննարկումներում և երկխոսություններում:

**4. Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ (ԵՅԽ) և էկումենիզմ. շատերն այն դիտարկում են իբրև միջկրոնական երկխոսություն և համագործակցություն, սակայն արդյո՞ք ԵՅԽ-ն գերեկեղեցի չէ մեծ հաշվով՝ հիմնված բոլոր Եկեղեցիները միավորելու նպատակով ստեղծած մեկ ընդհանուր գաղափարի վրա:**

էկումենիկ շարժումն ունի ինչպես համակրողներ, այնպես էլ հակակրողներ: Կան Եկեղեցիներ, հոգևորականներ, որոնք խիստ դեմ են էկումենիկ շարժմանը, քանի որ կարծիքներից մեկով, այն միտում ունի վերածվելու գերեկեղեցու՝ դավանաբանությունների, փորձառության, ավանդությունների խառնուրդ ներկայացնելով: Չնայած որ ԵՅԽ-ն իր հայտարարություններից մեկում նշել է, որ նպատակ չկա գերեկեղեցի կազմելու, այլ քրիստոնեական միությունն ու միասնությունը հաստատելու ջանքեր են գործադրվում, այնուամենայնիվ, Վրաց Ուղղափառ Եկեղեցին 1997 թ., Բուլղար Ուղղափառ Ե-

կեղեցին 1998 թ. դուրս եկան ԵՅԽ-ի անդամությունից: Այս դեպքերից հետո Ռուս և Սերբ Ուղղափառ Եկեղեցիների նախաձեռնությամբ Թեսալոնիկում 1998 թ. Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների հանդիպում կազմակերպվեց՝ ԵՅԽ-ից Վրաց Եկեղեցու դուրս գալու կապակցությամբ՝ ի մասնավորի քննարկելու նաև յոթ տարին մեկ գումարվող ԵՅԽ-ի հերթական 1998-99 թթ. Ձիմբաբվեի մայրաքաղաք Չարարեում ութերորդ գլխավոր համագումարին մասնակցության հարցը:

ԵՅԽ-ի գլխավոր համագումարին նախորդող Ուղղափառ Եկեղեցիների այդ հանդիպման ընդունած փաստաթղթում արձանագրված էր, որ հաճախ ԵՅԽ համագումարներին, ինչպես օրինակ 1991 թ. Ավստրալիայի մայրաքաղաք Կանբերրայում ԵՅԽ յոթերորդ գլխավոր համագումարին, 1992 թ. Կենտրոնական կոմիտեի նիստերում ուղղափառ պատգամավորները վճռական դիրքորոշում են որդեգրել Աստվածաշնչի համար գործածվող ինկլուզիվ՝ ներառական լեզվի դեմ, որը 20-րդ դարի 70-80-ականներին արդեն մշակվել էր ֆեմինիստների կողմից. այն դերանունների և այլ խոսքի մասերի հավաքածու է՝ սեռը չարտահայտելու համար, և այս հնարքով արդեն բավականին Աստվածաշնչեր են լույս տեսել: Սրանցում Ծննդոց Գրքում Եվան կոչվում է ոչ թե Ադամի օգնական, այլ գործակից, հնարավորինս փոխված են այն բառերն ու արտահայտությունները, որոնք սեռ կարող են հատկանշել հատկապես Աստծո պարագային և այլն: Այս ժողովներում բացի Աստվածաշնչի ներառական լեզվին դեմ լինելուց, ուղղափառները հանդես են եկել կանանց ձեռնադրության, սեռական փոքրամասնությունների իրավունքների հետ կապված անընդունելի դիրքորոշումների դեմ: Սակայն այդ հարցերով նրանց հայտարարություններն ընդունվել են որպես փոքրաթիվների հայտարարություն, քանի որ բողոքականներն են մեծ թիվ կազմում ԵՅԽ-ում, որով և ուղղափառները չեն կարողանում ազդել համապատասխան գործընթացների և ԵՅԽ-ի բարոյական բնույթի վրա: Արդյունքում Ուղղափառ Եկեղեցիները ԵՅԽ-ին հայտարարեցին, որ ԵՅԽ-ին ուղղափառության անդամության ներկա ձևն իրենց այլևս բավարար չէ, և եթե ԵՅԽ-ի կառույցներն արմատականորեն

չփոխվեն, ապա Ուղղափառ Եկեղեցիները նույնպես դուրս կգան ԵՅԽ-ից, ինչպես դա արել է Վրաց Ուղղափառ Եկեղեցին: Այնուամենայնիվ, Ուղղափառ Եկեղեցիները դեռ շարունակում են անդամ լինել ԵՅԽ-ի:

**5. Էկումենիկ շարժմանը շատ ավանդական Եկեղեցիներ դեմ էին և շարժման սկզբնական փուլում բացառում էին իրենց մասնակցությունը: Նույնիսկ այսօր էլ ծայրահեղ մոտեցումների կարելի է հանդիպել ոչ միայն շարքային հավատացյալների, այլև աստվածաբանական միջավայրում. էկումենիզմն ընկալվում է որպես Յամաշխարհային տիրապետության, Նեոի գալու նախերգանք՝ ծաղկած քրիստոնեական բարի ձգտումների քողով: Շատերն այս շարժումը կապում են մասոնականության հետ: Ինչպիսի՞ն են այսօր մեր ընկալումները էկումենիկ շարժման մասին:**

ԵՅԽ անդամությանը միշտ դեմ է արտահայտվել Արտասահմանի Ռուս Ուղղափառ Եկեղեցին՝ քննադատելով Մոսկվայի Պատրիարքության առաջնորդությամբ Ռուս Ուղղափառ Եկեղեցու մասնակցությունը: 1948 թ. ԵՅԽ-ի կազմությունից սկսած՝ Ուղղափառ Եկեղեցիներն անմիջապես չէ, որ մասնակցել են էկումենիկ շարժմանը, բայց հետո դիրքորոշումը փոխվել է, որովհետև այն տեսակետն է առաջ քաշվել, որ սա մի դաշտ է, որտեղ կարելի է ուղղափառությունը՝ ճիշտ հավատքը քարոզել: Ուրեմն, ռուսները, մյուս ուղղափառներն էկումենիզմի մեջ են մտել ուղղափառության քարոզչության հիմնական նպատակով: Նրանք պնդում են, որ ճշմարիտ քրիստոնեական հավատքը միայն իրենք են պահել, և այսօր էկումենիկ բազմաթիվ ժողովներում, որին մասնակցում են և Յայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչները, շատ հաճախ ուղղափառ ավանդույթների, ուղղափառ հոգևոր ժառանգության վերաբերյալ դասախոսություններ ու քննարկումներ են լինում:

Կաթոլիկ Եկեղեցին ԵՅԽ-ի անդամ չէ ի սկզբանե, և չի մասնակցում էկումենիզմի գործընթացներին, այլ պարզապես էկումենիկ տարբեր համագումարներում հետազայում սկսել է հանդես գալ միմիայն դիտորդի կարգավիճակով: Սրա պատ-

ճառը Կաթոլիկ Եկեղեցու եկեղեցաբանությունն է, ըստ որի՝ Կաթոլիկ Եկեղեցին է ամբողջությունը, և ոչ թե ինքը պիտի միության ձգտող շարժումներին մասնակցի, այլ իրենից՝ ամբողջությունից անջատվածները պետք է գան և միանան Կաթոլիկ Եկեղեցուն: Այսպիսով, քննադատական տեսակետով նայելիս հայտնի է դառնում, որ Ուղղափառներն էկումենիզմի մեջ մտել են իրենց դիրքորոշումները և վարդապետությունը ուրիշների վրա տարածելու համար, Կաթոլիկները, իրենց վեր դասելով, անդամի կարգավիճակով չեն մասնակցում էկումենիկ շարժմանը, քանզի սպասում են, որ այդ մյուսները պետք է դեպի կաթոլիկություն գան և ոչ թե կաթոլիկները դեպի իրենց գնան: Իսկ բողոքականները, դարեր շարունակ Կաթոլիկ Եկեղեցու կողմից հերձված համարվելով, իրենց համար կարծես թե վավերականության խնդիր են լուծում՝ շփվելով անմիջականորեն առաքելական հիմնավորում ունեցող Եկեղեցիների հետ:

Մենք տեսնում ենք, որ այսօր բողոքական աշխարհում քրիստոնեական արժեքների ազատ մեկնաբանություն է կատարվում՝ մարդկային ցանկությունների ու կրքերի համեմատ: Անգլիկան Եկեղեցին, Արևմտյան Եվրոպայի բողոքական շատ եկեղեցիներ ընդունում են միասեռականների օրինական լինելը և նրանց պսակադրությունը կատարում եկեղեցիներում: Անգլիկան Եկեղեցու մաս կազմող Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցու պետ է դառնում բացահայտ միասեռական տղամարդ, ով ջատագովում է իր ապրելակերպը՝ շրջելով իր ամուսնու հետ: Կանանց ձեռնադրությունից կանանց եպիսկոպոսությանն անցնելու քայլերը (ընդ որում այդ կանայք էլ կարող են միասեռականներ լինել) արդեն լուրջ դժվարություններ են ստեղծում Անգլիկան Եկեղեցու հետ եկեղեցաբանական կամ աստվածաբանական երկխոսությունների, չնայած որ Անգլիկան Եկեղեցու կողմից վերջին տարիներին ևս դիմումներ են եղել տարբեր Եկեղեցիներին երկխոսությունների շարունակման նպատակով:

Էկումենիզմի շրջանում համագործակցությունն ավանդական քրիստոնեական արժեքներն աղճատող բողոքական եկեղեցիների հետ, որոնք էկումենիզմի մղիչ ուժն ու բուն մասն են կազմում, արդեն լուրջ մտորելու առիթ պիտի տա Եկեղե-

ցիների միջեկեղեցական հարաբերությունների գործընթացի բոլոր պատասխանատուներին: Մինչդեռ կարծես թե շարունակվում են ԵՅԽ-ի կենտրոնական կոմիտեին, տարբեր խմբերին անդամակցելու եկեղեցիների ցանկությունները, ինչպես նաև պատրաստական աշխատանքները գլխավոր համագումարներին մասնակցելու: Մեծ համագումարներին ներկա են լինում նաև այնպիսի բողոքական եկեղեցիներ, որոնք մեզ մոտ` Հայաստանում, համարվում են վնասակար աղանդներ, մինչդեռ էկումենիկ ժողովներում եկեղեցու ներկայացուցիչները համահավասար են համարվում այդ աղանդների ներկայացուցիչներին: Դեռ ավելին, տարբեր երկրներում էկումենիկ խմբերի կողմից բացված կազմակերպություններում, որոնցից է Աստվածաշնչի և սուրբգրային տարբեր հրատարակություններով զբաղվող Աստվածաշնչային ընկերությունը, շատ հաճախ հարկ է համարվում պարտադիր ներկայությունը և համահավասար գործունեությունն ու ձայնի իրավունքը ոչ միայն այդ երկրներում գործող տարբեր եկեղեցիների, այլև տարաբնույթ աղանդավորական կազմակերպությունների: ԵՅԽ-ի գլխավոր համագումարներն արդեն պարունակում են սերմերը` վերածվելու կրոնական պլուրալիզմից առավել միջկրոնական համահարթեցման, քանի որ ամենակարևոր նշանակության համագումարներին հրավիրվում և խոսքեր են ասում նաև այլ կրոնների ներկայացուցիչներ, ինչպես օրինակ` 2006 թ. Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում տեղի ունեցած ԵՅԽ իններորդ գլխավոր համագումարին: Էկումենիզմը բերում է շատ դրական բաներ` աշխարհի բազմաթիվ քրիստոնյաների հանդիպում ու մեկտեղում, միասնական աղոթք, որոնք, ցավոք, առավելաբար արվում են բողոքական արարողակարգերի համաձայն, սոցիալական բազմաթիվ ծրագրերի իրականացում տարբեր երկրներում: Սակայն էկումենիզմի շրջանակում հատկապես այսօր ակնհայտորեն դրսևորվող խիստ բացասական երևույթները նկատի ունենալով` առաքելահաստատ եկեղեցիները ժամանակն է արդեն, որ առնվազն գոնե ճշտեն էկումենիկ շարժմանը մասնակցելու իրենց ձևաչափը և ներգրավվածության աստիճանը:

**6. ԵՅԽ-ի անդամ Եկեղեցիներից յուրաքանչյուրը գործունեություն է ծավալում տարբեր երկրների սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական պայմաններում: Նրանք ունեն կառավարման և կազմակերպման տարբեր ոճեր: Արդյո՞ք տարբեր Եկեղեցիները չեն օգտագործում ԵՅԽ-ը որպես մի վայր կամ հնարավորություն այս կամ այն եկեղեցական խմբավորումների հետ պարզապես իրենց հարաբերությունները կարգավորելու կամ հարթելու, համագործակցությամբ իրենց համար շահեկան ծրագրեր իրականացնելու համար, այսինքն՝ ոչ թե բուն դավանական, կրոնական հարցերի նպատակակետի շուրջ են խմբվում, այլ օրինակ՝ տնտեսական, քաղաքական հարցերի:**

Էկումենիզմը մի դաշտ է, որտեղ բացի կրոնական հարցերից, լայն հնարավորություն կա քաղաքական և տնտեսական հարցերի դիտարկման, բարձրաձայնման և դրանց ուղղությամբ քայլերի գործադրման: Սա կարող է լինել դրական և բացասական առումով: Հայ Եկեղեցու պարագայում էկումենիզմը նաև մի ոլորտ է, որտեղ կարելի է վերստին հնչեցնել Հայոց Ցեղասպանության ճանաչման և համընդհանուր դատապարտման հարցը, արցախյան հակամարտության կարգավորման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման խնդիրը: Իհարկե, այստեղ անմիջական լուծումներ չեն ակնկալվում, սակայն էկումենիկ ոլորտը բերում է հնարավորությունը այլ պետությունների մեջ հարգալից դիրք զբաղեցնող անձանց, հոգևոր գործիչների առջև բարձրացնելու նաև տվյալ եկեղեցու ժողովրդին հուզող այլ հարցեր, այդ ճանապարհով ևս նպաստելու ազգային խնդիրների լուծմանը: ԵՅԽ-ի միջոցով այսօր հսկայական գումարներ են տրամադրվում տարբեր երկրների, այդ թվում և Հայաստանի տնտեսական բնագավառի գործունեությունը խթանելու, գյուղատնտեսությունը զարգացնելու համար, ինչպես օրինակ ԷԿԼՕՖ վարկային կազմակերպությունը, ԵՅԽ-ի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամը, որոնք իրագործում են բազմաթիվ բարերարական ծրագրեր, օգնում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Սակայն էկոմենիկ շարժումը նաև կարող է վերածվել քաղաքական ազդեցություններ տարածելու գործիքի: Հետևյալ կարծիքը կա Անգլիկան եկեղեցուն առնչված Մեծ Բրիտանիայի քաղաքական հավակնությունների վերաբերյալ. Անգլիկան եկեղեցին, անցյալ դարից սկսյալ, մեծ աշխատանքներ էր իրականացնում ուղղափառության հետ մերձենալու և միանալու համար: Անգլիկան եկեղեցին երբեք չի թաքցրել իր համակրանքը հույն ուղղափառության հանդեպ, որը մեծ դեր է խաղացել բրիտանական քաղաքականության մեջ, և Անգլիկան չէր կարող նրան չքաջալերել սերտ հարաբերություններով, քանի որ Հույն եկեղեցին ծառայում է իր արևելյան քաղաքականությանը և պաշտպանում է իր հայացքներն Արևելքի հետ կապված հարցերում: Բրիտանական քաղաքականությանը մեծապես հետաքրքրում էր ուղղափառ Կոստանդնուպոլիսը, որը, որպես ուղղափառության Աթոռ, անգլիկանիզմի հետ դաշնակցությամբ կարող էր կրկին հանդես գալ Հռոմի դեմ, ինչն օգուտ կբերեր Բրիտանական քաղաքականությանը Թուրքիայի հետ կապված հարցերում, որի վերջնական կործանմանը ձգտում էր Անգլիկան հույն-թուրքական պատերազմի ընթացքում: Եվ Անգլիկան այսօր շարունակում է այդ քաղաքականությունը Անգլիկան եկեղեցու միջոցով, այս անգամ՝ էկոմենիկ շարժման քողի տակ: Անկասկած, այդ քաղաքականությունը բավականին նուրբ է, սակայն միևնույն ժամանակ՝ գորեղ և համառ:

Այսօր, կարծում եմ, աշխարհի քրիստոնյաներով համախմբվելու գեղեցիկ գաղափարը և հատկապես այն բազմաթիվ բարեգործական ծրագրերը, որ իրականացնում են բողոքական եկեղեցիները հսկայական նյութական միջոցներով, դեռ իրենց հետ կապված են պահում տարբեր եկեղեցիների, որոնք, սակայն, այդ նույն բողոքական եկեղեցիների չափազանցված ազատականությունը հավատքի, բարոյականության ընկալման մեջ տեսնելով, արդեն կարող են նվազեցնել իրենց խանդավառությունը, գուցե և մասնակցությունը էկոմենիկ շարժմանը:

**7. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն էկումենիկ շարժման ակտիվ կողմնակից էր, անձամբ ճանաչել է էկումենիզմի ջատագովներից շատերին և շարժման պատմության մեջ հայտնի է իբրև էկումենիզմի գաղափարախոսներից մեկը: Ի՞նչն էր հատկապես կարևորում երջանկահիշատակ Վեհափառը, քանզի ենթադրելի է, որ նրա մոտեցումը պայմանավորված էր ոչ միայն աստվածաբանության տեսանկյունից, այլ նաև Հայ Եկեղեցու շահերից:**

Գարեգին Առաջինը, երկար տարիներ լինելով Սեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, կարևոր գործունեություն է իրականացրել Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր իրավասության ներքո գտնվող հայորդիների հոգևոր զարթոնքի, եկեղեցականների պատրաստման, եկեղեցական կառույցների զորացման գործում: 1976–77 թթ. Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմի տարիներին նա մեծ դեր է խաղացել լիբանանահայությանն օժանդակելու և սատարելու համար: Նա աստվածաբանության, գրականության, պատմության և մշակույթի թեմաներով դասախոսել է տարբեր բարձրագույն կրթական հաստատություններում: Դառնալով Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Գարեգին Առաջինը հատուկ ուշադրություն դարձրեց Հոգևոր ճեմարանի արդյունավետ գործունեությանը, ինչպես նաև Հայ Եկեղեցու առաքելությունն առավել նպատակաուղղված դարձնելու նախանձախնդրությամբ վերափոխեց Հայաստանում մեր Սուրբ Եկեղեցու թեմական կառուցվածքը:

Երջանկահիշատակ Գարեգին Վեհափառը երկար տարիներ աշխուժորեն մասնակցել է էկումենիկ շարժմանը, բազմաթիվ էկումենիկ ժողովների ու համագումարների: Նա էկումենիզմն առաջին հերթին տեսնում էր բոլոր քրիստոնյաների հետ հոգևոր, աղոթական միասնություն կազմելու մեջ և էկումենիկ շարժման հիմնական նպատակը համարում էկեղեցու միության վերահաստատմանն ուղղված առաքելությունը: Այն ժամանակ էկումենիկ շարժման մեջ ծագած հիմնական խնդիրը հետևյալն էր՝ մտավախություն կար այս շարժմանը մասնակցությամբ կորցնելու ավանդական Եկեղեցիների ինքնությունը, եզակիությունը, եկեղեցական նվիրական ավանդույթներին հավատարմությունը: Սակայն եթե Գարեգին

Կաթողիկոսի օրոք նկատվում էր բողոքականների պաշտպանությունը սեռական փոքրամասնությունների կողմնորոշման, քրիստոնեական բարոյական արժեքների չափազանց ազատ մեկնաբանության գաղափարների, ապա այսօր այդ դիրքորոշումը վերածվել է փաստական իրողության: Ոչ ոք 20-րդ դարում չէր էլ կարող պատկերացնել, որ բողոքական բազմաթիվ եկեղեցիներ պիտի միանգամայն ընդունելի համարեին միասեռականությունը, իրենց եկեղեցիներում կատարեին միասեռականների ամուսնության օրհնություններ և անգամ պսակի արարողություններ, չափազանցված ազատականություն դրսևորեին բարոյական արժեքների ընկալման հարցում: Գարեգին Առաջին Կաթողիկոսն էկումենիկ շարժմանը մասնակցությամբ պաշտպանում էր իր ընկալմամբ՝ Քրիստոսի ողջ եկեղեցու միության շահը, չնայած պետք է նշել, որ միևնույն ժամանակ միության ամրապնդման մեծ անհրաժեշտություն կար Հայ Առաքելական եկեղեցու անդաստանում, մասնավորաբար՝ Կիլիկիո կաթողիկոսության կողմից դրսևորվող դիրքորոշումների և Սայր Աթոռի հետ հարաբերությունների կանոնակարգման անհրաժեշտությամբ:

Սակայն այսօր քրիստոնեական հիմնարար սկզբունքներից բողոքական տարբեր եկեղեցիների հեռանալը հարցականի տակ է դնում նման եկեղեցիների հետ առնչվելու և նրանց ստեղծած էկումենիկ շարժմանը մասնակցության հարցը: Կցանկանամ մի քանի փաստ նշել: 2007 թ. նոյեմբերի 16-ին Նորվեգիայի եկեղեցու գլխավոր սինոդի անդամները մեծամասնությամբ կողմ քվեարկեցին միասեռականներին կամ միասեռական ամուսնության մեջ գտնվող անձերին քահանայության արժանացնելուն: 2003-2013 թթ. կատարված տարբեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ երկրի բնակչության գերակշռող մեծամասնությունը կողմ է միասեռական ամուսնություններին: 2007 թ. Նորվեգիայի եկեղեցու սինոդի կողմից միասեռականների նաև քահանայագործության հնարավորությունն ընդունելու որոշումից մի քանի օր հետո Ռուս Ուղղափառ եկեղեցու Միջեկեղեցական բաժնի ներկայացուցիչը, դատապարտելով սույն որոշումը, անգամ ակնարկեց Նորվեգիայի եկեղեցու հետ հարաբերությունների խզման մասին, ինչպես որ խզել է հարաբերությունները ԱՄՆ-

ի Եպիսկոպոսական եկեղեցու հետ միասեռական Ջին Ռոբինսոնի Եպիսկոպոսացումից հետո և նմանապես հարաբերությունները խզել է Շվեդիայի եկեղեցու հետ՝ այդ եկեղեցու կողմից միասեռական զույգերին պսակելու որոշումից հետո: Այս տեղեկությունները ներկայացված են Մոսկվայի Պատրիարքարանի պաշտոնական [www.patriarchia.ru](http://www.patriarchia.ru) կայքէջում (Ռուս Ուղղափառ եկեղեցու Միջեկեղեցական բաժնի ներկայացուցչի հայտարարությունը կարելի է տեսնել հետևյալ հղումով՝ <http://www.patriarchia.ru/db/text/327607.html>, Նորվեգիայի եկեղեցու վերոնշյալ որոշման վերաբերյալ տարբեր հրապարակումներ տես նաև Մոսկվայի Պատրիարքարանի պաշտոնական կայքէջի հետևյալ հղումներով՝ <http://www.patriarchia.ru/db/text/327109.html>, <http://www.patriarchia.ru/db/text/338167.html>): Շվեդիայի եկեղեցու Եպիսկոպոսական կարևոր աթոռը զբաղեցնող Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմի Եպիսկոպոսը բացահայտորեն իզամուլ կին է, որն ամուսնացել է մի ուրիշ կին «քահանայի» հետ: Շվեդիայի ներկայիս համասեռամուլ կին Եպիսկոպոսի և նրա կին «ձեռնադրված քահանայի» ամուսնությունը նույնպես կատարվել է Շվեդիայի եկեղեցում: Այս ընթացքի մեջ գտնվող Շվեդիայի եկեղեցին, որ անդամ է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, Եվրոպայի եկեղեցիների համագումարի, Համաշխարհային լյութերական ֆեդերացիայի, համարվում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հիմնադիր անդամ:

2009 թ., երբ ԵՅԽ-ի գլխավոր քարտուղար ընտրվեց Նորվեգիայի եկեղեցու հովիվ Օլաֆ Թվեյթը, Ռուս եկեղեցու կողմից ամենաբարձր մակարդակով նրան շնորհավորագիր հղվեց, որն սկսվում էր «թանկագին եղբայր ի Քրիստոս» բառերով: Էկումենիզմի հակառակորդները քննադատեցին այս շնորհավորանքը՝ նշելով, որ եթե սողոմականների ու միասեռականների եկեղեցու հովիվն ինչ-որ մեկի և նրա շոջապատի համար ի Քրիստոս թանկագին եղբայր է, ապա կարո՞ղ է արդյոք այդ մեկը մեզ համար լինել ի Քրիստոս եղբայր կամ հայր: Այո՛, էկումենիզմը ջանում էր Եկեղեցիների միության: Բայց այսօր, ամենևին էլ չնսեմացնելով այս շարժման բոլոր դրական իրազորությունները, այնուամենայնիվ, պետք է հստակեց-

նենք՝ ցանկանում ենք արդյոք միանալ այդպիսի եկեղեցիների հետ և քրիստոնեական արժեքները աղճատողների կամ միասեռականների հետ միություն կազմել: Ժամանակն է մի պահ կանգ առնելու և լրջորեն մտածելու:

## **ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

### **1. Ի՞նչ հարաբերության մեջ են եկեղեցին և գիտությունը:**

Պատմության ընթացքում գիտության հանդեպ եկեղեցու վերաբերմունքի մասին խոսելիս պետք է տարբերակում կատարել արևմտյան երկրներում Կաթոլիկ եկեղեցու և Հայ Առաքելական եկեղեցու դիրքորոշումների վերաբերյալ: Ի տարբերություն արևմտաեվրոպական երկրներում եկեղեցու և գիտության բնագավառի միջև առկա լարվածության՝ հայ իրականության մեջ մեր Սուրբ եկեղեցին է հանդիսացել նաև գիտության օրրանը: Հայ եկեղեցու ծոցում և կամ եկեղեցու հովանու ներքո են զարգացել գիտությունները, հոգևորկրթական հաստատություններն են առավելաբար պատրաստել անվանի գիտնականներ: Այսպիսով, եկեղեցական ոլորտում են զարգացել գիտության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են տիեզերաբանությունը, աստղագիտությունը, տոմարագիտությունը, մաթեմատիկան, երկրաչափությունը, պատմագիտությունը, բանասիրությունը, քերականությունը և այլն:

Հայ եկեղեցին է նաև Հայաստանում հիմնել բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ համալսարաններ, որոնք իրենց մակարդակով չեն զիջել և անգամ գերազանցել են եվրոպական համալսարաններին: Միջնադարյան հայկական բարձրագույն կրթական հաստատությունների հիմնադրման ու գործունեության պատմությունն ուսումնասիրողները նշում են, որ հայոց համալսարաններն ուսուցման ծրագրերի առումով ավելի հազեցած են եղել և տարբերվել են նույն ժամանակաշրջանի եվրոպական համալսարաններից, քանզի հայ ուսանողներին տրվել են գիտելիքներ նաև նախաքրիստոնեական շրջանի կրոնի, հավատալիքների մասին, ինչի համար որպես ուսուցման ձեռնարկ ծառայել է նաև Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը»:

Հայ Առաքելական Եկեղեցին այսօր էլ շարունակում է քաջալերել գիտության մշակներին, խրախուսել գիտնականների գործունեությունը, գիտության ասպարեզի տարբեր գործիչների արժանացնում է Եկեղեցու բարձր պարգևների, պատվո շքանշանների: Հայ Եկեղեցին ներկայումս շարունակում է գիտության զարգացմանը բերել իր նպաստը հատկապես բանասիրական գիտությունների ոլորտում: Տարբեր եկեղեցականներ հեղինակում են պատմաբանական, հայագիտական, բանասիրական աշխատություններ, ինչպես նաև եկեղեցական ասպարեզին հատուկ աստվածաբանական, եկեղեցաբանական, եկեղեցագիտական աշխատություններ, որոնք ներկայացվում են ինչպես հայ, այնպես էլ այլազգի ընթերցողների, գիտական շրջանակների ուշադրությանը:

**2. Գիտությունն այլ տեսակետ է առաջարկում մարդկության ստեղծման վերաբերյալ: Ինչպե՞ս է Եկեղեցին բացատրում, որ Ադամից ու Եվայից առաջացավ մարդկությունը:**

Աստվածաշնչի Ծննդոց գիրքը հայտնում է, որ Աստված ստեղծեց արական և իգական սեռի առաջին մարդկանց՝ Ադամին ու Եվային (Ծննդ. 1.27, 5.2): Սուրբ Գրքում խոսվում է հատկապես նրանց երկու որդիների՝ Կայենի և Աբելի մասին (Ծննդ. 4.1-15), քանզի հիշատակելի պատմություն է նրանց հետ կապված: Սակայն աստվածաշնչյան տեղեկությամբ Ադամն ու Եվան շատ այլ զավակներ ունեցան (Ծննդ. 4.25-26, 5.3-4) և նրանց ամուսնությամբ շատացան մարդիկ: Աստվածաշունչը մարդկության առաջացումը կապում է Ադամի և Եվայի հետ՝ նշելով, որ Աստված նրանց պատվեր տվեց մարդկության ստեղծման՝ ասելով. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը» (Ծննդ. 1.28): Ջրհեղեղից հետո մարդկությունը պետք է վերածնվեր Նոյից ու նրա որդիներից, և նրանց էլ Աստված ուղղեց նույն խոսքը՝ երկրի վրա բազմանալու, բուսական ու կենդանական աշխարհին տիրելու (Ծննդ. 9.1-2): Մենք այսօր մի մեծ գերդաստանի պատմությամբ կարող ենք տեսնել, որ ամուսնական մեկ զույգից սերում են բազում սերունդներ: Այսպես էլ Ադամից ու Եվայից առաջացան բազում

մարդիկ: Համաշխարհային ջրհեղեղից հետո փրկվեցին միայն Նոյն ու իր կինը և նրանց երեք որդիներն իրենց կանանցով: Եվ հետջրհեղեղյան ժամանակաշրջանում մարդկությունը բազմացավ այս ընտանիքից (Ծննդ. 7.23, 9.1, 10.32):

Ադամից ու Եվայից մարդկության ծագման պատմությունը մերձավոր, արյունակցական սերտ կապի մեջ եղող մարդկանց ամուսնության հարցն է առաջ բերում: 3-րդ դարի եկեղեցական հեղինակներից Մեթոդիոս Օլիմպացին կուսության առաքինության մասին իր հայտնի գրական գործում խոսում է ամուսնության և նրա աստիճանական զարգացման՝ ամուսնության էվոլյուցիայի մասին: Նա հաստատում է, որ մարդու գոյության սկզբնական շրջանում Աստծո կողմից թույլատրված էին մերձավոր ամուսնությունները, որոնք դադարեցին Աբրահամի ժամանակ: Աստված ուխտ կնքեց Աբրահամի հետ, որի նշանն էր թլփատությունը: Թլփատությունը նշանակում էր, որ մարդը պետք է հեռու մնա մարմնի մեղավոր կրթերից, ինչպես նաև ցույց էր տալիս, որ այլևս դադարում են նույն մարմնից սերած մարդկանց՝ արյունակից հարազատների ամուսնությունները, որն այդուհետ համարվում էր արյունապղծություն: Ղևտացվոց գրքում արդեն տրվում են ամուսնության արգելքի և թույլտվության աստիճանակարգումները (գլուխներ 18-20): Մերձավորների ամուսնության դադարեցմամբ, սակայն, շարունակվում էր բազմակնությունը, որը, ինչպես նշում է Մեթոդիոս Օլիմպացին, դադարեց մարգարեական շրջանում: Եկեղեցական հեղինակը վկայակոչում է Երեմիայի մարգարությունը, որտեղ մարգարեն ասում է, որ իզամոլ ձիու է նման տարբեր կանանց տենչող մարդը (Երեմ. 5.8): Մեթոդիոսը մեջբերում է անում նաև Սողոմոնի իմաստության գրքից, որտեղ ասվում է. «Ուրախ եղիր քո երիտասարդ օրերի կնոջ հետ» (Առակ. 5.18):

Քրիստոս ևս ճիշտ համարեց միակնությունը: Միակնության հաստատումով ամուսնությունը հասնում է իր զարգացման վերջին փուլին, որից այն կողմ անցնում է կատարյալ վիճակի, որը կուսության առաքինությունն է: Մեթոդիոս Օլիմպացին, իր այս ուսուցմամբ նկարագրելով կուսության առաքինության վեհությունը, միաժամանակ մեծապես պատվելի է

համարում ամուսնությունը՝ չնսեմացնելով ամուսնության կարևոր դերը մարդկության կյանքում:

**3. Միջնադարյան Եկեղեցին դեմ էր գիտությանը և մահվան էր դատապարտում քիմիկոսներին, աստղագետներին, Եկեղեցու տեսակետներին հակադրվող գիտնականներին: Ինչպիսի՞ն է այսօրվա մոտեցումը:**

Միջնադարում գիտության դեմ Եկեղեցու հանդես գալն իրականություն է Կաթոլիկ Եկեղեցու պարագայում: Հայ Առաքելական Եկեղեցու պատմության մեջ երբեք չեն եղել ինկվիզիցիայի խարույկներ, առաջադեմ գիտնականների, մտածողների հալածանքներ, ընդհակառակը, Հայ Եկեղեցին էր հովանավորն ու օրրանը գիտության: Երբ ասում ենք, որ Կաթոլիկ Եկեղեցին հալածում էր ու մահապատժի դատապարտում գիտության գործիչներին, պետք է նկատի ունենանք Եկեղեցին ոչ թե եկեղեցաբանական իմաստով, քանզի Եկեղեցին սուրբ է և սրբարար, այլ Կաթոլիկ Եկեղեցում մեծ իշխանություն ունեցող հոգևորականներին: Բարձրաստիճան հոգևորականներ, վախենալով, որ գիտական միտքը կարող է կասկածի տակ դնել Կաթոլիկ Եկեղեցու այդ ժամանակի պատկերացումներն ու ուսուցումները և դրանով իսկ նվազեցնել իրենց ազդեցությունը հասարակության վրա, ջանում էին ամեն կերպ լռեցնել տարբեր գիտնականներին՝ նրանց չարչարանքների մատնելով, մահապատժի ենթարկելով:

Կաթոլիկ Եկեղեցու միջնադարյան պատմության խայտառակ իրողությունների համար Հռոմի Պապ Հովհաննես Պողոս Երկրորդը հրապարակավ պաշտոնապես ներողություն խնդրեց ամբողջ աշխարհից: Այսօր Կաթոլիկ Եկեղեցին խրախուսում է գիտության առաջընթացն ու զարգացումը մարդկության բարօրության համար, հպարտությամբ ներկայացնում հանրահայտ հոգևորական գիտնականների անունները, ինչպես նաև այն գիտնականների մեծ ցանկը, ովքեր եղել են Կաթոլիկ Եկեղեցու անդամներ և կամ այսօր Կաթոլիկ Եկեղեցու հավատարիմ հետևորդներն են:

#### 4. Ինչպե՞ս եք վերաբերվում Դարվինի տեսությանը:

Դարվինի տեսությանը վերաբերվում եմ հումորով: Խորհըրդային իշխանության տարիներին, երբ դպրոցներում մեզ սովորեցնում էին, որ մարդն առաջացել է կապիկից, և բուսական ու կենդանական աշխարհը էվոլյուցիայի արդյունք են, երեխաներն այդ տեղեկություններն ընդունում էին որպես հերթական դաս՝ առանց վերլուծելու տվյալ տեսության ճշմարտացիության հնարավորությունը: Տեսե՛ք, մենք ասում ենք Դարվինի տեսություն, չենք ասում Դարվինի ճշմարտություն: Դա նշանակում է, որ որևէ գիտնական ազատ հնարավորություն ունի իրեն հավանական թվացող կարծիք, տեսակետ արտահայտելու, որը, սակայն, կարող է և բացարձակ ճշմարտություն չլինել: Դարվինի տեսության նկատմամբ Եկեղեցու վերաբերմունքը խստորեն դատապարտության ենթարկելու դիրքորոշում չէ, այլ գիտական մտքի, կարծիքների դրսևորման հնարավորության դիտարկում:

Դարվինի հեղինակած էվոլյուցիայի տեսությանը, սակայն, լայն քննդատությամբ հակադրվում է կրեացիոնիզմը, որն արդիական գիտական ուղղություններից մեկն է: Կրեացիոնիզմ բառն առաջացել է լատիներեն «creatio»՝ «արարում», «ստեղծագործում» բառից և, որպես տեսություն, ուսուցանում է գերբնական մտքի անհրաժեշտությունը՝ իբրև կարևոր պայման տիեզերքի, մարդու առաջացման: Էվոլյուցիոնիզմի գիտական տեսակետներին զուգահեռ գիտական հիմնավորումներով լուրջ տեսակետներ են ներկայացնում նաև կրեացիոնիզմի ներկայացուցիչները: Այսօր աշխարհում կան կրեացիոնիզմի գիտական մեծ կենտրոններ, սակայն դարվինիզմը էվոլյուցիայի տեսությամբ ավելի շատ տարածում ունի: Այդ պատճառով էլ դպրոցական դասագրքերում մեծավ մասամբ տեղեկություններ են հաղորդվում Դարվինի տեսության մասին: Միջին Արևելքում, ԱՄՆ-ի մի շարք նահանգներում նախապատվությունը տրվում է կրեացիոնիզմի տեսությանը, և դպրոցական համապատասխան դասագրքերը էվոլյուցիոնիզմի փոխարեն ներկայացնում են կրեացիոնիզմը:

Կրեացիոնիզմի տեսությունն էվոլյուցիայի տեսությունից տարբերվում է ոչ միայն արարչագործության համար գերբ-

նական մտքի, գերբնական ուժի անհրաժեշտության շեշտումով, այլև ժամանակային գոյության տարբեր սահմանումներով: Էվոլյուցիոնիզմի հետևորդները համարում են, որ տիեզերքը, Երկիր մոլորակը գոյություն ունեն միլիարդավոր տարիներ: Կրեացիոնիստների տեսակետով՝ տիեզերքը ոչ թե միլիարդավոր, այլ մոտ տասը հազար տարեկան է: Որոշ կրեացիոնիստներ այս տարիքը կապում են եթե ոչ տիեզերքի, ապա՝ Երկիր մոլորակի հետ: Կրեացիոնիզմի շրջանակում գոյություն ունի նաև թեիստական էվոլյուցիայի տեսությունը, որն ամբողջովին ընդունում է Դարվինի տեսությունը՝ սակայն հավելելով, որ էվոլյուցիայի, կյանքի ծագման, նախնական կենդանատեսակների, բուսական աշխարհի տեսակների առաջացումը կապված է գերբնական ուժի արարչագործության ու ներգործության հետ:

Այսպիսի տեսությունների առկայության պարագայում, բացառելով հավատքի գործոնը, ընտրությունը թողնվում է մարդուն: Եթե մեկը նախընտրում է մտածել, որ առաջացել է կապիկից, կամ իր նախնիները կապիկից են առաջացել և կամ իր նախնիները կապիկ են եղել, ապա ոչ ոք նրան չպետք է բռնությամբ հակառակը պարտադրի: Իսկ եթե մեկ ուրիշը նախընտրում է մտածել, որ ստեղծված է ըստ Աստծո պատկերի և նմանության, ապա գովելի է, քանզի այս համոզումն առնչվում է հավատքին և մարդու, տիեզերքի առաջացման աստվածային հայտնությանը, որը տրվել է մարդկությանն Աստվածաշնչի միջոցով:

##### **5. Անծայրածիր տիեզերքի խորհրդավորության կողքին առկա է այլմոլորակայինների քաղաքակրթության առեղծվածը: Մենք տիեզերքում մենա՞կ ենք:**

Մենք տիեզերքում մենակ չենք, բայց մենք տիեզերքում միակն ենք: Տիեզերքում մարդկությունը միայնակ չէ, որովհետև կա աստվածային ներկայությունը, հրեշտակների՝ երկնային արարածների գոյությունը: Սակայն մարդը՝ որպես կենդանի բանական արարած, Երկիր մոլորակը՝ իր բուսական և կենդանական աշխարհով, միակն են ողջ տիեզերքում: Զարց է առաջանում. «Եթե հսկայական տիեզերքի միլիար-

դավոր մոլորակներում կենդանություն չէր լինելու, ինչո՞ւ է Աստված ստեղծել դրանք»: Սուրբ Գիրքն ասում է. «Երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հայտնում է Նրա ձեռքի գործերը» (Սաղմ. 18.2): Երկնային մարմիններին՝ բազմաթիվ աստղերին, մոլորակներին նայելով՝ մենք հիանում ենք Աստծո ստեղծագործության սքանչելիության վրա:

Փիլիսոփա Կանտն իրավամբ ասել է. «Երկու բան է ինձ հիացնում՝ աստղազարդ երկինքն իմ գլխավերևում և բարոյական օրենքն իմ ներսում»: Մենք ևս զարդարում ենք մեր առաստաղները, որոնցից չենք օգտվում քայլելու, մնալու համար, այլ գործածում ենք որպես ծածկ: Սակայն տների, հատկապես հանդիսությունների սրահների առաստաղները զարդարում ենք գեղեցիկ կառուցվածքով կամ քանդակներով, բազմաթիվ լույսերով ու ջահերով: Մենք անում ենք ճիշտ նույն բանը, ինչ արել է Աստված, և ինչպես հիանում ենք երկնքով, այնպես էլ գեղեցկության զգացումով դիտում ենք զարդարված առաստաղները:

Պողոս առաքյալը հայտնում է մարդկային անգեմ և զինված աչքի համար անտեսանելի և անհասանելի երկինք փոխադրվելու մասին (Բ Կորնթ. 12.2-4), եկեղեցական հեղինակներն իրենց տրված իմաստությամբ կամ հայտնությամբ ներկայացնում են տիեզերքի կառուցվածքի մասին տվյալներ: Աստղազարդ երկնքից այն կողմ սկսվում է հրեղեն երկինքը, որտեղ Աստված է, ով Իր ամենակարողությամբ նաև ամենուր է: Երկնքի աստղալի սահմանից այն կողմ նաև երկնային հրեշտակների դասերն են, սրբերը: Որոշ տեսություններ՝ այլ մոլորակներում կյանքի գոյության և կամ այլմոլորակայինների մասին, պարզապես ֆանտաստիկայի հեքիաթային ժանրից են: Եկեղեցու կողմից միանշանակորեն ժխտելի է երկիր մոլորակից բացի այլ մոլորակներում ևս մարդկության գոյության տեսակետը, քանզի այն անընդունելի է հատկապես աստվածաբանական, քրիստոսաբանական տեսանկյունից: Մարդու փրկության համար Քրիստոս մարդեղացավ և Իր խաչելությամբ ու Յարությանբ իրագործեց փրկությունը: Քրիստոսի փրկագործությունը կատարվեց մեկ անգամ և մեկընդմիշտ (Եբր. 7.27), որով անընդունելի է, որ այլ մոլորակ-

ների մարդկանց փրկելու համար Քրիստոս մարդանա նաև տարբեր մոլորակներում և իրականացնի իր առաքելությունը՝ մի քանի անգամներ կրկնելով տարբեր իրականությունների համար:

Գուցե ոմանց համար հիասթափեցնող լինի, սակայն վերջին հրապարակումների համաձայն՝ աստղագետները համակարգչային սիմուլյացիայի միջոցով մոդելավորել են մեզ հայտնի տիեզերքը՝ կիրառելով ֆիզիկայի օրենքները տիեզերքի գոյության 13.8 միլիարդ տարիների համար: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հնարավոր գոյություն ունեցող 700 քվինտիլիոն մոլորակներից որևէ մեկը նման չէ Երկիր մոլորակին:

Մարդիկ կան, ովքեր ասում են, թե տեսել են այլմոլորակայինների, շփվել նրանց հետ, երկնքում ինչ-որ նշաններ տեսել: Նման որոշ մարդիկ հոգեբանական, հոգեկան խնդիրներ ունեն, որոնք պատճառում են անիրական պատկերներ ու զգացումներ: Պողոս առաքյալը նշում է, որ չար ոգիները, Աստծո դեմ ըմբոստությամբ երկնքից ընկած չար հրեշտակները բնակվում են երկնքի ներքո (Եփ. 6.12), և նրանք նույնպես կարող են մարդկանց մոլորեցնել՝ տեսանելի երկնքում տարբեր երևելի նշաններ ցուցադրելով, որով մարդուն շեղում են ճշմարիտ աստվածապաշտությունից:

### **ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ, ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**

**1. Աշխարհում տարբեր կրոնական ուղղություններ են եղել և կան, որոնք իրենց արտահայտությունն են գտել նաև տարբեր ազգերի մշակույթում: Հայտնի է, որ համաշխարհային մշակույթի շատ գլոբալիզացիաներ ստեղծվել են քրիստոնեական կրոնից ներշնչված: Ի՞նչ փոխհարաբերության մեջ են քրիստոնեությունն ու մշակույթը:**

Կրոնները սովորաբար ազդեցություն ունեն մշակույթի վրա, որովհետև ձևավորում են աշխարհայացք, նոր գաղափարներ, ընկալումներ, իսկ մշակույթը նյութական արժեքների, արվեստների միջոցով մարդկային աշխարհընկալման, զգացումների, գաղափարների արտահայտությունն է: Այս իմաստով կարելի է ասել, որ բոլոր կրոնները նաև մշակութա-

յին արժեքների ձևավորման գործում կարևոր դերակատարություն ունեն: Քրիստոնեական գաղափարները ևս արտահայտվել են մշակույթի գործերով, բայց փոխադարձաբար մշակույթն իր հերթին կրոնի համար ծառայում է որպես արտահայտչամիջոց իր գաղափարների դրսևորման ու տարածման համար: Այսպես, ճարտարապետական արվեստով կառուցվել են քրիստոնեական պաշտամունքային վայրեր, երաժշտությամբ, գիր ու դպրությամբ քարոզվել և քարոզվում են քրիստոնեական գաղափարները, ընկալումները: Այսպիսով, կրոնը ձևավորում է մշակույթ, իսկ մշակույթն իր հերթին դառնում է կրոնի լեզուն՝ կրոնական համապատասխան գաղափարների և ուսուցումների դրսևորման ու տարածման համար:

**2. Ակնհայտ է քրիստոնեական գաղափարների դրական ազդեցությունը եվրոպական քաղաքակրթության ու մշակույթի զարգացման վրա: Գրողներ, փիլիսոփաներ Քրիստոսի ուսմունքը, քրիստոնեական գաղափարների քարոզչությունը մարդկության պատմության մեջ հեղափոխական են համարել: Ի՞նչ առումով էր քրիստոնեությունը հեղափոխական:**

«Հեղափոխական» բառը եկեղեցական հեղինակների բառապաշարում այս առումով չի գործածվում: Մարդկության կյանքում քրիստոնեության շրջադարձային դերը նկարագրելու համար եկեղեցական հեղինակները գործածում են «կենարար», «փրկարար» բնութագրող բառերը: Տարբեր փիլիսոփաներ կարող էին քրիստոնեության առումով օգտագործել «հեղափոխական» բառը, որովհետև նրանց համար ընդունելի է հեղափոխությունն իբրև երևույթ, մինչդեռ քրիստոնեության համար գաղափարների, առաջադիմության տարածման նպատակով հեղափոխության ձևն ընդունելի չէ: Գիշտ է, քրիստոնեությունը նույնիսկ քաջալերող է համարում պայքարը նվիրական արժեքների, սրբությունների, հայրենիքի, մերձավորների, բարեկամների պաշտպանության համար՝ որպես իրագործում Քրիստոսի պատվիրանի. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. 15.13): Դրա համար էլ եկեղեցին

սրբացրել է նաև զորականների: Սակայն հեղափոխության ձևը Եկեղեցու կողմից ընդունելի չէ:

Չեղափոխության ջատագովներից Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի գաղափարների թերություններից մեկը քրիստոնեության տեսանկյունից այն է, որ նրանք հասարակությունը բաժանում են դասակարգերի՝ ուսուցանելով մի դասակարգի պայքարը մյուսի դեմ: Սակայն Եկեղեցու համար բոլոր դասակարգերի մարդիկ Եկեղեցու անդամներ են, և այս իմաստով բաժանումը մերժողական է դիտվում: Նաև քաղաքական դաշտում գործածվող «ընդդիմություն» բառը ևս չի կարող բնութագրել Եկեղեցական դիրքորոշումը մարդկանց հանդեպ, քանզի քրիստոնեական տեսանկյունից և՛ իշխանության, և՛ ընդդիմության ներկայացուցիչները Եկեղեցու անդամներ են (իհարկե, եթե մկրտությամբ, հավատքով, խոստովանությամբ պատկանում են Եկեղեցուն): Դրա համար էլ Եկեղեցին ընդունում է և՛ ընդդիմադիրներին՝ որպես հավատացյալների, Եկեղեցու զավակների, ինչպես նաև իշխանություններին, որոնց հորդորում և հիշեցնում է ծառայությունն ու սպասավորությունը ժողովրդին, ինչը կարելի է անել Եկեղեցի-պետություն հարաբերությունների շրջագծում: Էնգելսի և Մարքսի հետ կապված պետք է ասել, որ նրանց առաջադիմական գաղափարներից է մարդկանց շահագործման դադարեցումը, աղքատներին աջակցությունը, ինչն ընդունելի է միանգամայն և բոլոր բարեպաշտ մարդկանց ցանկությունն է: Այս նեղ իմաստով կարելի է ասել, որ նման ձգտումի առկայությամբ մենք բոլորս էլ մարքսիստներ ենք ինչ-որ առումով:

Եկեղեցական հեղինակները քրիստոնեությունը փրկարար են համարում մարդկության կյանքում, որովհետև այն բերեց ազատում կռապաշտությունից, հոգևոր-կրոնական սուտ ուսմունքներից, բերեց բարոյական բարձր ուսուցումներ ու սկզբունքներ, որոնք մինչ այդ չկային այլ կրոններում, և հատկապես մարդկությանը պարզևեց աստվածային բազում շնորհներ, բացեց ճանապարհը Երկնքի արքայության ու հավիտենական կյանքի:

**3. Հայ իրականության մեջ մինչև 19-րդ դարի կեսերը մշակույթի գրեթե բոլոր ոլորտները գտնվում էին Եկեղեցու հովանավորության, նաև ազդեցության ներքո: Միջնադարում Եկեղեցին դարձրեց էր, համալսարան, սակայն միևնույն ժամանակ երբեմն գրաքննիչի դեր էր ստանձնում այլ, հատկապես ներմուծված կրոնական գաղափարախոսությունների հանդեպ: Որքանով դա նպաստեց մշակութային առաջընթացին և որքանով՝ կրոնական գաղափարախոսությունից դուրս հայ փիլիսոփայական մտքի զարգացմանը:**

Հայ իրականության մեջ Եկեղեցու ներսում են զարգացել գիտությունը, մշակույթը, առաջընթաց ապրել գիտության բազում ճյուղեր, և հենց Եկեղեցականներն են, որ եղել են նաև գիտնականներ, ուսումնասիրողներ, փիլիսոփաներ, գիտության մշակներ: Եկեղեցու գրաքննիչ լինելը չի կարելի հասկանալ ստալինյան բռնապետության ժամանակների իմաստով, երբ մարդիկ վախենում էին իրենց ազատ կարծիքն արտահայտել: Խորհրդային ժամանակների բռնապետության տարիներին էր, որ, օրինակ, մեր մեծ բանաստեղծներից Պարույր Սևակը չէր կարողանում ազատորեն խոսել Գրողների միությունում, արգելվում էին նրա տարբեր գործերի հրատարակությունները կամ մեծ մասամբ խմբագրվում էին: Եկեղեցին միշտ դեմ է հանդես եկել ոչ թե ազատ կարծիքների արտահայտմանը, այլ աղանդավորական, մորորեցնող ուսուցումների տարածմանը, որովհետև դրանք վերաբերում են մարդու հոգևոր կյանքին և մարդուն զրկում փրկությունից, հավիտենական կյանքից: Եվ քանի որ Եկեղեցին առաքելություն ունի մարդկանց հոգիների փրկության, իր հիմնական մտահոգությունն է հեռու պահել իր խնամակալության ներքո գտնվող ժողովրդին կործանման տանող ճանապարհներից: Դրա համար է, որ Եկեղեցին դեմ է եղել աղանդավորական ուսմունքների տարածմանը:

Փիլիսոփայության պարագայում պետք է ասել, որ քրիստոնեության մեջ մեծապես կարևորվում է փիլիսոփայության դերը: Եկեղեցու Հայրերը փիլիսոփայությունն անվանել են քրիստոնեության աղախին, որովհետև նաև փիլիսոփայության միջոցով է քրիստոնեությունը բացատրում իր դիրքորո-

շումները, քրիստոսի վարդապետությունը: Հայ Եկեղեցական հեղինակները ևս մեծապես օգտվել են փիլիսոփաների երկերից, մեջբերումներ արել և իրենք ևս հանդիսացել փիլիսոփաներ, ինչպես օրինակ՝ Դավիթ Անհաղթը, Գրիգոր Տաթևացին, Ներսես Շնորհալին, Հովհան Ռոտունեցին և ուրիշներ: Հայ հեղինակների փիլիսոփայական աշխատությունները դեռևս կարիք ունեն առավել լայն լուսաբանման և համամարդկային մեծ ճանաչման ձեռքբերման: Միակ բացառությունը թերևս Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությանն» է, որը թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով և հայտնի է իր հոգևոր, խոհափիլիսոփայական, խորհրդողապաշտական բնույթով:

Իսկ կրոնական ոլորտից դուրս հայ փիլիսոփայությունը չի ունեցել այնպիսի մեծ նվաճումներ, ինչպես օրինակ՝ Ֆրանսիայում Ռենե Դեկարտի, Վոլտերի, Ժան Ժակ Ռուսոյի, գերմանական հասարակության մեջ Վիլհելմ Լեյբնիցի, Էմմանուել Կանտի, ով առաջինը կրոնական ընկալումներից անկախ փիլիսոփայական հզոր համակարգ զարգացրեց, Շոպենհաուերի կամ անգլիական իրականության մեջ Ջոն Լոկի և այլոց երևույթները: Գիշտ է, մենք ունենք շատ փիլիսոփայության դոկտորներ, ովքեր նաև փիլիսոփայական միջազգային պաշտոնական կառույցների պատվավոր անդամներ են, սակայն համաշխարհային հանրաճանաչության և նշանակության առումով հայազգի փիլիսոփաներ չկան: Մենք չունեցանք նաև կրոնական փիլիսոփայության մեծ հեղինակներ, ինչպիսիք եղան ռուս իրականության մեջ՝ Վլադիմիր Սոլովյովը, Նիկոլայ Բերդյաևը, Սերգեյ Բուլգակովը, Իվան Իլյինը, Պավել Ֆլորենսկին և այլք: Չունեցանք և կրոնական փիլիսոփայության հիմնավորումներով գեղարվեստական մեծարժեք գործերի հեղինակներ, որոնցից են Ռուսաստանում Լև Տոլստոյը, ում ի դեպ Ռուս Ուղղափառ Եկեղեցին նզովել է, Դոստոևսկին և այլք: Սա ցույց է տալիս, որ քրիստոնեությունից հեռանալով կամ քրիստոնեական ներշնչումից հեռանալով՝ հայ փիլիսոփայական միտքն ինքնուրույն մեծ և բացառիկ զարգացում չի ապրել, մինչդեռ քրիստոնեության ծոցում նաև հայ փիլիսոփայական միտքը մեծ ծաղկում է ապրել:

**4. Արժևորելով հայ մշակույթի զարգացման գործում քրիստոնեության ունեցած դերը՝ Վազգեն Ա Կաթողիկոսն ասել է, որ քրիստոնեական կրոնով հայ ժողովուրդը միավորվեց ու «մարմին առավ իբրև ազգ, իբրև հոգեբանություն, իբրև գիտակցություն և դարձավ մշակույթ ստեղծող ժողովուրդ»:** Անհերքելի է, որ միջնադարի հայ մշակույթի երևելիները եղել են գերազանցապես հոգևորականներ: Բայց չէ՞ որ հայ ժողովուրդը մշակույթ էր ստեղծել նաև հեթանոսական Հայաստանում: Եկեղեցիներից, խաչքարերից, մատյաններից առաջ նա ստեղծել էր հեթանոսական տաճարներ, բազիլիկներ, որոնք հիմնականում չեն պահպանվել: Ինչպիսի՞ն է քրիստոնեության վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Իհարկե, քրիստոնեությունից առաջ էլ Հայաստանում եղել են ճարտարապետական կոթողներ, կրոնական երկրպագության համար ստեղծված արձաններ, կուռքեր և այլն: Այսօր հայ քրիստոնեության դեմ մեղադրանքներ են հնչում հեթանոսական ժամանակաշրջանի մշակութային արժեքների ոչնչացման նկատառումով: Սակայն հեթանոսական շրջանի մի առարկա մեկի համար կարող է մշակութային արժեք լինել, մյուսի համար՝ կուռք և կամ դիվապաշտական իր, որի միջոցով անմարմին չար ոգիներն իրենց դիվական ազդեցությունն են տարածում աշխարհի վրա: Դրա համար էլ քրիստոնեական սրբերը, գործրինակ Սուրբ Գևորգ Ջորավարը, Սուրբ Սարգիս Ջորավարը և նրա որդի Մարտիրոսը ոչ միայն չիրաժարվեցին կուռքերին երկրպագելուց, այլև ջարդեցին կուռքերը, որովհետև դրանք նկատվում էին որպես նյութական առարկաներ, որոնց միջոցով աննյութական չարի ազդեցությունն է տարածվում մարդկանց, աշխարհի վրա: Քրմական տաճարների համար ասվում է, որ դրանք ոչ թե հիմնապես ոչնչացվեցին, այլ դրանցից շատերը վերածվեցին եկեղեցիների, ինչպես նաև շատ քրմեր քրիստոնեություն ընդունեցին և անգամ եկեղեցական հոգևոր սպասավորությունից ներս ընդգրկվեցին:

Երբ գալիս է նոր հասարակարգ՝ իր նոր գաղափարախոսությամբ, հին ընկալումները փոխարինվում են նորով, նոր արժեքներով: Այսպես նաև խորհրդային հասարակարգի

ավելի քան յոթանասնամյա ժամանակաշրջանից հետո վերացվեցին այդ հասարակարգի և գաղափարախոսության արտահայտություններն անգամ մշակույթի բնագավառում: Ցուցադրաբար տապալվեցին և կործանվեցին արձաններն ու հուշարձանները, որոնք այդ ժամանակների պատմությունը հիշեցնող մշակութային արժեքներ էին և ոչնչացվելու փոխարեն կարող էին պահվել թանգարաններում: Փոխվեցին գրեթե բոլոր փողոցների, հրապարակների անունները, որոնց հին անվանումներն ինչ-որ կերպ կարող էին հիշեցնել անցյալ պատմական ժամանակաշրջանը և գաղափարախոսությունը: Դպրոցական և բարձրագույն ուսումնական հաստատությունների գրականության դասընթացներից հանվեցին կոմունիզմի ջատագովությունը հանդիսացող գրական գործերը: Եվ մեր անկախ պետականության վերահաստատման այդպիսի ճանապարհը ոչ ոք չի կոչում մշակութային արժեքների ոչնչացում, մինչդեռ պատմական այդ առարկաները կարելի էր ցուցադրության համար պահել թանգարաններում: Սակայն նման մեղադրանք հնչում է քրիստոնեության հասցեին, որը ոչ թե հին գաղափարախոսությունը նորով փոխարինելու առաքելություն իրականացրեց, այլ մարդային հոգին կորստյան մատնող, բարձր ու վեհ գիտակցությունը, բարոյականությունը ստորացնող, հոգևոր ոլորտում մարդկանց վրա չարի ներգործությանը նպաստող դիվապաշտական, կռապաշտական առարկաների ազդեցությունը դադարեցնող գործունեություն իրականացրեց: Քրիստոնեությունը հայ իրականության մեջ չմերժեց մեր ժողովրդի անցած նախկին ճանապարհի մեծ ձեռքբերումները՝ Հայկ նահապետի ու նրա սերունդների, նրանց կերտած ու անցած պատմության ժառանգները նկատելով մեր ժողովրդին: Եվ այսօր հայ քրիստոնյան չի կարող իրեն անջատ համարել ոչ քրիստոնեական շրջանում մեր նախնիներից ու նրանց պատմությունից, այլ նրանցով հիանում ենք, քաջության, հայրենասիրության, հերոսության օրինակ համարում, ինչպես որ պատմահայր Մովսես Խորենացին է հիանում հեթանոսական շրջանի մեր թագավորներով: Եկեղեցական հայրերից Սուրբ Բարսեղ Կեսարացին ուսուցանում է չմերժել և ընթերցել հեթանոսական շրջանի պատմությունը, գրողների, փիլիսոփաների գործերը,

և դասեր քաղել դրանցում առկա լավ օրինակներից: Այսպիսով, նշյալ փաստերի նկատառումով, հեթանոսության, կռապաշտության ու դիվապաշտության խավարից մարդկանց ճշմարիտ աստվածապաշտության դարձնելու քրիստոնեության առաքելությունը տարբերվում է մշակութային արժեքների ոչնչացման գործողությունից, որպիսին իրապես տեղի է ունենում քաղաքական հիմնապատճառներով նոր գաղափարախոսությունների և նոր հասարակարգերի հաստատման բացառապես քաղաքական գործընթացներում:

### **5. Ի՞նչ կարող ենք ասել Հայ Առաքելական Եկեղեցու և ազգային մշակույթի համախմբող զորության մասին:**

Հայ Եկեղեցին իր առաքելության անբաժան մաս է համարում հայապահպանությունը և հայության համախումբ պահպանումը քրիստոնեական և ազգային արժեքների ներքո: Հայ Եկեղեցին չի կարող փրկարար իր առաքելությունը՝ միտված մարդու հոգու փրկությանը, Քրիստոսի վարդապետության քարոզությանը, աստվածային շնորհների բաշխմանը, իրագործել ազգապահպանության առաքելությունից անջատ, որովհետև ազգի համար իրականացվող գործունեությունը անհնար և անհիմաստ է, եթե չլինի ազգը: Այդ պատճառով էլ ազգի գոյության պահպանությամբ ևս մտահոգված է մեր Սուրբ Եկեղեցին և ամենուր, հատկապես սփյուռքում, ջանքեր է գործադրում ազգային գիտակցության ու ինքնության պահպանման համար:

Քրիստոնեական շրջանի մեր մշակույթը հիմնականում կրոնական բովանդակություն ունի և ներկայացնում է քրիստոնեական, բարոյական բարձր գիտակցության արտահայտությունը, հավիտենական իրողությունների պատկերումը, ինչպես նաև հայրենասիրության ու ազգասիրության մղումով հայազգի մեր սրբերի մեծագործությունները: Այդ ամենը ոգևորող և քաջալերիչ է ժողովրդի համար՝ քրիստոնեական արժեքներին հավատարմությամբ միաբան լինելու համազգային շահերի ու նպատակների իրականացման գործում:

## **6. Ինչպիսի՞ն է Եկեղեցու և մշակույթի փոխհարաբերությունն այսօր:**

Այսօր Եկեղեցին աջակցում է մշակութային գործունեությանը, ինչպես նաև մշակույթի միջոցով իրականացնում իր առաքելությունը: Երաժշտությունը, գիրն ու գրականությունը, ճարտարապետությունը, նկարչությունը, քանդակագործությունը ծառայում են քարոզչության, ուսուցման, դաստիարակության, եկեղեցաշինության ասպարեզներում: Մշակույթի, արվեստի գործիչները խրախուսվում են Եկեղեցու կողմից: Այսօր, սակայն, մշակույթը հեռացել է կրոնական իր ընկալումներից՝ դառնալով միայն մարդկային տրամաբանության, հաճախ նաև կրքերի արտահայտություններ: Այսպես եղավ Վերածննդի ժամանակաշրջանում, երբ մշակույթն անգամ քրիստոնեական, սուրբգրական պատմություններ պատկերելիս գործածվում էր մարդկային, մարմնական իրողությունների պատկերման ու փառաբանման համար: Դրա համար էլ պատմական այդ ժամանակը կոչվեց Վերածնունդ և այն վերածնունդն էր ոչ թե քրիստոնեական արժեքների, այլ իրապես համարվում էր վերածնունդը հեթանոսական շրջանի գաղափարների ու ընկալումների:

Այսօր մշակույթի նոր առաջացած ձևերը՝ աբստրակտ մշակույթը, ավանգարդիզմը, նեոավանգարդիզմը և այլն, ավելի շատ մարդկային կրքերի, մարմնական հակումների, միայն աշխարհիկ ընկալումների պատկերումներն են, որոնք կարծես այլևս չունեն վեհագույնն ու բարձրագույնը, հավիտենականը պատկերելու ունակությունը: Եվ կրոնը, Եկեղեցին այս իմաստով պետք է կարևոր աշխատանք իրականացնեն մշակույթի բնագավառում, որպեսզի մշակույթի, արվեստի գործերում գերակշռեն բարոյական, վեհ, հավիտենական արժեքներ:

## **ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**

### **1. Երաժշտությունը կարող է քրիստոնեական և հակաքրիստոնեական լինել:**

Երաժշտությունը տարբերակվում է ոչ միայն ըստ համապատասխան ժանրերի, այլև ըստ կիրառման ուղղվածության, որի համաձայն՝ երաժշտությունը լինում է կրոնական, աշխարհիկ, քրիստոնեական, ոչ քրիստոնեական և հակաքրիստոնեական: Կրոնական երաժշտությունը ծիսական պաշտամունքների ժամանակ գործածվող երաժշտությունն է, աշխարհիկը՝ համերգային, խնջույքային, ոչ ծիսական երաժշտությունը: Քրիստոնեական երաժշտությունը ոչ միայն աստվածպաշտական արարողությունների ժամանակ գործածվող երաժշտությունն է, այլև դասական երաժշտությունը, երաժշտական արվեստի գեղեցիկ ստեղծագործությունները, որոնք զրված են քրիստոնեական թեմաներով: Իսլամական, բուդդայական կամ այլ կրոնական պատկանելության երաժշտությունը, իհարկե, քրիստոնեական չենք կարող համարել. այն ոչ քրիստոնեական է: Երաժշտությունը հակաքրիստոնեական է, երբ երաժշտության, երգի դրսևորումները միտումնավոր ուղղված են քրիստոնեության դեմ, հակառակ են քրիստոնեությանը: Այսպիսի երաժշտություն է ռոքի ենթատեսակներից ծանր ռոքի, ծանր մետալի (heavy rock, metal) և հատկապես սև ռոքի (black rock) երգ-երաժշտությունը, որն իր գաղափարախոսությամբ ու հորդորներով ուղղված է քրիստոնեական կրոնի դեմ:

Սև ռոքի հայտարարվող գաղափարախոսությունը սատանիզմն է, սատանայապաշտությունը: Այս ուղղության ներկայացուցիչները հորդորում են իրենց երկրպագուներին հանդես գալ քրիստոնեության դեմ, նույնիսկ դիմել ագրեսիվ գործողությունների: 1992-1996 թվականներին Նորվեգիայում մի շարք եկեղեցիներ այրելու պատասխանատվությունն իր վրա վերցրեց սև ռոքի խմբերից մեկը: Այս ենթատեսակի տարբեր խմբեր հայտարարել են, որ իրենք հորդորում են եկեղեցիների դեմ հարձակումների և կամ անմիջականորեն մասնակցություն ունենում հակաքրիստոնեական գործողություններ:

րում: Նման ռոք խմբերն իրենց ցուցապաստառների վրա կարող են գործածել այրված եկեղեցիների պատկերներ, համերգներին բեմ են ելնում սատանիստական նշանների, գլխիվայր շուռ տված խաչի դաջվածքներով՝ նաև այդ կերպ քարոզելով և ցույց տալով քրիստոնեության դեմ իրենց կեցվածքը: Նման ռոք երաժշտությունը հենց հակաքրիստոնեական է և ոչ թե հակակրոնական, որովհետև այդ տեսակ ռոքի երգիչներն ու կողմնակիցները ելնում են խաղաղություն, սեր, համերաշխություն քարոզող եկեղեցու և կամ եկեղեցական շինությունների դեմ, որոնցում այդպիսի քրիստոնեական գաղափարներ են քարոզվում: Լավ կլիներ, որ այդ առնական թվացող ռոքերների քաջությունը բավականացներ ելնելու ոչ թե խաղաղ եկեղեցու, այլ, օրինակի համար, մուսուլմանական ծայրահեղական խմբավորումների դեմ, որոնք ահաբեկչություն են տարածում և իրականացնում: Այդպես գոնե աշխարհին ծառայություն կմատուցեին՝ ահաբեկչության չարիքից ազատվելու համար:

## **2. Ո՞րն է երաժշտության առաքելությունն ըստ Ձեզ:**

Քրիստոս մի առակ պատմեց անառակ որդու մասին, որը խորհրդանշում է մեղավոր մարդու դարձն առ Աստված (Ղուկ. 15.11-32): Երբ հորից հեռացած և մեղքերի ու թշվառության մեջ ընկած որդին վերադառնում է, ուրախացած հայրը պատվիրում է խնջույք անել: Ավագ եղբայրը տունդարձի ճանապարհին լսում է իրեն հասնող երգի ու պարի ձայները, այնուհետ տեղեկանում եղբոր վերադարձի մասին: Այս առակով Քրիստոս նաև ցույց է տալիս խնջույքների ժամանակ գործածվող երաժշտության, պարի ընդունելի լինելը, այսինքն՝ միայն կրոնական երաժշտությունը չէ, որ պետք է տեղ ունենա մարդու կյանքում: Հին հունական փիլիսոփաներից Արիստոտելը նկատում էր, որ երաժշտությունը նման է մարդկային զգացումներին, և առաջարկում էր նաև երաժշտությունը գործածել մարդկանց զայրույթը, տրամադրության անկյալ վիճակը մեղմելու, երեխաների դաստիարակության համար: Երաժշտության մասին նման կարծիք ուներ նաև Պլատոնը:

Պատարագի մեկնության մեջ նշվում է, որ հոգևոր երաժշտությունը մեծ նշանակություն ունի աղոթական կյանքի համար: Պատարագի արարողության ժամանակ հնչող երաժշտության մասին մեկնիչներն ասում են, որ մարդիկ աշխարհի տարբեր հոգսերով են մուտք գործում եկեղեցի, և հոգեպարար երաժշտության հնչողությունն օգնում է թոթափել ծանրաբեռնված հոգսաշատ մտածումները, կենտրոնանալ արարողության հոգևոր խորհրդի վրա և խաղաղ հոգով աղոթել Աստծուն: Երաժշտությունը կարող է խաղաղեցնել, ուրախացնել, աշխուժացնել և կամ էլ ագրեսիայի տրամադրվածություն առաջացնել: Սա նշանակում է, որ երաժշտությունը կարող է դրական և բացասական դերակատարություն ունենալ: Մարդու բարօրության համար երաժշտությունը պետք է օգնի վեհ ու առաքինի զգացումները վեր հանելու և դրանով առաջնորդելու դեպի բարին ու գեղեցիկը:

**3. Հաճախ են որոշ հոգևորականներից հնչում կարծիքներ, թե հատկապես ռոք, ջազ, փոփ ժանրերի երաժշտությունը կործանարար և կորստաբեր է քրիստոնյայի հոգու համար: Ինչու՞:**

Երբ հոգևորականները կարծիքներ են արտահայտում՝ երաժշտական տարբեր ժանրերի հետ կապված, և մտահոգություններ ներկայացնում, ոմանց դա թվում է որպես նեղմտության կամ ծայրահեղության դրսևորում: Սակայն հոգևորականները պարտավորություն ունեն նախազգուշացնելու մարդկանց, զերծ պահելու աստվածային կամքին հակառակ ընթացքներից: Հակաքրիստոնեական իր բնույթով հայտնի է ի մասնավորի սև ռոքը, և զարմանալ պետք չէ, երբ դրա դեմ եկեղեցականները տեսակետ են ներկայացնում: Սակայն նաև այլ ժանրերի երգ-երաժշտություն մտահոգիչ են լինում այս առումով: Օրինակ՝ կան ռեփ ժանրի երգեր, որոնք լի են հայհոյանքներով, ռեփի տեսահոլովակները շատ հաճախ ներկայացնում են մերկ կանանց, մերկության տեսարաններ, անբարո վարք: Երգը կարող է նաև վատաբնույթ քարոզ չարունակել, սակայն լինում է, որ տեսահոլովակը լի է անբարոյականության ներկայացումներով: Երբեմն փոփ երաժշտությ-

յան տեսահոլովակներն են այդպիսին լինում: Բայց նման երևույթներին հոգևորականների անդրադառնալն ամենևին չի նշանակում, թե ծայրահեղությամբ արգելք է դրվում երգի, երաժշտության տարբեր ժանրերի ունկնդրության: Մարդիկ կարող են տարբեր մեղեդիներ լսել՝ ըստ տրամադրվածության: Կան անձեր, ովքեր ռիթմիկ երաժշտություն, աշխուժություն են սիրում, ոմանք նախընտրում են հանգիստ երաժշտություն, և դա ըղնուճելի ու հասկանալի է:

**4. Ուրեմն, քրիստոնյան կարող է նաև տարբեր տեսակի երաժշտություն լսել: Նշվեց, որ սև ռոքը հակաքրիստոնեական է: Սակայն երաժշտության որևէ այլ տեսակի նախընտրությունը կարո՞ղ է հակառակ լինել քրիստոնյայի վարքագծին:**

Հոգեբանական տեսակետով՝ երաժշտության տարբեր ժանրերի նախասիրությամբ կարելի է որոշակի պատկերացում կազմել մարդու բնավորության մասին: Ուսումնասիրություններից մեկը երաժշտական նախապատվությունները բաժանում է չորս խմբերի, որոնցով երևում են նաև անձին հատուկ բնավորության հատկանիշները:

Այլընտրանքային ռոք, ծանր մետալ, ագրեսիվ երաժշտություն սիրողներն այն մարդիկ են, ովքեր սովորաբար ապստամբող են, առանց երկնչելու վտանգներին դեմ հանդիման են գնում, ռիսկի են դիմում, իրենց համարում են խելացի և գործուն:

Ռեփ, հիփ-հոփ՝ ռիթմիկ, պարային երաժշտություն նախընտրողներն աշխույժ, խոհական, զրուցասեր անձեր են, դեմ են նորին հակառակվող պահպանողական գաղափարներին:

Կրոնական, փոփ, թեթև երաժշտության կողմնակիցները կենսուրախ են, ուրիշներին օգնող, ընկերասեր, խոհուն և յուրահատուկ:

Դասական, բլյուզ, ջազ և ժողովրդական երաժշտության սիրահարները ստեղծագործական, մտածող, նոր փորձառություններ սիրող և քաղաքականապես ազատամիտ մարդիկ են:

Ամեն պարագայում պետք է նկատի ունենալ, որ քրիստոնյան պետք է չափավոր լինի աշխարհիկ իրողություններում և ջանա առաջանալ հոգևոր կյանքի մեջ:

**5. 1970-ական թվականներից սկսած մեծ հետաքրքրություն բերեցին նաև աստվածաշնչյան թեմաներով ռոք-օպերաները: Ինչպե՞ս եք վերաբերվում այս «երկխոսությանը»:**

2001 թվականին Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի տոնակատարության շրջանակներում Հայ Առաքելական Եկեղեցու նախաձեռնությամբ ներկայացվեց առաջին հայկական «Գրիգոր Լուսավորիչ» ռոք-օպերան, որը թերևս ժանրային իր կատարման առումով առաջինն էր նաև մեր տարածաշրջանում: Սա ցույց է տալիս, որ Եկեղեցին նախապաշարմունքներ չունի երաժշտության հետ կապված և գեղեցիկ ստեղծագործություն լինելու պարագայում այն գովելի և գնահատելի է համարվում: Ռոք երաժշտությունը հիմնականում տարբերվում է փոփ երաժշտությունից նրանով, որ փոփ երաժշտության ժանրում առաջին տեղում երգն է, երաժշտությունն ուղեկցում և օգնում է երգը ներկայացնելուն, իսկ ռոքի մեջ առաջնային դիրքում են նաև գործիքային կատարումները, ի մասնավորի էլեկտրական կիթառի երկար սոլոները, հարվածային գործիքների ձայնը, ինչպես նաև երգողի ձայնի սովորականից ավելի բարձր կամ ցածր տոնայնությամբ հնչողականությունը:

Աստվածաշնչյան թեմաներով ռոք-օպերաների ներկայացումները միտում ունեն շեղվելու սուրբգրական բուն պատումներից և կերպարները ներկայացնելու գեղարվեստական նոր մոտեցումներով ու փոփոխություններով: Այսպես, օրինակ, 1973 թ. Հիսուս Քրիստոսի մասին էկրանավորված ռոք-օպերայում Քրիստոսի կերպարը ներկայացված է ավետարանական կերպարին անհարիր փոփոխություններով, ինչը պատշաճ չէ աստվածաշնչյան գործող անձանց ներկայացնելիս: Պետք է նշել, որ հնում Եկեղեցական Հայրերը դեմ էին նույնիսկ թատրոնին, մանավանդ այն թատերական ներկայացումներին, որոնք անպարկեշտ տեսարաններ էին ցուցա-

դրում, վերաբերում էին Եկեղեցուն, Քրիստոսի երկրային կյանքին կամ աստվածաշնչյան որևէ իրադարձության, քանզի իրականությունը հաճախ ծաղրվում էր, տարածվում էին անբարո և անպարկեշտ բարքեր:

**6. Կարծիք կա, որ ձեռն բուդդիզմի փիլիսոփայությունը մեծ ազդեցություն ունեցավ 20-րդ դարի երկրորդ կեսի երաժշտարվեստի վրա՝ բերելով նոր ստեղծագործական տրամաբանություն: Ինչպիսի՞ն է այլ կրոնների վերաբերմունքը երաժշտության հանդեպ, կա՞ն առավել ընդունելի և անընդունելի չափանիշներ:**

Երաժշտության ոլորտի վրա բուդդիզմի ազդեցությունը վերաբերում է հատկապես դասական երաժշտության ժանրին, որով որոշ ստեղծագործողներ հակվեցին ավանգարդիզմին: Ավանգարդիզմը ներկայացնում է արվեստի, մշակույթի մեջ վերջերս առաջ եկած դրսևորում, ըստ որի՝ նյութը, ասելիքը պետք է մատուցել անգամ տարօրինակ միջոցներով: Այսպես, ստեղծագործողները երաժշտությունը կատարողին այսպիսի ցուցում են տալիս. «Նոտան նվագեք այնքան երկար, որքան որ ձեզ թվում է, թե պետք է, հետո դադար տվեք այնքան, որքան կարծում էք՝ պետք է դադար տալ և այնուհետ նույն ձևով կատարեք նոտաների նվագարկումը»:

Ժամանակակից երաժշտության հանդեպ կրոնների վերաբերմունքը չափավոր պահպանողական է, կրոնավորները դեմ են արտահայտվում միայն այնպիսի երաժշտության, որը կարող է ագրեսիվության, անբարոյականության տանել: 1997 թ. Իտալիայի Բոլոնիա քաղաքում կազմակերպվեց Հովհաննես Պողոս Երկրորդ Պապի հանդիպումը շուրջ երեք հարյուր հազար երիտասարդների հետ: Այդ հանդիպումը բացելու համար հրավիրվել էր ամերիկացի հանրահայտ ռոք երգիչներից մեկը, ով իր ելույթով մեծապես ողջունվեց երիտասարդների կողմից և ապա մոտեցավ Պապին ու նրա հետ խոսք փոխանակեց: Այս իրողությանը, սակայն, նաև դեմ արտահայտվողներ եղան կաթոլիկ հոգևորականության ներկայացուցիչներից, որոնցից մեկը հրաժարյալ Պապ Բենեդիկտոս 16-րդն է: Հետաքրքրական է, որ Ռուս Ուղղափառ Եկեղե-

ցին առանձնահատուկ վերաբերմունք ունի ռոքի և այս երաժշտական ժանրի սիրահարների հանդեպ: 2008 թվականին Ռուսիայի մկրտության՝ Ռուսաստանի, ռուս ժողովրդի քրիստոնեության դարձի 1020-ամյակի առիթով Կիևում կազմակերպված ռոք երաժշտության համերգից առաջ ռոքի երկրպագուներին իր խոսքն ասաց Սոսկվայի և Համայն Ռուսիո ներկայիս Պատրիարք Կիրիլը, ով այն ժամանակ Ռուս Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ղեկավարն էր: Այդ նույն համերգին ներկայացվեց նաև Ռուս Եկեղեցու Պատրիարք Իլյա Երկրորդի ուղերձը ռոք համերգին համախմբված մարդկանց: Ռուս Եկեղեցու քարոզչական գործունեության շրջանակներում ստեղծվել է ռոք-միսիոներականությունը, որի մեջ ներգրավված եկեղեցականները սերտ շփումներ են պահպանում ռոքերների հետ, մասնակցում ռոք համերգներին: Անգամ կուսակրոն, ամուսնացյալ հոգևորականներ, ովքեր սիրում են երաժշտության այս ժանրը և կամ իրենց խոսքով նախկին ռոքերներ են եղել, համերգներին ելույթ են ունենում նաև իրենց կատարումներով կամ որևէ ռոք խմբի ելույթներից որևէ մեկին ձայնակցում բեմում:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու այս տեսակ քարոզչությունը, իհարկե, ունի իր ընդդիմախոսները: Դժգոհություններից մեկն այն է, որ քարոզչության համար կարելի է այցելել այն վայրերը, որտեղ հավաքվում են ռոքի սիրահարները և ոչ թե համերգներին խոսքով կամ երգելով ելույթ ունենալ: Բացի դրանից, կարծես թե տարբերակում է դրվում երաժշտության այլ ժանրեր և ռոքը նախընտրողների միջև՝ առավելությունը տալով վերջիններին: Եթե ընտրվել է նման քարոզչության ձև, ուրեմն, հոգևորականները պետք է ներկայանան նաև, օրինակ, ռեփ համերգին և ռեփ երգելով, կամ ավելի ճիշտ՝ արտասանելով՝ իրենց համակրանքն արտահայտեն ու իրենց խոսքն ուղղեն նաև այս ժանրի երկրպագուներին: Ամեն դեպքում, նկատի ունենալով ագրեսիայի մղող կամ ագրեսիվ տրամադրվածություն առաջացնող որոշակի երաժշտություն, նաև ռոքի որոշ ենթատեսակների երաժշտությունը, պետք է զգուշավորություն դրսևորել ինչ-որ բան ունկնդրելիս: Այսպես, ռոքի ենթատեսակներից գարաժային ռոքը, որն առաջացել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1960-ական

թվականներին, երբ մարդիկ հավաքվում էին ավտոտնակներում՝ «գարաժներում», և այս տեսակի երաժշտություն հնչեցնում, կարող է մեկի նախապատվության մեջ լինել: Սակայն այս ենթատեսակի երգերի վերնագրեր կան, որոնք նույնպես կարող են հակաքրիստոնեական կամ հոգեմտավոր իմաստով քայքայիչ լինել:

Մուսուլմանության մեջ չի ողջունվում հատկապես իմամի՝ հոգևոր սպասավորի նախասիրությունը և առավել ևս նրա կողմից կատարումները ռոք երաժշտության. դրա պատճառով նրան կարող են հեռացնել հոգևոր ծառայությունից:

Քրիստոնյայի կողմից երգ-երաժշտության ունկնդրության համար ծայրահեղական կամ սնոտիապաշտական նեղմտություն չպետք է ունենալ: Հեռու մնալով սատանիզմի, ագրեսիվության ու քայքայիչ գործողությունների մղող ծանր երաժշտությունից՝ եկեղեցու անդամ հանդիսացող քրիստոնյան կարող է ունկնդրել տարբեր ժանրերի երաժշտություն՝ դրա համար հիշելով երիտասարդներին ուղղված Սուրբ Բարսեղ Կեսարացու խրատը գիրք կարդալու, հեթանոսական գրականության առնչությամբ: Սուրբ Հայրը խորհուրդ է տալիս ընթերցել նաև հեթանոս հեղինակների գործեր՝ դրանցից վերցնելով կարևորը և չընդունելով ու մերժելով վնասակարը: Այսպես կարելի է վարվել նաև երաժշտության պարագայում:

## **ԿԻՆԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ**

### **1. Ըստ կրոնական, քրիստոնեական տեսակետի՝ որո՞նք են կնոջ և տղամարդու դերակատարության տարբերությունները:**

Աստվածաշնչում ասվում է, որ սկզբում ստեղծվեց տղամարդը, հետո՝ նրա կողից կինը՝ որպես տղամարդու օգնական (Ծննդ. 2.18): Սակայն Աստուծո կողմից երկուսին էլ հավասարապես իշխանություն տրվեց իշխելու բնության, կենդանական աշխարհի վրա: «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցե՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր

սողունների վրա»,- ասվում է առաջին մարդկանց (Ծննդ. 1.28): Այս տիրելը, իշխելն առաջին հերթին չի նշանակում սպառելու, օգտագործելու վարմունք, այլ նախ և առաջ խնամքի, հոգածության ցուցաբերում: Աստվածաբանության մեջ աստվածաշնչյան այս համարն է նաև գործածվում՝ ցույց տալու համար Աստծո կողմից մարդու կարգվելը որպես արարչագործության տնտես: Աստվածաշնչում հենց այս իմաստով է գործածված իշխանություն հասկացությունը, և տղամարդու՝ կնոջ նկատմամբ գլխավոր լինելը հոգատարության, խնամքի իմաստով պետք է հասկանալ:

Երբ առաջին մարդիկ վտարվեցին դրախտից, Աստված դժվարություններ դրեց այն գործունեությունների մեջ, որոնք հատուկ էին տղամարդուն և կնոջը: Տղամարդուն ասվեց, որ քո երեսի քրտինքով պիտի ուտես քո հացը, իսկ կնոջը ցավ ու դժվարություններ տրվեցին որդեծնության մեջ (Ծննդ. 3.16, 19): Այս իրողությունը ցույց է տալիս, որ հատկապես տղամարդը պիտի զբաղվի ընտանիքի համար հաց հայթայթելով, այսինքն՝ ընտանիքի խնամքով ու հոգածությամբ, իսկ կնոջը հատուկ է որդեծնությունը, մայրական բնազդը, և դրանցով պայմանավորված՝ կանացի առանձնահատուկ գործը դաստիարակության ու կրթության կամ կանանց բնորոշ այլ գործունեության: Սակայն եթե կինը, իր կոչումն արժևորելով, զբաղվում է նաև հասարակության մեջ օգտակար գործունեությամբ, ապա դա գովելի է համարվում Եկեղեցու կողմից: Խրիմյան Հայրիկը ընտանիքի մասին իր ստեղծագործության մեջ ընտանիքը նմանեցնում է մի թագավորության, որտեղ թագավորը ամուսինն է, թագուհին՝ կինը: Ուրեմն, խտրականություն չենք դնում տղամարդու և կնոջ միջև ստորակայության կամ գերակայության իմաստով, այլ նշում ենք մարդկային կյանքում կնոջ ու տղամարդու դերակատարության տարբերությունը:

**2. Աստվածաշնչում կարծես թե կնոջ ստորակայությունը նշող խոսքեր կան. «Աղոթքի ժամանակ կինը պետք է գլխաշորով լինի, իսկ տղամարդը՝ գլխաբաց» (Ա Կորնթ. 11.4-7, 10, 13), «կինը հնազանդ պետք է լինի ամուսնուն» (Ծննդ. 3.16, Եփ. 5.22, 24): Արդյո՞ք Եկեղեցին ընդունում է, որ կնոջ և տղամարդու իրավունքները հավասար են բոլոր ոլորտներում:**

Աստվածաշնչում ասվում է, որ կինն ստեղծվեց տղամարդու համար, և ոչ թե տղամարդն է ստեղծվել կնոջ համար (Ծննդ. 2.18, Ա Կորնթ. 11.8-9): Պողոս առաքյալը նշում է, որ մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը, և երբ կինն աղոթքի կանգնի, պետք է գլխին քող դնի: Տղամարդը գլխաբաց կարող է կանգնել, որովհետև, որպես խորհրդանիշ, մարդու իշխանությունը կնոջ հանդեպ արտացոլում է Աստծո իշխանությունն արարածների հանդեպ, իսկ կինը ներկայացնում է նաև իր գլուխը, որը տղամարդն է՝ մեղավոր արարած: Դրա համար էլ ծածկում է իր գլուխը Աստծո առջև գտնվելու, աղոթքի պահին: Այսինքն՝ խոսքն այստեղ խորհրդանշանների, համապատասխան իրողությունը խորհրդաբար ներկայացնելու մասին է: Այդ իշխանությունը, ինչպես նշեցինք, հիմնականում ենթադրում է սեր ու հոգածություն և ոչ թե տիրապետության, տիրոջ և ստրուկի հարաբերություն: Եվ քողը խորհրդանշում ու հիշեցնում է նաև Աստծո հոգածությունը արարածների հանդեպ և տղամարդու պարտավորությունը կնոջ հանդեպ՝ սիրո, հոգատարության, հավատարմության ցուցաբերումով: Ուրեմն, քողը, իբրև խորհրդանիշ, այս հիշեցումն է, և ոչ թե կնոջ ստորադասումը, քանզի քողի գործածության մասին պատվիրած առաքյալը նաև ասում է, որ Քրիստոսով այլևս խտրություն չկա կնոջ և տղամարդու միջև (Գաղ. 3.28):

Կնոջ և տղամարդու իրավունքներին անդրադառնալիս պետք է նշել, որ շփոթում կա այս առումով: Քրիստոնեությունը խոսում է կնոջ և տղամարդու դերակատարության տարբերության մասին, ինչը, սակայն, հաճախ ընկալվում է իրավունքների սահմանափակման առումով: Եվ կինը, և՛ տղամարդն ունեն հավասար իրավունքներ բոլոր առաքինի գործերում, սակայն նրանց դերակատարությունը տարբեր է, քանզի կնոջը հատուկ գործառույթները տղամարդը չի կարող անել: Հին Կտակարանի ժամանակներում կանանց իրավունքների սահմանափակում կար բազմակնության, հասարակության մեջ ընդունված կնոջ ստորակայության սովորությամբ: Սակայն քրիստոնեությունը բարձրացրեց կնոջ վարկն ու հեղինակությունը: Քրիստոս իր ծննդյամբ և Հարությանբ առաջինը պատվեց կանանց: Աստծո մարդեղացու-

մը եղավ կնոջ միջոցով և Հարության ժամանակ Քրիստոս առաջինը երևաց կին էակին՝ Մարիամ Մագդաղենացուն (Մարկ. 16.9, Հովհ. 20.11-18): Աստվածածինը համարվեց քրիստոնեության ամենահեղինակավոր սուրբը:

Այսօր, սակայն, մեր իրականության մեջ ընտանիքներում իշխանությունը հաճախ հասկացվում է հեթանոսական և ոչ քրիստոնեական ընկալմամբ: Շատ ընտանիքներում տղամարդիկ բազմոցին բազմած իրենց զգում են պարսից շահի պես, և կինը նրա առջև պետք է մատուցողի, աղախնի, խոհարարի, ավսեններ լվացողի և հետո էլ իր հաճույքը բավարարողի դեր ստանձնի: Սա ճիշտ մոտեցում չէ, մանավանդ երբ կինը նույնպես աշխատում և կամ էլ տնային գործերով, երեխաների դաստիարակությամբ ծանրաբեռնված է: Տղամարդկությունը կնոջը ծառայեցնելու մեջ չէ, այլ ընտանեկան իրավիճակում իրական տղամարդկությունը կնոջը հարգելն ու օգնելն է, խնամք ու սերը արտահայտելը, անգամ կենցաղային, տնային գործերում միասին լինելը: Պետք է հիշենք առաքյալի խոսքը, ով իմաստուն կերպով ասում է. «Բայց կինն առանց մարդու և մարդն առանց կնոջ չկան ի Տեր. որովհետև, ինչպես որ կինը մարդուց է, այնպես և մարդը՝ կնոջ միջոցով, և ամեն ինչ՝ Աստծուց» (Ա Կորնթ. 11.11-12):

**3. Հայ կնոջ դերը մեծ է եղել ընտանիքի պահպանման, զավակների կրթության, դաստիարակության հարցում, նախկինում՝ նաև եկեղեցական կյանքում: 8-րդ դարում Հայ Առաքելական Եկեղեցին ունեցել է կին շարականագիր՝ Սահակադուխտ Սյունեցին, ինչպես նաև գրչուհիներ ու կույսեր, ովքեր իրենց կյանքը նվիրել են եկեղեցուն, հավատքին: Ինչո՞ւ նրանցից շատ տեղեկություններ չեն պահպանվել:**

Մեր շարականագիրները հիմնականում եղել են Կաթողիկոսներ, ազգային-եկեղեցական նշանավոր գործիչներ, և նրանց մասին լայն տեղեկությունները պայմանավորված են նրանց առաքելության կարևորությամբ, որոնց մասին հիշատակել են պատմիչները: Կին շարականագիրների մասին տեղեկությունները սակավ են, որովհետև նրանք լայն գործու-

ճեղքանակ չեն ունեցել, եղել են միանձնուհի կամ ընտանեկան շրջանակի անձ: Կին շարականագիրներից հայտնի են Սահակադուխտը և Խոսրովիդուխտը: Սահակադուխտը Դվինի կաթողիկոսարանի ավագերեց Սահակի դուստրն էր, Ստեփանոս Սյունեցու քույրը, ով վաղ հասակից կուսության ուխտ անելով՝ մինչև մահը ճգնել է Գառնիի կիրճի քարանձավներից մեկում: Իսկ Խոսրովիդուխտը Սուրբ Վահան Գողթնեցու քույրն է, ում գրած շարականը նվիրված է իր եղբորը, և եկեղեցիներում երգվում է Վահան Գողթնեցու տոնի օրը:

Հայ գրիչների հետ եղել են նաև կին գրչուհիներ: Մինչ այժմ հայտնի են 22 կին գրչուհիներ, ովքեր մեծ մասնակցություն են ունեցել ձեռագրերի ընդօրինակման և նկարազարդման աշխատանքների մեջ: Հայտնի է Վասպուրականի Գագիկ թագավորի կին Մլթե թագուհու Ավետարանը, ով այդ Ավետարանը պահպանել է և հանձնել եկեղեցուն, հորդորել իր անուսնուն կառուցել Վանի Սուրբ Խաչ եկեղեցին, որի վրա և պահպանված է թագուհու պատկերաքանդակը: Թագուհին ներկա է գտնվել բարձրաստիճան հյուրերի, դիվանագետների ընդունման արարողություններին, բանակցություններին: Սյունյաց Մարիամ իշխանուհին կառուցել է Սևանավանքի Սուրբ Առաքելոց, Սուրբ Աստվածածին եկեղեցիները: Սանահինի վանքի Ամենափրկիչ եկեղեցին կառուցել է Աշոտ Գ Ողորմած թագավորի կին Խոսրովանույշը, գրատունը՝ Հրանուշ թագուհին: Խոսրովանույշը կառուցել է նաև Հաղպատավանքի Սուրբ Նշան եկեղեցին:

Մեր պատմիչները հիացմունքով են խոսում կանանց մասին, ովքեր տղամարդկանց հետ կողք կողքի պայքարել են նաև հավատքի ու հայրենիքի պաշտպանության համար: Սամուել Անեցի պատմիչը հիշատակում է Այծեմնիկ անունով հայուհուն, ով հերոսաբար պայքարում էր Անիի պաշտպանության համար, Սուրբ Եղիշե պատմիչը մեծ հիացմունքով է խոսում Վարդանանց պայքարին կանանց մասնակցության մասին՝ նրանց անվանելով հայոց աշխարհի փափկասուն տիկնայք, ովքեր, իրենց փափկությունը մի կողմ դնելով, կնոջ բնությանն ու ֆիզիկական կառուցվածքին հատուկ տկարությունը մոռանալով, ամենայն քաջությամբ լծվեցին պայ-

քարի գործին: Եկեղեցական տոնացույցում ընդգրկված են նաև կին սրբուհիներ, ովքեր քրիստոնեական կյանքի օրինակ են ծառայում տղամարդ և կին բոլոր քրիստոնյաների համար:

Այսպիսով, Եկեղեցու կողմից կանանց սրբադասումը, մեր պատմիչների մեծ հիացումնքը, հասարակական և հայրենիքի պաշտպանության գործին տղամարդկանց կողքին նաև կանանց մասնակցությունը, Եկեղեցու ծիսական արարողակարգում նաև կանանց ստեղծագործությունների ներգրավումը և նրանց ստեղծագործությունների կանոնականացումը ցույց են տալիս, որ հայ կյանքում մեր նախնիները հեռու են եղել կանանց ստորակարգելու ընթացքից, և մեծապես գովելի են համարել նաև կանանց ազգօգուտ ու օգտաշատ գործունեությունը:

#### **4. Այսօր Հայ Առաքելական Եկեղեցին ինչպե՞ս է ընդունում կին հոգևորական ունենալու գաղափարը:**

Պատմության մեջ մինչև 20-րդ դարը կին հոգևորականներ չեն եղել: 20-րդ դարում ֆեմինիստական շարժումը բերեց այն գաղափարը, որ քաղաքական, հասարակական, տնտեսական բնագավառներում կանայք ևս կարող են տղամարդկանց համահավասար գործունեություն իրականացնել: Այս շարժումն աշխուժացավ հատկապես Առաջին համաշխարհային պատերազմից հետո, որի ընթացքում միլիոնավոր տղամարդիկ էին զոհվել, և, հետևաբար, կանայք պետք է առավել գործուն դեր ստանձնեին հասարակական կյանքում: Պետք է ասել, որ կանայք չունեին քվեարկության իրավունք, սահմանափակ էին քաղաքական, տնտեսական գործունեության իրավունքները: Եվ արդարացիորեն պայքարելով այս ամենի դեմ՝ ֆեմինիզմը հասավ ծայրահեղության՝ ցուցումներ բերելով նաև սեռական հարցերում կանանց ազատության ու նաև սանձարձակության, իր մարմնի տնօրինման իրավունքի գաղափարով արհեստական վիժեցման, նույնասեռական հարաբերությունների մեջ գտնվելու ցանկության իրավացիության և այլ մերժելի իրողությունների վերաբերյալ: Տղամարդկանց հետ համահավասար գործունեություն իրակա-

նացնելու ձգտումը ծայրահեղության հասավ նաև եկեղեցական ոլորտում, որտեղ կանայք պայքարում էին նույնպես քահանայական աստիճանին բարձրանալու համար: Ի վերջո, բողոքական եկեղեցիները սկսեցին ազատ մեկնաբանություն ցուցաբերել քրիստոնեական ավանդույթների առնչությամբ, քանզի ի սկզբանե ընդհանրապես մերժում են սրբազան ավանդությունը: Սրանից զատ արևմտաեվրոպական բողոքական եկեղեցիները քրիստոնեական ավանդական ընկալումներն ու արժեքներն աղավաղեցին՝ ըստ սեփական հայեցողության: Այս եկեղեցիներում նախ ընդունելի ու գովելի համարվեց միասեռականությունը, այնուհետև սկսեցին միասեռականներին օրհնել եկեղեցիներում, հետո նաև այդպիսիների պսակի արարողություն կատարել, և այն բոլոր եկեղեցիները, որոնք ընդունեցին միասեռականությունն իբրև սովորական երևույթ քրիստոնյայի համար, այսօր հենց այդ նույն եկեղեցիներն են, որ ընդունում են կանանց ձեռնադրությունը, քահանայությունը, եպիսկոպոսացումը: Ուրեմն, սա ցույց է տալիս, որ այդ եկեղեցիների դիրքորոշումները կանայական են:

Պատմականորեն առաքյալները միայն տղամարդիկ են եղել, Քրիստոս միայն տղամարդկանց ընտրեց Իր պատվիրած առաքելության իրականացման համար: Առաքյալի հորդորներում ևս պատվերներ կան միայն տղամարդկանց հոգևոր ծառայության կոչելու (Ա ՏԻմ. 5.17, ՏԻտ. 1.5-7): Աստվածաշնչի մեկնության տեսակետից սա բացատրվում է հարուցյալ Քրիստոսի արգելքով, երբ Քրիստոս արգելում է Մարիամ Մագդաղենացուն մոտենալ իրեն (Յովհ. 20.17), ինչը բացատրվում է նաև եկեղեցական ծառայության ոլորտում կնոջն ուղղված արգելքի իմաստով: Կանայք չեն կարող եկեղեցու խորան բարձրանալ, եկեղեցական կանոններով Մկրտության ժամանակ նույնիսկ արգելված էր կանանց մոտենալու մկրտության ավազանին, որովհետև մկրտությամբ ժառանգորդ ենք դառնում Երկնքի արքայության և հավիտենական կյանքի, որից մարդիկ զրկվել էին կնոջ մեղքի պատճառով: Սակայն այս սահմանափակումը ոչ թե դատապարտություն է կանանց հանդեպ, այլ արարողության ծիսական-խորհրդանշական լեզվով հիշեցում առաջին մարդկանց մեղ-

սագործության ու անկման, որպեսզի մարդիկ միշտ զգոն լինեն, դիմակայեն չարի փորձություններին և կարողանան ապրել աստվածային կամքի համաձայն:

Հայ իրականության մեջ, սակայն, եղել են սարկավագուհիներ, ովքեր օգնել են քահանային եկեղեցական սպասավորություն կատարելու: Բայց դա կրել է միայն տեղական բնույթ, համընդհանուր և կանոնական չի համարվել ողջ եկեղեցու համար, և գործադրվել է հատկապես կանանց վանքերի, կուսանոցների պարագայում: Եկեղեցում հարգվել է կին սարկավագների ծառայությունը, և երբ անհրաժեշտություն է եղել, եպիսկոպոսի թույլտվությամբ նաև կանայք են եկեղեցական այդ աստիճանը ստանձնել և եկեղեցուն մեծ օգտակարություն բերել նաև այս ոլորտում: Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի գլխավոր մուտքի դուռը Թիֆլիսի Սուրբ Ստեփանոս վանքի միանձնուհու՝ ավագ սարկավագուհի Հռիփսիմե Թահիրյանցի նվերն է Մայր Աթոռին 1889 թ., ինչը և վկայում է դռան վրայի փորագրությունը:

### **5. Մայր Թերեզան իր առաքելությամբ չի զիջել տղամարդ հոգևորականներին: Արդյո՞ք Հայ եկեղեցին այսօր նման կանանց կարիք չունի:**

Մայր Թերեզան մարդկանց ծառայելու կոչված տղամարդկանց ոչնով չի զիջել և շատ անգամներ նույնիսկ գերազանցել է սոցիալական ծառայության, դժվարին իրավիճակներում հայտնված մարդկանց օգնելու սպասավորության մեջ: Նա կին հոգևորական չի եղել, այլ Կաթոլիկ եկեղեցու կանացի միաբանության անդամ: Իհարկե, այսօր էլ բոլոր հասարակություններում նման նվիրյալ կանանց կարիքը կա: Մենք սփյուռքի թեմերում ունենք կանանց կազմակերպություններ, որոնք նաև Հայաստանում են գործունեություն ծավալում: Այդ կազմակերպություններում համախմբված կանայք իրենց խնամատար, սոցիալական ծառայությունն են մատուցում: Հայաստանում ևս կան ընտանիքների, կանանց իրավունքների պաշտպանության կազմակերպություններ, որոնցում ներգրավված են հիմնականում կանայք, և զովելի է, որ կանայք այդպիսի օգտաշատ գործունեություն են ծավալում:

**6. Տղամարդը միշտ կես-կատակ, կես-լուրջ, կնոջը մեղադրել է դրախտից վտարվելու համար: Սուրբ Մարիամ Աստվածածնի միջոցով վերաբերմունքը կարծես փոխվում է կնոջ կերպարի հանդեպ: Հայ եկեղեցին տոնում է նշանավոր սրբուհիների տոները, որոնցից են Սուրբ Հռիփսիմեն, Սուրբ Գայանեն, Սուրբ Մարիանեն և այլք, ովքեր իրենց կյանքը զոհեցին հանուն Քրիստոսի: Ժամանակակից կինը թե՛ մտավոր, թե՛ հոգևոր առումով մեծ փոփոխություն է կրել: Այսօր հայ կինն ինչպե՞ս կարող է ներգրավվել եկեղեցու գործունեության մեջ:**

Եկեղեցական տոնացույցում ներգրավված են կին սրբեր, ովքեր օրինակ են հանդիսանում բոլոր ժամանակների կին թե տղամարդ քրիստոնյաների համար: Տղամարդ և կին սրբերին նվիրված տոներ կարգելով, վարքագրություններով նրանց օրինակը հավասարապես մատուցելով բոլոր հավատացյալներին՝ Եկեղեցին նույնապես զնահատել է սրբերի և սրբուհիների անձնագոհությունը, նվիրյալ կյանքն ու գործունեությունը՝ հանուն Քրիստոսի և Սուրբ Եկեղեցու: Հայ եկեղեցական անդաստանում գործում են տիկնանց կազմակերպություններ: Այս կազմակերպությունները կանոնակարգված գործունեություն են իրականացնում հատկապես կազմակերպված ծուխերում: Տիկնանց կազմակերպության անդամներն օգնում են և աջակից են եկեղեցական արարողությունների, միջոցառումների կազմակերպման, հանդիսությունների իրականացման գործում: Եկեղեցական տարբեր կառույցներում, ծխական, թեմական խորհուրդներում, գրասենյակային, վարչական աշխատանքներում ներգրավված են կանայք, ովքեր ըստ իրենց ունակությունների նաև կարող են ստանձնել բարձր պաշտոններ: Այսօր էլ Եկեղեցին կարիքն ունի նվիրյալ կանանց և սիրով սպասում է, որ առավել կստվարանան կանանց շարքերը, ովքեր բարեսիրական, տիկնանց, ծխական, թեմական կազմակերպությունների կամ եկեղեցական կառույցների մեջ ներգրավվելով՝ իրենց բարի ծառայությունը կբերեն մեր Սուրբ Եկեղեցուն:

**7. Արդյոք ծիշտ չէ՞ նաև Եկեղեցու կողմից կնոջ և տղամարդու միջև հավասարությունը շեշտելն ու հաստատելը:**

Ռուս Ուղղափառ Եկեղեցու ակնառու հոգևորականներից քահանա Ալեքսանդր Շմենանը, ով հայտնի է աստվածաբանական ու եկեղեցաբանական լուրջ աշխատություններով, ասում է, որ հավասարության հիմքում ընկած համեմատությունը չարիքի աղբյուրն է. այն բերում է ապստամբության և բաժանումի: Դա սատանայի ծագումնաբանությունն է: Հավասարությունը հաստատվում է որպես տարբերությունների անպիտանություն: Հավասարության սատանայական սկզբունքին քրիստոնեությունը հակադրում է սերը, որի էությունը համեմատության բացակայության մեջ է: Աշխարհում չկա և չի կարող լինել հավասարություն, քանի որ աշխարհն ստեղծված է սիրով և ոչ թե սկզբունքներով:

Աշխարհը կարիք ունի սիրո և ոչ թե հավասարության: Հենց սիրո մեջ է արմատավորված մարդու երկվությունը՝ որպես տղամարդու և կնոջ: Դա սխալ չէ, որը մարդկությունը կարող է ուղղել հավասարությամբ, և կամ թերություն, պատահականություն չէ, այլ կյանքի էության առաջին և գոյաբանական արտահայտությունը: Սա նշանակում է, որ ոչ մի հավասարություն չկա, այլ կա գոյաբանական տարբերություն, որ հնարավոր է դարձնում սերը, այսինքն՝ միավորությունը և ոչ թե հավասարությունը: Հավասարությունը միշտ ենթադրում է հավասարների բազմակիություն՝ երբեք միավորություն չդարձող, մինչդեռ տարբերությունը բերում է միավորություն, որում տարբերությունը չի ոչնչանում, այլ դառնում է միություն, կյանք, ստեղծագործություն:

**«ԱԶԳ» ՀԱՍԿԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**1. Ի՞նչ է ազգը, ինչպե՞ս սահմանել «ազգ» հասկացությունը:**

«Ազգ» հասկացությունը կարելի է սահմանել՝ ելնելով երկու տարբեր դիրքորոշումներից: Ազգը էթնիկական նույն ծագումը, պատմական հայրենիքը, լեզուն, մշակույթն ունեցող

մարդկանց հավաքականությունն է, որում առկա է ազգային ինքնության կամ պատկանելության գիտակցությունը: Այս սահմանման մեջ նշված հատկություններից որևէ մեկի կամ մի քանիսի բացակայությունը, սակայն, ամբողջովին չի ջնջում կամ բացառում ազգային պատկանելության իրավունքը, այլ տվյալ բանաձևման համապատասխան՝ այդ պատկանելության թերի լինելն է մատնանշում: Մակերեսային ընկալումով՝ ազգային պատկանելությունը կապվում է սոսկ էթնիկական ծագման հետ, սակայն այդ պատկանելությունն ամբողջական է դառնում միայն վերը թվարկված հատկությունների առկայությամբ:

Մեկ այլ դիրքորոշմամբ՝ ազգը ոչ թե էթնիկական նույն ծագումն ունեցող ժողովուրդն է, այլ այն մարդկանց համախմբումը, ովքեր միևնույն հայրենիքն ունեն, նույն մշակութային արժեքների կրողներն են հանդիսանում և իրենց համարում են որպես այդպիսին: Այս դիրքորոշման մեջ առանձնակի չի կարևորվում էթնիկական ծագման, լեզվի գործոնը, և առաջնային է համարվում պատկանելության զգացման, գիտակցության կարևորությունը:

Հիշատակյալ երկու դիրքորոշումների դրսևորումները կարող ենք տեսնել տարբեր ժողովուրդների օրինակով: Հայ ժողովուրդը ծագում է էթնիկական նույն արմատից, դարեր շարունակ ունեցել է իր պատմական հայրենիքը, լեզուն, ուրույն մշակույթը: Այսօր հատկապես Հայոց Ցեղասպանության պատճառով հայ ազգը կորցրել է իր հայրենի երկրի մեծ մասը, սփռվել աշխարհով մեկ: Տարբեր երկրներում բնակություն հաստատած հայերի սերունդները դժվարանում են խոսել կամ այլևս չեն խոսում հայերեն, առավել կրողն են նաև այլ ազգերի մշակույթի, կենսակերպի: Այս իրավիճակում Սփյուռքում Հայ Առաքելական Եկեղեցին իրականացնում է նաև հայապահպանության առաքելություն՝ ջանքեր ներդնելով հայ հոգևոր-մշակութային, ազգային արժեքներին հաղորդ դարձնելու հայորդիներին, ազգային ինքնության գիտակցությունն ամրապնդելու:

Ցեղասպանության ընթացքում և դրան հաջորդած տարիներին բազմաթիվ հայեր բռնի կրոնափոխ եղան, որոնցից շատերը, սակայն, պահպանեցին ազգային ինքնության հիշո-

ղութունը և այն փոխանցեցին նաև իրենց արդեն այլակրոն սերունդներին: Կրոնափոխ հայերի մի մասն էլ բոլորովին կորցրեց ազգային պատկանելության գիտակցումը: Այսպիսի իրավիճակում հայտնված հայերից շատերը, սակայն, այսօր վերագտնում են իրենց անցյալի ուղիները և բարձրաձայնում ազգային պատկանելության մասին: Այսպիսով, հայ ժողովրդի օրինակը ցույց է տալիս, որ «ազգ» հասկացության ամբողջական դրսևորումից զատ նաև եղել են այդ հասկացության մեջ կարևոր համարվող լեզվի, հայրենիքի, կրոնական պատկանելության հատկությունների բացակայությունները, ինչը, այնուամենայնիվ, ամբողջովին չի զրկում «ազգ» հասկացության շրջագծում լինելու իրողությունից:

«Ազգ» հասկացության սահմանման վերոնշյալ երկրորդ դիրքորոշման օրինակ են Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովուրդը, ինչպես նաև հայ ժողովրդի պատմական անցյալում հայության մեջ ընդգրկված և հայացած նշանավոր գործիչները: Միացյալ Նահանգների ժողովուրդը կազմված է էթնիկական տարբեր պատկանելության անձերից՝ անգլիացիներ, ֆրանսիացիներ, աֆրոամերիկացիներ, իսպանացիներ, չինացիներ, բնիկ հնդկացիներ, հայեր և այլն: Ամերիկայի քաղաքացիներ հանդիսացող և Միացյալ Նահանգներն իրենց հայրենիքը համարող, այդ երկրի մշակութային արժեքները, կենսակերպը կրող անձերի հավաքականությունը համարվում է Ամերիկայի ժողովուրդը, որի համար պաշտոնապես գործածվում է «ամերիկյան ժողովուրդ» կամ «ամերիկյան ազգ» հասկացությունը:

Այսպես նաև հայոց պատմության մեջ արձանագրված թագավորական տոհմեր ու նախարարական տներ ներկայացնում են տարբեր էթնիկական ծագմամբ Հայաստան եկած և հայացած, այսինքն՝ Հայաստանն իբրև հայրենիք ընդունած, հայոց հոգևոր-ազգային արժեքները որդեգրած, ազգային պատկանելությամբ կողմնորոշված անձերին: Հայ ժողովուրդն էթնիկական ծագումնաբանությամբ սերում է Հայկ Նահապետից և նրա սերունդներից: Սակայն հայոց Արշակունյաց թագավորական տոհմը պարսկական ծագում ունի, Մամիկոնյան նախարարական տոհմը, որից սերել է և մեր ազգային-եկեղեցական մեծագույն սրբերից Վարդան Մամի-

կոնյանը, չինական ծագում ունի, Արծրունիները՝ ասորական և այլն:

Ընդհանուր իմաստով մարդկության էթնիկականությունն աստվածաշնչյան, կրոնական ընկալումով, բոլոր ժողովուրդների սկզբնավորմանն անդրադարձով գնում է դեպի ընդհանրություն՝ ջրհեղեղից հետո Նոյի որդիներից առաջացած լինելով (Ծննդ. 7.23, 9.1, 10.32), իսկ ծագումնաբանական իմաստով նրանցից ավելի վեր գնալով՝ հասնում ենք մարդկության նախածնողներին՝ Ադամին ու Եվային, ովքեր ստեղծվել են Աստծո կողմից (Ծննդ. 1.26-27, 2.7, 18, 21-23):

**2. Ազգ հասկացությունը կամ ազգային պատկանելությունը ենթադրո՞ւմ են ժողովրդի ստեղծած մշակույթի, նրա ժառանգության միայն մի մասի կրում կամ ժողովրդի արժեքների, պատմության ոչ ամբողջական ընդունում: Ժողովրդի արժեքների, պատմության հանդեպ ընտրողական վերաբերմունքը կամ դրանց անտեսումը խափանո՞ւմ է ազգային պատկանելությունը:**

Որևէ ազգին պատկանելությունը ենթադրում է այդ ազգի ստեղծած կամ կերտած արժեքների ամբողջական ընդունում, այդ արժեքների ժառանգորդը լինելու գիտակցության առկայություն: Քրիստոնյա ժողովրդի կողմից ճիշտ մոտեցում չի լինի բացարձակապես մերժումը հեթանոսական շրջանի ստեղծագործությունների, իսկ եթե առկա է մերժում, ապա դա ոչ թե մշակույթին, այլ քրիստոնեության կողմից անընդունելի և սխալ գաղափարներին ու ավանդույթներին է վերաբերում, որոնցից է, օրինակ, կռապաշտությունը:

Մովսես Խորենացին բանահյուսության գեղեցիկ նմուշներ է համարում հեթանոս հայերի ստեղծագործությունները, հիանում հեթանոսական թագավորների քաջությամբ: Քրիստոնյա հայը երբեք չի մերժում իր նախահայր Չայկին և հպարտ է իր նահապետով ու նրա զավակներով, որոնցից սերել է հայ ազգը: Անցյալի արժևորման հորդորելով՝ եկեղեցական ընդհանրական Չայրերից Սուրբ Բարսեղ Կեսարացին մեծապես օգտակար է համարում հեթանոսական մտածողների, փիլիսոփաների, նշանավոր գործիչների աշխատություններին, կենսագրություններին ծանոթանալը: Նմանապես և

նոր ժամանակաշրջանում առաջադիմական կրոնի արժեքները, դրանց հովանու ներքո ստեղծված գրական-մշակութային ստեղծագործությունները պետք է նույնպես ընդունվեն ազգի ներկայացուցչի կողմից:

Էթնոհոգեբանության մեջ համապատասխան հիմնավորումներով արտահայտվել են հետևյալ հասկացությունները՝ կատարյալ էթնոկիր, լրիվ էթնոկիր, մասնակի էթնոկիր, ձևական էթնոկիր, զրոյական էթնոկիր: Այս ձևակերպումներն արդեն բացահայտում են ազգային պատկանելության լրիվ, մասնակի կամ ձևական իրողությունը, որը փաստացիորեն հանդիպում է կյանքում:

**3. Ազգի կամ ժողովրդի մասին խոսելիս կարելի է նմանություն տեսնել անհատի հատկությունների հետ, քանի որ մարդը ևս այլ մարդկանցից տարբերվում է իր կերտվածքով, ուսումով, դաստիարակությամբ, հավատալիքով և այլն: Ազգության վերաբերյալ կա՞ն նման բնորոշումներ կամ սահմանումներ, որոնք առավել հստակեցնում են մի ժողովրդին մյուս ժողովուրդներից տարբերող հատկանիշները:**

Ազգության բնորոշման վերաբերյալ բավականին հետաքրքրական հոդված է հրապարակել Լևոն Շանթը՝ «Ի՞նչ է ազգությունը» վերնագրով, 1923 թ. Բոստոնում հրատարակող «Հայրենիք» ամսագրում (Լ. տարի, թիւ 3, յունուար): Նրա դատողություններն ու մտքերը հատվածաբար ներկայացնում ենք ստորև:

Լեզու, կրոն, հայրենիք, պետություն, ամեն մեկը սոսկ առանձին վերցրած, անկարող է մի ժողովրդին մյուս ժողովուրդներից զատել ամեն պայմանների մեջ, ամեն դեպքի համար, թեև դրանցից ամեն մեկը առաջնակարգ կարևորություն ունեցող հատկություն է՝ մի ժողովրդին այլ ժողովուրդներից տարբերող:

Ապրող թե անկենդան մարմինը, ինչպես և ամեն ընկերական հաստատություն ու երևույթ սահմանելու համար պետք է վերցնենք իր բոլոր էական հատկությունների գումարը միասին:

Որոշ ցեղային ծագում ու խառնուրդ ներկայացնող, որոշ աշխարհագրական միջավայրի մեջ ապրող, որոշ պատմական անցյալի ու ներկայի տեր, որոշ ֆիզիկական ու հոգեկան կազմով, որոշ աշխատանքներ, աշխատելու եղանակ, վարք ու բարք ու սովորություններ ունեցող, որոշ կրոնական ըմբռնումներով ու պաշտամունքով, որոշ պետական ձևով ու կազմով, որոշ լեզվով և որոշ հոգեկան ստեղծագործությունների ժառանգորդը եղող մի ժողովուրդ բոլորվին տարբեր և ուրույն էություն է իր նման ուրիշ էությունների հանդեպ:

Ճիշտ այնպես, ինչպես որ մարդկային մի էակ ուրույն մարդկային միություն է՝ տարբեր մյուս մարդկային արարածներից իր ծննդով, իր արդեն ապրած կյանքով, իր մեծացած միջավայրով, ստացած կրթությամբ, իր ֆիզիկական ու հոգեկան խառնվածքով, իր խոսվածքով, իր գործունեությամբ ու ստեղծագործություններով: Այս բոլորը, երբ միասին ենք վերցնում, մարդը դադարում է պարզ միավոր լինելուց միլիոնավորների թվի մեջ և դառնում է մի անհատ, մեկ հատիկ, բացառիկ իր նմանների ծովի մեջ: Այդ բոլոր հատկությունների և իրողությունների գումարն է, որ կազմում է որևէ մարդու անհատականությունը: Այդպես էլ որևէ ժողովրդի առանձնահատուկ բոլոր բնական և մշակութային տվյալների գումարն է, որ կազմում է ժողովրդի անհատականությունը:

Ժողովուրդների համար «անհատական» բառի փոխարեն սովորաբար գործածում ենք «ազգային» բառը և ժողովուրդների անհատականությունն անվանում ենք ազգություն: Որով և ստանում ենք հետևյալ պատասխանը.

Մի ժողովրդին այլ ժողովուրդներից զատողն ու առանձնացնողը իր ազգությունն է, և ժողովրդի մասերն ու անհատները իրար կապողը՝ իր ազգային գծերը: Ժողովրդի անհատականությունը կազմող բոլոր երևույթները՝ լինեն հիմնական-բնական, թե՛ ստեղծագործական-մշակութային, բոլորն էլ շատ սերտ կերպով կապված ու հյուսված են իրար, իրարից են ծնվում, իրար պայմանավորում, ներգործում են իրար վրա, ուժեղանում են իրարով և իրար ավելի են շեշտում:

Քաղաքակրթության դեպի վեր դիմող ընթացքի հետ հետըզհետե շատանում ու շեշտվում են ժողովուրդների տարբերությունները, թեքումները, ճյուղավորումները, ամեն մեկի

մասնավոր հակումներն ու մասնավոր զարգացումը. իր ձևի լեզու, այլ ձևի արվեստ, նոր ձևի ըմբռնում, իր տեսակի կրոն, այլ տեսակի պետական կազմ, նոր տեսակի ժողովուրդ: Եվ կամաց-կամաց այն աստիճան են խտանում ու խստանում այդ ազգային գծերը, որ նույնիսկ նույն աշխարհագրական պայմաններն ու նույն զբաղմունքն ու տնտեսական կյանքն ունեցող ժողովուրդներն անգամ խորապես տարբերվում են իրարից, ինչպես հույներն ու փյունիկեցիները:

Համայնական «ես»-ի զգացումը միշտ կա ժողովուրդների մեջ: Բայց այս բոլոր ստեղծագործական աշխատանքի ու արդյունքի ազդեցության տակ այն հասունանում է ու վերածվում ազգային գիտակցության:

Ուրիշ խոսքով՝ մարդկության ու քաղաքակրթության զարգացման հետ ազգությունն ու ազգայինը ո՛չ թե թուլանում է, հյուժվում է ու մեռնում, ինչպես մեզ հավատացնել են ուզում, այլ ընդհակառակը՝ քաղաքակրթվելն ու միշտ բարձրին ձգտելը ամենից հիմնական պայմանն է ազգությունների զարգացման, ազգային գծերի ուժեղացման, ազգային գանձերի դիզման ու իր անկախության գնահատման:

Չմոռանանք. ինչպես որ որևէ հասարակության մեջ անհատների բոլոր մեծությունը, արժեքը, իրենց գեղեցկությունը, տաղանդը, առաքինությունը, իրենց բոլոր բույրն ու հրապույրը ո՛չ թե ուրիշների հետ ունեցած նմանության մեջ է, այլ ընդհակառակը՝ նրանցից ունեցած տարբերության մեջ, իրենց ինքնության, իրենց անհատականության մեջ: Այդպես էլ ժողովուրդները միայն այն չափով արժեք ունեն մարդկության համար, հրապույր ու գեղեցկություն մարդկության առջև, ինչ չափով որ շեշտված ու գրավիչ են իրենց ազգային գծերն ու ընդունակությունները, ինչ չափով որ մեծ է ժողովրդի ազգային կամքը, տաղանդն ու ստեղծագործական ուժը:

Առողջ ու բնական պայմանների մեջ ամեն ժողովուրդ ունի և պետք է որ ունենա իր լրիվ անհատականությունը, այսինքն՝ ազգությունը կազմող թե՛ հիմնական և թե՛ մշակութային բոլոր երևույթները: Սակայն քիչ չեն այն ժողովուրդները, որոնք պատմական բազմադիմի պատճառներով զրկված են իրենց անհատականությունը կազմող մեկ կամ նույնիսկ մի քանի կողմերից, բայց և այնպես չեն կորցրել բոլորովին ի-

րենց անհատականությունը և ապրում են թերի անհատականությամբ:

Գաղութների անհատականության կորստի կամ պահպանման տեսակետից վճռական են երկու կետ՝ արյան խառնուրդը և քաղաքակրթության ազդեցությունը: Եթե նոր հայրենիքի մեջ որևէ ժողովուրդ ապրում է առանց տեղական տարրերի հետ ամուսնական կապի մեջ մտնելու և կարողանում է պահել իր մշակութային հաստատությունները, այսինքն՝ իր պետական մեքենան, կրոնը, լեզուն, կենցաղը, դառնում է գաղութ եվրոպական իմաստով, և իր անհատականությունը մնում է գրեթե անփոփոխ, համեմայն դեպս ոչ շատ տարբեր, քան մի երկրի զանազան գավառները:

Այսպիսով, «ժողովուրդ» բառը երկու իմաստ ունի: Առաջինը՝ ավելի լայն ու անորոշ, նշանակում է անխտիր ամեն տեսակի մարդկային անհատների համախմբում և համագործ է «ամբոխ», «բազմություն», «բնակչություն» բառերին: Երկրորդ իմաստը՝ ավելի նեղ ու որոշ, արտահայտում է ամբողջությունը միևնույն ազգության պատկանող բոլոր անհատների և համագործ է «ազգ» բառին:

Ազգը իր անհատականությունն ունեցող ժողովուրդն է, այսինքն՝ ազգային գծերով ու ազգային քաղաքակրթությամբ իրար կապված անհատների ամբողջությունը: «Ազգ» բառն ինքը, որ «տեսակ» իմաստն ունի, իր հին իմաստով ընտանիք է նշանակում, ինչպես և մնացել է մինչև հիմա «ազգական» ու «ազգանուն» բառերի մեջ: «Ազգի ի՞նչ է» նշանակում է ընտանիքիդ անունն ի՞նչ է, ինչեա՞ն էս: Եվ այն շատ պարզ պատճառով, որ ազգը մեծացած, ճյուղավորված, ժողովուրդ դարձած ընտանիքն է կամ այդպես է ըմբռնված:

#### **4. Այլ ձևակերպումներով ինչպե՞ս են տարբերակվում «ազգ» և «ժողովուրդ» հասկացությունները, և կամ ինչո՞վ են տարբերվում ազգը և ժողովուրդը:**

«Ազգ» և «ժողովուրդ» բառերը հաճախ գործածվում են իբրև հոմանիշներ, քանի որ և՛ ազգը, և՛ ժողովուրդը երկուսն էլ ներկայացնում են մարդկանց հավաքականությունը՝ նույն էթնոսի պատկանող, նույն ինքնությունը, մշակութային ար-

Ժեքներն ունեցող: Սակայն երբեմն «Ժողովուրդ» ասելով՝ նկատի է առնվում նաև էթնիկական նույն սկզբնավորումը չունեցող մարդկանց հավաքականությունը: Սույն սահմանման պարագայում պետք է նկատի ունենալ, որ էթնոսի պատկանելությունը, ինչպես սկզբում նշվեց, կարող է պայմանական նշանակություն ունենալ:

«Ազգ» բառը ծագում է լատիներեն «natio» բառից, որը ծնունդ, սկիզբ, իմաստն ունի: Այստեղից էլ՝ «nation» բառը, որը նշանակում է ազգ, ինչպես նաև այս հասկացության ծագումնաբանական բուն նշանակությունն արտահայտող ֆրանսերեն «naître» բառը, որը նշանակում է ծնվել: «Ազգ» հասկացությունն արտահայտում է առավելաբար կազմակերպված ժողովրդի՝ պետությանը, պետական կառուցվածքով ու կառույցներով, հասարակական-քաղաքացիական ինքնագիտակցությամբ: Պետության առկայությունը, սակայն, պարտադիր չէ ազգի տվյալ բնորոշման համար, եթե կան ազգային կառույցների կազմակերպվածության դրսևորումները, ազգային բարձր ինքնագիտակցություն, ինչպես օրինակ՝ այսօր իրենց պատմական հայրենիքը կորցրած կամ պետություն չունեցող ազգերի պարագայում, որոնցից են ղպտիները, ասորիները և այլք:

Ժողովուրդը կարող է լինել էթնիկական պատկանելության գիտակցությամբ, սակայն առանց պետական-հասարակական, քաղաքացիական կազմակերպվածության: Բայց հարկ է նկատի ունենալ, որ «ազգ» և «Ժողովուրդ» բառերը, այնուամենայնիվ, հոմանիշներ են իրենց նշանակությամբ և օգտագործվում են որպես այդպիսիք: Ներկայումս, սակայն, լայն իմաստով, ինչպես նաև դիվանագիտական նշանակությամբ «ազգ» հասկացությունը մատնանշում է հիմնականում պետական հստակ կառուցվածք ունեցող ժողովուրդներին, ինչի վառ վկայությունն աշխարհի տարբեր պետությունների համախմբումով կազմված Միացյալ Ազգերի Կազմակերպությունն է, որի անվան մեջ «ազգ» բառը հիմնականում պետության ցուցիչի հատկանշմամբ է գործածված:

**5. Ազգային պատկանելության գիտակցության բացակայությամբ կարող է անհատը ազգի ներկայացուցիչ համարվել:**

Ազգը ներկայացնելու համար անհրաժեշտ է այդ ազգին պատկանելության գիտակցումը: Պատկանելության գիտակցությունից զուրկ անձը կարող է ազգի զավակ լինել սոսկ վերացականորեն, էթնիկական ծագումնաբանության նկատառումով, քանզի ինքն իրեն չի դիտարկում որպես տվյալ ազգի ներկայացուցիչ: Ազգային պատկանելության գիտակցության նվազումը տանում է ծուլման և ուժացման: Ազգային նվազ և անհետացող ինքնագիտակցությամբ ապրող համայնքն օտարության մեջ վերանում է իբրև ազգային միավոր՝ ծուլվելով այլ երկրի բնակչության հետ, կորցնելով իր ուրույն ազգային-եկեղեցական կյանքի յուրահատկությունները, արժեքները, մշակույթը: Հայ ժողովրդի պատմության մեջ այդպիսի տխուր վախճան է ունեցել լեհահայ բազմամարդ համայնքը, որն ամբողջականությամբ ծուլվել է երկրի բնակչության հետ և վերացել որպես ազգային հավաքականության բաղադրիչ:

Այսպիսով, այն պարագայում, երբ ազգի ներկայացուցիչ համարվելու հիմնական հատկանիշները բացակայում են, ազգային ինքնագիտակցությունը վերջին կռվանն է ազգայինի շրջագծում մնալու համար:

Յուրաքանչյուր ազգ նաև իր առանձնահատկություններն ունի, որոնք արտահայտվում են տվյալ ազգի ներկայացուցիչների հատկանիշներով ու գործողություններով: Հեռանալով ազգային արմատից՝ մարդը կորցնում է նաև իր ազգին հատուկ գծերը: Հետաքրքրական է, որ Մխիթար Գոշը ևս իր թղթում անդրադարձել է ազգերի տարբեր հատկություններին («Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիւր»): Նա գրում է, որ բոլոր ազգերն էլ ունեն և՛ բարի, և՛ խոտելի կարգեր և որոշ թերություններ նշելուց հետո անդրադառնում է դրական կողմերին. «Հոյներն իմաստուն են և ողորմած, հոռոմները [իտալացիներ] զգաստ են աղոթքի մեջ և հնազանդ են առաջնորդներին, ասորիները խոնարհ են ու ճգնող, հայերը պահք պահող են և ողորմած գերիների ու եկեղեցականների հանդեպ, սրբություն սիրող, վրացիները՝ սուրբ վանքերը մեծարող և առաջնորդներին անբամբաս...»:

**6. Մարդու աշխարհընկալումը, աշխարհաճանաչողությունը մեծապես կախված է կրոնից: Այսօր կան էթնիկական ծագմամբ շատ հայեր, ովքեր այլ կրոն են դավանում, ինչպես օրինակ՝ Հայոց Ցեղասպանությունից հետո Թուրքիայում մնացած հայերը կամ կրոնական այլ պատկանելությամբ օտարազգիների հետ ամուսնացած և կրոնափոխ եղած հայեր: Այսպիսի հայերը, եթե դադարում են ազգային անդաստանում հաստատված կրոնը դավանելուց և կամ ընդհանրապես հեռանում են ազգային արժեքներից, կարո՞ղ են ազգի ներկայացուցիչ համարվել:**

Կրոնական ընկալմամբ է նաև պայմանավորված հասարակության անդամների հարաբերությունը միմյանց հետ, միջանձնական հարաբերությունները, վերաբերմունքը շրջապատի, բնության, բուսական, կենդանական աշխարհի հանդեպ: Սա չի նշանակում, որ աթեիստները, անհավատները չունեն իրենց համապատասխան վերաբերմունքը մարդկանց, շրջապատի հանդեպ, սակայն կրոնը գաղափարական հիմք է հանդիսանում ժողովրդի, ազգի համար ամբողջությամբ վերցրած: Կրոնի հետ է կապված բազմաթիվ արժեքների, մշակույթի ձևավորումը և զարգացումը, որի կրողն է դառնում այդ կրոնը դավանող ժողովուրդը: «Արժեք» ասելով՝ հասկանում ենք մշակութային, պատմական նշանակություն ունեցող արարումները, ձեռքբերումները, մինչդեռ ազգային արժեքների մերժումը ազգային պատկանելությունից նահանջ է նշանակում:

Կրոնը ազգային հավատալիքի, մշակույթի, ավանդույթների, պատմության ստեղծման ու արտահայտման ասպարեզ է նաև, և կրոնի ազգային վերապրումն ու անձնական, հասարակական կյանքում արտահայտումը կարևոր գործոն է ազգային պատկանելության պահպանման համար: Նույն լեհահայերի օրինակով տեսանելի է, որ նրանք, թեկուզ քրիստոնեության հետևորդներ մնացին, բայց դավանության ուղղությունը փոխելով, հեռանալով հավատքի ու մշակույթի ազգային ավանդներից՝ տարրալուծվեցին այլ ժողովրդի մեջ, կորցրեցին ազգությունը, ազգային ինքնությունն ու ինքնագիտակցությունը: Այս իմաստով՝ կրոնափոխ եղած ժողովուրդը չպետք է մերժի իր նախորդ կրոնի իրական արժեք ներկա-

յացնող իրողությունները: Այսպես, քրիստոնեությունը հեթանոսական կռապաշտությունից և աստվածընկալման իմաստով խավարամտությունից գերազույն համարող ազգերը, որոնք դարձան քրիստոնեության, շարունակեցին կարևոր համարել հեթանոսական շրջանի արժեք հանդիսացող ձեռքբերումները և օգտվել դրանցից: Օրինակ՝ հույները չմերժեցին մինչքրիստոնեական շրջանի մեծ փիլիսոփաների, գրողների նշանավոր գործերը, և եկեղեցական հեղինակները, այդ թվում նաև հայազգի, իրենց ստեղծագործություններում լայնորեն գործածեցին նշանավոր փիլիսոփաների աշխատությունները: Քանի որ ազգը հատկանշվում է իր համընդհանուր ծագումնաբանությամբ, մշակույթով, լեզվով, հայրենիքով, ապա «ազգ» հասկացության սահմանման մեջ կարևոր համարվող այս բաղադրիչների անտեսումը խիստ թերի է դարձնում ազգության հատկությունը և նման դեպքում կարող ենք խոսել զուտ էթնիկական ծագում ունեցող և ոչ՝ ազգի ամբողջական հատկանիշները կրող անձի կամ անձերի մասին:

### **ՅՈՒՐԱԿԱՆ ՄԱՍԻՆ**

**1. 20-րդ դարի կեսերից յոգայի ուսմունքը և կիրառությունը տարածվեց աշխարհով մեկ: Այն մեծ ճանաչում գտավ հատկապես արևմտյան երկրներում, հասավ անգամ մինչև Հայաստան: Այսօր շատ մարդիկ տարված են յոգայով և դրա առաջարկած վարժություններով: Ի՞նչ է յոգան:**

Յոգան սկզբնավորվել է հինդուիստական կրոնից և իրենից ներկայացնում է ֆիզիկական, հոգեմտավոր վարժությունների հավաքածու, որոնց նպատակն է միավորել մարմինն ու միտքը և վերջում մարդուն հասցնել լուսավորության: Կան յոգայի տարբեր տեսակներ՝ Հաթհա Յոգա, Կարմա Յոգա, Ռաջա Յոգա և այլն, որոնցից արևմտյան աշխարհում լայնորեն տարածվածը Հաթհա Յոգան է: Յոգայի ջատագովները, ովքեր այն առաջարկում են նաև տարբեր կրոնների, գաղափարախոսությունների հետևորդներին, պնդում են, որ յոգայի ուսուցանած վարժություններում մարմնի դիրքերը չե-

զոք են և անձին չեն ներգրավում հոգևոր գործողության: Ինչպես օրինակ՝ քրիստոնեական աղոթքի ձև է ծնկաչոք աղոթքը, սակայն ծնկաչոք դիրքն առանձին վերցրած՝ որևէ մեկին չի ներգրավում կրոնական գործողության, այլ կարող է նաև լինել ինչ-որ բան փնտրելու, ամուսնության առաջարկ կատարելու կամ մեկ այլ նպատակով: Այսօր կիրառվում է յոզայի սկզբունքների, վարժությունների գործածումն անգամ բժշկության մեջ՝ սրտային հիվանդությունների, ասթմայի, մեջքի ցավի և նույնիսկ հետտրավմատիկ հոգեբանական խախտումների բուժման համար, նշվում է, որ յոզան ունի նաև թերապևտիկ նշանակություն:

## **2. Ուրեմն, յոզայի վարժություններն օգտակա՞ր են, և քրիստոնյան կարո՞ղ է զբաղվել յոզայով:**

Տարբեր եկեղեցիներ, եկեղեցիների պետեր, եկեղեցական փաստաթղթեր անդրադարձել են յոզային՝ կատարված ուսումնասիրությունների հիման վրա յոզայի հետ կապված հարցին քրիստոնեական պատասխաններ տալով: Այդ պատասխաններում նշված են յոզայի թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը:

1989 թ. Կաթոլիկ եկեղեցու Հավատքի վարդապետության կոնգրեգացիան կարդինալ Ջոզեֆ Ռատցինգերի (ով հետո դարձավ Հռոմի Պապ՝ Բենեդիկտոս 16-րդ անունով) գլխավորությամբ փաստաթուղթ հրապարակեց՝ «Քրիստոնեական խոկման որոշ կերպերի մասին» վերնագրով (այս փաստաթղթի ամբողջական անվանումն է՝ «Կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոսներին ուղղված թուղթը քրիստոնեական խոկման որոշ կերպերի մասին»): Քրիստոնեական և արևելյան խոկման տարբերություններին անդրադարձող այս փաստաթղթում նշվում է, որ յոզայի որոշ ֆիզիկական վարժություններ մեքենայաբար առաջացնում են խաղաղության և անդորրության զգացում, հաճելի այլ զգացումներ, գուցե նույնիսկ լուսավորության և ջերմության զգացման երևույթ: Իսկ յոզայի առաջարկած շնչառական վարժությունները, որոնք նույնական են բժշկական վարժությունների հետ, թույլատրելի են՝ առանց

կրոնական կամ միստիցիզմի միտումների և մանտրաների արտասանության:

Սակայն նույն փաստաթղթում հաստատվում էր նաև յոգայի բացասական ազդեցությունը: Ջգուշացում էր տրվում հոգևոր և հոգեբանական վտանգների առկայության մասին: Վտանգներից մեկը յոգայի ֆիզիոլոգիական երևույթները հոգևոր երևույթների հետ շփոթելու մեջ է: Դրանց խորհրդապաշտական, միստիկ փորձառության նշանակություն տալը, երբ անձի բարոյական վիճակը չի համապատասխանում այդպիսի փորձառության, իրենից ներկայացնում է մտավոր շիզոֆրենիայի մի տեսակ, որը տանում է հոգևոր խանգարման և երբեմն բարոյական աղճատման:

### **3. Կա՞ն յոգայի հետ կապված այլ վտանգներ, որոնք կարելի է առանձնացնել, կամ որոնց առնչությամբ ևս Ջգուշացումներ են արվել Եկեղեցու կողմից:**

Յոգայով զբաղվողներին այն ուսուցանողները՝ գուրունները, հանձնարարում են նաև մանտրաներ՝ մեդիտացիայի ժամանակ գործածվող հատուկ բառ կամ բառակապակցություն արտասանել: Յոգայի հայտնի մանտրան է «սօ համ» արտասանությունը, որը հանձնարարվում է ասել հետևյալ կերպ՝ շնչելիս պետք է արտասանել «սօ», իսկ արտաշնչելիս՝ «համ»: Այս բառերի նշանակությունն է՝ «Ես եմ, ես նա եմ», այսինքն՝ ես տիեզերական, ունիվերսալ անձն եմ, ինչը նշանակում է նույնացում աստվածայինի հետ, անձի ձուլումը, միացումը աստվածայինի մեջ և աստվածայինի ձուլումը անձի մեջ: Անձանոթ բառերի արտասանությունը կարող է հակառակ լինել մարդու հավատքին:

2003 թ. Կաթոլիկ Եկեղեցին հրապարակեց «Քրիստոնեական մտորումներ Նոր դար շարժման մասին» 90 էջանոց ուսումնասիրությունը, որը ներկայացնում է Վատիկանի դիրքորոշումն այդ շարժման նկատմամբ: Այդ փաստաթղթում ևս անդրադարձ է կատարվում յոգային հատուկ մեդիտացիային և նշվում են դրա վտանգավոր կողմերը: Ըստ այդմ՝ մեդիտացիայի կամ խոկման ֆիզիկական վարժությունների վրա սևեռումը կարող է վերածվել մարմնի պաշտամունքի, ինչպես

նաև մարմնական վիճակները՝ միստիցիզմի, իսկ խորհրդապաշտության հետ հավասարեցնելը կարող է տանել հոգեկան խանգարման և բարոյական աղճատման: Նմանատիպ փորձառությունը կարող է հետևանք լինել քրիստոնեական խոկման քրիստոսակենտրոն բնույթի կորստի, քանզի առկա է առավել կենտրոնացում սեփական անձի վրա, քան՝ Քրիստոսի: Վաղ քրիստոնեական շրջանում ևս եկեղեցին պայքարում էր գնոստիկ հավատալիքի դեմ, ըստ որի՝ փրկությունը գալիս է ոչ թե հավատքով, այլ ներքին՝ միստիկ գիտելիքի միջոցով:

#### **4. Ներկայացվեց յոգայի, մեդիտացիայի վերաբերյալ Կաթոլիկ եկեղեցու դիրքորոշումը: Իսկ այլ եկեղեցիներ տեսակետներ ներկայացրե՞լ են յոգայի վերաբերյալ:**

2009 թ. մայիսի 25-ին Ռուս Ուղղափառ եկեղեցու պետը՝ Մոսկվայի և Չամայն Ռուսիո Պատրիարք Կիրիլը, Մոսկվայում տեղի ունեցող Չամաշխարհային ռուսական համագումարի շրջանակներում հանդիպում ունեցավ երիտասարդության հետ, որի ընթացքում նա նույնպես անդրադարձավ յոգային և իր կարծիքը հայտնեց դրա վերաբերյալ: Յոգան ընդհանուր առմամբ կազմված է երկու բաղադրիչներից, որոնցից մեկը ֆիզիկական վարժություններն են: Այդ վարժությունների տեխնիկայի մեջ որևէ վատ բան չկա, երբ հոգևոր ինչ-որ ուսմունքից և նախատրամադրվածությունից անկախ են կատարվում: Կաթոլիկ եկեղեցին ևս բժշկական նպատակներով թույլատրելի է համարել որոշ վարժությունների կիրառումը: Սակայն Կիրիլ Պատրիարքը հիշեցրեց, որ, այդուամենայնիվ, յոգան ամենևին էլ ֆիզկուլտուրա չէ, այլ հենվում է բոլորովին որոշակի կրոնի վրա և ենթադրում համապատասխան հոգևոր պրակտիկա: «Յոգան ուղեկցվում է մեդիտացիայով, որին վերաբերվում են մեծ զգուշավորությամբ», - ասաց Պատրիարքը: Նա նաև հավելեց, որ այդ տեսակի գործելակերպի ժամանակ կարող է քայքայվել մարդու ազգային ինքնագիտակցությունը, նրա մշակութային ինքնությունը: Այսպիսի տպավորություն Կիրիլ Պատրիարքը ստացել էր Չնդկաստան կատարած իր այցի ընթացքում այնտեղ բնակվող ռուսների

հետ հանդիպումից, ովքեր բոլորովին այլ արժեքների և այլ աշխարհընկալման կրողներ են: Ուսանողների հետ հանդիպման ավարտին Կիրիլ Պատրիարքն զգուշացրեց երիտասարդներին մեղիտացիայի փորձեր կատարելուց:

Իրապես, յոզայի նպատակը մեղիտացիան է: Հանուն մարմնական առողջության յոզայով զբաղվող մարդն արդեն իրեն նախապատրաստում է որոշակի հոգևոր ընկալումների և նույնիսկ զգացումների, որոնց հանդեպ ինքը սկզբնապես զուցե նախատրամադրվածություն չի ունենում: Եվ ի վերջո, յոզան փնտրտուք է ոչ թե Աստծո, այլ նույնիսկ առանց Աստծո հոգևոր զգացումների, մխիթարության: Յոզան ճանապարհ է, որը շեղվում է դեպի կեղծ միստիցիզմ և կարող է տանել ոչ թե դեպի Աստված, այլ բոլորովին հակառակ ուղղությամբ:

**5. Հոգևորն արժևորելու կամ ներքին խաղաղություն գտնելու յոզայի նպատակն արդյո՞ք չի համընկնում հոգին առավել կարևորելու, հոգևոր խաղաղություն ձեռք բերելու, Աստծո հետ միության հասնելու քրիստոնեական վարդապետության հետ, ըստ որի էլ և յոզայով զբաղվող մարդը կարող է նաև հոգևոր օգուտներ ունենալ:**

Քրիստոնեության և յոզայի, նաև հնդկական կրոնական փիլիսոփայության նմանությունների վերաբերյալ սխալ պատկերացումներին անդրադարձել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը:

Հնդկական փիլիսոփայության դուալիզմի համաձայն՝ աշխարհում երկու սկիզբ կա՝ մատերիա և հոգի: Կյանքը գոյավորվում է այդ երկու սուբստանցիաների միացումից, որոնք բոլորովին տարբեր են, բայց չեն գիտակցում իրենց տարբերությունը և ձգում են միմյանց: Բավական է, որ մարդու հոգին հստակ գիտակցի իր բնության տարբերությունը մատերիայի բնությունից և խորապես ներթափանցվի այդ գիտակցությամբ, այն կազատվի մարմնի հետ կապից և մահից հետո կտարրալուծվի հոգևոր սուբստանցիայի մեջ: Դրա համար էլ ոմանք յոզան անվանում են մահվան արվեստ:

Թվում է, թե ուղղափառ ճգնակեցության ուսմունքը համահունչ է յոզայի նմանատիպ ուսուցմանը: Բայց իրականում տարբերությունը սկզբունքային է: Միտքը մարմնի մասին, որպես հոգու բանտի, հեթանոսական ծագում ունի և հակառակ է քրիստոնեությանը, ըստ որի՝ կենդանի մարդու մարմինը Սուրբ Հոգու տաճարն է (Ա Կորնթ. 3.16, 17, 6.19, Բ Կորնթ. 6.16, Եփ. 2.21-22, Ա Պետ. 2.5): Քրիստոնությունն ուսուցանում է նաև մարմնական հարության մասին, երբ մարդկային մարմինները, սակայն, վերափոխվելու են հարուցյալ մարմինների (Ա Կորնթ. 15.35-55): Յոզան մարդուն առաջարկում է ինքնակատարելագործման սխալ ճանապարհ, ճանապարհ, դեպի որը առաջին մարդուն շեղեց սատանան՝ գայթակղելով նրան Աստված դառնալու հնարավորությամբ (Ծննդ. 3.1-5): Յոզայի ուսուցիչները յոզան մատուցում են որպես արտակրոնական կամ համակրոնական վարժությունների համակարգ, որ տանում է առողջության, ինքնակատարելագործման և ամենաշատը՝ ինչ-որ վերացական լուսավորության: Յուրացնելով յոզայի տարբեր դիրքերի տեխնիկան՝ մարդն անխուսափելիորեն հետագայում ընկղմվում է դրանց հոգևոր նշանակության մեջ, վարժությունների իմաստը հասկանալու համար լրացուցիչ գրականություն ընթերցում: Այն գիտակցումը, որ յոզան գալիս է այլ կրոնից, մարդուն հոգեբանորեն կապում է այլ կրոնի ուսմունքի հետ:

Երբ առողջական նպատակներով բժշկի հանձնարարությունն է լինում յոզայով զբաղվելը, ապա այդ դեպքում հարկավոր է դա քննարկել հոգևորականի հետ: Հոգևորականը, քննելով անձի հակումները, հավատքի խորությունը, կարող է կարևոր խորհուրդներ տալ և որոշակիացնել, թե յոզային հատուկ վարժություններով զբաղվելը որքանով է օգտակար և կամ ի՞նչ աստիճանի վտանգ է առկա քրիստոնյայի հոգևոր կյանքի համար:

**6. Սակայն կարո՞ղ են քրիստոնեության և յոզայի ուսմունքի մեջ առկա նմանություններն առանձին վերցրած օգտակար լինել, և քրիստոնյան հատկապես դրանց վրա ուշադրությունը կենտրոնացնելով՝ զբաղվի յոզայով:**

Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու պետ Անաստասիոս Յաննուլատոսը ժամանակին անդրադարձել է յոզայի խնդրին և ներկայացրել քրիստոնեությունից բոլորովին տարբեր յոզայի ուսմունքի հիմնական դրույթները:

Յոզայի վարժությունները սերտորեն կապված են հին-դուիզմի փիլիսոփայա-կրոնական տեսությունների և աքսիոմաների, հատկապես վերամարմնավորման ուսմունքի հետ: «Յոզա» բառը նշանակում է ձուլում, միություն, կապ: Այն ցույց է տալիս միջոցներն ու ճանապարհներն անդրանցական իրականության հետ միության, մեր աշխարհի բազմազան կապերից ու պատրանքներից մարդու ազատության և Բացարձակի հետ միավորման: Յոզան հորդորում է վերահսկողության մարմնի, կենսականորեն կարևոր օրգանիզմի էներգիայի, շնչառության, զգացումների վրա: Այնուհետև գալիս են հաջորդ փուլերը՝ մեդիտացիա, մտասևեռում, ընկալում, գիտակցում և ազատություն:

Մեդիտացիան կատարվում է անդրանցական իրականության հետ ձուլմամբ: Վերջնական փուլին հասած մարդն ազատվում է էքզիստենցիալ ոլորտից և փրկություն ձեռք բերում: Այս վերջին փուլում յոզը հասնում է անգամ ինքնագիտակցության հաղթահարման, արդեն չի ընկալում շրջապատի երևույթները, չի ընկալում իրեն: Նրա հոգին այլևս ազատ է հիշողությունից ու մոռացությունից, ինչը և համարվում է լուսավորություն: Այդ տեխնիկան ուղղված է Բացարձակի հետ միությանը, դրա համար քրիստոնեության կենտրոնական ճանարտությունները՝ Քրիստոսի մասին որպես Փրկչի, շնորհի, անշահախնդիր սիրո, կենսատու Խաչի վերաբերյալ ոչ մի նշանակություն չունեն: Մեդիտացիայի բոլոր համակարգերը, վարժությունները համապատասխանում են հին-դուիզմի մտածողական չափանիշներին և կրոնական դոգմաներին, որոնք արմատապես տարբերվում են քրիստոնեական Ավետարանի ուսմունքից այնպիսի առանցքային հարցերում, ինչպիսիք են Աստծո, աշխարհի, մարդու, մահվան, փրկության մասին գաղափարները:

Հոգևոր կյանքն աստվածային շնորհի պարզ և և ոչ թե անկախ մարդակենտրոն տեխնիկայի ձեռքբերում: Բացի դրանից, ուղղփառ քրիստոնեության մեջ առկա է իսիխազմի

փորձառությունը, երբ որոշակի կրոնական պայմաններում կարելի է հասնել սուրբ հոգևոր կյանքի Քրիստոսի մեջ, խաղաղության և իսիխայի՝ անդորրի՝ սիրո մեջ: Անաստասիոս Յաննուլատոսի վկայակոչած իսիխազմը միստիկ և ճգնաժողովրդական փորձառություն է, որը հատուկ է արևելյան քրիստոնեությանը 11-րդ դարից ի վեր: Անվանումը ծագում է հունական արմատից՝ «լռության մեջ» նշանակությամբ «ήσυχασμός» կամ «ήσυχία» բառից, որ նշանակում է հանդարտություն, հանգիստ, լուռ, լռություն: Իսիխաստները (հուն.՝ Ἠσυχαστής) պնդում են, որ իրենք կարող են հասնել հոգեզմայլանքի՝ նստելով լռության մեջ և կրկնողաբար աղոթելով: Նրանք նաև հայտարարել են, որ տեսել են Աստծո «անստեղծ լույսը»: 1351 թ. Բյուզանդական Եկեղեցին պաշտոնապես ընդունեց իսիխազմը, և դրա ջատագովներից Գրիգոր Պալաման (1296-1359) սուրբ հռչակվեց: Ավետարանի մեջ կարող ենք տեսնել լռության մեջ խոկման, աղոթքի, Աստծո հետ հաղորդակցության պատվերներ. «Երբ աղօթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր քո դռները» (Մատթ. 6.6), «Աստծո արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկ. 17.21), «ով մերժեցում է Տիրոջը մեկ հոգի է դառնում նրա հետ (Ա Կորնթ. 6.17): Սուրբ Գրիգոր Տաթևացին Մովսես մարգարեի՝ Սինա լեռը բարձրանալու օրինակով խոսում է աստվածաբանության բարձրագույն ձևի մասին, քանզի երբ ամեն իմանալի ու զգալի իրողություն մի կողմ ենք թողնում, մտնում ենք ամպի ու մեզի մեջ Մովսեսի նման (Ելք 24.15-18) և ապա տեսնում ենք Աստծուն՝ վեր ամեն էությունից: Տաթևացու այս ուսուցումը հիմնված է Սուրբ Դիոնիսիոս Արիսպագացու խորհրդրդապաշտական աստվածաբանության դատողությունների վրա: Սա նշանակում է, որ քրիստոնեությունը ևս ունի խոկման, մտասևեռման, աստվածայինի հետ միավորման հնարավորությունը և փորձառությունը՝ հատկապես հիմնված ճիշտ աստվածընկալման ու աշխարհընկալման վրա, և կարիք չկա հոգևոր բարձրագույն զգացումներ ունենալու, ինչպես և ներքին խաղաղություն ու ներդաշնակություն, Աստծո հետ միությունը, այդ միության երանությունը զգալու համար դիմել այլ կրոնների ուսմունքների, որոնք մերժելի են քրիստոնեության կողմից:

## **7. Իսկ Հայ Առաքելական Եկեղեցին որևէ կարծիք ներկայացրե՞լ է յոգայի մասին:**

Հայ Եկեղեցու դիրքորոշումներն այս կամ այն հարցի վերաբերյալ ամփոփված են եկեղեցական կանոնագրքում, արտահայտված են նաև տարբեր եկեղեցական հեղինակների կողմից: Ներկա ժամանակներում, սակայն, երբ ի հայտ են եկել նոր երևույթներ, և նոր պայմանների մեջ է ընթանում քրիստոնեական կյանքը, արդիական հարցերին անդրադարձ է կատարվում եկեղեցիների կողմից հրապարակվող համապատասխան պաշտոնական փաստաթղթերով, որպիսիք լայնորեն կիրառում է Կաթոլիկ Եկեղեցին, և հատկապես սոցիալական հայեցակարգով, որը Հայ Առաքելական Եկեղեցին դեռ չունի: Սակայն նման արդիական հարցերին պարբերաբար անդրադառնում են առանձին եկեղեցականներ, ժողովական մարմիններ, որով հստակեցվում է Եկեղեցու դիրքորոշումը:

Հայ Առաքելական Եկեղեցու հոգևորականներից յոգայի վերաբերյալ մանրակրկիտ ուսումնասիրություն է կատարել Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Այդ ուսումնասիրության վերնագիրն է «Ես եմ ճանապարհը. քրիստոնեության և յոգայի, թեոսոֆիայի, անթրոպոսոֆիայի աստվածճանաչողական համակարգերի ընդհանուր ուրվագծեր և քննական-համեմատական տեսություն»: Այն հրատարակվել է դեռևս Պարզև Սրբազանի եպիսկոպոսության ժամանակ «Գանձասար» աստվածաբանական կենտրոնի կողմից: Աշխատության հիմքում ընկած է Սրբազան Հոր ծայրագույն վարդապետական թեզը: Գրքի սկզբում Պարզև Սրբազանը գրում է. «Յուրաքանչյուր Եկեղեցի ունի իր ավանդությունը, հոգևոր խնդիրների քննության և լուծման իր ուրույն մոտեցումները: Եվ որևէ ուսմունք, որ փորձում է արմատավորվել մեր հայրենիքում, պետք է մանրազնին քննության ենթարկվի Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետության տեսանկյունից և ներկայացվի մեր ժողովրդին, որպեսզի անտեղյակությունը պատճառ չդառնա շեղման և օտարամոլության: ...Հուսով ենք, որ այս գիրքը նոր լույս կսփռի նրանց գիտակցության վրա, ովքեր,

անտեղյակ լինելով քրիստոնեական աստվածճանաչողությանը, չեն պատկերացնում, թե ինչպիսի անդունդ է բաժանում քրիստոնեությունը ոչ քրիստոնեական խորհրդապաշտական ուսմունքներից»:

Պարզև Սրբազանը ևս նշում է յոգայի հիմնված լինելը հնդկական կրոնափիլիսոփայական ուսմունքների, վերամարմնավորման գաղափարի վրա: Ըստ այդմ՝ յոգայի նպատակը ես-ի բազմաթիվ մարմնացումների՝ սանսարայի կամ սանսարայի (սանսկրիտերենից թարգմանաբար նշանակում է թափառում, շրջագայում) շրջանակներից դուրս գալն է, ինչն իրագործվում է գործնական յոգայի վերջին փուլում՝ սամադիում, աստվածային ես-ի հայեցողությամբ:

Բավականին տարբեր են հոգու մասին քրիստոնեության և յոգայի ուսմունքները: Յոգայի փիլիսոփայությունն ուսուցանում է, որ հոգին՝ սանսկրիտերենով՝ ատմանը, լինելով միակ իրականությունը, գտնվում է ամենուրեք և ամեն ինչում, բայց ոչ իբրև առանձին մասնիկ: Եթե յուրաքանչյուր մարդու պատկերացնենք որպես ուլունքի հատիկ, ապա հոգին այն ոսկե շոթան է, որի վրա հագցված են այդ ուլունքները, այն գտնվում է հատիկներից յուրաքանչյուրի մեջ և անցնում է բուլորի միջով:

Տարբերություններն ակնհայտ են նաև մարդու մարմնի մասին ուսմունքում: Յոգայի փիլիսոփայության համաձայն՝ մարդը բաղկացած է յոթ սկիզբներից՝ ճշմարիտ ես-ը հոգին է, իսկ մնացած վեց սկիզբները հոգու դրսևորումներն են ստորին ոլորտներում: Մարդու յոթ սկիզբներն են՝ ֆիզիկական մարմին, աստրալ մարմին, կենսական ուժ, բնազդային միտք, խելամտություն, հոգևոր միտք, հոգի:

Քրիստոնեական վարդապետության հետ համեմատած՝ լուրջ հակասություն կա աստվածային ներազդեցության տեսակետի շուրջ: Ըստ յոգայի՝ բարձր ներշնչումները, տեսիլքները, աստվածային հայտնությունները, որոնք հաճախ վերագրվում են արտաքին ազդեցությանը, հիմնականում մարդու մեջ գտնվող և նրա հետ խոսող գերազույն ես-ի ձայնն է: Յոգևոր մտքի գոյության մասին իմանալով՝ մարդն ըմբռնում է նրա ներշնչանքներն ու ցուցումները, և երբ վստահում է հոգուն, այն պատասխանում է՝ առաքելով պայծառատեսութ-

յան և լուսավորության հաճախակի շողարձակումներ: Մինչ քրիստոնեության մեջ ուսուցանվում է Սուրբ Հոգուց հեղվող աստվածային շնորհների, մարդու հոգևոր կյանքում գերբնական ազդեցության ու նախախնամության մասին, յոզայի փիլիսոփայությամբ այս ամենն ամփոփվում է միայն մարդու մեջ՝ որպես մարդու հոգուց իրեն եկող, այսինքն՝ մարդկային անձից ինքն իրեն տրվող գորություն: Այսպիսով, հոգևոր կյանքում աստվածակենտրոնությունը փոխարինվում է մարդակենտրոնությամբ, ավելի ճիշտ՝ անձնակենտրոնությամբ կամ ինքնակենտրոնությամբ:

Յոզայի ուսմունքի մարդակազմության պատկերացմանը հատուկ է աուրայի հասկացությունը, ըստ որի՝ զարգացած հոգեկան տեսողություն ունեցող անձերը կարողանում են տեսնել մարդու աուրան, որը նրան ձվածն պարուրող լուսե ամպն է, և որի տարբեր գույները հուշում են տվյալ մարդու հատկությունների մասին:

Քրիստոնեության և յոզայի ու նմանատիպ խորհրդապաշտական ուսմունքների արմատական տարբերությունը հետևյալն է. քրիստոնեության մեջ Աստված անձ է, մարդուն խնամող, փրկող, մինչդեռ խորհրդապաշտական ուսմունքներում Աստված գրեթե միշտ անանձ է և կրավորական՝ մարդու հանդեպ: Տիեզերքը ոչ թե Աստծո արարչությունն է, այլ սոսկ Նրա հեղունը՝ էմանացիան, իսկ մարդն իր էությամբ անմահ է, քանի որ նրա ես-ը համազո է Աստծուն: Ըստ քրիստոնեության՝ տիեզերքն Աստծո արարչագործությունն է, մարդն ունի առանձին անմահ հոգի և ոչ թե հոգին բոլորի համար մեկ է և անցնում է բոլորի միջով: Մարդը կամ նրա ես-ը համազո չեն Աստծուն, այլ մարդն Աստծո արարչագործության պսակն է: Յոզայի ուսմունքը շեշտում է մարդու բազմակի մարմնավորումները, ինչը միանգամայն մերժելի է քրիստոնեության կողմից:

Տրամաբանական անհմաստություն է երևում յոզայի և հինդուիստական նման ուսմունքներում: Եթե մարդիկ Աստծո մասնիկներն են, որ պատվում են տարբեր մարմիններով, ուրեմն մարդ գոյություն չունի, այլ գոյություն ունի Աստված՝ իր տարբեր մասնիկներով, որով և մարդկային աստվածճանաչողությունը դառնում է այդ ենթադրյալ աստծո կողմից ինք-

նաճանաչողություն, իսկ փրկությունը՝ ինքնափրկություն: Ոչ քրիստոնեական խորհրդապաշտության մեջ գործուն է մարդը, և պասիվ է աստված. մարդն իր փրկությունը կարող է ձեռք բերել իր հոգեմտավոր գործողություններով ու փորձառությամբ, չնայած որ այդ փրկությունը, վերոնշյալ դատողության համաձայն, աստվածային ինքնափրկություն է: Յոզայի ուսմունքի մեջ գործնական և կենտրոնական տեղում մարդն է: Այսպես մտածողների մասին է ասում Պողոս առաքյալը. «Եվ անեղծն Աստծու փառքը փոխեցին՝ այն նմանեցնելով մարդու եղծելի պատկերի» (Չռոմ. 1.23):

**8. Կարող ենք համառոտ ներկայացնել քրիստոնյայի համար յոզայով զբաղվելու պատճառով առաջ եկող անցանկալի հետևանքները:**

Փաստն այն է, որ հնդկական մեթոդիկայի ողջ ուղղվածությունը եղել և մնում է կրոնական կամ մերձկրոնական: Հետևաբար, յոզան ունի այլ կրոնական հիմք, որը հակասում է քրիստոնեությանը, վտանգներ կան ֆիզիոլոգիական երևույթները հոգևոր երևույթների հետ շփոթելու: Սուրբ Գրքի հայտնությանը, Ավետարանի վարդապետությանը չհամապատասխանող կրոնական այլ ուսմունքի վրա հիմնված լինելով՝ յոզան մարդուն հակում է այդ կրոնի գաղափարների ընդունմանը: Յոզայի մեղիտացիայի ժամանակ արտասանվող մանտրան հակառակ է քրիստոնեական ուսմունքին:

Այս ամենից զատ, յոզան առաջացնում է կեղծ կրոնական զգացումներ, բերում քրիստոնեական տեսակետից կեղծ միստիցիզմ, վերացնում քրիստոնեական խոկման քրիստոսակենտրոն բնույթը և հաստատում մեղիտացիայի մարդակենտրոն բնույթը: Պետք է իմանալ, որ հոգևոր կյանքն իրականանում է աստվածային շնորհի զորակցությամբ և ոչ թե անկախ մարդակենտրոն տեխնիկայի ձեռքբերում է:

Կաթոլիկ Եկեղեցու ուսումնասիրությունների ու եզրակացության համաձայն՝ թույլատրելի է համարվել բժշկական վարժություններին համապատասխանող յոզայի որոշ վարժությունների օգտագործումը, որոնք ստեղծված չեն կրոնական հիմքի վրա և առանձին դեպքերում նշանակվում են բարձրակարգ բժիշկ-մասնագետների կողմից՝ նպաստելու մարդու առողջության բարելավմանը:

## ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

**1. Հնագույն ժամանակներից աշխարհի, մարդկության ստեղծումն ու գոյությունը կապված է եղել գերբնականի վերաբերյալ ընկալման հետ, ընդունելի էր համարվում աստվածային ներազդեցությունը մարդկության կյանքում: Սակայն հատկապես ուշ միջնադարի ժամանակաշրջանից սկսեցին գերիշխող դառնալ մատերիալիստական գաղափարները: Ինչպիսի՞ հակասություն առաջ բերեց այդ իրադրությունը:**

Քրիստոնեությունը մեծ ազդեցություն ունեցավ ոչ միայն մարդու հոգևոր աշխարհի զորացման, ճշմարիտ աստվածպաշտության հաստատման, այլև գիտական, գրական, մշակութային առաջընթացի մեջ: Թեև այլ կրոնի հետևորդներ ևս համամարդկային գիտությանն ու մշակույթի զարգացմանը կարևոր նպաստ են բերել, սակայն քրիստոնեության տարածումից հետո քրիստոնեական աշխարհն զգալի ներդրում ունեցավ մարդկության առաջընթացի գործում: Դրանով հանդերձ քրիստոնյա մարդկությունը զերծ չեղավ սայթաքումներից, չարի գայթակղություններից, որոնք պատճառ էին դառնում անգամ Կայենի և Աբելի ողբերգական պատմության ցավալի կրկնությունների:

Արդի ժամանակներում մարդկությունը բարձրացավ գիտության, նյութական առաջընթացի ու զարգացման իր բարձրակետին, սակայն հաճախ սայթաքեց հոգևոր ոլորտից: Փորձ արվեց մարդկանց հետ Աստծո մշտապես լինելու իրողությունը հեռացնել մարդկության գիտակցությունից պատմության նյութապաշտական ընկալմամբ՝ Աստծուն դուրս դնելով մարդկության կյանքում նախախնամական միջամտությունից ու հոգածությունից: Արարչագործությունը պատկերվեց որպես պատահականության արդյունք, որտեղ գլխավոր տեղում է ոչ թե սերը, որով Աստված ստեղծեց աշխարհն ու տիեզերքը, այլ նյութական երևույթներն ու եղելությունները: Նաև Եկեղեցին սկսեցին ներկայացնել որպես նյութական հաստատություն՝ եկեղեցիացյալ ժողովուրդ լինելու, Քրիստոսի խորհրդական մարմինը լինելու սուրբգրական հիմնավորման (Ա Կորնթ. 12.27; Եփես. 1.23, 4.12; Կող. 1.24, 2.19) անտեսումով:

Այսպիսով, աստվածային հայտնությունը փոխարինվեց մարդկային հայտնությամբ՝ առաջ եկած գիտության մատերիալիստական տարբեր ենթադրություններով ու տեսություններով: Գիտությունն իր օգտաշատ ձեռքբերումներով նաև վնասակար շահարկումների, մարդու աստվածաշնորհ կյանքին սպառնացող վտանգների, սոսկ նյութականության պնդումների առկայությամբ երբեմն դարձավ բաբելոնյան աշտարակ, որով վերընթացը պատճառեց մարդու և Աստծո, մարդու և իր նմանի միջև սիրո, համերաշխության, խաղաղության խաթարումը:

**2. Ներկա գաղափարախոսությունների, դարվինիզմի և նյութապաշտ այլ տեսությունների ազդեցությամբ հաճախ փոխվել կամ աղավաղվել է մարդու աշխարհընկալումը և անգամ ինքնընկալումը: Այդ փոփոխություններում կամ հանընդհանուր նյութականացմանը միտված իրավիճակներում որո՞նք են առկա վտանգները:**

Ներկա աշխարհի քաղաքական, տնտեսական ընկալումներն ու գործունեությունները մեծապես ազդվել են մարդկության ծնունդն ու գոյատևումը կենդանական աշխարհի իրողությունների նմանությամբ գոյության կռվի ու պայքարի համատեքստում պատկերող, դարվինիզմի վրա հիմնված տարբեր տեսություններից, որոնցում բացառված է Աստծո և Նրա հայտնության, քրիստոնեության հիմնարար դերն ու նշանակությունը: Եվ Բարձրյալի հանդեպ հավատքը հաճախ դիտարկվում է ոչ թե կյանքում Տիրոջ մշտական ներկայությամբ, «Ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ միջև աշխարհի վախճանը» (Մատթ. 28.20) Քրիստոսի խոսքերի վավերականությամբ, այլ իբրև պարզապես զուտ անձնական զգացում և ներապրում: Այսպիսի իրավիճակում մարդու գոյության կարևոր նպատակը շրջափակվում է միայն այս կյանքի կարիքների ու կրքերի բավարարման շեշտադրությամբ: Հավիտենությունը նկատվում է անիրական կամ հեռավոր, իսկ մարդու ընթացքը՝ զերծ երկնայինի ու աստվածայինի ներթափանցումից: Մինչդեռ դեպի հավիտենություն ընթանալն սկսվում է այս կյանքից, ինչպես ասում է Քրիստոս. «Աստծու

արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս, և չեն ասի, թե՛ ահավասիկ այստեղ է կամ այնտեղ, որովհետև ահա Աստծու արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկ. 17.20-21): Այս կյանքը սոսկ ժամանակավորի ու անցողիկի սահմաններում պարփակված պատկերացնելը և մարդկության պատմության մեջ Աստծո միջամտությունը բացառելն ստվերում է մարդու ընկալումը որպես Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծյալ, կյանքի ընկալումը՝ որպես գերագույն արժեք, սիրո դրսևորման ընկալումը՝ որպես աստվածանմանություն, մարդու ընթացքի ընկալումը՝ ոչ թե ուղղված դեպի գերեզման և քայքայում ու ոչնչացում, այլ դեպի հավիտենություն ու Երկնքի արքայություն:

**3. Հասկանալի է, որ սոսկ նյութականության վրա շեշտադրումը կարող է բացառել կրոնի ուսուցանած սկզբունքներն ու հավատալիքները, հանգեցնել աթեիզմի, հոգևոր կյանքի հանդեպ անտարբերության: Սակայն դա ինչո՞վ է վնասում մարդկանց միջև փոխհարաբերություններին:**

Այսօր հոգևորից զերծ, զուտ նյութական ու նյութապաշտական հասկացություններ են տեղ գտնում՝ շահի, անձնապաստանության, սոսկ մարմնավորի նկատառումով, որի սահմաններում մարդը նաև դիտվում է որպես մեքենա քաղաքական, տնտեսական հսկա համակարգի պահպանման ու գործունեության համար: Մինչդեռ Աստծո մարդեղացման խորհրդով բոլորովին այլ ուղղվածություն է հաղորդվում մարդու և աշխարհի ընկալմանը: Տիրոջ՝ մեզ հետ լինելու իրողությամբ Աստծո գործունեությունը հառնում է իր մարդակենտրոնությամբ, որով և մարդու կյանքը պետք է լինի աստվածակենտրոն ոչ միայն առ Աստված հավատարմության ու նվիրումի արտահայտությամբ, այլև Բարձրյալի կողմից պատվիրված՝ մարդու հանդեպ սիրո, հոգածության, հոգատարության, համերաշխության նախանձախնդրությամբ:

Քրիստոսի մարդեղացումով ու փրկագործությամբ երկնային շնորհների բաշխումը մարդկանց հիանալի օրինակ է հավաքական կյանքում, ըստ առաքելական հորդորի, ունեցած

բարիքներին միմյանց հաղորդակից դարձնելու (Եբր. 13.16): Այն հորդոր է նաև աստվածանմանությամբ ողորմության մեծագույն առաքինության իրագործման՝ հակառակ նյութի, կապիտալի գերարժեքման և դրա դիմաց մարդու ու նրա կյանքի ստորադասման, նյութական նպատակի համար մարդու կողմից մարդու շահագործման, հակառակ ազահության ու անհագության արատների և կուտակման մարմաջի: Տիրոջ մարդեղացման և շնորհաբաշխության նմանությամբ ողորմության առաքինության իրագործումը, հիրավի, առաջնային լուծումներից է աշխարհի ցավալի մարտահրավերներից աղքատության հաղթահարման, կյանքի բարօրությանն ու բարեկեցությանն առնչվող խնդիրների լուծման:

**4. Մեր օրերում աշխարհի տարբեր երկրների, ժողովուրդների, նաև առանձին մարդկանց շփումները հիմնըված են հաճախ նյութական կամ տնտեսական համագործակցության, շուկայական հարաբերությունների, շոշափելի շահի ձեռքբերման նպատակի վրա: Այս փոխհարաբերություններում հավատքի գործոնը կարծես դադարում է կամ մղվում երրորդական տեղ: Ի՞նչ տարբերություններ են առաջ գալիս նյութապաշտության կամ աստվածապաշտության միջև ընտրություն կատարելիս մեկ կամ մյուս կողմը հակվելու դեպքում:**

Այսօրվա՝ մի կողմից գերշահույթի հասնելու, մյուս կողմից սպառողականության հոգեբանությունը, որ, ցավոք, առկա է աշխարհում և մեր հասարակության մեջ, մարդկային նյութապաշտության պատճառներից է: Աստվածապաշտության և նյութապաշտության հակադրությունը մարդու և միաժամանակ ազգի բարօրության, խաղաղության, ինչպես և արդարության ու ճշմարտության օգտին կլուծվի, երբ շահամոլության փոխարեն գործադրվի աստվածապատվեր ողորմությունը (Օսեն 6.6, Մատթ. 5.7, 9.13, 12.7), աշխատողների շահագործման փոխարեն՝ Քրիստոսապատվեր սերը (Հովհ. 13.34-35), երբ եսասիրության փոխարեն կիրառվի բարի սամարացու նման մերձավորին օգնելը (Ղուկ. 10.29-37), ինքնանպատակ գործունեության փոխարեն՝ առաքելական հորդորով եղբայրասիրությունը (Հռ. 12.10, Ա Պետ. 1.22), քանզի այսօր հա-

ճախ նյութական շահի կամ համակարգի կենսագործունեության ապահովման նպատակով մարդն ստորադասվում է կապիտալի կամ համակարգի ու հաստատության համեմատ:

Աստվածաշնորհները նաև մարդկանց միջև հարաբերություններն է վեհացնում, մինչդեռ նյութապաշտությունը մարդկային հարաբերությունները միջոց է դարձնում շահի համար: Աշխարհի միայն տնտեսական կամ նյութական շեշտադրությամբ վերելքը հաճախ պատճառում է հոգևոր-բարոյական անկում, սոսկ նյութական առաջընթացը կամ նյութականի գերարժևորումը հանգեցնում է ընտանիքների քայքայման, հակամարտությունների սկզբնավորման, մարդկանց օտարացման, որը կարող է արտահայտվել ոչ միայն առանձին մարդկանց, այլ նաև ժողովուրդների և պետությունների մակարդակով՝ քաղաքական կամ ազգային էգոիզմի դրսևորումներով: Աստվածաշնորհները, սակայն, մարդու բոլոր գործողությունների հիմքը դնում է ոչ միայն սեփական, այլև համընդհանուր բարօրության հաստատման, աստվածադիր մեծագույն արժեքների կարևորման, կյանքի աստվածաշնորհության ընկալման, հավիտենության գիտակցման վրա:

**5. Ուշ միջնադարյան շրջանից եվրոպայում փորձ էր արվում նվազեցնել քրիստոնեության դերն ու հեղինակությունը՝ շեշտադրում կատարելով գիտության ու մշակույթի՝ կրոնից անկախանալու, կրոնական գիտակցությունը քաղաքացիական գիտակցությամբ փոխարինելու վրա: Ինչի՞ հանգեցրեցին այդ ջանքերն այն ժամանակ, և որո՞նք են դրանց հետևանքներն այսօր:**

Քրիստոնեական երկրներում և հասարակություններում քրիստոնեությունը նախկինում աներկբա ճշմարտություն էր համարվում՝ Աստծո կողմից տիեզերքի, մարդու ստեղծման ուսուցումներով: Աշխարհի, մարդու, տիեզերքի գոյավորման այլ տեսություններ տարածում չուներին: Սակայն սկսեցին առաջ գալ եկեղեցու դիրքորոշմանը հակադրվող վարկածներ, ուսումնասիրություններ: Համակարգվեցին և գիտական հաստատում ստացան տիեզերքի, կենդանական ու բուսական աշխարհի, մարդու առաջացմանը վերաբերող տեսություններ: Քրիստոնեական երկրներում կրոնական վարդապե-

տությանը զուգահեռ հնարավորություն ստեղծվեց ընտրություն կատարելու կրոնի հայտնության և աշխարհիկ ուսուցումների միջև: Քրիստոնեությունը համընդհանուր ճշմարտությունից դարձավ անձնական ընտրության առարկա՝ հիմնված միայն անձնական զգացման և ներքին փորձառության վրա:

Փոխվեց վերաբերմունքը նաև եկեղեցու հանդեպ: Աստծո կողմից հիմնված, միակ ճշմարտության կրող հաստատության փոխարեն այն սկսեց դիտարկվել որպես կրոնական ուղղվածությամբ կազմակերպություն, որը սպասարկում է իր համայնքի կամ հավատացյալների շահերը: Հավատքն իջեցվեց զգացումի աստիճանի կամ դարձավ անհատական զգացականության դրսևորում՝ միտված ներքին հարմարավետության հաստատմանը:

Բացի գոյաբանության վերաբերյալ սուրբգրական բացատրությունից նաև այլ տեսությունների, փիլիսոփայությունների առաջացումը պատճառ դարձավ քրիստոնեության մեջ հեթանոսական տարրերի ներմուծման կամ առանձին անձանց ու խմբերի՝ քրիստոնեությունից հեթանոսության նահանջի: Գլուխ բարձրացրեց աթեիզմը: Վերադարձան հեթանոսական մեղսալի բարքերը: Նոր ժամանակների մարդը կանգնեց կրոնի և աթեիզմի, բարոյականության և քրիստոնեական տեսակետով անբարոյականության միջև ընտրության ճանապարհին՝ սխալ կողմը շեղվելու հեշտ քայլերով: Քրիստոնեության կողմից մերժելի և դատապարտելի բարքերն ու իրողությունները հատկապես արևմտյան հասարակությունների կողմից արդեն նկատվեցին սովորական և ընդունելի, անգամ խրախուսելի: Աստվածապաշտությունից, քրիստոնեական աստվածընկալումից անցումը մարմնակազմի, նյութականի առավել կարևորման, ճգնաժամ բերեց նաև մարդկանց ինքնագիտակցության մեջ ճիշտ կողմնորոշվելու հարցում: Սխալ ընտրության հնարավորություն բացվեց, բնությանն ու բնական օրենքներին դեմ գնալով, փոխելու ինքնությունն ըստ մեղսալի ինքնընկալման՝ լինելու կին կամ տղամարդ և կամ անսեռ մարդկային էակ: Այսպես, ճշմարիտ աստվածապաշտությունից հեռացումը և հոգևորի անտեսումը բերեց նաև մարմնավոր իրողությունների, մեղսալի կրքե-

րի գերակայության, ընտանիքի ավանդական կառույցի քայքայման:

**6. Ոչ կրոնական կամ աթեիստ մարդիկ գուցե դրական են գնահատում կրոնից, կրոնական գիտակցությունից թափուր լինելը, մարդու ապրելու և ստեղծագործելու ունակությունը գերբնական հեղինակության առկայության ընկալմամբ չպարուրելը և ազատություն թողնելը մարդկային անկախ գաղափարների ստեղծման ու տարածման համար: Այս տեսակետի համաձայն՝ արդյո՞ք քրիստոնեությունն իր դավանած արժեքներով չի ուղղորդում դրան հետևող մարդկանց ստեղծագործական ընթացքը, ապրելու կերպը և ձևը՝ լիակատար ինքնադրսևորման սահմանափակում դնելով:**

Քրիստոնեության պատվիրաններն աստվածադիր են և տրված են մարդու, մարդկային կյանքի բարօրության, ապահովության համար: Այդ ուղղորդումները սահմանափակումներ չեն, այլ չարի ու աղետի առջև դրվող սահմաններ, որոնցից այն կողմ անցնելն անգամ մեծագույն ողբերգությունների ու եղեռնագործությունների պատճառ է դառնում մարդու, աշխարհի, ողջ մարդկության համար: Մենք դրա օրինակներն ունենք նույնիսկ նոր շրջանի պատմության մեջ: Քրիստոնեության վեհագույն ուսուցումներից անկախ՝ մարդու ստեղծած գաղափարախոսությունները չարիքներ են դարձել և ավերածություններ պատճառել: Խնդիրն առաջին հերթին այն չէ, որ դրանք լավ կամ վատն են եղել, մերժել են կրոնական հասկացությունն ու վարդապետությունը, այլ այն, որ դրանք իրենց հերթին դարձել են մարդաստեղծ կրոններ՝ անձի պաշտամունքով, դավանանքով և արդեն մարդկային գաղափարներին կյանքը զոհաբերելու գործողություններով:

Նացիզմի, ֆաշիզմի, ստալինիզմի դավանանքը և նմանատիպ այլ գաղափարախոսություններ միլիոնավոր մարդկանց ոչնչացման պատճառ դարձան, աշխարհում բազմապատկեցին թշվառությունները, արյունահեղությունները, ողբերգությունները: Այդ գաղափարախոսությունների տարածումից և դրանց համաձայն լայնածավալ գործողություններից հետո դեռ երկար ժամանակ մարդկությունը չէր կարողանում հաղթահարել դրանց բերած ավերներն ու մեծագույն աղետները:

Յուրաքանչյուր անաստված այս կամ այն չափով նյութապաշտ է, իսկ անաստվածության, նյութապաշտության հետևանքները խաթարում են մարդկային ներդաշնակ ու ստեղծարար, բարոյական ու խաղաղ կեցությունը: Այդ աղետից է ողջ մարդկությանը զգուշացնում Սուրբ Գիրքը՝ ասելով. «Անզգամն ասաց իր սրտում, թե՛ չկա Աստված, ապականվեցին ու պղծվեցին իրենց անօրենության մեջ» (Սաղմ. 13.1):

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

**1. Դրախտում Ադամն ու Եվան չէին աշխատում: Աշխատանքն ի հայտ եկավ Ադամի և Եվայի դրախտից վտարվելուց հետո: Աշխատանքով Աստված պատժո՞ւմ է մարդուն:**

Սուրբ Գրքում մանրամասն չի ներկայացվում, թե կորուսյալ դրախտում ինչպիսին պիտի լիներ կյանքը, կամ ինչպիսին պիտի լինի մարդկային գոյությունը Երկնքի արքայության մեջ: Մեզ տրված են հիմնականում այս կյանքում ապրելու համար անհրաժեշտ հոգևոր սկզբունքներ, որոնք պետքական են մեր երկրավոր ընթացքի և հավիտենությանն արժանանալու համար: Անդրաշխարհի որպիսին լինելը բացահայտ տեսնելու ենք այնտեղ, ինչպես և ասում է Պողոս առաքյալը. «Այժմ տեսնում ենք աղոտ, ինչպես պատկերը հայելու մեջ. իսկ այն ժամանակ պիտի լինի դեմառդեմ» (Ա Կորնթ. 13.12): Ադամն ու Եվան կարճ ժամանակ մնացին դրախտում, և այնտեղ իրենց կյանքը չպիտի պարապությամբ անցկացնեին, այլ պետք է գործեին: Ծննդոց գրքում ասվում է, որ երբ ստեղծվեց երկիրը, մարդ չկար, որ մշակեր հողը (2.5): Սա նշանակում է, որ հող մշակելու, աշխատելու նախատեսում եղել է դեռ մարդու ստեղծումից առաջ: Աստված նաև իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկության դրախտում, որպեսզի նա մշակի ու պահպանի այն (Ծննդ. 2.15): Մարդու անկումը, սակայն, վնաս պատճառեց ողջ տիեզերքին, բերեց նաև հողի բերքատվության հատկության խիստ նվազում: Հետևաբար, աշխատանքը պատիժ չէ, այլ առաջին մարդուն նյութական հացի հայթայթման համար քրտնաջա-

Նորեն առավել աշխատելն էր տրված: Մարդու փրկության համար շեշտվում է հավատքի և գործի կարևորությունը: Այստեղ պետք է հիշենք Հակոբոս առաքյալի՝ առանց գործերի հավատքը մեռած է սկզբունքը (Հակ. 2.20, 26): Այսինքն՝ հավատքը ևս պահանջում է գործեր, և, հետևաբար, աշխատանք:

**2. Սովորաբար աշխատանքի երկու տեսակ է տարբերակվում՝ ֆիզիկական և մտավոր: Երկուսից ո՞րն է համարվում ավելի առաջնային կամ կարևոր:**

Արիստոտելն առավել կարևոր էր համարում մտավոր աշխատանքը, որի մեջ էլ և տեսնում էր երջանկությունը: Իրականում երկուսն էլ կարևոր են: Առաքյալներն իրենք ֆիզիկական գործ անողներ էին՝ մեծ մասամբ ձկնորսներ, ովքեր Քրիստոսի կողմից կանչվելուց հետո անցան նաև մտավոր աշխատանքի՝ աղոթքի, քարոզչության, Ավետարանների գրության, բայց նաև շարունակում էին զբաղվել ձկնորսությամբ: Պողոս առաքյալը քարոզելուց հետո աշխատում էր իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար, զբաղվում էր վրանագործությամբ և դրանով էր իր ապրուստը վաստակում (Գործք 18.3): Ենթադրելի է, որ Քրիստոս մինչ իր առաքելությունը սկսելն օգնում էր իրեն խնամակալող հորը՝ Յովսեփին, ով հյուսն էր (Մատթ. 13.55, Մարկ. 6.3), այլ բառով ասած՝ կահույքագործ:

Աշխատանքի տեսակների մեջ առաջնային համարելու առումով, թերևս կարևոր համարենք մտավորը, բայց ոչ թե միաժամանակյա մտավոր և ֆիզիկական աշխատողների նկատառումներով, որովհետև նրանք ամեն մեկն իր հերթին անհրաժեշտ գործ են անում, այլ գիտության, տեխնիկական առաջընթացի, գյուտերի առումով, որոնք սկզբնական խթան են հանդիսանում կյանքի զարգացման ու առաջընթացի համար: Առաքյալն ասում է, որ ամեն մեկին տրված են տարբեր շնորհներ (Հռ. 12.6): Կյանքում և Եկեղեցու մեջ այդ տարբերությունը հանգեցնում է նրան, որ մարդիկ, հավատացյալները միմյանց կարիքն են զգում ու նաև այդպես միավորություն կազմում: Այսպես և աշխատանքի մեջ ամեն մեկին տարբեր

շնորհներ են տրված, բայց մարդիկ միմյանց կարիքն են զգում՝ մեկը՝ ֆիզիկական աշխատանքի բարիքները վայելելու, մյուսը՝ մտավոր աշխատանքի բարի արդյունքներից օգտվելու:

### **3. Ի՞նչ սկզբունքով պետք է առաջնորդվել աշխատանք ընտրելիս, Աստվածաշունչը մեզ ցուցումներ տալի՞ս է:**

Աշխատանք ընտրելիս պետք է առաջնորդվել ըստ նախասիրությունների և ջանալ ձեռք բերված աշխատանքով ոչ միայն ինքդ քեզ և կամ միայն քո ընտանիքին օգուտ բերել, այսինքն՝ աշխատանքը ինքնանպատակ դարձնել, այլև օգտակար լինել հայրենակիցներին, քո երկրին ու ժողովրդին: Առաքյալի խոսքը նաև այս է ակնարկում. «Միայն մե՛զ համար հաճելի չլինել. այլ մեզնից յուրաքանչյուր ոք թող ընկերոջը հաճելի լինի՝ ի շինություն բարի գործերի» (Յո. 15.1-2): Այստեղ ուրիշներին օգուտ բերելու, միմյանց սիրելու քրիստոնեական մեծագույն պատվիրանը պետք է գործի: Առաքյալները նախ քարոզում էին իրենց ժողովրդին, բայց երբ տեսան, որ հրեաները հակառակվում են, դարձան դեպի հեթանոսները (Գործք 13.46), այսինքն՝ քարոզչական աշխատանքով նախ իրենց ժողովրդին ու երկրին օգտակար լինելու նպատակն ունեին:

Վկայության խորանը՝ հրեաների սրբարանն ու դրա սպասքը, Հին Ուխտի տապանակը, որի մեջ ամփոփվելու էին Աստծո կողմից տրված տասը պատվիրանները՝ նոր քարե տախտակների վրա գրված (Ելք 34.1), մանանայով լի ոսկե սափորը (Ելք 16.32-35) և Ահարոնի ծաղկած գավազանը (Թվեր 17.1-11), ինչպես և քահանայական զգեստները պատրաստելու հորդորով Աստված Մովսեսին ուղղարկեց հատուկ արհեստավորի և նրա օգնականների մոտ (Ելք 31.1-11), որովհետև Մովսեսը չէր կարող ինքն զբաղվել այդ իրերի և աղոթավայրի պատրաստությամբ: Հետևաբար, ամեն մեկը մասնագիտություն և աշխատանք պետք է ընտրի իր կարողություններին ու նախասիրությունների համապատասխան:

Այսօրվա գործազրկության պայմաններում, սակայն, մարդիկ գնում են այն աշխատանքին, որը գոնե կարողանում են

ճարել: Այդպիսի աշխատանքի մեջ էլ պետք է գործեն բարության ու ազնվության սկզբունքները: Օրինակ՝ փոքրիկ երեխա ունեցող ծնողը գիշերը մեծ տհաճություն է զգում՝ քաղցր քունը թողնելով և հոգնած վիճակում իր երեխայի լացին ընդառաջ նրան խնամելով: Բավականին դժվար է նաև երեխա ծննդաբերելը, սակայն այս ամենն արվում է սիրով, որ նշանակում է, թե մի բան կարող է և հաճելի չլինել, բայց միևնույն ժամանակ կարող է շատ օգտակար և սիրելի լինել: Այդպես էլ նաև աշխատանքը կարող է երբեմն հաճելի չլինել, բայց մարդը, ունակ լինելով այդ աշխատանքը կատարելու, այն պետք է դիտի օգտակարի տեսանկյունից:

Մենք հիմա ապրում ենք կապիտալիզմի ժամանակաշրջանում և կապիտալիստական հասարակարգում իշխում է նաև նյութականի առաջնայնությունը կարևորող գաղափարախոսությունը, որի համաձայն՝ գործողություններն իրականացվում են կապիտալի կուտակման նպատակով: Այսպիսի պայմաններում մարդն այլևս երկրորդական է դառնում, նաև նկատվում է որպես միջոց գլխավոր նպատակի՝ նյութականի, կապիտալի ձեռքբերմանն ու կուտակմանը հասնելու: Գործատուի կամ կապիտալիստի կողմից մարդն օգտագործվում է տնտեսական շահ ունենալու համար, մարդը դառնում է շահույթի ձեռքբերման գործիքներից մեկը: Այս իրադրության մեջ մեծապես օգտակար է առաքյալի խրատը. «Իմացե՛ք, որ յուրաքանչյուր ոք՝ թե՛ ծառա և թե՛ ազատ, ինչ բարի բան որ անի, նույնն էլ կստանա Տիրոջից: Եվ դուք, տերե՛ր, նույնն արեք նրանց հանդեպ՝ մի կողմ թողնելով սպառնալիքները. իմացե՛ք, որ և՛ նրանք, և՛ դուք Տեր ունեք երկնքում, և նրա առաջ աչառություն չկա» (Եփ. 6.8-9): Սակայն հակառակ պատկերն էլ կա: Երբ մարդն աշխատում է ոչ ըստ իր նախընտրության, այլ ըստ առկա աշխատատեղի, անհրաժեշտ հոգածությամբ չի վերաբերվում աշխատանքին կամ աշխատավայրին: Հայտնի է տաճար կառուցող շինարարների խրատական օրինակը, երբ մեկն ուրախությամբ ասում է, որ իր Աստծո համար տաճար է կառուցում, իսկ մյուսն այն կարծիքին է, որ տքնաջան, ծանր ու չարքաշ աշխատանք է կատարում՝ իր և ընտանիքի կարիքները հոգալու համար: Աշխատանքը մարդկանց ծառայելու և սիրելու քրիստոսավանդ

պատվիրանների կատարման հնարավորություններից մեկն է: Մարդը ևս տաճար է Սուրբ Հոգու (Ա Կորնթ. 3.16, 17, 6.19, Բ Կորնթ. 6.16, Եփ. 2.21-22, Ա Պետ. 2.5), և քանի որ աշխատանքի պտուղները մարդկանց օգտակարությանն են ծառայում, ապա մեր աշխատանքը ևս պետք է դիտել այս տեսանկյունից:

**4. Մարդկանց մեծ մասն աշխատում է այնպիսի ընկերություններում, որոնց արտադրանքը վնաս է պարունակում՝ ծխախոտի գործարաններ, ինչպես և խաղատներ, կասկածելի բովանդակությամբ ֆիլմերի, մուլտֆիլմերի արտադրություն... Անձամբ որևէ մեղք չգործած այս մարդիկ, աշխատելով վնասակար արտադրության վայրերում կամ մարդու մտավոր ու ֆիզիկական էությանը վնասող ձեռնարկություններում, նո՞ւյնպես համարվում են մեղավոր:**

Ծայրահեղ մոտեցում չցուցաբերելով, բայց տրամաբանություն կիրառելով՝ պատասխանենք այս հարցին: Եթե տվյալ անձինք գիտեն, որ վնաս են բերում մարդկանց և իմանալով հանդերձ աշխատում են նման տեղերում, դա արդեն մեղք է, այսինքն՝ այս պարագայում մեղք է համարվում որևէ գործողությամբ ուղղակի կամ անուղղակի կերպով մարդուն վնասելը: Դիտարկենք ծխախոտի արտադրության օրինակը: Այն, իհարկե, շատ աշխատատեղեր է ստեղծում գյուղերում, որտեղ երբեմն սեփական միջոցներով հողագործությամբ զբաղվելու լուրջ դժվարություններ ունեցող գյուղացիներն զբաղվում են ծխախոտ աճեցնելով և ապրուստ հայթայթում: Նաև քաղաքներում ծխախոտի արտադրության գործարաններում մեծաքանակ մարդիկ են աշխատում: Սակայն ծխախոտի օգտակարության մասին այսօր ոչ ոք չի խոսում, միշտ բարձրաձայնվում է ծխախոտի վնասակար լինելը: Բոլոր առաջադեմ երկրներում խստիվ արգելված է հասարակական վայրերում ծխելը, ծխախոտի գործածումն արգելված է նաև հասարակական տրանսպորտում, ինքնաթիռներում: Այս պարագայում չի գործում «ծայն բազմաց» սկզբունքը, այսինքն՝ եթե շատ մարդկանց կենցաղում ծխախոտն ընդունելի է, սա ամենևին էլ չի նշանակում, որ մարդկանց զգալի մասի վար-

վելակերպը հիմնված է ճշմարտության վրա: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նաև Հայաստանում և հայաշատ վայրերում պարբերաբար «ծխախոտի օր» էին կազմակերպում՝ կռվող զինվորների համար ծխախոտ հավաքելու և ռազմաճակատ ուղարկելու, քանի որ ծխախոտին սովորած մարդիկ, դրանից կախվածության մեջ գտնվելով և այդ իրավիճակը հաղթահարած չլինելով, առանց այն օգտագործելու դժվարություններ են ունենում իրենց գործողությունները կատարելու մեջ:

Կոլոմբոսի կողմից Ամերիկայի հայտնաբերումից հետո այնտեղ բնակվող ցեղերի՝ ծխախոտ գործածելու սովորությունը 1492 թվականից ի վեր տարածվեց աշխարհի տարբեր երկրներում: Բայց ժամանակի ընթացքում դրա վնասակար ազդեցությունները տեսնելով՝ սկսեցին խոսել ծխախոտի պատճառած բազմաթիվ վնասների մասին: Ավելի քան մեկ դար առաջ այդ երևույթին անդրադարձել են նաև հայ իրականության մեջ, ինչպես օրինակ՝ Վանում 1914 թ. հրատարակված «Լույս» ամսօրյան: Ըստ «Լույսի» հրապարակման՝ երբ ծխախոտի գործածումը տարածվեց, ժողովուրդների առաջնորդներն սկսեցին խիստ միջոցներ ձեռք առնել այն դադարեցնելու կամ տարածումը կանխելու համար: Ուշագրավ է հայկական ամսօրյայի վկայակոչումը, որ դեռևս 17-րդ դարում՝ Հռոմի Պապեր Ուրբանոս 16-րդը և Ինոկենտիոս 10-րդը խիստ սպառնալիքներ հնչեցրին, պատիժներ ձեռնարկեցին և պապական կոնդակներ հրապարակեցին (համապատասխանաբար 1642 թ. և 1650 թ.) դադարեցնելու ծխելու վնասակար սովորությունը եկեղեցու անդամների մեջ: Նաև Թուրքիայի սուլթան Ամուրեթ (Մուրադ) IV-ը (1623-1640 թթ.) սկսեց պատժել նրանց, ովքեր ծխում էին գաղտնաբար կամ հրապարակավ: Անգլիայի թագավոր Ջեյմս Առաջինը (1566-1625 թթ.) մասնավոր գրություններ հրատարակել տվեց՝ ժողովրդին հասկացնելու ծխախոտի ունեցած սոսկալի ազդեցությունը մարմնի առողջության վրա: Հետաքրքրական է, որ հարյուր տարիներ առաջ Վանում հրատարակված «Լույս» ամսօրյան նաև տեղեկություններ է ներկայացնում ծխախոտից օրգանիզմի թունավորման ընթացքի մասին: Ըստ այդմ՝ ծխախոտի

ամենաթունավոր տարրը նիկոտինն է, որը ծխելու ընթացքում փոխվում է պիրիդին թույնի և այլ թույների:

Ծխախոտ արտադրող ընկերությունները կարծես թե հայտարարում են, որ իրենց հաճելի չէ այդ արտադրությունը, և զգուշացնում են բոլորին ծխախոտի վնասակարության, անզամ մարդկային կյանքին սպառնացող լուրջ վտանգի մասին: Դրա վկայությունը ծխախոտի տուփերի վրա գրված տարբեր տեղեկատվություններն ու զգուշացումներն են: Եվ եթե ծխախոտ արտադրող ընկերությունները կեղծ կամ անկեղծ մղումներով ցույց են տալիս, որ իրենց հաճելի չէ մարդու առողջությանն ու կյանքին վնաս հասցնելը, ապա դա առավել ևս չի կարող հաճելի լինել կյանքի պարզև մարդուն շնորհած Աստծուն: Այս դատողությունները կարելի է տարածել նաև անառակություն ու անբարոյականություն, բռնություն ու դաժանություն ցուցադրող կամ քարոզող ֆիլմերի, մուլտֆիլմերի արտադրության, անբարոյականություն մատուցող և դրանով հսկայական ֆինանսական շահույթ ունեցող հաստատությունների, թմրանյութերի պատրաստության, մարդկանց տարբեր գայթակղություններով խաղամուլ դարձնող խաղատների և նմանատիպ կազմակերպությունների վրաբերյալ:

Կարող է պատահել, որ մարդկանց վնաս բերող, Աստծո կամքին ոչ հաճելի գործունեություն ծավալող մեկը, ունեցվածք, հարստություն կուտակած լինելով, որևէ պատճառով կամ մղումով ցանկանա նվիրատվություն կատարել Եկեղեցուն կամ հոգևոր կյանքին առնչվող բարեգործություն անել: Եթե նա իր գործողություններից դարձել է Աստծուն ամբողջապես հաճելի կյանքի, ապա նրա նվիրատվությունն ընդունելի է, ինչպես որ Քրիստոսի համար ընդունելի եղավ անառակ կնոջ կողմից մատուցված թանկարժեք յուղը (Ղուկ. 7.37-48): Նախկին մեղավոր կյանքի համար զղջումով կատարված ընծայաբերումը մերժելի չէ և այն առիթ է դառնում նաև ընծայողի մեղքերի թողության, ինչպես ցույց տվեց Քրիստոս: Բայց եթե շարունակվում է նույն ընթացքը, ապա ընծայաբերումը, նվիրատվությունը, ինչքան էլ առատ լինի, ոչ միայն ընդունելի չէ, այլև Աստծո կողմից է մերժելի: Սուրբ Գրիգոր Տաթևացին դա ցույց է տալիս Աստվածաշնչից մեջբերումներ

րով, Աստծո հորդորների վկայակոչումներով: «Պատվիր Տիրոջը քո արդար վաստակից», - հրահանգում է Սուրբ Գիրքը (Առակ. 3.9): Անհրավության կամ զրկանքի արդյունք լինելու դեպքում նվիրատվությունն անպիտան է: Նույնիսկ եթե նվիրաբերումն արժանավոր է, բայց նվիրողը, նվիրատուն կամ այլ բառով՝ բարերարն անարժան է, այսինքն՝ ոչ մարդասեր, ոչ բարեպաշտ, այլ առավելաբար նյութապաշտ մեկն է և չի ապրում քրիստոնեավայել կյանքով կամ նախկին վարմունքների զղջում չունի, ապա կրկին նրա բարերարությունը, նվիրատվությունն ընդունելի չէ և անգամ խստորեն մերժելի է Աստծո կողմից: Այդ մասին է Աստված ասում. «Անօրենը, որ Ինձ եզ է զոհաբերում, նույնն է, թե մարդու գանգ է ջախջախում, իսկ նա, որ ոչխար է զոհաբերում, նույնն է, թե շուն է մորթում, իսկ նա, որ ընտիր ալյուր է ընծայաբերում, նույնն է, թե խոզի արյուն է թափում, իսկ նա, որ հիշատակների խնկարկման համար կնդրուկ է մատուցում, նույնն է, թե հայհոյում է» (Ես. 66.3):

**5. Աշխատանքի իրավունք վերապահված է բոլորին: Իսկ որևէ մեկին վերապահված չէ՞ չաշխատելու իրավունք:**

Երկրների սահմանադրություններում մարդկանց իրավունքները հիմնականում նշվում են դրական ձևակերպումներով: Աշխատանքի պարագայում հիմնականում խոսվում է աշխատելու, աշխատանքի ընտրության իրավունքի մասին: Սակայն «չաշխատելու իրավունք» արտահայտությունը բացասական ձևակերպումով առկա չէ: Կարելի է խոսել երեխաների չաշխատելու իրավունքի մասին, քանզի տարբեր երկրների սահմանադրության մեջ կամ օրենքներում կարող է ամրագրված լինել մինչև տասնվեց տարեկան երեխաներին որոշակի ժամերով աշխատանքի ընդունելու թույլտվության, մշտական աշխատանքի արգելքի մասին:

Վաղ կապիտալիզմի շրջանում շահագործվում էր երեխաների աշխատանքը: Նրանք տաժանակիր կերպով, ծանր պայմաններում աշխատում էին գործարաններում, ֆաբրիկաներում կամ այլուր, ինչը լրջորեն վնասում էր երեխաների

առողջությանը, խաթարում նրանց մանկությունը: Այսօր երեխաների հանդեպ հոգածությունը, նրանց իրավունքները հաստատված են օրենքով: Պատեհ առիթ է այստեղ նշելու, որ արևմտյան երկրներում երեխաներին վերաբերող այդ օրենքները երբեմն հասնում են ծայրահեղության՝ երեխաների ցանկության համեմատ նրանց սեռափոխության իրավունքի, նույն սեռի պատկանող ծնողների կողմից որդեգրվելու թույլտվության առկայությամբ:

Որևէ մեկն իր ազատությունը կարող է մեկնաբանել նաև չաշխատելու իրավունքի իր անձնական ընտրությամբ: Սակայն այսպիսի բացատրությամբ չաշխատելու իրավունքը պարզապես ծուլության մեղքի մեկ այլ անվանումն է, որն անգործությամբ վնաս է պատճառում ընտանիքին, հասարակությանը: Աշխատունակ մարդը պետք է իր աշխատանքով օգուտ բերի թե՛ իր ընտանիքին, թե՛ իր երկրին ու ժողովրդին՝ օգտվելով նաև հանգստի իր իրավունքից:

**6. Հայաստանի գյուղերի օրինակով կարող ենք ասել, որ շատ հողագործներ այլևս հող չեն մշակում՝ համարելով ոչ եկամտաբեր գործ, կան մասնագետներ, որոնք նախընտրում են չաշխատել, քանի որ վարձատրությունը համարում են չնչին, նույնիսկ վիրավորական իրենց կատարած գործի համեմատ: Ընդունելի՞ է այսպիսի մոտեցումը:**

Մեր երկրի գյուղատնտեսությունն այսօր փորձությունների առջև է կանգնած: Գյուղացիները հաճախ սպասված բերքը չեն ստանում՝ երբեմն երաշտի, կարկուտի բերած վնասի և կամ հողի ոռոգման դժվարությունների պատճառով: Իսկ առատ բերքի դեպքում էլ չեն կարողանում ամբողջը վաճառել կամ մթերել, որով և ի վիճակի չեն լինում մարելու բանկերից վերցրած վարկը, ընկնում են պարտքերի տակ, կորցնում անգամ հողատարածքն ու տունը: Ինչո՞վ կարող է օգնել եկեղեցին գյուղացուն այս իրավիճակում: Եկեղեցական արարողություններից է անդաստանի արարողությունը, որով բացի եկեղեցուն համապատասխան տոների առիթով կատարվող ծեսից՝ երկրի կողմերն ու դաշտերը օրհնելու աղոթքով, այն կատարվում է նաև գյուղի դաշտերում, հողատարածքներում,

աղոթքով խնդրվում է Աստծո ողորմությունը առատ բերքի համար: Օգտակար կլինի հողագործությունն այս արարողությանը արդյունավորելը, նաև հավատքով ու աղոթքով աշխատանքները կատարելը: Աստված խոստանում է Իր կամքով ընթանալու դեպքում բազում արդյունքներ տալ հողագործներին (Բ Օր. 11.13-17), և գյուղերում հոգևոր ծառայություն իրականացնող եկեղեցականները պետք է նաև հավատքը ամուր պահեն գյուղացիների սրտերում, որպեսզի նրանք շարունակեն ապրել աստվածահաճո կերպով և չզրկվեն աստվածային օրհնություններից:

Բացի ծիսաարարողական զորակցությունից, Եկեղեցին, նկատի ունենալով նաև գյուղական աշխատանքի մեծ դժվարությունները և երկրում կարիքավորների, աղքատների առկայությունը, իր սոցիալական ծառայությունից, նյութական օգնության տրամադրումից զատ պիտի շարունակի խնդրի քննարկումը Եկեղեցի-պետություն հարաբերությունների շրջանակում: Եկեղեցի-պետություն հարաբերությունների շրջագծում պետք է տեղ գտնեն ոչ միայն պաշտոնական գործակցությունն ու փոխհարաբերությունները, այլև պետական պաշտոնյաների դիտարկումը և նրանց հանդեպ վերաբերմունքը որպես Եկեղեցու հավատացյալների, Եկեղեցու անդամների: Իշխանության շատ ներկայացուցիչներ մեծահարուստ, ունևոր ընտանիքներից են, և նրանց հարկ է հորդորել ոչ միայն երկրի որոշ բարձր և առավելաբար միջին ու ցածր կենսամակարդակ ունեցող քաղաքացիներից գանձվող հարկերից ձևավորվող պետական բյուջեի միջոցով ծրագրեր իրականացնել, սնանկության մեջ հայտնված, եղանակային անբարենպաստ պայմանների, տարբեր հանգամանքների բերումով տուժած գյուղացիներին պետության գանձանակից միայն փոխհատուցել, այլև այդ ամենն անել նաև սեփական միջոցների հաշվին՝ կատարելով ողորմության և բարեգործության առատ գործեր:

## **7. Ասում են՝ ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ: Դա վերաբերում է նաև աշխատելուն:**

Ես նույնիսկ կասեի, որ ամեն ինչ չափի մեջ է ոչ միայն գեղեցիկ, այլև օգտակար, իսկ չափից ավելին անգամ կարող է վնասակար լինել, և սա վերաբերում է հենց նաև աշխատանքին ու աշխատելուն: Իհարկե, շատ աշխատանքը շատ արդյունք կբերի, բայց աշխատանքի մեջ կլանվելը վնասում է ընտանեկան կյանքին. մարդը նաև չի կարողանում այդ դեպքում հարկավոր ժամանակ տրամադրել ընտանիքի անդամների հետ շփվելու, երեխաների դաստիարակությամբ զբաղվելու համար: Պետք է նաև նկատի ունենալ, որ հոգնած աշխատելը կտրուկ իջեցնում է աշխատանքի արտադրողունակությունը: Աշխատանքով կլանված լինելը բերում է ծանրաբեռնվածության ու գերլարվածության, ինչը մեծապես վնասում է նաև մարդու առողջությանը: Այս իրողությունը մեծ խնդիր դարձավ հատկապես ճապոնիայում, որտեղ աշխատող մարդկանց հանկարծակի զանգվածային մահվան դեպքեր սկսեցին գրանցվել՝ հատկապես սկսած 1980-ական թվականներից: Երևույթը կոչվեց «կարոշի», որը ճապոներենից թարգմանաբար նշանակում է «մահ աշխատանքային գերծանրաբեռնվածությունից»: Այսօրինակ մահվան մեծաքանակ դեպքերը պատճառ դարձան հատուկ քննության, որի արդյունքում հաստատվեց աշխատող մարդկանց սրտի կաթվածի, ուղեղի արյան շրջանառության խանգարման ու դրա բարձր ճնշման, ինսուլտի՝ աշխատանքային ծանրաբեռնվածության հետևանք լինելը: Այս նույն աշխատանքային գերծանրաբեռնվածության պատճառով 2000 թ. մահացավ նաև ճապոնիայի վարչապետը, ով աշխատում էր տասներկու ժամից ոչ պակաս և իր աշխատանքային քսան ամիսների ընթացքում ունեցել էր ընդամենը երեք հանգստյան օր: Այդ իրադարձությունները նույնպես հաստատեցին, որ մարդը չի կարող ծանրաբեռնված աշխատել առանց մտավոր-բարոյական և ֆիզիկական բացասական հետևանքների:

Աստվածաշունչը խոսում է արարչագործությունից հետո Աստծո հանգստանալու մասին (Ծննդ. 2.2-3), տալիս է հանգստյան օրը սուրբ պահելու պատվիրանը (Ելք 20.8-11,

31.12-17, Բ Օր. 5.15): Քրիստոս առաքելության ուղարկած իր աշակերտների վերադարձին անհրաժեշտ է համարում նրանց հանգստանալը: «Առաքելները հավաքվեցին Չիսուսի մոտ ու նրան պատմեցին այն ամենը, ինչ որ արել էին և ուսուցանել: Եվ Չիսուս նրանց ասաց. «Եկե՛ք դուք առանձին մի ամայի տեղ ու մի քիչ հանգստացե՛ք»: որովհետև եկող-գնացողները շատ էին. և հաց ուտելու անգամ ժամանակ չունեին» (Մարկ. 6.30-31): Աստվածաշնչյան այս իրողությունները նաև աշխատող մարդուն ուղղված հանգստյան հորդոր են և հանգստյան իրավունքի կիրառման անհրաժեշտության մասին են վկայում:

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**1. Հնուց ի վեր հայոց մեջ կարևորվել է կրթությունը: Մինչև 5-րդ դարում հայոց գրերերի գյուտը մեր նախնիներն օգտագործել են հունարեն, ասորերեն գրերը, ազնվականներն իրենց կրթությունն ստացել են նաև օտար երկրների նշանավոր ուսումնական հաստատություններում: Ինչպիսի՞ն է եղել կրթության դերն ու նշանակությունն անցյալում:**

Կրթության և դրա նպատակի մասին պատկերացումները փոփոխվել են տարբեր ժամանակներում: Հնում՝ հատկապես նախքան քրիստոնեությունը, հասարակ ժողովուրդը կրթության մատչելի հնարավորություն չի ունեցել: Հիմնականում բարձր խավ համարվողներն են տառաճանաչ եղել, հաղորդվել տարբեր գիտություններին, սովորել մասնավոր ուսուցիչների մոտ կամ օտարերկրյա հայտնի ուսումնական հաստատություններում: Կրթությունը համարվել է սովորելու ձև, որով մինչ այդ ժամանակն ամբարված գիտելիքները, հմտությունները, հավատալիքները, սովորույթները փոխանցվել են մի սերնդից մյուսը: Կրթվածությունը, սակայն, սոցիալական դիրքի, պաշտոնի ձեռքբերման համար երկրորդական է եղել, քանզի առաջնային էր համարվում ժառանգականության գործոնը, անձնական հմտությունը: Թագավորների և նրանց տարբեր պաշտոնյաների տոհմերը հաճախ դարերով շարունակել են իրենց գործառույթները: Հասարակ ժողովրդի մոտ

կրթությունը գրաճանաչության կամ գիտությունների հետ չի կապված եղել, այլ արհեստների, հմտությունների, բանավոր հմաստության փոխանցման:

Հին Կտակարանը բազմիցս գովերգում է հմաստությունը, խոսում դրա անհրաժեշտության մասին, ինչն ավելի շուտ հինկտակարանյան ժամանակաշրջանում հասկացվում էր Աստծո կամքի իմացություն և դրան համապատասխան վարմունք, իմաստուն, խելացի, աստվածահաճո վարքի դրսևորում կենցաղում, մարդկանց հետ հարաբերություններում:

**2. Դարերի ընթացքում մարդկանց ընկալումները, հավատալիքները փոխվել են: Այդ իրողությանը զուգահեռ փոխվել է արդյոք կրթության մասին պատկերացումը:**

Քրիստոնեության ընդունումից հետո կրթության վիճակը Չայաստանում զգալիորեն բարելավվեց: Եկեղեցիներին կից դպրոցներում, մեծ ուսուցչապետների կողմից հաստատված համալսարաններում հնարավորություն ստացան սովորելու նաև հասարակ ժողովրդի զավակները, ովքեր լրացնում էին հոգևորականության շարքերը, ըստ իրենց ընդունակությունների և հոգևոր փորձառության, զբաղեցնում տարբեր պատասխանատու պաշտոններ եկեղեցական անդաստանում: Կրթությունը համարվեց միջոց կարող մարդկանց կրթելու, նրանց ունակություններ ու գիտելիքներ հաղորդելու՝ եկեղեցուն ու ժողովրդին ծառայության մատուցման համար:

Բացի դրանից, անուսումնությունը, տգիտությունը, հատկապես հայոց պատմիչ Եղիշեի ազդարարմամբ, համարվեց չարիքի կամ դրա տարածմանը նպաստող պատճառ. «Բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից: Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից: Լավ է աչքով կույր լինել, քան մտքով: Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմնի տեսողությունից: Եթե մեկը շատ ճոխացած լինի աշխարհական մեծությամբ, իսկ մտքով ավելի աղքատ լինի, այնպիսին ողորմելի է շատերից. ինչպես որ տեսնում էլ ենք ոչ միայն հասարակ մարդկանց մեջ, այլև նրա, որ ամենից մեծն է: Եթե թագավորը իմաստութ-

յունն իրեն աթոռակից չանի, չի կարող իր վիճակի մեջ վայելուչ լինել: Իսկ եթե մարմնավոր բաների վերաբերմամբ այսպես է, որքա՞ն ավելի ևս հոգևոր բաների վերաբերմամբ է: Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է, և ինչպես որ մի մարդու, այնպես էլ ամբողջ աշխարհի վերաբերմամբ: Թագավորը միայն իր համար չէ պատասխանատու, այլ նաև նրանց համար, որոնց կորստյան պատճառ է եղել»: Տգիտությունն այստեղ նկատի է առնվում առաջին հերթին աստվածային կամքի իմացությունից զուրկ լինելու, ինչպես և իմաստության համաձայն՝ ճիշտ, հոգածու, արդար ձևով չապրելու, խելացիություն չդրսևորելու առումով: Տառածանաչությունից, գրականության ընթերցումից, ճշգրիտ գիտությունների տիրապետումից առավել է համարվում նախ Աստծո կամքն իմանալը, քանզի մարմնավոր իրողությունների պարագայում, եթե կարևոր է գիտելիքը, ապա որքան առավել ևս համապատասխան իմացություն է անհրաժեշտ հոգևոր կյանքի համար: Յայոց պատմիչը, տգիտության վնասակարությանը, մտքի զարգացման անհրաժեշտությանն անդրադառնալով, աշխարհական և հոգևոր իրողությունների շրջագծում շեշտում է հոգևորի առաջնայնությունը:

Մուսուլմանական երկրներում ևս համատարած կրթություն չի եղել: Կանանց համար հատկապես կրթությունը դժվար հասանելի իրողություններից էր: Ներկայումս մուսուլմանական առավել հետադիմական երկրներում հասարակական ու պետական կյանքում տղամարդկանց իշխանության և կանանց ստորադասության պայմանների ներքո կանանց ոչ միայն բարձրագույն, այլև տարրական կրթության հարցը բավականին լուրջ է: Կրթությանը խոչընդոտում է նաև որոշ մուսուլմանական պետություններում դեռ մանուկ հասակից աղջիկների՝ տարիքով մեծ տղամարդկանց հետ ամուսնացնելու սովորույթը:

Նոր ժամանակներում անձի կրթության իրավունքի գիտակցումով բավականին առաջխաղացում եղավ այս ասպարեզում: Կրթությունը հասանելի եղավ շատերին, մինչդեռ հնում կրթության հնարավորությունն ունեին «բարձր խավի» մարդիկ: 20-րդ դարում Խորհրդային Միությունը, չնայած իր

աթեիստական և եկեղեցամարտ բնույթին, համատարած կրթությունը հասանելի և պարտադիր դարձրեց Միության կազմի մեջ մտած բոլոր երկրների բնակչության համար: Սակայն ոչ միայն հավատալիքների, այլև հասարակարգերի փոփոխություններով կրթության նպատակի այլ ընկալում ի հայտ եկավ: Կրթությունն սկսեց համարվել ոչ միայն գրագիտության, գիտելիքների ստացման, միջանձնային հաղորդակցության ընդունակության զարգացման միջոց, այլև միտվեց դեպի գիտելիքի և հմտությունների ձեռքբերմանը՝ արժեք ստեղծելու, ապրուստի միջոց հայթայթելու, նյութական հարստություն ունենալու, անհատական ներուժը զարգացնելու համար:

**3. Արդի աշխարհի պետություններն իրենց հսկողության կամ հովանավորության ներքո են պահում կրթական համակարգը, կրթության մատուցման հարցը, օժանդակում են ուսումնական հաստատությունների գործունեությանը: Պետության համար ո՞րն է կրթության նշանակությունը:**

Պետությունն այլ դիրքից է նայում կրթությանը: Պետության համար կրթության և դրա առաջընթացի հիմնական նպատակը ոչ միայն անձի մտավոր ունակությունների, մարդու հմտությունների, ստեղծագործական ընդունակությունների զարգացումն է, այլև դրանով հանդերձ՝ երկրի մտավոր և մշակութային ներուժը բարձրացնելը: Կրթության գործը կազմակերպվում է բնակչության կամ հասարակության, ինչպես և աշխատանքի շուկայում առկա պահանջարկին համապատասխան: Առանձին անձի շահի կողքին նկատի է առնվում հատկապես տարբեր մասնագետների առնչությամբ պետության պահանջարկը:

Այսպիսով, պետությունը հովանավորում և կարևորում է կրթությունը՝ երեխաներին քաղաքացիության նախապատրաստելու, պատրաստելու հմուտ, փորձառու աշխատուժ, զարգացնելու մտավոր կամ նյութական արտադրողական ուժը, օգնելու աշխատանքային ասպարեզ մտնողներին կրթությամբ ստացած իրենց գիտելիքներով մրցակցելու տե-

ղական, նաև համաշխարհային աշխատաշուկայում: Կրթության բնագավառի զարգացումը դիտվում է որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:

**4. Այսօր առաջատար են համարվում արևմտյան կրթական համակարգն ու ծրագրերը: Տարբեր երկրներ, այդ թվում և Հայաստանը, հրաժարվում են կրթության մատուցման նախկինում ընդունված ձևերից՝ ընդունելով արևմտյան նոր չափանիշներ: Ի՞նչ կասեք այս մասին:**

Կրթության ասպարեզում տարբեր շեշտադրումները կախված են տվյալ երկրի տնտեսական, հասարակական, հոգևոր, մշակութային, նաև քաղաքական իրադրությունից: Հասարակական պատվերը, կրթության ասպարեզում պետության և հասարակության պահանջարկներն ազդում են մանկավարժության բովանդակության ձևերի վրա, թելադրվում է մասնագետների պատրաստում, որոնց կարիքը կա նոր քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմաններում: Այդ ամենն իրականացվում է երկրների Կրթության նախարարության միջոցով:

Ներկա ժամանակներում քաղաքական գործոնն իր կշիռն ունի կրթության մեջ: Պետությանը և իշխանություններին անհրաժեշտ են այնպիսի կրթական դաստիարակություն ու քարոզչամիջոցներ, որոնցով կտարածվի և կարմատավորվի իրենց գաղափարախոսությունը, որով հիմք կհաստատվի պետական տվյալ համակարգի գոյատևման համար: Դրավառ օրինակն են Խորհրդային Միությունը, որը միջնակարգ ու բարձրագույն ուսումնական բոլոր հաստատություններում տարածում էր աթեիզմի և սոցիալիզմի իր գաղափարաբանությունը, ինչպես և այսօր՝ Չինաստանը, որը կրթության միջոցով կոմունիզմի գաղափարներն է տարածում, Հյուսիսային Կորեան, որտեղ ևս գիտելիքի մատուցումից զատ ակնհայտ քաղաքական և գաղափարաբանական կրթություն է րականացվում: Այդպիսի երկրներում ձևափոխվում և նույնիսկ աղավաղվում է «պատմություն» առարկան՝ ընդունված գաղափարախոսության շահերի համաձայն: Պետություններում քաջալերվում է ենթակա մարդկանց և տվյալ պետությ-

յան քաղաքական համակարգում գերիշխող գաղափարախոսությանը հարող անձանց պատրաստունը՝ հատկապես բարձրագույն ուսումնական հաստատությունների խորհուրդների, կառավարման մարմինների կազմում քաղաքական գործիչների լայն ներգրավվածությամբ կամ իշխող կուսակցության կողմից աջակցությամբ, ինչպիսի օրինակներ կան նաև Հայաստանում:

20-րդ դարի կեսերից սկսյալ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, տեսնելով խորհրդային Միության ձեռքբերումներն ու նվաճումները հատկապես տիեզերքի ուսումնասիրման և տիեզերագնացության մեջ, լրջորեն մտահոգվեց ամերիկյան կրթության արդյունավետության առնչությամբ և ըստ խորհրդային Միության կրթական համակարգի չափանիշների՝ փոփոխություններ կատարեց իր կրթական ասպարեզում: Այսօր, ընդունելով արևմտյան կրթական մոտեցումներ, չպետք է մոռանալ նաև ամեն երկրի ու ժողովրդի համար առանձնահատուկ պայմանների, պահանջարկի, մշակութային յուրահատկության, ավանդույթների և հավատալիքի առկայությունը:

Նոր ժամանակներում կրթությունը միտում ունի վերածվելու կրթական արտադրության՝ ըստ տրված ցուցանիշների: Երբեմն թվում է, որ կարծես կրթության կաղապարով միանման մարդիկ են ծուլում: Տարբեր առարկաների գիտելիքները փոխանցելով՝ հետո ստուգում են, թե որքանով են սովորած աշակերտները համապատասխանում կրթության արտադրության չափանիշներին: Ներկա աշխարհիկ կրթության ասպարեզում մեկ այլ բացասական մոտեցում է նկատվում՝ մատերիալիստական տեսակետի պարտադրանքը մարդկության պատմության, մարդու ծագումնաբանության հետ կապված: Կրթության ոլորտում մատերիալիստական հայացքի մենաշնորհը գալիս է այն իրողությունից, որ երբեմն գիտության որոշ գործիչներ գիտությունը փորձել և փորձում են դարձնել գաղափարախոսություն ընդդեմ քրիստոնեության:

Թերևս առավել արդյունավետ կլիներ զարգացնելու մտածողության ստեղծարարության, ինքնուրույն վերլուծելու, նախաձեռնող լինելու ընդունակությունները, քան ուշադրությունը սևեռել բարդ բառապաշարով տեքստերի բերանացի վե-

րարտադրության և թվականների անգիր սովորելու պարտադրանքի վրա, այսինքն՝ ավելի զարգացնելու ստեղծարար մտածողությունը, գիտելիքը բարօրությանը ծառայեցնելու ունակությունը և ոչ թե մտածողության հիշելու կարողությունը: Քրիստոս Իր աշակերտներին ընտրեց ոչ թե գիտուններից ու գիտնականներից, այլ մարդկանցից, ովքեր ոչ շատ իմաստուններ էին, ոչ շատ հզորներ, ոչ շատ ազնվականներ (Ա Կորնթ. 1.26), ովքեր ճշմարտությունը, ճշմարիտ գիտելիքն ընդունելով՝ իրենք վերափոխվեցին դրանով և իրենց նախանձախնդրության, ջերմեռանդության, նվիրվածության, նաև անձնուրացության հատկանիշների շնորհիվ առաջադեմ գաղափարներ տարածեցին մարդկության մեջ և բարեշրջեցին աշխարհի ընթացքը: Մինչդեռ իմաստություն, գիտելիքների հսկա պաշարներ ունեցողները դրանք ճիշտ օգտագործելու, ինքնանպատակ չլինելու, վեհ և առաքինի կյանքով ապրելու, մարդկությանը ծառայություն բերելու, համընդհանուր շահի համար գործունեություն ծավալելու նախանձախնդրություն չունեին: Դրա համար է Սուրբ Գրքում ասված. «Պիտի կործանեն իմաստունների իմաստությունը և հանճարեղների մտածումները պիտի արհամարհեն: Ո՞ր է իմաստունը, ո՞ր՝ բանգետը, ո՞ր՝ այս աշխարհի քննողը: Չէ՞ որ Աստված հիմարացրեց այս աշխարհի իմաստությունը. քանզի աշխարհն իր իմաստությամբ չճանաչեց Աստծուն Նրա իմաստությամբ» (Ա Կորնթ. 1.19-20), «իրենք իրենց իմաստունների տեղ էին դնում և հիմարացան» (Յո. 1.22): Արդ, «Աստծու հիմարն ավելի իմաստուն է, քան մարդկային իմաստությունը, և Աստծու տկարն ավելի զորեղ է, քան մարդկային զորությունը» (Ա Կորնթ. 1.25):

**5. Որո՞նք են կրթության վերաբերյալ աշխարհիկ և քրիստոնեական տեսակետների հիմնական տարբերությունները:**

Քրիստոնեական կրթության նպատակը տարբերվում է աշխարհիկ կրթության նպատակից: Քրիստոնեական աշխարհընկալման մեջ մարդն ստեղծված է Աստծո պատկերով ու նմանությամբ: Եվ մարդու աստվածանմանության գի-

տակցման ու հաստատման ջանքը մարդու ձևավորման գործընթաց է, որով կրթությունն ու քրիստոնեական դաստիարակությունն իրականացվում են համատեղ:

Վերածննդի ժամանակաշրջանից, երբ մարդն սկսեց համարվել արժեք՝ մարդակենտրոնության ընդգծումով, կրթությունը նկատվեց սոսկ որպես ինքնագարգացման, մշակութին հաղորդվելու, աշխարհայացք, արժեքներ ձևավորելու միջոց: Կարծիք կա, որ այդ մոտեցմամբ կրթությունն Աստծո պատկերով մարդու ձևավորման ու զարգացման միջոցից դարձավ գործիք՝ անձնավորության ներաշխարհում սեփական պատկերի ստեղծման, Աստծուց անկախ, աշխարհում ինքնուրույն մարդու կազմավորման:

Կրթությունը միայն գիտելիքներ փոխանցելու միջոց չէ, այլև հոգևորապես կայացման կարևոր պայմաններից մեկը: Այս իմաստով Եկեղեցու առաքելության մեջ կրթությունը քրիստոսակենտրոն է: Մինչդեռ աշխարհիկ կրթությունը հումանիստական կամ մարդակենտրոն է, ըստ որի՝ կրթությունը նպատակաուղղված է անձնական ներուժի զարգացմանը, տարբեր գիտելիքների տիրապետմանը, դրանք իրականության մեջ կիրառելու ունակության և հմտության հնարավորության հաստատմանը: Թվարկվածից զատ Եկեղեցին կարևորում և առաջնային է համարում գիտելիքների մատուցումը երեխայի հոգևոր աշխարհի ձևավորմամբ, որը մաս չի կազմում կրթության վերաբերյալ աշխարհիկ տեսակետի:

**6. Կրթության վերաբերյալ հոգևոր և աշխարհիկ տեսակետներում տարբերություններ են առաջ գալիս մի կողմից մարդու ձևավորման՝ որպես Աստծո պատկերով ստեղծվածի, արարչագործության պսակի ու մտավորի միջոցով նաև նրա հոգևոր ունակությունների զարգացման, մյուս կողմից՝ սոսկ տառաճանաչություն սովորեցնելու, գիտելիքներ տալով՝ քաղաքացի, մասնագետ պատրաստելու, կրթությամբ ստացված գիտելիքները պետության շահերին ծառայեցնելու նպատակով: Այս տարբերությունները, սակայն, համագործակցության եզրեր թողնում են կրթության ասպարեզում Եկեղեցու և պետության միջև:**

Կրթության մասին աշխարհիկ ընկալումն ուղղված է դեպի ժամանակավորը, իսկ քրիստոնեականը ներառում է նաև հոգևոր ոլորտը և միտված է ժամանակավորից անդին՝ դեպի հավիտենությունը: Եկեղեցու համար կրթությունը զորացնում է մարդկանց ու աշխարհին բերվող ծառայության և դրանով իսկ աստվածանմանության մեջ՝ բարի կյանքով ու գործերով հավիտենական կյանքին արժանանալու համար: Այսինքն՝ մինչ պետության համար կրթության նպատակը երկրային է և իրականացվում է վերջավոր ժամանակի մեջ, հոգևոր տեսակետով՝ կրթությունը պիտի նպաստի նաև մարդու հոգևոր զարգացմանը և նպատակաուղղված լինի դեպի հավիտենություն:

Պետությունը գիտակցում է, որ Եկեղեցու հոգևոր-բարոյական ուսուցումն ու հոգևոր նպատակները մեծապես նպաստավոր են պետության մեջ օրինահարգության, կարգավորության, հայրենասիրության, ազգասիրության համար: Հայաստանի Հանրապետությունը կրթության մասին օրենքով հայտարարել է, որ կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական ու սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է, և Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր ու մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը, ինչին իր նպաստն է բերում նաև Հայ Եկեղեցին: Ակնհայտ է, որ պետության կողմից կրթության թիրախներից թվարկվում է հոգևորը: Այս դեպքում էլ, սակայն, նպատակն աշխարհային է: Քրիստոնեական տեսակետով կրթվելու, պետության օգտին հավատացյալի կողմից ծառայություններ մատուցելու վերջնական նպատակ է համարվում հոգևորը, Աստծո կամքի իրագործումը, հոգևոր և հավիտենական իրողությունների նկատառումը:

Թերևս Հայաստանի համար կարելի է ասել, որ այս տարբերությունները փոխլրացնող են, և Հայ Առաքելական Եկեղեցին սերտ համագործակցության մեջ է Կրթության և գիտության նախարարության հետ՝ նոր սերնդին կրթելու, գիտելիքներ մատուցելու, պատրաստելու պետության քաղաքացիներ և Եկեղեցու արժանավոր անդամներ, Քրիստոսի հավատարիմ հետևորդներ, Երկնքի արքայության ժառանգորդներ:

## ՆԱՐԵԿԱՐՈՒԺՈՒԹՅՈՒՆ

### **1. Աղոթքով բժշկություն, նարեկաբուժություն... Ի՞նչ է սա՝ հոգեթերապիա, խոստովանություն, ինքնամաքրում կամ գուցե հրա՞շք:**

Աղոթքով բժշկությունը կիրառվել է քրիստոնեության սկզբնավորումից ի վեր: Հակոբոս առաքյալն աղոթքով բուժման մասին ասում է. «Հիվանդ է ձեզնից մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին, և նրանք նրա վրա թող աղոթք անեն... Հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, ու Տերը նրան ոտքի կկանգնեցնի: Եվ եթե մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներվի: Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցե՛ք և միմյանց համար աղոթք արե՛ք, որպեսզի բժշկվե՛ք. քանզի արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է» (Հակ. 5.13-16): Բժշկության աղոթքը հոգեբանական հնարքի կիրառումն է, այլ առողջության խնդրանք՝ ուղղված Աստծուն, որով Աստծո շնորհն սկսում է ներգործել և հիվանդին ապաքինում պարզակել:

Եկեղեցական հեղինակներն ասում են, որ հիվանդությունները կարող են լինել մարմնի տարրերի խաթարման, ինչպես նաև հոգևոր պատճառներով: Առաջին տեսակի հիվանդությունը բուժելի է բժիշկների միջոցով, և աղոթքը մեծապես օգնում է առողջության վերականգնման համար: Իսկ հոգևոր պատճառով առաջացած հիվանդությունը բուժվում է հիմնականում աղոթքի միջոցով: Այսպիսի տկարության մեջ ընկնելն Աստծո կողմից թույլ է տրվում մարդուն ուղղելու, վերստին հավատքի բերելու, կյանքի արժեքի, հավիտենականի մասին խորհելու առիթ տալու և կամ Աստծո փառքի համար, քանզի հրաշքով բուժումը տեսնելով՝ մարդիկ փառավորում են Աստծուն (Մատթ. 9.6-8, Մարկ. 2.10-12, Ղուկ. 5.24-26):

### **2. Սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթքներով բժշկության մասին գուցե ավելի շատ բան գիտեին և այդ աղոթքներին ավելի շատ ապավինում էին մեր մեծերը, երբ նախկինում բժշկությունն այդչափ զարգացած չէր, ինչպես մեր օրերում: Ի՞նչ հիվանդություններ է հնարավոր բուժել աղոթքով, նարեկաբուժությամբ, ունե՞նք դեպքեր:**

Եկեղեցական հեղինակների աշխատություններում չկա «Նարեկաբուժություն» բառը: Այն կիրառելի է դարձել վերջերս հայ հոգեբանների, հոգեթերապևտների կողմից, որով նրանք նկատի ունեն Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» համապատասխան հատվածների ընթերցանության կամ ունկնդրության միջոցով մարդկանց հոգեբանական, հոգեթերապևտիկ օգնություն տրամադրելը: «Նարեկ» բառն անմիջական առնչություն չունի Սուրբ Գրիգորի ստեղծագործության կամ նրա անձի հետ, այն պարզապես անվանումն է Վանա լճի հարավային ափին գտնվող գյուղի, որտեղ ծնվել է Սուրբ Գրիգոր Նարեկացին: Հետագայում ժողովրդական կիրառմամբ Նարեկացու հայտնի աղոթական ստեղծագործությանը տրվել է նաև կրճատ՝ «Նարեկ» անվանումը:

Եկեղեցական ծիսակարգում աղոթքով բժշկությունը չի սահմանափակվում միայն Սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթքների ընթերցանությամբ: Քահանաների համար նախատեսված ծիսարանում՝ Մաշտոցում, որը բովանդակում է եկեղեցական խորհուրդների, ծեսերի կատարման կանոնները՝ համապատասխան աղոթքներով, շարականներով, հատուկ տեղ է գրավում բժշկության նպատակով իրականացվող կարգը, որը ներառում է բժշկության համար ավետարանական ընթերցումներ, աղոթքներ: Այդ աղոթքների շարքում կարևոր տեղ ունեն Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»-ից քաղված աղոթքները, որոնք, սակայն, միակը չեն համարվում բուժման համար:

Նախկինում բժշկությունն այսօրվա պես զարգացած չէր, բայց կրկին մեծ դերակատարություն ուներ մարդու առողջության վերականգնման համար: Մարդիկ, ինչպես և այսօր, բուժման համար դիմում էին աղոթքի զորությանը, սակայն Եկեղեցին երբեք չի անտեսել բժշկության կարևորությունը և հավատացյալների կյանքում աղոթքը ապաքինման միակ միջոցը չի համարել: Հիշենք, որ Քրիստոս բժիշկներին վերաբերող առած հիշատակեց (Մատթ. 9.12, Մարկ. 2.17, Ղուկ. 4.23, 5.31), Ղուկաս Ավետարանիչը մասնագիտությամբ բժիշկ էր, Պողոս առաքյալն իր թղթերում հիշում է Ղուկասին՝ նրան կոչելով «բժիշկը և սիրելին» (Կող. 4.14): Հոգևորականները ևս համարվում են հոգու բժիշկներ՝ մարմնավոր բժիշկների հետ

համեմատությամբ, եկեղեցական տոնացույցում ընդգրկված են բժիշկ սրբեր, ովքեր անշահախնդրությամբ, նաև աղոթքի կիրառմամբ բժշկություն են պարգևել մարդկանց:

Քրիստոս Իր զորությամբ մարդկանց մարմնական ամբողջական ապաքինում էր շնորհում: Այսպիսի զորություն ունեին նաև առաքյալները: Բժշկության նմանօրինակ առանձնահատուկ շնորհն այսօր կարող է տրվել որևէ հոգևորականի՝ ըստ հավատքի և սուրբ կենցաղավարության աստիճանի: Սակայն հոգևորականի իշխանությամբ կատարված բժշկության աղոթքները նույնպես ներգործում են, և եղել ու լինում են հրաշքով բժշկության դեպքեր:

### **3. Ինչո՞վ են Նարեկացու աղոթքներն առանձնահատուկ այս տեսանկյունից:**

Սուրբ Գրիգոր Նարեկացին իր «Մատյան ողբերգության» երրորդ մասում՝ Բան Գ, նշում է իր «Մատյանի» նպատակը: Նա խնդրում է Աստծուն, որ իր աղոթքների ընթերցանությունը կարդացողներին պարզևի հոգու բժշկություն, ազատում մեղքի կապանքից, զղջման կամք, կյանքի հույս ու փրկություն, ապաքինում, խաղաղություն, և այս աղոթամատյանը լինի կենաց դեղ՝ մարմնի և հոգու վիշտն ու ցավերը բուժելու համար (Մատյան ողբերգության, Բան Գ): Այստեղ Նարեկացին հայտնում է, որ իր ստեղծագործությունն արտահայտությունն է ամբողջ մարդկության հոգու ձգտումների, որոնց միախառնում է նաև իր անձնական ապրումներն ու աղոթքները և խնդրում, որ դրանք հրաշագործեն մարդու հոգևոր ներաշխարհում:

Մկրտության ժամանակ մարդուն տրվում են աստվածային շնորհներ: Այդ շնորհների ներազդեցությունը կախված է մարդկային կամքից, մարդու ցանկանալուց: Նարեկացու «Մատյան ողբերգության» ընթերցանությունը մարդու մեջ արթնացնում է հոգևոր խորը ապրումներ ու զգացումներ, դառնում խոսքային արտահայտությունն այն հույզերի, առ Աստված ձգտումի, որ առկա են անձի ներաշխարհում, սակայն նրա կողմից արտահայտվելու ձևը չէին գտնում: «Մատյանի» ընթերցանությունը մարդուն բերում է աղոթական վի-

ճակի և կամքի այնպիսի գործունեության, որով աստվածային շնորհը ներգործում է և հոգևոր խաղաղություն, ներդաշնակություն, բարիք, բժշկություն պարգևում:

**4. Նարեկաբուժությունն արդեն կիրառվում է հոգեթերապիայի մեջ, թե՞ միայն մասնավոր դեպքերում:**

«Թերապիա - *θεραπεία*» հունարեն բառը նշանակում է բժշկություն, իսկ «հոգեթերապիա» նշանակում է մարդկային ներաշխարհի խաթարված վիճակի բուժում: Հոգեթերապիան վերաբերում է հոգեբանությանը, որով հոգեբանները գործողություն են իրականացնում մարդու մտավոր, զգացական վիճակի բարելավման: Նարեկաբուժությունը կիրառվում է հոգեթերապիայի ասպարեզում հայտնի բիբլիոթերապիայի ուղղվածության մեջ: «Բիբլիոթերապիա» բառը թարգմանվում է գրքաբուժություն՝ հունարեն «βιβλίο - բիբլիո - գիրք» և «*θεραπεία* - թերապիա - բժշկություն» բառերից: Ուրեմն, նարեկաբուժությունը բիբլիոթերապիայի կիրառում է: Բիբլիոթերապիայի մեջ որևէ գրական ստեղծագործության ընթերցանություն է հանձնարարվում հոգեբան-հոգեթերապևտի կողմից, ըստ նպատակահարմարության, առաջարկվում է տվյալ անձին վերլուծել ստեղծագործության հերոսի կամ հերոսներից մեկի կերպարը, ուշադրություն դարձնել արտահայտված որոշակի մտքերի, վերլուծել նկարագրված իրավիճակներ, ինչը նպաստավոր է դիտվում մարդու հոգեբանական և կամ դրանից առաջացած ֆիզիկական խնդիրները լուծելու համար: Այսպիսով, նարեկաբուժությունը կիրառվում է բիբլիոթերապիայի շրջանակներում և տարբերվում է բուժման նպատակով Սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթքը պարունակող եկեղեցական կարգի կատարումից, որն Աստծուն ուղղված խնդրանքով, հիվանդի կամքի գործակցությամբ աստվածային շնորհի ներգործությունն է մարդու մարմնավոր և հոգևոր առողջության համար:

**5. Ո՞վ և ո՞ր դեպքերում կարող է նարեկաբուժության մասին խոսել կամ այն իբրև բժշկության մեթոդ կիրառել: Ինչպե՞ս եք վերաբերվում նարեկաբուժությամբ զբաղվող անձանց, բժիշկներին:**

«Նարեկաբուժություն» եզրը հնարել և հանրությանը դրան ծանոթացրել են հայ հոգեբանները: Նրանք են, որ ժամանակ առ ժամանակ ներկայացնում են բուժման այս մեթոդը, համապատասխան բացատրություններ, տեղեկություններ տալիս: Բնականաբար, հենց հոգեբան-հոգեթերապևտներն էլ այն կիրառում են որպես բժշկության մեթոդ: Նարեկաբուժությամբ զբաղվող որևէ հոգեբան մեր եկեղեցական ասպարեզում ևս կարող է եկեղեցականի հետ միասին զբաղվել տկարություն ունեցող անձի ապաքինմամբ: Բայց ամեն դեպքում հոգեբանի և հոգևորականի գործողությունները նույնը չեն, քանզի տարբեր ընկալման և տարբեր իրողությունների աղբյուրից են գալիս: Նարեկաբուժություն կիրառողները լինում է, որ շեշտում են մարդու հոգևոր ապրումի, ինչպես նաև զղջման, ապաշխարության կարևորությունը, եկեղեցի այցելելը, հոգևորականի մոտ մեղքերի թողություն ստանալը: Սակայն միևնույն ժամանակ նրանցից ոմանք նշում են, որ նարեկաբուժությունն օգտակար է բոլոր մարդկանց՝ անկախ ազգությունից ու դավանանքից, որով արդեն վերացվում է կրոնական-քրիստոնեական ապրումի հասկացությունը՝ ճշմարիտ աստվածապաշտության հետևորդ լինելու պայմանի անտեսումով: Այս հասկացությամբ Սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթքները կիրառվում են զուտ հոգեբանական նախատեսումներով և անմիջականորեն չեն առնչվում հոգևորին: Հետևաբար, պետք է զգուշանալ հոգեբանական գործողությունները հոգևոր իրողությունների հետ նույնացնելուց և հոգևոր ոլորտը հոգեբանության մակարդակին հավասարեցնելուց:

### **ԱՍՏՎԱԾԱՇՈՒԷՉ՝ ԳԻՐՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ**

**1. Երբ մահանում է լեզուն, որով գրված է գիրքը, փաստորեն այն ևս մահանում է: Քչերը կարող են կարդալ այն հին լեզուներով, որոնցով գրվել է Աստվածաշունչը: Սակայն գիրքը ողջ է: Ինչպե՞ս է այն վերապրել և սովորել խոսել մարդկության ժամանակակից լեզուներով:**

Աստվածաշունչը գրվել է եբրայերեն և հունարեն: Եբրայերեն գրվել է Հին Կտակարանը, հունարեն՝ Նոր Կտակարանը:

Նոր Կտակարանի հունարեն լեզուն տարածված էր հռոմեական կայսրության սահմաններում, որը և նպաստեց նաև նորկտակարանյան գաղափարների տարածմանը, քրիստոնեական հավատքի հաստատմանը: Այնուհետ Աստվածաշունչը թարգմանվեց նաև տարբեր լեզուներով: Աստվածաշնչի հարատևության պատճառը ոչ թե մարդկային այս կամ այն հասկանալի լեզվով գրված լինելն է, այլ նախ և առաջ այն, որ Աստվածաշունչը գրված է մարդու հոգու լեզվով, այսինքն՝ մարդկային հոգևոր նվիրական ապրումներն ու զգացումները, առ Աստված ձգտումը, առօրյայի, մտահոգությունների, կյանքի և մահվան, հավիտենական կյանքի գաղափարներն արտացոլված են Աստվածաշնչում և հոգեհարազատ են մարդուն: Բացի դրանից, Աստվածաշունչը նաև այլ զորություն ունի. Սուրբ Գրքի ընթերցանությունը զորացնում է մարդուն հոգեպես և դա զգալի է լինում մարդու կյանքում: Աստվածաշնչի այս հրաշալի հատկությունը բացատրվում է նրանով, որ այն Աստծո հայտնությունն է մարդկանց, պարունակում է Աստծո խոսքը, որը մեծ հզորություն ունի: Հնում Աստվածաշնչի օրինակներ քիչ կային, քանի որ տպագրության գյուտից առաջ ձեռագիր Ավետարանները կամ Աստվածաշունչը շատ քչերին էր հասանելի: Հոգևորականները պարզապես կարդում էին Սուրբ Գիրքը և բացատրում հավատացյալներին: Այդպես էր նաև Հայաստանում, երբ Սուրբ Գրքի լեզուն հայերենը չէր, այլ հունարենը կամ ասորերենը, քանի որ հայերեն գրեր չկային: Այս հանգամանքը մեծապես դժվարացնում էր Սուրբ Գրքի գաղափարների քարոզչությունը, մինչև որ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայերեն գրերը, և Աստվածաշունչը թարգմանվեց հայերեն: Այսօր Աստվածաշունչը թարգմանված է աշխարհի շուրջ 2500 լեզուներով: Սրանք այն լեզուներն են, որոնցով խոսում է աշխարհի բնակչության շուրջ 90 տոկոսը:

**2. Կան մարդիկ, որոնք որոշակի կարծիք ունեն Աստվածաշնչի մասին, սակայն անձամբ չեն կարդացել: Նրանք թերևս գնահատում են նրա գրական և պատմական արժեքները, բայց զարմանում են, թե ինչպե՞ս կարող է հազարամյակներ առաջ գրված գիրքը ժամանակակից**

**աշխարհին հարմար լինել: Կարո՞ղ է Աստվածաշունչը  
ներկայի համար գործնական և օգտակար լինել:**

Աստվածաշունչը բոլոր ժամանակների համար է, որովհետև Աստծո խոսքը չի հնանում: Քրիստոս նաև ասում է. «Երկինք ու երկիր կանցնեն, բայց Իմ խոսքերը չեն անցնի» (Մարկ. 13.31, Ղուկ. 31.33): Սա նշանակում է, որ ժամանակներից վեր է Աստծո խոսքը և բոլոր ժամանակների մարդկանց իր ասելիքն ունի, իր ազդեցությունն է սփռում բոլորի վրա: Մարդիկ զգում են Աստվածաշնչի կարիքը և դրա ներգործող մեծ ուժն ու զորությունը: Այսօր Աստվածաշունչն աշխարհում ամենաշատ բաշխվող և ամենաշատ վաճառվող գիրքն է: Տարեկան այն բաժանվում կամ վաճառվում է հարյուր միլիոնավոր օրինակներով: Աստվածաշնչային Միացյալ Ընկերության 1998 թ. տեղեկատվության համաձայն՝ Աստվածաշունչը ամբողջական, ինչպես և Հին ու Նոր Կտակարաններով կամ առանձին գրքերով բաժանվել և վաճառվել է 585 միլիոնից ավելի օրինակներով:

Այսօր բոլորիս տանն էլ Աստվածաշունչ կա: Սակայն մեր հասարակության մեջ նաև այն բացասական երևույթն է առկա, որ չնայած Աստվածաշունչ գրեթե բոլորն ունեն, սակայն շատերն այն չեն ընթերցում, այլ դնում են գրադարակներում ցուցադրության նպատակներով: Սա ընդունելի չէ, որովհետև, ինչպես ասում է Քրիստոս, միայն հացով չի ապրում մարդ, այլ այն ամեն խոսքով, որ ելնում է Աստծո բերանից (Մատթ. 4.4, Ղուկ. 4.4): Միայն մարմինը սնելը բավարար չէ, մարդը պետք է սնի նաև իր հոգին, և այդ հոգևոր սնունդն Աստծո խոսքն է: Մարդիկ հաճախ փորձության են ենթարկվում Աստծո խոսքը չընթերցելու, ժամեր են անցկացնում՝ ֆիլմեր, սերիալներ դիտելով, հեռախոսազրույցներ ունենալով, սակայն մի փոքր ժամանակահատված դժկամում են նվիրել Աստծո խոսքի ընթերցանությանը կամ աղոթքին, զրուցել Աստծո հետ, փառաբանել Նրան Իր տված բարիքների համար: Սա ևս չարի փորձություն է, որով չարը ցանկանում է մարդուն ետ պահել Սուրբ Գրքով զորանալուց, Աստծո հետ հաղորդակցությունից՝ նրան մեղքերի մատնելու և դժոխքի դատապարտելու համար: Այս ամենը գիտակցելով՝ քրիստոնյան պետք է

հետևողական լինի Աստծո խոսքով սնվելու, Աստծո հետ աղոթքով հաղորդակցվելու և աստվածաշնորհ բարիքներ ստանալու համար:

**3. Գրքերի հսկայական քանակը կարող է շփոթեցնել գրադարանում առաջին անգամ գտվող մարդուն: Սակայն երբ նրան բացատրեն, թե ինչպես են գրքերը դասավորված, նա շուտով կսովորի գտնել դրանց տեղերը: Աստվածաշունչը մի քանի տասնյակ մատյանների ժողովածու է: Ինչպե՞ս դյուրին կլինի կողմնորոշվել:**

Աստվածաշնչի հինկտակարանյան հատվածները, որոնք Իսրայելի ժողովրդի պատմական տեղեկություններն են պարունակում, հագեցած են բազմաթիվ անուններով, տեղանուններով, և Աստվածաշունչ առաջին անգամ ընթերցողը, Յին կտակարանից սկսելով ընթերցումը, կարող է խճճվել այս անունների մեջ: Դրա համար Աստվածաշնչին չպետք է մոտենալ որպես գեղարվեստական գրքի, որն սկսում են կարդալ սկզբից, այլ կարելի է նախ ընթերցել Նոր Կտակարանը, որտեղ հիշատակություններ կան հինկտակարանյան գրքերից, դեպքերից, որից հետո Յին Կտակարանի ընթերցումը հասկանալի է դարձնում կապը Նոր Կտակարանի հետ: Դժվարին պահերին, նեղության մեջ կարելի է ընթերցել սաղմոսները, որոնք Աստծո օգնության և օրհնության հոգեբուխ հիանալի ստեղծագործություններ են, ինչպես նաև համապատասխան հոգեվիճակ են ստեղծում աղոթքի համար: Այնուհետ կարելի է նաև պատմական գրքերն ընթերցել, որոնք հրեա ժողովրդի պատմության միջոցով ցույց են տալիս Աստծո ներգործությունը, նախախնամությունը մարդկության հանդեպ: Ուրեմն, եթե մեկն առաջին անգամ է ձեռքն առնում Աստվածաշունչն ընթերցանության համար, ցանկալի է նաև խորհրդակցել հոգևորականի հետ, ով կսովորեցնի, թե ինչպես է նախընտրելի ընթերցել՝ ավելի լավ ընկալելու համար:

**4. Անգլիացի գիտնական Նյուտոնը գրել է, որ ինքն արժանահավատության ավելի վստահելի նշաններ է գտնում Աստվածաշնչում, քան որևէ աշխարհիկ պատմության մեջ: Կարելի՞ է Աստվածաշնչին վստահել: Արդ-**

**յո՞ք այն իրական անձանց է հիշատակում կամ պատմում իրականում գոյություն ունեցած դեպքերի ու վայրերի մասին:**

Աստվածաշնչում հիշատակված պատմական դեմքերի, թագավորությունների, իրադարձությունների վավերականությունը հաստատված է նաև պատմիչների աշխատություններով, ինչպես նաև հնագիտական պեղումներով: Հնագիտական պեղումները կամ հայտնագործությունները մեծապես նպաստել են նաև հաստատելու Սուրբ Գրքի վավերականությունը, հնությունը և դարերի ընթացքում անփոփոխ լինելը: Քրիստոնեության առաջին դարին պատկանող գտածո տեքստերի պատահիկները՝ գրված պապիրուսների վրա, ցույց են տալիս հենց առաջին դարում նորկտակարանյան գրքերի գրված լինելը: Իսկ ավելի վաղ շրջանի գտածոները փաստում են հինկտակարանյան բնագրերի անփոփոխ մնալը ժամանակների ընթացքում: Օրինակ՝ 1947 թ. Մեռյալ ծովի մոտակայքում՝ Քոււմրանի քարանձավներում գտնված բազմաթիվ հինկտակարանյան ձեռագիր տեքստերը բառացիորեն համընկնում են այսօրվա մեր ունեցած Աստվածաշնչի տեքստի հետ: Այսպիսով, պատմական վկայություններով, հնագիտական պեղումներով և գտածոներով ևս ապացուցվում են Սուրբ Գրքի նկարագրած դեպքերի վավերականությունը և Աստվածաշնչի ճշմարտացիությունը:

**5. Կրոնը միշտ չէ, որ բարեկամաբար է վերաբերվել գիտությանը: Անցյալ դարերում որոշ աստվածաբաններ դիմադրել են գիտական հայտնագործություններին՝ կարծելով, որ դրանք սպառնալիք են հանդիսանում Աստվածաշնչի իրենց մեկնաբանությունների համար: Գիտությունն իրո՞ք Աստվածաշնչի թշնամին է:**

Գիտությունը երբեք հակառակ չէ Աստվածաշնչին, այլպես իրենք գիտնականները պետք է բարձրաձայնեին դա և բողոքեին: Նրանք, ովքեր խոսում են Աստվածաշնչի և գիտության հակառակության մասին, գիտնականներ չեն, այլ իմաստակներ, ովքեր իրենց անհավատությանը փորձում են արդարացում գտնել: Մինչդեռ աշխարհահռչակ բոլոր մեծ

գիտնականները հավատացյալ են եղել և մեծ հարգանքով են վերաբերվել Աստվածաշնչին: Ֆիզիկոս Նյուտոնը, օրինակ, ոչ միայն հավատացել է Աստծուն և ընդունել Աստվածաշնչի հեղինակությունը, այլև իր գիտական աշխատանքներից զատ նաև մեկնություններ է գրել Աստվածաշնչի որոշ գրքերի վերաբերյալ՝ ի մասնավորի Դանիելի մարգարեության և Յովհաննու Չայտնության մասին: Մաթեմատիկոս Բլեզ Պասկալը բացի գիտական մեծ նվաճումներից նաև հոգևոր աշխատություններ է գրել՝ խոսելով հավատքի, Աստծո, Աստվածաշնչի մասին՝ բազում մեջբերումներ կատարելով Սուրբ Գրքից: Գալիլեո Գալիլեյն ասում էր, որ բնությունն Աստծո երկրորդ գիրքն է, որից մենք չպետք է հրաժարվենք և որը մենք պարտավոր ենք կարդալ: Գալիլեյը նաև մեկ այլ հիանալի միտք է արտահայտել Աստվածաշնչի մասին՝ ասելով. «Սուրբ Գրքի նպատակն այն է, որ մեզ սովորեցնի, թե ինչպես ընթանանք երկինք, և ոչ թե այն, թե ինչպես է ընթանում երկինքը»: Միխայիլ Լոմոնոսովն ասում էր, որ Արարիչը մարդկությանը երկու գիրք է տվել, մեկում ցույց է տվել իր փառավորությունը, մյուսում՝ իր կամքը: Առաջինը տեսանելի աշխարհն է, իսկ երկրորդը՝ Սուրբ Գիրքը: Ամերիկացի մեծ գյուտարար Թոմաս Էդիսոնը, որի բազմաթիվ գյուտերից է էլեկտրական լամպը, ասել է. «Իմ մեծագույն հարգանքը և հիացմունքը բոլոր ինժեներներին, հատկապես նրանցից ամենահանճարեղին՝ Աստծուն»: Ֆիզիկոս Ջոզեֆ Թոմսոնը, ով հայտնագործել է էլեկտրոնը և ֆիզիկայի ոլորտում իր նվաճումների համար արժանացել Նոբելյան մրցանակի, ասել է. «Մի՛ վախեցեք լինել անկախ մտածողներ: Եթե դուք բավականին ուժեղ եք մտածում, ապա դուք անխուսափելիորեն գիտության միջոցով կգաք առ Աստված հավատքին, որը կրոնի հիմքն է: Դուք կտեսնեք, որ գիտությունը թշնամի չէ, այլ կրոնի օգնականը»: Չարաբերականության տեսության հեղինակ Ալբերտ Էյնշտեյնն ասել է. «Յուրաքանչյուր լուրջ բնախույզ պետք է ինչ-որ կերպ հավատավոր մարդ լինի: Այլ կերպ նա ընդունակ չէ պատկերացնելու, որ այն անհավանական նուրբ փոխազդեցությունները, որոնք ինքը դիտարկում է, մտածված են ոչ իր կողմից: Անսահման տիեզերքի մեջ ի հայտ է գալիս անսահմանորեն կատարյալ Բանականության

գործունեությունը: Իմ մասին սովորական պատկերացումը՝ որպես աթեիստի, մեծ մոլորություն է: Եթե այդ պատկերացումը քաղված է իմ գիտական աշխատություններից, ապա կարող եմ ասել, որ իմ աշխատությունները հասկացված չեն»: Քվանտային մեխանիկայի հիմնադիրներից Մաքս Բոռնը ասել է. «Բազմաթիվ գիտնականներ հավատացյալ են: Նրանք, ովքեր ասում են, թե գիտությունների ուսումնասիրությունը մարդուն աթեիստ է դարձնում, հավանաբար ինչ-որ ծիծաղելի մարդիկ են»: Քվանտային ֆիզիկայի հիմնադիրներից Կարլ Յեյզենբերգն ասել է. «Առաջին ունալը գիտության անոթից մեզ դարձնում է աթեիստ, բայց այդ անոթի ներքևում մեզ սպասում է Աստված»: Կրոնին և Աստվածաշնչին կողմ արտահայտված գիտնականների ցանկը կարելի է երկար շարունակել: Եվ եթե հայտնվի մեկը, ով գիտական իր կշիռով ու հեղինակությամբ, գիտության մեջ կատարած ներդրումներով հավասար կլինի այս բոլոր գիտնականների հանրագումարին և խոսի կրոնի կամ Աստվածաշնչի դեմ, այդ ժամանակ գուցե մտածենք այդպիսի մեկին լսելու մասին: Բայց քանի դեռ այս և նման կերպ մտածող բոլոր գիտնականներին միասին վերցրած համահավասար մեկը չկա իր հեղինակությամբ ու գիտական վաստակով, ով հակառակ կարտահայտվի, ապա մնացածների ասածները, կարծիքները Աստվածաշնչի կամ քրիստոնեական կրոնի հետ գիտության հակադրության մասին, Աստվածաշնչի և քրիստոնեական կրոնի օգտին խոսող բոլոր գիտնականների կարծիքների և խոսքերի համապատկերի առջև պարզապես ծիծաղելի և անլուրջ են թվում:

**6. Մարդկանց հետաքրքրում է ապագան՝ սկսած եղանակի տեսությունից մինչև տնտեսական ցուցանիշներ: Աստվածաշունչը բազում կանխատեսումներ և մարգարեություններ է պարունակում: Որքանով են դրանք ճշգրիտ:**

Մարգարեությունները տարբերվում են սովորական գուշակություններից: Գուշակություններն առավելաբար վերաբերում են միայն մոտ ժամանակներին և հիմնականում՝ կենցաղային հարցերին, իսկ մարգարեությունները տարածվում

են մինչև ժամանակների վախճանը, ընդգրկում են մարդկության պատմության լայն շերտերը: Աստվածաշնչում տրված է, թե ինչպես պետք է ստուգել մարգարեության վավերականությունը. այն պետք է ճշգրտությամբ կատարվի, այլապես մարգարեացողը համարվում էր սուտ մարգարե և ենթակա էր դառնում քարկոծման (Բ Օր. 18.22): Աստվածաշնչյան մարգարեների կանխատեսումներն իրենց ժամանակների մասին կատարվել են նրանց կյանքի օրոք, իսկ այն մարգարեությունները, որոնք վերաբերում են Քրիստոսի ծննդյանը, փրկագործությանը, նույնպես ճշգրտությամբ կատարվել են այդ մարգարեների ապրած ժամանակաշրջանից դարեր հետո: Եվ այս իրականացված մարգարեությունները ցույց են տալիս, որ պիտի կատարվեն նաև աշխարհի վերջի մասին մարգարեությունները:

**7. Աստվածաշնչում կա՞ն հարատև սկզբունքներ, որոնք կարող են օգնել բոլոր ռասսաների, էթնիկական խմբերի և ազգերի մարդկանց՝ իրենց կյանքը բարելավելու համար:**

Պողոս առաքյալն ասում է, որ Քրիստոսով այլևս խտրություն չկա հրեայի և հեթանոսի, ծառայի և ազատի, արուի և էգի միջև (Գաղ. 3.28): Սա նշանակում է, որ քրիստոնեությունը նաև ջնջում է ազգերի խտրականության վերաբերմունքը և Քրիստոսով բոլորին հավասար հռչակում: Սա վերացնում է նացիզմը և ռասիզմը՝ մարդկանց ի մի հավաքելով Քրիստոսի Եկեղեցու մեջ: Իհարկե, հայրենիքի գաղափարը չի վերանում, ազգային պատկանելության գիտակցությունը չի ջնջվում և բացարձակ կոսմոպոլիտիզմի քարոզչություն չի իրականացվում: Սակայն առաքյալի հայտարարությամբ, ազգերի հարաբերությունների մասին քրիստոնեության դիրքորոշումով այլևս արգելվում է խտրականությունն ազգերի միջև, մեկ ազգի՝ իրեն մյուս ժողովուրդներից ավելի վեր դասելու միտումը:

Քրիստոս բերում է բոլոր մարդկանց և ժողովուրդների միջև վարվեցողության կարևորագույն սկզբունքը, Իր մեծագույն պատվիրանը, որն ասում է. «Սիրեցեք միմյանց»: Մարդ-

կանց, ժողովուրդների միջև գժտությունները, հակամարտությունները փաստում են աստվածային նախանշած ուղուց շեղվելու և աշխարհն ավելոժող աղետները վերացնելու համար կյանքն աստվածային կամքի համաձայն հաստատելու անհրաժեշտության մասին:

## **ՍՆԱՀՎԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ**

**1. Ի՞նչն է համարվում սնահավատություն կամ նախապաշարմունք: Ճի՞շտ է, որ պասի օրերին չի կարելի կարևոր գործեր սկսել, կամ թույլատրելի՞ է երազների մեկնությանը հավատալ՝ որպես Աստծո կամ սատանայի կողմից տրված նշան:**

Սնահավատությունը տրամաբանությանը հակառակ անբացատրելի նախապաշարմունքներն են, որոնք կարող են առնչվել նաև կրոնական հարցերին: Ըստ այդ նախապաշարմունքի՝ կան իրողություններ, արարքներ կամ առարկաներ, որոնք երջանկություն կամ դժբախտություն են բերում: Սա ինչ-որ տեղ նման է կախարհությանը, երբ առարկաներին վերագրվում են գործություններ, որոնց այդպիսին լինելը զուրկ է տրամաբանությունից: Կա նաև անհատական սնահավատություն, որ մարդն է սահմանում իր համար: Երազների մեկնության առնչությամբ Աստվածաշունչն ասում է. «Ով հավատում է երազներին, նա նման է մեկին, որը փորձում է բռնել ստվերը և վազել քանու հետևից: Ինչպես ունայն է դեմքի անդրադարձը դեմքի դիմաց, այնպես էլ՝ երազներ տեսնելը» (Սիրաք 31.2-3): Այսինքն՝ ունայն է երազներին հավատալը կամ դրանցով առաջնորդվելը: Աստված առանձին մարդկանց կարող է երազի միջոցով հայտնություններ տալ, սակայն դրանք հազվադեպ են պատահում և իրենց առանձին մեկնությունն ունեն: Այդպիսի երազներ նշված են Աստվածաշունչում, և դրանց մեկնության համաձայն այդ երազներում տեսնված ամեն ինչ խորհրդանիշ է, որն իր համապատասխան բացատրությունն ունի: Եկեղեցական հեղինակների համաձայն՝ երազներն ավելի շատ լինում են մարդու ապրումներից, առօրյա գործողությունների ու մտածմունքների հետ կապված: Այսինքն՝ երազը վերաբերում է ոչ թե ապագային,

այլ անցյալին: Այսպիսին է նաև հոգեբանության տեսակետը: Օրինակ՝ հայտնի հոգեվերլուծաբան Ֆրոյդը երազների մեկնության մասին իր աշխատության մեջ նույնպես անցյալին է վերագրում երազը և ասում է՝ ասա, թե ինչպիսի երազներ ես տեսնում, և ես կասեմ, թե ինչպիսի մարդ ես դու:

## **2. Սնահավատությունը սխալ մտածելակե՞րպ է, թե՞ մարդու հոգևոր արժեքների խեղաթյուրում:**

Սնահավատությունն ավելի շուտ սխալ մտածելակերպի հետևանք է, ժողովրդական սխալ մեկնաբանություն, թյուրըմբռնում, քան թե հոգևոր արժեքների միտումնավոր խեղաթյուրում: Սովորաբար ժողովրդական մեկնաբանությունը կարող է հետաքրքրական, ուշագրավ լինել, բայց ոչ՝ ճշգրիտ: Այսպես է նաև բառերի նշանակության մասին ժողովրդական մեկնաբանությունը, որոնք չեն համապատասխանում լեզվի քերականական կամ իմաստաբանական ըմբռնումներին: Սնահավատությունը գալիս է Աստվածաշնչի, հոգևոր գրականության մասին անտեղակությունից: Այսպիսի անտեղակությամբ է պայմանավորված նաև աղանդավոր դառնալը, երբ մարդիկ Սուրբ Գրքից հիմնովին տեղեկություններ չունենալով՝ հեշտ որս են դառնում հիմնականում արևմուտքից Յայաստան թափանցած, կասկածելի անձերի կողմից հիմնված աղանդների կողմից: Տարբեր ուղորտներում մարդիկ վստահում են մասնագետներին և ինքնագործունեությամբ չեն զբաղվում, որովհետև գիտակցում են, որ նման ինքնագործունեությունը կարող է վատ հետևանքների հանգեցնել: Այսպես է բժշկության, շինարարության, կահույքագործության, ուսուցչության և այլ գիտությունների կամ արվեստների հանդեպ վերաբերմունքը: Այդպես էլ առավել ևս կրոնի հարցում պետք է ավելի զգուշավորություն հանդես բերել, ոչ թե սեփական կամ այլոց մեկնաբանություններին հետևել, այլ լսել եկեղեցականներին և նրանց բացատրությունները հոգևոր կյանքի, հոգևոր իրողությունների մասին՝ հիմնված Աստվածաշնչի և Քրիստոսի ուսուցման վրա:

### **3. Ինչո՞ւ է սնահավատությունն այդքան մեծ տեղ գրավում կյանքում:**

Խորհրդավորն ու անհականալին ձգում են մարդուն: Բացի դրանից, մարդը կյանքի փորձառությամբ զգում է, որ շատ բան իրենից կախված չէ, այլ տարբեր իրադարձություններից, հանգամանքներից, և փորձում է պաշտպանվել: Ապագայի հանդեպ անորոշությունը վախ է առաջ բերում, որից մարդը ջանում է ազատվել տարբեր առարկաների միջոցով՝ հավատալով, որ այդ առարկաները կարող են ինչ-որ անհասկանալի զորությամբ իրեն հեռու պահել չարից և փորձանքներից: Մինչդեռ հենց այս սնահավատությամբ է մարդն ավելի մոտենում չարին, որովհետև սնահավատությունը հեռացնում է ճշմարիտ հավատքից, հետևաբար և՛ Աստուծուց, իսկ Աստուծուց հեռանալը մոտեցնում է սատանային:

### **4. Որո՞նք են սնահավատության վրա հիմնված ամենատարածված սովորույթները, որ անընդունելի են քրիստոնյայի համար:**

Տարածված սնահավատությունները կարելի է բաժանել մի քանի խմբերի:

**1. Ճաշի սեղանի հետ կապված** - Աղը թափվելը նշանակում է կռիվ ընտանիքում, սեղանի անկյունում նստելը՝ յոթը տարի չամուսնանալ, գդալի, դանակ-պատառաքաղի կամ հացի կտորի ընկնելը՝ այդ տուն հյուր կգա:

**2. Առարկաների գործածություն** - Ձիու պայտ տան մուտքին՝ երջանկության համար, փշեր, աչքի ուլունքներ՝ չար աչքից խուսափելու կամ չկամեցողների վատ ցանկություններն իրականություն չդառնալու համար, թալիսմաններ՝ հաջողության համար, ընկնող աստղ՝ աստղի անկման ընթացքում պահված երազանքը կկատարվի:

**3. Թվեր և օրեր** - Վատ է համարվում 13 թիվը՝ կապված Քրիստոսի և աշակերտների Վերջին ընթրիքի հետ, որին մասնակիցների թիվը 13 էր և որից հետո սոսկալի դեպքեր տեղի

ունեցան: Հատկապես այս սնահավատությունն այնքան է տարածված, որ դրա հետ հաշվի են նստում նույնիսկ տնտեսական գործունեության մեջ՝ հյուրանոցներում չկա 13-րդ համար, 13-րդ հարկ, ինքնաթիռներում չկա 13-րդ շարք: Վատ է համարվում նաև 666 թիվը, քանի որ Հովհաննու Հայտնության մեջ նշված է, որ դա նեռի թիվն է (13.18): Բայց եկեղեցական հեղինակները բացատրում են, որ Հայտնության գրքում գործ ունենք խորհրդանշանների հետ, որոնցից է և 666 թիվը: Այլապես մեզ համար մերժելի պիտի լինեն մարդիկ, որոնց փաստաթղթերում կան հեռախոսահամարներում կամ մեքենայի համարանիշում համընկել են երեք վեցեր: Այլ բան է, երբ մարդն ինքն է իր հոգեվիճակը կամ քրիստոնեության հանդեպ թշնամանքը շեշտելու համար այդպիսի համար վերցնում: Սակայն եթե նման մտադրություն չկա, ուրեմն այդ թիվը մարդու մասին ոչինչ չի ասում: Սուրբ Գրիգոր Տաթևացին 666-ը բացատրում է հայերեն այբուբենի թվային նշանակությամբ, հետևյալ նախադասության բառերի առաջին տառերի թվային մեկնաբանությամբ՝ **ուրանամ կամաւ զԱստուած**: Այսինքն՝ սեփական կամքով Աստծուն ուրացողներն են նեռերը, ինչպես որ բացատրվում է Աստվածաշնչում (Ա Հովհ. 2.18, 22, 4.3, Բ Հովհ. 7): Ամբարենպաստ է համարվում ուրբաթ օրը, որովհետև շաբաթվա այդ օրը տեղի ունեցավ Քրիստոսի խաչելությունը:

**4. Գործողություններ** - Տեառնընդառաջի կրակի վրայով թռչել՝ հիվանդություններից ազատվելու համար. սա դատապարտելի է, որովհետև կրակին վերագրում ենք անհրակյան զորություն, հավատում ենք կրակին՝ դառնալով կրակապաշտներ: Ջատկին ձու չներկելն այն ընտանիքներում, որտեղ այդ տարի ընտանիքի անդամներից մեկը մահացել է, նույնպես ընդունելի չէ. ժողովրդական մեկնաբանությամբ ձվի գույնն ուրախություն է խորհրդանշում, իսկ սզացյալներն ուրախության նշաններից պետք է հեռու լինեն: Մինչդեռ հատկապես այդպիսի ընտանիքներում պիտի ձու ներկեն, որովհետև կարմիր գույնը խորհրդանշում է Քրիստոսի արյունը, որով փրկվեց մարդկությունը, ինչպես նաև հարության ավետիսն ենք տալիս: Ուրեմն, սա հատկապես այդպիսի ըն-

տանիքների համար մխիթարություն է: Դիմացով սև կատու անցնելը՝ մտածում են, որ անհաջողության կամ փորձանքի նշան է: Հայելի կոտրելը վատ հանգամանքների առջև կարող է կանգնեցնել: Նոր տարվա օրը ինչպես դիմավորես, այդպես կլինի և ողջ տարին: Ավելի շատ եվրոպական երկրներում տարածված սնահավատություններ են, որ եթե շատրվանով ավազանի մեջ դրամ զցես և ցանկություն մտապահես, ապա այն կիրականանա:

**5. Անհատական սնահավատություններ** - Սահճակալից աջ ոտքով ելնել կամ նախ աջ գուլպան, կոշիկը հագնել, որպեսզի գործերը աջ, այսինքն՝ հաջող լինեն: Հաշվում են, օրինակ, աստիճանները, եթե զույգ կամ կենտ է, ըստ համապատասխանության, օրը կամ գործը հաջող կամ անհաջող կլինի: Տնից դուրս գալիս մի մարդու տեսնելը համարում են հաջողության նշան, մեկ ուրիշին տեսնելը՝ անհաջողության:

Այս բոլորը մտացածին բաներ են, որևէ կապ չունեն իրականության և ճշմարտության հետ: Ֆրանսերենում, անգլերենում, իտալերենում «սնոտիապաշտություն» բառը ծագում է լատիներեն «superstitis» բառից, որը նշանակում է վերապրած, ողջ մնացած: Սնոտիապաշտությունը նկարագրվում է պատերազմից հետո ողջ մնացած, կանգուն զինվորի տեսքով, ով դիմացել է ժամանակներից, կրոնի բացատրություններից ու փաստարկներից, գիտության ձեռքբերումներից և այդ ամենով անցնելով՝ դեռևս կանգուն է և գոյություն ունի՝ հակառակ ամեն տրամաբանության: Ուրեմն, սնոտիապաշտությունը սին ու դատարկ բան է և քրիստոնյան պետք է հեռու մնա այդպիսի կեղծ հավատալիքներից հետևելուց, այլպես կդադարի քրիստոնյա լինելուց և կվերածվի կռապաշտի:

**5. Երբեմն սնահավատությունը կամ տարբեր նախապաշարմունքներն ավելի շատ ծնվում են վախից:** Մարդիկ վախենում են չար աչքից, թուղթուգրից, շատ հավատացյալներ նախընտրում են համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ խուսափելու հնարավոր կամ թվացյալ վտանգից: Ո՞րն է իրական վտանգն այս պարագայում:

Վտանգն այն է, որ մի կրակից ելնում, ընկնում են մեկ այլ կրակի մեջ: Երբեմն մտածում են, թե իրենց կամ իրենց երեխաների վրա չարի ազդեցություն կա և դրան դիմադրելու համար օգտագործում են սնոտիապաշտական առարկաներ, որով և իրենց հույսն ու հավատը դնում են այդ առարկայի և ոչ թե Աստծո վրա: Սնոտիապաշտ մարդիկ մի առարկայի կամ իրողության վերագրում են գերմարդկային, գերբնական զորություն և իրենց պաշտպանված են զգում, երբ ունենում են այդպիսի առարկաներ: Սա նաև ինքնախաբեություն է, և այդպիսի առարկաներով սեփական ապահովությունն զգալը խոսում է այն մասին, որ մարդը նաև հոգեբանական խնդիրներ ունի: Այսպիսով, մարդն ակնհայտորեն մերժում է Աստծուն և իր համար հավատի առարկա գտնում: Աստծուց հեռացումը, հատկապես այս ձևով, մարդուն չի ազատի չարից, այլ մարդը, ինչպես ժողովրդական խոսքն է ասում, առվից ելնելով՝ ծովը կընկնի, այսինքն՝ Աստծուց ավելի մեծ հեռավորության վրա կհայտնվի՝ այդպես մոտենալով չարի ազդեցության ոլորտներին և մուտք գործելով դրանց մեջ: Պետք է հավատքն ամրապնդել՝ անձնական և հոգևորականի աղոթքով ազատվելով չարից, խնդրելով Աստծո պահպանությունն ու հովանին: Սա է չարից, թուղթուզրից, նման բաներից ազատվելու ճանապարհը:

Սնոտիապաշտության առկայությունը մարդու մոտ հոգեբանության տեսանկյունից խոսում է նաև այդ անձի հոգեբանական շեղումի մասին, նրա մոտ պարանոիզմի կամ փսիխոզի առկայության մասին: Պարանոիկներն այն մարդիկ են, ովքեր կարծում են, թե իրենց անընդհատ հետևում են, հետապնդում և փորձում են միջոցներ ձեռք առնել այդ հետապնդումներից ազատվելու համար: Իսկ փսիխոզի մեջ եղողներն իրական աշխարհի ընկալում չունեն. նրանց մոտ նկատվում է ճիշտ մտածելակերպի խանգարում: Պետք է գիտակցական մոտենալ կյանքի խնդիրներին և ոչ թե տրվել սնոտիապաշտությանն ու դրանից ավելի վնասվել:

**6. Սնահավատ սովորություններն ավանդույթի տեսքով փոխանցվում են սերնդից սերունդ, հաճախ դրանք մասնագետների կողմից համարվում են ժողովրդական մշա-**

**կույթի մի մասը և լայնորեն քարոզվում՝ որպես ազգային  
ինքնատիպության մասին վկայող երևույթ: Ինչպե՞ս ճիշտ  
կողմնորոշվել:**

Ազգագրագետների այդպիսի գործելակերպը խորհրդային եկեղեցամարտ քաղաքականության մնացուկներից է: Խորհրդային շրջանում եկեղեցահալած քաղաքականությամբ փորձ էր արվում նսենացնել եկեղեցին: Եվ զարմանալի է, որ այդ շրջանի ազգագրագետներն իրենց գրվածքներով եկեղեցական տոները կապում էին սնոտիապաշտությունների հետ՝ ջնջելով և վերացնելով տոնի բուն իմաստը: Եկեղեցական տոներին առնչվող ժողովրդական սովորույթներ ու բացատրություններ կան, որոնք կրոնական տեսակետով կարող են սխալ լինել: Այդ սովորույթներն առաջացել են եկեղեցական տոնի ժողովրդական տոնախմբություններից: Սակայն ազգագրագետները պատկերը շուռ են տալիս և եկեղեցական տոնը ներկայացնում իբրև թե առաջացած այդ սնահավատություններից կամ հիմնված սնոտիապաշտության վրա: Այսպես կոչված ազգագրագետները կարծում են, թե իրենց առաքելությունը կայանում է ժողովրդի սխալ ընկալումները, սնոտիապաշտությունները հավաքելու և տարածելու մեջ: Որքա՞ն հակառակ են այսպիսի վայ-ազգագրագետներին այն գործիչները, ովքեր իրոք ժողովրդական արժեքներ, բանահյուսական, երգ-երաժշտության, ժողովրդական ստեղծագործությունների հավաքագրումն են իրականացրել և իրականացնում: Դա է իրական առաքելությունը ազգագրագետի՝ գատել ժողովրդի կեղծ և իրական արժեքները, արժեքավորը վեր հանել, պահպանել ու ազդարարել այդ մասին: Հակառակ դեպքում ազգագրագետ կոչվածները վերածվում են սնոտիապաշտության մունետիկների: Այսպիսի սնոտիապաշտություններին, կեղծ հավատալիքներին դեմ էին դեռևս հին աշխարհի առաջադեմ մտածողները: Փիլիսոփա Սոկրատը չէր ընդունում տարբեր հեթանոսական աստվածների և դրանց շուրջը հյուսված հավատալիքները, նաև Պլատոնը դեմ է հանդես գալիս Հոմերոսի ստեղծագործություններին, Հեսիոդոսի «Թեոգոնիա» (Աստվածների ծագումնաբանությունը) աշխատությանը, որոնց մեջ առկա է ժողովրդական

սնտիապաշտական հավատալիքների նկարագրությունը, քանի որ, ինչպես ասում է փիլիսոփան, դրանք խանգարում են ճիշտ կերպով դաստիարակելու պետության քաղաքացուն:

**7. Կաթոլիկ եկեղեցին միջնադարյան Եվրոպայում փորձեց մաքրել իր դոգմաները տարբեր ժողովրդական հավատալիքներից և սահմանել քրիստոնյայի վարքը կենցաղում և առօրյայում: Պատմության մեջ այդ պայքարը կոչվեց վիուկների որս և ուղեկցվեց ողբերգություններով: Այսօր արդյունք կունենա՞ պայքարը սնահավատության դեմ:**

«Վիուկների որս» արտահայտությունն ունի ուղիղ և փոխաբերական նշանակություն: Քանի որ միջնադարում տարածված էր նաև կախարդությունը, ապա դրա դեմ պայքարելու համար խարույկի վրա վառում էին նաև վիուկներին կամ նրանց, ովքեր կասկածվում էին կախարդությամբ զբաղվելու մեջ: Փոխաբերական իմաստով այս արտահայտությունը նշանակում է, որ մարդուն կեղծ մեղադրանք են առաջադրում և սկսում նրան հետապնդել: Մեր եկեղեցին նման ծայրահեղ միջոցների չի դիմել՝ արատավոր դրսևորումների դեմ պայքարելու համար, բայց նաև սնահավատության դեմ մեղադրանքը մտացածին չէ. այն շեղում է մարդուն իրական հավատքից, հոգևոր և հոգեբանական խնդիրների առջև կանգնեցնում:

Արատավոր բարքերի, սովորույթների դեմ պայքարը պետք է լինի եկեղեցական ընդհանրության գործ, երբ եկեղեցին ընկալվում է իր ամբողջական նշանակությամբ՝ որպես հավատացյալների հավաքականություն՝ և՛ հոգևորականները, և՛ ժողովուրդը: Աղանդավորների դեմ պայքարում, օրինակ, մարդիկ մտածում են, որ իրենք պետք է տանը նստեն, իսկ եկեղեցականները, որոնք խիստ սակավաթիվ են, իրենց սպասավորությունը, եկեղեցիները թողնելով՝ դռնեղուռ ընկնեն կամ այլ միջոցներով գործեն: Եթե ուշադիր հետևում ենք տարբեր աղանդների գործելակերպին, տեսնում ենք, որ ոչ թե նրանց քարոզիչները, այլ սովորական հավատացյալներն են հրապարակավ լծված այսպիսի գործի: Իսկ մեր եկեղեցու

պարագայում մարդիկ մտածում են, որ իրենք Եկեղեցու անդամ են, բայց իրենք պիտի միայն հետևեն, թե ինչ են անելու հոգևորականները: Այսպես խնդիրներին լուծում չի տրվի, քանի որ հոգևորականների թիվը շատ քիչ է: Արատավոր բարքերի, սովորույթների, նաև սնոտիապաշտության դեմ նույնպես պետք է պայքարենք միասնաբար՝ իբրև Եկեղեցի, քանի որ Եկեղեցին բոլոր հավատացյալների հավաքականությունն է:

## **ՈԳԻՆԵՐԻ ԵՎ ՈԳԵՅԱՐՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**1. Ուրվականներ, գորլիկներ, վամպիրներ, ջիներ, դևեր, հրեշտակներ... Այսպես են տարբեր մարդիկ նկարագրում այն ոգիներին, որոնց համարում են կա՛մ չար, կա՛մ բարի: Իսկ իրականում ինչպե՞ս են նրանք առաջացել:**

Կրոնի հետ առնչություն ունեն հրեշտակներ, դևեր, ոգիներ, երբեմն նաև ուրվականներ, մուսուլմանության մեջ ջիներ, իսկ գորլիկները և վամպիրները առասպելաբանական, ժողովրդական պատումների մեջ ի հայտ եկող էակներ են: Յեքիաթային ժանրում կա թզուկների կերպարը, որոնք մարդկանց բարություն են անում, օգնում են: Սրանց ի հակադրություն՝ հեքիաթներում հանդիպում են նաև գորլիկներ, որոնք մարդկանց չարիք են պատճառում: Վամպիրների մասին պատումները տարածվեցին հատկապես 18-րդ դարում արևելյան Եվրոպայում՝ Բալկաններում: Սրանք էակներ են, որոնք իբր սնվում են մարդկային արյունով: Վամպիրի կերպարը, ի տարբերություն հեքիաթային հերոսների, նաև հոգեբանական բացասական նշանակություն ունեցավ որոշ դեպքերում, քանի որ եղել են սպանություններ, որոնց իրագործողները, հոգեկան շեղումներ ունենալով, սպանություն կատարել են այդ էակների ենթադրյալ գործելակերպի նմանողությամբ:

Մուսուլմանության մեջ խոսվում է ջիների մասին: Մահմեդականների սուրբ գիրքը՝ Դուրանը, Աստվածաշնչի պես բաղկացած է գլուխներից, որոնք կոչվում են սուրահներ: 72-րդ սուրահը կոչվում է «Սուրահ Ալ-Ջին» և պատմում է ջիների մասին, որոնք հրեշտակներից զատ այլ էակներ են, կարող են

մարդկանց օգնել կամ չարիք պատճառել և դատաստանի օրը մարդկանց պես դատվելու են բարի կամ չար գործերի համար:

Քրիստոնեության մեջ հոգեղեն եակներ են հրեշտակները, որոնք մարդկանց օգնում են, սպասավորում: Քրիստոնեական կրոնում խոսվում է նաև ոգիների, դևերի, սատանայի մասին, որոնք չարիքներ են գործում և մարդկանց ևս մղում են չարագործությունների: Ուրվականների վերաբերյալ պատմություններ առավելաբար հանդիպում են գեղարվեստական ստեղծագործություններում, որտեղ «ուրվական» ասելով՝ նկատի է առնվում մահացած մարդու հոգին, որը հայտնվում է ողջ մարդկանց, խոսում նրանց հետ կամ իր հայտնվելով՝ ինչ-որ բան հասկացնում և կամ վախեցնում, սարսափեցնում: Բայց Աստվածաշնչում էլ կարող ենք հանդիպել այս իմաստով ուրվականի և օկուլտիզմի, ոգեհարցության մասին տեղեկության: Սավուղ թագավորը պատերազմի պատրաստվելիս, ցանկանալով Աստծո կամքն իմանալ, ոգեհարցի միջոցով կանչում է Սամուել մարգարեի հոգին, որը Սավուղին վերստին հայտնում է նրա հանդեպ Աստծո բարկության մասին (Ա Թագ. 28.7-20): Այստեղ Աստված թույլ է տալիս, որ մարգարեի հոգին նրա երկրային կյանքում հայտնի կերպարի ձևով հայտնվի և Աստծո կամքը հայտնի: Նման կերպ նաև Քրիստոսի պայծառակերպության ժամանակ հայտնվում է Մովսես մարգարեն (Մատթ. 17.3, Մարկ. 9.3, Ղուկ. 9.30): Սակայն հիմնականում մարդկանց հոգիները, մահից հետո իրենց հատկացված վայր տարվելով, մնում են այնտեղ և չեն կարող ըստ իրենց կամքի ազատ տեղաշարժվել: Ուրվականների մասին պատկերացում եղել է նաև հրեաների մոտ հին ժամանակներից: Երբ Քրիստոս, ծովի վրայով քայլելով, մոտենում է ծովի մեջ նավարկող առաքյալներին, նրանք կարծում են, թե ուրվական են տեսնում (Մատթ. 14.25-26, Մարկ. 6.48-49, Չովի. 6.19): Հարուցյալ Քրիստոս, հայտնվելով առաքյալներին, նրանց հավաստիացնում է, որ ինքը ոգի չէ (Ղուկ. 24.39):

Ոգեհարցությամբ, գուշակություններով զբաղվելն անընդունելի ու դատապարտելի է, որովհետև, ըստ Սուրբ Գրքի, Տիրոջ համար պիղծ է նա, ով զբաղվում է այդպիսի բաներով

(Բ Օր. 18.10-12): Պողոս առաքյալը, Սուրբ Հոգուց իրեն տրված հայտնության համաձայն, ասում է, որ ճշմարիտ հավատքից ոմանք հեռանալու են մոլորեցնող ոգիների ազդեցությամբ, դևերի վարդապետությունների, այսինքն՝ դիվական ուժերից ներշնչված տարբեր կրոնական ուսմունքների պատճառով (Ա Տիմ. 4.1):

**2. Շատերն ընդհանրապես չեն հավատում ոգիների գոյությանը, քանի որ մտածում են, որ դա սնոտիապատություն է կամ վառ երևակայության արդյունք: Ի՞նչ է ասվում Աստվածաշնչում:**

Աստվածաշունչն իրական է համարում ոգիների գոյությունը: Սուրբ Գրքում ասվում է, որ սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը (Ծննդ. 1.1): Սրանով նաև հասկացվում է, որ Աստված ստեղծեց երկնային արարածներին՝ հրեշտակներին, և երկրային նյութական գոյերը, այդ թվում և՛ մարդուն: Աստվածաստեղծ հրեշտակների մի մասը սատանայի գլխավորությամբ ապստամբեց Աստծո դեմ, երկիր նետվեց՝ վերածվելով չար ոգիների, դևերի: Քրիստոս ևս խոսում է չար ոգիների մասին, նշում, որ դրանք կարող են մտնել մարդու մեջ: Երբ մեկի միջից ոգին ելնում է, կարող է նաև որոշ ժամանակ անց ավելի չար յոթ ոգիների հետ մտնել մարդու մեջ (Մատթ. 12.43-45, Ղուկ. 11.24-26): Քրիստոս բուժում է նաև դիվահարների՝ նրանցից դուրս հանելով դևերին, ինչպես օրինակ գերգեսացի դիվահարի բժշկությունը, որի մեջ բազում դևեր էին մտել (Մատթ. 4.24, 8.16, 28-32, 9.32-33, 12.22, Մարկ. 1.26, 32-34, 5.8-13, նաև՝ Գործք 8.7): Նոր Կտակարանում չար ոգիներից հատկանշվում են նաև չար համր ոգին (Մարկ. 9.16), հարցուկ ոգին: Հարցուկ ոգիները մղում են մարդկանց գուշակություններով զբաղվելու, ինչպես Գործք առաքելոցում է նշվում այդպիսի մի դեպքի մասին, երբ աղախինը գուշակություններով նյութական օգուտ էր բերում իր տերերին (Գործք 16.16): Շրջիկ հրեաներից ոմանք, իմանալով Հիսուսի անունով դևեր հանելու առաքյալների զորության մասին, փորձեցին իրենք էլ նույնն անել և հանդգնեցին Տեր Հիսուսի անունը կանչել չար ոգիներ ունեցողների վրայ՝

ասելով. «Երդվեցնում են ձեզ Յիսուսով, որին քարոզում է Պողոսը»: Այդ ժամանակ չար ոգին նրանց պատասխանեց ու ասաց. «Յիսուսին գիտեն և Պողոսին ճանաչում են. բայց դուք ո՞վ էք»: Եվ այն մարդը, որի մեջ չար ոգի կար, վազեց նրանց վրա և երկուսին էլ բռնելով՝ գետին զարկեց նրանց. այնպես որ նրանք մերկ և վիրավոր փախան այդ տնից: (Գործք 19.13-16): Նոր Կտակարանն զգուշացնում է մոլորեցնող ոգիներից և դևերի վարդապետություններից (Ա Տին. 4.1). սրանցով է, որ տարածվում են աղանդները՝ նաև այս կերպ ի ցույց հանելով չարի պայքարը Քրիստոսի Եկեղեցու դեմ: Սա նշանակում է, որ տարբեր տեսակի կամ հատուկ տարբեր գործողություններ իրականացնող դևեր, ոգիներ կան, որոնց նպատակն է մոլորեցնել մարդկանց, շեղել ճշմարիտ աստվածապաշտությունից, հոգևոր վնասներ պատճառել: Յայտնության գիրքը ևս անդրադարձ է կատարում այս իրողության վրա. «Վիշապի բերանից, գազանի բերանից և սուտ մարգարեի բերանից ելնում էին երեք անմաքուր ոգիներ՝ նման գորտերի. քանզի նրանք դիվական ոգիներ էին, որոնք նշաններ էին գործում», «ոգիները թագավորներին հավաքեցին մի տեղ, որ եբրայերեն կոչվում է Արմազեդոն», «Ընկա՛վ մեծն Բաբելոնը, որ եղել էր բնակավայր դևերի, արգելանոց ամեն տեսակ պիղծ ոգիների ու ամուր բանտ ամեն տեսակ անմաքուր և ատելի ոգիների» (16.13-14, 16.16, 18.2):

Քրիստոս առաքյալներին իշխանություն տվեց պիղծ ոգիների վրա (Մատթ. 10.1, Ղուկ. 9.1), ինչը նշանակում է, որ նրանք զորություն ստացան մարդկանցից վանելու ոգիների ազդեցությունը կամ հեռու քշելու նրանց: Ձեռնադրության խորհրդով առաքյալները Քրիստոսից ստացած իրենց իշխանությունը, զորությունը փոխանցեցին իրենց հետևորդներին, և հիմա անընդհատ ձեռնադրության միջոցով այդ նույն իշխանությունն ու զորությունն անցնում է Եկեղեցու ձեռնադրյալ սպասավորներին: Դա ցույց է տալիս, որ հոգևորականներն այսօր նույնպես իշխանություն ունեն դևերի վրա, զորություն՝ նրանց ազդեցությունը մարդկանց վրա չեզոքացնելու:

**3. Հոգևոր իրողությունների առնչությամբ հաճախ օգտագործվում են «ընկած հրեշտակ», «մեղավոր հրեշտակ», «չար դև», «պահապան հրեշտակ» արտահայտությունները: Որտեղի՞ց են դրանք գալիս:**

Աստվածաշնչում չի շեշտվում «ընկած հրեշտակ» արտահայտությունը: Այս մասին ավելի շատ ուսուցանում են Սուրբ Գրքի մեկնիչները, եկեղեցական հեղինակները՝ հիմնվելով սուրբգրական տեղեկությունների վրա: Նախ՝ Եսայու մարգարեության մեջ է խոսվում այս մասին, պատկերվում առավոտյան աստղը, որը հայերեն թարգմանությամբ կոչվում է արուսյակ, լատիներեն թարգմանությամբ՝ լուցիֆեր: Նա ցանկանում է իր գահը հաստատել բոլոր աստղերից վեր և հավասարվել Աստծուն, որի համար էլ ցած է նետվում (14.12-15): Նաև Քրիստոս Նոր Կտակարանում ասում է. «Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս, ինչպես փայլակը» (Ղուկ. 10.18): Հովհաննու հայտնության մեջ նկարագրվում է Միքայել հրեշտակապետի՝ երկնային զորքերի գլխավորի պայքարը սատանայի և նրա չար ոգիների դեմ, որի արդյունքում սատանան պարտվում է և ցած նետվում (12.7-9):

Պահապան հրեշտակի մասին ուսուցումը հիմնված է Քրիստոսի խոսքի վրա, ըստ որի՝ հավատացյալներն ունեն հրեշտակներ, որոնք մշտապես տեսնում են երեսը Հոր, որ երկնքում է (Մատթ. 18.10): Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ հրեշտակների տասը դասեր կային, որոնցից տասներորդն առավել լուսավոր ու զորեղ հրեշտակների դասն էր, նրանցից էր սատանան: Նրանք սատանայի գլխավորությամբ իրենց ամբարտավանության ու գոռոզության պատճառով երկնքից ցած նետվեցին: Եվ հրեշտակների այդ տասներորդ դասը մեռյալների ընդհանրական հարությունից հետո լրացնելու են այն մարդիկ, ովքեր երկրի վրա ապրել են մեծագույն սրբությամբ, հրեշտակային կենցաղավարությամբ:

**4. Ասում են՝ դևերն ու չար ոգիներն են մոլորեցնում մարդկանց և դրդում չար գործերի: Արդյո՞ք նրանք մինչև օրս էլ ազդեցություն ունեն մարդկանց և նրանց արարքների վրա:**

Պողոս առաքյալն ասում է, որ սատանան կարող է լույսի հրեշտակի պես կերպարանավորվել, նաև նրա պաշտոնյաները՝ արդարության պաշտոնյաների պես (Բ Կորնթ. 11.15): Չարն անմիջական ազդեցություն կարող է ունենալ մարդու վրա: Հիշենք, որ անապատում Քրիստոս չարի կողմից փորձությունների ենթարկվեց (Մատթ. 4.1-11, Մարկ. 1.12-13, Ղուկ. 4.1-13): Քրիստոս իր պատմած առակներով ցույց տվեց չարի ազդեցությունը. սերմնացանի առակում սատանան մարդու սրտից հափշտակում է սերմանված բարի սերմը (Մատթ. 13.19), որոմների առակում չարն է, որ բարի սերմերի մեջ չար որոմ է սերմանում (Մատթ. 13.25): Հետևաբար, չարն է չար գործերի ազդողը, մարդուն չարագործության մղողը՝ մարդու անձնական համաձայնության դեպքում: Նաև հիվանդությունները կարող են լինել չարի ազդեցության հետևանք, ինչպես օրինակ՝ հիվանդ կնոջ բուժման ժամանակ Քրիստոս ասաց, որ սատանան այս կնոջը տասնութ տարի կապել էր (Ղուկ. 13.16): Հուդան սատանայի ուղղակի ազդեցությամբ էր, որ, իր ազատ կամքով համաձայնելով չարի գայթակղությանը, մատնեց Քրիստոսին: «Սատանան մտավ Իսկարիոտացի կոչված Հուդայի մեջ» (Ղուկ. 22.3),- ասվում է Ավետարանում: Ինչպես նաև սատանան չար զգացում ու մտադրություն է լցնում մարդու սիրտը՝ սխալ, մեղավոր ընթացքների մղելով, ինչպես տեղեկանում ենք Անանիային ուղղված Պետրոս առաքյալի հանդիմանությունից. «Անանիա՛, ինչո՞ւ սատանան լցրեց քո սիրտը, որ դու ստեիր Սուրբ Հոգուն» (Գործք 5.3): Նաև Պողոս առաքյալն է ասում, որ սատանայի պատգամավորը բռնցքահարում է իրեն, որ չգոռոզամտանա (Բ Կորնթ. 12.7): Բարկության ետևում նույնպես չարը կարող է թաքնված լինել և բարկությունից մարդուն հասցնել անգամ մարդասպանության: Դրա համար առաքյալն ասում է. «Արեգակը ձեր բարկության վրա թող մայր չմտնի. և սատանային տեղի մի՛ տվեք» (Եփ. 4.26-27): Առաքյալն զգուշացնում է հավատացյալներին, որ զգոն լինեն և չարի որոգայթների մեջ չընկնեն. «Արթուն եղեք, հսկեցեք, քանի որ ձեր ոտիսը՝ սատանան, մռնչում է առյուծի պես, շրջում և փնտրում է, թե ո՞ւմ կուլ տա» (Ա Պետ. 5.8):

Ինչպե՞ս կարող ենք ազատվել կամ հեռու մնալ չարի փորձանքներից: Աստծուն հնազանդությունը և հավատքի զորացումը կամ հաստատունությունը չարին, սատանային փախուստի են մատնում: Այս մասին են ասում առաքյալները՝ հորդորելով. «Աստծու սպառազինությունը հագե՛ք, որպեսզի կարողանաք ընդդիմանալ սատանայի հնարանքներին» (Եփ. 6.11), «հնազանդվեցե՛ք ուրեմն Աստծուն և դիմադրեցե՛ք սատանային, ու նա կփախչի ձեզանից» (Հակ. 4.7), «ով մեղք է գործում, այդ՝ սատանայից է, քանի որ սատանան մեղանշող է ի սկզբանե: Աստծու Որդին հենց նրա համար հայտնվեց, որ քանդի սատանայի գործերը» (Ա Յովհ. 3.8):

**5. Մարդիկ, ովքեր տեսիլքներ են ունենում, պնդում են, թե շփվել են մահացածների հետ: Այսինքն՝ մարդու մահից հետո նրա հոգին կենդանի է մնում, և մահկանացուներից շատերը կարող են շփվե՞լ հանգուցյալ մարդու հոգու հետ:**

Տեսիլքների հետ կապված տարբեր տեսակետներից բացատրություններ ունեն հոգեբանությունը և եկեղեցական հեղինակները: Հոգեբանությունը խոսում է զգայապատրանքի՝ հայլուցինացիայի, ինչպես և հայլուցինոզի մասին: Առաջինն այն է, որ մարդը տեսնում է տեսիլքներ և կամ լսում ձայներ ու դրանք համարում իրականություն, իբր իր հետ այդպիսով գերբնական կապ հաստատելու միջոց: Երկրորդի դեպքում մարդն ունենում է նույն նշանները, բայց դրանք համարում է շեղում և փորձում բուժվել կամ ազատվել դրանից: Այս երևույթների առկայությունը բժիշկները բացատրում են ուղեղի արյունատար անոթների ֆունկցիաների խանգարմամբ, երբ մարդը կորցնում է ճիշտ ընկալողունակությունը: Սակայն սրանց կողքին կա նաև շիզոֆրենիան, երբ մարդն ունենում է տեսիլքներ կամ լսում տարբեր ձայներ: Սրա ծագման պատճառը մասնագետները դժվարանում են գտնել, քանի որ շիզոֆրենիայի դեպքում ուղեղի գործունեության զգալի խանգարումներ չեն նկատվում:

Եկեղեցական հեղինակներն ասում են, որ այդպիսի հիվանդությունների արմատը հաճախ կարող է գտնվել ոչ թե

մարդու ֆիզիկական, զգացական ոլորտում, այլ հոգևոր ոլորտում՝ լինելով չարի ազդեցության արդյունք: Եվ, հետևաբար, յուրաքանչյուր պարագա քննելով՝ հոգևորականը պետք է կատարի համապատասխան աղոթքը՝ կամ բժշկության, կամ դիվահանության: Հանգուցյալ մարդու հոգու հետ հնարավոր է շփվել, որովհետև հոգեառ հրեշտակը կամ Սուրբ Գրիգոր Տաթևացու բառով՝ ավանդող հրեշտակն անմիջապես առնում է հոգին և տանում: Այս հրեշտակը բարի մարդկանց երևում է նրանց համար մեղմ ու հանգստացնող պատկերով, իսկ չարագործ մարդկանց՝ ահասարսուռ կերպարանքով:

Որոշ մարդիկ կարծում են, որ մահացածի հոգին քառասուն օր շրջում է երկրի վրա՝ հավանաբար նմանեցնելով հարությունից հետո Քրիստոսի՝ առաքյալների և հավատացյալների հետ շրջելուն, նրանց երևալուն: Բայց Քրիստոս հոգի էր, այլ արդեն հարություն առած անձ՝ մարդկային մարմնով, և քառասուն օրերի ընթացքում մարդկանց երևում էր իր հատուկ առաքելությամբ, իր վերջին պատվիրանները տալու (Գործք 1.3):

**6. Մարդիկ կան, որ հավատացնում են, թե անընդհատ կապի մեջ են Աստծո և Նրա պատգամաբերների հետ, հաղորդակցվում են նաև մահացածների հոգիների հետ: Նրանցից ոմանք ոգեհարցությամբ նույնիսկ գումար են վաստակում: Ո՞րն է Եկեղեցու դիրքորոշումն այդ մարդկանց վերաբերյալ:**

Աստծո հետ մշտական կապի մեջ պետք է լինենք բոլոր քրիստոնյաներս աղոթքով, Աստծո մշտական ներկայության զգացումով, առ Տերը ձգտումով, Նրա հետ միասնության կապով: Բայց եթե Աստծո հետ կապ ունենալու պնդումը կապվում է կեղծ միստիկ գաղափարների տարածման կամ քրիստոնեության կողմից մերժելի իրողությունների հաստատման հետ, ապա դա ընդունելի չէ:

19-րդ դարն աշխարհում հատկանշվեց սպիրիտիզմի, օկուլտիզմի դրսևորումներով, երբ ոգեհարցությամբ մարդիկ իբր կապ էին հաստատում մահացածների հոգիների հետ: Բայց հոգիները չեն կարող անդրաշխարհում իրենց զբաղեց-

րած վայրից տեղից տեղ շարժվել, ինչպես ակնարկվում է Քրիստոսի կողմից պատմված աղքատ Ղազարոսի առակում (Ղուկ. 16.26): Եվ քանի որ այս է իրողությունը, ուրեմն, ոգեհարցությամբ զբաղվողները կան գործում են չարի ուժով, չար երևույթների ազդեցությամբ և կան խաբեությամբ՝ սնահավատ մարդկանցից դրան կորզելու համար: Չար ոգիների ազդեցության ոլորտն այս աշխարհում է, և ոգեհարցության պարագայում, եթե իրոք լինում են արտասովոր երևույթներ, ապա դրանք տեղի են ունենում չար ոգիների ազդեցությամբ, որոնց նպատակն է շեղել մարդկանց ճշմարիտ հավատքից: Մենք տեսնում ենք, որ 19-րդ դարի այս միտումին 20-րդ դարում փոխարինեց թռչող ափսեների մասին զանգվածային մոլորությունը, այլմոլորակայինների կողմից առևանգված լինելու ոմանց զգացումը, ինչը ևս չար, անտեսանելի ոգիների ազդեցությունն է, որոնք Պողոս առաքյալի ուսուցմամբ բնակվում են հենց այդ տարածության մեջ՝ երկնքի ներքո (Եփ. 6.12): Այսպիսով, պետք է ուշադիր և զգոն լինել, քանի որ բացասական արարքների և իրողությունների շատ դրսևորումներ նաև հետևանք են չարի ազդեցության:

**7. Քրիստոնյա կարող է համարվել այն մարդը, ով հավատում է ոգիներին, նրանց հետ կապվելու և գուշակություններ անելու հնարավորությամբ:**

Քրիստոնյան կարող է հավատալ ոգիների հետ կապվելու, գուշակություններ անելու հնարավորությամբ: Խնդիրն այստեղ հավատալը չէ, այլ այն, թե որքանով է ճիշտ և ընդունելի համարվում տվյալ երևույթը: Քրիստոնյան հավատում է վերոնշյալին, որովհետև հավատում է հրեշտակների, ոգիների առկայությանը, այն իրողությանը, որ ոգիները կարող են մոլորեցնել մարդկանց: Ոգեհարցությամբ կան այլ գուշակություններով զբաղվող անձինք կապ են հաստատում չարի հետ և, հետևաբար, մերժելի են Աստծո կողմից: Աստված զգուշացնում է հեռու մնալ ցանկացած տեսակի գուշակություններից, որովհետև, ինչպես ասվում է Սուրբ Գրքում, գուշակություն անողը պիղծ է Աստծո առաջ, և այդպիսի բաները գարշելի են Տիրոջ համար (Բ Օր. 4.19, 18.10-12, Երեմ. 14.14, 27.9-

10, Եսայի 47.12-14): Խոսքը վերաբերում է նաև աստղագուշակությանը, որով այսօր լցված են հեռուստաթերմերը կամ ժամանցային, անգամ լրատվական կայքերը: Նյութական, տեսանելի աշխարհը գտնվում է նաև անտեսանելի չարի, սատանայի, դևերի, ոգիների ազդեցության ոլորտում և դրանց բերած փորձանքներից, չարիքներից զերծ մնալու համար պիտի հնազանդ լինենք Աստծուն, ինչպես ուսուցանում է առաքյալը, հաստատուն պահենք հավատքը, որով և կկարողանանք դիմադրել սատանային (Ա Պետ. 5.9) և ապրել Աստծո օրհնության մեջ:

## ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

**1. Աշխարհի և բնության հետ մարդու հարաբերությունը մեկնաբանող ամենահին երևույթներից մեկն էլ աստղագուշակությունն է՝ անկախ նրա հանդեպ ունեցած մեր վերաբերմունքից: Ոմանց կարծիքով այն հավատալիքների, ավանդույթների և ուսմունքների համակարգ է, որը մեկնաբանում է տիեզերական մարմինների ազդեցությունն ու նշանակությունը մարդու ճակատագրում, ոմանց կարծիքով՝ կեղծ գիտություն, սնահավատություն է: Ի՞նչ է աստղագուշակությունը: Դուք ինչպե՞ս կբնութագրեք այն:**

Մարդու կյանքում հնուց ի վեր տարածված է եղել սնահավատությունը, անիրական երևույթներին հավատալը, դրանց զորություն վերագրելը: Այդ սնահավատությունների շարքում տեղ են գրավում նաև տարբեր գուշակությունները, որոնցից է աստղագուշակությունը՝ աստղերի, համաստեղությունների դիրքով մարդու կյանքի կամ իրադարձությունների մասին գուշակությունների կատարումը: Հին աշխարհում աստղագուշակությունը հավակնում էր գիտության աստիճանին կանգնելու և երբեմն նույնիսկ հավասարագոր էր համարվում գիտության տարբեր ճյուղերին: Սակայն մարդկության զարգացումով և գիտության առաջընթացով պայմանավորված՝ առավել ճշգրիտ գնահատական տրվեց աստղագուշակությանը և այն դուրս հանվեց գիտության ոլորտից՝ համարվելով պարզապես սնոտիապաշտություն: Այսօր գիտնականներն

ընդհանրապես բացառում են աստղագուշակության թեկուզև փոքր առնչությունը ճշգրիտ գիտության հետ, որով և ստացվում է, որ աստղագուշակները զբաղվում են խարդախությամբ ու խաբեությամբ: Գիշտ այսպիսի գնահատական է տալիս աստղագուշակներին նաև Աստվածաշունչը: «Արեգակը, լուսինը, աստղերն ու երկնքի բոլոր զարդերը տեսնելով չմոլորվեք» (Բ Օր. 4.19): «Թող վեր կենան ու քեզ փրկեն աստղագուշակները, որոնք դիտում են երկնքի աստղերը, թող պատմեն քեզ, թե ինչ է գալու քո գլխին: Ահավասիկ նրանք բոլորը, ինչպես խռիվ, պիտի այրվեն կրակի մեջ և իրենց հոգիները չպիտի կարողանան փրկել բոցից», - ասում է Բարձրյալի մարգարեն (Եսայի 47.13-14):

**2. Աստղագուշակությունը տարածված է եղել հին աշխարհի երկրներում՝ Ասորեստանում, Բաբելոնում, Եգիպտոսում, Հունաստանում, Հռոմում և ողջ Առաջավոր Ասիայում: Պատմիչները նշում են, որ պարսկական արքունիքում աստղագուշակները դասվում էին արքունական պաշտոնյաների շարքը: Հին Հայաստանում տարածված էր աստղագուշակությունը: Ունե՞նք հիշատակություններ կամ գրավոր աղբյուրներ, ձեռագրեր այդ մասին:**

Հնում աստղագուշակները մեծ հարգանք էին վայելում և կային անգամ պալատական աստղագուշակներ: Սա ենթադրել է տալիս, որ մեր հեթանոս թագավորների օրոք էլ եղել են նման աստղագուշակներ, ովքեր իրենց ծառայությունն են բերել արքունիքում: Մեր գրավոր աղբյուրներից հիշատակելի է 16-րդ դարում հայ առաջին տպագրիչի՝ Հակոբ Մեղապարտի կողմից հրատարակված գրքույկը՝ «Աղթարք» վերնագրով, որտեղ հավաքված են մեծ մասամբ արաբերենից և պարսկերենից թարգմանաբար հայերենի փոխադրված ժողովրդական հավատալիքներ, նախապաշարմունքներ՝ կապված երազների մեկնության, աստղագուշակության, բժշկության իրողությունների հետ: Հակոբ Մեղապարտը 1512 թ. առաջինը հրատարակել է «Ուրբաթագիրքը», որն աղոթքների ժողովածու է, այնուհետև՝ 1513 թ., «Պատարագատետրը» և հետո՝ «Աղթարքը»: Ենթադրելի է, որ Հակոբ Մեղապարտը եղել է հոգևորական, որովհետև կարծիքներ կան, որ նրա տպագրած

գրքերը, որոնք բաժանվում են կրոնական և աշխարհիկ բովանդակության, շատ ավելի գրագետ են կազմված եղել, քան նույնիսկ նրա հաջորդ տպագիրչների գործերը, իսկ կրոնական գրականության տպագրությունն այսքան գրագետ կարող էր կազմակերպել համապատասխան բարձր կրթություն ստացած անձնավորությունը: Հետաքրքրական կարող է թվալ, որ աղոթքների ժողովածու, Պատարագատետր հրատարակողը, հանկարծ նույն թվականներին հրատարակում է նաև բովանդակությամբ ու նշանակությամբ իր տպագրած գործերի բովանդակությանը հակառակ մի գիրք՝ «Աղթարքը»՝ գուշակությունների, ժողովրդական զրույցների հավաքածուն: Սակայն տրամաբանական է, որ Հակոբ Մեղապարտը դեմ է գնացել ոչ թե կրոնական համոզումներին կամ դիրքորոշումներին, այլ «Աղթարքը»՝ նաև աստղագուշակություններ պարունակող գիրքը, տպագրել որպես ժողովրդական բանահյուսության կամ ստեղծագործության թարգմանական օրինակ, ինչպես նույն 1513 թ. հրատարակված «Տաղարանը», որը գեղարվեստական գիրք է, հայ հայտնի հեղինակների չափածո երկերի ժողովածու:

**3. Միջնադարում աստղագուշակությունը համարվում էր հարգարժան արվեստ, իսկ աստղաբանը կամ աստղագուշակը հասարակական մեծ պատիվ էր վայելում: Որքանով է քրիստոնեությունը հանդուրժելի համարում աստղագուշակությունը, ինչպիսի՞ն է եկեղեցու վերաբերմունքը:**

Նախ՝ քրիստոնեության հանդուրժողականության մասին: Քրիստոնեությունը հանդուրժում է միայն այն, ինչը կարելի է ներել, ուղղել և ճշմարտության բերել: Սակայն այն ամենը, ինչ մեղք է և մարդու կամ նրա հոգու կործանման պատճառ, անհանդուրժելի է քրիստոնեության կողմից: Այս իմաստով մենք կարող ենք անգամ խոսել սկզբունքային հարցերում քրիստոնեության անհանդուրժողականության մասին: Այսպիսին է վերաբերմունքը նաև աստղագուշակության պարագայում: Սուրբ Գրքում Աստված Ինքն է մարդկանց զուշացնում հեռու մնալ տարբեր գուշակություններից և հատկա-

պես՝ աստղագուշակությունից ու աստղագուշակներից, քանզի այդպիսի բաները գարշելի են Աստծո համար, և գուշակությամբ զբաղվողները պիղծ են Աստծո համար (Բ Օր. 4.19, 18.10-12, Երեմ. 10.2, 14.14, 27.9-10, Եսայի 47.12-14): Սա նաև հանդիմանություն է բուրբ նրանց, ովքեր այսօր էլ անմտաբար թաղված են գուշակությունների, աստղագուշակության մոլորության մեջ: Մեզ ոչ թե անշունչ աստղերն են կառավարում, այլ մարդկությունը ստեղծած և կյանքի շնորհը մարդուն տված Աստված է նախախնամում, ուղղորդում մեր կյանքը բարի ճանապարհով (Սաղմ. 36.23), առաջնորդում Սուրբ Հոգով (Հովհ. 16.13)՝ բայց միևնույն ժամանակ չբռնանալով մարդու ազատ կամքի վրա այս կամ այն ճանապարհի, արարքների ընտրության հարցում:

**4. Հին աշխարհից մինչև մեր օրերը շատ բան է փոխվել մարդու մտքում և պատկերացումներում: Եվ չնայած «համակարգչային մտածողության» ազդեցությանը մեր աշխարհընկալման մեջ ու կենսակերպում, չնայած գիտության առաջընթացին, չէ՞ք կարծում, որ, այնուամենայնիվ, մարդիկ շարունակում են հավատալ աստղագուշակներին, աստղերի ու մոլորակների ազդեցությանը մեր ճակատագրում ու կյանքում: Որովհետև այն, ինչ ասվում է նրանց կողմից, խորհրդավոր է և գրավիչ:**

Նվազ կրթվածությունը և հոգևոր գիտելիքների պակասը, ինչպես նաև ապագան իմանալու ձգտումը բերում են այն տխուր իրողության, որ շատ մարդիկ իրենց կյանքում կախված են լինում աստղագուշակություններից, հորոսկոպներից, նաև չինական աստղագուշակության մեջ տարիները խորհրդանշող կենդանիների կերպարներից՝ դրանք վերագրելով իրենց, իրենց աստվածամանությունը փոխելով կենդանիներին նմանության, աստվածային պատկերը փոխելով անասնական աշխարհի կերպարների հետ:

Եկեղեցական հեղինակներն իմաստուն հիմնավորումներով ցույց են տվել աստղագուշակության սին և դատարկ լինելը: Մեր վաղ շրջանի եկեղեցական հեղինակներից աստղագուշակության և ճակատագրապաշտության դեմ խոսել են Եզնիկ Կողբացին, Անանիա Շիրակացին: Աստղագուշակութ-

յունը մեծապես տարածվել է մանավանդ քաղղեացիների կողմից, որոնք Միջագետքի հարավում ապրող ժողովուրդ էին: Եզնիկ Կողբացին, մատնանշելով աստղագուշակության սխալները, սուտ է համարում մարդկանց կյանքի ընթացքի, նրանց մահվան վերաբերյալ գուշակությունները: Կողբացին հաստատում է, որ Աստված է կյանք պարգևում մարդկանց, նաև մահից ազատում, ինչպես Եզեկիա թագավորի արցունքների համար նրա կյանքը Աստված երկարացրեց տասնհինգ տարով (Դ Թագ. 20.2-6, Եսայի 38.2-5), Նինվեացիներին չկործանեց մարգարեի քարոզչությամբ նրանց ապաշխարության համար (Հովն. 3.10): Եզնիկ Կողբացին նաև նշում է մարդկանց բախտավորությունն ու թշվառությունը աստղերի հետ կապելու անհիմն լինելը, մարդկանց գուշակված ճակատագրերի անհեթեթությունը ցույց տալիս պատերազմի օրինակով, որի դեպքում տարբեր տարիքի, տարբեր ժամանակներում ծնված մարդիկ՝ ծերեր թե երիտասարդներ, ողբերգական իրադարձությունների մեջ նույնանման և միաժամանակյա մահ են ունենում: Անանիա Շիրակացին, ով միջնադարի մեր մեծագույն գիտնականներից է՝ փիլիսոփա, մաթեմատիկոս, տիեզերագետ, տոմարագետ, Հայաստանում ճշգրիտ գիտությունների և բնագիտության հիմնադիրը, քննադատում է քաղղեացիների ներմուծած աստղագուշակությունը: Նա նշում է, որ քաղղեացիները հմուտ էին աստղաբաշխության մեջ, սակայն ջանալով ավելի խորը գիտելիքներ ունենալ՝ ընկան մոլորության մեջ: Փոխանակ երկնային մարմինների արարչության ճանաչողությանը հասնելու, չկարողացան երկնային զարդերի դիտարկումներից վեր բարձրանալ և լուսատուներին ու համաստեղություններին աստվածներ համարեցին՝ դրանց վերագրելով մարդկանց ճակատագրերի վրա ազդելու հատկություններ: Այսպիսով, աստղագուշակությունը ևս կարելի է կռապաշտության մի տեսակ համարել: Անանիա Շիրակացին, հերքելով լուսատուների աստվածներ լինելը, քանզի դրանք մոլորությամբ դեգերում են, շեշտում է, որ նրանց անհրաժեշտաբար շարժման մեջ է դնում հզորագույն Արարիչն Աստված:

Նախկինում աստղագուշակները արեգակնային համակարգի ոչ բոլոր մոլորակների գոյության մասին գիտեին և

լուսատուների վերաբերյալ ներկայիս գիտելիքները չունենին, որով և սուտ է նրանց ճանապարհը, որի վրա էլ և հիմնված է նաև ներկայիս աստղագուշակների մոլորեցնող ուսմունքը: Բացի դրանից, աստղերը մարդու վրա ազդում են նրա գոյավորման, թե՞ ծննդյան պահից: Առաջինն ընդունելու դեպքում՝ մարդու մասին (իբր աստղերի ազդեցության հետ կապված) գուշակությունները խախտվում են մինչև ինը ամսով: Նաև նույն ծնողներից, նույն օրը, նույն ժամին, նույն վայրում ծնված երկվորյակների կյանքի տարբեր ընթացքները, նրանց բնավորության հաճախ միանգամայն ակնհայտ տարբերությունները նույնպես վկայում են աստղագուշակության սին և դատարկ լինելու մասին:

Աստղագուշակությունը տանում է ճակատագրապաշտության կամ էլ նույնանում դրա հետ, որովհետև այն անհիմն հասկացությունն է բերում, թե մարդու համար ինչ կանխորոշված է, այն էլ լինում և լինելու է: Աստղագուշակությունը նպաստում է նաև ճակատագրապաշտության նմանությունն ունեցող դետերմինիզմի սխալ հիմնավորմանը, ըստ որի՝ մարդու նախկին արարքները, կյանքի նախկին ընթացքն է կանխորոշում նրա ապագան, որով և մարդը զորություն չունի իր ապագայի վրա: Այս կերպ, սակայն, անցյալի գերիշխանությունն է շեշտվում ներկայի և ապագայի նկատմամբ, գրեթե բացառվում է մարդու ազատ կամքը, քանզի կյանքը դիտարկվում է միայն որպես անցյալից բխող անխուսափելի հետևանք և համարվում է պայմանավորված սոսկ անցյալի պատճառներով: Նման տեսակետները մերժելի են քրիստոնեության կողմից, որն ընդունում է բոլոր հանգամանքներում ազատ կամքի լիովին դրսևորումը, աստվածային նախախնամությունը մարդու, աշխարհի, ողջ արարչագործության նկատմամբ:

**5. Շատ մարդիկ կարող են հավատալ Աստծուն, բայց յուրաքանչյուրը տարբեր կերպ է ընկալում: Ոմանք աստվածային ներկայությունն ընկալում են նաև աստղագուշակության մեջ և, հնարավոր է, մտածում են, թե աստղերի միջնորդությամբ Աստված է նշաններ ուղարկում. չէ՞ որ այս կյանքում ամեն ինչ, նաև աստղերն Աստծո ստեղծագործություններն են:**

Աստղերը ևս Աստծո ստեղծագործություններն են: Ծննդոց գրքում ասվում է, որ չորրորդ օրը Աստված ստեղծեց լուսատուները, սակայն չի նշվում, որ դրանց գործություն տվեց մարդկանց վրա ազդելու, մարդկանց կյանքը կանխորոշելու (Ծննդ. 1.14-19): «Երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հայտնում է Նրա ձեռքի գործերը» (Սաղմ. 18.2),- ասում է սաղմոսերգուն: Նաև Աստծո ստեղծագործություններն են ցույց տալիս Աստծո մեծությունն ու փառավորությունը: Սակայն ինչո՞ւ է Աստված ստեղծել այդքան աստղեր, եթե դրանք չեն օգտագործվելու կամ անապատային, անկենդան մոլորակներ են: Պատասխաններից մեկն այն է, որ ստեղծված են մարդուն Աստծո մեծագործությունները ցույց տալու, նաև մարդուն հիացնունք պատճառելու համար: Եթե ուշադիր լինենք, կտեսնենք, որ մենք ևս նույն կերպ ենք վարվում, երբ տուն ենք կառուցում: Առաստաղները նորոգում ու գեղեցկացնում ենք, զարդարում տարբեր զարդերով ու ջահերով, բայց ինքներս երբեք չենք քայլում կամ ապրում դրանց վրա, այլ պարզապես օգտվում ենք դրանցից, նայում դրանց: Այսպիսի երկնային առաստաղ էլ նաև աստղազարդ երկինքն է մեզ համար:

Ավետարանում հիշվում է Բեթղեհեմի աստղը, որը հայտնեց Փրկչի ծնունդը և առաջնորդեց դեպի մանուկ Հիսուսը (Մատթ. 2.2, 7, 9-11): Սակայն այդ աստղը մոզերի համար էր, ովքեր մոլորվել էին աստղագուշակության արատի մեջ, և ինչով որ մոլորվել էին, Աստված դրանով էլ նրանց բերեց ճշմարտության, ճշմարիտ Աստծուն երկրպագության: Այդպես էլ աստղագուշակությամբ տարվածները, աստղագուշակության մեջ բոլոր մոլորվածները պետք է թողնեն իրենց մոլորությունը և գան ճշմարիտ աստվածպաշտության:

**6. Աստղագուշակները պնդում են, որ աստղերի նկատմամբ Արեգակի, լուսնի և այլ մոլորակների ունեցած դիրքերով կարելի է գուշակել մարդու ապագան և նույնիսկ համաշխարհային նշանակության իրադարձություններ: Ի՞նչ է սա նշանակում՝ իշխել մարդու մտքի ու հոգու վրա՞:**

Աստղագուշակությունները սովորաբար ոչ թե մասնավոր, այլ հիմնականում ընդհանուր և վերացական ինչ-որ իրողությունների մասին են՝ հաջողություններ, փորձանքների հաղթահարում, ճանապարհորդություն, մարդկանց հետ շփումների բարեպատեհություն կամ անցանկալիություն և այլն: Այսօր, ցավոք, տարածված են նաև զանգվածային լրատվական միջոցներով ամենօրյա կամ ամենշաբաթյա աստղագուշակությունները կենդանակերպի տարբեր նշանների ներքո ծնված անձանց վերաբերյալ, որոնք նույն ընդհանուր, արատրակտ ոճի մեջ են՝ այս օրը կամ շաբաթը հաջող կամ հաջող չէ նոր գործ ձեռնարկելու, լավ է ընտանեկան միջավայրում անցկացնելու, ամուսնանալու, ֆինանսական գործառույթներ իրականացնելու համար, վտանգ կա նյութական կորուստների, մեծ է հավանականությունը հետաքրքիր ծանոթությունների, կարող են լինել փոքր թյուրիմացություններ, բարենպաստ ժամանակ է ինքնադրսևորման, նոր ծրագրեր մշակելու, հնարավոր են առողջական խնդիրներ, կարելի է սկսել սիրավեպեր: Նման ընդհանուր բաներ մեկը կարող է ասել բոլորին, և եթե կենդանակերպի նշանների տեղերը փոխենք յուրաքանչյուրի համար ասվածի բովանդակության համեմատ, ապա ոչ մի էական տարբերություն չի լինի: Բոլորն էլ օրվա և առավելաբար շաբաթվա ընթացքում ունենում են տարբեր մարդկանց հետ շփումներ, խորհում են իրենց ծրագրերի վերաբերյալ, պատահում են որոշ ձախորդություններ, մտածում են իրենց նյութական վիճակի մասին և այլն: Այնպես որ, աստղագուշակները խորամանկությամբ մտածում են այնպիսի բաներ, որոնք շատ ընդհանրական լինելով՝ կհամապատասխանեն այս կամ այն մարդու առօրյային:

Եթե համեմատելու լինենք նոր ժամանակների աստղագուշակությունների բովանդակությունը հին շրջանի գուշակությունների հետ, կտեսնենք, որ բառապաշարի մեծ փոփոխություն է տեղի ունեցել՝ ըստ ժամանակներին հարմարվելու ճարպկության: Ներկա աստղագուշակությունների մեջ կարելի է հանդիպել հետևալ ուշագրավ բառերին ու բառակապակցություններին՝ «ֆինանսական, մասնագիտական, կոնֆլիկտ, գրասենյակային, բիզնես ծրագրեր, չնախատեսված գնումներ, հաջող գնումներ, շահավետ ներդրումներ,

գումարային շահույթ, ալկոհոլ և սուրճ» և այլն: Հետաքրքիր է, որ աստղերի արդիական հուշումներում բավականին զարգացել և արդիականացել է նրանց բառապաշարը: Աստղագուշակները սիրում են կրկնել. «Աստղերը հուշում են, բայց չեն պարտադրում»: Այստեղ հետաքրքիր խորամանկություն է բանեցվում, որպեսզի, երբ իրենց «մարգարեությունը» չիրականանա, արդարանան, թե աստղերը պարզապես հուշել էին և չէին պնդել կանխատեսվածի անպայման իրականություն դառնալը: Դրանով գուցե ցանկանում են նաև պաշտպանվել գուշակություններում ասվածին մարդկանց նախատրամադրելու մեղադրանքից:

Իրենց սպասվելիքի մասին տեղեկացած սնահավատ մարդիկ արդեն կախված են լինում լսած կամ կարդացած գուշակություններից, սպասելով, թե դրանք որ պահին են կատարվելու: Աստղագուշակությանը թերահավատությամբ մոտեցող, բայց այն վերջնականապես չմերժող մարդիկ ընկնում են երկվության մեջ՝ կարծելով, որ գուցե կատարվի գուշակությունը: Սա նշանակում է, որ աստղագուշակությունը, կամա թե ակամա, ծրագրավորում է մարդկանց ու նրանց ապագան: Սնահավատները գուշակություններից մեծ կախվածության մեջ են ընկնում և իրենց հետագա քայլերն ու անելիքները կատարում են՝ մեկնարկելով իրենց վերաբերող աստղագուշակությունից:

**7. Հորոսկոպների հրատարակություն, աստղագուշակությունների, տարվա խորհրդի մասին պատմող ամսագրեր, թերթեր, հեռուստատեսային հաղորդումներ. Ի՞նչի համար է այս ամենը, ժամանցի՞, թե՞ բիզնեսի:**

Իրապես, ինչո՞ւ են զանգվածային լրատվական միջոցները՝ հրատարակվող թերթեր, համացանցային ժամանցի և անգամ լրատվական կայքէջեր, ցավոք, նաև հասարակության վրա մեծ ազդեցություն ունեցող հեռուստատեսությունը՝ տարբեր հեռուստատեսային ընկերություններով, մեծ տեղ տալիս աստղագուշակություններն ազդարարելուն: Այս գործելակերպի հիմքում, իհարկե, շահույթն է: Իմանալով, որ սնահավատ, քրիստոնեահեթանոս, նախապաշարմունքներ

րին զոհ գնացող մարդիկ որոշակի քանակ են կազմում հասարակության մեջ, այս զանգվածային լրատվամիջոցները հրապարակում կամ եթեր են հեռարձակում նմանատիպ գուշակություններ՝ լսարան, դիտող կամ ընթերցող ապահովելու, իբր թե խորհրդավոր իրողություններով մարդկանց դեպի իրենց ձգելու համար: Որքան շատ հեռուստադիտող և պահանջարկ ունի հեռուստաընկերության տվյալ հեռուստաալիքը, այնքան ավելի թանկ արժեն դրանով հեռարձակվող տարբեր գովազդները, որքան ընթերցողները շատ լինեն, այնքան թերթն ավելի կվաճառվի, որքան կայքէջ այցելողների թիվը մեծ լինի, այնքան շատ առաջարկներ կլինեն նաև այդ կայքէջում դրվող գովազդների: Մի խոսքով՝ կապիտալիստական չոր մոտեցմամբ, մարդկանց դարձնում են միջոց սեփական նյութական շահերի համար: Ոչ թե մտածում են երևույթի ճիշտ կամ սխալ լինելու, մարդկանց հոգևոր օգուտ բերելու, վնասից զերծ պահելու մասին, այլ իրենց համար նյութական եկամուտներ ունենալն են ապահովում: Դա նշանակում է, որ աստղագուշակությունը ևս դարձել և գործածվում է, այսօրվա բառապաշարով ասած, բիզնես ծրագրերի համար՝ մարդու հատկապես հոգուն պատճառով վնասի կատարյալ արհամարհումով ու անտեսումով: Այդ երևույթին է նաև վերաբերում մամոնային՝ փողին ծառայողների վերաբերյալ Քրիստոսի հանդիմանությունը (Մատթ. 6.24, Ղուկ. 16.13):

Այս նույն նպատակն ունեն նաև աստղագուշակները, որոնց միջից դժվար է գտնել մեկին, որն անկեղծորեն աստղերի անձնուրաց հավատացյալ է: Թերևս նրանց մեջ նույնպես կան սնահավատությամբ մոլորվածներ, բայց նրանց նպատակն էլ աստղագուշակություններ վաճառելով փող ձեռք բերելն է: Այսպիսով, կյանքի, մասնագիտությունների տարբեր օգտակար բնագավառներում իրենց իրացնել չկարողացած անձեր իրենց տեղն են գտնում աստղագուշակության մեջ՝ իբրև գուշակներ կամ աստղերի մասնագետներ, դրանց «լեզուն» հասկացողներ, և իրենց թյուրիմացությունն են սփռում հասարակության մեջ, նպաստում սնահավատությունների խորացմանը, նյութապաշտությանը, երբեմն նաև սիրավեպե-

րի համար բարեհաջող օրերի կանխատեսումով՝ անբարոյա-  
կանության տարածմանը:

Այս բոլոր դատողություններով բացահայտվում է ներկա  
աստղագուշակության նպատակը, որը շահամոլությունն է:  
«Բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է» (Ա Տիմ.  
6.10),- ասում է առաքյալը: Եվ այս դեպքում դա վերաբերում է  
նաև աստղագուշակությանը և այն տարածելուն:

**ԱՍՈՒՄՆՈՒԹՅԱՆ, ՁՈՒՅԳԵՐԻ  
ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
ԱՍՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**1. Այսօր շատ երկրներում ամուսնությունների մի մասն  
ավարտվում է ամուսնալուծությամբ: Արդյոք ամուսնու-  
թյան վերաբերյալ աստվածաշնչյան խորհուրդը հնացե՞լ է:  
Գուցե ամուսնալուծությունների պատճառն այն է, որ ամ-  
ուսնական կառույցն ինքնին թերի՞ է:**

Աստվածաշնչյան խորհուրդները, պատգամներն ու պատ-  
վիրանները երբեք չեն հնանում: Նույնիսկ Քրիստոս, ով Նոր  
Կտակարանում նոր պատգամներ բերեց, ասաց, որ ոչ թե  
ջնջում է նախկին օրենքը, այլ լրացնում (Մատթ. 5.17): Յե-  
տևաբար, նաև ամուսնության պատգամը երբեք հնացած չէ:  
Ամուսնությունը հաստատվեց Աստծո կողմից դրախտում, երբ  
Ադամին իբրև օգնական տրվեց կինը (Ծննդ. 2.18), ով մեղսա-  
գործությունից հետո, ինչպես ասվում է Աստվածաշնչում,  
դրվեց մարդու իշխանության տակ (Ծննդ. 3.16): Այս իշխա-  
նությունը ծառայի և տիրոջ հարաբերություն չի ենթադրում,  
այլ խնամքի ու սիրո իշխանություն, որը և շեշտվում է սուրբ  
Պսակի խորհրդակատարության ժամանակ եկեղեցում  
պսակվող զույգին տրվող համապատասխան խրատներով ու  
հորդորներով: Ամուսնական կառույցը կամ ավելի ճիշտ ամ-  
ուսնական միությունը, իբրև գաղափար, չի կարող թերի լի-  
նել, որովհետև հաստատվել է Աստծո կողմից, իսկ Աստված  
թերություններով չի գործում: Այս տեսակետից եթե նայենք,  
Աստված հաստատել է իրողություններ կամ տվել է պատվեր-  
ներ, որոնք երկուսի են բաժանվում՝ ժամանակավոր և մնա-  
յուն: Ժամանակավորներից են, օրինակ, հրեական զոհաբե-

րությունները, որոնք նախօրինակն էին Քրիստոսի զոհագործության և դադարեցին Քրիստոսով: Մինչդեռ ամուսնությունը Քրիստոս մեծապես պատվեց նաև Կանայի հարսանիքում Իր ներկայությամբ և հարսանիքի ժամանակ կատարած Իր առաջին հրաշագործությամբ՝ ջուրը գինու փոխելով (Հովհ. 2.1-11): Մենք կարող ենք ասել, որ ամուսնական միությունը թերի է լինում ամուսնական զույգի գործողության մեջ, ովքեր ոչ լրիվ պատասխանատվությամբ կամ նվազ կարևորության գիտակցությամբ են մոտենում ամուսնությանը, և խախտել հիմքի վրա է դրվում նրանց ընտանիքը:

Ամուսնալուծությունների պատճառը կարող է լինել նաև սիրո բացակայությունը: Խոսքը ճշմարիտ սիրո մասին է, որի վերաբերյալ գուցե մակերեսային պատկերացում ունեն ամուսնացող երիտասարդները: Հետևաբար, նախքան ամուսնությունը պետք է լավ մտածել և անհրաժեշտ գիտելիքներ ունենալ նաև սիրո, սեր զգացմունքի, Քրիստոսի կողմից պատվիրված սիրո մասին՝ Ավետարանի ընթերցանությամբ, հոգևորականների խորհրդատվությամբ, համապատասխան գիտելիքներ ձեռք բերելով: Հետաքրքրական է, որ եկեղեցական կանոնագրքում ամուսնության պարագայում կարևոր է նկատվում ոչ միայն ամուսնացող զույգի փոխադարձ հավանությունն ու համաձայնությունը, այլև նրանց ծնողների, որովհետև սիրող ծնողներն իրենց փորձառությամբ կարող են ճիշտ ճանապարհի վրա դնել երեխաներին:

Ամուսնալուծությունների պատճառ կարող է լինել նաև հետևյալը. տարիների համատեղ կյանքի ընթացքում ամուսինները նկատում են, որ իրենց կողակիցներն այն անձերը չեն այլևս, որին հանդիպել են ամուսնության սկզբին: Ֆրանսիացի մեծ գիտնական, նաև մեծագույն քրիստոնեական գրող Բլեզ Պասկալն իր հոգեշահ «Խոհեր» աշխատության մեջ այն ճշմարիտ դիտարկումն է արձանագրում, որ մարդը տասը տարի անց բոլորովին մեկ այլ անձնավորություն է: Սա բուլորն էլ պետք է հասկանան, քանի որ մարդը մեծանում է, փոխվում, զարգանում, լցվում նոր իմացությամբ ու մտքերով: Եվ սա պետք է հասկանան հատկապես ամուսնացող երիտասարդները: Ամուսնալուծության հոգեբանական պատճառ կարող է լինել նաև հանրահայտ հոգեբան Ջիզմունդ Ֆրոյդի

դիտարկումը, ըստ որի՝ ամուսնությունից հետո չկան այն սուր, արկածային, հետաքրքիր զգացումները, որոնք կապված են սիրահարների ժամադրությունների, միմյանց սպասելու, բաժանումից հետո վերստին տեսնվելու, կարոտի հետ: Դրա համար ամուսնության հիմքը պետք է դրվի ոչ միայն սիրո, այլև վճռականության վրա՝ ամուր պահելու ընտանիքը, և ինչպես պսակի արարողության խրատում է ասվում, դժվարությունների ժամանակ միմյանց նեցուկ և օգնական լինելու:

## **2. Ամուսնությունը կարող է կամ պե՞տք է հարատև լինի:**

Ամուսնությունը ողջ կյանքի համար է: Ամուսնացող զույգին քահանան հարցեր է ուղղում: Փեսային հարցնում է՝ մինչև մահ տե՞ր ես, հարսին՝ մինչև մահ տեր և հնազա՞նդ ես: Սա նշանակում է, որ ընտանիք կազմող զույգը միասին պիտի լինի մինչև մահ: Պողոս առաքյալն ամուսնության մասին խոսում է աստվածաբանորեն՝ այն վեհացնելով և բարձրացնելով անգամ մինչև Քրիստոսի ու Եկեղեցու խորհուրդին հավասար, համեմատելով Քրիստոսի և Եկեղեցու միավորության հետ (Եփ. 5.32): Առաքյալն ամուսիններին ասում է. «Մարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց Եկեղեցին և Իր անձը մատնեց նրա համար» (Եփ. 5.25): Այսինքն՝ սիրո մեջ անձնագոհության խորհուրդն է դնում: Քրիստոս ամուսնության մասին խրատում է և ասում. «Ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. 19.6, Մարկ. 10.9): Բաժանման համար Քրիստոս միայն մեկ դեպք է նշում՝ անառակության, ամուսնական անհավատարմության պատճառը (Մատթ. 19.9, Մարկ. 10.10): Եկեղեցական կանոնները միայն մի քանի դեպքեր են հավելում ամուսնալուծության համար՝ երբ ամուսիններից մեկը յոթ տարի բացակայում է, երբ անբուժելի հիվանդություն կա: Լեռան քարոզում Քրիստոս խոսում է շնության մասին՝ անդրադառնալով այդ մեղքին նախ ամուսնական կյանքից դուրս, ապա՝ ամուսնական կյանքից ներս: Քրիստոսի խոսքն է. «Ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթ. 5.28): Նաև ասում է, «Ամեն մարդ, որ իր

կնոջն արձակում է առանց պոռնկության պատճառի, նա՛ է, որ նրան շնության է մղում. և ով որ արձակվածին է առնում, շնանում է», «Ով իր կնոջն արձակում է, և դա պոռնկության պատճառով չէ, և ուրիշին է առնում, շնանում է. շնանում է և նա, ով արձակվածին է առնում» (Մատթ. 5.32, 19.9):

Սակայն ինչպե՞ս է, որ Եկեղեցին նաև այլ դեպքեր նախատեսեց ամուսնալուծության համար: Ըստ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի՝ բացատրությունն այն է, որ Քրիստոս արգելեց մարդու անհատական կամքով կնոջ արձակումը և երբեք դեմ չկանգնեց օրենսդրական կարգով ամուսնության լուծարմանը: Այսինքն՝ Քրիստոս մերժում էր մարդու անհատական քնահաճույքը կամ ցանկությունը նման հարցերում: Չետևաբար, ամուսնությունը պետք է ողջ կյանքի համար լինի, և բաժանում կատարվի միայն խիստ բացառիկ դեպքերում, քանի որ ամուսիններն արդեն պետք է նկատի ունենան ոչ միայն իրենց, այլև իրենց երեխաներին, որոնց վրա խիստ բացասական է անդրադառնում ծնողների բաժանումը և միայն մեկ ծնողի կողմից դաստիարակվելը:

**3. Ասում են՝ ամուսնությունը հաջողվում է, երբ կողակիցներից յուրաքանչյուրն ավելի շատ մտածում է տալու, քան ստանալու մասին: Եվ, անկասկած, խնդիրներ կլինեն, եթե ամուսիններից միայն մեկը ջանա այդ ուղղությամբ: Իսկ, ընդհանրապես, ո՞րն է հաջողակ ամուսնության գաղտնիքը:**

Հաջողակ ամուսնության գրավականը սերն է: Ճիշտ է, որ կողակիցներից յուրաքանչյուրը պետք է ավելի շատ մտածի տալու, քան ստանալու մասին, քանի որ ճշմարիտ սիրո հատկությունն է այս: Չետաքրքրական է, որ հունարեն լեզուն մի քանի բառեր ունի սեր հասկացությունն արտահայտելու համար: Հայերեն լեզվում այս տարբերակումը չունենք, և երբեմն դժվար է հասկանալ, թե ինչ սիրո մասին է խոսքը: Մինչդեռ հունարենը լավագույն պատկերացումն է տալիս այս պարագայում: Հունարենում սեր գաղափարն արտահայտվում է մի քանի բառերով՝ էրոս, ֆիլոս, ագապե, ստրոգե: Գրողների և փիլիսոփաների մոտ սրանց մանրամասն բա-

ցատրություններն են հանդիպում: Սակայն այժմ համառոտ անդրադառնանք դրանց նշանակություններին: Երոսն այն սերն է, որով մարդն ուրիշի մեջ իր համար հաճույք է փնտրում: Այստեղ ավելի շատ գերակշռում է եսասիրությունը: Ֆիլոսը սեր է բարի իրողությունների հանդեպ: Ազապեն այն սերն է, որով մարդ ավելի շատ ցանկանում է տալ իր սիրած էակին՝ երջանկացնելու համար: Ստրոգեն ընտանեկան, բարեկամական սերն է: Գշմարիտ սերն ուրիշին երջանկացնելու, ուրախություն ու բերկրանք պարգևելու մեջ է, և եթե այս սիրո վրա է հիմնված ամուսնությունը, ապա այն հաստատուն և ամուր կլինի, կդիմանա փորձություններին ու դժվարություններին և հաղթանակներ ու ձեռքբերումներ կունենա: Սա է նաև այն ամուր վեմը, ըստ ավետարանական առակի, որի վրա կառուցվում է ընտանեկան ամուր տունը, և անձրևներ, գետեր, հողմեր, այսինքն՝ տարբեր փորձություններ ի զորու չեն այն քանդելու և կործանելու (Մատթ. 7.24-25, Ղուկ. 6.47-48):

#### **4. Ի՞նչ խորհուրդներ է տալիս Աստվածաշունչն ամուսնությունը պահպանելու և ամրացնելու վերաբերյալ:**

Երբ Աստված ստեղծեց կնոջը, Ադամը, տեսնելով նրան, մարգարեացավ և ասաց. «Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը, պետք է կնոջը միանա, և երկուսը պետք է լինեն մեկ մարմին» (Ծննդ. 2.24): Այս խոսքերը կրկնեց նաև Քրիստոս Նոր Կտակարանում (Մարկ. 10.7-8): Ուրեմն, երկուսի միավորությունը, միաբանությունը, փոխհամաձայնությունն ամուսնության պահպանության և ամրության երաշխիքներից են: Հորն ու մորը թողնելու աստվածաշունչյան խոսքը թող չտխրեցնի ծնողներին, որովհետև սա չի նշանակում սիրելի ծնողներից հրաժարում, այլ ծնողական ընտանիքի հովանուց դուրս գալու և նոր ընտանիք ստեղծելու իրողություն: Հիշենք, որ Աստված տասը պատվիրանների մեջ հրահանգում է պատվել հորն ու մորը (Ելք 20.12), և Պողոս առաքյալն այս պատվիրանի մասին ասում է, որ սա Աստծո կողմից խոստովանված տրված առաջին պատվիրանն է (Եփ. 6.2-3): Պատվիրանն այսպես է. «Պատվիր ըր հորն ու մորը,

որպեսզի բարիք գտնես, երկար ապրես»: Ուրեմն, երկար ապրելու, երկրային երկար կյանք ունենալու գրավականներից մեկը ծնողներին պատվելն է: Սուրբ Գրիգոր Տաթևացին նշում է, որ հորն ու մորը թողնելն ու կնոջ ետևից գնալը վերաբերում է հարսանիքին, երբ փեսան գնում է հարսի ետևից:

Պողոս առաքյալը եփեսացիներին ուղղված թղթի 5-րդ գլխում՝ «Ընտանեկան նոր հարաբերություններ» ենթավերնագրի ներքո, հորդորում է. «Ինչպես եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին, նույնպես և կանայք թող հնազանդվեն իրենց մարդկանց ամեն ինչում: Մարդիկ, սիրեցեք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց եկեղեցին և Իր անձը մատնեց նրա համար» (24-25): Առաքյալի այս ուսուցման մեջ արդեն իսկ եկեղեցու և Քրիստոսի փոխհարաբերության համեմատությունից պարզ է դառնում, որ այստեղ ստրկական հնազանդության մասին չէ խոսքը, մանավանդ, որ տղամարդկանց խորհուրդ է տրվում անձնագոհության չափ սիրել կանանց: Այստեղ հնազանդության ու անձնագոհության գաղափարները ներկայացված են հոգևոր իմաստով՝ միմյանց հետ միշտ ներդաշնակ լինելու, խաղաղություն պահպանելու, միմյանց խնամելու: Այսօրվա ընտանիքներում թերևս հաճախ դժվար է լինում այս ներդաշնակությունն ու խաղաղությունը պահպանելը, որովհետև երիտասարդներն այլևս ձգտում են ծնողներից առանձին ապրելու, և այդ պարագայում, երբ կողմնակի հսկող աչք չի լինում նրանց հարաբերությունների, երբեմն դժգոհությունն արտահայտելու ձևերի վրա, կանայք չեն կարողանում լռել, ավելորդ խոսքեր են ասում, ամուսիններն ավելորդ զայրույթ են ցուցաբերում: Եկեղեցի հաճախելը մարդուն հոգևոր խաղաղություն է բերում, մտքերին՝ հանգստություն և անդորրություն: Ընտանեկան հարկի ներքո խաղաղության ու սիրո պահպանության համար է նաև կարևոր ընտանիքների հաճախելը եկեղեցի, որով ամուսինները պարբերաբար կհիշեն իրենց ուխտը եկեղեցում, միմյանց սիրելու և նվիրվելու տերունական ու առաքելական պատվիրանները:

## 5. Ամուսնալուծությունը մե՞ղք է:

Այս հարցին պատասխանելուց առաջ նախ կցանկանայի անդրադառնալ ամուսնության նպատակին: Երբ Աստված ստեղծեց տղամարդուն ու կնոջը, ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը» (Ծննդ. 1.28): Մինչդեռ Նոր Կտակարանում առաքյալն ասում է. «Լավ է տղամարդու համար կին արարածին չմերժենալ: Բայց չպոռնկանալու համար յուրաքանչյուր մարդ թող իր կինը ունենա, և ամեն կին՝ իր մարդը» (Ա Կորնթ. 7.1-2): Տեսնում ենք, որ մարդկության ստեղծումից հետո ամուսնության նպատակը եղել է սիրով միմյանց հետ ապրելը, իրար օգնելը և որդեծնությունը. վերջինիս վկայությունն է «աճեցե՛ք և բազմացե՛ք» խոսքը: Մինչդեռ Նոր Կտակարանի ժամանակներում ամուսնության նպատակը անառակությունից խուսափելն է: Սա ցույց է տալիս մարդկության բարոյական անկումը, որը պետք է վերելք ապրեր Ավետարանի քարոզությամբ: Երբ մարդիկ ամուսնանում են ամուսնության վերաբերյալ պարզագույն պատկերացումներով, առավել չափով մարմնական և ոչ մտքի, սրտի ու հոգու մերձավորության ու միության ձգտումներով, ապա այս դեպքում ընտանիքը կանգնում է ամուսնալուծության վտանգի առջև: Ամուսնալուծությունը մեղք է այն իմաստով, որ աստվածահաճո չէ, հակառակ է Քրիստոսի պատվիրանին, Եկեղեցու կանոններին: Դրա համար մարդիկ ամեն ինչ պետք է անեն՝ փրկելու իրենց ամուսնությունը: Այստեղ նաև եկեղեցականները մեծ աշխատանք ունեն մինչ ամուսնությունը քարոզչական գործունեությամբ ընտանիք կազմելու մտադրություն ունեցողներին բացատրելու, լուսաբանելու, Աստծո կամքը սովորեցնելու:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ամեն տարի Սուրբ Ղևոնդյանց քահանաների տոնին քահանայից հավաք է լինում, որոնցից մեկի ընթացքում, ընդգծելով Եկեղեցու պատասխանատվությունը ընտանիքների ամրության և հոգևոր խնամքի գործում, հրամայական նկատվեց շարունակել գորացնել ընտանիքների կապը Եկեղեցու հետ, հոգևոր-դաստիարակչական աշխատանք տանել ընտանիք կազմելու որոշում կայացրած անձանց հետ նախաամուսնական և ետամուսնական

շրջանում, որպեսզի ամուսնացյալներն ամենայն լրջությամբ գիտակցեն մշտական միության, անշահախնդիր սիրո, միմյանց սատարումի և հոգատարության առ Աստված իրենց ուխտի մեծ կարևորությունը: Ամեն տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվում են քահանայից հավաքներ, որոնց ընթացքում քննարկվում են Եկեղեցուն, հավատացյալ ժողովրդին հուզող խնդիրներ:

**6. Ի՞նչն է ազդում ամուսնական փոխհարաբերությունների վրա, և ի՞նչ կարող է անել ամուսնական զույգը՝ դրանք բարելավելու համար:**

Ամուսնական փոխհարաբերությունների վրա ազդում է և՛ ժամանակը, և՛ տարիների ընթացքում ամուսինների փոխվելն ըստ տարիքի, երեխաների համար հոգալը, երբեմն պատահող նեղություններն ու դժվարությունները: Այսինքն՝ ընտանիքը քարացած իր չէ, այլ ապրող և շնչող, զարգացող և աճող հաստատություն, և այն անընդհատ փոխվում է: Սա հանգամանք է, որի հետ պետք է հաշվի նստել: Տարիների իրադարձությունները, ընտանեկան կյանքի հետ կապված տարբեր զգացումներն ու ապրումները հաճախ ծածկում են ամուսնական զույգի առաջին հիշողությունները, որոնք սովորաբար լինում են ջերմ ու նվիրական: Միշտ պետք է կարողանալ ժամանակի հեռավորությունից պարբերաբար տեսնել այն պահը, որը սրտի ջերմագին զգացմունքով կարծես թե ի վերուստ տրված հայտնություն եղավ՝ միմյանց հետ կյանքը կապելու և միասնական ճանապարհով ընթանալու, զավակներ ունենալու, սերունդներ դաստիարակելու: Փոխադարձ զիջողականությունը և փոխըմբռնողությունն այն սյուներն են, որոնց վրա հաստատվում է ընտանեկան կայունությունը, միասին ապրելու վճռականությունը, միմյանց հաջողություններով ու ձեռքբերումներով ուրախանալու կարողությունը: Յուրաքանչյուր պահի, անգամ զայրույթի ու դժգոհության ժամանակ, որոնք լինում են ընտանիքներում, պետք է տեսնել սիրո այն լույսը, որը երբեմն բացասական պահերին թաքնվում է, ինչպես որ անձրևոտ եղանակին արևը՝ ամպերի ետևում:

**7. Աստվածաշունչը բազմաթիվ տեղեկություններ է պարունակում ընտանիքում գործող գլխավորության վերաբերյալ: Այսօր այդ բացատրությունները չե՞ն կորցրել իրենց արդիականությունը:**

Աստվածաշունչի Ծննդոց գրքի ընթերցանությունից իմանում ենք, որ նախքան մեղսագործությունը դրախտում կինը տրվեց մարդուն՝ որպես նրա օգնական (Ծննդ. 2.18), իսկ կնոջ պատճառով ու մարդու համաձայնությամբ մեղսագործությունից՝ Աստծո կամքին չհնազանդվելուց հետո կինը դրվեց տղամարդու գլխավորության ներքո (Ծննդ. 3.16): Յետևաբար, այս գլխավորությունը հաստատված է Աստծո կողմից, որի բացատրությունը տալիս է Պողոս առաքյալն արդեն Նոր Կտակարանում: Քրիստոսի և Եկեղեցու միավորության հետ ամուսնության համեմատությամբ (Եփ. 5.32) արդեն իսկ ակնհայտ է դառնում, որ ամուսնության պարագայում խոսքն իշխանաբար գլխավորության կամ տիրոջ ու ծառայի հարաբերության մասին չէ: Բացի դրանից, նաև Քրիստոս, առաքյալներին խրատելով, բացատրեց, թե ինչպես պետք է գլխավոր և առաջին լինել: Երբ առաքյալները վիճում էին, թե իրենցից ով է մեծը, Քրիստոս ասաց. «Եթե մեկն ուզում է առաջին լինել, բոլորից վերջինը և բոլորի սպասավորը պիտի լինի» (Մարկ. 9.34): Քրիստոս նաև Իր մասին ասաց, որ չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու (Մատթ. 20.28, Մարկ. 10.45): Ուրեմն, հատկանշական բացատրությամբ ու նաև Իր օրինակով Քրիստոս ցույց տվեց, որ հոգատարությամբ խնամելու, ծառայություն մատուցելու մեջ է կայանում իրական գլխավորությունը, քանզի միայն այդ դեպքում խնամակալն ու սիրողը դրվում է մարդու համար առաջին տեղում ոչ թե օրենքի կամ սովորության ուժով, այլ սրտի երախտագիտության ու ջերմ զգացմունքով: Հատկանշական է, որ սուրբ պսակի արարողության ժամանակ քահանան պսակվողներին հարցնում է. փեսային՝ խոստանում ես մինչև մահ տեր և պաշտպան լինել, իսկ հարսնացուին՝ խոստանում ես մինչև մահ տեր և հնազանդ լինել: Ուրեմն երկուսին էլ տրվում է տեր լինելու պատիվը, իսկ հնազանդությունը հասկացվում է քրիստոսաբանական ու եկեղեցաբանական իմաստով՝ Քրիստոսի

և Եկեղեցու հարաբերության նշանակությամբ: Պողոս առաքյալն ասում է, որ այլևս խտրություն չկա արուի և էգի միջև, այլևս բոլորը մեկ են ի Քրիստոս (Գաղ. 3.28): Առաքյալի ասածն այսօրվա ֆեմինիզմի ջատագովություն կամ ֆեմինիստական հայտարարություն չէ, այլ հին աշխարհում իշխող ստորակարգության և հատկապես կնոջ նկատմամբ հեթանոսական վերաբերմունքների դադարեցում: Իսկ ընդհանրապես կինը և տղամարդը չեն կարող հավասար լինել, որովհետև կան բաներ, որ տղամարդը չի կարող անել կնոջ փոխարեն, և ոչ էլ կինը՝ տղամարդու փոխարեն: Կինը նույնիսկ կարելի է ասել առավել է տղամարդուց որդեծնության իր կարողությամբ, և Աստվածաշունչն է հրահանգում պատվել կնոջը՝ որպես կյանքի շնորհի ժառանգակիցների (Ա Պետր. 3.7):

**8. Շատ կանայք և տղամարդիկ միասին են ապրում առանց այսօր ընդունված պաշտոնապես գրանցվելու կամ եկեղեցում պսակվելու, որպեսզի որոշեն հետագայում միասին ապրելու համատեղելիությունը: Ընդունելի՞ է նման մտածելակերպը:**

Քրիստոնեության վաղ շրջանում քրիստոնյաներն ամուսնական միություն են հաստատել առանց Սուրբ Պսակի արարողության, որը հետագայում է կանոնակարգվել: Հայ Եկեղեցին առաջինն է, որ հաստատել է ամուսնության համար պսակի արարողության կարևորությունը 444 թ. Շահապիվանի ժողովում, մինչդեռ այլ եկեղեցիներում մինչև 19-րդ դարը քրիստոնյաներն ամուսնանում էին առանց պսակի արարողության, որը վերապահված էր ազնվականների, իշխանների ընտանիքներին: Սակայն քրիստոնյաների միությունը լինում էր ամուսնացողների առ Աստված աղոթքով, Տիրոջ օրհնության հայցով, բարեպաշտության զգացումով: Եկեղեցին կարևորում է սուրբ Պսակի արարողությունը, որպեսզի այսօրվա քրիստոնյաներն սկսեն իրենց միությունն Աստծո օրհնությամբ, հավատքով, Աստծո առջև ուխտադրությամբ, որը կարող են անտեսել՝ Եկեղեցուց դուրս լինելով: Չենք կարող ասել, որ այսօր առանց եկեղեցում պսակվելու միասին ապրողները բարեպաշտության զգացումներով և հավատքով են ա-

ռաջնորդվում: Երբեմն առանց պետական գրանցման և եկեղեցում պսակվելու ամուսնանում են՝ իբրև թե նյութական ծախսերից խուսափելու համար: Սակայն առանց Աստծո օրհնության Աստծո կողմից իսկ հաստատված ամուսնությունը կամ զույգերի միավորությունը շատ փորձությունների կարող է չդիմանալ: Իհարկե, խոսքը չի վերաբերում այն ամուսիններին, ովքեր ամուսնացել են խորհրդային հասարակարգի ժամանակաշրջանում, երբ հաճախ նաև արգելվում էր եկեղեցի հաճախելը: Սակայն ներկայումս, երբ մեր հավատքը դավանելու ազատությունն ունենք, չպետք է անտեսենք Աստծո օրհնության կարևորությունը կյանքի համար այնպիսի կարևոր իրողության մեջ, որպիսին ամուսնությունն է:

### **ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ**

#### **1. Սուրբ Պսակը մեր Եկեղեցու խորհուրդներից մեկն է: Ինչո՞ւ է այր ու կնոջ ամուսնությունը քրիստոնեության մեջ համարվում խորհուրդ՝ Սուրբ Պսակ անունով:**

Սուրբ Եկեղեցին ունի յոթ խորհուրդներ, որոնք են՝ Մկրտություն, Դրոշմ, Հաղորդություն, Ապաշխարություն, Պսակ, Ձեռնադրություն, Կարգ հիվանդաց կամ Վերջին օծում: Այս խորհուրդները կատարվում են մարդու կյանքի կարևոր հանգրվաններում և հավատացյալին արժանացնում աստվածային օրհնություններին ու շնորհներին: Սրանք կոչվում են խորհուրդ, որովհետև առնչություն ունեն ոչ թե տրամաբանությանը կամ գիտելիքներին, այլ խորհրդավոր կերպով գերբնական իրողություններին հաղորդվելու հետ: Եվ քանի որ անբացատրելի ու անտեսանելի են դրանց ազդեցության, ներգործության ձևերը, դրա համար էլ խորհուրդ են, խորհրդավոր են իրենց էությանը: Եկեղեցու մեծագույն խորհուրդներից է Սուրբ Հաղորդությունը, երբ նվիրագործվող հացն ու գինին Սուրբ Պատարագի արարողության ժամանակ օրհնությամբ և Սուրբ Հոգու ներգործությամբ փոխարկվում են Քրիստոսի ճշմարիտ Մարմնի և Արյան: Այդ փոխարկման ընթացքը, ձևը մենք չենք տեսնում, մեզ համար մնում են խորհրդավոր, դրա համար էլ խորհուրդ է անվանվում: Նմա-

ճապես Պսակի արարողության ժամանակ Աստված շնորհներ է տալիս նորապսակներին, նրանց Իր օրհնություններով միացնում սուրբ անուսնությամբ: Քրիստոս ասում է. «Ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. 19.6, Մարկ. 10.9): Աստծո կողմից պսակվողներին միացնելը, նրանց վրա երկնային շնորհների իջնելը, ներգործելը մենք չենք տեսնում, բայց հավատում ենք դրան, որով նաև Սուրբ Պսակն է խորհուրդ:

Հավատքը տարբերվում է գիտելիքից: Երբ մեկը մեզ ասում է, որ իր ձեռքում ինչ-որ բան կա, հավատում ենք, բայց երբ նա ասելուց հետո ձեռքը բացում և ցույց է տալիս, մենք արդեն ոչ թե հավատում ենք, այլ գիտենք: Ահա այսպես էլ խորհուրդը կապ ունի ոչ թե գիտելիքի, այլ հավատքի հետ, որով արտահայտում ենք նաև մեր մեծ վստահությունը Աստծո, Նրա խոստումների, Նրա խորհրդավոր ու մարդկային մտքի համար անըմբռնելի և տրամաբանությամբ անբացատրելի ներգործության հանդեպ:

## **2. Հայ ընտանիքն ինչո՞վ է առանձնանում կամ տարբերվում այլ ազգերի ընտանիքների մոդելներից:**

Պետք չէ գերազնահատել կամ թերազնահատել հայ ընտանիքի բնութագիրը այլ ազգերի ընտանիքների հետ համեմատությամբ: Օտար ժողովուրդների մեջ էլ կան բազում ընտանիքներ, որոնք ապրում են քրիստոնեավայել կյանքով կամ հիմնված են սիրո, առաքինության, երեխաների հանդեպ հոգածության և տարեցների նկատմամբ խնամքի վրա: Սակայն աշխարհում այսօր նկատելի է ընտանիքի ավանդական պատկերացման աղավաղումը, երբ սեռական փոքրամասնությունների համատեղ կեցությամբ և որոշ երկրներում նրանց թույլատրվող որդեգրման հետևանքով երեխան ունենում է ոչ թե հայր կամ մայր, այլ երկու մայրեր կամ երկու հայրեր, և նույնիսկ արդեն պետական գրանցումներում դուրս է մղվում «հայր» կամ «մայր» անվանումը՝ փոխարինվելով ծնողների համարակալմամբ:

Հայ հասարակության մեջ թերևս ավելի է շեշտված ընտանիքի նվիրական լինելու գաղափարը, ընտանեկան ավան-

դույթները պահելու նախանձախնդրությունը: Հատկապես հայ կանայք նախանձախնդիր են ոչ միայն հայ, այլև հայ քրիստոնեական ընտանիք հիմնելուն: Ռուս եկեղեցու աստվածաբաններից մեկը, անդրադառնալով ընտանիքների հարցին, հատկապես շեշտել է հայ կանանց յուրահատկությունը, ովքեր նույնիսկ օտարների հետ ամուսնության դեպքում մեծ նախանձախնդրություն են ցուցաբերում իրենց զավակներին մեծացնելու որպես Հայ Առաքելական եկեղեցու անդամներ, ինչպես նաև իրենց ամուսիններին հակում դեպի Հայ եկեղեցին: Քիչ չեն դեպքերը, երբ այլազգի ամուսիններն իրենց հայ կանանց հետ այցելում են հայ եկեղեցիներ և խնդրում իրենց զավակներին մկրտել հայկական եկեղեցում, նաև ամուսիններն են երբեմն դառնում Հայ Առաքելական եկեղեցու անդամ: Սա մեր կանանց առանձնահատուկ բարեպաշտության և հայ քրիստոնեական ընտանիքի գաղափարին մեծագույն նվիրվածության դրսևորում է:

Նախկինում նահապետական ընտանիքներում գրեթե բացառվում էր ամուսնալուծությունը, որովհետև այն ժամանակ ամուսնալուծությունը չէր քարոզվում, և մարդիկ ջանում էին միասնաբար ապրել ու աշխատել սիրո, համերաշխության, հնազանդության մեջ, միասին մեծացնել երեխաներին, օգնել նրանց կազմելու իրենց սեփական ընտանիքը: Այսօր բավականին մեծ հնչողությամբ քարոզվում է ամուսնալուծությունը ներկայիս ազատականությամբ, ինչպես նաև նման բարքեր ջատագովող տարբեր օտարերկրյա ֆիլմերի, հեռուստասերիալների միջոցով: Սակայն հայ հասարակության մեջ ընտանիքը միայն դրական լույսի ներքո չէ: Հայ ընտանիքներում էլ լինում են երեխաների ծեծ, բռնություն, կանանց հանդեպ բռնության դեպքեր, ինչի վկայությունը կանանց պաշտպանության կենտրոնների գործունեության զբաղվածությունն է: Արտագնա աշխատանքը ևս վնասում է ընտանիքներին: Հայաստանի ներկա պայմաններից ելնելով, երբ առկա է մեծ չափերի հասնող գործազրկությունը, բազմաթիվ հայրեր, ընտանիքը պահելու, նյութապես ապահովելու համար մեկնում են այլ երկիր, հատկապես Ռուսաստան՝ արտագնա աշխատանքի: Այդ արտագնա աշխատանքը տևում է մինչև մեկ տարի, հայրերն ընդամենը մեկ կամ մի քանի ամսով վերա-

դառնում են տուն՝ արձակուրդի, և հետո նորից մեկնում բավականին երկար ժամանակահատվածով: Տուժում են երեխաների դաստիարակությունը, հոգեբանությունը, բացի դրանից՝ մարդկանց ողջախոհությունն ու կողակցի հանդեպ հավատարմությունը:

Ողջախոհությունն առաքինություն է, երբ գործվում է կամովի, իսկ պարտադրված ողջախոհությունն առաքինություն չէ, քանի որ դրսևորվում է կամքից անկախ, պայմանների թելադրությամբ: Այսպիսին կարող է լինել նավաստիների ողջախոհությունը, երբ նրանք երկար ամիսներ նավարկության մեջ լինելով՝ հեռու են մնում սեռական կյանքից, պարտադրաբար ապրում են ժուժկալությամբ, չափավորությամբ և ողջախոհությամբ: Իհարկե, կան սիրող, ընտանիքին ամբողջապես նվիրված հայրեր, ովքեր ամիսներ շարունակ ընտանիքից հեռու գտնվելով՝ պահում են իրենց ողջախոհությունը: Սակայն եթե մեկն ամուսնացել է ոչ թե որդեծնության վեհ գաղափարի, սիրո անբաժանելի միության ամրապնդման բարձր գիտակցությամբ, այլ մարմնական հաճույքների առաջնային ցանկություններով, ապա այդպիսի մեկը կանգնած է շնության վտանգի առջև՝ ամիսներ շարունակ ընտանիքից հեռու գտնվելով: Հայաստանի տարբեր մարզերում առկա սեռավարակների՝ ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի խնդիրը մասնագետները բացատրում են նաև արտագնա աշխատանքից վերադարձածների կողմից ընտանիքում վարակի տարածման իրողությամբ: Մեր հասարակության մեջ պետք է առավել ամրապնդել ընտանիքի գաղափարը, ընտանեկան սերը, դժվարությունները միասին հաղթահարելու վճռականությունը, ընտանիքի ամրապնդման համար մշտապես հոգալու և ջանալու նախանձախնդրությունը:

### **3. Ամուսնական միությունը կարող է լուծարվել:**

Ամուսնական միությունը լուծարելի է և՛ երկրի պետական օրենքով, և՛ եկեղեցական հատուկ կանոններով: Օրենքի և եկեղեցական կանոնների միջև այս հարցում կարող են հակասություններ լինել, որովհետև օրենքը սահմանում է ամուսնալուծության թույլտվություն այնպիսի դեպքերի համար, ո-

րոնք նախատեսված չեն կամ ընդունելի չեն եկեղեցական կանոններով: Ամուսնությունը, հաստատված լինելով պետական գրանցմամբ և կամ եկեղեցում սուրբ Պսակի արարողությամբ, լուծարելի է հատուկ հանգամանքների պատճառով: Հռոմի Կաթոլիկ եկեղեցում ամուսնալուծությունն ընդունված չէ: Միայն պապը կամ եկեղեցական համապատասխան մարմինը կարող է ամուսնությունն անվավեր համարել:

**4. Ըստ Ավետարանի՝ ի՞նչը կարող է ամուսնալուծության օրինական պատճառ լինել, և ո՞ր դեպքերում է եկեղեցին թույլատրում ամուսնալուծությունը:**

Քրիստոս ամուսնության մասին ասում է. «Ինչ ոչ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. 19.6, Մարկ. 10.9): Քրիստոս ամուսնալուծության միայն մեկ պատճառ է նշում՝ շնությունը: Երբ հրեաներն առարկեցին Քրիստոսին՝ ասելով, որ Մովսեսը պատվիրեց ամուսնալուծության ցանկության պարագայում ապահարզանի թուղթ տրամադրել և ամուսնալուծվել, Տերն ասաց. «Մովսեսը ձեր խստասրտության պատճառով այդպես պատվիրեց» (Մատթ. 19.7-8, Մարկ. 10.4-5): Նախկինում հրեաներն այնքան խստասիրտ էին, որ կարող էին անգամ կնոջն սպանել կամ կնոջ կյանքը վտանգել, դրա համար էլ մարգարեն պատվիրեց ապահարզանի թղթով կանանց ազատ արձակել:

Քրիստոս ասաց. «Ամեն մարդ, որ իր կնոջն արձակում է առանց պոռնկության պատճառի, նա՛ է, որ նրան շնության է մղում. և ով որ արձակվածին է առնում, շնանում է», «Ով իր կնոջն արձակում է, և դա պոռնկության պատճառով չէ, և ուրիշին է առնում, շնանում է. շնանում է և նա, ով արձակվածին է առնում» (Մատթ. 5.32, 19.9): Քրիստոսի այս արգելքին անդրադառնալով՝ եկեղեցական հեղինակները բացատրում են, որ Տերն այս կարգադրությամբ ոչ թե ընդհանրապես մերժեց ամուսնալուծության գնալու բացառիկ դեպքերը, այլ արգելեց այդ կարևոր հարցում մարդու անհատական կամքի կամ քմահաճույքի դրսևորումը: Եկեղեցին բացի անառակության պատճառից կարգեց ևս մի քանի պատճառներ, որոնցից են անուսիններից մեկի յոթ տարի բացակայությունը,

անբուժելի վարակիչ հիվանդությամբ տառապելը: Յնուն, երբ Յայաստանը ենթարկվում էր նաև օտարների ասպատակությունների, պատերազմների, շատեր նաև գերեվարվում էին, և յոթը տարի բացակայությունը կարող էր նշանակել, որ գերեվարվածն այդ ընթացքում մահացել է, և նրա կողակիցն ազատ է ու կարող է երկրորդ անգամ ամուսնանալ:

### **5. Ո՞վ է իրավասու լուծարել ամուսնությունը:**

Աշխարհիկ և կրոնական տեսակետով տարբեր մոտեցումներ կան: Աշխարհիկ տեսանկյունից ամուսնությունն իրավասու է լուծարել հատուկ լիազորություն ունեցող պետական պաշտոնյան, կրոնական տեսակետով՝ Եկեղեցին՝ բարձրաստիճան հոգևորականի, այսինքն՝ եպիսկոպոսի, կաթողիկոսի որոշմամբ: Աշխարհիկացման հետևանքով, երբ փորձ է արվում նվազեցնել Եկեղեցու դերը կամ առավել շեշտել նյութական արժեքները՝ ի հակադրություն հոգևոր արժեքների, պետական կառույցների կողմից նաև վերցվում է Եկեղեցուն պատկանող լիազորությունը և գործածվում իբրև ծաղրանմանություն Եկեղեցու գործունեության: Դրանցից է պսակի արարողությունը, երբ սովորական պաշտոնյան քահանայի նմանողությամբ կանգնում է ամուսնացող զույգի առջև և նրանց հայտարարում կին ու ամուսին: Նման մի ծաղրանմանություն է կատարվում հիվանդանոցներում, որոնք տրամադրում են հոգեբանների ծառայություններ: Խոսքը հոգեվերլուծության մասին է, երբ հոգեվերլուծաբանը պահանջում է իր մոտ եկածին պատմել իրեն հուզող խնդիրները, նրան մտատանջող արարքները՝ նմանակելով ապաշխարության խորհուրդը, մեղքերի խոստովանության կարգը կատարող հոգևորականին, երբ հավատացյալը խոստովանում է իր մեղքերը, և հոգևորականը Եկեղեցական կանոնների, սուրբ Յայրերի խրատների հիման վրա խորհուրդներ է տալիս հոգևոր կյանքի կարգավորման համար:

Ինչևէ, Յայաստանում Եկեղեցին և պետությունը փոխադարձաբար ճանաչում են միմյանց կատարած ամուսնության վավերականությունը: Յայաստանում Եկեղեցուց պսակի վկայականը տրվում է ՋԱԳՍ-ի վկայականը ներկայացնելուց

հետո: Սակայն ամուսնալուծության պարագայում տարբեր խնդիրներ են առաջանում: Եկեղեցին պսակում է զույգերին, միացնում Աստծո օրհնությամբ, մինչդեռ հետո պետական պաշտոնյան լուծարում է այդ ամուսնությունը: Ընդ որում, ամուսնության լուծարման համար հաճախ պատճառ են հանդիսանում այնպիսի հանգամանքներ, որոնք ամուսնալուծության պարագայում անընդունելի են Եկեղեցու կողմից: Օրինակ՝ այսօր լինում են ամուսնալուծություններ կապված չբերության՝ ամուսիններից մեկի զավակ ունենալու անկարողության հետ, մինչդեռ Եկեղեցին այս հանգամանքը որպես հիմնավոր պատճառ չի ընդունում ամուսնալուծության համար: Ամուսինների փոխադարձ անհասկացողությունը նույնպես եկեղեցական տեսակետով ամուսնալուծության ընդունելի պատճառ չէ, այլ Եկեղեցին հորդորում է և նրանց հետ աշխատանք տանում՝ աղոթքով, ընտանիքի սրբության գիտակցությամբ, զավակների հանդեպ սիրով հաղթահարելու դժվարությունները:

Բացի վերոնշյալից, խառնաշփոթ է առաջանում եկեղեցական արարողության հետ կապված: Սուրբ Պսակի արարողությամբ պսակվածը, պետական պաշտոնյայի կողմից ամուսնալուծվելով, կարող է գալ եկեղեցի երկրորդ ամուսնության համար: Եվ ստացվում է, որ Եկեղեցին մեկ անգամ արդեն պսակվածին առանց ամուսնալուծելու պսակում է նաև երկրորդ անգամ: Նման խնդիրներ հազվադեպ են լինում Սփյուռքում, որովհետև այնտեղ ծխական համայնքների կազմավորված և գործող լինելու շնորհիվ կարգավորվում են նաև այս հարցերը: Ամուսնալուծության համար Եկեղեցու անդամները դիմում են եկեղեցական իշխանություններին և հիմնավոր պատճառների դեպքում ամուսնալուծվում, հրահանգներ ստանում, իմանում, թե որքան ժամանակից հետո երկրորդ ամուսնության թույլտվություն կունենան: Եկեղեցու սոցիալական հայեցակարգի մշակման ընթացքում այս հարցերը ևս պետք է նկատի առնվեն, և Եկեղեցու պաշտոնական տեսակետների ներկայացման մեջ առաջարկվեն նաև լուծումներ ստեղծված կացության համար:

## **6. Որո՞նք են ամուսնալուծության պատճառներն ու հետևանքները հայ իրականության մեջ:**

Ամուսնալուծության հիմնական պատճառն ամուսնացողների կամ նրանցից մեկի անլրջությունն է ընտանիքի ստեղծման կարևոր իրողության հանդեպ: Երբ նշանադրված զույգը գալիս է եկեղեցի ամուսնության, արարողության սկզբում նրանց ընթերցվում է սուրբ Հայրերի խրատն ամուսնության մասին: Ամուսնացողներին եկեղեցին զգուշացնում է, որ ամուսնական կյանքը հաշտ ու անհարթ, առանց դժվարությունների չի լինելու, պատահելու են տեսակ-տեսակ նեղություններ, աղքատություն, բայց Աստծո կամքն է, որ ամուսինները, միմյանց զորակցելով, հաղթահարեն դժվարությունները: Այս խրատը լսելուց հետո պսակվողները, գտնվելով եկեղեցու Սուրբ Խորանի դիմաց, Աստծո առջև ուխտ են անում տեր և հնազանդ, սիրող ամուսիններ լինել: Եթե մարդիկ մտքով հասուն են, ապա գիտակցում են եկեղեցում Աստծո առջև իրենց ուխտի կարևորությունն ու լրջությունը և համատեղ կյանքի ընթացքում ծագած դժվարությունների պարագայում ջանում են հաղթահարել խնդիրները, պահպանել ընտանիքը:

Ընտանիքը կենդանի օրգանիզմ է, և դրա կազմալուծումը ցավ է պատճառում ընտանիքի բոլոր անդամներին: Չպետք է մոռանալ, որ գործ ունենք մարդկային «ճակատագրերի», հատկապես երեխաների կյանքի հետ և իրավունք չունենք խեղաթյուրելու միմյանց կյանքի ընթացքը: Այդ իսկ պատճառով ընտանիք կազմելուց, ամուսնանալուց առաջ պետք է լավ և լրջորեն մտածել, հասուն լինել ընտանիք ստեղծելու համար: Ընտանիքը կոշիկ չէ, որ մաշվելուց հետո դեն նետենք և նորը գնենք, և կամ զգեստ չէ, որ պատռվելուց հետո նորով փոխարինենք, այլ գործ ունենք կենդանի մարդկանց կյանքի և փոխաբերական իմաստով ասված՝ ճակատագրի հետ: Հասարակության հիմքն ընտանիքն է, և եթե հասարակությունը պատկերացնենք մի շղթայի կերպարանքով, որի օղակները ընտանիքներն են, ապա ավելի պատկերավոր կտեսնենք, որ մեկ օղակի թուլանալով՝ շղթան տկարանում է, և օղակի քանդվելով՝ այդ շղթան մասնատվում: Այսպիսով,

ընտանիքի տկարացումը տկարացնում է նաև հասարակությունը: Նյութական-տնտեսական առումով ևս երկիրը վնաս է կրում, քանի որ ընկճված, վշտացած մարդը չի կարող լավ աշխատել, նրա աշխատանքի արդյունավետությունը, օգտակար գործողության գործակիցն ընկնում է, և երկիրը վնաս է կրում նաև տնտեսական առումով:

Եթե հասարակությունը պատկերացնենք հավատացյալների հավաքականության իմաստով՝ որպես Եկեղեցի, ապա ուրեմն ընտանիքի ամրությամբ ամուր է նաև այդ Եկեղեցին, և ընտանիքի տկարությունն իր հերթին վնասում է Եկեղեցու ամրությանը: Պողոս առաքյալը, խոսելով Եկեղեցու մասին՝ որպես բազում անդամներով մի մարմնի, ասում է. «Եթե մի որևէ անդամ ցավ է զգում, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները. և եթե մի անդամը փառավորվում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները» (Ա Կորնթ. 12.26): Այսպիսով, ընտանիքի կազմալուծման տխրությունն ազդում է նաև Եկեղեցու՝ հավատացյալների հավաքականության վրա: Հետևաբար, պետք է ամուր պահել ընտանիքը նաև հասարակության հաստատունության, Եկեղեցու զորության համար:

## **7. Ո՞րն է ամուր ընտանիքի հիմքը:**

Ամուր ընտանիքի հիմքը նախ և առաջ սերն է, բայց նաև՝ հավատարմությունը, վճռականությունը՝ ընտանիքը հաստատուն, ամուր պահելու: Ամուսնացածները և ամուսնության նոր պատրաստվողները պետք է իմանան, որ մարդը փոփոխական է, և դա իր արտահայտությունն է գտնելու նաև ընտանեկան կյանքում: Հին հույն փիլիսոփաներից Հերակլիտն ասում է, որ մարդ չի կարող երկու անգամ նույն գետի մեջ մտնել: Սա վերաբերում է ոչ միայն աշխարհի, իրերի փոփոխականությանը, այլև մարդու: Մինչույն մարդու հետ տևական ժամանակից հետո հաջորդ հանդիպմանը այդ մարդն այլևս նույն անձը չէ, որովհետև նա անընդհատ փոփոխվում է և կամ նույնը չի մնում իր փորձառությամբ, մտքերի ընթացքով, ապրած օրերի թվով և այլն: Այս փոփոխությունը տեսանելի է նաև ընտանեկան միջավայրում, ամուսնիցների կյանքում:

Ամուսնալուծության պատճառներից մեկն էլ նախաամուսնական շրջանի պայմանների պակասը կամ բացակայությունն է: Մինչ ամուսնությունը զույգերը սովոր են միմյանց տեսնել միայն տոնական զգեստներով, ապրել հուզումնալից պահեր ժամադրության գնալու կամ ժամադրությանը սիրելիին սպասելու, արկածային, ինտրիգային զգացումներ ունենալու: Եվ քանի որ ամուսնությամբ այս ամենը դադարում է, դա կարող է խնդիր առաջ բերել զգացմունքների ընկալումներում: Մինչամուսնական և ետամուսնական շրջանը կարելի է համեմատել մրգատու ծառի հետ, որը գարնանը ծաղկում է: Մենք հիանում ենք նրա ծաղիկներով, բույրով, հմայքով, բայց երբ գալիս է պտղաբերության ժամանակը, ծաղիկներն անհետանում են, և ծառն օգտակար պտուղներ է տալիս: Այսպես էլ մինչ ամուսնությունը զգացումները կարող են ծաղիկների հիասքանչության հետ համեմատվել, իսկ ամուսնությունը՝ պտղաբերության, երբ արդեն չկան ծաղիկների հմայքն ու տեսարանը, սակայն մենք գիտակցում ենք, որ դրան հաջորդողն է ավելի հասուն և օգտակար: Նաև ամուսնությունը, թեկուզ և նվազեցնում է «հեքիաթային զգացումների» առկայությունը, բայց այն ավելի հասուն իրավիճակն է, որում ևս դժվարությունների հաղթահարումով և ամուսինների միասնականությամբ ընտանեկան ծառը կարող է նոր ծաղիկներով ծաղկել և նոր պտուղներ բերել:

## **ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

### **1. Հյուրասիրություն և օտարասիրություն. ինչքանով են տարբեր և ի՞նչ ընդհանրություններ ունեն:**

«Հյուրասիրություն» և «օտարասիրություն» բառերը ցույց են տալիս հյուրի, օտարի հանդեպ սիրո դրսևորման երևույթը: Հյուրասիրությունն արտահայտվում է նաև սիրալիրության զգացումով, կերակուր հրամցնելով: Այստեղից էլ հյուրասիրել բայը նշանակում է մեկին ուտելիք կամ ընպելիք տրամադրելը, նրա հետ հաց կիսելը: Հյուրասիրությունը և օտարասիրությունը նույն երևույթի տարբեր կողմերն են ներկայացնում: Հյուրասիրություն նշանակում է որպես հյուր ընդունել ծանոթ մեկին, իսկ օտարասիրություն՝ որպես հյուր ընդունել օտարին, անծանոթին:

Հայերը միշտ աչքի են ընկել հյուրասիրությամբ և նույնիսկ հեթանոսական շրջանում ունեցել են հյուրասիրության աստված՝ Վանատուր անունով: Սա ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը հնուց ի վեր եղել է հյուրասեր և օտարասեր, անգամ այդ ունակությունը հաստատագրել թեկուզ և սխալ կրոնական համոզմունքի ձևով:

### **2. Հյուրասիրությունը կամ օտարասիրությունը կարող են առաքինություն համարվել:**

Եթե առաքինությունը համարում ենք բարոյական բարձր չափանիշներին համապատասխան արարքներ կամ վարվեցողություն, ապա հյուրասիրությունը և օտարասիրությունը նույնպես առաքինություններ են: Սակայն այս առաքինությունները կարող են վերածվել նաև մոլորության, երբ եղծվում է դրանց իրական իմաստը: Մեր ժողովրդի պարագայում ցավով կարող ենք արձանագրել, որ մեր օտարասիրությունը հաճախ վերածվում է օտարամոլության: Սա ի հայտ է գալիս հետևյալ իրողություններով: Մարդիկ տարբեր հաստատությունների անվանումներ նախընտրում են հռչակել օտարալեզու անուններով, օտարի հանդեպ վերաբերմունքն ավելի բարեհամբույրությամբ ու հաճությամբ տարբերվում է սեփական հայրենակցի հանդեպ վերաբերմունքից, արտասահմա-

նում բնակվող հայեր նախընտրում են նույնիսկ տանը խոսել օտար լեզվով, և կամ այլ երկրներում ապաստան հաստատած բազմաթիվ հայեր իրենց հայերեն խոսքի մեջ շատ հաճախ ցուցադրության համար օգտագործում են օտար լեզվի բառեր, արտահայտություններ: Երբ օտարասիրությունը լինում է սեփական արժեքների հաշվին՝ հայրենիքի, լեզվի, ազգակցի, այդ ժամանակ օտարասիրությունը դառնում է օտարամոլություն, և տվյալ առաքիչությունը վերածվում է արատի:

**3. Մենք միշտ աչքի ենք ընկել մեր հայկական հյուրասիրությանը, բայց այսօր հյուրասիրության քողի ներքո նաև բացասական երևույթներ են հաստատվել մեր մեջ: Խոսենք հյուրասիրության և ժամանակակից ձևապաշտության մասին:**

Հայկական հյուրասիրության մեջ երբեմն նկատվում է առավելաբար սեփական անձի ցուցադրություն, քան հյուրին հյուրասիրելու ձգտում: Հոգեբանության մեջ խոսվում է պերֆեկտիզմի՝ կատարելապաշտության մասին, որը թերարժեքության զգացումի դրսևորումներից մեկն է: Պերֆեկտիզմով տառապողները որևէ գործ ջանում են անել կատարելությամբ, և եթե ամբողջ գործի մեջ չեն չին մի բան չի հաջողվում, ապա ընդհանրապես հրաժարվում են իրենց մտադրությունից, քանի որ վախենում են ուրիշների վրա գերազանց տպավորություն չթողնելուց:

Երբեմն պերֆեկտիզմ զգացվում է նաև հայկական հյուրասիրության մեջ: Մարդիկ կան, որ լավ հյուրասիրություն են կազմակերպում ոչ թե հյուրին հաճույք պատճառելու, այլ նախ և առաջ վատ տպավորություն չթողնելու, հյուրի մոտ ամոթով չմնալու համար: Պատահում է, որ նաև հակառակ երևույթն է լինում: Մարդը, մի ծանոթի հանդիպելով և նրան հյուրընկալելու ու հյուրասիրելու անհրաժեշտության առջև գտնվելով, տխրում է՝ մտքում հաշվելով, թե որքան նյութական ծախս պիտի անի: Իհարկե, խոսքը չի վերաբերում ծայրահեղ աղքատության մեջ գտնվող ընտանիքներին, որոնց համար հյուրասիրություն կազմակերպելը մեծ խնդիր է:

Պետրոս առաքյալն ասում է. «Հյուրասեր եղեք միմյանց հանդեպ առանց տրտնջալու» (Ա Պետ. 4.9): Առաքյալի խոսքից երևում է, որ հնուց ի վեր մարդիկ նյութական ծախսերի նկատառումով նաև տրտնջացել են հյուրասիրություն կազմակերպելուց առաջ: Սակայն պետք է իմանալ, որ հյուրասիրությունը քրիստոնեական առաքինություններից մեկն է: «Յետամուտ եղեք հյուրասիրության» (Հռ. 12.13),- հորդորում է Պողոս առաքյալը: Հին Կտակարանում Աբրահամը մարդկային հասկացողության համար ըմբռնելի կերպարով իրեն ներկայացած Սուրբ Երրորդության անձանց կամ Երրորդությունը ներկայացնող հրեշտակներին օտարասիրությունից մղված առատապես հյուրասիրեց և մեծ օրհնությունների արժանացավ (Ծննդ. 18.2-10): Նոր Կտակարանում ակնարկվում է նաև այս դեպքը և հյուրասիրության ու օտարասիրության հորդորով նշվում, որ հնում հյուրասեր մարդիկ առանց իմանալու նույնիսկ հրեշտակների հյուրընկալեցին. «Մի՛ մոռացեք օտարասիրությունը, որովհետև դրա շնորհիվ ոմանք հրեշտակներ հյուրընկալեցին առանց իմանալու» (Եբր. 13.2):

**4. Թեև մեր կյանքի պայմանները գնալով երբեմն ավելի են դժվարանում, բայց հատկապես Ամանորին մեր սեղաններն առատությունից ավելի ու ավելի են ծանրանում: Ինչո՞ւ է այդպես. այս տոնը մեկ անգամ ևս ապացուցում է, որ հյուրասիրությունը ազգային բնավորություն է, թե՞... ճարահատյալ պարտք:**

Նախ հարց է, թե ում սեղաններն են առատությունից ծանրանում: Եթե ասում ենք, որ երկրի ու բնակչության տնտեսական վիճակը լավ չէ, և ապա փաստում ենք, որ մարդկանց սեղաններն առատությունից ծանրանում են, ուրեմն այստեղ հակասություն կա: Հստակ է, որ, ցավոք սրտի, անգամ Ամանորին դատարկ են մնում մեր կողքին ապրող, մեր հայրենակից աղքատների սեղանները: Իսկ ովքեր շատ թե քիչ աշխատանքային եկամուտ ունեն, նրանք են, որ Ամանորին սեղանները լցնում են տարբեր ուտեստներով, ոմանք Նոր տարվա համար անգամ պարտք են վերցնում բանկերից, ֆինանսական հաստատություններից: Այս իրավիճակը հետո տարբեր

ընտանիքներում մի որոշ շրջան նյութական նեղություն է բերում:

Պետք է ասել, որ վերջին տարիներին զարգացել է մեր ժողովրդի, այսպես ասած, ռեստորանային ճաշակը, քանզի նման վարվելակերպ դրսևորվում է նաև եկեղեցական արարողությունների հետ կապված՝ ի մասնավորի Պսակի և Մկրտության պարագայում: Շատ մարդիկ անգամ մկրտության չեն գալիս կամ չեն բերում իրենց զավակներին, եթե տվյալ պահին հնարավորություն չունեն եկեղեցում արարողությունից հետո ուրախությունը նշել ռեստորանում: Ավելի ծանր է Պսակի պարագան, երբ հսկայական գումարներ են վերցնում բանկերից՝ ամուսնությունը ռեստորաններում նշելու համար, և հետո երկար տարիներ աշխատում են՝ այդ ամուսնությունը նշելու պատճառով գոյացած պարտքը մի կերպ մարելու համար: Երբեմն լինում է նաև այնպես, որ չեն կարողանում պարտքով վերցրած գումարը վերադարձնել բանկերին, որի հետևանքով զրկվում են անգամ իրենց տներից, անշարժ գույքից, կացարաններից: Առիթը թեկուզ և պարտքով նշելու մոլուցքը տարածվել է նաև Ամանորի վրա, որին խառնվում է նաև վերոնշյալ պերֆեկտիզմի բարդությամբ: Մինչդեռ Ամանորը՝ հունվարի մեկը, ընկնում է Սուրբ Ծննդյան պահի շրջանի մեջ:

#### **5. Այդ դեպքում ինչպե՞ս վարվել Ամանորի տոնական սեղանը զարդարելու համար:**

Այսօր մարդիկ ուշադրություն չեն դարձնում Քրիստոսի Ծննդյանը նախորդող պահին և Նոր տարվա առիթով տները, սեղանները լցնում մսեղեններով, պարարտ կերակուրներով, ոգելից խմիչքներով: Սուրբ Ծննդյան պահի օրերին տարածվում է կերուխումն ու հարբեցողությունը: Խորհրդային աստվածամերժ և եկեղեցամարտ իշխանության տարիներին առավել արմատավորված այս սովորությունը, հասկանալի է, դժվար է միանգամից վերացնել, և հոգևորականներն էլ ըմբռնումով են մոտենում ամանորյա խնջույքներին: Սակայն եկեղեցին Քրիստոսի Ծննդյան խորհրդի, դրա հետ կապված քրիստոնեական կարգուկանոնի մասին առավել է-

ռանդուն քարոզչությամբ պիտի վերահաստատի հունվար ամսվա սկզբին սեղանի ուտելիքների վերաբերյալ պատկերացումը: Այդ ժամանակ ամանորյա սեղանին կլինեն ավելի թեթև կերակուրներ, իսկ Սուրբ Ծննդյան ժամանակ՝ այս տոնը նշելուն հատուկ ուտեստ ծուկը, և շատ մարդիկ ստիպված չեն լինի ընդունված մտայնության պատճառով հնարներ ճարել՝ սեղաններն առատ ուտելիքներով լցնելու համար: Բացի դրանից, անգամ ավելի շատ հնարավորություն ունեցողները նախընտրելի է՝ մի բան քիչ դնեն իրենց սեղաններին, զերծ մնան ավելորդություններից, շռայլություններից և փոխարենը ողորմության գործեր անեն՝ օգնելով մեր կարիքավոր ազգակիցներին, հայրենակիցներին:

## **ԳՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

**1. Հակառակ այն իրողությանը, որ շրջապատն ավելի ու ավելի է հարմարեցվում մարդուն, աստիճանաբար հազվադեպ են հանդիպում այնպիսի մարդիկ, որոնք վստահորեն կարող են ասել, թե գոհ են իրենց կյանքից: Ինչո՞ւ:**

Երբ նայում ենք աշխարհի զարգացած երկրներին, որոնք մեզ համար ինչ-որ չափով իդեալական են ապրելակերպի ու բարեկեցության առումով, տեսնում ենք, որ այնտեղ նույնպես կան մեծ դժգոհություններ, նույնիսկ քանակությամբ ավելի շատ, և զանգվածային բողոքի ցույցեր՝ կապված կենսապայմանների բարելավման, կառավարությունների գործունեությանը անհամաձայն լինելու հետ: Ուրեմն, ամեն տեղ կա գոհ չլինելու այս երևույթը: Քրիստոնեական գրողներից մեկն ասում է, որ կենդանի արարածներից միայն մարդը գոհացում չունի: Մի քիչ խոտ գոհացնում է գառանը, մի քիչ արյուն՝ վագրին: Միայն մարդն է արարածներից, որ չի կարողանում գտնել իր գոհացումը: Դրա պատճառը մարդկության չգիտակցված կարոտն է դրախտի և դրախտային երանության, որ մարդկության նախահորից անցել է իր սերունդներին:

## **2. Դժգոհությունը միայն չարիք է դժգոհող մարդո՞ւ համար, թե՞ այն համարվում է նաև մեղք:**

Եկեղեցում մեղքերի խոստովանության ժամանակ ասվող մեղաների շարքում մեղքերի մեջ շեշտվում է դժգոհությունը: Քրիստոս պատվեր չտվեց դժգոհելու, այլ նույնիսկ ընդհակառակը՝ սիրելու թշնամիներին, օրհնելու անիծողներին (Մատթ. 5.44): Դժգոհությամբ մարդու հոգեվիճակն ավելի է վատանում: Բացի դրանից, չարը սիրում է չարախոսությունը և չի հեռանում, մինչդեռ օրհնությունից փախչում է, և Աստծո օգնությունն ավելի շուտ է հասնում: Դժգոհությունը խաթարում է մարդու հոգևոր, մտավոր, զգացական հանգստությունն ու խաղաղությունը, քանզի երբ մարդը կենտրոնանում և մտասևեռվում է բացասական իրողությունների վրա, ներաշխարհում հայտվում և գերակայում են տհաճ զգացումները, ընկճվածությունը, անբավարարվածությունը, հուսահատությունն ու հիասթափությունը: Այսպիսի վիճակը հաղթահարելու համար պետք է ոչ թե դժգոհության հասցնող երևույթների, իրադարձությունների մասին անընդհատ խորհել, այլ դրանք հաղթահարելու, հույսով զորանալու շուրջ մտածել՝ աղոթքով խնդրելով Աստծո զորակցությունը դժվարին իրավիճակներում: Սակայն դժգոհությունը կյանքից ընդհանրապես բացառել չի կարելի, որովհետև այն կարող է նաև դրական նշանակություն ունենալ, երբ անընդունելի իրողությունները մատնանշելով՝ մարդը ելնում է՝ ընթանալու սրբագրումի, առավել կատարյալի ճանապարհով:

## **3. Որո՞նք են այն գործոնները, որոնք թույլ չեն տալիս հասնել ներքին բավարարվածության:**

Քանի որ մարդն անընդհատ զարգացող է, և նրա մի նպատակի իրագործվելով անմիջապես հառնում է մեկ այլ նպատակ, որին նույնպես ձգտում է ուժերի ողջ ներդրումով, դրա համար էլ բավարարված չլինելու զգացումն առկա է: Բացի դրանից, կան եկեղեցական հեղինակներ, ովքեր զգուշացնում են բազմահոգության հիվանդության մասին, որը հոգեմտավոր ոլորտին է առնչվում: Մարդը, իր կյանքի մեծ շրջան

նկատի ունենալով և դրա հետ կապված հոգսերը մտովի տեսնելով, ընկնում է բազմահոգության մեջ, ճնշվածության զգացում ունենում: Քրիստոս ասում է. «Օրվա հոգսը բավ է օրվա համար» (Մատթ. 6.34), ինչը նշանակում է, որ սխալ է անընդհատ հոգսախեղդ լինելը հեռավոր ապագայի համար: Այլ պետք է մոտակա հոգսերը լուծել և հետո նոր մտածել մյուս կարիքների և դրանց բավարարման մասին:

**4. Ինչպե՞ս վարվել այն արտաքին գործոնների հետ, որոնք անընդհատ մղում են մրցակցության, շքեղության: Արդյոք մերժելով այդ ցանկություններն ու անընդհատ բավարարվելով միայն եղածով՝ կգտնե՞նք իրական գոհունակություն:**

Եթե մարդ միայն եղածով բավարարվեր, զարգացում և առաջընթաց չէր լինի: Եղածով պետք է բավարարվել տվյալ պահի համար, երբ հնարավորություններ չկան առավել մեծ գործեր անելու կամ նոր ձեռքբերումներ ունենալու: Եղածով պետք է բավարարվեն ճգնավորական, վանական կյանքով ապրողները, եթե խոսքը նյութական եղածի մասին է, իսկ հոգևոր ոլորտում միշտ պետք է աշխատեն նորանոր ձեռքբերումների հասնել՝ աղոթքի հարատևության, սրբության, առավել կատարելության, Աստծո հետ ավելի մերձավորության: Այն արտաքին գործոնները, որոնք մղում են նյութական իմաստով մրցակցության ու շքեղության, գործադրվում են տնտեսական շահի նպատակով, երբ մարդկանց նորանոր ապրանքներ առաջարկելով և դրանց օգտագործումն անհրաժեշտ ներկայացնելով՝ ձեռնարկությունները նյութական մեծ շահույթներ են ունենում: Այս երևույթը կոչվում է կոնսյումներիզմ՝ սպառողականություն, երբ փորձում են սպառողական հասարակություն ստեղծել, այդ հասարակության հաշվին նյութական հսկայական շահույթներ ունենալու գերնպատակով: Այստեղ դատապարտելի է ոչ թե այն, որ մարդկանց ապրանքներ են մատուցում, այլ այն, որ մարդը, որն ըստ քրիստոնեության գերագույն արժեք է՝ Աստծո պատկերով, դառնում է միջոց և գործիք տնտեսական շահի համար: Այսպիսով, մարդը նպատակ լինելուց վերածվում է շահույթի

գործիքի: Իսկ մարդու համար ամեն ինչ կենտրոնանում է առարկաներ ունենալու, դրանք ձեռք բերելու նպատակի վերաբերյալ սկեռուն մտքերի շուրջ: Նորանոր առարկաներ ունենալու, դրանք սպառելու մարմաջը դառնում է կյանքի գլխավոր նպատակներից մեկը, մինչդեռ այն պետք է դիտվեր պարզապես միջոց սեփական կյանքը կազմակերպելու համար: Եկեղեցու կողմից սահմանված պահքը կարելի է նաև դիտել որպես հակասպառողականություն, նաև բարեգթություն՝ մտեղենից հրաժարմամբ կենդանիների կյանքը խնայելով, ինչպես և ուտելիքի պաշարի խնայողություն, որի սակավությամբ է նաև բացատրվում մարդկության նոր օրերի նյութական ճգնաժամը:

**5. Փողոցում անընդհատ մեզ հետ են գովազդային պաստառները, տանը հեռուստատեսային հոլովակներն են, մեքենաներում՝ ռադիոգովազդը: Պատահական զրույցների մեծ մասն էլ նոր իրերի, հեռախոսների, մեքենաների, բնակարանների ձեռքբերման մասին են: Շարքային քաղաքացու համար բնական չէ՞ հոսանքին տրվելն ու ցանկանալը:**

Սպառողականությունը խթանելու համար անընդհատ օգտագործվող գովազդները կամ հայտարարությունները՝ թանկագին իրերի մասին, կարող են նաև գայթակղություն լինել համեստ ընտանիքների համար, որտեղ երեխաները տեսնում են առարկաներ, մանկական թանկարժեք իրեր, որոնք ծնողները չեն կարող ձեռք բերել: Այստեղ և՛ ծնողները պետք է արժեքների մասին, գլխավորի մասին բացատրողական աշխատանք տանեն երեխաների հետ, և՛ ձեռնարկությունները գոնե պետք է հոգ տանեն առավել չափով գայթակղություն չբերելու համար, որովհետև շահամոլություն է հասարակության յուրաքանչյուր խավին նկատի չունենալը տնտեսական գործունեության մեջ: Պողոս առաքյալը, խոսելով նման գայթակղության մասին, ասում է. «Եթե ուտելիքը պիտի գայթակղեցնի իմ եղբորը, հավիտյան միս չեմ ուտի, որպեսզի իմ եղբորը չգայթակղեցնեմ» (Ա Կորնթ. 8.13): Իհարկե, խոսքն այստեղ փոխաբերական է, սակայն սկզբունքներ է բերում նման դեպքերում վարվելու համար:

**6. Մեր ընկերները, շրջապատող մարդիկ կարող են նպաստել կամ խոչընդոտել մեր գոհունակության զգացում ունենալուն: Ինչպե՞ս վարվել, եթե նրանք ստիպում են նախանձել, չեն գնահատում այն, ինչ արվում է իրենց համար... հրաժարվե՞լ ընկերներից:**

Քրիստոս ասում է. «Քեզ համար լավ է, որ քո անդամներից մեկը կորչի, և քո ամբողջ մարմինը չընկնի գեհե՛ն» (Մատթ. 5.30): Խոսքը վերաբերում է նաև ընկերներին ու բարեկամներին: Եթե խոչընդոտում են հավատքին, Քրիստոսի սիրուն, ապա պետք է հեռու մնալ շփումից, հաճախակի հաղորդակցությունից, սակայն միշտ պետք է նրանց հետ մերձ լինել աղոթքում, աղոթել, որ նրանք ճիշտ և աստվածահաճո ճանապարհով ապրեն: Եթե խոսքը վերաբերում է սովորական գոհունակություն զգալուն, որին խանգարում են շրջապատի մարդիկ, ապա այստեղ մարդ գուցե իր մեջ փնտրի պատճառը, թե ինչից է ուզում գոհունակություն ապրել, և հստակ ինչն է, որ խանգարում է:

**7. Կա՞ն այնպիսի հատկանիշներ, որոնք կյանքում գոհ լինելու գրավականներ են:**

Աստված արարարչագործությունը վերջացնելուց հետո, գոհունակությամբ անդրադարձավ Իր արարչագործությանը, տեսավ, որ ամեն ինչ լավ է, բարի է (Ծննդ. 1.31): Մարդը ևս աստվածանմանությամբ ունի արարչագործության հատկանիշը և իր կատարած բարի ու լավ գործով կարող է մեծ բավականության զգացում ունենալ: Մարդուն գոհունակություն կբերեն նաև հոգևոր իրագործումները՝ պահքի, աղոթքի, բարեգործության, մարդասիրության ճանապարհին ձեռքբերումները, իր անձի վերափոխվելը Աստծո կամքի համաձայն, Քրիստոսի նմանությամբ պայծառակերպվելը՝ դառնալով մեղքերից սրբված նոր արարած (Բ Կորնթ. 5.17): Ուրեմն, մարդուն գոհունակություն կարող են բերել բարի գործերը և հոգևոր ճանապարհին առաջընթացը, որը լուսե կնիքն է դնում մարդու անձի և հոգու վրա:

## ԼԻՆԵԼ ՀՈԳԵՎՈՐ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

### 1. Հոգևոր մարդը նվիրում ունի կրոնական արժեքների հանդեպ և կապված է դրանց: Սա ճիշտ բացատրություն է:

Քրիստոնեական տեսակետն այլ կերպ է ներկայացվում: Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղված առաջին թղթում ասում է, որ նրանց հետ չկարողացավ խոսել՝ իբրև հոգևորների, այլ իբրև մարմնավորների, քանի որ նրանց մեջ կան կռիվ ու նախանձ (3.1-2): Պետք է նկատի ունենալ, որ այն ժամանակ կորնթացիները հայտնի էին իրենց շնորհներով, լեզվախոսությամբ, մարգարեությամբ (26-27, 31-32), բայց առաքյալը նրանց դեռևս հոգևոր չի համարում, քանի որ նրանցում կան բացասական հատկանիշներ, որոնք վայել չեն քրիստոնյաներին: Նաև Քրիստոս ասում է, որ Իրեն Տե՛ր Տե՛ր են կանչելու, Իր անունով մարգարեանալու, դևեր են հանելու, զորավոր գործեր անելու, բայց Ինքը նրանց պիտի մերժի (Մատթ. 7.22-23, Ղուկ. 13.25): Հետևաբար, հրաշքներ գործելու, շնորհներ ունենալու հատկությունը դեռևս մարդուն հոգևոր չի դարձնում: Հոգևոր լինելու համար նախևառաջ պետք է հոգով աղքատ կամ հոգով հարուստ լինել, ինչը նույն իրողությունն է հետևյալ բացատրությամբ. Մատթեոսի Ավետարանի 5-րդ գլխում Քրիստոս ասում է. «Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է Երկնքի արքայությունը» (3): Հոգով աղքատները ձգտում են հոգևոր իմացության, գիտելիքների, փորձառության, Աստծո հետ հաղորդակցության և որքան ունենում են դրանք, այնքան ավելին են ցանկանում: Սա առավել հասկանալի է բնության օրինակով: Երբ կրակի մեջ այրվելու հատկություն ունեցող իրեր են գցում, կրակն ավելի է բորբոքվում, մեծանում, բայց չի հազեցնում, ինչքան վառելիք տան, այնքան կրակը կկլանի: Նաև ջուրը գետի, լճի կամ ծովի ձևով անընդհատ կլանում է. եթե դրա մեջ քարեր կամ առարկաներ գցեն, ջրի մակարդակը կբարձրանա, բայց չի լիանա, այլ միշտ կկլանի և չի հազեցնա: Այս նմանությամբ էլ հոգով աղքատը միաժամանակ նաև հոգով հարուստ մարդն է և հոգևոր դառնալու նախապայմաններից մեկը հոգով աղքատ լինելն է:

**2. Այն մարդուն, ով տնտեսական, ֆինանսական կամ գործարար հարցերում մեծ փորձ և հմտություններ ունի, անվանում են գործարար մարդ: Անձը կարող է հոգևոր համարվել հոգևոր հարցերում իր հմտությունների համար:**

Հոգևորությունը գիտելիք չէ, որ սովորեն և դառնան այդպիսին: Այն գիտելիքից վեր փորձառություն է, կենդանի ապրում, գիտակցություն: Հնում փիլիսոփաները բանավիճում էին, թե կարելի՞ է արդարություն սովորելով՝ արդար լինել, և համենատուն էին բժշկության հետ: Բժշկություն սովորած մարդը բժիշկ է, նա ունի այդ գիտելիքները և կարող է կիրառել: Սակայն արդարության մասին իմացող մարդը կարող է և արդար չլինել, քանի որ այն պահանջում է մարդու վերափոխում, կենսակերպ, գիտակցություն ու զգացում և միայն գիտելիք չէ: Այսպես է նաև իրողությունը հոգևոր լինելու կամ դառնալու համար: Քրիստոնական սերն է այն հիմքը, որի վրա հաստատվելով՝ անձն ի զորու է հոգևոր դառնալ: Քրիստոս ասում է. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությամբ: Այս է մեծը և առաջին պատվիրանը. և երկրորդը սրա նման է. պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. 22.37-39, Մարկ. 12.30-31, Ղուկ. 10.27): Ուրեմն, զուգահեռ և ուղղահայաց սերն է նաև անհրաժեշտ հոգևոր լինելու համար՝ սեր առ ընկերը, մերձավորը և սեր առ Աստված:

Մերձավորի կամ ընկերոջ գաղափարը Քրիստոս մեծապես ընդլայնեց՝ այն ներկայացնելով բարի սամարացու մասին առակում (Ղուկ. 10.29-37): Ավագակներից կողոպտված ու վիրավորված մարդուն նրա մոտով անցնողներից ոչ ոք չի օգնում, սակայն բարի սամարացին, տեսնելով, որ մարդը խնամատարության ու հոգատարության կարիք ունի, օգնում է նրան: Քրիստոնեական սերը մարդկանց չի բաժանում ռասսաների, ազգերի, կրոնների, այլ վերաբերում է բոլորին, որոնց վրա կարող ենք տարածել մեր սերը, խնամքը, հոգատարությունը:

**3. Հոգևորը կարևոր տեղ է զբաղեցնում կյանքում: Հոգևոր կարիքները բավարարող մարդը կարող է երջանիկ լինել արդեն դրանով:**

Պետք է հասկանանք, թե ինչ ենք ընկալում՝ երջանկություն ասելով: Մեկի համար երջանկությունը նյութական բավարարվածությունն է, մյուսի համար իր զավակների բարությունը և այլն: Սակայն իրականում բոլորն էլ ուզում են ինչ-որ ձեռքբերումով հասնել ներքին երանելի զգացողության: Հետևաբար, երջանկությունը նաև հոգու խաղաղ ու ներդաշնակ վիճակն է, իսկ այդ երջանկությունն ստանալու համար պետք է մոտենանք երջանկության աղբյուրին, որ է Աստված: Հոգևոր կարիքների բավարարումը նախադրյալն է երջանկության, որովհետև մարդն իր հոգու խորքում ունենում է այնպիսի հոգևոր ուրախություն, երանություն, խաղաղություն, որը ոչ ոք չի կարող նրանից բաժանել: Սա բացատրենք Սուրբ Հովհան Ոսկեբերանի կողմից բերված օրինակով: Ծիշտ է, Ոսկեբերանի օրինակն ուղղակիորեն չի վերաբերում այս հարցին, բայց մեծապես օգնում է դրա ընկալմանը: Խոսելով Սուրբ Գրքի մեկնության մասին՝ Ոսկեբերանն ասում է, որ Սուրբ Գիրքը նման է գեղեցիկ ծովի, որի պատկերով ու հատկություններով հիանում ենք, սակայն այդ ծովի խորքում այնքան գանձեր ու գեղեցկություններ կան, որ դրանք դուրս են բերում և ներկայացնում Սուրբ Գրքի մեկնիչները: Այսպես նաև մենք կարող ենք արտաքին աշխարհի տարբեր իրողություններից վշտեր, տխրություն, թախիծ ապրել, բայց մեր հոգու խորքում եղող հոգևոր ուրախությունը, Աստծո հետ լինելու գիտակցությունն ու զգացումը անսասան են մնում և օգնում են հաղթահարել մակերևույթի ալեկծությունները և վերստին խաղաղություն գտնել:

**4. Հոգևոր անձնավորություն լինելու վերաբերյալ տեսակետները տարբեր են: Շատ գրքերում խոսվում է այդ մասին, բայց չկա հստակ պատասխան: Ինչպե՞ս կարելի է դառնալ իսկապես հոգևոր անձնավորություն:**

Միայն անցյալի վրա հիմնված հավատքը մեռած հավատք է: Ինչպես որ ըստ Հակոբոս առաքյալի խոսքի՝ հավատքը մե-

ռած է առանց գործերի (Չակ. 2.20, 26), այդպես էլ առանց ներկայի հոգևոր փորձառության, ներկայի զգացողության, միայն անցյալին վերաբերող հավատքը մեռած հավատք է: Իրապես, հավատացյալ լինելու համար բավական չէ հավատալ, որ ինչ-որ մի երկու հազար տարիներ առաջ երկրի վրա ապրել է Քրիստոս, ունեցել առաքյալներ, ուսուցանել իր վարդապետությունը, որի սկզբունքներով պետք է մենք էլ ապրենք: Այլ անհրաժեշտ է ներկայի փորձառություն, կապ Աստծո հետ աղոթքով, հոգևոր ապրումներով: Ներկան է հատկապես, որ արժևորում է քրիստոնեությունը: Պողոս առաքյալն ասում է. «Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկության օրը» (Բ Կորնթ. 6.2): Հինդուիզմի հետևորդները, օրինակ, հավատում են, որ ճիշտ ապրելու դեպքում հետագայում՝ երկրավոր կյանքի վերջնական ավարտից հետո կլինեն Աստծո հետ, կծուլվեն աստվածայինին: Մինչդեռ քրիստոնեության մեջ դա հնարավոր է դառնում ներկայում, երբ մարդն ապրում է Աստծո հետ միասնությամբ, աստվածային ներկայության մշտական զգացողությամբ: Քրիստոս ասում է. «Աստծո արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկ. 17.21), և դա Աստծո հետ լինելու երանության զգացումն է ու բերկրանքը: Քրիստոս նաև ասում է. «Աղաչում եմ բոլոր Ինձ հավատացողների համար, որպեսզի ամենքը մի լինեն. ինչպես դու, Չայր, Իմ մեջ, և Ես՝ Քո մեջ, որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն» (Հովհ. 17.20-21): Աստծո հետ միասնության ու միավորության զգացումն է նախադրյալը հոգևոր անձնավորություն լինելու: Այս միավորության զգացումն առավել չափով ունեցել են հիմնականում սրբերը, ովքեր իդեալներ են մեզ համար:

Մեր եկեղեցիներում նախկինում կարդացվում էր Հայսմավուրքը, որով ներկայացվում էր սրբերի վարքը: Հայսմավուրք նշանակում է այս օրը՝ յասն աուր, և բոլոր ընթարցվածները սկսվում էին այս օրը տոնն է այսինչ սրբի, ու համապատասխան ընթերցումներով հավատացյալները ծանոթանում էին սրբակենցաղ մարդու կյանքին ու գործերին: Այսօր մեր հասարակության մեջ մատուցվում են բոլորովին այլ իդեալներ կամ ավելի ճիշտ կարելի է ասել, որ իրական իդեալների բացակայություն է զգացվում: Հեռուստատեսային ֆիլմերն ու

սերիալները տարածում են այնպիսի մարդկանց գաղափարներն ու օրինակները, որոնք, մեղմ ասած, շատ հեռու են քրիստոնեական բարոյականության սկզբունքներից ու ընկալումներից: Բացասական հերոսները ներկայացվում են դրական լույսի ներքո, որով դրանք վերածվում են կրկնօրինական ենթակա օբյեկտների: Եթե հասարակությունը սպանում է իր վեհ իդեալները, ապա այդ հասարակությունը կամ ժողովուրդը չի կարող լինել վեհ ու առաքինի առանց վսեմ օրինակների: Յետևաբար, հոգևոր դառնալու համար պետք է նաև հետևել հոգևոր անձանց օրինակներին ու կենցաղավարությանը:

### **5. Կրոնական արժեքներով հետաքրքրվող ու առաջնորդվող մարդուն կարելի՞ է համարել հոգևոր անձնավորություն:**

Անգամ կրոնական արժեքներով առաջնորդվող մարդը չի կարող հոգևոր անձնավորություն լինել: Առանձնացնենք երեք վիճակներ՝ հավատացյալ, կրոնական արժեքներով առաջնորդվող և հոգևոր մարդ: Հավատացյալն սկսում է առաջնորդվել հոգևոր արժեքներով, որովհետև դրանք համարում է կարևոր սկզբունքներ իր կյանքի համար: Սակայն հավատացյալ են նաև դևերը, ինչպես Հակոբոս առաքյալն է ասում, դևերն էլ են հավատում և դողում (Հակ. 2.19): Դևերի հավատքն այս իմաստով նույնիսկ ավելի ամուր է, քան մարդկային հավատքը, որովհետև նրանք հոգևոր իրականությունից են և հաստատ գիտնեն դրա գոյության ու առկայության մասին, մինչդեռ մենք չգիտենք, այլ միայն հավատում ենք: Պողոս առաքյալն ասում է. «Եթե խոսեն մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենան, կնմանվեն մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ դողանջում են: Եվ եթե մարգարեություն անելու շնորհ ունենան և հասկանան բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտությունը, և եթե ունենան ամբողջ հավատը՝ մինչև իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սեր չունենան, ոչինչ են: Եվ եթե իմ ամբողջ ունեցվածքը տամ աղքատներին և իմ այս մարմինը մատնեմ այրվելու, բայց սեր չունենան, ոչ մի օգուտ չեն ունենա (Ա Կորնթ. 13.1-

3): Ուրեմն, ո՛չ հավատացյալ լինելը, ո՛չ էլ կրոնական արժեքներով առաջնորդվելը մարդուն չեն դարձնում հոգևոր անձնավորություն, այլ սերն ու քրիստոսանմանությունն է, որ բերում են այդ հատկությունը:

**6. Կարծիք կա, որ հոգևոր լինելը կապ ունի ոչ թե կրոնի, այլ ներքին խաղաղություն ունենալու և իմաստալից կյանքով ապրելու ցանկության հետ: Այսինքն՝ հոգևոր անձնավորություն լինելու համար կարիք չկա՞ որևէ կրոնի պատկանելու:**

Այսօրվա տարածված մոլորություններից մեկն այն է, որ բոլոր կրոնները հավասարապես ընդունելի են, բոլորն էլ պաշտում են միևնույն Աստծուն, բայց տարբեր անուններով: Քրիստոնեական տեսակետից սա խիստ դատապարտելի է: Քրիստոնեությունը հայտնի է իբրև սիրո, համերաշխության կրոն: Սակայն քրիստոնեությունն անհանդուրժող է այլ կրոնների, հավատալիքների նկատմամբ: Սուրբ Գիրքն ասում է. «Չկա ուրիշ Աստված, բացի միակ Աստուծուց, թեպետև... կան բազում աստվածներ և բազում տերեր» (Ա Կորնթ. 8.4-5), «Երանի այն ազգին, որի օգնականը Տեր Աստված է, երանի այն ժողովրդին, որին Իր համար Նա ժառանգություն ընտրեց» (Սաղմ. 32.12): Սա ցույց է տալիս, որ քրիստոնեության համար անընդունելի են այլ կրոնների հավատալիքները, որոնց հանդեպ պետք է անհանդուրժող լինել՝ սխալ ուսմունքներն ու հավատալիքները չընդունելու իմաստով: Անհանդուրժականությունը չի տարածվում այդ կրոնների ներկայացուցիչների վրա, որոնց հետ կարող ենք լավ մարդկային հարաբերություններ պահպանել, սակայն անհանդուրժողականություն պետք է դրսևորել կրոնական ուսմունքի հանդեպ՝ հաղորդակից չլինելով սխալ գաղափարներին ու պատկերացումներին: Եթե կրոնի պատկանելությունը հաշվի չառնենք հոգևոր լինելու համար, ապա հոգևոր կարող ենք համարել նաև սատանայապաշտներին, որոնք կրոնական մի ուղղության հետևորդներ են և կապված են իրենց պաշտամունքի առարկային: Այսպիսով, հոգևոր անձ լինելու համար պետք է հիմնված լինել ոչ միայն սիրո, այլև ճշմարտության վրա:

**7. Ո՞ր տարիքում է սկսվում մարդու հոգևոր զարգացումը: Արդյո՞ք այն կախված է արտաքին, գենետիկ-ժառանգական, կրթական կամ այլ գործոններից:**

Երեխայի հոգևոր զարգացումը սկսվում է գիտակցական տարիքից, քանի որ գիտակցական ընկալումը պետք է կրոնի գաղափարներն ընդունելու և հավատքի զգացումը հասկանալու համար: Բայց երեխաների պարագայում կարելի է նշել, որ հոգևոր զարգացումն սկիզբ է դրվում դեռևս նրա լույս աշխարհի գալուց էլ առաջ: Դրա համար է հղի մայրերին խորհուրդ տրվում հաճախակի այցելել եկեղեցի, մասնակցել պատարագներին, որովհետև մոր հոգևոր խաղաղությունը, հանգիստ հոգեվիճակը դրական են անդրադառնում երեխայի զարգացման վրա: Բացի դրանից, երեխան ծնվելուն մոտ ժամանակաշրջանում կարողանում է արտաքին աշխարհի ձայները լսել, և եկեղեցական արարողությունների ու երաժշտության բարերար ազդեցությունը կանդրադառնա նաև նրա վրա:

Հոգևոր գիտելիքներ ստանալով է, որ երեխան կատարում է իր առաջին քայլերը հավատքի մեջ: Ինչպես ասում է Պողոս առաքյալը, հավատքը լսվածից է, և լսվածը՝ Քրիստոսի խոսքից (Հռոմ. 10.17): Նաև մեծապես կարևոր է մկրտությունը: Մկրտության հետ կապված տարբեր դիրքորոշումներ կան բողոքականության և ուղղափառ, առաքյալների կողմից հիմնադրված եկեղեցիների մեջ: Բողոքականներն ասում են, որ երեխաները պետք է մկրտվեն ավելի մեծ տարիքում, որպեսզի հասկանան և սեփական ընտրություն կատարեն: Մինչդեռ ինչպես ծնողները հոգ են տանում երեխայի մարմնավոր խնամքի համար, այդպես էլ առավել ևս պետք է հոգ տանեն երեխայի հոգևոր խնամքի և դաստիարակության համար: Նաև մկրտությամբ է մարդու մեջ ծագում հավատի շնորհը, մկրտությամբ է մարդը դառնում Երկնքի արքայության ժառանգորդ՝ ստանալով Սուրբ Հոգու շնորհները: Հետևաբար, այս ամենից պետք է զրկել երեխաներին: Երեխաները մեծանալով՝ կարող են իրենք որոշել՝ շարունակելո՞ւ են դավանել այն հավատը, որին կոչվել են, թե՞ այլ ընտրություն են կատարելու, քանի որ քրիստոնեությունը պարտադրանքի կրոն

չէ և կարևորում է մարդու ազատ ընտրությունը: Բայց ծնողները պետք է երեխային բավականաչափ հիմք տան հոգևոր գիտելիքների ու ապրումների, որպեսզի երիտասարդն արդեն կարողանա համեմատելու բան ունենալ այլ կրոնի հակվելու դեպքում և վերջնական ընտրություն կատարել: Լինում է, որ ծնողներն իրենք կրոնական կյանքի միայն ձևական կողմը պահելով՝ միայն մշուշոտ պատկերացումներ են ունենում քրիստոնեության վերաբերյալ, երեխաներին չեն տալիս անհրաժեշտ գիտելիքներ ու արժեքներ, և դրանից է, որ երիտասարդներն ընկնում են աղանդավորության մեջ կամ նույնիսկ կրոնափոխ լինում: Չետևաբար, պետք է մեծ ուշադրություն դարձնել երեխաների հոգևոր դաստիարակությանը և կրոնական գիտելիքներ մատուցելուն:

## ԱՂՈՅՔ

### **1. Ի՞նչ է աղոթքը՝ խնդրա՞նք, ակնկալի՞ք, խոստովանություն, հոգևոր հանգստություն: Ի՞նչ է նշանակում «աղոթք» բառը:**

Չրաչյա Աճառյանն իր «Չայերեն արմատական բառարանում» բառերի հիանալի ստուգաբանություններ է ներկայացնում, որոնց թվում և բացատրում է «աղոթք» բառի ծագումը՝ ի մի համախմբելով այդ մասին եղած բացատրությունները:

Նախ Սուրբ Գրիգոր Տաթևացին «աղոթք» բառն այս կերպ է մեկնաբանում: «Աղոթք» նշանակում է «թող արարէք մեղաց ձերոց ամենայն ժամ» կամ «յաղթութիւն արարէք ի վերայ դիւաց» և կամ «ախ և օթ արարէք», այսինքն՝ ախին՝ տրտմությանը օթևան արեք ձեզ, ինչը նշանակում է՝ զղջացեք մեղքերի համար: Տաթևացին «աղոթք» բառն ստուգաբանում է նաև «աղ» բառի հետ առնչելով, ասելով, որ ինչպես աղն ամեն ինչի խառնվում է և համի բերում, այսպես էլ աղոթքն ամեն բարի գործերի խառնվում է և քաղցր ու ընդունելի դարձնում Աստծո համար:

Ավելի գիտական ստուգաբանությամբ «աղոթք» բառն առնչվում է «աղաչել» բառի հետ, որը խնդրել, աղերսել է նշանակում, այսինքն՝ խնդրելու ավելի շեշտված ձևն է ներ-

կայացնում: Այստեղ բուն արմատը «աղ»-ն է կամ «աղա», որը «չ» հոդակապով «աղաչել» բայի պարագայում կապվում է բայական վերջավորության հետ, ինչպես օրինակ՝ ճանաչել, ամաչել, փախչել: «Աղոթք» բառի մեջ բուն «աղ», «աղա» արմատը «չ» հոդակապով կապվում է «օթ» մասնիկի հետ, ինչպես ճանաչել-ծանօթ (դասական ուղղագրությամբ), ամաչել-ամօթ, այսպես և՛ աղաչել-աղօթ, իսկ «ք» մասնիկը հոգնակիության նշան է գրաբարում, ինչն աղոթքով բազմակի կամ հույժ ցանկությունների ակնարկն է կատարում:

Այլ լեզուներում «աղոթք» բառն անմիջականորեն նշանակում է խնդրել, աղաչել: Օրինակ՝ անգլ. - pray- նշանակում է աղոթք, նաև՝ խնդրել, աղաչել; ֆր. - prière-prier-աղաչել, իտ. preghiera - pregare - «աղաչել» բառից, նույն կերպ՝ ռուս. молитва - молить - աղաչել: Հետևաբար, աղոթքը խնդրանք, ցանկություն է, որն ուղղված է Աստծուն: Սակայն աղոթքը միայն ցանկությունից չէ, որ բաղկանում է, այլ լինում է նաև փառաբանական, գոհաբանական, որովհետև, ըստ էության, աղոթքը զրույց է Աստծո հետ, և այդ հաղորդակցության մեջ բացի ցանկություններից լինում են նաև Աստծուն ուղղված երախտագիտության, գոհաբանության, փառաբանության արտահայտություններ՝ երկնավոր Տիրոջ կողմից մարդու համար կատարած բարիքների համար:

## **2. Կա՞հատուկ աղոթքի բանաձև: Ինչպե՞ս աղոթել:**

Այսպիսի հարց նաև առաքյալները տվեցին Քրիստոսին և խնդրեցին. «Տե՛ր, մեզ աղոթել սովորեցրո՛ւ» (Ղուկ. 11.1): Եվ Քրիստոս նրանց սովորեցրեց Տերունական աղոթքը, կամ այլ կերպ ասած՝ «Հայր մեր» աղոթքը: Բայց քանի որ աղոթքը հոգևոր կապ ու հաղորդակցում է Աստծո հետ, ապա միայն Տիրոջ սովորացրած աղոթքը չէ, որ կարող ենք ասել: Աղոթքը կարող ենք բաժանել ընդհանրական, առանձնական, կանոնական տեսակների:

Ընդհանրական աղոթքը հիմնականում արվում է եկեղեցիներում, երբ ժամերգությունների ժամանակ հավատացյալները համախմբված աղոթում են: Սակայն ընդհանրական աղոթքը ենթադրում է նույն աղոթքի կամ նույն մտադրություն-

ների համար աղոթքի կատարումը, որը հիմնականում լինում է ժամերգությունների ժամանակ, երբ արարողության ընթացքում աղոթասաց եկեղեցականը հատուկ կարգված աղոթքներն է ընթերցում, և մյուսները, լսելով աղոթքը, իրենց ներքին խնդրանքով միանում են այդ աղոթքին: Ժամերգությունների աղոթքներն ավելի ընդհանրական բնույթ ունեն` խնդրում են, որ Աստված ների մեր մեղքերը, իր ողորմություններից արժանացնի, նեղյալներին, հիվանդներին օգնի, ննջեցյալների հոգիներին հանգստություն պարգևի, աշխահին խաղաղություն շնորհի:

Առանձնական աղոթքով մարդն իր անձնական խնդրանքներն է ներկայացնում Աստծուն` խոսելով Աստծո հետ` որպես սիրող Յոր հետ: Անձնական աղոթք կարելի է անել եկեղեցում, ինչպես և ամեն պատշաճ վայրում, որովհետև Ամենակարող Աստված մարդկանց լսում է ամենուր: «Երբ աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր քո դռները և ծածուկ աղոթիր քո Յորը» (Մատթ. 6.6),- ասվում է Ավետարանում: Այս խոսքերին անդրադարձ կա նաև պատարագամատույցում: Աղոթքի վերաբերյալ այս ուսուցումը, սակայն, փոխաբերաբար նշանակում է ներամփոփվել, ամենայն ուշադրությամբ աղոթել և այս իմաստով է այն բարձրաձայնվում պատարագի արարողության ժամանակ: Պետք է նկատի ունենալ, որ աղոթքը միշտ առավել արդյունավետ է լինում եկեղեցում, որովհետև եկեղեցու մթնոլորտը, հավերժության խորհրդանշանները, սրբապատկերները և այլն մարդկանց միտքը զգաստ են պահում և սևեռում հավիտենական իրողությունների վրա: Նաև Աստծուն նվիրված տաճարի մասին Հին Կտակարանում ասվում է, որ Աստված լսելու է բոլոր նրանց, ովքեր տաճարի ներսում աղոթքի կկանգնեն (Գ Թագ. 8.26-45):

Կանոնական աղոթքներն աղոթագրքերում զետեղված աղոթքներն են կամ` տարբեր սրբերի, եկեղեցական հեղինակների աղոթքները, որոնք արտահայտում են մարդկային տարբեր հոգեվիճակներ և առանձնական աղոթքի ժամանակ օգնում են իր սեփական աղոթքի բառերը դժվարությամբ գտնող մարդկանց աղոթել և կամ առավել լավ բառապաշարով ու հոգևոր տրամադրվածությամբ աղոթել: Այսպես են նաև Աստվածաշնչի սաղմոսները, որոնք առ Աստված

ուղղված աղոթքներ են: Աղոթելու դժվար տրամադրվող մարդկանց սաղմոսասացությունն օգնում է խնդրանքները կամ գոհաբանությունը ներկայացնել Աստծուն, ինչպես և աղոթքի հակվածություն և տրամադրվածություն ու ներշնչանք ունենալ:

### **3. Աստվածաշնչում ասվում է, որ արդարի աղոթքը շատ զորավոր է: Ո՞վ է արդարը:**

Այդ խոսքերն ասում է Հակոբոս առաքյալը, երբ խոսում է մեղքերի խոստովանության, բժշկության մասին՝ նշելով, որ արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է (Հակ. 5.16): Սակայն արդար լինելու մասին Պողոս առաքյալը Հռոմեացիներին ուղղված թղթում ասում է. «Ոչ ոք արդար չէ, ոչ իսկ մեկ հոգի» (3.10): Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղված առաջին թղթում խոսում է նաև հոգեպես կատարյալների մասին (2.6): Ուրեմն, պետք է արդար հասկացության մի քանի տեսակներ առանձնացնենք՝ բացարձակապես արդարություն, որ հատուկ է Աստծուն և համեմատական արդարություն, որ հատուկ է մարդուն: «Ոչ ոք արդար չէ» խոսքը վերաբերում է համեմատական արդարությանը, որովհետև Աստծո բացարձակ արդարության համեմատ ոչ ոք արդար չէ, բացի դրանից դա ցույց է տալիս մարդու մեղավոր լինելը: Մարդը մեղանշական է իր անկյալ բնությամբ, և կյանքում մեղքեր է զործում, որով և մարդը չի կարող բացարձակ արդար լինել, բայց սրբվում և արդարանում է, երբ Աստված մաքրում, ներում, քավում է մարդու մեղքերը, իր արդարությունից փոխանցում մարդուն: Այս իմաստով կարող ենք իրապես ասել, որ ոչ ոք արդար չէ, ոչ իսկ մեկ հոգի:

Պողոս առաքյալի նշած՝ հավատքով կատարյալներն արդեն այն մարդիկ են, ովքեր, մեղքերի համար զղջալով, հավատքի, հոգևոր ապրումների մեջ առաջանալով, հասել են հոգևոր առումով որևէ առաջընթացի: Առաքյալի մտածելակերպի մեջ մենք տեսնում ենք, որ նա հավատացյալներին երկու խմբի է բաժանում՝ սկսնակ հավատացյալներ, որոնց կոչում է մանուկներ, համեմատում երեխաների հետ և նրանց պարզ ձևով բացատրում հոգևոր իրողությունները, ինչպես որ

մանուկներին կաթ են տալիս և ոչ պինդ կերակուր (Ա Կորնթ. 3.2): Եվ նշում է հոգեպես կատարյալներին, հասունացածներին (Ա Կորնթ. 2.6), որոնք մանուկների համեմատությամբ արդեն հոգևոր խորը ապրումներ ունեցող, հոգևոր փորձառությամբ մարդիկ են: Հակոբոս առաքյալը հենց այսպիսիներին նկատի ունի, երբ ասում է, որ արդարի աղոթքը զորավոր է և կարող է օգնել: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդպիսի աղոթքը կարիքն ունի այն մարդու գործակցության, ում համար աղոթում են, որպեսզի այդ մարդը նաև իր կամքով չշարունակի մնալ մեղքերի մեջ և ապրի աստվածահաճո կերպով:

#### **4. «Աղոթքը լսելի դարձնել Աստծուն».** ո՞րն է լսելիության չափանիշը:

Ստեփանոս Սյունեցին, Ավետարանի մեկնության մեջ բացատրելով Քրիստոսի խոսքերը՝ «խնդրեցե՛ք Աստծուց և Նա կտա ձեզ, փնտրեցե՛ք և կգտնեք, բախեցե՛ք և կբացվի ձեր առաջ» (Մատթ. 7.7, Ղուկ. 11.9), ասում է. «խնդրեցե՛ք այն փնտրելին, որը ձեզ պետք է գտնել»: Այսինքն՝ պետք է արժանավոր, աստվածահաճո բաներ խնդրենք: Եվ Աստծուց արժանավայել բաների խնդրանքի մասին ենք փոխաբերական ձևով ասում, թե այդպիսի աղոթքը լսելի է Աստծուն, այն իմաստով, որ հաճելի է Նրան: Դա, իհարկե, չի նշանակում, որ պետք է միայն երկնավոր բաներ խնդրենք, հավիտենական իրողությունների մասին միայն խորհենք, այլ կարելի է և հարկ է, որ նաև այս աշխարհում մեր ապրելու համար անհրաժեշտ բաներ խնդրենք, բայց չափից շատ չհասարակացնելով Աստծո հետ մեր խոսակցությունը, այն չվերածելով առևտրի, ցանկալի ապրանքն ստանալու սակարկության: Այլ նույնիսկ երկրավոր բաները, որոնք խիստ անհրաժեշտ են, պատշաճությամբ պետք է խնդրենք, և Աստված կլսի մեր խնդրանքները և համապատասխան ժամանակին կտա այն, ինչն օգտակար է մեզ:

**5. Սուրբ Իսահակ Ասորին ասում է. «Մինչև քեզ վրա նեղություն գալն աղոթիր Աստծուն և դժբախտության ժամանակ կգտնես Նրան, և Նա քեզ կլսի»:** Ինչո՞ւ նեղությունից ազատվելու համար աղոթել մինչև նեղ իրավիճակում հայտնվելը: Իսկ եթե ես անմեղ եմ, և ինձ հետ դժբախտություն է պատահել:

Եկեղեցական հայրերն ուսուցանել են, որ մարդ միայն նեղության ժամանակ չպետք է աղոթի Աստծուն, այսինքն՝ միայն նեղության ժամանակ չէ, որ պետք է Աստծո հետ հաղորդակցվել, այլ միշտ, որովհետև Աստված մեր երկնավոր Չայրն է և ոչ թե մի միջոց, որով մենք ուզում ենք մեր ցանկությունները բավարարել կամ դժվարին իրավիճակները թեթևացնել: Սա նշանակում է, որ Աստծո հետ կենդանի և սիրառատ հաղորդակցություն է պետք շահադիտական գործողությունների փոխարեն: Մարդու համար սխալ է ասելը, թե ես անմեղ եմ, և ինձ դժբախտություն է պատահել: Մարդը մեղքեր է գործում կյանքի ընթացքում մտքով, խոսքով կամ գործով: Չետևաբար, մարդ չի կարող ասել իր մասին, թե՛ ես սուրբ եմ և մեղք չեմ գործել: Անգամ սուրբ Գրիգոր Նարեկացին երբեք չի խոսում իր սրբության մասին, այլ իր մեղավորության, և իր «Մատյան ողբերգության» ողջ շարադրանքի մեջ մեղքերի թվարկումով Աստծո ներումն ու ողորմությունը խնդրում:

Երբեմն մարդը կարող է մտածել, որ որևէ նեղության մեջ ընկնելը համարժեք չէ իր կերպարին, քանի որ դա անարդար է իր հանդեպ: Սուրբ Եփրեմ Ասորին ուսուցանում է, որ ամեն ինչում, անգամ անարդար թվացող նեղության, պատժի մեջ կա Աստծո նախախնամությունը և խրատական գործողությունը: Նա իր օրինակով է բացատրում: Երբ մի մարդու ունեցվածքի՝ կենդանիների առնչությամբ սադրանք կազմակերպելու անհիմն մեղադրանքներով բանտ է ընկնում, այստեղ հայտնություն է լինում նրան, որ նախկինում գործած մի այլ մեղքի՝ մի աղքատի կովին հալածելու և մահվան հասցնելու, այդ մարդուն ունեցվածքից զրկելու համար է պատժվելով խրատվում: Սա նշանակում է, որ նեղության մեջ չպետք է տրտնջանք, այլ Աստծո օգնությունը խնդրենք, Աստծո ներու-

մը հայցենք, քանզի այդ ժամանակ, ըստ Պողոս առաքյալի՝ Աստված փորձության հետ նաև ելք պիտի ցույց տա (Ա Կորնթ. 10.13):

**6. Աղոթքի անպատասխան լինելու մասին. ինչո՞ւ են աղոթքները երբեմն անպատասխան մնում:**

«Անպատասխան աղոթք» արտահայտությամբ նկատի ունենք, որ Աստծուն ուղղված որոշ խնդրանքներ չեն իրականացել: Աստված միշտ չէ, որ անմիջապես արձագանքում է աղոթքներին, խնդրանքներն իրականություն դարձնում: Պատճառները մի քանիսն են. խնդրվածները արժանավոր բաներ չեն, կամ դեռ բարենպաստ ժամանակը չի եկել այդ խնդրանքների իրականացման համար, կամ դեռ չենք հասել այն բարձրության, որով հնարավոր կլիներ ընդունել խնդրանքների պատասխանները, և կամ էլ մեր խնդրանքների իրականացումը կարող է մեզ վնասել, և դրա համար է, որ Աստված անպատասխան է թողնում այդ աղոթքները: Այնուամենայնիվ, եթե աստվածահաճո բաներ ենք խնդրում, պետք է խնդրենք Աստծո հանդեպ պատշաճ վերաբերմունքով, Աստծուն պարզ միջոց չնկատելով մեր խնդրանքների իրականացման համար, այլ Նրան վերաբերվելով որպես սիրող Յոր: Երբ մեր լավ ու առաքինի խնդրանքներով մեր աղոթքներն անպատասխան են մնում, ապա պետք է շարունակել աղոթելը: Դա է մեզ սովորեցնում անհրավ դատավորի ու այրի կնոջ մասին առակը (Ղուկ. 18.1-8), ինչպես նաև քանանացի կնոջ մասին ավետարանական պատմությունը (Մատթ. 15.21-28): Քրիստոս չէր կատարում կնոջ խնդրանքը՝ դստերը բուժելու, բայց կինն այնքան աղաչեց, որ պատասխան ստացավ և գովեստի արժանացավ Քրիստոսի կողմից: Քրիստոս ասաց. «Ո՛վ կին, մեծ է քո հաւատը, թող քեզ լինի՝ ինչպես որ կամենում ես»:

**7. Ինչո՞ւ պետք է աղոթենք, եթե Աստված ամեն ինչ գիտի, նույնիսկ այն, ինչ պետք է ասենք աղոթքի պահին:**

Ժամագրքի աղոթքներից մեկում դրա մասին ասվում է. «Գիտես զպետս մեր և զկարիս առաւել, քան զոր խնդրենք և իմանամք»: Այսինքն՝ Աստված մեր պետքերն ու կարիքները մեր խնդրածից և իմացածից ավելին գիտե: Սակայն մեզ համար բավական չէ միայն Աստծո իմացությունը, այլ հավատացյալի գործողությունը ևս անհրաժեշտ է: Այսպես նաև, երբ մի բան են տալիս, մյուսը պետք է ձեռք մեկնի ու վերցնի, և կամ հաճախ ձեռք են մեկնում ու խնդրում, և դիմացինը տալիս է խնդրածը: Այսպես է նաև աղոթքը, որը կարգվել է Աստծո հետ կենդանի հարաբերություններ, հաղորդակցություն պահպանելու, հոգևոր զգացումները զարգացնելու համար, ինչն այլ կերպ չի լինում, քան միայն Աստծո հետ կենդանի շփման ու հաղորդակցության մեջ: Նաև աղոթում ենք, որպեսզի իմանանք, որ Աստծո շնորհներով, պարգևներով ենք կյանքում բարիքներ ստանում: Աղոթքը մեզ մոտեցնում է Աստծուն, հոգևոր ոլորտ վեր հանում, հոգևոր փորձառություն տալիս, ներքին բերկրանքի կամ մխիթարության զգացումներ բերում, աղոթական ապրումներում մեզ միացնում Աստծո հետ, ինչպես սիրող հայրն ու որդին են գրկախառնվում և ջերմորեն զրուցում:

Եկեղեցական հեղինակներն զգուշացնում են, որ աղոթքի ժամանակ մտքի մեջ կամ մտավոր հայացքի առջև Աստծո երևակայական պատկերը չնկարենք, որովհետև դա կարող է շեղումների բերել, քանզի դրանով մարդն արդեն սկսում է աղոթել իր ստեղծած երևակայական պատկերին, և նրա հոգևոր ապրումները բանտարկված են մնում երևակայության սահմաններում: Բացի դրանից՝ սատանան նաև, ըստ Պողոս առաքյալի, կարող է ներկայանալ անգամ լուսե հրեշտակի կերպարանքով (Բ Կորնթ. 11.14): Դրա համար աղոթելիս հարկ է երևակայական պատկերներ չունենալ հոգեմտավոր հայացքի առջև:

## **8. Ո՞րն է Տերունական աղոթքի խորհուրդը:**

«Չայր մեր» աղոթքը կոչվում է Տերունական, որովհետև Չիսուս Քրիստոս՝ մեր Տերն է այն սովորեցրել: Տերունական աղոթքը ցույց է տալիս ընդհանրապես աղոթքների բովանդակության ճիշտ կարգավորվածությունը: Այստեղ սկզբում խնդրվում է Աստծո կամքի իրագործումը, Աստծո թագավորության գալուստը, այնուհետ անցում է կատարվում երկրային, նյութական իրողություններին՝ ինչպես հանապազօրյա հացի, մեղքերի ներման, փորձություններից հեռու մնալու խնդրանքները: Այս աղոթքը ցույց է տալիս, թե որոնք պիտի լինեն հավատացյալի կյանքում նրա մտահոգությունների առաջնահերթությունները:

Քրիստոս նաև սովորեցնում է՝ ասելով. «Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը և նրա արդարությունը, և այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. 6.33): Այսինքն՝ նյութականի մասին մտորումը, նյութականի փնտրտուքը չմերժելով՝ Քրիստոս իր ուսուցումներով, նաև Տերունական աղոթքով սովորեցնում է նախ և առաջ նախանձախնդիր լինել հոգևոր, վեհ արժեքների, և միայն հետո մտահոգվել նյութական իրողությունների համար: Չետևաբար, Քրիստոս տալիս է արժեհամակարգի կատարյալ օրինակ, դասավորվածություն, և այդ արժեհամակարգի խախտումը, որը ցավոք տեղ ունի նաև մեր հասարակության մեջ, բերում է մարդկային կյանքի, Աստծո հետ հարաբերությունների ու ներդաշնակության խանգարման: Մինչդեռ ավելի վեհ արժեքները նյութականին չզոհելը, չստորադասելն արդյունավորվում է կյանքի ծաղկումով ու առաջընթացով:

## **ԽԱՉԻ ՄԱՍԻՆ**

### **1. Ո՞րն է խաչի խորհուրդը:**

Չռոնեական կայսրության մեջ խաչը գործածվում էր անարգ հանցագործների, ստրուկների մահապատիժն իրականացնելու համար: Քրիստոս խաչի մահն ընտրեց՝ ցույց տալու, որ Աստծո կողմից սիրված և կանչված են անգամ ամեն-

նահետին համարվողները: Աղանդավորներից Եհովայի վկաները սխալ են համարում խաչի մասին տեղեկություններն ու Քրիստոսի մահը խաչի վրա՝ մոլորեցնելով, թե հունարեն «ստավրոս-σταυρός» բառը, որը Սուրբ Գրքում գործածվում է խաչի համար, նշանակում է նաև գերան, և Քրիստոս գերանի վրա է մահապատժի ենթարկվել: Սակայն հունարեն ժամանակակից լեզվում ևս «ստավրոս» բառը գործածվում է խաչի, խաչածն իրերի բնորոշման համար, ինչպես օրինակ՝ «ստավրոդրոմի -σταυροδρόμι», որը նշանակում է խաչմերուկ: Սա ցույց է տալիս, որ ավելի քան երկու հազար տարիների Եկեղեցու փարձառությունն ու տեղեկությունները փորձում են աղավաղել աղանդավորներ, որոնք խաչի եղելությունների ժամանակներում ընդհանրապես գոյություն չեն ունեցել և վերջերս առաջած լինելով՝ ցանկանում են դասեր տալ Քրիստոսի առաքյալների կողմից հիմնադրված Եկեղեցիներին: Խաչի հետ կապված՝ բացի պատմական տեղեկություններից, դրան նվիրված գրական գործերից, կան նաև խաչափայտի մասունքները, որոնք վկայում են խաչի մասին: Այդ մասունքներից մեկը պահվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում:

Խաչը, որով մահ էին պատճառում, Քրիստոսով դարձավ միջոց, որով մահը պարտության մատնվեց: Քրիստոս խաչը վերածեց հաղթության գործիքի, և քրիստոնյաների համար խաչն այլևս հաղթության խորհրդանիշ է: Դրանից զատ, խաչը նաև նորովի վեր հառնելու խորհուրդն ունի, ինչպես որ ուսուցանում է Պողոս առաքյալը՝ ասելով. «Մեր միջի հին մարդը խաչվեց նրա հետ, որպեսզի քայքայվի մեղքի մարմինը, և այլևս մենք չծառայենք մեղքին» (Յո. 6.6), «Նրանք, որ քրիստոսյաններ են, խաչն են հանում իրենց մարմինը՝ կրքերով ու ցանկություններով հանդերձ» (Գաղ. 5.24): Այսպիսով, խաչը նաև կատարելության, իբրև նոր մարդ վեր հառնելու խորհուրդն է պարունակում՝ մշտապես մնալով որպես Քրիստոսով մահվան դեմ բերված հաղթանակի և հավիտենության ճանապարհը մարդկանց առջև բացող զորության խորհրդանիշ, քանզի Քրիստոսի փրկագործությունը և դրանով մարդկանց հավիտենական կյանքի շնորհունը կատարվեց խաչի վրա զոհաբերությամբ: «Նա ներեց մեզ մեր բոլոր հանցանք-

ները և ոչնչացրեց հրամաններով հաստատված այն պարտամուրհակը, որ մեր դեմ էր, վերացրեց այն մեջտեղից և մեխեց խաչափայտին» (Կող. 2.14):

**2. Աստված մեզ պատվիրում է երկրի վրա կուռքեր չսարքել և չպաշտել դրանք: Արդյո՞ք խաչը մեզ համար չի դարձել պաշտամունք:**

Մենք ասում ենք, որ հայերս խաչապաշտ ժողովուրդ ենք, նաև խաչին նվիրված տոներին երգում ենք. «խաչի Քո Քրիստոս երկիրպագանեմք՝ Քրիստոս Քո սուրբ խաչին ենք երկրպագում»: Նշյալները կարծես թե ամբողջովին հակառակ են տասնաբանյա պատվիրաններից կուռքեր չսարքելու, միմիայն Աստծուն պաշտելու, միայն Աստծուն երկրպագելու պատվիրաններին (Ելք 20.2-5): Սակայն քրիստոնյաների համար խաչը երբեք չի ներկայանում առանց խաչյալ Քրիստոսի և կամ խաչը քրիստոնյաների ընկալումներում երբեք բաժանված չէ Քրիստոսից: Այսպիսով, խաչապաշտությունը հենց նույն Քրիստոսապաշտությունն է:

Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ Քրիստոսի մահվան պատճառ եղավ ոչ միայն խաչը, այլև մեխերը, որով գամեցին Քրիստոսին, ինչպես նաև փշե պսակը, որ ևս վնաս պատճառեց Տիրոջ Մարմնին: Սակայն ինչու՞ ենք խաչը պատվում հատուկ ընկալումով: Մեր Եկեղեցու Սուրբ Վարդապետն ուսուցանում է, որ խաչին ենք հատուկ այսպիսի պատիվ ընծայում, որովհետև մահվան գործիքներից միայն խաչն է, որ նմանվում է խաչյալ Քրիստոսին կամ ձեռքերը տարածյալ Քրիստոսին: Ուրեմն, խաչն իր ձևով և պատկերով մեզ ներկայացնում է խաչյալ Քրիստոսին և կամ իր ձեռքերը մեզ համար տարածած, մեզ իր սիրող գիրկը կանչող Քրիստոսին: Այս ընկալումով ու նաև խաչով փրկագործության շեշտումով է Պողոս առաքյալն ասում. «Քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. 6.14):

### **3. Ինչո՞ւ ենք խաչը համբուրում:**

Մարդկային վարվեցողության ձևերից է համբույրով սիրո արտահայտությունը: Դեռևս հնուց ի վեր մարդիկ նաև համբույրով են արտահայտում իրենց ջերմ զգացումները: Այսպես մայրը համբուրում է իր երեխային, և երեխան՝ իր ծնողին: Նման կերպ էլ համբուրում ենք խաչը, սրբանկարները՝ արտահայտելով մեր ջերմ զգացումները, սերը Քրիստոսի, սրբերի հանդեպ, դրսևորելով մեր մղումն ու ձգտումը դեպի հավիտենականը, դեպի Աստված:

Համբույրի արտաքին դրսևորումը սրտի ներքին ջերմ զգացողությունից պետք է բխի, այլապես մանավանդ հոգևոր կյանքում այն կվերածվի ձևապաշտության կամ ցուցամուլության: Համբույրը, որով սերն ու նվիրումն է արտահայտվում, կարող է ներքին վատ մտադրության պատճառով դառնալ անգամ դատապարտելի, դավաճանության, ուրացման միջոց: Այսպիսին էր Քրիստոսի առաքյալներից Հուդայի համբույրը, որով նա մատնեց Փրկչին (Մատթ. 26.48-50, Ղուկ. 23.47-49): Սուրբ Պատարագի արարողության ժամանակ երգվում է. «Ողջոյն տուրք միմեանց ի համբոյր սրբութեան – Ողջունեցեք միմյանց սուրբ համբույրով»: Սա այն նվիրական ողջագուրումն է, որ տարբերվում է Հուդայի համբույրից և անկեղծ հավատքի ու քրիստոնեական սիրո արտահայտությունը դառնում: Սուրբ զգացումներն են, որ սուրբ են դարձնում համբույրը, և այդ զգացումով ու նվիրումով է, որ մենք համբուրում ենք նաև առանձնահատուկ խորհրդանիշ և նշանակություն ունեցող խաչը:

### **4. Ի՞նչ է նշանակում «խաչի զորություն»․ հավատքի ուժի կամ չափի մասի՞ն է խոսքը:**

Պողոս առաքյալն ասում է. «Խաչի քարոզությունը կորըստյան մատնվածների համար հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստծու զորություն» (Ա Կորնթ. 1.18), և ավելացնում է. «Մենք քարոզում ենք խաչված Քրիստոսին ի գայթակղություն հրեաների և ի հիմարություն հեթանոսների» (Ա Կորնթ. 1.23): Խաչված Քրիստոս հրեաների համար

գայթակղություն էր, որովհետև հրեաները սպասում էին մի մեսիայի, որը հզոր պիտի լիներ և իրենց ու հարազատ երկիրը ազատեր օտարների տիրապետության լծից, վերականգներ Իսրայելի նախկին թագավորությունն ու նրա փառքը: Դրա համար էլ խաչված, առաջին հայացքից պարտության մատնված մեսիայի գաղափարը գայթակղություն էր հրեաների համար:

Չեթանոսների համար խաչի քարոզությունը հիմարություն էր, որովհետև անհասկանալի էր, թե ինչպե՞ս կարելի է մեծարել այն գործիքը, որով սիրելի մեկին մահ են պատճառել: Սակայն առաքյալի խոսքով մեզ համար խաչի քարոզությունը Աստծո հզորությունն ու իմաստությունն է, որովհետև հավատքով հասկանում ենք, որ խաչով Քրիստոս մեծ հաղթանակ բերեց, և այդ հաղթանակը վկայությունն էր Աստծո զորության և իմաստության: Խաչի զորությունը Աստծո զորությունն է, որ արտահայտվեց խաչով փրկագործությամբ և պսակվեց Չարության հաղթանակով ու մարդկանց բերեց մեծագույն պարգևը հավերժության ու հավիտենական կյանքի:

### **5. Կարո՞ղ ենք խաչի խորհուրդը հասկանալ՝ որպես բեռ աշխարհիկ վշտերի:**

Կան մարդիկ, ովքեր մտածում են, թե քրիստոնեությունը չարչարանքների մեջ ապրելու գոյաձև է, ինչպես որ Քրիստոս ցույց տվեց Իր կյանքով: Մարդ էլ կա, որ քրիստոնեական կյանքի, զղջման ու ապաշխարության իրողության սխալ հասկացողությամբ ասում է՝ «եթե մեղավոր եմ, ուրեմն, պիտի չարչարվեմ» և կամ՝ «եթե չարչարվում եմ, ուրեմն, մեղավոր եմ»: Քրիստոս ասաց. «Ով իր խաչը չի վերցնում ու Իմ հետևից չի գալիս, Ինձ արժանի չէ» (Մատթ. 10.38, 16.24, Մարկ. 8.34, Ղուկ. 9.23, 14.27): Այս խոսքը, սակայն, չի նշանակում մշտապես տառապանքների մեջ լինելու պատվեր: Խաչը նեղություններ կրելու խորհուրդն ունի, և երկրային կյանքում այսպես թե այնպես պատահում են վշտեր, դժվարություններ, այսինքն՝ մարդը կամա թե ակամա մի ինչ-որ ժամանակ պետք է իր այդ խաչը հանձն առնի: Սակայն մարդիկ կան, որ իրենց խաչը վերցնելով՝ գնում են ոչ թե Քրիստո-

սի հետևից, այլ ընթացում են Քրիստոսին հակառակ ուղղությամբ: Սա նշանակում է, որ ոմանք նեղությունների մեջ էլ հավատարիմ են մնում Աստծուն, իսկ ոմանք էլ, դժվարությունների, փորձությունների հանդիպելով, մեղադրում են Աստծուն և հեռանում նրանից:

Խաչը վերցնելու և Քրիստոսին հետևելու տերունական պատվերը հորդորում է ամեն պարագայում հավատարիմ մնալ Տիրոջը՝ նկատի ունենալով, որ քրիստոնյայի խաչն ի վերջո պսակվում է փառքով ու հաղթանակով, ինչպես որ Քրիստոսի խաչելությանը հետևեց Նրա հաղթական Հարությունը: Նեղ դռնով մտնելու Քրիստոսի պատվերն է (Մատթ. 7.13-14, Ղուկ. 13.24) իրագործվում խաչի հանձնառությամբ, Տիրոջ անշեղ հետևորդը լինելով, քանզի նեղ դուռն է փրկության տանում, իսկ լայն դուռը՝ հեշտ թվացող ճանապարհը, տանում է կործանման ու դատապարտման: Եկեղեցական հեղինակներն ուսուցանում են, որ նեղ ճանապարհն աստիճանաբար լայնանում է և փրկության առաջնորդում, իսկ լայն ճանապարհը՝ նեղանում և կործանման տանում:

## **6. Ո՞րն է խաչակնքման խորհուրդը:**

Խաչակնքվելը գալիս է դեռ վաղ քրիստոնեական շրջանից և հատուկ խորհուրդ ունի: Խաչակնքվում են աջ ձեռքով, երեք մատները՝ բթամատը, ցուցամատը և միջնամատը միացրած, իսկ մյուս երկու մատները՝ մատնենատն ու ճկույթը միասին ծալած և ափին սեղմած: Խաչակնքվելու ժամանակ երեք միացրած մատները խորհրդանշում են մի Աստվածության՝ Սուրբ Երրորդության երեք Անձերին, իսկ ծալված երկու միացյալ մատները՝ Քրիստոսի աստվածային և մարդկային միացյալ բնությունը, ըստ Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետության՝ Քրիստոսի մարդեղությունից հետո երկու միացյալ՝ աստվածամարդկային բնությունը:

Խաչակնքվելիս նախ ձեռքը հպում ենք ճակատին՝ ասելով «հանուն Հոր», ապա իջեցնում ենք կրծքի միջնահատվածից մի փոքր ներքև՝ ասելով «և Որդվո», այնուհետ ձեռքը տանում ենք դեպի ձախ՝ ասելով «և Հոգվույն», որից հետո՝ դեպի աջ՝ ասելով «Սրբո»: Դրանից հետո աջ ձեռքի բացված ա-

փը դնում ենք սրտի մոտ՝ ասելով «ամեն»՝ դրանով խորհըրդանշելով նաև մեր սերն Աստծո հանդեպ: Խաչակնքման այս ձևը մի քանի նշանակություն ունի: Նախ պարզապես խաչի նշանն ենք նկարում մեզ վրա. խաչից և նրա նշանից փախչում է չարը: Ձեռքը ճակատին հպելը և միաժամանակ «հանուն Չոր» ասելը ցույց է տալիս Աստծո՝ վերին երկնքում, բայց նաև, ըստ Աստվածաշնչի ուսուցման, ամենուր լինելը, ինչպես և Քրիստոս, Տերունական աղոթքն ուսուցանելով, ասաց. «Չայր մեր, որ երկնքում ես» (Մատթ. 6.9, Ղուկ. 11.2): Ձեռքը ներքև տանելով և դրա հետ «և Որդվո» ասելով՝ հիշում ենք մարդկության փրկության համար Քրիստոսի խոնարհվելն առ մարդիկ և Տիրոջ մարդեղացումը, Նրա փրկագործությունը: Այնուհետև ձեռքը կրծքվանդակի հատվածի երկայնքով ձախ և աջ տանելը խորհրդանշում է, որ Քրիստոսի հավատարիմ հետևորդը լինելով՝ այս աշխարհի ձախակողմյան համարվող իրողություններից անցնելու ենք հավիտենություն և արժանանալու աջակողմյան դասին:

Ավետարանիչն ասում է, որ Չարությունից հետո Քրիստոս համբարձվեց և նստեց Չոր աջ կողմը (Մարկ. 14.62, 16.19, Եփ. 1.20, Կող. 3.1, Եբր. 1.3, 8.1, 10.12, 12.2, Ա Պետ. 3.22): Աջը նշանակում է պատվավորը, իսկ Քրիստոս ասաց. «Ուր ես եմ, այնտեղ կլինի և Իմ ծառան» (Հովհ. 12.26): Սակայն խաչակնքվելիս ձեռքը ձախ և աջ տանելու խորհուրդն այս աշխարհից հավերժություն անցնելու և հավիտենական պարգևների արժանանալու խորհրդանիշ չէ միայն, քանզի խաչակնքվելիս ձեռքը նախ ձախ և ապա աջ տանում են Չայ և Կաթոլիկ Եկեղեցիներում, մինչդեռ Ուղղափառները, ինչպես օրինակ՝ ռուսները, խաչակնքվելիս հորիզոնական շարժման ժամանակ ձեռքը տանում են հակառակ ուղղությամբ՝ աջ և հետո նոր՝ ձախ: Սրա բացատրությունն այն է, որ երբ արտասանում ենք «և Չոգվույն Սրբո», «Չոգվույն» բառի արտասանության ժամանակ ձեռքը հպում ենք սրտին, քանզի սրտով ենք զգում, նաև սրտի զգայարանի միջոցով է ներգործում Սուրբ Չոգին: Ռուս քրիստոնյաները խաչակնքվելիս ասում են «և Սրբո Չոգվույն», այսինքն՝ «Չոգի» բառը վերջում են արտասանում, դրա համար էլ ձեռքը վերջում են տանում ձախ՝ դեպի սրտի կողմը:

## **7. Ի՞նչ ներկայություն ունի խաչը հայ մշակույթի մեջ:**

Հայ իրականության մեջ խաչը մեծ տեղ է գրավում մշակույթի ասպարեզում՝ ճարտարապետության, նկարչության, երաժշտության, գրականության, քանդակագործության, խաչքարային արվեստի, եկեղեցաշինության մեջ: Մեր եկեղեցիների ճարտարապետական նախագծերը մեծավ մասամբ խաչի պատկերի վրա են հիմնված, բազմաթիվ եկեղեցիների հիմքերը խաչաձև են: Հնուց ի վեր մանրանկարչության, սրբանկարչության մեջ կենտրոնական տեղ ունի խաչը՝ իր առանձնահատուկ խորհրդով: Մեր շարականները, եկեղեցական երգերը, տաղերն ու մեղեդիները երգարվեստի, երաժշտության հիանալի ստեղծագործություններ են, և դրանցից շատերը նվիրված են խաչի օրհներգությանը:

Եկեղեցական գրականության հիանալի նմուշներ են խաչի քարոզներն ու ճառերը, խաչին նվիրված ներբողները, մեկնողական գրականության մեջ՝ խաչի խորհրդի բացատրությունները: Մեր եկեղեցիների, վանքերի, եկեղեցական կառույցների պատերը զարդարում են խաչի պատկերով զարդաքանդակները, իսկ միայն մեր ժողովրդին հատուկ խաչքարային արվեստն ամբողջ աշխարհում հայտնի է հիանալի գլուխգործոցներով: Եկեղեցաշինության մեջ խաչի պատկերի գործածումը կառույցի հիմքի ձևից, քանդակներից ու փորագրություններից բացի, կիրառվում է նաև եկեղեցիների զմբեթների, որոնք պսակվում են խաչերով՝ որպես խորհրդանշանի խաչով իրականացված փրկագործությամբ Քրիստոսի եկեղեցու հիմնադրման և դրանով երկնքի արքայության ճանապարհը մարդկության առջև բացելու իրողության:

## **ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ**

### **1. Ի՞նչ է Դատաստանի օրը:**

«Դատաստանի օր» հասկացությունը պետք է ընկալել ոչ մարդկային այսօրվա պատկերացումներով: Նախ՝ օրն իբրև այդպիսին գոյություն չի ունենալու, որովհետև Դատաստանին նախորդելու է աշխարհի վախճանը: Հետևաբար, օրը՝

իբրև Երկիր մուրաբա պտույտ իր առանցքի շուրջը Արեգակի դիրքի հետ կապված, դադարելու է գոյություն ունենալուց: Դատաստանի պատկերավոր գաղափարը ևս տրված է մարդկանց ընկալողունակությանը համապատասխան, որպեսզի հնարավոր լինի մոտավոր պատկերացում կազմել այն իրողությունների մասին, որոնք տեղի են ունենալու աշխարհի վախճանից հետո:

Քրիստոս ևս խոսում է Դատաստանի մասին, առաքյալներին ասում, որ նստելու են Իր հետ՝ դատելու մյուսներին (Մատթ. 19.28): Պետք է իմանալ, որ Դատաստանի ժամանակ բոլորը չէ, որ պիտի դատվեն, քանի որ դատավարությունն արվում է մեղադրվող և ոչ թե անմեղ մարդկանց համար: Ոմանք ո՛չ դատվելու են և ո՛չ էլ դատապարտվելու, ոմանք դատվելու են և չեն դատապարտվելու, իսկ ոմանք էլ դատվելու են և դատապարտվելու: Դատաստանի չեն ենթարկվելու կատարյալ արդարները, սրբերը, ինչպես նաև բոլորովին մեղավորները, քանի որ նրանց վիճակն արդեն հայտնի է, և կարիք չկա առանձին քննության: Բայց պիտի դատվեն միջակները, այսինքն՝ նրանք, ովքեր միջին տեղ են գրավում այս երկու խմբի՝ սրբերի և բոլորովին մեղավորիների միջև: Դատաստանի ենթարկվողներից նրանք, ովքեր ավելի շատ բարի գործեր ունեն, քան՝ մեղքեր, դատվելու են և չեն դատապարտվելու, այլ անցնելու են հավիտենական երանություն: Նրանք, որոնց չար գործերն ավելի շատ են, դատապարտվելու են դժոխքի:

Դատը լինելու է նաև ըստ հավատքի: Ովքեր հավատում են, բայց հավատքի գործեր չունեն, նույնպես պիտի դատապարտվեն, քանի որ հավատքն առանց գործերի մեռած է (Հակ. 2.20, 26): Իսկ ովքեր հավատք չունեն, նույնիսկ եթե բարի ընթացքով են ապրել, դարձյալ դատապարտվելու են, ինչպես անհավատ բարեգործները, քանի որ Երկնքի արքայության դռները բացվում են աստվածային շնորհով և մարդու անհատական, անձնական հավատքով:

**2. Շատերը մտածում են, որ Դատաստանի օրը միլիարդավոր մարդկանց հոգիներ պետք է բերվեն Աստծո գահի առաջ, որպեսզի դատվեն իրենց գործերի համար: Ոմանք պետք է վարձատրվեն երկնային կյանքով, մյուսներն էլ տանջվեն դժոխքում: Ի՞նչ է լինելու Դատաստանի օրը:**

Քրիստոս Մատթեոսի Ավետարանում այծերի, ոչխարների ու հովվի օրինակով խոսում է Վերջին դատաստանի մասին (Մատթ. 25.31-46): Կանչվում են այծերը՝ ծախ կողմում լինելու և ոչխարները՝ աջ կողմում. աջը խորհրդանշում է պատվավոր տեղը: Դատաստանին նախորդելու է Քրիստոսի փառավոր գալուստը և մեռյալների հարությունը: Քրիստոնեական վարդապետությամբ մարդը հոգուց և մարմնից կազմված ամբողջություն է, հետևաբար, Դատաստանին ներկայանալու, հավիտենություն անցնելու համար պետք է ներկայանա այս տեսակետից մարդկային ամբողջ հատկություններով: Քրիստոնեական վարդապետությունը տարբերվում է հունական փիլիսոփայության մեջ տարածված կարծիքից, ըստ որի՝ մարդը միայն հոգին է՝ բանտարկված մարմնի մեջ, և մահից հետո հոգին ազատություն է գտնում և անցնում հոգևոր ոլորտ, գոյության ավելի կատարյալ ձևի մեջ: Այս կարծիքն ընդունելի չէ քրիստոնեության տեսանկյունից: Այն մարդիկ, ովքեր Քրիստոսի գալստյան ժամանակ ողջ կլինեն, կնորոգվեն մի ակնթարթում, ինչպես ասում է Պողոս առաքյալը (Ա Կորնթ. 15.52), քանի որ մարդիկ արդեն լինելու են ավելի կատարյալ մարմիններով, «որովհետև պետք է, որ այս ապականացու մարմինը անապականություն կրի, և այս մահկանացու գոյությունը հազնի անմահություն (Ա Կորնթ. 15.53): Իսկ Քրիստոսի գալուստը լինելու է արևելքից: Այս մասին ասել է Քրիստոս Ինքը. «Ինչպես փայլակը, որ ելնում է արևելքից և երևում է մինչև արևմուտք, մարդու Որդու գալուստը այնպես կլինի» (Մատթ. 24.27): Դրա համար էլ քրիստոնեական գերեզմաններում ննջեցյալները թաղվում են դեմքով դեպի արևելք, որպեսզի Քրիստոսի գալստյան ժամանակ հարություն առնեն դեմքով դեպի Քրիստոս: Նաև մեր եկեղեցիների մուտքերը բացվում են դեպի արևելք, քանի որ այդ կողմից է լինելու Քրիստոսի փառավոր գալուստը:

### **3. Ո՞րն է Դատաստանի օրվա նպատակը՝ վերացնել անարդարությունը երկրի երեսից և վերականգնել արդարությունը:**

Երկրից անարդարությունը վերացնելու արտահայտությունը ճշգրտությամբ չի արտահայտում Դատաստանի օրը տեղի ունենալիք իրողությունների պատկերացումը, քանի որ այդ ժամանակ երկիրը՝ իբրև այդպիսին, դադարելու է գոյություն ունենալուց: Գիտությունը խոսում է ընդլայնվող տիեզերքի մասին՝ ասելով, որ տիեզերքն ստեղծվել է մեծ պայթյունից, այսինքն՝ առաջ են քաշում պայթյունի տեսությունը: Տիեզերքի ծագման և վերջի մասին տեսություններով գիտությունը դուրս է գալիս իր սկզբունքներից, ըստ որոնց՝ գիտությունը հիմնականում պետք է զբաղվի փորձի, քննության ենթակա առարկաների, երևույթների հետ, մինչդեռ այս դեպքում ելնում է դեպի երևակայության ոլորտ, հորինում տեսություններ, հեքիաթներ տիեզերքի մասին: Աստվածաշնչում տեսակետ կա, որը կաժես թե համապատասխանում է գիտության արտահայտած ընդլայնվող տիեզերք հասկացությանը: Եսայու մարգարեության, Յովհաննու Յայտնության մեջ խոսվում է նոր երկնքի և նոր երկրի մասին (Ես. 65.17, Յայտն. 21.1)՝ նշումով, որ տիեզերքը մի օր մազաղաթի պես գալարվելու է (Ես. 34.4) և բացվելու նոր երկնքով ու նոր երկրով: Այսինքն՝ տիեզերքն ընդլայնվելու է և հասնելու մի աստիճանի, երբ տիեզերքը, գալակտիկաները մազաղաթի պես պիտի գալարվեն և այնուհետ բացվեն՝ որպես նոր երկինք և նոր երկիր: Այս նոր իրականության մեջ է, որ արդեն կլինի կատարյալ արդարությունը, քանի որ մեր երկրային, ժամանակավոր կյանքում կա միայն հարաբերական արդարություն: Օրինակ՝ ո՞վ պիտի արդարություն հատուցի երկրի վրա չարչարանքներ կրած ու սպանված մարդկանց: Կամ այն երկրներում, որտեղ կա հակամարտություն, պատերազմ, դրանց ընթացքում սպանված, չարչարված երեխաների համար որտե՞ղ պետք է արդարացի հատուցում լինի: Ուրեմն, այդ հատուցումը լինելու է նոր, հավիտենական իրականության մեջ, երբ Աստված պիտի արդարորեն բարիքներ կամ պատիժ տա՝ ըստ արժանվույն:

#### 4. Ի՞նչ է իրագործվելու Դատաստանի օրը:

Դատաստանի օրը մարդիկ պիտի հատուցուն ստանան՝ ըստ իրենց ապրած կյանքի և կատարած գործերի: Բարի գործ ունեցողները պիտի մտնեն Երկնքի արքայություն, իսկ չարագործները դատապարտվելու են դժոխքի: Այս առնչությամբ բողոքական և կաթոլիկ տեսակետների հակադրություն կա: Բողոքականներն ասում են, որ մարդիկ փրկվում են միայն հավատքով, և հավատքը բավական է երկնային արքայությանն արժանանալու համար: Կաթոլիկները շեշտում են բարի գործերի առաջնայնությունը՝ նշելով, որ աստվածահաճո գործերն են արժանացում հավիտենական կյանքի: Մեր Եկեղեցու դիրքորոշումը միջին տեղ է գրավում: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ հավիտենական կյանքի ու երանության պարզևն այնքան մեծ է, որ մարդկային գործերը, նույնիսկ ամենամեծ բարեգործությունները դրա համեմատ ոչինչ են, և հետևաբար ստացվում է, որ Աստված ձրիաբար է մեզ տալիս այդ մեծագույն պարգևը: Մինչև Դատաստանի օրը մահացածների հոգիները գտնվում են հոգիների կայաններում, որոնց տեղակայումը հոգևոր ոլորտում հստակ ցուցադրված չէ Աստվածաշնչում կամ եկեղեցական հեղինակների կողմից: Այդ կայանները, ըստ Սուրբ Գրիգոր Տաթևացու, կարող են լինել իրարից հեռու՝ Երկնքի արքայությանն արժանի և վերջնականապես դժոխքի դատապարտման ենթակա հոգիների տարանջատումով, մի մասի ուրախության և մյուսների չարչարանքների նկատառումով, և կամ կարող են լինել նաև նույն տեղում՝ ոմանց հավիտենական երանության բերկրալի ակնկալիքով, իսկ ոմանց էլ հավիտենական անվերջանալի տանջանքների դատապարտվելու սպասման չարչարանքներով: Այսպիսով, մահացածներն իրենց վերաբերող վերջնական վճիռը պիտի լսեն Ահեղ դատաստանի օրը, երբ չարչարանաց կայաններում գտնվող հոգիները, որոնք ներելի մեղքեր են ունեցել, բայց չեն հասցրել երկրային կյանքում ապաշխարել, կարող են նույնիսկ արդարացվել և այդտեղից անցնել Արքայություն՝ ըստ իրենց հարազատների աղոթքների, ողորմության գործերի, եկեղեցուն հոգեհանգստյան արարողության ժամանակ մատուցվող

խնդրանքների: Կաթոլիկ Եկեղեցին ընդունել է քավարանի գաղափարը, որտեղ նման հոգիները տանջվելով՝ ի վերջո քավում են իրենց մեղքերը և Արքայության արժանանում, սակայն այս վարդապետությունը ճիշտ չի համարվում առաքելահաստատ մյուս Եկեղեցիների կողմից:

**5. Երբեմն Դատաստանի օրն անվանում են Ահեղ դատաստանի օր. փոխաբերական իմաստով այն նշանակում է աշխարհի վերջ, վերջին օր: Դա ճիշտ պատկերացում է:**

Դատաստանի օրն անվանում են Ահեղ դատաստան, որովհետև այդ ժամանակ ահեղ իրողություններ են տեղի ունենալու՝ Քրիստոսի փառավոր գալուստը, երկնային հրեշտակների բազմությունների երևալը, մեռյալների հարությունը: Բայց քրիստոնյաներիս համար Դատաստանը մեծ ուրախություն պիտի լինի, քանի որ դրան նախորդելու է Քրիստոսի գալուստը, և մենք պիտի տեսնենք մեր Տիրոջը: Ճիշտ է, մենք հանդիպում ենք Քրիստոսին, երբ հավատում ենք Նրան, ընդունում մեր սրտում, հանդիպում ենք նաև ամեն կարիքավորի մեջ, երբ որևէ մեկին օգնություն ենք ցույց տալիս, քանի որ Քրիստոս ասաց. «Ճշմարիտ են ասում ձեզ, քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ Ինձ համար արեցիք» (Մատթ. 25.40): Բայց, իհարկե, այլ է Քրիստոսին Իր փառքի մեջ հանդիպելը: Մենք որքան հեռանում ենք Քրիստոսի առաջին գալուստից, այնքան մոտենում ենք Քրիստոսի երկրորդ գալուստյանը, և դա քրիստոնյաների համար նաև ուրախության առիթ է, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Մարմնից դուրս գալը և Քրիստոսի հետ լինելը ավելի լավ են համարում» (Փիլիպ 1.23):

Ինչ վերաբերում է աշխարհի վերջին օրվան, այս մասին տարբեր կարծիքներ կան: Բողոքականներն առաջ են քաշել քիլիազմի (հուն.՝ χίλια - հազար) կամ միլենարիալիզմի կամ միլենիալիզմի (լատ.՝ millennium բառից, նշանակում է հազար տարի) վարդապետությունը, ըստ որի՝ Քրիստոսի գալուստին պիտի հետևի հազար տարի խաղաղ թագավորություն երկրի վրա, երբ մարդիկ պիտի ապրեն համերաշխության ու ներ-

դաշնակության մեջ, երբ նաև գայլն ու գառը, առյուծն ու ցուլը միասին հաշտ ու համերաշխ պիտի լինեն (Եսայի 11.6-7): Այս ուսմունքը հիմնված է Հովհաննու հայտնության 20-րդ գլխի վրա, որտեղ ասվում է, որ Քրիստոսի գալստյամբ սատանան հազար տարով կապվեց և նետվեց անդունդը (2-3): Սակայն առաքելահաստատ Եկեղեցիները մերժել են այս վարդապետությունը՝ այն սխալ համարելով: Բողոքական վարդապետությունը մերժվում է այն բացատրությամբ, որ Հովհաննու Հայտնության մեջ խոսվում է Քրիստոսի առաջին գալստյան դեպքերի մասին, քանի որ Քրիստոսի փրկագործությամբ սատանան պարտվեց և այլևս կործանարար իշխանություն չունի մարդու վրա, եթե մարդն առաջնորդվում է Աստծո պատվիրաններով և ընդունում աստվածային շնորհները, որոնք զորացնում են հավատացյալին չարի դեմ պայքարելու ու հաղթելու, առ Աստված ընթանալու ճանապարհին: Այսինքն՝ մենք հիմա ապրում ենք խորհրդանշական հազարամյայի մեջ, երբ չարի իշխանությունը սահմանափակված է և հավատացյալների համար Աստծո արքայությունն է սկսված: Քրիստոս ասում էր. «Ապաշխարեցեք, որովհետև Երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. 4.17, Մարկ. 1.15)՝ նկատի ունենալով նաև Իր փրկագործությամբ չարի պարտությունը և Աստծո թագավորության հաստատումը մարդու ներաշխարհում:

**6. Եթե չլինի Դատաստանի օրը, բարին կմնա առանց պարզևատրման, իսկ չարն առանց պատժի: Պե՞տք է հավատալ Դատաստանի օրվան, թե՞ այն կարելի է համարել խորհրդանշական մի ուսուցում:**

Դատաստանի օրվան պետք է հավատալ, քանի որ Վերջին դատաստանի գաղափարը տրվել է աստվածային հայտնությամբ: Աստվածաշնչում կան շատ մարգարեություններ, որոնք ճշգրտորեն իրականացվել են մարգարեների ապրած ժամանակաշրջանում, իրականացվել են նաև նրանց մարգարեությունները հետագա ժամանակների մասին, և հետևաբար, աշխարհի վերջի մասին ասվածները ևս պիտի իրականանան: Արդեն իսկ իրականացված մարգարեություններն ապացուցում են, որ հետագայի համար կանխատեսվածները նույն-

պես կատարվելու են: Դատաստանն իրոք միջոց է նաև պարզևատրելու բարին և պատժելու չարը: Ճիշտ է, այս կյանքում լինում են բարիքի հատուցումներ ու չարի պատիժներ, բայց երբեմն բարին ու չարը մնում են առանց հատուցման: Օրինակ՝ Աստված չի պատժում այն չար մարդկանց, որոնցից բարի երեխաներ պիտի ծնվեն: Աստվածային նախախնամությունն այդպիսիներին հեռու է պահում պատժից, և երբեմն բարի երեխաների պատճառով խնայում ծնողներին: Ուրեմն, այսպիսի մարդիկ, ովքեր այստեղ անպատիժ են մնում, իրենց հասանելիքը ստանալու են Դատաստանի օրը: Նաև բարին երբեմն չի պարզևատրվում, այլ հալածվում է, նահատակվում, ինչպես օրինակ՝ վաղ շրջանի քրիստոնյաները հեթանոս կամ կռապաշտ տիրակալների հետապնդումների ժամանակ: Հավիտենության մեջ երանության կամ տանջանքի վիճակների զանազանություն կա: Հիմնվելով հարուցյալ կյանքում իրողությունների վերաբերյալ Պողոս առաքյալի խոսքերի վրա, թե աստղերը տարբեր լուսավորություններ ունեն (Ա Կորնթ. 15.41), Հովհան Ոսկեբերանը բացատրել է, որ Երկնքի արքայության մեջ մարդիկ փառքի և ուրախության տարբեր վիճակներ են ունենալու: Այսպես նաև դժոխքում զանազան տանջանքի տեղեր կան՝ ըստ չարչարանքների մեծության կամ փոքրության: Եփրեմ Ասորին տարբերակում է սուրբզրական հիմնավորմամբ՝ գեհեմը (Մատթ. 5.22, 29-30, 10.28, 18.9, 23.15, 33, Մարկ. 9.43-46, Ղուկ. 12.5, Հակ. 3.6), կրակե լիճը (Հայտն. 19.20, 20.14-15), անդունդը (Հռ. 10.7, Հայտն. 9.1, 11.7, 20.3), ատամների կրճտումը (Մատթ. 8.12, 13.42, 50, 22.13, 24.51, 25.30, Ղուկ. 13.28), անշեջ կրակը (Մատթ. 3.12, 18.8, 26.41, Մարկ. 9.43, 47, Ղուկ. 3.17, Հուդա 7), չսատկող որդը (Մարկ. 9.47) և այլն: 2-3-րդ դարերի եկեղեցական մեծ հեղինակ Որոգինեսն այն կարծիքին էր, որ դժոխքում տևական չարչարանքներից հետո մեղավորները, այդ թվում և սատանան իր չար հրեշտակներով, ի վերջո ազատվելու են տանջանքներից և նույնպես արժանանալու են Աստծո՝ ողորմությանը: Որոգինեսի համընդհանուր փրկության մասին այս ուսմունքը, ինչպես նաև նրա որոշ հակասական տեսակետներ, հետագայում դատապարտվեցին եկեղեցական ժողովների կողմից:

## 7. Դատաստանի օրվա մասին խոսվում է մյուս կրոններում:

Դատաստանի մասին խոսվում է հին եգիպտական կրոնում՝ Մեռյալների գրքում, իսկ ներկայիս կրոններից դատաստանի գաղափարը շեշտվում է հատկապես հուդայիզմի, քրիստոնեության, մուսուլմանության, որոշ չափով բահայիզմի, հինդուիզմի մեջ: Բահայիզմի և հինդուիզմի ընկալումները տարբերվում են հուդայիզմի, քրիստոնեության և մուսուլմանության ունեցած պատկերացումներից Դատաստանի վերաբերյալ, որոնց մեջ նմանություններ կարելի է գտնել: Բուդայականության մեջ առավելաբար շեշտվում է ըստ ապրած կյանքի հոգևոր ոլորտում երանելի վիճակի՝ Գիրվանայի հասնելու մասին:

Ըստ եգիպտական կրոնի՝ մահից հետո հանդերձյալ կյանքի աստված Անուբիսը՝ մարդու մարմնով և շնագայլի գլխով, կշռում էր մահացած մարդու սիրտը: Կշեռքի մի մտարին դրվում էր սիրտը, իսկ մյուս մտարին ճշմարտության և արդարության աստվածուհու՝ Մատայի փետուրը: Այս աստվածուհին պատկերվում էր կնոջ տեսքով՝ գլխին ամրացրած ճշմարտության փետուրը: Դրա համար էլ, այս հավատալիքի համաձայն, դիակը մումիա դարձնելու ընթացքում մարմնի մեջ պահպանվում էր նաև մարդու սիրտը: Եթե դատաստանի ժամանակ սիրտն ավելի էր կշռում, քան փետուրը, այդ դեպքում կոկորդիլոսի գլխով Ամատ հրեշը, որը նաև համարվում էր մեղքերի հատուցման աստվածուհի, հոշոտում էր սիրտը, և անձը մեռնում էր երկրորդ անգամ՝ անբողջապես ոչնչացվելով, անէանալով: Իսկ եթե կշեռքի մտարները հավասար էին կանգնում, անձը տարվում էր հանդերձյալ աշխարհի թագավոր Օսիրիսի մոտ և արժանանում էր երանելի կյանքի:

Հին հունական հավատալիքներում բարի գործերով ապրած մարդիկ գնում էին Էլիզիում կամ այլ անունով՝ Ելիսեյան դաշտեր, որտեղ հավերժ գարուն էր՝ արժանանալով երանելի հավիտենական կյանքի, իսկ չարագործ մարդիկ ընկնում էին տարտարոս հավիտենական տանջանքների համար:

Բահայիզմում (արաբերեն «բահա» բառից, նշանակում է փառք), որը շեշտում է մեկ Աստծո գոյության և ողջ մարդ-

կության հոգևոր միութեան գաղափարը, վերջին դատաստան է համարվում յուրաքանչյուր հազար տարին մեկ Աստծո կողմից ուղարկված մարգարեի հայտնվելը՝ երկրի վրա Աստծո թագավորությունը վերանորոգելու նպատակով:

Հինդուիզմում մահվան աստվածը դատում է մարդկանց՝ նրանց ապրած կյանքի և կատարած գործերի համաձայն, ըստ որի էլ՝ հոգիներն այլ մարդկանց կամ կենդանիների ու բույսերի մեջ են վերամարմնավորվում և կամ էլ ուղարկվում են տանջանքների հատուկ վայր: Ի վերջո, արժանավոր մարդն ազատվում է մահվան ու վերամարմնավորման շրջանից և մեկ դառնում աստծո հետ:

### **8. Ոչ ոք չգիտի, թե երբ է գալու Դատաստանի օրվա ժամանակը: Կա՞ն նշաններ, որ վերջին օրը մոտիկ է:**

Քրիստոս ասում է, որ այդ օրվա և ժամի մասին ոչ ոք չգիտի, ո՛չ հրեշտակները և ո՛չ էլ նույնիսկ Որդին, այլ միայն Հայրը (Մատթ. 24.36, Մարկ. 13.32): Բայց Քրիստոս երբեմն իրեն անգետ է ցույց տալիս մարդկանց օգտի համար: Օրինակ՝ Իրեն դիմողներին, ովքեր պնդում էին՝ Քո անունով մարգարեացանք, դևեր հանեցինք, զորավոր գործեր արեցինք, Քրիստոս ասում է, թե նրանց երբեք չի ճանաչել. չիմանալու այս խոսքով մերժում է նրանց (Մատթ. 7.22-23, Ղուկ. 13.25): Այդպես էլ վախճանաբանական դեպքերի հետ կապված այդ խոսքն է ասում, քանի որ մարդկանց համար օգտակար չէ իմանալ այդ օրվա և ժամանակի մասին:

Սակայն Քրիստոս որոշ նշաններ է տվել՝ վերջին ժամանակների մոտալուտ լինելը կանխատեսելու համար: Քրիստոս ասում է. «Բայց դուք այդ թզենուց սովորեցեք առակը. հենց որ նրա ոստերը կակղեն, և նրա վրա տերև դուրս գա, իմանում եք, որ ամառը մոտ է. նույնպես և դուք. երբ այս բոլորը կատարված տեսնեք, իմացեք, որ Նա մոտ է, դռների առջև» (Մատթ. 24.32-33, Մարկ. 13.29-29, Ղուկ. 21.29-31): Այդպես էլ, երբ տեսնենք աշխարհի վախճանին առնչվող որոշակի նշանները, կիմանանք, որ վախճանը մոտ է: Այդ նշանների մասին խոսք չկա Ավետարաններում, սակայն դրանց մասին պատմվում է առաքյալների գրություններում: Պողոս առաք-

յալն ասում է. «Թող ոչ ոք ձեզ չխաբի և ոչ մի ձևով. որովհետև այն օրը չի գալու, եթե նախ ապստամբությունը չգա, և չհայտնվի անօրենության մարդը՝ կորստյան որդին»: Խոսքն այստեղ նեռի՝ հակաքրիստոսի մասին է: Նեռը լինելու է մեծ կառավարիչ ու ղեկավար, ամբողջ աշխարհին ընդունելու է նրան: Նա իր իշխանությունը տարածելու է ողջ մարդկության վրա երեք և կես տարի կամ հազար երկու հարյուր վաթսուն օր, ինչպես նշված է Յայտնության մեջ (11.3, 12.6): Ապա նստելու է արդեն նորոգված Երուսաղեմի տաճարում՝ որպես Աստված, բայց մահ չճաշակած և կենդանության օրոք երկինք փոխադրված երկու մարգարեների՝ Ենովքի և Եղիայի քարոզչությամբ ցույց է տրվելու նեռի իշխանության չարից լինելը: Մարգարեները սպանվելու են և հարություն առնելու, այնուհետ աստվածային զորությամբ նեռը ոչնչացվելու է, և լինելու է Քրիստոսի երկրորդ, փառավոր գալուստը (Բ Թե-սաղ. 2.4-11, Յայտն. 11.3-14):

### **ՎԱԽ ԵՎ ԵՐԿՅՈՒՂ**

#### **1. Ի՞նչ է վախը, հիվանդություն, թե՞ հոգեվիճակ:**

Վախը նախ և առաջ զգացում է, որն առաջանում է վտանգի կամ սպառնալիքի առջև գտնվելիս, ինչպես նաև անժանոթ և տարօրինակ միջավայրում, իրավիճակներում լինելիս: Վախի հասկացությունն արտահայտելու համար գործածվում են տարբեր բառեր՝ ըստ վախի ուժգնության աստիճանի, ինչպես օրինակ՝ անհանգստություն, տագնապ, երկյուղ, վախ, սարսափ, ֆոբիա: Վախն առաջին հայացքից բացասական է թվում, սակայն այն նաև հանդես է գալիս իր դրական առումով, քանի որ օգնում է մարդուն ճանաչել վտանգները և զգուշանալ դրանցից, այսինքն՝ այն նաև ինքնապահպանության և ինքնապաշտպանության կարևոր ազդակներից մեկն է:

## **2. Վախը ծնվում է մարդու հետ: Ե՞րբ է մարդը վախեցնում:**

Վախը դասակարգում են երեք տարբեր խմբերի՝ բիոլոգիական կամ կենսաբանական, սոցիալական և էքզիստենցիալ կամ գոյաբանական: Էվոլյուցիոնիզմի տեսությունը հանգեցրել է նաև էվոլյուցիոնիզմի հոգեբանության ծագմանը, ըստ որի՝ կենսաբանական վախերը յուրահատուկ են մարդուն ի ծնե, բնագոյային սկզբնավորություն ունեն և ի հայտ են գալիս, երբ մարդուն ֆիզիկական վտանգ է սպառնում: Այդ վախով մարդն անմիջապես նահանջում է վտանգից, պահպանում իր գոյությունը և դրա շնորհիվ է, որ մարդ տեսակը կարողացել է գոյատևել ու բնական ընտրության միջոցով դառնալ բոլոր արարածներից ամենահարմարվածը իրեն շրջապատող կենսաբանական պայմաններին:

Սոցիալական վախերը կապված են հասարակության մեջ տարբեր իրողությունների հետ, ինչպես օրինակ՝ աշխատանքը կորցնելու, հեղինակությունից, հարգանքից զրկվելու և այլն: Սոցիալական վախերը կարող են լինել նաև բռնատիրական հասարակարգերում, երբ մարդիկ զգուշանում են իրենց կարծիքներն ազատ արտահայտել՝ վախենալով հասարակության մեջ դիրքը կորցնելուց, ինչպես նաև խիստ պատժի, անգամ մահապատժի ենթարկվելուց: Այս պարագայում, ըստ վերոնշյալ դասակարգման, սոցիալական վախը կապված է նաև կենսաբանական վախի հետ:

Էքզիստենցյալ վախն առնչվում է մահվան, գոյության շարունակման խնդիրներին: Էքզիստենցիալ վախի տեսակ է մահ երևույթից վախը, որը հատուկ է մարդուն: Այս տեսակի վախի հաղթահարմանը ձգտելու դրսևորում են նկատվում կրոնները, որոնք ուսուցանում են հավիտենական կյանքի, անդրաշխարհի իրողությունների մասին: Նման տեսակետով կրոնը մահվան հանդեպ վախը փոխարինել է մահից հետո հավիտենության մեջ պատահելիք իրողությունների հանդեպ վախով, երբ մարդիկ այս կյանքում ապրում են մահվան հանդեպ վախի հաղթահարումով՝ վախենալով հավիտենության մեջ դժոխքի դատապարտվելուց, հավերժական տանջանքներից և այլն: Սուրբ Ներսես Շնորհալու աղոթքներից մեկում

արտահայտվում է այս իրողությունը: Շնորհալի՜ն իր կազմած աղոթքում, դիմելով Տիրոջը, ասում է. «Բևեռի՜ր իմ հոգում մահվան սոսկալի օրը, գեհեմի երկյուղը»: Այստեղ վախը՝ երկյուղը դրսևորվում է հիմնականում գեհեմի՝ դժոխքի նկատմամբ:

### **3. Ո՞րն է վախի և երկյուղի տարբերությունը:**

Վախը և երկյուղը հաճախ գործածվում են որպես հոմանիշներ: Սակայն «երկյուղ» բառը նշանակում է նաև պատկառանք, երբ նման զգացման մեջ հարգանքի նշան կա այն անձի հանդեպ, ում նկատմամբ ծագում է զգացումը: Այսպես նաև երկյուղելով մեկից՝ ցանկանում ենք գործերով նրան չվշտացնել, այլ կատարել նրան հաճելի արարքներ: Կարելի է երկյուղ կոչել նաև փոքրիկ երեխաների հանդեպ վերաբերմունքը, երբ ծնողները կամ շրջապատի մարդիկ զգուշանում են երեխային վիշտ, տխրություն, նեղսրտություն պատճառող արարքներից, խոսքերից, որպեսզի չլինի թե փոքրիկին վշտացնեն: Նաև ծնողների հանդեպ երեխաների վերաբերմունքն է այսպիսին, երբ զավակները չցանկանալով ծնողներին վշտացնել, վարվում են ըստ նրանց կամքի և ծնողներին հաճելի վարմունք դրսևորում:

### **4. Կա վախի մի տեսակ, որն անձկություն ենք անվանում. որոշ հոգևորականների բնորոշմամբ՝ այն ծնվում է հավատքի պակասից: Ի՞նչ է դա և ինչպե՞ս է արտահայտվում:**

«Անձկություն» բառը Նոր Կտակարանում օգտագործված է երեք անգամ: Գործք առաքելոցում նշվում է, որ նավաբեկության ժամանակ նավի վրա գտնվողներն անձկությամբ ցանկանում էին, որպեսզի լույսը շուտ բացվի և մթության մեջ չկողմնորոշվելու պատճառով նավը խութերին չբախվի (27.29): Հռոմեացիներին ուղղված թղթում Պողոս առաքյալն ասում է, որ չարիք գործողներն անձկություն են ունենալու (2.9): Նույն թղթում նաև ասում է. «Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նքը, թե՞ անձկությունը, թե՞

հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞ վտանգները, թե՞ սուրը» (8.35): Այլ լեզուներով Աստվածաշնչերում Գործք առաքելոցի հիշյալ հատվածի «անձկություն» բառը թարգմանված է՝ «աղոթելով ցանկանում» էին, իսկ մյուս երկու տեղերում՝ վիշտ և նեղություն իմաստով է արտահայտված: «Անձուկ» նշանակում է նեղ: Այս բառը գործածվում է նաև նեղ ճանապարհի վերաբերյալ Քրիստոսի ուսուցման ավետարանական դրվագում (Մատթ. 7.14): Անձկությունը հոմանիշ է նեղսրտությանը, և երբ դրա հետ մեկտեղ նաև այլ բացասական զգացումներ հեռանում են հավատքի զորությունից, մարդը լցվում է Աստծո հանդեպ հույսով, վստահությամբ, հոգու ներդաշնակությամբ ու խաղաղությամբ: Նեղսրտություն լինում է հատկապես հոգսերի մասին անընդհատ մտորելուց: Այս վիճակը հոգևոր կյանքի մեծ փորձառություն ունեցողները կոչում են բազմահոգություն և խորհուրդ են տալիս հեռու մնալ դրանից:

Ճիշտ է, Քրիստոս հորդորեց ուտելու, խմելու և հագնելու մասին չմտահոգվել, սակայն չարգելեց դրանց մասին մտածելը: Քրիստոս Ինքը Կանայի հարսանիքում ջուրը գինի դարձրեց (Յովհ. 2.1-11), ապա և հացը բազմացրեց (Մատթ. 14.17-21, 15.32-38, Մարկ. 6.41-44, 8. 1 -10, Ղուկ. 9-13-17, Յովհ. 6.9-13)՝ մարդկանց խմելու և ուտելու մասին մտածելով, նաև Պողոս առաքյալը Տիմոթեոսից խնդրեց իրեն բերել իր վերարկուն, որ մոռացել էր հավատացյալներից մեկի տանը (Բ Տիմ. 4.13 ), քանի որ ցրտին վերարկուի կարիք էր զգում: Հոգսերի մասին մտածելը չէ, որ նեղսրտություն է բերում, այլ բազմահոգությունը, որն առկա բազում հոգսերի մասին միանգամից մտածելն է: Այսպիսի իրավիճակը ճնշում է մարդուն, տանում անգամ հուսահատության: Քրիստոս ասաց. «Օրվա հոգսը բավ է օրվա համար» (Մատթ. 6.34): Բազմահոգության վնասակար ազդեցությունից հեռու մնալու համար պետք է մտածել մոտակա ժամանակների անհրաժեշտ հոգսի մասին՝ թողնելով հեռավորը, մի հոգսը լուծել և այնուհետ անցնել հաջորդին: Այսպես կհաջողվի հույսը չկորցնել, Աստծո օգնությամբ դժվարությունները հաղթահարել և նեղսրտություն չունենալ:

**5. Իսկ ինչո՞ւ ենք ասում «աստվածավախ մարդ» կամ «աստվածավախ կին»: Մենք, ըստ էության, նկատի ունենք որևէ անձի հավատացյալ լինելը, բայց դա ի՞նչ կապ ունի վախի հետ:**

Հավատքն Աստծո հանդեպ զուգորդվում է երկյուղով, որը բացատրեցինք որպես պատկառելի և կամ մեծապես սիրելի մեկին չվշտացնելու, այլ նրան ուրախացնելու ձգտում և մղում: Աստծո հանդեպ այսպիսի երկյուղով լցված մարդուն անվանում ենք աստվածավախ: Նման վախը ծագում է ոչ թե սպառնալիքի կամ վտանգի կանխագգացումից, այլ սիրուց, որով հավատացյալը ջանում է որևէ քայլ չկատարել հակառակ Աստծո կամքին, ընթանալ Նրան հաճելի ճանապարհով, փոխաբերական իմաստով՝ ուրախացնելով Աստծուն, Նրան փառաբանելով իր գործերով: Ահա այս իմաստով է, որ խորապես հավատացյալ անձին անվանում ենք նաև աստվածավախ:

**6. Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ վախը: Ինչպե՞ս հաղթահարել այն:**

Վախը վտանգից զգուշացնելու դրական հատկությունից զատ բավականին բացասական կարող է լինել, երբ այն տևական է դառնում: Վախի շնորհիվ նահանջում ենք սպառնալիքի առջև, որպեսզի չվնասվենք: Բայց երբ այդ վախը տևական է դառնում, բերում է անգործության, երկչոտության, և վտանգի անհետանալուց հետո մարդը դադարում է վախի պատճառով ընդհատած իր քայլը կամ գործունեությունը կատարելուց: Ավետարաններից մենք կարող ենք հիշել Քրիստոսի և առաքյալների մասին պատմող այն դրվագը, երբ Քրիստոս, ծովի վրա քայլելով, իր աշակերտներին էր մոտենում (Մատթ. 14.26, Մարկ. 6.49, Հովհ. 6.19): Նախ՝ առաքյալները վախ են զգում, որովհետև անծանոթ իրավիճակի, տարօրինակ իրողության առջև էին գտնվում՝ կարծելով, թե իրենց մոտեցողն ուրվական է: Այնուհետ Պետրոս առաքյալը ցանկանում է Քրիստոսի պես քայլել ջրերի վրայով, բայց վախենում է և սկսում սուզվել: Քրիստոս հանդիմանում է՝ ասելով. «Թերահավատ, ինչո՞ւ երկմտեցիր» (Մատթ. 14.28-31):

Հովսեփը վախենում էր Սուրբ Հոգու ազդեցությամբ հղիացած Մարիամին իրեն կին առնել (Մատթ. 1.20): Սա սոցիալական վախի դրսևորումներից է, երբ մարդը վախենում է հասարակության կարծիքից կամ ավելի ճիշտ հասարակության մեջ իր դիրքի, հեղինակության կորստից: Հովսեփն ու Մարիամը մանուկ Հիսուսին Հերովդեսի կողմից սպառնացող վտանգից ազատելու համար փախան Եգիպտոս: Եվ երբ վերադարձան, ու Հովսեփն իմացավ, որ Հերովդեսի փոխարեն թագավորել է նրա որդի Արքեղայոսը, կրկին վախեցավ, որ նա նույնպես կարող է Հիսուս մանկանը վնաս հասցնել, դրա համար էլ նրանք գնացին և ապաստանեցին Նազարեթում (Մատթ. 2.14, 22-23):

Մենք տեսնում ենք, որ աստվածաշնչյան սրբերը ևս վախեցել են արտասովոր իրավիճակներում գտնվելիս կամ վտանգի մեջ լինելիս, սակայն սպառնալիքները հաղթահարելով կամ դրանց անցնելուց հետո շարունակել են իրենց գործունեությունը և առաքելությունը: Վախի հակառակն է համարվում համարձակությունը, որին անդրադառնալով՝ Արիստոտելն ասում է, որ համարձակությունը վախի բացակայությունը չէ, այլ դրա հաղթահարումը: Անտիկ փիլիսոփայության մեջ զգացումների երեք մակարդակ են պատկերացնում, որոնց ստորին և վերին կողմերը ծայրահեղություններ են, իսկ միջինները՝ ընդունելի, ինչպես որ համարձակության ծայրահեղ կողմը հանդգնությունն է, իսկ ստորին կողմը՝ վախկոտությունը: Սրանցում միջին տեղում է համարձակությունը, որը ճիշտ և ընդունելի է:

Հոգեբանության մեջ անհաղթահարելի վախերը ֆոբիաներ են համարվում, հունարեն «ֆոբոս՝ φόβος - վախ» բառից: Դրանց բուժման համար օգտագործվում է վարքային թերապիան կամ ճանաչողական՝ կոգնիտիվ վարքային թերապիան: Դրանով խնդիր ունեցող մարդուն տրվում են բացատրություններ իր հոգեվիճակի ու վախի առարկայի կամ երևույթի վերաբերյալ, և համապատասխան միջավայրում փորձ է արվում փոխել մարդու ընկալումը և վերացնել ֆոբիայի զգացումը: Նմանատիպ վախերը վերացնելու համար քրիստոնեական տեսակետով առավել շեշտվում է Աստծո նախախնամությունն ու սերը մարդու հանդեպ, երկնայինի

զորակցությունը և դրա շնորհիվ մարդու վախի վերացումը, ինչպես նաև սաղմոսների ընթերցանությունը, որոնք խաղաղեցնում են հոգեվիճակը, հատկապես սաղմոսներից՝ «Տերն իմ հովիվն է» բառերով սկսվողը. «Տերն իմ հովիվն է, և ինձ ոչինչ չի պակասի: Դալար վայրերում եմ ինձ բնակեցրեց և հանդարտ ջրերի մոտ ինձ սնուցեց... Եթե նույնիսկ անցնեն մահվան ստվերների միջով, չեն վախենա չարից, քանզի Դու, Տեր, ինձ հետ ես» (Սաղմ. 22.1-5):

## **ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍԻՐՈ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀՈՎՅԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԹՂԹՈՒՄ**

### **1. Ինչպե՞ս է Հովհաննես առաքյալն ընկալում քրիստոնեական սերը:**

Հովհաննես առաքյալը հեղինակել է Ավետարանը, առաքելական երեք թղթեր և Հայտնությունը, որը հիմնականում պատմում է աշխարհի վախճանի դեպքերի մասին: Հովհաննես առաքյալը կոչվում է սիրո ավետարանիչ, և «սեր» հասկացությանը կամ սիրո քրիստոնեական ընկալմանը հանգամանորեն անդրադարձել է հատկապես իր առաքելական առաջին թղթում: Նրա առաջին թղթի ընթերցանությունից պարզ է դառնում, որ առաքյալը «սեր» հասկացությամբ նկատի ունի ոչ թե միջանձնական հարաբերություններում առկա զգացմունքը, ոչ թե տարբեր սեռերի կողմից միմյանց հանդեպ զգացական դրսևորումները, այլ դրանցից ավելի վեր եղող քրիստոնեական սերը: Տեսնում ենք, որ առաքյալի ընկալմամբ քրիստոնեական սերն առնչվում է ոչ թե զգացական ոլորտին, այլ ավելի վեր է դրանից և առնչվում է հոգևոր ոլորտին կամ սկզբնավորվում հոգևոր ոլորտից:

### **2. Ինչպե՞ս է Հովհաննես առաքյալը բացատրում քրիստոնեական սերը:**

Սիրո ընկալումը բացատրելու համար առաքյալը բերում է զուգորդություններ ու հակադրություններ: Կարող ենք տեսնել համարժեք երևույթների կամ իրողությունների համադրություններ ու հակադրություններ, ինչպես նաև ոչ համար-

ժեք իրողությունների հակադրություններ, ինչպես օրինակ՝ լույս-խավար, սեր-ատելություն: Լույսը և խավարը համարժեք են այն առումով, որ տեսանելի կամ տեսանելիքին առնչվող երևույթ են, իսկ սերը և ատելությունն արդեն ոչ տեսանելի իրողություններ են: Ոչ համարժեք հակադրություն է, երբ հակադրվում են լույսը և ատելությունը՝ մեկը տեսանելի, մյուսը ոչ տեսանելի և զգացմունքային ոլորտին վերաբերող: Առաքյալն ասում է. «Աստված լույս է և Նրա մեջ խավար չկա, բոլորովին չկա: Եթե ասում ենք, որ հաղորդության մեջ ենք Նրա հետ, բայց խավարի մեջ ենք ընթանում, ուրեմն ստում ենք և ճշմարտությունը չենք կատարում» (1.5-6): Այստեղ տեսնում ենք լույս և խավար համարժեքների հակադրությունը: Առաքյալը նաև նշում է. «Եթե մեկն ասում է, որ լույսի մեջ է, բայց ասում է իր եղբորը, սուտ է, և դեռևս խավարի մեջ է» (2.9): Այստեղ զուգորդված են ոչ համարժեք լույսը և ատելությունը, իսկ խավարը նշվում է որպես սիրո բացակայություն կամ ատելության ներկայություն:

### **3. Որն է առաքյալի՝ «Աստված լույս է», «Աստված սեր է» խոսքի իմաստը:**

Աստված լույս է (1.5), Աստված սեր է (4.8, 16): Հովհաննես առաքյալի այս հայտնի արտահայտությունների կողքին կա նաև այս պատկերացումը՝ մարդը որպես լույս և մարդը որպես սեր: Հովհաննեսն իր Ավետարանում մեջբերում է Քրիստոսի խոսքը. «Ես եմ աշխարհի լույսը» (Հովհ. 8.12): Բայց Քրիստոս նաև ասում է իր առաքյալներին, քրիստոնյաներին. «Դուք եք աշխարհի լույսը» (Մատթ. 5.14): Ուրեմն, մի տեղ՝ Ես եմ լույսը աշխարհի, մեկ այլ տեղ՝ դուք եք լույսը աշխարհի: Քրիստոսի լույս լինելու այս խոսքերն ապացույցներից են Տիրոջ աստվածության՝ առաքելական թղթի արտահայտության համեմատությամբ, որտեղ Աստված ներկայացվում է որպես լույս: Քրիստոս լույս և Աստված լույս արտահայտությունները բերում են լույսի հատկությունն ունեցողի աստվածության գաղափարը: Առաքյալն Աստծուն ներկայացնում է որպես լույս և սեր ըստ էության, իսկ մարդն այդպիսին է ոչ թե ըստ էության, այլ ըստ փոխառության: Երբ հաղորդվում ենք

լույսի հետ, լուսավորվում ենք, երբ հաղորդվում ենք սիրո հետ, լցվում ենք սիրով: Առաքելական թղթի խոսքը՝ «Եթե ասենք, թե հաղորդության մեջ ենք Նրա հետ, բայց քայլենք խավարի մեջ, ստում ենք և ճշմարտությունը չենք կատարում» (1.6), ցույց է տալիս, որ Հովհաննես առաքյալը հասկանում է Աստծո հետ կենդանի հաղորդակցությամբ, հոգևոր փորձառությամբ այդ լույսի և դրա հատկությունների ձեռքբերումը, շնորհների ստացումը:

#### **4. Պե՞տք է քրիստոնյան սիրի այս աշխարհը և բոլոր մարդկանց:**

Հովհաննես առաքյալն իր թղթում տալիս է նաև աշխարհի հանդեպ սիրո դրսևորման պատկերացումը: Պե՞տք է սիրել աշխարհը, թե՞ ոչ: Առաքելական թղթում պատասխանը միանշանակ է և ժխտական՝ աշխարհը սիրել պետք չէ: Առաքյալն ասում է. «Մի՛ սիրեք աշխարհը, ոչ էլ՝ ինչ-որ աշխարհի մեջ կա: Եթե մեկը սիրում է աշխարհը, Հոր սերը նրա մեջ չէ» (2.15-16): Այս ասելով՝ առաքյալը կարծես հակասում է ինքն իրեն: Հովհաննես առաքյալը, ով նույն ինքը Հովհաննես Ավետարանիչն է, իր Ավետարանում նշյալ խոսքի բոլորովին հակառակն է ասում. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (3.16): Մի տեղ ասում է՝ Աստված այնքան սիրեց աշխարհը, մեկ այլ տեղ՝ մի՛ սիրեք աշխարհը, մի տեղ աշխարհի հանդեպ սերը ներկայանում է դրական իմաստով, մյուս տեղում՝ բացասական: Պետք է իմանալ, որ առաքյալի բառապաշարում «աշխարհը» տարբեր իմաստներ ունի: Այն նախ նշանակում է մարդկությունը, առկա դրական երևույթները, բայց նաև նշանակում է աշխարհի արատավոր իրողություններն ու արատները:

#### **5. Ո՞րն է եղբոր հանդեպ սերը, և ո՞վ է մեր եղբայրը:**

Աշխարհի հանդեպ սիրո դրսևորման բացատրությունից հետո առաքյալն ավելի հանգամանալից անդրադառնում է

եղբայրների հանդեպ սիրո գաղափարին: Հատկանշական է, որ նա եղբայրների հանդեպ սիրո բացատրությունն սկսում է սպանության պատմությամբ՝ հիշեցնելով Կայենի կողմից Աբելի սպանության մասին: Առաքյալն ասում է. «Այս է այն պատվիրանը, որ լսեցիք ի սկզբանե՝ որ սիրենք միմյանց. ոչ ինչպես Կայենը, որ չարից էր և սպանեց իր եղբորը, որովհետև իր գործերը չար էին, իսկ եղբոր գործերը՝ բարի» (3.11-12): Այնուհետև առաքյալը շարունակում է. «Մենք գիտենք, որ մահվանից դեպի կյանք անցանք, քանզի սիրում ենք մեր եղբայրներին: Իսկ ով չի սիրում եղբորը, մնում է մահվան մեջ» (3.14): Ինչի՞ համար է առաքյալը եղբայրների հանդեպ սիրո բացատրությունն սկսում եղբայրասպանության պատմությամբ: Ո՞չ արդյոք նրա համար, որ ցույց տա, թե քրիստոնեական սերը տարածվում է անգամ նրանց վրա, ովքեր նույնիսկ մեր հանդեպ չարիք են գործում: Բայց արդյո՞ք այդպիսի մեկը կարող է եղբայր համարվել: Առաքյալը, եղբոր հանդեպ սիրո մասին խոսելով, չի պարզաբանում «եղբայր» հասկացությունը, քանի որ հատկապես վաղ շրջանի քրիստոնյաները պետք է որ քաջ ծանոթ լինեին Քրիստոսի ուսմունքին, ով բացահայտեց «եղբայր» հասկացության քրիստոնեական ընկալումը: Քրիստոս ընդլայնեց այս հասկացությունը՝ դուրս բերելով ընտանեկան, արյունակցական սահմաններից, ազգային և նույնիսկ կրոնական պատկանելությունից: Քրիստոնեական ընկալումով պետք է սիրել ոչ միայն նրան, ով արժանի է սիրվելու, այլ իրական քրիստոնյան պետք է սիրի նրան, ուն վրա կարող է տարածել իր սերը, գթությունն ու հոգածությունը:

Օրենագետներից մեկը հարցնում է Քրիստոսին. «Վարդապետ, ի՞նչ պետք է անեն, որ հավիտենական կյանքը ժառանգեն»: Եվ նա նրան ասաց. «Օրենքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս են ընթերցում»: Սա պատասխանեց և ասաց. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով և քո ամբողջ զորությամբ և քո ամբողջ մտքով. և պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը»: Եվ Հիսուս նրան ասաց. «Ճիշտ պատասխան տվեցիր, այդ արա՛ և կփրկվես» (Ղուկ. 10.25-28): Ղուկաս Ավետարանիչը, ով պատմում է այս մասին, նշում է որ այդ մարդը, կանենալով ինքն իրեն արդարացնել, ասաց

Հիսուսին. «Իսկ ո՞վ է իմ ընկերը»: Եվ Քրիստոս նրան պատասխանելու համար անմիջապես պատմեց Բարի սամարացու առակը (29-37): Մի մարդ Երուսաղեմից Երիթով էր իջնում: Ճանապարհին ավազակները հարձակվում են նրա վրա, կողոպտում, վիրավորում: Մարդն այդպես ընկած է մնում գետնին: Կողքով անցնում է քահանան, բայց անտարբերությամբ հեռանում է: Քահանան, եթե նույնիսկ գթասրտություն չունենար, ապա իր կոչման բերումով պարտականություն ուներ գթություն և օգնություն ցուցաբերելու: Ապա գալիս է դևտացին՝ տաճարի սպասավորը, ով նույնպես հեռանում առանց օգնելու: Հին Կտակարանում հրեաների կողմից ոսկե հորթի դատապարտելի պաշտամունքից հետո դևտացիները, ովքեր Մովսես մարգարեին օգնեցին արմատախիլ անել նոր ծագած կռապաշտությունը, Մովսեսի կողմից կարգվեցին տաճարին սպասավորության համար (Ելք 32.20, 25-29, Թվ. 3.12): Եվ ահա գալիս է սամարացին: Քրիստոս պատահական չի ընտրել սամարացու կերպարը: Սամարիան Եփրեմի ցեղին բաժին ընկած տարածքն էր: Հրեաների բաբելոնյան գերությունից հետո հակասություն էր առաջ եկել հրեաների և սամարացիների միջև, որովհետև սամարացիներն ընդունում էին միայն Մովսեսի հնգամատյանը և ճիշտ համարում, որ Աստծո պաշտամունքը, զոհաբերությունները լինեին ոչ թե Երուսաղեմում, որը հետո կարգել էր Դավիթ թագավորը, այլ Գարիզին լեռան վրա, ինչպես նախապես սահմանել էր Մովսեսը (Բ Օր. 11.29, Հեսու 8.33, Հովի. 4.20): Սամարացիներն արհամարվում էին հրեաների կողմից, և հրեաները նրանց հետ հարաբերություններ չէին պահում: Եվ այս սամարացին օգնություն է ցույց տալիս, խնամք է ցուցաբերում մի մարդու հանդեպ, ով հրեա էր, քանի որ առակում ասվում է, թե նա Երուսաղեմից էր դուրս եկել և իր ճանապարհը սկսել: Առակը պատմելուց հետո Քրիստոս հարցնում է, թե ո՞վ է ընկերը, մերձավորը, և օրենսգետը պատասխանում է. «Նա, ով նրան բարիք արեց» (Ղուկ. 36-37): Սակայն քրիստոնեական տեսանկյունից երկուսն էլ օրինակ են ընկերոջ, մերձավորի: Մեզ ընկեր պետք է համարենք ոչ միայն նրան, ով մեզ բարիք է անում, այլև նրան, ում մենք կարող ենք բարիք գործել: Հետևաբար, պետք է սիրել ոչ միայն նրան, ով արժանի է

սիրվելու, այլ նաև բոլոր նրանց, որոնց վրա կարող ենք տարածել սերը, գթասրտությունը, բարեգործությունը:

**6. Ինչպե՞ս հասկանալ եղբայրների համար կյանքը տալու առաքելական խոսքը:**

«Պարտավոր ենք մեր եղբայրների համար տալ մեր կյանքը» (3.16),- ասում է Հովհաննես առաքյալը: Սակայն այս խոսքը կարծես թե հակասության մեջ է Քրիստոսի ուսուցման հետ: Քրիստոս ասում է. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությամբ: Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. 22.37-39, Մարկ. 12.30-31, Ղուկ. 10.27): Հետևաբար, սահման դրվեց կամ չափը ցույց տրվեց Աստծուն սիրելու և ընկերոջը սիրելու: Ընկերոջը չենք կարող սիրել ամբողջ մտքով, զորությամբ, որովհետև այդպիսի սերը վերապահված է Աստծուն, իսկ ընկերոջ հանդեպ սիրո սահմանն անձի՝ իր հանդեպ սիրո չափն է: Եթե հակառակ կերպ ենք վարվում, մեկ ուրիշին սիրում ենք անձից ավելի՝ այն սիրով, որ վերապահված է Աստծուն, ուրեմն այդ մարդը մեզ համար վերածվում է Աստծո, և քրիստոնյաներից վերածվում ենք կռապաշտների, որովհետև աստվածացնում, կուռքի պաշտամունքի ենք հասցնում ինչ որ մեկի հանդեպ սերը:

Կյանքը եղբոր համար տալու պատվիրանն առաքյալը բացատրում է քրիստոսանմանությամբ, ինչպես որ Քրիստոս իր կյանքը տվեց մեզ համար, այնպես և մենք, անհրաժեշտության դեպքում, պետք է մեր կյանքը տանք մեր սիրելիների համար: Այս սկզբունքն է գործում նաև պատերազմների ժամանակ, երբ քրիստոնյաները ելնում են պատերազմելու: Այստեղ ևս վարվում են սիրո սկզբունքով, որովհետև քրիստոնյան ելնում է պատերազմի ոչ թե ինչ-որ բանի դեմ, այլ հանուն ինչ-որ բանի, այսինքն՝ ինչ-որ վեհագույն բանի կամ մեկի հանդեպ սիրուց ելնում է պաշտպանելու այն, ինչ սիրում է: Այսպես է նաև Եկեղեցու կողմից բացատրվում քրիստոնյաների պատերազմելը, որն իրագործումն է Քրիստոս խոսքի, թե՛ «ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. 15.13):

Պողոս առաքյալը ևս Եփեսացիների թղթում՝ «Ընտանեկան նոր հարաբերություններ» ենթավերնագրի ներքո, քրիստոսանմանության օրինակով է բացատրում կյանքը մեկի համար տալու քրիստոնեական պատրաստակամությունը՝ խոսելով կնոջ և ամուսնու հարաբերությունների մասին: Առաքյալն ասում է. «Ինչպես Եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին, նույնպես և կանայք թող հնազանդվեն իրենց մարդկանց ամեն ինչում: Մարդիկ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց Եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար» (24-25): Ուրեմն, այլ է սիրո չափը ընկերոջ հանդեպ և այլ է Աստծո հանդեպ, և ընկերների կամ սիրելիների համար կյանքը տալը ոչ թե սիրո չափի գերազանցումն է, ինչ-որ մեկի աստվածացումը, այլ քրիստոսանմանության դրսևորում:

### **ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ԻՄԱՍՏԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ**

#### **1. Ի՞նչն է համարվում փորձություն:**

Փորձությունը կարող ենք սահմանել աշխարհիկ և կրոնական ընկալումներով: Աշխարհիկ ընկալմամբ փորձությունը որևէ մեկի կամ խմբի կողմից իրականացվող գործողությունն է, որի նպատակն է խաթարել անձի, խմբի կամ ժողովուրդների կյանքը, մատնել նեղությունների ու դժվարությունների: Կրոնական ընկալմամբ փորձությունը գալիս է սատանայից և նպատակ ունի դժվարություններ, նեղություններ պատճառելով՝ մարդուն հեռացնել Աստուծուց, հոգևոր բարիքներից: Այսպիսով, աշխարհիկ ընկալմամբ փորձությունը գալիս է մարդուց կամ մարդկանցից՝ երկրային բարօրությունից զրկելով, իսկ կրոնական հասկացողությամբ այն գալիս է ավելի բարձրից՝ չարից, սատանայից, դևերից, և նպատակ ունի երկրային կյանքում չարչարանքների մատնելով՝ շեղել առ Աստված հավատքից, զրկել հոգևոր և հավիտենական պարգևներից: Պողոս առաքյալն ասում է, որ մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այսինքն՝ մարդկանց հետ չէ պայքարը, այլ երկնքի տակ բնակվող չար ուժերի հետ (Եփ. 6.12): Առաքյալը բացատրում է, որ թեկուզ հաճախ մարդկանցով են գալիս

փորձությունները, սակայն իրականում չար ուժերն են, որ գործում են մարդկանց միջոցով:

**2. Ծանր ժամանակներում բախվելով մեծ դժվարությունների՝ շատերը կոտրվում են, կորցնում հավատը: Որո՞նք է փորձության իմաստն ու նշանակությունը:**

Հակոբոս առաքյալն իր թղթում ասում է. «Եղբայրներ, ամենայն ուրախության արժանի՝ համարեցեք, երբ տեսակ-տեսակ փորձությունների մեջ ընկնեք» (1.2): Առաքյալը նաև սովորեցնում է, որ Աստված չարից չի փորձվում և Ինքն էլ չի փորձում ոչ ոքի (1.13): Ուրեմն, Աստված Ինքն ուղղակիորեն փորձություններ չի բերում, բայց նախախնամությամբ թույլ է տալիս, որ մարդն ընկնի փորձության մեջ՝ իր հետագա կյանքի օգտի համար: Աստվածաշնչից՝ Հին և Նոր Կտակարաններից կարող ենք տեսնել, որ չարն իշխանություն չունի անմիջականորեն վնասելու մարդուն փորձություններով, և առանց Աստծո թույլտվության փորձություններ չեն կարող լինել: Հին Կտակարանում Հոբի գրքից տեղեկանում ենք, որ նրան փորձելու համար սատանան թույլտվություն է ստանում Աստծուց (1.12), իսկ Նոր Կտակարանում գերգեսացի դիվախարներին տանջող չար ոգիները Քրիստոսից են թույլտվություն խնդրում և հնարավորություն ստանում խոզերի մեջ մտնելու համար (Մատթ. 8.31-32, Մարկ. 5.10-13, Ղուկ. 8.29, 32-33): Ծիշտ է, որ փորձությունը կարող է նաև մարդու մահվան պատճառ դառնալ, սակայն Աստված թույլ է տալիս, որ բացառիկ դեպքերում դա պատահի մարդու հավիտենական բարիքի համար: Բեթղեհեմի մանուկների կոտորածին անդրադառնալով՝ Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, որ Աստված թույլ չէր տա նրանց մեռնելը, եթե իր ամենագիտությամբ իմանար, որ նրանք երկրային կյանքում նշանակալի գործեր կանեին, այլ գուցե և մեղավոր ընթացքով գրկվեին հավիտենական կյանքի պարգևից: Դրա համար էլ Աստված թույլ տվեց, որ նրանք այդքան շուտ երկրային, ժամանակավոր կյանքից անցնեն դեպի հավիտենություն: Նաև Քրիստոս երիտասարդ հասակում մեռավ և Նրա մահը, զոհագործությունը փրկություն եղավ ողջ մարդկության համար:

Բայց երբեմն տեսնում ենք, որ մեղավոր ու անարժան մարդիկ երկար են ապրում: Այսպես, Վրթանես Կաթողիկոսի որդիները՝ Պապը և Աթանազիները, մեղսալի կյանք էին վարում, և Կաթողիկոսը, ցավով տեսնելով իր որդիների անբարո ընթացքը, նույնիսկ նախընտրում էր, որ ընդհանրապես որդիներ չունենար: Բայց Աստված նրան պատասխանում է, որ Աթանազիների զավակը մեծ մարդ է դառնալու և անգամ լինելու հավատի սյունը Հայ Եկեղեցու: Աթանազիների որդին Ներսես Մեծ Կաթողիկոսն էր, ով մեր եկեղեցական ավանդության մեջ պատվվում է անգամ «Լուսավորիչ» անունով՝ կոչվելով լուսավորիչ սրտերի: Ներսես Մեծ Կաթողիկոսն իր առաքելությամբ նորովի պայծառացրեց հայոց հավատքն ու մեր Սուրբ Եկեղեցին: Ուրեմն, երբեմն նաև երեխաների պատճառով ծնողները խստորեն չեն պատժվում, որովհետև չար ծնողներից կարող են նաև հիանալի զավակներ ծնվել և բազմաթիվ մարդկանց մեծ ծառայություն մատուցել: Փորձություններն Աստծո կողմից թույլ են տրվում միայն մեկ պատճառով, որպեսզի Աստծուց հեռացած մարդը վերստին դեպի Աստված դառնա և հեռանա մեղավոր ճանապահներից: Դրա համար էլ ինչով որ մեղանչում ենք, Աստված հաճախ դրանով էլ պատժում է: Եթե մարդը մեղանչում է աչքերով, տրվում է աչքերի հիվանդություն, եթե մտքով՝ մտահոգություններ և այլն: Հետևաբար, փորձությունը թույլ է տրվում, որպեսզի մարդը գիտակցի իր սխալ ընթացքը կամ զգուշանա առավել մեծ վտանգից և դեպի Աստված դառնա:

**3. Բոլոր մարդիկ էլ փորձությունների ենթարկվում են տարբեր պատճառներով՝ տնտեսական խնդիրներ, վատառողջություն, գայթակղություն, հալածանք կամ սխալ արարք գործելու դրդում և այլն: Անկախ պատճառներից, դրանք մեծ անհանգստություն են բերում: Ինչպե՞ս կարող ենք հաղթանակած դուրս գալ փորձություններից կամ դիմագրավել դրանք:**

Փորձություններից կարող ենք հաղթանակած դուրս գալ՝ ամուր պահելով հավատքը և հիշելով Աստծո խոսքերն ու պատվիրանները: Քրիստոսի փորձությունների պատմությունից տեսնում ենք, որ սատանան ցանկանում էր նրան շեղել՝

անգամ Սուրբ Գրքից վկայակոչումներ անելով: Այսպես են նաև աղանդավորները, ովքեր նույն Սուրբ Գրքի խոսքերն օգտագործում են մարդկանց ճշմարիտ հավատքից շեղելու և Եկեղեցուց հեռացնելու համար: Սատանան Քրիստոսին ասաց. «Եթե Աստծու Որդին ես, քեզ այստեղից ցած գցիր, որովհետև գրված է՝ Իր հրեշտակներին պատվիրված է քո մասին, և ձեռքերի վրա պիտի վերցնեն քեզ, որպեսզի երբեք քո ոտքը քարին չխփես» (Մատթ. 4.5-6, Ղուկ. 4.9-11): Քրիստոս հակադարձեց՝ նույնպես Աստվածաշնչի խոսքերը վկայակոչելով. «Գրված է՝ միայն հացով չի ապրի մարդ, այլ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից», «գրված է՝ քո Տեր Աստծուն պիտի չփորձես», «գրված է՝ պիտի երկրպագես քո Տեր Աստծուն և միայն Նրան պիտի պաշտես» (Մատթ. 4.4, 7, 10 Ղուկ. 4.4, 8, 12): Թեև Ավետարանիչը նշում է, որ Քրիստոս փորձությունների է ենթարկվել քառասուն օրերի ընթացքում (Մարկ. 1.13), սակայն Ավետարաններում ներկայացված են հիմնականում երեք փորձությունները, որոնցից մարդիկ առավել հաճախ են պարտվում՝ մարմնամոլության, շահամոլության և փառամոլության կրքերը: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը բացատրում է. «Սատանայի երեք փորձությունները նպատակ ունեցան փորձելու մարմնամոլության, շահամոլության և փառամոլության կրքերը: Այս բառերն ենք օգտագործում և չենք ասում՝ մարմնասիրություն, շահասիրություն և փառասիրություն, որովհետև թե՛ մարմնի, թե՛ շահի և թե՛ փառքի օրինավոր սեր կա, որը երբեք մոլի կիրք չէ և մարդուն ուղիղ ճանապարհից չի շեղում»: Եվ Քրիստոս ևս ցույց տվեց, որ դրանց դեմ պետք է պայքարել հավատքով, Աստծո խոսքը հիշելով և դրանով առաջնորդվելով:

Քրիստոսի և Յոթի պատմություններից տեսնում ենք, որ փորձությունների ենթարկվում են ոչ միայն մեղավորները, այլև արդար ու սրբակենցաղ մարդիկ, որպեսզի նրանց համբերատարության ու հավատքի օրինակը ոգեշնչող լինի մյուսների համար: Միշտ չէ, որ նեղությունները մարդու մեղավոր լինելն են ցույց տալիս: Հիշենք աղքատ Ղազարոսին, ով մեծ նեղությունների մեջ էր, բայց ապրեց՝ հավատքը հաստատուն պահելով և հավիտենական երանելի կյանքին արժանանալով (Ղուկ. 16.19-22):

Տարածված սխալ կարծիք կա, որ վշտերն ու նեղություններն Աստված է ուղղակիորեն պատճառում մարդկանց, և շատերը մտածում են՝ եթե մեղավոր եմ, ուրեմն պիտի չարչարվեմ, և եթե չարչարվում եմ, ուրեմն մեղավոր եմ: Այսպես նաև արևմտյան երկրներում, ի մասնավորի ամերիկյան բողոքական քարոզիչների կողմից քարոզվում է բարեկեցության Ավետարանը, այն բացատրությամբ, որ հոգսերից ու կարիքներից զերծ լինելը, նյութական բարօրություն ունենալը նշանակում է, որ այդ վիճակի մեջ գտնվող մարդն ընդունելի է Աստծո կողմից և իր նյութական ապահովությունը տրվել է որպես պարգև բարեպաշտ կյանքի: Մինչդեռ, ըստ այդ քարոզիչների, զրկանքների, դժվարությունների մեջ լինելը նշանակում է, որ մարդը հաճելի չէ Աստծուն կամ ապրում է մեղսալի կենսակերպով: Սակայն Քրիստոս մեծապես ցավում էր՝ տեսնելով մարդկանց նեղությունները, հիվանդությունները, դժբախտություններն ու մահը, ինչը ցույց է տալիս, որ ոչ թե Քրիստոսն էր դրանք մարդկանց պատճառում, այլ ընդհակառակը՝ Տերը ցանկանում էր այդ ամենից ազատել մարդկանց: Մենք տեսնում ենք Քրիստոսին մարդկանց բուժելիս, նեղության մեջ գտնվողներին մխիթարելիս, քաղցածներին կերակրելիս, մահացածների համար վշտանալիս, մեռած Ղազարոսի համար անգամ արտասվելիս: Քրիստոս չի ուզում, որ մարդկանց մեջ այս բոլոր նեղությունները լինեն և Նա ծառայում էր մարդկանց՝ հուսահատությունից ու դժվարություններից վեր հանելու համար: Եվ թեկուզ փորձությունները տրվում են մարդու օգտի համար՝ առ Աստված դառնալու, բայց նաև տրվում են հետագայի ավելի մեծ փորձանքներից ազատվելու համար: Փորձությունները հիմնականում չարի հասցրած վնասներն են, որոնցից Աստված ուզում է ազատել բոլոր մարդկանց: Յետևաբար, պետք է պայքարել, ըստ Պողոս առաքյալի՝ մղել հավատքի բարի պատերազմը, պահել հավատքը (Բ Տիմ. 4.7), Աստծո օգնությունը խնդրել և առաջնորդվել Աստծո խոսքով՝ փորձությունները հաղթահարելու համար:

#### **4. Հնարավոր է պաշտպանվել ու խուսափել փորձություններից:**

Աստծո կամքի կատարումը հեռացնում է այն փորձությունները, որոնք կարող էին լինել Աստծո թույլտվությամբ՝ աստվածահաճո կյանքով ապրելու համար իբրև խրատ: Սակայն չարը մշտապես հարձակվում է մարդկանց, հատկապես բարեպաշտ, հավատավոր կյանքով ապրողների վրա՝ ցանկանալով, որ մարդիկ շեղվեն հավատքից, հոգևոր օգուտներ չստանան և դժոխքի դատապարտվեն: Պողոս առաքյալը հավատացյալներին հորդորում է հազնել հոգևոր սպառազինությունը (Եփ. 6.11)՝ ցույց տալով, որ մենք միշտ պատերազմի մեջ ենք գտնվում չարի հետ և պետք է զինվենք հավատքի զենքերով՝ չարին պարտության մատնելու համար: Քանի դեռ ապրում ենք երկրային կյանքում, չարի փորձությունները միշտ հետևելու են մեզ, և մենք պետք է աչալուրջ լինենք: Այդ փորձությունները գալիս են առավելաբար մեղսալի մտքերի տեսքով, և Քրիստոս նույնպես խոսելով շնության մասին՝ սովորեցրեց, որ մեղքերը սկիզբ են առնում ոչ թե արարքներից, այլ մտքերից (Մատթ. 5.27-28): Իհարկե, մտքերը կարող են նաև մարդունը լինել, եթե նա իր համար վճռել է ապրել մեղսալի կենսակերպով, սակայն մեծ մասամբ վատ մտքերը եկեղեցական հեղինակների մոտ կոչվում են եկամուտ մտքեր, այսինքն՝ դրսից եկած և մարդու մտածողության մեջ ներթափանցած մտքեր, որոնք փորձում են մարդուն ներքաշել վատ արարքների մեջ:

Հավատացյալները հաճախ ընկճվում ու սրտնեղում են, որ իրենք ապրում են բարեպաշտորեն, սակայն ոչ պատշաճ, նաև անբարո, չար մտքեր են ունենում: Պետք է իմանալ, որ այդ մտքերը հաճախ մարդուն չեն պատկանում և դրանք գալիս են չարի կողմից: Հետևաբար, պետք չէ սրտնեղել, այլ վճռականությամբ անմիջապես մերժել այդ մտքերը և առաջնորդվել աստվածային պատվիրաններով: Այլապես նման մտքերն ընդունելը և դրանց համաձայնվելը վատ հետևանքների կարող է բերել: Ուրեմն, այսպիսի և այլ փորձություններ՝ չարի հարձակումներ միշտ լինելու են, և պետք է զինվենք հավատքի սպառազինությամբ այս պատերազմում հաղթելու

համար: Սակայն Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, որ նաև մարդիկ են իրենք իրենց փորձությունների մատնում: Ոսկեբերանի ցույց տված մի օրինակով՝ նրանք, ովքեր սիրում են գեղեցիկ դեմքերի նայել, հաճախ իրենք են իրենց մեջ կրքի կրակ բորբոքում և դրանից այրվում: Այսպիսով, պետք է պայքարել չարի հաճախակի փորձությունների դեմ և անձնապես փորձությունների պատճառ չդառնալ:

#### **5. Ինչպե՞ս է պետք ճիշտ վերաբերմունք ձևավորել փորձությունների հանդեպ:**

Փորձությունների մեջ մարդը հաճախ դժգոհում է ոչ թե չարից, այլ Աստծուց: Դեռ ավելին, մարդն սկսում է մեղադրել Աստծուն, որ թույլ է տվել իր հետ փորձության պատահելը: Մարդը չի անդրադառնում, որ այդ փորձությունը կարող է լինել նաև իր ապրած կյանքի, արարքների, մտքերի հետևանքը, կարող է չարի հարձակում լինել և այս ամենն անտեսելով՝ ելնում է Աստծո դեմ իր մեղադրանքներով: Սա մարդուն բնորոշ է. Հոբի դաժան փորձությունների մեջ նրա կինն ամուսնուն ասում էր, որ Աստծուն մեղադրի, Նրան վատաբանի և հանգստանա: Բայց Հոբը մինչև վերջ անգամ խոսքով չմեղանչեց Աստծո դեմ, այլ միայն բացատրություններ էր խնդրում իր հետ պատահածի համար: Ահա Հոբի գրքից կնոջ և ամուսնու երկխոսության այդ հատվածը. ««Մինչև ե՞րբ, դիմանալով, պիտի ասես, որ համբերելու ես դեռ մի որոշ ժամանակ՝ փրկության հույս ակնկալելով: Ահա ջնջված է հիշատակդ երկրի երեսից, ոչնչացված են տղաներդ ու աղջիկներդ՝ իմ որովայնի ծնունդները, որոնց ես իզուր վաստակեցի տառապանքով... Արդ, մի խո՛սք ասա Տիրոջն ու մեռի՛ր»: Եվ Հոբը, նրան նայելով, ասաց. «Խոսեցիր ինչպես մի անզգամ կին. եթե Տիրոջ ձեռքից բարիքներն ընդունեցինք, չարիքների՞ն չհամբերե՞նք»: Եվ իր հետ պատահած այս բոլոր դեպքերի ժամանակ Հոբն իր շրթունքներով չմեղանչեց Տիրոջ առաջ, ոչ էլ անզգամություն հանդես բերեց Աստծու հանդեպ» (Հոբ 2.9-10): Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, որ փորձությունների ժամին տրտունջն ու դժգոհությունը դուրեկան են սատանային, մինչդեռ ճիշտ պահվածքը Աստծո օրհնութ-

յունն ու օգնությունը խնդրելն է, որից սատանան փախչում է, իսկ աստվածային օգնությունը՝ արագ հասնում: Այսպիսով, փորձությունների ժամանակ չպետք է տրտնջալ, դժգոհել:

Եկեղեցում մեղքերի ընդհանրական խոստովանության ժամանակ ասվող թվարկման մեջ հիշատակվում են տրտնջալը, դժգոհելը, բամբասելը: Այսինքն՝ սրանք մեղքեր են, որոնցից պետք է հեռու մնալ և փոխարենը թույլ չտալ, որ հավատքը սասանվի փորձություններից, Աստծո օգնությունը խնդրել ու պայքարել՝ խնդիրները հաղթահարելու համար: Փորձությունների մեջ հայտնված տարբեր մարդկանց հոգեվիճակի տարբերություն կա. անհավատների համար դժվարին փորձությունները կորչում են անհուսության մեջ, իսկ հավատացյալի համար փորձության ընթացքը լի է հույսով, իսկ վերջը լինում է հաղթանակ և փառք:

### **6. Կարող են փորձությունները մշտապես օգտակար լինել: Ի՞նչ ենք սովորում դրանցից:**

Հավատացյալի համար օգտակար են փորձությունները, եթե դրանք դիմագրավում է հավատքով և փորձում դաս քաղել դրանցից, անդրադառնալ իր կյանքի ընթացքին, Աստծո հետ հարաբերություններին, կարևորն արժևորելուն: Փորձության ժամանակ ավելանում է կյանքի փորձը, ամրապնդվում անզամ նեղությունների մեջ առ Աստված հավատարմությունը, հավատացյալը ձեռք է բերում հոգևոր փորձառություն, ունենում է Աստծո օգնության զգացողությունը, քանի որ ի վերջո Աստված Իրեն հուսացյալներին չի լքում և միշտ օգնության է հասնում: Սուրբ Գիրքն ասում է, որ Աստված ուն սիրում է, նրան խրատում է (Եբր. 12.6): Աստված թույլ է տալիս փորձությունը մարդու ընթացքը դեպի Իրեն հաստատուն պահելու կամ ավելի մեծ փորձանքից փրկելու համար, և չնայած որ փորձությունները զալիս են չարից, Աստված չարիքներից անզամ կարողանում է մարդու համար մեծ բարիքներ հանել: Մարդիկ ավելի շատ կցանկանային, որ Աստված, եթե իրենց սիրում է, փորձություններից զերծ պահի: Բայց հենց սերն է, որ հոգ է տանում՝ անզամ երբեմն դժվարությունների ու նեղությունների մատնելով: Սա կարող ենք ավելի լավ հասկա-

նալ ծնողներ-երեխաներ հարաբերությունների դիտարկումով: Ծնողները, եթե սիրում են իրենց երեխաներին, խրատում են նրանց, երբեմն զրկում երեխային նրա համար ցանկալի թվացող այս կամ այն իրողություններից, երբեմն պատժում, և այս ամենը վկայում է ծնողական սիրո և հոգատարության ու խնամքի մասին: Մինչդեռ անտարբեր ծնողները երբեք ուշադրություն չեն դարձնում իրենց զավակներին, ո՛չ զրկում են անպատեհ ցանկությունների իրագործումից, ո՛չ պատժում կամ խրատում սխալների համար, ինչը ցույց է տալիս, որ այդպիսի ծնողների համար միևնույն է, թե երեխան ինչպիսին կմեծանա: Այսպես էլ Աստծո կողմից փորձությունների ենթարկվելը թույլ տալը վկայում է մարդու հանդեպ աստվածային սիրո մասին: Այդ փորձությունների մեջ Աստված միայնակ չի թողնում մարդուն, այլ միշտ օգնության է հասնում և խաղաղ հանգրվանի բերում:

## **7. Փորձությունները բոլորի՞ համար են:**

Բոլորն էլ ենթարկվում են փորձությունների, անգամ փոքրիկ երեխաները: Մենք կարող ենք հիշել հրեա մանուկների կոտորածը Եգիպտոսում (Ելք 1.22), Բեթղեհեմի մանուկների կոտորածը (Մատթ. 2.16-18), քրիստոնյաների հալածանքները, մարդու անձնական կյանքում պատահող տարբեր փորձությունները: Երեխաների պարագայում մահվան դեպքում Աստված իրականությունն «ընկալում» է հավիտենության տեսանկյունից, և այդ երեխաները երկրային կյանքից փոխադրվում են հավիտենական կյանք: Պետք է իմանալ, որ վաղահաս մահը բացառիկ դեպքում է լինում դարձյալ աստվածային նախախնամությամբ: Ուրեմն, ոչ ոք զերծ չէ փորձությունից՝ անկախ տարիքից և սեռից: Պողոս առաքյալն ասում է, որ Աստված փորձության հետ մեկտեղ փրկության ելք էլ է ցույց տալիս (Ա Կորնթ. 10.13): Հետևաբար, փորձությունը գալիս է ինչ-որ ժամանակահատվածով, այն մշտական չի մնում և յուրաքանչյուր փորձության համար Աստծո կողմից տրվում են համապատասխան օգնություն ու զորակցություն: Փորձությունը բարիք է դառնում այն հաղթահարելուց հետո այս կյանքի համար, ինչպես նաև հավիտենական կյանքի համար:

**ՏԱՌԱՊԱՆՔ ԵՎ ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ.  
ԴՐԱՆՑ ՊԱՏՏԱՌՆԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**1. Ինչո՞ւ է կարգ ու կանոնի տեր Աստվածը երկրի վրա անկարգություն ու կործանում թույլ տալիս:**

Երբ Աստված ստեղծեց աշխարհը և արարածներին, տեսավ, որ ամեն ինչ լավ է (Ծննդ. 1.31): Աշխարհի ստեղծումը հիմնված է կարգավորության և ներդաշնակության վրա: Մարդն Աստծո արարչագործության պսակն է, որին Աստված պիտի տար բազում բարիքներ: Սակայն բարիքն արժևորվում է ազատ ընտրությամբ և ոչ թե պարտադրանքով: Բարիքն արժևորվում է նաև դրա գիտակցությամբ, քանի որ անգիտության համար բարիքի լինել-չլինելը ոչ մի նշանակություն չունի: Այդ իսկ պատճառով Աստված մարդուն ստեղծեց ազատ կամքով, ընտրության հնարավորությամբ: Մարդը սխալ ընտրություն կատարեց և զրկվեց դրախտից: Այսօրվա անկարգությունները, մարդկության, հասարակությունների կյանքում առկա արատները և դժբախտությունները նույնպես գալիս են այդ ազատ, բայց սխալ ընտրությունից: Ազատ ընտրությամբ իրագործված սխալ արարքներն Աստված չի կանխում, որովհետև դա կնշանակեր մարդու կամքի վրա բռնացում, և մարդը կվերածվեր ծրագրավորված մեքենայի, կամ անգիտակից, բնազդներով առաջնորդվող կենդանու:

Աստվածաշունչը, եկեղեցական հեղինակները խոսում են աստվածային նախախնամության մասին, որով Աստված չարիքներից բարիքներ է վեր հանում մարդու համար: Փորձություններն ու դժվարությունները հաճախ կոփում են մարդուն (Հակ. 1.2-4), ոչ միշտ պատահող վաղաժամ մահը փրկում է կյանքի հետագա, երկնքի արքայությունից զրկող ահավոր ընթացքից, չարչարանքների կրումը փոխհատուցվում է հավիտենության մեջ երանության պարգևով: Թեև աշխարհում ակնբախ են բացասական իրադարձությունները, դժվարություններն ու խնդիրները, բայց աշխարհում բարիքը երբեք չի պակասում, և չարիքը երբեք չի գերազանցում բարիքը:

**2. Աստվածաշունչը հայտնում է, որ Աստծո նպատակի մեջ չէր մտնում մարդկանց տառապելն ու մահը: Կա՞ զերազույն նպատակ մարդկության վերաբերյալ:**

Մարդկանց տառապանքն ու մահը Աստծո ցանկությունը չեն: Ավետարանում մենք տեսնում ենք, որ մեր Տերը՝ Քրիստոս, ցավում է՝ մարդկանց չարչարանքները տեսնելով, մարդկանց բուժում հիվանդություններից, Իր խոսքով խաղաղություն ու հանգստություն բերում մարդկային հոգիներին, մարդկանց հարություն տալիս մեռելներից: Ուրեմն, տառապանքն ու մահը պատճառում է ոչ թե Աստված, այլ դրանք չարի ներգործության հետևանք են: Աստծո նպատակը մարդկությանը դրախտային երանությանն ու վայելքին, բարիքներին վերադարձնելն է: Հենց դրա համար, ինչպես ասում է Հովհաննես Ավետարանիչը, Աստված Իր միածին Որդուն տվեց աշխարհի փրկության համար (Հովհ. 3.16): Աստված սեր է (Ա Հովհ. 4.8, 16), և այդ սերը դրսևորվում է յուրաքանչյուրիս հանդեպ Աստծո գթությամբ ու ողորմությամբ, հայրական հոգատարությամբ: Բայց կան բազում մարդիկ, ովքեր իրենց մեղքերով մերժում են աստվածային սերն ու հոգատարությունը, ինչպես որ չարացած մարդը, մտնելով իր տուն ու պատուհանները փեղկերով փակելով, իրեն հեռու է պահում արեգակի լույսից ու ջերմությունից:

**3. Մեր նախահայրն ու նախամայրը մահկանացու դարձան միայն Աստծուն չհնազանդվելու պատճառով: Սակայն մահկանացու դարձան նաև նրանց բոլոր ժառանգները, այսինքն՝ մարդկային ողջ ցեղը: Ինչո՞ւ:**

Կան հիվանդություններ, որոնք ժառանգական են, չնայած որ տարբեր սերունդներ ժամանակների ընթացքում հաղթահարում են այդպիսի հիվանդությունները տարբեր ծնողների գեների ընդունումով: Այսպես նաև մեր նախահայրերից մենք ժառանգեցինք մահկանացու լինելը և աղամական մեղքը, որից սրբվում ենք մկրտությամբ: Մարմնի ապականությունը եղավ չարի ազդեցությամբ և ոչ Աստծո ցանկությամբ, իսկ ինչ որ ապականվում է, ենթակա է կործանման: Այսպես նաև մեր մարմինը տարեցտարի ապականվում և քայքայվում է, որով

էլ և կործանվում է, կամ ինչպէս ասում ենք, մարդը մահանում է: «Մարդու մահ» ասելով՝ նկատի ունենք մարմնի մահը, որովհետև անմահ հոգին բաժանվում է մարմնից և դուրս ելնուն այս աշխարհի իրականությունից: Քրիստոս նույնպէս մեռավ, բայց Նրա մարմինն ապականացու չէր, ինչպէս մեր մարմինը, քանի որ ապականությունը մեղքի հետևանքով ի հայտ եկավ: Այլ Քրիստոսի մահը կամավոր էր, այլապէս Քրիստոս մահ ճաշակի: Գիշտ է, Տերը մանուկ հասակից մեծացավ, սակայն մեծացումը, փոփոխությունը ապականություն չեն ենթադրում, իսկ մենք մեծանալով ու փոփոխվելով՝ նաև ապականվում ենք, այսինքն՝ սկսում ենք աստիճանաբար քայքայվել: Ահա և այստեղից էլ մահկանացու լինելը: Բայց Քրիստոս իր Չարությանը հաղթեց մահին և մեզ տվեց անմահության շնորհը, որն ընդունելով՝ մենք ևս ունենալու ենք անապական մարմիններ (Ա Կորնթ. 15.42-44, 53) Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ և ապրելու ենք հավիտյան:

**4. Եթե Բարձրյալի նպատակն այն էր, որ կատարյալ մարդիկ հավերժ ապրեին երկրագնդի վրա դրախտային պայմաններում, ապա ինչո՞ւ ներկայումս երկրի վրա դրախտ չկա: Ինչո՞ւ դրա փոխարեն դարեր շարունակ մարդկության կյանքում առկա է տառապանք ու անարդարություն:**

Փիլիսոփա Վիլիելմ Լեյբնիցն ասում է, որ Աստված ստեղծեց բոլոր հնարավոր աշխարհներից լավագույնը, և մենք ապրում ենք բոլոր հնարավոր աշխարհներից լավագույնում: Սակայն փիլիսոփայի կողմից լավագույն կոչված աշխարհը կատարյալ աշխարհը չէ, բացի դրանից, երկրի ներկա կարգավիճակը անհօթյալն է: Ուրեմն, մենք ապրում ենք անհօթյալ երկրում: «Թող անհօթյալ լինի երկիրը քո արածի պատճառով» (Ծննդ. 3.17),- ասաց Աստված Ադամի մեղսագործությունից հետո: Մարդու մեղսագործությունը դարձավ նաև աշխարհի անկման պատճառ: Սակայն առաջին մարդկանց մեղսագործությունը վաղ եկեղեցական կաթոլիկ հեղինակները կոչում էին *felix culpa*՝ երջանիկ կամ երանելի մեղք՝ նկատի

ունենալով, որ այդ մեղսագործությամբ մարդկությանը տրվեց շատ ավելի մեծ շնորհ, քան մարդկությունը կունենար առանց դրա: Խոսքը Քրիստոսի մարդեղացման մասին է, որով Աստված դարձավ մեզ նման մեկը և Իր մեծագույն շնորհները բերեց մարդկությանը:

Մարդկությունը տառապանք ու անարդարություն է կրում միմիայն չարի ազդեցությամբ, մարդկանց պատճառով, բոլոր հրեշավոր ողբերգությունները կատարվում են մարդկանց ձեռքով: Սակայն դրախտը սպասում է մարդուն հավիտենության մեջ: Քրիստոս ասում է. «Իմ Հոր տան մեջ բազում օթևաններ կան» (Հովհ. 14.2), «Եկե՛ք, Իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. 25.34): Չարը բարու պակասությունն է, խավարը՝ լույսի: Ուրեմն, մարդկությունն իր կյանքում պետք է ավելացնի բարին՝ չարից ձերբազատվելու համար:

**5. Մարդկության նախածնողները սխալ ընտրություն արեցին: Նրանք ընտրեցին Աստծուց անկախ լինելու ուղին ու պատժվեցին: Արդյո՞ք նրանց հետնորդները՝ մարդիկ, այնպես են ստեղծված, որ ազատ կամքով կարող են Արարչից անկախ լինել ու հաջողության հասնել իրենք իրենց կառավարելու հարցում:**

Աստծուց անկախ մարդը չի կարող իրական բարիք գտնել, որովհետև բարիքի ու երջանկության աղբյուրն Աստված է: Բոլոր հասարակարգերը, հնագույն հզոր պետությունները՝ Աստծուց հեռու, ի վերջո կործանվել են, բոլոր բռնապետները ահավոր չարչարանքներով են մեռել: Բայց եթե ասվի, որ այդ զարգացած տերություններում մարդիկ ապրել են նյութապես ապահովված, ուրեմն, մարդն իր երջանկությունն իջեցնում է միայն կուշտ ստամոքս ունենալու և հանգստանալու կենդանական իրողության. այսպես ապրում են նաև անասուններն ու վայրի գազանները: Եթե կյանքի նպատակը կուշտ ուտելն ու քնելն է և հարմարավետություն ունենալը, ապա ինչո՞վ ենք տարբերվում կենդանիներից: Մենք կենդանական աշխարհից ավելի վեր ենք մեր վեհ զգացմունքներով, մտածելու և գիտակցելու կարողությամբ, միմյանց ու հատկապես

Աստծո հետ այս հիմքով հաղորդվելու ունակությամբ: Քրիստոսի պատմած «Անմիտ մեծահարուստի» առակում հարուստն ասում է ինքն իրեն. «Ով մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգիստ արա, կեր, խմիր և ուրախ եղիր»: Բայց նրան լսելի է դառնում Աստծո խոսքը. «Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու» (Ղուկ. 12.19-20): Քրիստոս դատապարտում է ուտելու նպատակով, ինչպես նաև մարմնական հաճույքների համար ապրելու միտումը և մեր միտքը վեր հանում դեպի Աստծո հետ հաղորդակցությունը, աստվածամանությամբ արարելու ու բարիք գործելու կարողությամբ, դեպի հոգևոր ոլորտը, որտեղ աննկարագրելի երանություն է տրվելու մարդուն:

### **6. Որտե՞ղ են վերջանում Աստծո կողմից մարդուն տրված ազատ ընտրության իրավունքն ու սահմանները:**

Նախ պետք է հստակեցնենք, թե ինչ է ազատությունը, որովհետև այդ ընկալման վրա է հիմնվում ազատ ընտրությունը: «Ազատություն» հասկացության աշխարհիկ և կրոնական ընկալումները գտնվում են բոլորովին հակադիր բևեռներում: Բոլոր հեղափոխությունները, որոնք գալիս էին բռնությամբ հին հասարակարգերը կամ իշխանությունները տապալելու, իրագործվում էին ուժով, «պայքարի՞ր քո իրավունքի համար» սկզբունքով: Քրիստոսի մասին ասվում է. «Յնազանդ եղավ մինչև մահ և այն էլ մահվան՝ խաչի վրա» (Փիլիպ. 2.8), «Թեպետև Որդի էր, բայց Իր չարչարանքների միջոցով հնազանդություն սովորեց. և կատարյալ դառնալով՝ բոլոր Իրեն հնազանդվողներին հավիտենական փրկության պատճառ դարձավ» (Եբր. 5.8): Քրիստոս մարդկության մեջ ամենամեծ հեղափոխությունն իրագործեց հնազանդությամբ:

Կրոնական ըմբռնումով հնազանդությամբ է կայանում ազատությունը: Աստծո պատվիրանին հնազանդությունը մեզ ազատում է չարից և մեղքի գերությունից: Պողոս առաքյալն ասում է. «Մեղքի ծառաներ էիք, բայց ի սրտե հնազանդվեցիք այնպիսի վարդապետության, որ ձեզ ավանդվեց: Արդ, մեղքից ազատագրվածներդ ծառայեցե՛ք արդարության» (Ջն.

6.17-18), «Եղբայրներ, դուք կոչված եք ազատության. միայն թե ձեր ազատությունը սոսկ մարմնի ցանկությունների համար չլինի, այլ սիրով ծառայեցեք միմեանց» (Գաղ. 5.13): Նաև Պետրոս առաքյալն է կոչ անում. «Ապրեցե՛ք որպես ազատներ և ազատությունը իբրև չարիքի պատրվակ մի՛ բռնեք, այլ ապրեցե՛ք որպես Աստուծու ծառաներ» (Ա Պետ. 2.16): Երկրի օրենքներին հնազանդությունն ազատում է բանտարկությունից, որ կարող էր լինել այդ օրենքներին չհնազանդվելու, դրանք խախտելու դեպքում:

Աշխարհիկ ընկալմամբ այսօր ոմանք ազատությունը հասկանում են որպես ամեն ինչ անելու թուլտվություն ու կարելիություն, մի խոսքով՝ սանձարձակություն: Մեր ժամանակներում կարող ենք տեսնել, որ այսպես կոչված խոսքի ազատությունն իրականում խոսքի սանձարձակությունն է՝ ում ուզում ես, կարող ես փնտվել ու հայհոյել անգամ մամուլով, հեռուստատեսությամբ կամ համացանցով: Արարքի ազատությունը նշանակում է արարքի սանձարձակությունը՝ ինչ ուզում ես, կարող ես անել, անգամ՝ անբարոյականություն: Այս ընկալմամբ վերացվում են բարոյաէթիկական աստվածադիր նորմերն ու սահմանները: Պողոս առաքյալն ասում է. «Ամեն ինչ ինձ թույլատրելի է, բայց ամեն բան չէ, որ օգտակար է. ամեն ինչ ինձ թույլատրելի է, բայց ամեն ինչ չէ, որ հավատը հաստատում է» (Ա Կորնթ. 10.23): Այսինքն՝ առաքյալը նշում է ազատ կամքի առկայությունը, բայց դնում է սահմանը, որը վնաս կրելու հավանականությունն է: Եկեղեցական հեղինակներից մեկն ասում է. «Իմ ձեռքի շարժման ազատությունը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է ուրիշի դեմքը»: Շարժման ազատություն ունենալով՝ սխալ է ուրիշի դեմքին հարվածելը, ցավ պատճառելը: Սա նշանակում է, որ ապահովության ու անվտանգության համար սահմանված օրենքներին, պատվիրաններին հնազանդությունն է, որ արժևորում է իրական ազատությունը:

**7. Ինչպիսի՞ն կլինի կյանքը, երբ Աստված երկրի երեսից վերացնի անարդարությունն ու տառապանքը և հաստատի նոր աշխարհը:**

Աստվածաշնչում մանրամասն նկարագրություններ չկան այն մասին, թե ինչպիսին է լինելու Երկնքի արքայությունը, կամ հավիտենական կյանքն Աստծո արքայության մեջ: Որոշ տեղեկություններ կան հատկապես Եսայու մարգարեության մեջ, Յովհաննու Յայտնության գրքում, որտեղ նշվում է հրեշտակների անդադար փառաբանությունը՝ ուղղված Աստծուն (Եսայի 6.1-3, Յայտն. 5.11-12), երկնային Երուսաղեմի որոշ նկարագրություններ, որոնք առավելաբար այլաբանական նշանակություն ունեն: Աստվածաշունչը մեծավ մասամբ տալիս է պատվիրաններ, սկզբունքներ այս կյանքի համար, ցուցումներ բերում, թե ինչպես պիտի ապրենք այս կյանքը, որպեսզի արժանի դառնանք հավիտենական կյանքին:

Պողոս առաքյալն ասում է, որ ինքը հափշտակվել է մինչև երրորդ երկինք, մինչև դրախտ և լսել անպատում խոսքեր, որ մարդուն արտոնված չէ խոսել (Բ Կորնթ. 12.2-4): Կարող ենք եզրակացնել, որ առաքյալը տեսել է այնպիսի իրողություններ, որոնք դժվար է մարդկային բառապաշարով նկարագրել: Չնայած Աստվածաշունչը հստակ պատկերացում չի տալիս Երկնքի արքայության և այնտեղ հավիտենական կյանքի ընթացքի մասին, բայց բերում է այն հաստատումը, որ հավերժության մեջ դրախտին արժանի մարդիկ վայելելու են անսահման բերկրանք, խնդություն, երանություն, հանգստություն ու խաղաղություն:

**8. Մարդկային տեսակետից Աստված բավականին երկար ժամանակ է հանդուրժում անկատարությունն ու տառապանքը: Ինչքա՞ն ժամանակ է սահմանված այդ ամենի համար, և որքա՞ն մոտ է տառապանքի վախճանը:**

Երբ մարդը պահանջում է, որ Աստված, չարագործներից պատժելով, դադարեցնի պատճառվող տառապանքն այս կյանքում, միշտ նկատի է ունենում ուրիշներին, իր շրջապատի մարդկանց, մարդկությանը, բայց ոչ՝ իրեն: Եթե մարդը գիտակցի, որ անկատարությունը, մեղքն անմիջապես է

պատժվելու և իր անկատարության դրսևորման, կատարած սխալ արարքի համար Աստված իրեն անմիջապես պիտի շանթահարի ու ոչնչացնի, ապա կդադարի բոլորի հանդեպ այսպիսի մոտեցում պահանջելուց: Աստված մարդկանց կողմից դրսևորվող անկատարությունն ու պատճառվող տառապանքը միանգամից չի վերացնում, որովհետև Աստված անկատարությունից կատարելություն և տառապանքից հաղթանակ է դուրս բերում: Մեր Տեր Յիսուս Քրիստոսի տառապանքից հարություն ու հաղթանակ ելավ, նաև մեր սուրբ Տրդատ թագավորը, ով անգութ հեթանոս էր և Յոնիսիմյան կույսերին դաժանորեն սպանեց՝ լեզուները կտրելով, ցիցը հանելով, հետո իր այդ հեթանոսական անկատարությունից դարձավ քրիստոնեական կատարելության, դարձավ բարի ու հեզ քրիստոնյա և մեծապես նպաստեց մեր ժողովրդի քրիստոնեացման գործին:

Աստված չի ցանկանում մեղավորի մահը, ասում է Աստվածաշունչը, այլ նրա ապրելն ու փրկվելը (Եզեկ. 18:23): Դրա համար Աստված հանդուրժում է մեղավորներին, որովհետև նրանցից կարող են բարի գավակներ ծնվել, ինչպես նաև շատ մեղավորներ, զղջալով ու ապաշխարելով, դառնում են իրական քրիստոնյաներ և արժանանում փրկության: Աշխարհում կլինեն բացասական իրողություններ, որովհետև Աստված դրանցով խրատում է մարդկանց, կան, ավելի ճիշտ, թույլ է տալիս, որ դրանք լինեն, որպեսզի մարդիկ խրատվեն: Այստեղ խոսքը, իհարկե, մեծագույն ողբերգությունների մասին չէ, որոնք այլ բացատրություններ ունեն՝ հալածանքների ժամանակ քրիստոնյաների մարտիրոսություն, ոճիրների դեպքում՝ ի Քրիստոս հավատքով մահացածների ընդունում երկնային օթևաններում, կրած տառապանքների համար երկնային փառքի ու պայծառության հավելում և այլն: Իսկ անձնական կյանքում անկատարությունն ու տառապանքը վերանում են, երբ մոտենում ենք Աստծուն և ապրում հոգևոր ուրախության մեջ: Դա չի նշանակում, որ մարդը միանգամից դառնում է կատարյալ, գերծ մնում երբեմն պատահող վշտերից, չարչարանքներից, նեղություններից, բայց այդ ընթացքով բարին ու բարիքը գերակշռում են նրա կյանքում, իսկ փորձությունները կարողանում է հաղթահարել և առավել մեծ ձեռքբերումներ ունենալ հավատքով և Աստծո օգնությամբ:

## ԵՐԴՈՒՄ

### **1. Ի՞նչ է երդումը՝ ազնվության կամ անկեղծության երաշխի՞ք:**

Երդումը մարդու կողմից իր վկայության վավերականության ապացուցման գործողությունն է՝ խոսքով արտահայտված, վկայակոչումով մի երրորդ իրողության կամ անձի, անձերի և կամ գերբնական անձի, ուժի: Երդումն ասվում է ի ներկայության որևէ մարդու կամ մարդկանց, որոնց առջև բերված վկայության հավաստիացման անհրաժեշտությունը կա: Երդման կարիքն առաջանում է այն ժամանակ, երբ մարդու ազնվության նկատմամբ կասկած է ծագում այլոց մոտ, կամ երբ մարդը կարծում է, որ իր խոսքի նկատմամբ վստահության պակաս կա, և ինքը կասկածվում է խաբեության, կեղծավորության մեղքերի մեջ: Երդումն անձի ազնվության վավերացման ձև է, սակայն այն խանգարում է բուն ազնվության առաքինության գորացմանը, քանզի երդումը նաև գործածվում է խաբեության նպատակով, այլոց՝ երդման հանդեպ վստահությունը չարաշահելով:

**2. Կան մարդիկ, ովքեր երդվում են հավատալիքներով, սրբություններով, հարազատ և ամենաթանկ մարդուն և նույնիսկ Աստծուն վկայակոչելով: «Էրեխուս արև», «մորս արև», «Աստված վկա» և նման այլ արտահայտություններ տարածված են մանավանդ հայաստանաբնակ հայերի մեջ: Արդյո՞ք ասածը հավաստելու համար մարդն անհրաժեշտություն ունի երդվելու և մի՞թե սա է ազնվության ապացուցման միակ ճանապարհը:**

Քրիստոս արգելեց երդվելը: Տերն ասաց. «Ես ձեզ ասում եմ՝ ամենևին չերդվել. ո՛չ երկնքի վրա, որովհետև Աստծու անունն է, ո՛չ երկրի վրա, որովհետև Նրա ոտքերին պատվանդան է, և ո՛չ Երուսաղեմի վրա, որովհետև մեծ Արքայի քաղաքն է: Եվ քո գլխով էլ չերդվես, որովհետև չես կարող մի մազ իսկ սպիտակ կամ սև դարձնել: Այլ ձեր խոսքը լինի՝ այո՛ն՝ այո, և ոչը՝ ոչ. որովհետև դրանից ավելին չարից է» (Մատթ. 5.34-37): Երդման այս արգելքը Մատթեոսի Ավետա-

րանի սկզբում է: Ավետարանի վերջում երևում է, թե ինչու է Քրիստոս ուշադրություն դարձնում երդման վրա և արգելում այն: Հրեական միջավայրում փարիսեցիներն ու օրենսգետները երդումների տարբերակումներ էին անում և այդպես ուսուցանում՝ սովորեցնելով, որ կան երդումներ, որոնք արժեք չունեն, կան այնպիսիք, որոնք հավաստիության արժանի են: Ընդ որում, փարիսեցիներն ու օրենսգետներն իրենց ուսուցումն ամենչուն էին այնպիսի սրբությունների, որպիսիք հրեական տաճարն էր, աստվածապաշտական իրողությունները: «Վա՛յ ձեզ, կույր ամառնորդներ, որ ասում եք՝ ով որ երդվի տաճարի վրա, այդ երդումը ոչինչ չի նշանակում. բայց ով որ երդվի տաճարի մեջ եղած ոսկու վրա, պարտավորվում է այն կատարել: Հիմարներ և կույրեր, ի՞նչն է մեծ՝ ոսկի՞ն, թե՞ տաճարը, որ սրբացնում է ոսկին: Եվ՝ ով որ երդվի սեղանի վրա, այդ երդումը ոչինչ չի նշանակում. բայց ով որ երդվի նրա վրա գտնվող ընծայի վրա, պարտավորվում է այն կատարել: Հիմարներ և կույրեր, ի՞նչն է մեծ՝ ընծա՞ն, թե՞ սեղանը, որ սրբագործում է ընծան: Իսկ արդ, ով որ երդվեց սեղանի վրա, երդված կլինի նրա վրա և այն ամենի վրա, որ սեղանի վրա է: Եվ ով երդվեց տաճարի վրա, երդված կլինի նրա և նրա մեջ բնակվող Աստծու վրա: Եվ ով երդվեց երկնքի վրա, երդված կլինի Աստծու աթոռի և նրա վրա նստողի վրայ» (Մատթ. 23.16-22): Քրիստոս ասաց. «Թող ձեր խոսքը լինի՝ այոն՝ այո, և ոչը՝ ոչ»: Երդման այս արգելքը կոչ է ազնվության մեջ ապրելու, որովհետև ազնիվ մարդու խոսքին չեն կասկածում, ազնիվ մարդը երևում է նաև իր խոսելաձևում ու գործողություններում և նրա հանդեպ կասկածանքներ ու երդման անհրաժեշտություն չեն առաջանում: Ուրեմն, երդմանն ապավինելու փոխարեն, մարդ միշտ պետք է առավելագույն ազնվությամբ ապրի, և այնպիսին պետք է լինի կերպարը, որպեսզի որևէ մեկը կասկածի դույզն-ինչ նշույլ չունենա նրա ազնվության հանդեպ:

**3. Ժամանակի ընթացքում երդումը ձեռք է բերել գանազան ձևեր և արտահայտություններ: Քիչ առաջ նշված վկայակոչումներից բացի, շատ անգամ երդումն ուղեկցվում է իբր Աստծո կողմից պատժվելու ցանկությամբ՝**

**«Քե սուտ ասեմ, Աստված տա՝ լույսը չբացվի վրաս» և  
նման այլ արտահայտություններ: Սա Աստծո անունն  
անձնական շահերի նպատակով օգտագործել չէ՞:**

Ավետարանում մենք տեսնում ենք, որ չնայած Քրիստոսի կողմից դրված երդման արգելքին, Պետրոս առաքյալը երդվում է: Երբ Քրիստոսին բանտարկում են, Պետրոսը գնում է Նրա ետևից՝ Տիրոջը մոտ լինելու ցանկությամբ: Բայց երբ քահանայապետի բակում հավաքված մարդիկ ճանաչում են նրան՝ ասելով, թե դու էլ Քրիստոսի աշակերտներից ես, Պետրոսը երդվում է, թե Քրիստոսին չի ճանաչում (Մատթ. 26.72): Պետրոսի երդումը և ուրացումը գալիս էր նրա վախից: Սրա համար առաքյալը հետո զղջաց և դառնապես լաց եղավ (Մատթ. 26.75): Աստվածաշնչում խոսվում է նաև Աստծո կողմից երդվելու մասին: Այս մասին կարող ենք կարդալ ինչպես Հին, այնպես էլ Նոր Կտակարաններում: Աստված երդումով Աբրահամին խոստացավ նրա սերունդներին տալ ավետյաց երկիրը (Ծննդ. 24.7, 26.3, 50.24, Ելք 6.8, 33.1, Թվ. 32.11, Բ Օր. 1.8, 4.31, 6.10, 18 և այլն), Աստված երդվում է Իրեն անհնազանդներին զրկել խոստացված երկրից և հանգստից (Բ Օր. 1.34, 4.21, Եբր. 3.11, 17), երդվում է Դավթին, որ նրա սերնդից պիտի լինի Քրիստոսի ծնունդը (Սաղմ. 131.11):

Աստծո երդվելու վերաբերյալ Պողոս առաքյալն ասում է. «Աստված Աբրահամին Իր խոստումը տվեց, քանի որ չկար ավելի մեծ մեկը, որ նրանով երդվեր, Նա Ինքն Իր վրա երդվեց» (Եբր. 6.13-14): Սուրբ Գրիգոր Աստվածաբանը բացատրում է, որ Աստծո յուրաքանչյուր խոսք երդում է, քանի որ Աստված չի կարող ոչ հավաստի բաներ ասել: Այդ իսկ պատճառով Աստծո ասածները համեմատվում են երդումի և Նրա խոստանալը՝ երդվելու հետ: Ըստ Գրիգոր Աստվածաբանի՝ Հին Կտակարանում երդվելը գործածվում էր և երդումը գուցե շարունակական լիներ, եթե մարդիկ սուտ երդումներ չանեին, երդումը չօգտագործեին նաև խաբելու համար: Քրիստոս եկավ օրենքը լրացնելու, ինչպես Ինքն է ասում. «Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ լրացնելու» (Մատթ. 5.17): Եվ սա վերաբե-

րում է նաև երդմանը: Ըստ Գրիգոր Աստվածաբանի՝ Չին Կտակարանում պատժվում էին մեղքի համար, իսկ Նոր Կտակարանում արգելվում է անգամ մեղքի մտածումը, դեպի մեղքը շարժումը (Մատթ. 5.28): Այսպես էլ արգելվում է նաև երդումը: Կաթոլիկ եկեղեցական հեղինակներից Չերոնիմոսն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ Քրիստոս արգելում է երդվել երկնքով կամ երկրով, սեփական անձով, բայց ոչինչ չի ասում Աստծո անունով երդվելու մասին, որի վերաբերյալ պատվեր կա Չին Կտակարանում (Բ Օր. 6.13): Մարդը երդվում է իր համար ամենաթանկ բանով: Եվ քանի որ հավատացյալի համար ամենաթանկն Աստված է, ուրեմն, նաև նկատի ունենալով Չին Կտակարանի պատվիրանը, կարելի է երդվել Աստծով: Չերոնիմոսի այս տեսակետը, սակայն, անձնական, հեղինակային տեսակետ է, որը համընդհանուր տարածում չգտավ եկեղեցու ուսուցումներում:

Մարդկանց երդվելը, իրապես, այն նկատառումով է ասվում, թե իր խոսքի կամ վկայության սխալ լինելու պարագայում ինքը պատիժ կստանա գերբնական ուժի, Աստծո կողմից: Դրա համար են նաև երդման ժամանակ հիշվում պատիժները: Մարդիկ երդվում են նաև ծնողների արևով: «Արև» ասելով՝ նկատի է առնվում կյանքը, քանի որ կյանքի ընթացքում մարդիկ վայելում են կենսատու արևի լույսը, դրա համար էլ նմանատիպ երդումների մեջ կյանքի համարժեք է կարծես դառնում արևը: Արևով երդվելու հայերեն արտահայտությունները բառարաններում այլ լեզուների համարժեքներով ներկայացվում են որպես կյանքով երդվելու խոսքեր: Նման երդումով նույնպես պատիժ է նկատի առնվում այն իմաստով, որ եթե ասված վկայությունը սուտ է, ուրեմն թող գերբնական պատիժ տրվի նրա կյանքին, ում անունով արվում է երդումը: Երդվելու սովորություն ունեցողները պետք է հիշեն մեր Տեր Չիսուս Քրիստոսի արգելքը և փորձեն ավելի զորացնել իրենց ազնվությունն ու այլառաքինությունները, որով կվերանա երդվելու սովորությունը կամ անհրաժեշտությունը:

**4. Հիսուս Քրիստոս իսպառ արգելում է երդումը (Մատթ. 5.37): Այդ դեպքում ինչո՞ւ են պետության նախագահները, զինվորականները, բժիշկները, դատարանում վկաները երդվում:**

Երդումը երկու ուղղություն ունի՝ մեկը դեպի անցյալ, մյուսը՝ դեպի ապագա: Դեպի ապագա ուղղված երդումը տարբերվում է անցյալի նկատառումով կատարված երդումից, որովհետև եթե վերջինս արդեն կատարված իրողության մասին վկայության հավաստիացման համար է արվում, ապագայի դիտարկումով երդումը հիմնականում խոստում է կամ ուխտ: Պետության նախագահների, բժիշկների, զինվորականների երդումները վերաբերում են դեպի ապագա ուղղված երդման ձևին, որով այս երդումը վերածվում է խոստումի: Օրինակ՝ պետության ղեկավարները, ստանձնելով իրենց պարտականությունները, երդվելով խոստանում են, որ իրենց ծառայությունը ժողովրդին և պետությանը լավագույնս պիտի իրականացնեն: Հոմանիշների բառարանում երդման դիմաց նշվում են «խոստում» կամ «ուխտ» բառերը: Դա ևս ցույց է տալիս, որ համապատասխան հանգամանքներում խոստում և ուխտ է կատարվում՝ ի հակադրություն անցյալին վերաբերող երդումի, որն արդեն կատարվածի առնչությամբ ազնվության, անկեղծության կասկածների փարատման փորձ է:

Պետության ղեկավարները երդվում են հիմնականում երկրի սահմանադրության և Աստվածաշնչի վրա: Սակայն եթե Աստվածաշունչը որևէ մեկի համար նշանակություն չունի, ապա անիմաստ է դառնում նրա այդպիսի երդումը: Այսպես, 2013 թվականին իր լիազորությունները դադարեցրած Ավստրալիայի առաջին և դեռևս միակ կին վարչապետը հրաժարվեց Աստվածաշնչի վրա երդվելուց այն հիմնավորմամբ, որ ինքն անհավատ է, աթեիստ է, և իր համար իմաստ չունի Սուրբ Գրքի առկայությամբ կատարվող երդումը: Փոխարենը նա պարզապես հավաստիացրեց, հաստատում կատարեց իր պարտականությունների պարտաճանաչ կատարման՝ հանուն իր երկրի և ժողովրդի: Մինչդեռ եթե պետության ղեկավարը քրիստոնյա է, նրա համար Աստվածաշնչի վրա երդումն

իր նշանակությունն է ստանում, որով նա վկայակոչում է նաև Աստծո հանդեպ հավատքով, Աստծո ներկայության գիտակցությամբ իր խոստման կատարումը:

**5. Իսկ կա՞ն դեպքեր, երբ քրիստոնյաների երդվելն էլ է անհրաժեշտություն:**

Հավատացյալները խոստում իմաստով երդումը կատարում են սուրբ Պսակի արարողության ժամանակ: Հարսն ու փեսան, սուրբ խորանի դիմաց գտնվելով, քահանաների, իրենց հարազատների ներկայությամբ խոստանում են ամուր պահել իրենց ընտանիքը, սիրել միմյանց, ապրել աստվածային պատվիրանների համաձայն: Այլ խոսքով ասած՝ փոխադարձ սիրո և հոգատարության ուխտ են կնքում եկեղեցում, և այս ուխտը կոչվում է նաև ամուսնական ուխտ: Այսպես նաև ձեռնադրվող հոգևորականները ձեռնադրության արարողության ընթացքում ուխտ են անում աշխարհից հրաժարման, այսինքն՝ աշխարհի մեղսալի ընթացքներից հեռու մնալու և Աստծուն ու եկեղեցուն նվիրումով ծառայելու:

Կենցաղային հանգամանքներում քրիստոնյայի համար ճիշտ չէ երդվելը, այլ Քրիստոսի խոսքի համաձայն այոն կամ ոչը հաստատելը՝ միշտ ձգտելով ավելի կատարյալ դառնալ ազնվության, տերունապատվեր սիրո մեջ:

**ՎՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**1. Յուրաքանչյուր մարդու կյանքում լինում են պահեր, երբ նա կորցնում է վստահությունն ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի հանդեպ: Նույնիսկ համաշխարհային տնտեսության անկումը հիմնականում այն իրողության արդյունքն է, որ ֆրանսիական թերթերից մեկը կոչեց վստահության համընդհանուր ճգնաժամ: Ի՞նչ գործոնների պատճառով է առաջանում վստահության ճգնաժամը:**

Վստահությունն ինչ-որ մեկի խոսքի կամ գործի հանդեպ լիակատար երաշխավորություն և ինչ-որ բանի ճշգրտության, հուսալիության վերաբերյալ ամբողջական հավաստիք ունենալն է: Վստահությունը սասանվում է կասկածից, սկեպտի-

ցիզմից: Վստահությունն ավելի հեշտ է կորցնել, քան այդ վստահությունը շահել: Բացասական մի քանի դեպքերը կարող են պատճառ դառնալ ինչ-որ մեկի կամ որևէ համակարգի, իշխանության հանդեպ վստահությունը կորցնելու:

Ժանգն աղտոտում է ողջ նյութը և ոչ թե առողջ նյութը վերացնում է փոքր ժանգը: Այդ փոքրից սկսվում է ամբողջի ապականությունը: Այդպես էլ և լինում է վստահության պարագայում: Մեկի կողմից իրագործված բացասական գործողությունն ու մարդու կամ հասարակության համար անընդունելի իրադարձություններին մասնակցությունը բերում են ամբողջի կողմից այդ մեկի հանդեպ վստահության կորուստը:

**2. Հոգեբանական ուսումնասիրությունների համաձայն՝ կարող ենք ասել, որ վստահությունը մարդկային էության կենսաբանական հիմք ունեցող մաս է: Այսինքն՝ դա մարդուն բնորոշ առանձնահատկություններից է, մարդկային էության մի մասը: Դա նշանակում է, որ մարդը ստեղծված է վստահելու հակումով:**

Կարելի է այդպես ասել, որովհետև մարդու գործունեությունը հիմնված է վստահության և ոչ թե անվստահության վրա: Նույնիսկ այնպիսի իրողություններում, որոնց վրա մարդն իշխանություն չունի և գտնվում է այդ իրողությունների շրջանակում, մեծ տեղ է գրավում վստահությունը: Մովսես Խորենացին «Գիրք պիտոյից» աշխատության մեջ, որը քարոզներ, ճառեր խոսելու տարբեր տեսակների սկզբունքներն է բացատրում հիանալի օրինակներով, անուսնության մասին խոսելիս բերում է երկրագործության, զինվորության, նավագնացության պարագան, որով այդ ասպարեզների մեջ մարդիկ մտնում են առ Աստված վստահությամբ՝ հավատալով, որ Աստված բարի հաջողություններով կգարդարի իրենց ընթացքը: Այստեղ վստահությունը նույնանում է հավատի հետ, քանի որ ինչ-որ մեկի հանդեպ հավատի կամ առ Աստված հավատքի բուն մասը հենց վստահությունն է և ոչ թե գիտությունը կամ իմացությունը:

**3. Այսօր դժվար է պատկերացնել մեր աշխարհն այնպես, թե այնտեղ ապրում են միայն վստահելի մարդիկ և որտեղ ո՛չ բանալիներ կան, ո՛չ կողպեքներ: Իսկ ի՞նչն է ստիպում չվստահել: Ո՞վ կամ ի՞նչն է առավել անվստահելի մարդու համար:**

Ավելի լավ է ասել, թե ով է առավել վստահելի մարդու համար՝ Աստված: «Չավիտենական կյանքի հույսով, որը խոստացավ անսուտն Աստված հավիտենական ժամանակներից առաջ, բայց հայտնեց Իր խոսքը իր ժամանակին՝ քարոզությանմբ», - ասում է առաքյալը (Տիտ. 1.2-3): Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը, բոլոր արարածներին, Իր նախախնամությանմբ խնամում է մարդկանց և կոչվում է անսուտ Աստված, որովհետև չի խախտում Իր խոստումը՝ հավիտենական կյանքը տալու բոլոր նրանց, ովքեր չար գործերով ու անհավատությանմբ չեն մերժում այդ պարգևը: Ինչպիսին էլ որ լինեն իրադարձությունները, որոնցով մարդը ելնում է այս կյանքից, Աստված Իր պարգևը չմերժողներին արժանացնում է հավիտենական կյանքին:

Աստված խնամում է բոլոր մարդկանց, ուղղորդում նրանց քայլերը դեպի բարին ու բարիքը, յուրաքանչյուրին տալիս է Իր հոգատարությունը: Մարդու գոյավորվելն ու ծնվելը նույնպես աստվածային արարչագործության հետ է կապված: Աստված է գոյության բերում մարդուն, նրան կոչում և մղում գործունեության: Այս իրողությունն է շեշտվում Սաղմոսաց գրքում և մարգարեություններում: Դավիթ մարգարեն ասում է. «Մորս որովայնից սկսած՝ Դու ես Աստվածն իմ» (Սաղմ. 21.11): Այս խոսքերն ընթերցվում են նաև մկրտության արարողության ժամանակ: «Դու ստեղծեցիր երիկամներն իմ, և մորս որովայնից ինձ ընդունեցիր», - ասում է սաղմոսերգուն (138.13): «Ինձ կանչեց, երբ ես դեռ արգանդում էի, իմ անունը տվեց, երբ ես դեռ իմ մոր որովայնում էի», - ասում է Եսայի մարգարեն (49.1): Աստված մարգարեին ասում է. «Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ Ես ընտրեցի քեզ, և դեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրեցի քեզ ու հեթանոսների վրա մարգարե կարգեցի» (Երեմ. 1.5): «Ե՛ս միայն գիտեմ Իմ նտադրությունները, որ խորհում եմ և պիտի խորհեմ ձեր մասին», - ասում է Տերը (Երեմ. 29.11):

Մենք կյանքում տարբեր փորձությունների մեջ ենք ընկնում, և կարծում ենք, թե Աստված մոռացել կամ անտեսել է մեզ: Բայց անգամ փորձությունների մեջ է դրսևորվում աստվածային նախախնամությունը, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Ձեզ վրա ոչ մի փորձություն չի եկել բացի մարդկանցից եկածից: Բայց հավատարիմ է Աստված, որ ձեզ ավելի փորձության մեջ չի գցելու, քան կարող եք տանել, այլ փորձության հետ փրկության ելք էլ է ցույց տալու, որպեսզի կարողանաք համբերել (Ա Կորնթ. 10.13):

Մարդիկ հեշտ են կորցնում մեկի հանդեպ վստահությունը նրա բացասական արարքների դեպքում: Սակայն Աստվածամարդ հարաբերության մեջ, եթե նույնիսկ մարդիկ անհավատարիմ են գտնվում և կորցնում իրենց հանդեպ վստահությունը, ապա Աստված, ի տարբերություն մարդկանց, միշտ հավատարիմ է մնում: «Իսկ արդ, եթե ոմանք հավատարիմ չգտնվեցին, մի՞թե նրանց անհավատարմությունը Աստծո հավատարմությունը խափանեց: Քա՛վ լիցի», - ասում է առաքյալը (Յո. 3.3):

#### **4. Գիտակցումը, որ խաբել ես կամ չարաշահել ինչ-որ մեկի վստահությունը, մի՞շտ է մեղքի զգացում առաջացնում: Ո՞րն է անազնիվ կամ խաբեբա մարդու պատիժը:**

Հովհան Ոսկեբերանն ասում է, որ եթե Աստված քարե տախտակների վրա գրված տասնաբանյա պատվիրանները չտար Մովսեսին, ապա այդ պատվիրանները դարձյալ գոյություն կունենային, որովհետև դրանք գրված են մարդու խղճի վրա: Եվ խաբեությունը մյուս ոչ աստվածահաճո արարքների նման մեղքի զգացում է առաջացնում, որովհետև մարդու խիղճը ներսից դատապարտում է մարդուն սխալ արարքների համար:

Հոգեբանությունը խոսում է մարդու եսի և գերեսի մասին: Մարդու գերեսը, որը նրա իդեալական կերպարն է մարդու ներսում, միշտ քննադատում է եսին սխալ արարքների համար: Հոգեվերլուծության հիմնադիր Ֆրոյդը սա նմանեցնում է թատրոնի իրականությանը, որտեղ բեմում գործող դերասանը եսն է, իսկ դիտողը՝ գերեսը, որը դերասանին քննադա-

տում է սխալների համար: Դրա համար էլ նաև խաբեությունը մեղքի զգացում է առաջացնում:

Անազնիվ կամ խաբեբա մարդու համար պատիժ է տրվում, նայած թե ինչ հետևանքների է հանգեցրել նրա խաբեությունը: Պետական օրենքով միջանձնային հարաբերություններում կենցաղային մանր խաբեություններին ուշադրություն չի դարձվում: Օրինակ՝ մարդը խաբելով ասում է, թե հիվանդ էր և այդ պատճառով էլ աշխատանքի չի եկել. սա օրենքով չի պատժվում: Բայց օրենքով պատժվում են այն խաբեությունները, որոնք բացահայտ մեծ վնաս են հասցնում պետությանը կամ պետության քաղաքացիներին: Սակայն կրոնական տեսակետից անգամ կենցաղային փոքր խաբեությունները զղջման ու ապաշխարանքի ենթակա են: Խաբեությունը բնորոշվում է մեկ ուրիշին խարդախությամբ մոլորեցնելու կամ նրան վնասելու կամ էլ խաբելու արդեն սովորություն դարձած հատկությամբ ճշմարտությունն անտեղի թաքցնելու մտադրություններով: Մինչդեռ երբեմն մարդուն, երեխային որևէ դժվարին իրողությունից հեռու պահելու կամ պատերազմական իրավիճակում թշնամու առջև ճշմարտությունը թաքցնելու արարքը խաբեություն չի կարելի համարել, որովհետև արարքներն ընդհանրապես արժևորվում են մտադրություններով, և նշյալ դեպքերում նպատակը ոչ թե խաբեությանը հատուկ խարդախությունն ու սուտն է, այլ խնամքը, չդավաճանելը և այլն: Իսկ այլոց վստահությունը չարաշահելու, խաբեության առնչությամբ կարող ենք հիշել, որ Քրիստոս ասում է, թե սատանան է ստի հայրը (Յովհ. 8.44): Եվ մարդկանց վստահությունը չարաշահած, խաբեություն գործած մարդիկ պետք է զղջան ու ապաշխարեն նաև սատանային կամակից լինելու համար:

**5. Չաճախ վստահելով՝ մարդը ռիսկի է ենթարկվում: Բացահայտելով իր գաղտնիքը, պատմելով անձնական ծրագրերի կամ զգացմունքների մասին՝ նա ավելի խոցելի է դառնում: Գուցե ավելի լավ է ընդհանրապես չվստահե՞լ ոչ ոքի:**

Կարելի է վստահել այնպիսի մարդկանց, ովքեր իրապես վստահելի են և կարող են լսելուց հետո օգնել օգտակար խորհուրդներով: Կրոնական ասպարեզում մարդը վստահում է հոգևորականին հատկապես մեղքերի խոստովանության ժամանակ՝ պատմելով իր կատարած սխալ արարքների մասին, ստանալով հոգևորականի խորհուրդներն ու հորդորները: Մարդը կարող է վստահ լինել, որ հոգևորականն իր գաղտնիքները չի բացահայտի, քանի որ եկեղեցական կանոնով խստիվ արգելված է որևէ մեկի մոտ բարձրաձայնել այն, ինչ լսել է խոստովանության ժամանակ:

Մարդիկ հատկապես արևմուտքում հաճախ դիմում են հոգեբաններին՝ նրանց խորհուրդները լսելու, նրանց ասածով առաջնորդվելու համար: Սակայն այս առումով հոգեբանների գործունեությունը, հատկապես հոգեվերլուծությունը ծաղրանմանությունն է քահանայի մոտ մեղքերի խոստովանության: Հոգեբանները հաճախ կարող են հարթել անձի մեջ առկա անհանգիստ վիճակները ոչ ճիշտ մոտեցումներով, որովհետև իրադարձությունները քննում են միայն մարդ-մարդ հարաբերությունների շրջանակում, մինչդեռ հոգևորականները նաև՝ մարդ-Աստված հարաբերությունների դիտարկումով: Հոգեբանները կարող են հանգստացնել անձին՝ չդադարեցնելով նրա մեղքերը, սակայն մարդն ինքնախաբեությամբ կմնա մեղքի մեջ: Մինչդեռ հոգևորականներն առաջին հերթին ուշադրություն են դարձնում մեղքին, մեղքի վերացմանը և ոչ թե մեղքի անտեսումով անձի թվացյալ խաղաղ հոգեվիճակի ապահովմանը:

**6. Ասում են՝ վստահությունը հավատն ու համոզվածությունն է ինչ-որ մեկի ազնվության, անկեղծության ու բարեխղճության հանդեպ: Ովքեր խաբվել են և դառը փորձ ունեն այդ առումով, հաճախ կորցնում են վստահելու ունակությունը: Նրանց ի՞նչը կարող է օգնել:**

Կարող է օգնել ներելը: Մարդիկ ստեղծված են ըստ Աստծո պատկերի և նմանության (Ծննդ. 1.26-27), յուրաքանչյուր մարդ Աստծո արարչագործության գլուխգործոցն է: Ինչպես արվեստի գլուխգործոցներին նայում ենք մեծ հիացմունքով,

այդպես և պետք է նայենք հատկապես մարդկանց, որովհետև մարդիկ էլ Աստծո ստեղծագործության հիմնալի էակներն են: Երբ մարդը մեղք է գործում, որոնցից է նաև ուրիշի վստահությունը չարաշահելը, մենք չպիտի ատենք մարդուն և երես թեքենք նրանից, որովհետև սիրո կոչված քրիստոնյան (Յովհ. 13.34-35), եթե նույնիսկ ատում է, ատում է ոչ թե մարդուն, այլ մեղքը: Մեղքը հոգևոր հիվանդություն է, և ինչպես մարմնավոր հիվանդությունների պարագայում մենք մարդուն չենք արհամարհում նրա հիվանդության համար, այլ կարեկցում ենք և փորձում օգնել, այդպես էլ հոգևոր հիվանդություն ունեցողներից չպետք է երես դարձնենք, այլ խղճահարություն ցուցաբերենք՝ փորձելով օգնել նրան առողջանալու և վեր բարձրանալու իր անկյալ վիճակից:

## **ՆԱԽԱՆՁԻ ԵՎ ԽԱՆԴԻ ՄԱՍԻՆ**

### **1. Ինչպե՞ս են բնորոշվում նախանձը և խանդը եկեղեցական հեղինակների ուսուցմամբ:**

Նախանձը մարդու վշտանալն է ուրիշների հաջողության համար և ուրախանալն է այլոց անհաջողություններով: Եկեղեցական հեղինակները նախանձը համարում են կործանարար մեղք, որովհետև նաև այս բառը, ինչպես նշում է Սուրբ Գրիգոր Տաթևացին, նշանակում է, որ մարդը նախ իր անձին և հոգուն է վնասում, ապա՝ բարեկամներին, ընկերներին: Նախանձը համարվում է չար ուժերի ազդեցության հետևանք, եկեղեցական հեղինակները նույնիսկ օգտագործում են «նախանձի դև» արտահայտությունը: Նախանձը նախ և առաջ սատանայի մեղքն է, որովհետև սատանան նախանձեց Աստծո կողմից մարդուն տրված փառքին ու բարերարություններին, և չկարողանալով վրեժխնդիր լինել Աստծուց՝ վրեժխնդիր եղավ մարդուց: Ինչպես ասվում է Սողոմոնի իմաստության մեջ «Մահը աշխարհ է եկել բանսարկուի նախանձով» (2.24):

Նախանձոտը կոչվում է նախանձաբեկ, որովհետև նախանձի զգացումը մշտապես բեկում և խորտակում է այդպիսի մարդու սիրտը: Նախանձը ներքնապես քայքայում է մար-

դուն, ինչպես ժանգը՝ երկաթին: Նախանձ մարդը չի բացահայտում իր զգացումները, թաքցնում է այն մարդուց, ում հանդեպ ունի այդ դատապարտելի զգացումը, իրեն սիրալիր ցույց տալիս: Սակայն ինչպես ներսից վառվող հարդը դրսից մաքուր է երևում, բայց սկսված կրակը ներքին կողմից վառում և կործանում է այն, այսպես էլ նախանձոտ մարդու հետ է լինում: Նախանձը շատ ավելի վատ է արծաթասիրության մեղքից, որովհետև արծաթասերը, փողասերն ուրախանում է, երբ ինքն է ստանում, իսկ նախանձոտն ուրախանում է, երբ ուրիշը չի ստանում՝ այլոց անհաջողությունն իր համար հաջողություն համարելով: Նախանձն ավելի վատ է բարկության մեղքից, որովհետև բարկությունը լինում է չարիքների, չար գործերի համար, իսկ նախանձը լինում է բարիքների համար: Օրինակ՝ բարկանում ենք, երբ մեկը թերի է հավատքով կամ անկարգ է գործերում կամ թշնամի է մեզ: Սակայն նախանձը պատահում է, երբ նախանձոտ մարդիկ տեսնում են, որ մարդն ուղիղ է հավատքի մեջ ու սրբակենցաղ և փառավորվում է գործերով:

Խանդը տարբեր է նախանձից, այն իր ունեցածը՝ հիմնականում սիրելի էակին կորցնելու երկյուղն է, կամ՝ իր հանդեպ ուշադրության նվազման հետ կապված վախը: Այն հատկանշվում է զայրույթի, անօգնականության, կորցնելու վախի զգացումների միատեղմամբ: Խանդը հանդիպում է նաև երեխաների մոտ, երբ ավագ երեխան խանդում է իրենից ավելի փոքրին, երբեմն վնասում նրան, որովհետև կարծում է, թե ծնողների ուշադրությունը կրտսեր եղբոր կամ քրոջ պատճառով իր հանդեպ պիտի պակասի:

Խանդը մեծապես վնասում է այդ զգացումը կրող մարդուն, վատ անդրադառնում ամուսինների հարաբերության վրա: «Չգոր է սերը մահվան պես, խանդը դաժան է դժոխքի նման, նրա թռիչքը նման է հրի բոցի թռիչքին», - խանդի վնասակար լինելն այսպես է նկարագրվում Երգ Երգոցում (8.6): Դրա համար Աստվածաշունչը խրատում է հեռու մնալ խանդից, ինչպես նաև առիթներ չտալ խանդելու. «Մի՛ խանդիր սրտակից կնոջդ և չար խորհուրդներ մի՛ հարուցիր քո նկատմամբ», - ասվում է Սիրաքի իմաստության մեջ (9.1):

**2. Նախանձը համարվում է յոթ մահացու մեղքերից մեկը, խանդը՝ ոչ: Ո՞րն է մեղքի մահացու և ոչ մահացու լիներություն սահմանումը:**

Եկեղեցական հեղինակների ուսուցմամբ կան յոթ մահացու մեղքեր, որոնք են՝ հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ազահություն, որկրամոլություն, բղջախոհություն: Այս մեղքերը կոչվում են մահացու, որովհետև կարող են ուրիշների, մինչև իսկ սեփական մահվան պատճառ դառնալ: Մահացու մեղքը հաճախ առնչվում է ոչ միայն ֆիզիկական մահվանը, այլև հոգևոր մահվանը, որովհետև այդ մեղքերի մեջ հարատևողը կարող է հոգևոր մահ ունենալ: Հոգևոր մահ է կոչվում չար ընթացքներով Աստուծոց հեռանալը, Տիրոջից հեռու գտնվելը: Նախանձը նաև մեծ ատելություն է բերում, որը կարող է պատճառ դառնալ նույնիսկ մարդասպանության: Սուրբ Գիրքն ասում է. «Ամեն ոք, ով ատում է եղբորը, մարդասպան է» (Ա Յովհ. 3.15): Այսպես էր, որ Կայենը, իր եղբորը նախանձելով, սպանեց նրան (Ծննդ. 4.5-8):

Նախանձից Հովսեփին չարություն արած եղբայրներն ի՞նչ վնաս բերեցին Հովսեփին, ում ցանկացան կործանել (Ծննդ. 37.3-4, 18-36): Չէ՞ որ նա Եգիպտոսի տիրակալ դարձավ, իսկ եղբայրները երկար ժամանակ սովի մեջ էին: Աստված ամեն ինչ տեսնում է և անպատիժ չի թողնում չար գործերն ու զգացումները: Նախանձոտն ինքն է իրեն ներսից մաշում, ապա նաև իր նախանձի պատճառով դժբախտությունների մատնվում: Առակաց գիրքն ասում է. «Ընկերոջ համար հոր փորողն ինքն է ընկնելու նրա մեջ» (26.27): Նաև Դավիթ սաղմոսերգուն է ասում. «Նա ով փոս փորեց, խորացրեց, հենց ինքն էլ ընկավ այն փոսը, որ նա պատրաստեց» (Սաղմ. 7.16): Նախանձից եղբորը սպանած Կայենն Աստծո անեծքին արժանացավ (Ծննդ. 4.10-11) և ինքն էլ սպանվեց Ղամբի կողմից (Ծննդ. 4.23): Նախանձից իրենց եղբայր Հովսեփին վնասածները սովի ու չարչարանքների մատնվեցին (Ծննդ. 42.1-3, 17, 22, 43.1-2, 44.12-14, 47.4): Նախանձից Մովսես մարգարեին բամբասած նրա քույր Մարիամը բորոտությամբ տառապեց (Թվ. 12.1-2, 9-10): Իր հայր Դավիթ թագավորից նախանձի պատճառով թագավորությունը խլելու համար

պայքարած Աբիստողոմը սպանվեց պատերազմում (Բ Թագ. 18.9, 14-15): Քրիստոսին մահ պատճառած հրեաները 70 թ. Երուսաղեմի գրավման ժամանակ Վեսպասիանոս կայսեր որդի Տիտոսի միջոցով պատժվեցին, սպանվեցին, շուրջ հարյուր հազարը գերվեցին, շատերն իրենց երկրից տարաշխարհի ցրվեցին: Հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսը նույնիսկ հաղորդում է, որ Երուսաղեմի պաշարման ժամանակ հրեաների թշվառությունը, սովն այն աստիճանի էր, որ անգամ մայրերը, քաղցից մտագարված, մորթում և ուտում էին իրենց զավակներին, ինչից գարշեցին այդ ամենին ականատես հռոմեացիները:

**3. Մարդիկ հաճախ են գործածում «բարի նախանձ», «չար նախանձ» արտահայտությունները: Ի՞նչ կասեք այս տարբերազատման մասին, և ունե՞ն արդյոք նախանձը և խանդը ընդհանրություններ:**

Նախանձը և խանդը ընդհանրություններ ունեն դրական իմաստով, որովհետև «նախանձ» բառը կարող է նշանակել նաև նախանձախնդրություն, իսկ «խանդ» բառի առաջնային իմաստն է խանդավառություն, եռանդ, ոգևորություն: Խանդավառություն, նախանձախնդրություն իմաստով «նախանձել» բայը գործածված է Առակաց գրքում (6.6). «Մրջյունի մոտ գնա, ո՛վ ծուլ, նախանձի՛ր նրա գործերին և իմաստուն եղիր նրանից ավելի»:

Եկեղացական հեղինակներից նախանձի մասին առանձին ճառեր ունեն Սուրբ Հովհան Ոսկեբերանը, Սուրբ Բարսեղ Կեսարացին, մեր հայ եկեղեցական հեղինակներից՝ Սուրբ Գրիգոր Տաթևացին: Հովհան Ոսկեբերանը և Բարսեղ Կեսարացին խոսում են դատապարտելի նախանձի մասին, սակայն Գրիգոր Տաթևացին առանձնացնում է նախանձի տեսակները՝ ասելով, որ նախանձը լինում է չար և բարի: Նախանձը չար է, երբ բարի մարդուն տեսնելով՝ ցավում են, որ նա բարիքներ ունի և կամ ուրախանում են, երբ մեկին չար բան է պատահում: Նախանձը չար է նաև այն դեպքում, երբ մեկը, չարագործների վատ ընթացքը տեսնելով, ինքը ևս ուզում է նմանվել նրանց: Նախանձը բարի է, երբ մարդը, բարի գոր-

ծեր տեսնելով, ցանկանում է ինքը ևս դրանք գործել: Այս բարի գործերից Սուրբ Գրիգոր Տաթևացին նշում է պահքը, աղոթքը, ողորմությունը, հավատը, հույսը, սերը: Սրա համար է առաքյալն ասում. «Նախանձախնդիր եղեք շնորհների» (Ա Կորնթ. 12.31, 14.1, 12): Այսպիսի նախանձը բարի է ու հաճելի Աստծուն և մարդկանց ևս բարի է երևում: Այսինքն՝ եթե նախանձը ուրիշի բարիքների համար ցավալը, վշտանալը չէ, այլ ուրախանալը և նույնպես այդպիսի բարիքներին հասնելու նախանձախնդրությունը, ապա այդպիսի նախանձը բարի է կոչվում:

#### **4. Ճիշտ է, որ նախանձը մարդու՝ սեփական անձի հանդեպ ունեցած թերաբժեքության հետևանք է:**

Նախանձը նախ և առաջ չարության և ոչ թե մարդու թերաբժեքության զգացման հետևանք է: Թերաբժեքությունը մի զգացում է, որով տառապում են բազմաթիվ մարդիկ: Թերաբժեքության մտածումը մարդու ժամանակի և մտքերի մեծ մասն սպառում է ուրիշի ենթադրյալ կարծիքների մասին անընդհատ մտածելու, թերաբժեքություն ունեցող մարդու կողմից շատ հաճախ առանց հիմքի ենթադրություններ անելու այլոց՝ արդեն եղած կամ ապագայում լինելիք կարծիքների մասին: Եվ դա հարկադրում է կյանքը կառուցել, գործերը, վարվեցողությունը, խոսքերն արտահայտել ոչ թե ըստ սեփական կամքի կամ Աստծո կամքի համաձայն, այլ հիմնականում՝ դիմացի մարդկանց ենթադրյալ կարծիքների նկատառումով: Այս դատարկ զբաղմունքը բերում է երկչոտություն, մարդկային հարաբերությունների մեջ սխալ դիրքորոշումներ: Պետք է անհապաղ դադարել մշտապես ուրիշի կարծիքների մասին ամբողջ օրը մտովի դատողություններ անելուց, և փոխարենը մտածել Աստծուն փառաբանության, սեփական գործերի ու ծրագրերի, սիրով ու արդարությամբ ըստ Աստծո կամքի ապրելու մասին: Ուրիշների կարծիքի մասին թերաբժեքության բարդույթով տառապողների մտածումը դադարեցնելը մեծ թեթևություն և հանգստություն կբերի, մարդն ի վերջո կազատվի ինքն իրեն անհարկի մտքերով տառապանքներ պատճառելուց և խաղաղ հոգով ավելի արդ-

յունավոր գործեր կկատարի: Ուրեմն, նախանձը թերարժեքության հետևանք չէ, որովհետև թերարժեքությունը ստիպում է մարդուն ոչ թե վշտանալ ուրիշների հաջողությունների համար, այլ միշտ սիրաշահել և հաճոյանալ ուրիշներին: Այսպիսով, նախանձը գալիս է չարի գայթակղությունից և մարդուն ևս մղում չար գործողությունների անգամ իրեն բարիք անողների հանդեպ: Այսպես Սավուղ թագավորը նախանձեց Դավթին, ով և՛ իրեն, և՛ ողջ ժողովրդին փրկեց պատերազմից ու կոտորածից՝ Գողիաթին հաղթելով: Սավուղը նախանձեց միայն այն պատճառով, որ ժողովուրդը Դավթին ավելի գովեց, քան իրեն (Ա Թագ. 18.7): Այսպես նաև հրեաները նախանձեցին Քրիստոսին և խաչեցին Նրան, ով իրենց մեջ հրաշքներ էր գործում, քաղցածներին կերակրում, դևերին քշում, մեռյալներին հարություն տալիս: Այսպես նաև մարդը նախանձում է մեկին, ով իրեն ոչ մի չարիք չի արել:

Մեկ ուրիշի՝ բարիքներով լի կյանքը նշանակում է, որ Աստված փառավորվում է նրա միջոցով: Ոսկեբերանը նշում է, որ նախանձ մարդը կարող է ասել, թե իրեն վշտացնում է ոչ թե ուրիշի բարիքը, այլ ինքը ցանկանում է, որ Աստված փառավորվի հենց իր և ոչ թե ուրիշի միջոցով, որովհետև նախանձոտը կարծում է, որ ինքն ավելի արժանի է բարիքների, քան մյուսները: Հետևաբար, նախանձի մեջ նաև հպարտություն, գոռոզություն կա, և պատահական չէ, որ յոթ մահացու մեղքերի շարքում նախանձն անմիջապես հպարտությունից հետո է հիշվում: Հատկապես այս երկու մեղքերը սատանայի մեղքերն են՝ հպարտություն Աստծո դեմ և նախանձ մարդու հանդեպ: Պետք է հեռու մնալ մարդուն սատանային նմանեցնող և չարին գործակից դարձնող մեղքերից:

**5. Իբրև չարիք՝ նախանձը բացասական ազդեցություն է թողնում մարդու հոգևոր և բարոյական կյանքում: Ինչպիսի՞ հետևանքներ այն ունի հասարակության մեջ:**

Նախանձի արատավոր հատկությունն այն է, որ չար զգացում է բերում ոչ թե օտարի, այլ հատկապես բարեկամի, հարազատի, հարևանի հանդեպ: Մարդը չի նախանձում այլ ազգիներին, այլ հենց իր ազգակցին, իսկ իր ազգակիցներից՝ իր

նմանին կան իր մերձավորներին: Քաղաքացին չի նախանձում զինվորին և ոչ էլ իշխանը՝ հողագործին, այլ նմանը՝ իր նմանին, թագավորը՝ թագավորին, արհեստավորը՝ իր գործակցին, գյուղացին՝ մեկ ուրիշ գյուղացու, հոգևորականը՝ մեկ ուրիշ հոգևորականի, ինչպես ասում են Սուրբ Հովհան Ոսկեբերանը, Սուրբ Գրիգոր Տաթևացին: Այսպիսի նախանձը բերում է հասարակության մեջ սիրո պակասի, և այդ նույն հասարակության մեջ վատ պատահարների տարածման, որովհետև նախանձը վշտեր ու տրտմություն, Աստծո պատիժն է բերում նախանձոտ մարդուն: Ահա այսպես էլ մի հասարակության մեջ նախանձը պակասեցնում է սերը և տարբեր նեղություններ ու դժբախտություններ բերում:

Նախանձը նաև հասարակության մեջ սնտիապաշտությունների տեղիք է տալիս՝ վնասելով հավատքի ճիշտ ընկալումը: Այսպիսի սնտիապաշտություններից է նախանձ մարդու չար աչքից պաշտպանվելու համար աչքուլունքների, փշերի գործածությունը, ինչն ընդունելի չէ քրիստոնյաների համար, քանզի մեր զորությունը մեր հավատքն է, տերունական խաչը և ոչ թե տարբեր անսուրբ առարկաներ: Պարզվում է, որ այս սնահավատությունը եղել է դեռևս քրիստոնեության վաղ շրջանում, որի մասին խոսում է Սուրբ Բարսեղ Կեսարացին: Նախանձի մասին իր ճառում նա ասում է, որ նախանձով տառապողներին ավելի վնասակար են համարում, քան թունավոր կենդանիներին, որոնք իրենց թույնը վերքի միջոցով են մարդու մեջ ներարկում և նրանց կծած տեղը աստիճանաբար ավելի է վնասվում: Մինչդեռ նախանձոտների մասին մտածում են, որ նրանք նույնիսկ մի հայացքով կարող են վնասել մեկի առողջությունը, մյուսի գեղեցկությունը, մեկ ուրիշի հաջողությունը և այլն, կարծես նախանձոտ աչքերից վնասակար մի բան է հեղվում: «Ես մերժում եմ այսպիսի սնահավատությունը,- ասում է Սուրբ Բարսեղ Կեսարացին,- որովհետև այն ծեր կանանց կողմից է ներմուծված, բայց հաստատում են, որ բարին ատող դևերը, երբ մարդկանց մեջ դևերին հատուկ կամայականություններ են գտնում, օգտագործում են բոլոր միջոցները՝ նրանց գործածելու իրենց սեփական մտադրությունների համար, որով և նախանձոտների աչքերը ևս գործածում են իրենց կամքին ծառայության հա-

մար»։ Պետք է իմանալ, որ հավատքն է չարիքների դեմ պատվար լինում, մինչդեռ սնոտիապաշտական առարկաների, թալիսմանների գործածությունը վնասում է մարդու հավատքը, հոգևոր առումով տկարացնում մարդուն և թույլ տալիս չարի հարձակման։ Դրա համար պետք է ինքներս մեզ կործանարար դևերի ծառաներ չդարձնենք։

Հասարակության մեջ այլ դասի և ոչ մերձավորների բարիքների հանդեպ հասարակության շատ անդամների դժգոհությունն արդեն տարբեր է նախանձից. այն գալիս է արդարության պահանջից։ Հասարակության մեջ ի հայտ է գալիս այդ դժգոհությունը, երբ հասարակությունը խիստ բևեռացվում է, այսինքն՝ ակնհայտորեն բաժանվում է մեծահարուստների և աղքատների, ընդ որում այդ մեծահարուստներն իրենց աղքատ քույրերի ու եղբայրների քաղցած հայացքների առջև իրենց ահռելի շռայլություններ են թույլ տալիս։ Այս դեպքում ոչ թե նախանձի՝ ուրիշի բարիքների համար վշտանալու հատկությունն է դրսևորվում, այլ հաշվետվության և բացատրության կարիքը, քանի որ շատերի համար անհասկանալի է մնում, թե նույն երկրի նույն պայմաններում ապրող մարդիկ ինչպե՞ս հանկարծ նյութական ունեցվածքով այսքան տարբերությունների մեջ ընկան, և կամ ինչպե՞ս ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամը պայմանների վատթարացումով հարվածում է հասարակ ժողովրդին, իսկ այլոց ֆինանսատնտեսական գործերը ծաղկում են ապրում։ Երկրում երկակի չափանիշների գործածումը՝ օրենքի, արդարադատության, ազատ գործունեության շրջանակներում՝ պայմանավորված հարուստ և աղքատ, հեղինակություն և պարզ աշխատավոր լինելու նկատառումներով, մեղմ ասած, չի նվազեցնում արտագաղթը, աղքատությունը, նեղությունները, և ավելին՝ սրանով ժողովուրդը ազգ լինելուց վերածում է զանգվածի, որին կարող են կամազրկել, ձևավորել ըստ ուզածի, և որը կարող է իրեն վերևից նետված նյութականի փշրանքների, որի առկայության դեպքում նույնիսկ միմյանց կարող են վնասել՝ մեկը մյուսից ավելի ունենալու համար։

Արդարադատության և օրենքի կիրառման երկակիության պնդումը բանբասանք կամ չարախոսություն կարող է լինել, երբ արվում է անձնական հակակրանքի կամ սուբյեկտիվ

կարծիքի դեպքում: Սակայն մենք այսօր սա բարձրաձայնում ենք, որովհետև մանրամասներին, հատուկ տեղեկություններին իրազեկ չլինելու բացը լրացնում են Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուսումնասիրությունների վրա հիմնված զեկույցները և նրա բարձրաձայնումները: Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, որ գողություն է ոչ միայն մեկի ունեցվածքը հափշտակելը, այլև գողություն է ունենալը և ողորմությունը չանելը: Սուրբ Հովհան Մանդակունին ասում է, որ քիչ ունեցողի քիչ ողորմությունը Աստծուն հաճելի է, սակայն շատ ունեցողի քիչ ողորմությունն արդեն ժլատություն է: Այսպիսով, պետք է նման հասարակության մեջ դադարի գողությունը ողորմության գործերով, քանզի դրանով է արտահայտվում նաև արդարությունը, այս դեպքում՝ սոցիալական արդարությունը հասարակության ներսում: Արդարություն անել կարողացող, բայց արդարություն չկատարող մարդը, ի վերջո, կտեսնի իր հանդեպ Աստծո արդարադատությունը: Այդ իսկ պատճառով ավելի լավ է նախապես արդարության, բարության, ողորմության գործեր անել և Աստծո պատժի փոխարեն Աստծո օրհնությունները ժառանգել:

#### **6. Մարդը կարո՞ղ է լիովին ձերբազատվել նախանձից: Եթե այո, ապա ինչպե՞ս:**

Մարդը պետք է իմանա, որ եթե վշտանալ է պետք, ապա հարկ է վշտանալ ոչ թե ուրիշի բարիքների, այլ սեփական դժվարությունների ու նեղությունների համար: Քրիստոս ասում է. «Եթե սիրեք միայն նրանց, որոնք ձեզ սիրում են, ձեր վարձն ի՞նչ է. չէ՞ որ հեթանոսներն էլ նույնն են անում» (Մատթ. 5.46): Եթե իրեն սիրողներին սիրողը հեթանոսներից լավը չի համարվում, ապա ի՞նչ ներում կստանա նա, ով վնաս է հասցնում իրեն ընդհանրապես չվնասած մարդուն: Շատերի համար հեշտ է վշտի մեջ ընկերոջ հետ լինել, բայց դժվար է ուրախանալ ընկերոջ ուրախությամբ մարդու մեջ ծագող նախանձի պատճառով: Նախանձ մարդն իր մխիթարությունը գտնում է ուրիշի դժբախտության մեջ՝ տեսնելով իր նախանձը գրգռողներից որևէ մեկի անկումը:

Սուրբ Գրիգոր Տաթևացին, նախանձից զգուշացնելով, դիպուկ համեմատություններով հոգեշահ խորհուրդներ է տալիս: Ինչպես մարմնի անդամները սիրում են միմյանց, նույնպես և մենք պետք է միմյանց սիրենք: Մի անդամը չի նախանձում մյուսին, թեպետ և չունի նրա հատկությունն ու գործը: Օրինակ՝ ձեռքը չի նախանձում աչքերին, և ոչ էլ ոտքերը՝ ձեռքերին: Նույնպես և Եկեղեցու մարմնի մեջ մեկը վերին անդամ է՝ ինչպես առաջնորդները, մյուսը՝ վերջին, ինչպես գործավորները, մեկ ուրիշն էլ միջին՝ ինչպես ունևորներն ու մեծատունները, ոմանք էլ աղքատ են և ծառայում են մեծատուններին: Եվ պետք չէ, որ մի մարդը նախանձի մյուսին:

Մարմնի անդամները, կարելի է ասել, սիրում են միմյանց, քանի որ մի անդամը այլ անդամներից չի խնայում իր գործերը, այլ ձրիաբար բաշխում է: Այսպես աչքերն իրենց լույսը տալիս են ձեռքերին և ոտքերին: Նույն կերպ էլ մենք պետք է բաշխենք մեր գործերը՝ մարդկանց օգնելով, բարերարություններ, ողորմություններ անելով:

Յուրաքանչյուր մեղք բուժելի է հատկապես դրան հակառակ առաքինության գործադրումով: Այսպես, ամբարտապանության դիմաց դրվում է խոնարհություն գործելը, նախանձի և ատելության դիմաց՝ սերը, բարկության դիմաց՝ հեզությունը, ծուլության դիմաց՝ ժրությունը, ազահության և արծաթասիրության դիմաց՝ ողորմությունը, որկրամոլության դիմաց՝ պարկեշտությունը, ըստ որի՝ պետք չէ զինով հարբել և մտով հազենալ, վատ խոսքերի և հայհոյության դեմ՝ մեղան ու փառաբանությունը, ծաղրի ու կատակերգության դեմ՝ լացը և միշտ հոգևորի մասին խոսելը, բամբասանքի դեմ՝ լռությունը: Այս հորդորներից երևում է, որ նախանձ ունենալու պարագայում պետք է ջանանք սեր դրսևորել, որից նախանձի զգացումը նահանջում է՝ տեղը զիջելով Քրիստոսապատվեր սիրո դրսևորմանը: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է. «Մի՛ ատեցեք եղբայրներին չար նախանձով, այլ սիրեցե՛ք նրանց սուրբ սրտով, քանի որ սերն Աստծուց է (Ա Յովհ. 4.7). և ով սիրում է եղբորը, սիրում է Աստծուն (հմմտ. Ա Յովհ. 4.20): Իսկ նախանձն ու ատելությունը սատանայից են»:

**7. Երբեմն խանդի մասին խոսելիս, այն բնորոշում ենք որպես անսահման սիրո արդյունք կամ անվստահության հետևանք: 17-րդ դարի ֆրանսիացի քաղաքական գործիչ և փիլիսոփա Ֆրանսուա դը Լարոշֆուկոն, սակայն, ասել է. «Խանդի մեջ մեկ բաժինը սեր է, իննսունինը բաժինը՝ ինքնասիրություն»: Այս դեպքում խանդը կարելի՞ է մեղք համարել:**

Խանդը ծնվում է առանձնահատուկ մի մարդու հանդեպ սեփականատիրության զգացումից, ուրիշի անձը սեփականացնելու ցանկությունից: Ճիշտ է այն նկատառումը, որ եթե նույնիսկ խանդն առաջանում է սիրուց, ապա՝ ոչ թե ճշմարիտ, այլ էգոիստական սիրուց: Սեփականատիրոջ զգացումը հակառակ է մերձավորին ծառայությանը, որ պատվիրեց Քրիստոս (Ղուկ. 10.30-37):

Սուրբ Յովհան Ոսկեբերանն այսպես է դիմում խանդոտ մարդուն. «Ասա՛ ինձ, ինչո՞ւ ես ողջ օրը քեզ տրամադրում ընկերներիդ, իսկ կնոջդ՝ միայն երեկոները: Այդպես վարվելով՝ չես կարող կասկածները վանել: Եվ եթե կինը մեղադրում է քեզ, մի՛ վիրավորվիր, դա ընկերության և ոչ թե հանդգնության նշան է, դա բոցավառ սիրո, ջերմ համակրանքի և նախազուլշացման մեղադրանք է: Նա վախենում է, որպեսզի որևէ մեկը չգողանա իր ամուսնական առագաստը, իրենից չխլի բարձրագույն բարիքը, չզրկի իր գլխից»: «Ոչնչանում է նաև սերը, եթե վրդովված է խանդով», - ասում է Սուրբ Եփրեմ Ասորին:

Խանդի հիվանդությամբ վարակված հոգին դյուրահավատ է դառնում և, իր լսելիքը բացելով բոլորի համար, չի կարողանում տարբերել բամբասողներին ճիշտ խոսողներից: Եվ նույնիսկ այդպիսի մեկին ավելի արժանահավատ են թվում նրանց խոսքերը, ովքեր ավելացնում են կասկածը, քան նրանցը, ովքեր ջանում են կասկածը փարատել: Խանդոտ ամուսինը հրահանգում է կնոջը տանից դուրս չգալ: «Իսկ ո՞վ կհամաձայնի կնոջ հրամանով անընդհատ տանը նստել», - հարցնում է Յովհան Ոսկեբերանը՝ ցույց տալով խանդի անհեթեթ կողմերը: Խանդից ամուսնու առնչությամբ կասկածներ ունեցող կինը, ամուսնու սաստումը տեսնելով, չի կարողանում մխիթարվել, իր զայրույթը բառերով արտահայտել:

Մեկ կամ երկու անգամ ամուսինը կտանի նրա վրդովմունքը, բայց եթե կինն անընդհատ շարունակի իր հանդիմանությունները, ապա ամուսինը նրան շուտով կսովորեցնի, որ ավելի լավ է լռությամբ տանջվել: Այս ամենը տեղի է ունենում կասկածների դեպքում:

Խանդի և նման բացասական զգացումների ժամանակ մարդը վնաս է կրում նաև հոգևոր կյանքում, այդ զգացումների ազդեցության տակ սխալ բաներ խնդրում աղոթքներում: Չիմանալով, թե ինչն է օգտակար, հաճախ անօգուտն ենք խնդրում աղոթքի մեջ: Նաև Պողոս առաքյալն է ասում. «Մենք աղոթում ենք և չգիտենք, թե ինչպես արժան է աղոթել» (Յո. 8.26): Սա ցույց տալու համար Սուրբ Հովհան Ոսկեբերանը բերում է Ռաքելի օրինակը: «Մարդը չգիտե, թե ինչ է ուզում, չի հասկանում, թե ինչ է խնդրում: Եվ մեծ մասամբ ուզում է վատթարը, խնդրում վնասակարը: Ռաքելը՝ Հակոբի կինը, անպտուղ էր և երեխաներ չուներ: Նա կրկնակի տրտմում էր, քանզի տեսնում էր, որ ինքը երեխաներ չունի, իսկ իր քույրը շատ ունի: Ի՞նչ սարսափելի կիրք է խանդը հատկապես կանանց սրտերում: Ռաքելը նախանձեց իր քրոջը և խանդից ուզում էր անգամ մեռնել: «Երբ Ռաքելը տեսավ, որ ինքը Հակոբի համար որդի չի ծնում, նախանձեց իր քրոջը և Հակոբին ասաց. «Ինձ զավակներ պարզևհիր, այլապես կմեռնեն» (Ելք 30.1): Բայց ինչպիսի՞ն կլինի քո ծննդաբերությունը, ի՞նչ լավ բան կստանաս քո երեխաներից, որոնց այդքան ուժգին ցանկանում ես: Ավա՛ղ, ի՞նչ են լսում: Եկավ Ռաքելի ծննդաբերության ժամը և «նրա ծննդաբերությունը դժվարին եղավ» (Ծննդ. 35.17): Որդուն կյանք տվեց, իսկ ինքը մեռավ ցավերից: Ցանկությունների որդին դարձավ վշտի որդի: Ինչպե՛ս կզոջար նա այն բանի համար, ինչն այդքա՛ն ցանկանում էր: Հոգին ավանդելիս, քանի որ մեռնում էր, նա որդու անունը դրեց Բենիամին՝ իմ վշտերի որդի (Ծննդ. 35.18)»:

Եկեղեցական հեղինակն իրավամբ գրում է. «Ոսկեբերանի խոսքն ավելի քան արդար է: Քրիստոնյա՛, դու Աստուծուց զավակներ ես խնդրում: Բայց գուցե նրանք քեզ ավելի շատ արցունք, քան ուրախություն բերեն: Առողջություն ես խնդրում, բայց գուցե ժամանակի ընթացքում բազմապատկվեն նաև քո մեղքերը: Հարստություն ես խնդրում, բայց գուցե այն պատ-

ճառ դառնա քո կործանման: Պատիվ ես խնդրում, բայց զուցե ինչքան վեր ելնես, այնքան ավելի ներքև ընկնես: Դու խնդրում ես աշխարհային և ժամանակավոր բարիքներ, բայց զուցե հենց դրանցում կյանքիդ համար մահ և հոգուդ համար չարչարանք գտնես: Դու չգիտես, թե ինչ ես խնդրում»: Այսպիսով, եթե մարդկային ցանկությունն այդքան սխալական է և միայն աստվածային կամքն է անշեղ, ի՞նչ է մնում անելու, եթե ոչ սեփական կամքը հնազանդեցնել աստվածային կամքին: Ցանկանալ միայն այն, ինչ ցանկանում է Աստված և աղոթքներում ասել. «Չայր իմ... բայց ոչ՝ ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես Դու... Քո կամքը թող լինի» (Մատթ. 26.39-42)»:

## ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. Ինչո՞ւ է պետք ներել:

Աշխարհը, երկրները, ընտանիքները լցված կլինեին թշնամանքով ու ատելությամբ, եթե չլիներ միմյանց ներելը: Տեսնում ենք, որ մարդկության կյանքը խաղաղության մեջ չի անցնում. միշտ աշխարհում մի տեղ կա հակամարտություն, պատերազմ, արյունահեղություն: Հին և Նոր Կտակարաններից ներելու վերաբերյալ հետևյալ խոսքերը կարող ենք հիշել: Մովսես մարգարեն հրեաներին ուսուցանեց. «Կյանքի դիմաց՝ կյանք, աչքի դիմաց՝ աչք, ատամի դիմաց՝ ատամ» (Ելք 21.23-24): Նոր Կտակարանում՝ ի մասնավորի Մատթեոսի Ավետարանի Լեռան քարոզում, Քրիստոս ասում է. «եթե մեկը քո աջ ծնոտին ապտակ տա, նրան մյուսն էլ դարձրու» (Մատթ. 5.39): Թվում է, թե Հին Կտակարանի խոսքը բավականին դաժան է, բայց այն արդարության աստիճանին բարձրացրեց մարդկային հարաբերությունները: Դա նշանակում էր, որ ուրիշին երբեք չես կարող վնաս հասցնել անիրավ կերպով և փոխհատուցում կարող ես պահանջել միայն այն դեպքում, երբ քեզ վնաս են հասցրել: Այսպիսով, Մովսեսը մարդկանց բարձրացրեց արդարության աստիճանին, իսկ Քրիստոս՝ շնորհի աստիճանին՝ սովորեցնելով ներել և չարին բարիով պատասխանել (Մատթ. 5.43-48):

Մեզ համար մարդկային տրամաբանությամբ սխալ է թվում Քրիստոսի ուսուցանած ձևով վարվելը, սակայն Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, որ մարդկանց ներելը, մյուս երեսը դարձնելը քո հանդեպ թշնամաբար տրամադրված անձի վրա ցնցող ազդեցություն է ունենում, և այդ դեպքում թշնամիներն անգամ դառնում են մեծագույն բարեկամներ: Իհարկե, խոսքն այստեղ սատանային ներելու, նրա փորձություններին տրվելու և կամ թշնամի բանակի մասին չէ, որը գալիս է սպանելու և ոչնչացնելու նպատակով: Այս վերջին դեպքի համար գործում է Հայրենիքը, սրբությունները, ժողովրդին պաշտպանելու նպատակով Քրիստոսի պատվիրանը, որն ասում է. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. 15.13):

## **2. Ինչպե՞ս կարելի է ներել մեկին, որ դավաճանել կամ վիրավորել է:**

Իսկ ինչպե՞ս Քրիստոս ներեց Իրեն դավաճանած, ուրացած Պետրոս առաքյալին (Հովհ. 21.15-17): Քրիստոս ասում է. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարություն արե՛ք ձեզ ատողներին և աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում» (Մատթ. 5.44): Մեզ համար առաջին հայացքից անարդարացի է թվում այսպես վարվելը. ինչո՞ւ պետք է ներենք մեզ ատողներին կամ հալածողներին: Սակայն անիծողներին անիծելով, հալածողներին հալածելով՝ մենք ինքներս դառնում ենք չարագործներ, երբ չարագործությունը պատժում ենք չարագործությամբ: Քրիստոսի ասածն այն է, որ բոլոր դեպքերում մենք կարողանանք մնալ մաքուր ու բարոյական, հեռու՝ մեղքից ու չարությունից: Քրիստոսի այս պատվերը նաև աստվածանմանության հորդոր է՝ համապատասխան մեկ այլ պատվիրանի. «Կատարյալ եղե՛ք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5.48): Քրիստոս ասում է, որ Աստված արևը ծագեցնում է և՛ չարերի, և՛ բարիների վրա (Մատթ. 5.45): Այսպես նաև մենք պետք է մեր ներումը և բարությունը տարածենք բոլորի վրա՝ աստվածանմանության արարքներ գործելով: Ներելու համար պետք է աղոթել, ինչ-

պես Քրիստոս խաչի վրա աղոթեց իրեն խաչած մարդկանց համար (Ղուկ. 23.34), կամ ինչպես Ստեփանոս նախասարկավազը, որի մասին պատմվում է Գործք առաքելոցում, աղոթեց իրեն քարկոծելով սպանող մարդկանց համար (Գործք 7.59): Աղոթքն իր գործությամբ կարող է փոխել մարդուն, որի համար աղոթում են, բացի դրանից աղոթողի մոտ կարող է համապատասխան զգացում առաջացնել, որն անհրաժեշտ է ներել կարողանալու համար:

**3. Ասում են՝ ուրիշներին ներելը ճանապարհ է հարթում ավելի բարձրագույն՝ աստվածային ատյանի կողմից սեփական մեղքերի թողության ու ներման համար: Որո՞նք են ներելու մնացած օգուտները:**

«Հայր մեր» աղոթքում խնդրվում է. «Ների՛ր մեր մեղքերը, ինչպես որ մենք ենք ներում մեր պարտապաններին» (Մատթ. 6.12): Սա նշանակում է, որ Աստուծուց ներում ստանալու պայման է մեր կողմից մեզ վիրավորողներին, մեր դեմ մեղք գործածներին ներելը: Չներելու դեպքում աղոթքի խոսքից բխող եզրակացությունն այն է, որ ինքներս ներում չենք գտնի Աստուծո կողմից: Հետևաբար, ներելն Աստուծուց պատվիրված և Նրան հաճելի արարք է: Ներումը նաև մարդու անձնական հոգևոր խաղաղության, ներդաշնակության համար է: Սուրբ Եփրեմ Ասորին ասում է, որ թշնամիներին սիրելու պատվիրանը տրվեց նաև մեր անձնական օգտի համար, որպեսզի մենք չկորցնենք հոգևոր անդորրն ու խաղաղությունը: Իրոք, այն անձը, ով չի կարողանում ներել, բարկության մեջ է լինում, իր մտքում խոսում է, վիճում է իրեն վիրավորած անձի հետ, կորցնում է իր հանգիստը: Մինչդեռ ներելը մարդուն ազատում է թշնամության զգացումից:

Աստուծո ներումն ստանալու համար Քրիստոս կարևորեց հոգևորականների կողմից ներման արժանանալը: Նա առաքյալներին ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի. եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհ. 20.22-23)», «ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում: Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, թող արձակված լինի երկնքում» (Մատթ. 18.18): Առաք-

յալներն իրենց հոգևոր իշխանությունը ձեռնադրությամբ փոխանցել են իրենց հաջորդողներին և այդ իշխանությունն ունեն հոգևորականները: Ուրեմն, ամձի համար բացի Աստծո առջև իր զղջումից, կարևոր է նաև հոգևորականների միջոցով ներում ստանալը: Քանի որ մարդը մեղք է գործում երեք ուղղություններով՝ Աստծո կամքին հակառակ գնալով, որևէ անձի վնաս պատճառելով, Քրիստոսի հիմնած եկեղեցու կանոնները խախտելով, ապա նրա ներումը ևս պետք է լինի այս երեք ուղղություններով:

**4. Երբեմն ավելի հեշտ է կողմնորոշվել ներել-չներելու հարցում, երբ սխալ գործողն անկեղծորեն զղջում է: Ինչպե՞ս վարվել հակառակ պատկերի դեպքում:**

Քրիստոսի օրինակը մեզ ցուցում է տալիս: Քրիստոս ներեց ոչ միայն մեղավոր կնոջը, ով, զղջալով իր մեղքերի համար, նաև Տիրոջ ներումն էր խնդրում Նրա ոտքերի մոտ (Ղուկ. 7.44-48), ոչ միայն խաչված աջակողմյան ավազակին, ով իր մեղավոր լինելը գիտակցելով նաև Քրիստոսից ներում խնդրեց (Ղուկ. 23.40-43), այլև Փրկիչը ներեց Գեթսեմանիի պարտեզ Իրեն ձերբակալելու եկածներին, անգամ բուժեց իր դեմ ելնողի ականջը, որ կտրեց Պետրոս առաքյալը (Ղուկ. 22.50-51, Յովհ. 18.10): Նա ներեց իրեն խաչողներին և այդ խաչելությունը սադրողներին (Ղուկ. 23.34), ովքեր ամենևին էլ չզղջացին իրենց դատապարտելի արարքի համար: Ուրեմն, ամեն պարագայում ներումը պետք է, որովհետև այսպիսի ներումն է հիմքը կյանքում խաղաղության, սիրո վերականգնման: Այսպիսի ներումով են հաճախ նաև հաշտվում միմյանց դեմ մեղք գործած ծնողներն ու որդիները, կանայք և իրենց ամուսինները, ընկերներն ու հարևանները: Այսպիսի ներումը փակում է անվերջամալի թշնամության դուռը և հնարավորություն տալիս մեղսավոր մարդուն, ով տեսնում է անգամ առանց իր զղջալու ներման առկայությունը, անդրադառնալու իր սխալին և սրբագրելու մեղքերը:

**5. Անկեղծ զղջացող մեծ հանցագործին հաճախ չի ներում հասարակությունը: Արդյո՞ք պատասխանատվության բեռն է ստիպում հասարակությանը մերժել ներելու հնարավորությունը:**

Դաժան հանցագործություն կատարած անձին հասարակությունը դժվար է ներում, նույնիսկ երբ այդ հանցագործը զղջում է: Պատճառն այն է, որ նրա զղջումով չեն վերականգնվում այն վնասները, որ պատճառել է հանցագործ մարդը, կյանքի ետ չեն գալիս այն անձինք, որոնց մարդասպանն անգթորեն սպանել է: Եվ քանի որ հասարակությանը պատճառած վնասը մեծ է և չի վերականգնվում հանցագործի զղջման արարքով, ապա այդ հասարակությունը դժվարանում է ներել, քանզի գործված մեծ չարիքը զղջումով չի վերանում: Այստեղ պետք է նշել Եկեղեցու և դատական համակարգի մոտեցումների տարբերությունները: Փարիսեցու և մաքսավորի մասին առակում (Ղուկ. 18.9-14) տեսնում ենք, որ իր մեղքերն ու հանցանքները խոստովանող մաքսավորը, ինչպես ասում է Քրիստոս, տաճարից արդարացած է դուրս գնում, իսկ մաքսավորը, ով հասարակության մեջ բարի գործերով, օրինապահությամբ ապրող մարդ էր, բացասական գնահատականի է արժանանում (Ղուկ. 18.14), քանի որ հպարտացավ իր ապրելակերպով և իրեն բարձր դասեց մեղավոր մաքսավորից: Քրիստոնեության մեջ դատապարտելի է համարվում հպարտությունը՝ գոռոզության, բարձրամտության իմաստով, ինչպես նաև անձն ուրիշներից բարձր դասելը, ուրիշներին ստորակարգ համարելը: Այսպիսի վարմունքը եսակենտրոն և էգոիստական է, քանզի բացակայում են ճշմարիտ սերն ու գթասրտությունը: Հանցագործին բացահայտելով՝ դատական համակարգը նրան դատապարտում է տարիների ազատազրկման: Եկեղեցում հանցագործը ներում է գտնում՝ նրա առջև բացվում է Աստծո անսահման սիրո, մեղավորների համար իր կյանքը տված Քրիստոսի պատկերը: Սակայն պետք է նշել, որ հանցագործների վրա (եկեղեցական լեզվով նրանք պարզապես կոչվում են մեղավորներ, մեղսագործներ) ապաշխարություն է դրվում երբեմն երկու տասնյակ տարիներից ավելի: Այդ ընթացքում նրանց արգել-

վում է առաջ գալ եկեղեցու գավթից՝ դռան մոտի տարածքից, քանի որ դա է ապաշխարողների տեղը, արգելվում է նաև մոտենալ Սուրբ Հաղորդությանը ապաշխարության բոլոր տարիների ընթացքում:

Հաղորդության մասին պետք է նշել, որ երբեմն ընդունելի չէ հաճախակի կամ ամեն կիրակի պատարագին Հաղորդություն ստանալը, որովհետև առաքյալն ասում է, որ Հաղորդությանն անարժանորեն մոտենալն օգուտի փոխարեն մեծամեծ վնասներ է պատճառում (Ա Կորնթ. 11.28-30): Հոգևորականը, ում մեղավորը մեղքերի խոստովանության ժամանակ հայտնել է իր հանցագործության մասին, ոստիկանություն չի հայտնում, այլ համապատասխան ապաշխարություն է նշանակում: Հոգևորականը, ըստ հանգամանքների, կարող է նաև խորհուրդ տալ հանցագործին ինքնակամ հանձնվելու, ազատագրված մեղքը քավելու համար, սակայն երբեք չի հայտնում իրեն արված խոստովանությունը, ինչը խստիվ արգելվում է եկեղեցական կանոնով: Ըստ Կանոնագրքի՝ մեղքերի խոստովանության գաղտնիքը հայտնած հոգևորականն անգամ հեռացվում է հոգևոր ծառայությունից, և նրա վրա է դրվում չապաշխարած բոլոր մարդկանց մեղքերը: Քրիստոնյա երկրների օրենքները հաշվի են նստում այս հանգամանքի հետ ու նաև համապատասխան օրենքով հոգևորականներն ազատվում են ցուցմունքներ տալու պարտականությունից:

**6. Կատարված սխալը կամ հանցանքը վրեժի ցանկություն են առաջացնում: Վրիժառության զգացումը կարող է արդարացի լինել:**

Վրիժառությունը քրիստոնեական, ինչպես նաև աշխարհիկ օրենքների տեսակետով չի կարող արդարացի լինել, որովհետև պատժի նպատակը վրեժի զգացումը բավարարելը չէ, այլ հետագա հանցագործության կանխումը: Փիլիսոփայության մեջ նույնպես անդրադարձել են այս հարցին: Գերմանացի հայտնի փիլիսոփա Շոպենհաուերն ասում է, որ օրենքի միակ նպատակը վախեցնելն է ուրիշի իրավունքը խախտելուց: Հետևաբար, օրենքն իր պատժով նկատի ունի ապագան, ոչ թե անցյալը: Սրանում է պատժի տարբերությունը վրեժից: Ան-

ճշտության, հանցանքի համար որևէ հատուցում առանց ապագայի նպատակի վրեժ է և այլ նպատակ չի հետապնդում, քան ուրիշի տանջանքի դիտումով, որը մենք ենք պատճառում, մխիթարություն գտնել այն տանջանքի մեջ, որ ինքներս ենք կրել: Քրեական պատժի նպատակը նաև վախեցնելն է հանցագործությունից: Անտիկ շրջանի փիլիսոփաներից Սենեկան, Պլատոնն ասում են, որ ոչ մի ողջամիտ մարդ չի պատժում նրա համար, որ արարքն արված է, այլ այն բանի համար, որ այն հետո չկրկնվի: Չնայած որ, պատժի մասին խոսելով, Հին Կտակարանում Աստված ասում է՝ կհատուցեմ վրեժխնդրության օրը (Բ Օր. 32.35), այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ սա չի ասվում հաշվեհարդարի իմաստով, այլ ապագայի նկատառումով, նախ՝ մեղքը գործած մարդուն պատասխանատվության ենթարկելու և հետագայում կանխելու նման հանցագործությունը: Ապագան, դաստիարակչական բնույթը միշտ նկատի է առնվում: Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված թղթում ասում է. «Ինքներդ վրեժխնդիր մի՛ եղեք, սիրելիներ, այլ թույլ տվեք, որ Աստծու բարկությունը կատարի այն, որովհետև գրված է. Իմն է վրեժխնդրությունը, և ես կհատուցեմ,- ասում է Տերը» (Հռ. 12.19): Առաքյալը ցանկանում է ասել, որ քրիստոնյաների համբերատարությունը պատճառ չի դառնա չար մարդկանց գերիշխանության և չարի վերջնական հաղթանակի, քանզի Աստված թույլ չի տա չարի գերիշխանությունը բարու նկատմամբ:

## **7. Ինչպե՞ս կարելի է սովորել ներել:**

Ներել չեն սովորում, ներել ցանկանում են, այսինքն՝ ներելու համար նախ և առաջ պետք է կամենալ ներել: Ներելու համար արգելք է հանդիսանում մարդու զայրույթը, բարկությունը: Յոթ մահացու մեղքեր կան՝ հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ազահություն, որկրամոլություն, բղջախոհություն: Այս շարքում բարկությունը երրորդն է հիշվում: Թվարկված մեղքերը կոչվում են մահացու, որովհետև մարդուն բերում են մարմնավոր կամ հոգևոր մահվան: Հոգևոր մահն Աստուծուց հեռու գտնվելն է, մեղքերի մեջ ընկղմվել:

լը: Սակայն բարկությունը հաճախ նաև ֆիզիկական մահվան պատճառ է դառնում, երբ մարդիկ, բարկությամբ մոլեգնած, մարդասպանություն են գործում: Սաղմոսերգուն ուսուցանում է. «Եթե բարկանաք, մի՛ մեղանչեք, ինչ որ ասում եք ձեր սրտերում, ձեր անկողնու մեջ զղջացեք» (Սաղմ. 4.5): Բարկության վերաբերյալ նաև առաքյալն է նշում. «Թե բարկանաք էլ, մեղք մի՛ գործեք. արեգակը ձեր բարկության վրա թող մայր չմտնի» (Եփ. 4.26): Սա նշանակում է, որ բարկությունը կարող է տեղին լինել, բայց դրա տևականությունը դժբախտ հետևանքների է բերում: Այդ իսկ պատճառով բարկության զգացումից պետք է շուտ ազատվել: Բարկության դեմ եկեղեցական հեղինակները դնում են հեզությունը, որը մարդու հոգու անվրդով վիճակն է թե՛ փառքի և թե՛ անփառունակության մեջ: Այսինքն՝ երբ մարդուն վիրավորում են և նրան պատվելուն, հարգելուն հակառակ արարք են գործում, քրիստոնյան պետք է կարողանա պահպանել կամ արագ վերականգնել հոգու ներդաշնակ վիճակը: Սա նաև հոգևոր կյանքին վերաբերող գիտելիք է, որ օգնում է մարդկային երբեմն դժվար փոխհարաբերություններում ճիշտ վարվեցողություն դրսևորել:

## **ԲԱՄԲԱՍԱՆՔ**

### **1. Ի՞նչն է համարվում բամբասանք, որտեղի՞ց է սկսվում այն:**

Բամբասանքն անհատական ընկալումով բացասական տեղեկատվության կամ ապատեղեկատվության տարածումն է: Չնայած կարծիքներ կան, որ բամբասանքը դրական նշանակություն ունի հասարակության մեջ խմբերի կապը պահպանելու, հաղորդակցվելու համար, սակայն Պողոս առաքյալը բամբասանքը նշում է տարբեր մեղքերի շարքում (Ք Կորնթ. 12.20), որովհետև բամբասանքը, լինելով ինչ-որ տեղեկություն, բայց առավելաբար՝ մարդու անձնական մտավոր-զգացական ընկալումով և ավելի հաճախ բացասական երանգավորումով, կարող է բերել նաև խռովությունների ու գժտությունների կամ առնվազն այդպիսի տրամադրություն-

ների ստեղծման: Պետք է նշել, որ երբեմն բամբասանքների ստեղծման ու տարածման աղբյուր են հանդիսանում նաև զանգվածային լրատվական միջոցները:

Բամբասանքի հոմանիշ բառն է բանսարկությունը, հետևաբար, բամբասող և բանսարկու բառերը ևս հոմանիշներ են: Սուրբ Գրքում բանսարկու կոչվում է նաև սատանան (Հուդա 9), որովհետև չարն իշխանություն չունի մարդու վրա ստիպողաբար ազդելու և նրան ուղղակիորեն մեղքի, հանցագործության տանելու, այլ այդ ամենն անում է բանսարկությամբ, մարդու մտքի մեջ չար մտածումներ ներարկելով: Դրա համար եկեղեցական հեղինակների բառապաշարում մեղավոր մտքերն ու մտածումները բնութագրվում են «եկամուտ մտքեր» արտահայտությամբ՝ դրսից մարդու մեջ սողոսկած լինելու իմաստով: Այսպիսով, կրոնական տեսակետով՝ բամբասանքը դասվում է մեղքերի շարքը, և եկեղեցում մեղքերի ընդհանրական խոստովանության ժամանակ նշվում է նաև բամբասանքը, որով և այն գործած մարդը պետք է զղջա և ապաշխարի:

**2. Եթե մի մարդու մոտ որևէ բան ես պատմում կամ կարծիք հայտնում մի երրորդ անձի մասին, դա բամբասանք է:**

Բամբասանքը սուբյեկտիվ կարծիք կամ տեղեկություն է մի երրորդ անձի կամ անձերի մասին՝ արտահայտված նրանց բացակայության պայմաններում, որովհետև նրանց ներկայության դեպքում հնչած խոսքերը գուցե ընդհանրապես չասվեին: Մարդիկ քաջություն են ունենում նաև հրապարակավ սեփական զգացականի կամ սեփական կանխակալ մոտեցման ու դիրքորոշման դրսևորումով այդպիսի կարծիք հնչեցնել, եթե միայն հստակ գիտեն, որ տվյալ անձի հետ իրենք դեմառդեն առնչություն չեն ունենալու: Այդ տեսակի են հատկապես այսօրվա զանգվածային լրատվամիջոցներում տարածվող հրապարակումները, որոնց մեջ մեծ թիվ են կազմում բամբասանքի ժանրից եղող տեղեկատվությունները կամ ապատեղեկատվությունները, որոնց որոշ լրագրողներ լուրջ տեսք հաղորդելու համար, դրանք անվանում են մեկ-

նաբանություններ կամ վերլուծություններ: Բամբասանքները կարող են տանել կեղծավորության կամ երեսպաշտության, որովհետև խնդրո առարկա մարդու ներկայությամբ չեն ասվում և կամ եթե բարձրաձայնվում են այդ մարդու ներկայությամբ տվյալ անձի հանդեպ կանխակալ ու բացասական տրամադրվածությամբ, իրականության խեղաթյուրմամբ կամ չափազանցմամբ, ապա վերածվում են պարզապես զրպարտության:

### **3. Բամբասանք և չարախոսություն. դրանք տարբեր բաներ են:**

Չարախոսությունը կարող ենք համարել նաև բամբասանքի առավել ծանր ձևը, և «չարախոսություն» բառն ինքը հուշում է, թե որն է դրա իմաստը՝ չար խոսքեր ասել մեկի մասին, ինչն արվում է հիմնականում տվյալ անձի բացակայությամբ: Պողոս առաքյալը բամբասանքի և չարախոսության նույնությունն չի անում, այլ սրանք երկուսը տարբեր մեղքեր է դիտարկում (Բ Կորնթ. 12.20): Ի տարբերություն բամբասանքի, որի մեջ տեղեկությունը կարող է աղճատված, բացասական երանգավորումով ձևափոխված լինել, չարախոսությունը հիմնականում սուտ տեղեկության և միաժամանակ մեկի հասցեին վիրավորանք պարունակող լուրերի տարածումն է:

Բամբասանքի և չարախոսության մեջ չկա քրիստոնեական սիրո ոգին, քրիստոնեական ներողամտությունը, թշնամիներին սիրելու և ներելու Քրիստոսի պատվիրանների (Մատթ. 5.43-44) իրագործման ցանկությունը: Եվ քանի որ բամբասանքն ու չարախոսությունն իրենց էությանբ դեմ են քրիստոնեական սիրո սկզբունքին, դրանք վայել չեն քրիստոնյաներին և համարվում են մեղքեր, որոնցից պետք է հեռու մնալ:

### **4. Ո՞վ է հիմնականում մեղք գործում՝ բամբասողը, թե՞ նրան լսողը:**

Մկրտության խորհրդի կատարման ժամանակ օժվում են մկրտվողի մարմնի ինը մասերը, որոնցից՝ ականջները և բե-

րանը: Ականջներն օրհնվում են, որպեսզի լսեն աստվածային պատվիրանները, և մարդն իր կյանքում առաջնորդվի այդ պատվիրաններով: Շուրթերն օծվելիս ասվում է. «Քրիստոսի անունով այս կնիքը քեզ համար պահպանություն թող լինի բերանին և ամուր դուռ՝ քո շուրթերի համար»: Սա նշանակում է, որ մկրտված և սուրբ մյուռոնով օծված քրիստոնյան զորություն է ստանում պահպանելու իր բերանը անսուրբ խոսքերից և իր շուրթերը փոխաբերական իմաստով դարձնելու ամուր դուռ՝ չար, մեղավոր բառերի, խոսքերի արտաբերում թույլ չտալու համար: Սուրբ Ներսես Շնորհալին իր աղոթքներից մեկում խնդրում է, որ Ամենախնամ Տերը երկյուղը դնի իբրև պահպան ականջների՝ չախորժելու չար խոսքեր լսել և բերանին՝ սուտ չխոսելու համար: Ուրեմն, թե՛ չար բան լսելու ցանկությունն է մեղք, թե՛ չար բան, սուտ խոսելը: Հետևաբար, թե՛ բանբասողն է մեղք գործում, ինչպես որ բանբասանքը հիշված է Սուրբ Գրքում որպես մեղք, և թե՛ այն անձը, ով հոժարությամբ լսելով՝ մասնակից է լինում բանբասանքի մեղքի կատարմանը:

**5. Որևէ մեկի վատ արարքը պատմելը բանբասանք է, մատնություն, թե՞ պարզապես զրույց:**

Երբ խոսում ենք բանբասանքի դեմ, չի նշանակում, որ ընդհանրապես մերժելի ենք համարում վատ արարքների մասին հայտնելը կամ չարագործությունները պախարակելը, դատապարտելը: Հաղորդումները կամ հաղորդագրությունները հանցագործությունների բացահայտման, հանցագործների, նրանց տրված պատժի վերաբերյալ ամենևին էլ մերժելի չեն: Մենք կարող ենք խոսել վատ արարքների մասին և դատապարտել դրանք, բայց այդպիսի վարմունքը չպետք է վերածենք երեսպաշտության կամ քծնանքի այն առումով, որ համարձակ կարող ենք խոսել մարդու բացակայության դեպքում, բայց նրա ներկայության պարագայում քաջություն չենք ունենա նույնն ասելու: Օրինակ՝ Քրիստոս խոսեց փարիսեցիների վատ վարմունքների մասին նրանց բացակայության դեպքում, երբ աշակերտներին խրատելով՝ ասում էր. «Բայց ասում են ձեզ, որ, եթե ձեր արդարությունը ավելի չլինի, քան

օրենսգետներինը և փարիսեցիներինը, Երկնքի արքայությունը չէք մտնի» (Մատթ. 5.20): Բայց Քրիստոս նույն համարձակությամբ Իր մեղադրանքները ներկայացնում էր նաև հենց փարիսեցիներին ուղղակիորեն դեմելով, ինչպես վկայում է Մատթեոսի Ավետարանի 23-րդ գլուխը, որի պարբերությունները սկսում են «Վա՛յ ձեզ կեղծավորներիդ» մեղադրական արտահայտություններով: Սա ցույց է տալիս, որ երբ արարքի դատապարտումը կատարվում է արդարորեն, կամ մեկի մասին տեղեկություն ենք հաղորդում, խոսում արդարորեն՝ առաջնորդված առաջին հերթին ոչ թե մեր սեփական հակակրանքի զգացումով, այլ արդարության սկզբունքով և դա կարող ենք ասել նաև նրա ներկայությամբ, դա արդեն ոչ թե բանբասանք է, այլ իրապես վատ արարքների դատապարտում:

**6. Հաճախ բանբասողների մեծ մասը վատաբանում է իր հարազատներից որևէ մեկին և ոչ թե օտարին կամ թշնամուն, ինչո՞ւ:**

Մարդկանց մեջ լինում է, որ բացակայում է մարդու մասին քրիստոնեական ընկալումը, գիտակցությունը՝ աստվածաստեղծ մարդուն արարչագործության պսակ համարելու և որպես բացառիկ էակ ընկալելու, սիրելու ու նվիրվելու, բարություն ու բարեգործություն անելու: Այսպիսի ոգու և գիտակցական ընկալման բացակայությունն առաջացնում է չարություն, նախանձ, հակակրանք, և մարդիկ չարախնդությամբ են խոսում անգամ իրենց հարազատների կամ բարեկամների թերությունների կամ անհաջողությունների մասին, քննարկում այս կամ այն խոսքը, որակումներ անում մարդու հասցեին: Բանբասանքները հաճախ վերաբերում են հարազատներին կամ բարեկամներին, որովհետև մարդու շփումն առաջին հերթին այդ շրջանակում է, և եթե մարդու մեջ կա նախանձ ու քե՛ն, հակակրանք ու սեփական անձը ուրիշից ավելի վեր դասելու, ավելի լավը համարելու սովորություն կամ այլ կերպ ասած՝ խոնարհությանը հակառակվող հպարտություն, գոռոզություն, ուրեմն, այս պարագայում հեշտությամբ է ծնվում բանբասանքը: Քրիստոս պատվիրեց անգամ թշնամիներին

սիրել, անիծողներին օրհնել, ատողներին բարություն անել, չարչարողների և հալածողների համար աղոթել, (Մատթ. 5.43-44), չարին բարիով հաղթել (Յո. 12.21), ինչպես որ կրակն են հանգցնում ջրով: Եվ եթե անգամ հարազատը կամ բարեկամը ոչ ճիշտ վարմունք է ունենում, սխալ արտահայտություններ անում, քրիստոնեական վարվեցողությունը պահանջում է ոչ թե շտապել մեկ ուրիշի մոտ և վատաբանել նրան, այլ աղոթել սխալ գործած մարդու համար, սեփական բարության ու հեզության շնորհիվ փոխել դիմացինի անընդունելի վերաբերմունքը, խնդրել Աստծուն, որ օրհնի այդ մարդուն և օգնի իր կյանքում քայլելու ճիշտ ճանապարհներով:

**7. Բամբասանքը կարող է լինել կուտակված մտահոգության, խնդրի կամ ասելիքի խտացված արտահայտություն: Յնարավոր է, որ բամբասանքը լինի սեփական բարոյություններից խուսափելու, դրանք քողարկելու հետ կապված հոգեբանական երևույթ, որի արդյունքում ինչ-որ պահի, խոսելով դրանց մասին մեկ ուրիշի օրհնակով, մարդն ինքն «ազատագրվում է» դրանցից:**

Բամբասանքը կարող է լինել մարդու մեջ ծանրացած վիրավորական զգացումից ազատվելու ձգտում՝ ուղղակիորեն կամ անուղղակի պատճառված այն մարդու կողմից, որի վերաբերյալ հնչում է բամբասանքը: Բայց այս երևույթը կարող է ցույց տալ նաև մարդու մեջ առկա հոգեբանական խնդիրները՝ ինքնավստահության պակասը կամ թերարժեքության բարոյության առկայությունը: Ոչ ինքնավստահ կամ թերարժեքության բարոյութ ունեցող մարդը դիմացինի ակնարկները, խոսքերը կարող է ընկալել իբրև վիրավորանք երբեմն նաև այն դեպքում, երբ դրանք իրականում այդպիսին չեն էլ եղել: Վիրավորված մարդն իր տրամաբանությամբ վրեժխնդրություն է իրականացնում՝ մեկ ուրիշի հետ խոսելիս փոխադարձ վիրավորանք հասցնելով այն անձին, ով խոցել է իր ինքնասիրությունը: Քրիստոնեական ընկալումով այսպիսի մոտեցումը սխալ է. պետք է ներողամտություն ցուցաբերել և զերծ մնալ նախանձի, ատելության, վրեժխնդրության ու քեռի զգացումներից:

## **8. Ինչպե՞ս խուսափել բամբասանքից և բամբասելուց:**

Բամբասելու և դրան առնչվելու մեղքից հեռու մնալու համար պետք է ամրապնդվել հավատքի մեջ, որովհետև քրիստոնեական հավատքը ցույց է տալիս մարդկանց միջև վարմունքի ու վերաբերմունքի, միջանձնային հարաբերությունների բոլորովին այլ սկզբունքներ: Քրիստոնեական հավատքի վրա հիմնված մարդկային հարաբերությունները բացառում են բամբասանքի, հայիոյանքի, տրտունջի, բացասական դժգոհության դրսևորումները, որոնք այսօր այնքա՛ն տարածված են մեր հասարակության մեջ և բազմաթիվ ընտանիքներում, շատ մարդկանց առօրյայի անբաժանելի մասն են կազմում: Պետք է նաև հիշել, որ յուրաքանչյուր մեղք հակառակ է Աստծո կամքին: Բամբասելու հակում ունեցողները պետք է աղոթեն և ջանք գործադրեն, որպեսզի հեռու մնան բամբասանքից՝ այն մեղքից, որը հատուկ է նաև սատանային:

### **ՅՈՒ ՄԱՐԱՅՈՒ ՄԵՂՔԵՐ**

#### **1. Ի՞նչ է հայտնի մեղքի ծագման և էության մասին:**

Հին Կտակարանում մեղքի ծագումը կապվում է չարի գայթակղության և Աստծո պատվիրանի խախտման հետ (Ծննդ. 3.1-13): Մեղքը գործվում է չարի գայթակղությամբ և Աստծո կամքին հակադրվող արարք է: Աստվածային կամքին հակառակ յուրաքանչյուր արարք մեղք է: Ոչ կրոնական հասկացողության մեջ չկա մեղքի գաղափարը, այլ շեշտվում է հանցագործության հանգամանքը: Մինչ մեղքը սահմանվում է որպես Աստծո կամքին հակառակ արարք, հանցագործությունը սահմանվում է որպես արարք՝ հակառակ օրենքին: Դրա համար էլ պետությունների օրենքները հիմնականում ապարարոյական են, այսինքն՝ առնչություն չունեն բարոյականության հետ. այստեղ ընդգրկված չեն շնության, կռապաշտության վերաբերյալ բանաձևումներ: Դա է պատճառը, որ բազմաթիվ երկրներում անառակությունը և դրա տարածումը հակառակ չէ օրենքին, և կրոնական դավանության ազատությունը

նը՝ խղճի ազատության մասին օրենքով, թույլատրում է անգամ պղծություն ներառող կրոնական գաղափարներով կազմակերպությունների գործունեությունը որոշ սահմանակարգումներով:

Մեղքի պարագայում պետք է երկու տարբերակում անել՝ սկզբնական կամ ադամական մեղք և անձնական մեղք: Սկզբնական մեղքն առաջին մարդու՝ Ադամի պատվիրանազանցությունն է, Աստծո կամքին հակառակ գնալու մարդկային խաթարված, արատավոր բնության հակումը, որը ժառանգաբար անցնում է Ադամի բոլոր սերունդներին: Սկզբնական մեղքից մարդն ազատվում է Սկրտությամբ, որով վերստին դառնում է Աստծո որդեգիրը, ժառանգորդը Երկնքի արքայության, ստանում աստվածային շնորհներ, զորություն ունենում Աստծո կամքի համաձայն ապրելու: Միայն Աստվածորդին՝ Քրիստոս Փրկիչը, ծնվեց առանց ադամական մեղքի, բայց դառնալով նաև կատարյալ մարդ՝ վերցրեց չարչարանքներին ենթակա մարդկային մարմինը, որով և իրագործեց աշխարհի փրկությունը խաչելությամբ ու Հարությանբ:

Անձնական մեղքը մարդու կյանքի ընթացքում կատարվող քայլերն են՝ Աստծո պատվիրանների խախտումով, Քրիստոսի ուսուցանած վարդապետությունից կամ ճանապարհից շեղումով, որից սրբվում են զղջմամբ ու ապաշխարությամբ, Աստծո ներումով նորից կանգնում ճիշտ ճանապարհին: Այսօրվա հասարակության մեջ մեղքի գիտակցությունն աղոտացել է, որովհետև շեշտվում է օրենքի և դրա համաձայն ապրելու անհրաժեշտությունը, իսկ օրենքն անտեսում է բարոյականության դերը մարդու, հասարակության կյանքում և առաջնորդվում հիմնականում կարգավորության հաստատման նպատակով: Այդ իսկ պատճառով մեղքի թակարդը, մեղքի ճահիճը չընկնելու համար պետք է ապրել ոչ միայն համաձայն օրենքի՝ հանցագործությունների կատարումից հեռու մնալով, այլև ըստ աստվածային կամքի, մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատվիրանների:

**2. Եկեղեցու Հայրերն առանձնացրել են յոթ մահացու մեղքեր՝ հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ազահություն, որկրամոլություն և բղջախոհություն:**

**Այստեղ չկան այնպիսիները, որոնք բացարձակապես մերժված են մարդկության կողմից և որակվում են որպես ծանր հանցագործություն՝ սպանություն, գողություն և այլն. ինչպե՞ս են առանձնացվել յոթ մեղքերը:**

Քրիստոս մի առակ պատմեց ժայռի և ավազի վրա տուն կառուցող մարդկանց մասին: Անձրևների, հորդառատ գետերի, հողմերի հարվածի հետևանքով ավազի վրա շինված տունը քանդվում է, իսկ ժայռի՝ ամուր հիմքի վրա շինված տունը հաստատուն մնում (Մատթ. 7.24-25, Ղուկ. 6.47-48): Առակի իմաստը նախ վերաբերում է հավատքին, որն անսասան է մնում, երբ խարսխված է ամուր վեմի՝ Քրիստոս վեմի վրա: Սակայն առակի պատկերներն օգնում են նաև այլ իրողություններ հասկանալու: Երկու մարդիկ էլ տուն են կառուցում: Ուրեմն, երկուսի արարքներն էլ նույնն են և լավ են թվում, բայց դրանց հիմքը տարբեր է: Այսպես նաև մեղքի պարագայում այն կարող է ունենալ առաքինության կամ օգտակար վարմունքի նմանություն, սակայն իր էության մեջ նուրբություն և մեղք լինել: Օրինակ՝ մեկը կարող է տնտեսել, իսկ մյուսն ազահություն անել, մեկը բարկանալ մարդկանց ուղղելու համար, մյուսը՝ բարկությունը կարող է վերածել սպանության: Ողորմությունը նույնպես կարող է լինել օգնության ձգտում և կամ ցուցամոլություն:

Արարքներն իմաստավորվում են մարդկային մտադրություններով: Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, որ եթե մտադրություններից ուշադրություն չդարձնենք, կարող ենք նույնիսկ սատանային արդարացնել: Արատավոր արարքները կարող են նաև նմանվել առաքինություններին, սակայն էությամբ մեղսալի լինել: Եկեղեցական Հայրերը որպես մահացու մեղքեր առանձնացրել են այս յոթը, որովհետև դրանք այն կործանարար հիմքն են, որոնց վրա կառուցվում են այլ մեղքերը, կամ այն արմատներն են, որոնցից ճյուղավորվում են այլ մեղքերը, ինչպես, օրինակ, բարկությունից, նախանձից՝ սպանություն, բղջախոհությունից՝ շնություն, հպարտությունից՝ մարդկանց արհամարհում և այլն:

### 3. Որո՞նք են գիտակցված և չգիտակցված մեղքերի տարբերությունները:

Եկեղեցական հեղինակներն ավելի շատ խոսում են կամա և ակամա կամ էլ գիտությամբ և անգիտությամբ մեղքերի մասին: «Կամա և ակամա» նշանակում է կամքով և կամքից անկախ, իսկ անգիտությամբ մեղանչելը նշանակում է, որ մարդ չի իմացել, որ իր տվյալ արարքը մեղք է, հակառակ է Աստծո կամքին: Սա հետևանք է հոգևոր գիտելիքների, Աստծո կամքի վերաբերյալ իմացության պակասի կամ բացակայության: Մարդու մեղք գործելը կարող է լինել գիտությամբ ու միևնույն ժամանակ ակամա, այսինքն՝ մարդ իմանալով, որ տվյալ արարքը մեղք է, այնուամենայնիվ գործում է այն՝ հակառակ իր գիտության ու դիրքորոշման: Այս հակասական վիճակը լավագույնս պատկերում է Պողոս առաքյալը Հռոմեացիներին ուղղված թղթի 7-րդ գլխում: Առաքյալն ասում է. «Ոչ թե անում են բարին, որ կամենում են, այլ գործում են չարը, որ չեն կամենում: Իսկ եթե անում են այն, ինչ չեն կամենում, այլևս ե՛ս չէ, որ անում են այն, այլ իմ մեջ բնակվող մեղքը: Իմ մարմնի անդամների մեջ տեսնում են այլ օրենք, որ պայքարում է իմ մտքի օրենքին հակառակ և ինձ գերի է դարձրել մեղքի օրենքին, որ կա իմ մարմնի անդամների մեջ» (Հռ. 7.19-20, 23): Մարդ կարող է իր բարոյական գիտակցությունից անկախ՝ ակամա սայթաքել և մեղք գործել: Առաքյալը հարցադրում է անում, թե ո՞վ կփրկի այս վիճակից (Հռ. 7.24): «Բայց գոհություն Աստծու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Հռ. 7.25),- եզրափակում է նա: Այսինքն՝ Հիսուս Քրիստոսի միջոցով կարող ենք ներում, մեղքերի քավություն ու թողություն գտնել, սրբվել մեղքերից և նորից առաջ ընթանալ:

Եբրայեցիներին ուղղված թղթում առաքյալը խոսում է արյուն թափելու չափ մեղքին հակառակվելու մասին (12.4), ինչը ցույց է տալիս, որ ակամա մեղքի մեջ ընկնելիս, այնուամենայնիվ, պետք է պայքարել, հակառակվել մեղքին, առաքյալի պատկերավոր խոսքով՝ արյուն թափելու չափ: Մեղքերը գործվում են գիտակցված՝ մեղավոր կյանքը նախընտրած մարդկանց կողմից, իսկ չգիտակցված մեղքերը հոգևորից,

Աստժ խրատներից դեռ հեռու մարդկանց վարմունքներն են: Յեթանոսների մասին ասվում է, որ նրանք թեկուզ չունեն օրենքը, որը բացատրում է Աստժ կամքը, բայց նրանք էլ են դատվելու, սակայն ոչ թե ըստ օրենքի, որը չունեն, այլ ըստ իրենց խղճի վկայության (Յճ. 2.12), քանի որ յուրաքանչյուր մարդու մեջ առկա խիղճը մարդուն հուշում է աստվածային կամքի համաձայն ապրելու մասին:

#### **4. Ինչի՞նչ են ազահությունն ու որկրամոլությունը մահացու մեղքեր:**

Ինչի՞նչ և կամ ունի՞նչ է մարդ ավելի դժվարությամբ բաժանվում իր համար թանկ առարկայի՞նչ, իր հարազատից կամ բարեկամի՞նչ: Այսօր բազմաթիվ մարդիկ մեծ դժվարությամբ ու տխրությամբ բաժանվում են իրենց սիրելի փողից: Ազահությունն այսօր մեծ չափերի է հասնում աշխարհում: Դրա վկայությունն աշխարհում համեմատաբար քիչ թվով հարուստների առկայությունն է մեծ թվով աղքատների դիմաց: Ազահությունը, նյութականի կուտակման մարմաջը խափանում է ողորմությունը, որով կարիքավորների շատ խնդիրներ կարող են լուծում գտնել: Ողորմության անտեսումից զատ, ազահությունը խաթարում է մարդկանց մեջ ճիշտ հարաբերությունները, դրանք դնում շահադիտական հարթակի վրա: Մարդն այլ վարմունք է ցուցաբերում նրա հանդեպ, ունից նյութական շահ և ակնկալիք ունի, այլ վարմունք՝ նրանց հանդեպ, ովքեր որևէ շահ չեն կարող բերել: Այսպես է, որ տարբերվում են վարմունքներն ու վերաբերմունքներն աշխարհի հարուստների և աղքատների, մուրացկանների նկատմամբ:

Ազահությունը նաև վնասում է միջանձնական հարաբերություններում բարի դրսևորումներից մեկին՝ հյուրասիրությանը, որը պատվիրված է առաքյալների կողմից՝ «հետամուտ եղեք հյուրասիրության» (Յճ. 12.13), «հյուրասեր եղեք միմյանց հանդեպ առանց տրտնջալու» (Ա Պետ. 4.9): Ներկա նյութապաշտական հակումների պարագայում մարդը հյուրասիրությունը կարող է հաշվարկել ֆինանսական նպատակահարմարության, նյութականի տնտեսման կամ չնախա-

տեսված ծախսերի տեսակետից՝ մարդկանց միջև սիրո ու ջերմության նախանձախնդրության փոխարեն: Եվ քանի որ ազահությունը վնասում է ողորմությանը, մարդկանց միջև հարաբերություններին, և ազահության ծայրահեղ դրսևորումով կարող են մարդուն և կամ հոգին կործանող ծանր մեղքեր ծնվել, դրա համար էլ այն ներառված է մահացու մեղքերի շարքում:

Որկրամոլությունը մարդուն դարձնում է իր ստամոքսի գերին: Պողոս առաքյալը, խոսելով այնպիսի մարդկանց մասին, ովքեր առավել հետամուտ են նյութական բաների, ասում է, որ այդպիսիների աստվածն իրենց որովայնն է (Փիլիպ. 3.19): Յիրավի, որկրամոլի համար իր աստվածն իր որովայնն է, որին նա ծառայում է անընդհատ՝ ուտելով կամ ուտելիքի մասին մտածելով, և ուտելիս կարծես թե պաշտամունք է մատուցում իր պաշտելիին, որը ստամոքսն է: Քրիստոս ասում է. «Միայն հացով չի ապրում մարդ, այլ այն ամեն խոսքով, որ ելնում է Աստծո բերանից» (Մատթ. 4.4, Ղուկ. 4.4): Իսկ որկրամոլությունը կարծես ելնում է Քրիստոսի դեմ, ջնջում նրա ասածը և հակառակը պնդում. «Միայն հացով է ապրում մարդ»: Մարդ պետք է ուտելիքից օգտվի իր մարմնի կենսունակությունը պահելու, իր գործունեության մեջ ուժ ունենալու համար: Ուտելը միջոց է և ոչ թե նպատակ, մինչդեռ որկրամոլի համար ուտելը դառնում է գերագույն նպատակ: Այս մեղքի մեջ ընկածները ոչ թե ուտում են ապրելու համար, այլ ապրում են ուտելու համար:

**5. Ինչու՞ են ծուլությունն ու բարկությունը մեղք համարվում: Ինչի՞ հիման վրա են դրանք մահացու համարել:**

Թվում է, թե ծուլությունն այնքան էլ ծանր մեղք չէ: Բայց այն աղոտացնում է մարդու մեջ աստվածային պատկերը: Աշխատանքը մարդու համար սահմանված պատիժ չէ, որ հաստատվեց դրախտից զրկվելիս: Դեռևս մինչ այդ մարդուն տրված է եղել աշխատանքը: Ծննդոց գրքի հենց սկզբում կարդում ենք, որ երբ Աստված ստեղծեց երկիրը, մարդ չկար, որ մշակեր այն (2.5): Սա ցույց է տալիս, որ աշխատանքը

պետք է մարդու կյանքի մասը կազմեր: Մեղսագործությունից և դրախտից զրկվելուց հետո ոչ թե աշխատանքը տրվեց որպես պատիժ, այլ այդ աշխատանքի պտուղները, արդյունքները ստանալը դժվարացավ, հողագործության պարագայում հողը կորցրեց իր առատ արգասավորությունը, և մարդը տքնաջան աշխատանքով պետք է հաց վաստակեր (Ծննդ. 3.17-19): Ուրեմն, աշխատանքը պատիժ չէ՝ տրված մարդուն, այլ հաստատված է եղել ի սկզբանե:

Մարդն ստեղծվեց Աստծո պատկերով և նմանությամբ (Ծննդ. 1.26-27): Աստված Արարիչ է, ստեղծագործող, գործող: Չնայած արարչագործությունը դադարեց աշխարհի արարման խորհրդանշական վեցերորդ օրը, և յոթներորդ օրն Աստված հանգստացավ (Ծննդ. 2.2), սակայն Քրիստոս ասում է. «Իմ Հայրը մինչև այժմ գործում է» (Հովհ. 5.17): Այս մշտատև գործելը ոչ թե նշանակում է արարչագործությունը շարունակելը բուն իմաստով, այլ աստվածային նախախնամությունը, որով Աստված խնամում է իր կողմից ստեղծված արարածներին, աշխարհը, տիեզերքը: Քրիստոս պատվիրան տվեց. «Կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5.48): Աստվածանմանության պատվերը նաև մշտապես գործելու, արարելու, ստեղծագործելու պատվեր է, որը խախտվում է ծուլությամբ: Առակաց գիրքը նկարագրում է ծուլին, որը մի քիչ քնով է ընկնում, մի քիչ նստում, մի քիչ ննջում, մի քիչ էլ ձեռքերը հանգչեցնում կրծքին: Սուրբ Գիրքը ծուլին հանդիմանում է. «Մինչև ե՞րբ պիտի զանված մնաս, ո՞վ ծուլ, կամ ե՞րբ պիտի զարթնես քնից» (Առակ. 6.9-10): «Մրջյունի մո՛տ գնա, ով ծուլ, ասում է Սուրբ Գիրքը,- և նախանձիր նրա գործերին և իմաստուն եղիր նրանից ավելի: Կամ մեղվի մո՛տ գնա, տե՛ս, թե ինչպե՛ս գործունյա է նա և թե ինչպիսի ջանասիրությամբ է գործում» (Առակ. 6.6,8): Այսպիսով, ծուլությունը վնասակար մեղք է, աղավաղում է մարդու աստվածային պատկերը և դատապարտվում ըստ Սուրբ Գրքի:

**6. Եկեղեցու պատմության, վարքագրությունների մեջ հաճախ ենք հանդիպում «Սուրբ», «Սուրբ Հայր» անվանումներին: Արդյո՞ք այս մարդիկ բացարձակապես անմեղ են, անմասն են եղել մահացու մեղքերից, թե՞ պարզապես ավելի քիչ են մեղք գործել, քան մյուսները:**

«Սուրբ» կոչումը չի նշանակում, որ անձն ընդհանրապես մեղք չի գործել, այլ իր կյանքի ընթացքով հասել է սրբության, աստվածանմանության՝ այդ ճանապարհին նաև սայթաքումներ ունենալով: Եկեղեցու կողմից սուրբ հռչակված անձինք զերծ չեն եղել մեղքերից: Հինկտակարանյան հայտնի դեմքերից սրբերի շարքին են դասված Ադամը, Աբրահամը, Հակոբը, ովքեր հայտնի են նաև իրենց մեղքերով: Ադամն Աստծո պատվիրանը խախտեց, իր սերունդներին՝ մարդկությանը զրկելով դրախտից (Ծննդ. 3.9-13, 23-24): Աբրահամը, վախենալով օտար երկրում իր կնոջ պատճառով հալածվելուց, խաբեց և իր կնոջը որպես իր քույր ներկայացրեց, ստիպեց նաև իր կողակցին այդ սուտը հաստատել (Ծննդ. 12.11-13): Հակոբը հոր օրհնությունն ստանալու համար խաբեց իր եղբորը և իր հորը՝ իրեն ներկայացնելով ավագ եղբոր տեղ (Ծննդ. 25.29-34, 27.15-29, 33, 36): Նորկտակարանյան սրբերից Պետրոս առաքյալն ուրացավ Քրիստոսին (Մատթ. 26.69-75, Մարկ. 14.66-72, Ղուկ. 22.56-62, Հովհ. 18.17, 25-27): Պողոս առաքյալը հակառակություն ունեցավ Պետրոսի հետ՝ մեղադրելով նրան հեթանոսանման վարքի, մարդահաճութայան մեջ: Պետրոս առաքյալը, իրոք, այդպիսի վարմունք դրսևորեց, հրեա քրիստոնյաների կարծիքից վախենալով՝ իրեն հեռու պահեց հեթանոս քրիստոնյաներից, որոնց հետ, մինչև հրեա քրիստոնյաների գալը, մոտ էր և նրանց հետ էր ճաշում (Գաղ. 2.11-14): Պողոսն ընդհարվեց Բառնաբաս առաքյալի հետ Մարկոսի պատճառով (Գործք 15.37-40):

Քրիստոնեական սկզբնական շրջանի սրբերը նույնպես զերծ չեն եղել սխալներից: Օրինակ՝ Կոստանդնուպոլսի երկրորդ տիեզերաժողովի հայրերը, որոնց ընդունած որոշումները Սուրբ Եկեղեցու Հավատամքի հիմքն են կազմում, խիստ բացասական են ներկայացվում այդ ժողովը սկզբնապես գլխավորած, Կոստանդնուպոլսի փաստացի պատրիարք

Սուրբ Գրիգոր Աստվածաբանի կողմից: Սուրբ Գրիգորը, ով հայտնի է նաև Սուրբ Գրիգոր Նազիանզացի անունով (ծնվել է Կապադովկիայի Նազիանզ գյուղաքաղաքի մոտակայքում) թողել է գրական հարուստ ժառանգություն, որոնց մեջ կարևոր տեղ են գրավում նրա բանաստեղծությունները: Բանաստեղծություններից մեկն այս ժողովի և նրա մասնակիցների մասին է: Իր ստեղծագործության մեջ Սուրբ Գրիգորը ժողովի մասնակիցներին անվանում է վայրի խոզեր, ովքեր հարծակվում են միմյանց վրա: Ժողովն իրոք բուռն ընթացք է ունեցել, եղել են վիճաբանություններ, անհամաձայնություններ տարբեր ներկեղեցական հարցերի շուրջ: Սա ցույց է տալիս, որ սրբերը նույնպես ունեցել են թերություններ, սակայն նրանց սխալը կամ մեղքը չէ, որ բացահայտում է նրանց էությունը և որակում նրանց: Մարդուն պետք է դիտել և որակել ոչ թե նրա մի սխալ արարքով, այլ նրա ողջ գործունեությամբ ու կյանքով: Սրբերի կյանքն ամբողջության մեջ ներկայացնում է նրանց մեծ սերն Աստծո հանդեպ ու նախանձախնդրությունը Եկեղեցու պայծառության նկատմամբ, և նրաց բնութագիրը հաստատվում է նրանց ամբողջական առաքելության ու ողջ կյանքի դիտարկումով:

Այսօր կուսակրոն հոգևորականները կրում են «Չայր Սուրբ» պատվանունը: Այդ անունը նրանց սրբության վավերականությունը կամ հաստատումը չէ: Պետք չէ այնպես կարծել, թե երբ երիտասարդը եկեղեցում ստանձնում է կուսակրոն քահանա լինելու ծառայությունը, անմիջապես լուսապսակ է հայտնվում նրա գլխավերևում: Եկեղեցին հավատացյալների ընտանիքն է, և այդ ընտանիքում հավատացյալների կարիքներին սպասավորելու, նրանց ծառայելու համար կարգված են հոգևորականները, այսինքն՝ նրանք հայրական խնամք և հոգատարություն մատուցելու պարտավորությունն ունեն: «Սուրբ» պատվանունը ցույց է տալիս նաև կուսակրոն հոգևորականների կոչումը, թե ինչպիսին պետք է լինեն և օրինակ ծառայեն, այսինքն՝ միշտ պետք է ձգտեն սրբության, ապրեն սուրբ կենցաղավարությամբ: Երբ կուսակրոն հոգևորականներին՝ աբեղաներին, վարդապետներին, դիմում ենք «Չայր Սուրբ» պատվանունով, այդ դիմելաձևով նրանց ստանձած պարտավորության և կենսակերպի հաստատումն ենք բարձրաձայնում:

## 7. Իսկ ի՞նչ է բղջախոհությունը:

Յոթ մահացու մեղքերի շարքում հիշվող բղջախոհությունը պիղծ մտքեր ու հակումներ ունենալն է, և դրանցից առավել՝ պիղծ մտքերով հաճոյանալը, դրանցից հաճույք ստանալը: Մարդը կարող է պիղծ մտքեր ունենալ, կամ մեղսալի մտածումներ ծագեն նրա մտքում, ինչը բղջախոհությունն է, այլ կարող է լինել չարի գայթակղություն, եկամուտ միտք, այսինքն՝ դրսից եկած և մարդու մեջ մտած միտք՝ նրան վիշտ պատճառելու, մեղքի ծուղակը զցելու համար: Երբեմն հավատացյալների մոտ կարող են պատահել այդպիսի մտքեր, որոնք խիստ անհանգստություն են պատճառում մարդկանց՝ բղջախոհության մեղքի մեջ լինելու ծանր զգացումը և իր բարի, ազնիվ ու բարոյական լինելու պատկերացման աղավաղումը բերելով: Սակայն պետք է գիտակցել, որ եթե մարդու համար տհաճ կամ անցանկալի են այդ ծագած մեղսալի մտքերը և ոչ թե՝ հաճելի ու ցանկալի, ուրեմն, դրանք չեն վերաբերում մարդու բարոյական նկարագրի աղավաղմանը, մարդու վատ ու մեղսասեր լինելուն, այլ չարի գայթակղություններ են: Դրանք հաղթահարելու համար պետք է ծագած միտքը չհամարել սեփականը, այլ դրսից անձի մեջ ներարկված, և նմանատիպ մտքերը չզարգացնել մտածողության մեջ, փոխարենը՝ անմիջապես կտրել և դեն զցել:

Բղջախոհությունը հակառակ է ողջախոսության առաքինությանը: Այս մեղքի անվանումն արդեն դա է ցույց տալիս: Կարծիք կա, որ «բղջախոհություն» բառն առաջացել է «ողջախոհություն» բառից: Այն հանդիպում է նաև բողջախոհություն ձևով, որտեղ «բ»-ն դիտվում է իբրև ժխտական մասնիկ՝ ողջախոհությանը հակառակ իմաստ հաղորդող, չնայած հայոց լեզվում՝ այլ բառակազմություններում, «բ»-ն ժխտական նշանակությամբ չի հանդիպում: «Բղջախոհություն» բառը նման է նաև պիղծ խոհություն, մտածողություն արտահայտությանը և գուցե դրա նմանությամբ է առաջացել «բղջախոհություն» բառը, որն արդեն իր կազմությամբ բացահայտում է բառի իմաստն ու նշանակությունը: Բղջախոհության դեն դրվում է պահեցողությունը: Մարդն առատ ու պարարտ կերակուրներ ուտելով՝ պարարտացնում է իր մարմինը, և

մարմնի պարարտացումը բերում է մարմնական մեղավոր կրթերի, կենդանանմանության ի հայտ գալուն: Մինչդեռ պահեցողությունը, մի փոքր տկարացնելով մարմնականը, հոգևոր ապրումներին ու մտածումներին է մեծապես նպաստում: Հետևաբար, բղջախոհությունը բուժվում է ապաշխարությամբ և պահեցողությամբ:

**8. Ձեր կարծիքով հնարավոր է ընդհանրապես չմեղանչել, և ինչպե՞ս կարող ենք խուսափել այս յոթ մահացու մեղքերը գործելուց:**

Այս հարցին պատասխանելու համար համեմատություն կատարենք հրեշտակների և մարդկանց բնությունների միջև: Հրեշտակները և մարդիկ անձնիշխան են, ունեն ազատ կամք, երկուսն էլ կարող են մեղք գործել, սակայն ի տարբերություն մարդկանց՝ հրեշտակները դժվարամեղ են, իսկ մարդիկ՝ դյուրամեղ, այսինքն՝ հեշտությամբ են դեպի մեղքը հակվում և մեղքի մեջ ընկնում: Մի մեղքը կարող է պատճառ դառնալ մեկ այլ կամ մի քանի մեղքերի: Եվ դյուրամեղ մարդը, մեղքի մեջ ընկնելով, նաև ծանրացնում է իր մեղավոր վիճակը, եթե անմիջապես չի զղջում և ապաշխարում:

Յոթ մահացու մեղքերը դիտարկելիս կարող ենք տեսնել, որ երբեմն այդ մեղքերը ծագում են մեկը մյուսից: Որկրամուլությունը, որ բերում է մարմնի պարարտացում, տանում է նաև բղջախոհության, որը չնայած մտավոր ոլորտին է վերաբերում, սակայն սերտ առնչություն ունի մարմնականի հետ: Նախանձից կարող է ծագել բարկությունը, որը, իհարկե, առաջացման նաև այլ պատճառներ ունի: Ցավոք, մարդու դյուրամեղ լինելը պատճառ է դառնում անգամ խորը հավատք ունեցողների համար փորձություններից պարտվելու, սայթաքելու: Յոթ մահացու մեղքերը չգործելու համար պետք է նախանձախնդիր լինել դրանց ճիշտ հակառակ առաքինությունները գործելուն, քանզի յուրաքանչյուր մահացու մեղքի դիմաց կա դրան հակադիր առաքինությունը՝ հպարտության դեմ՝ խոնարհությունը, նախանձի դեմ՝ եղբայրասիրությունը, բարկության դեմ՝ հեզությունը, ծուլության դեմ՝ աշխատասիրությունը, ազահության դեմ՝ ողորմածությունը, որկրամուլության դեմ՝ ժուժկալությունը, բղջախոհությունը դեմ՝ ողջախոհությունը:

## ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### **1. Ի՞նչ է առաքինությունը՝ մարդկային կենսակե՞րպ, մտածելակե՞րպ, Աստուծոց տրված շնո՞րհ:**

«Առաքինություն» ընդհանուր հասկացության տակ նկատի ունենք այն արարքները, որոնք համապատասխան են բարոյական բարձր չափանիշներին, և այդ արարքները, վարմունքները կոչվում են առաքինություններ: Առաքինությունը, քանի որ իբրև ընդհանուր հասկացություն ենթադրում է առաքինությունների ամբողջականություն, առաքինի վարմունքների ընդհանրացում, չենք կարող բնութագրել որպես կենսակերպ: Կենսակերպ նշանակում է կյանքի, ապրելու ձև. գրաբարում «կեանք» բառը հայցական հոլովում դառնում է «կեանս», և այս ձևից բառակազմություններում հանդես գալիս սղված «ա» տառով, «կեանս» ձևով, որով և «կենսակերպ» նշանակում է կյանքի կերպ: Առաքինություններն աստվածահաճո վարմունքներ են, և կյանքի կերպի հետ կապելով՝ կարող ենք ասել, որ կենսակերպ է առաքինություններով ապրելը:

Քրիստոս ցույց տվեց, որ մեղքն սկսվում է ոչ թե արտաքին գործողություններով, այլ դեռևս մարդկային ներաշխարհում մտքից սկզբնավորւմով: Նմանապես և բարի վարմունքները, առաքինություններն սկսվում են մտքից, որով և դրանք առնչություն ունեն մտածելակերպի հետ: Առաքինություններ գործելու կարողությունը նաև աստվածային շնորհի գորակցությամբ է ձեռք բերվում: Սխալ կլինի ասելը, թե հավատացյալներին տրվող աստվածային շնորհից հեռու գտնվողներն առաքինություններ չեն գործում, սակայն միայն աստվածային շնորհի գործակցությունն է կատարյալ դարձնում առաքինությունը:

**2. Եկեղեցու սպասավորներից հաճախ ենք լսում. «Աստուծոն ճանաչելով և սիրելով է հնարավոր առաքինի գործեր կատարել»:** Ուրեմն, կարելի՞ է ենթադրել, որ առաքինի են լինում հիմնականում քրիստոնյաները, հավատացյալները:

Ծիշտ չէ պնդել, որ ոչ քրիստոնյաները, անհավատներն առաքինություններ չունեն, առաքինի գործեր չեն կատարում: Առաքինի, բարոյական լինում են նաև անհավատները, աթեիստները: Քրիստոնյաների կողմից կատարվող առաքինությունները նույնությամբ կարող են կատարվել նաև անհավատների կողմից: Սակայն հավատքն է, որ կատարյալ է դարձնում առաքինությունը: Անհավատի պարագայում նրա առաքինության մեջ ինքնանպատակ քայլ կա՝ իր համար նաև հաստատելու բարոյականության, առաքինության սկզբունքով ապրելու իր որպիսությունը: Սրանից այն կողմ անցնելու կարողություն անհավատը չունի: Մինչդեռ հավատացյալը բարիքներ գործում է Աստծուն հաճոյանալու համար, ինչպես որ երեխաների կամ ծնողների հանդեպ բարիք ենք գործում նրանց հաճույք և ուրախություն պատճառելու, ոչ թե մեր բարոյական բարձր կարգավիճակում ինքնազացողության հաստատման համար:

Անհավատի բարի վարմունքը մնում է մարդկային հարաբերությունների շրջագծում, հավատացյալի առաքինությունը նաև ելնում է այդ շրջագծից և բարձրանում դեպի Աստված՝ մեր սիրելի Յայրը, կյանքի Արարիչը: Առաքյալն ասում է, որ մենք Աստծո ժողովուրդ ենք, որպեսզի մեր առաքինությունները նվիրենք Նրան, ով մեզ խավարից կանչեց Իր սքանչելի լույսին (Ա Պետ. 2.9): Աթեիստը բարոյական կյանքով է ապրում և առաքինություններ գործում հանուն բարիքի, որն իրեն բարի համբավ ու պատիվ է բերում: Այստեղ գործունեության արդյունքը հանգչում է մարդու վրա: Սակայն քրիստոնյայի նպատակն իր պատիվը կամ փառքը չէ, այլ իր կյանքով Աստծուն փառավորելը, ինչպես առաքյալն է ասում. «Փառավորեցե՛ք Աստծուն ձեր մարմինների մեջ (Ա Կորնթ. 6.20), «ամեն ինչ արե՛ք Աստծու փառքի համար» (Ա Կորնթ. 10.31):

Աստծո հանդեպ սերը վերացնում է առաքինության մեջ ինքնանպատակ ընթացքը և բերում ջերմությունը Երկնավոր Յորը հաճելի լինելու: Իսկ առանց հավատի, ինչպես ասում է առաքյալը, անհնար է հաճելի լինել Աստծուն, քանի որ նա, ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ Աստված կա և վարձահատույց է լինում նրանց, ովքեր փնտրում են Իրեն (Եբր. 11.6):

**3. Այսօր գրեթե ամեն քայլափոխի մենք բախվում ենք քրիստոնեությունից տարբեր այլ «ճշմարտության», այլ օրենքների, որոնց շրջանցելը կամ որոնց միջով անցնելը երբեմն դժվար է, և կարծես թե պարտադրանք է լինում ենթարկվելու, հարմարվելու այդ ամենին: Մինչդեռ Աստված մարդուց պահանջում է ապրել առաքինի և անբասիր վարքով: Ինչպե՞ս դիմակայել այդ փորձություններին և միևնույն ժամանակ ապրել առաքինության բանաձևով:**

Շատ կցանկանայի ասել, որ մենք ապրում ենք առաքինի ու քրիստոնեական միջավայրում: Բայց, դժբախտաբար, իրականությունն այլ է: Մեր այսօրվա իրականությունն իրենից ներկայացնում է քրիստոնեահեթանոսական մի խառնուրդ, որում լի են գայթակղություններն ու փորձությունները, հոգևոր կյանքի սպառնալիքները: Հեռուստատեսությամբ, փողոցի տեսարաններով, համացանցով, մարդկանց մերկությունն ու անառակություններ ցուցադրող և այդպիսի մեղսալի կյանքը քարոզող ու գովազդող, ինչպես նաև արյունալի տեսարաններ ներկայացնող ֆիլմերով այսօր մեր կյանքը հեղեղված է գայթակղություններով, քրիստոնեական, բարեպաշտական կյանքից շեղող վտանգներով: Այդ վտանգները հարվածում և վնասում են հատկապես երեխաներին, որոնց պաշտպանելու համար բավարար միջոցներ ձեռք չեն առնվում: Երկրի օրենքները նախանձախնդիր չեն քրիստոնեական բարոյականության ամրապնդման, այլ պետական-հասարակական կյանքի կազմակերպման ու կարգավորման: Այս պայմաններում քրիստոնյայի վիճակն իրապես բարդանում է, քանզի քրիստոնեական վաղ շրջանում քրիստոնյաների հանդեպ ֆիզիկական հալածանքներն այսօր փոխարինվել են հոգեմտավոր հալածանքներով, որոնք հաճախ նույնքան կործանարար են: Կարո՞ղ է արդյոք անկյալ քրիստոնյան ներկա իրավիճակը բերի որպես արդարացուն քրիստոնեական արժեքներից, Աստծուց իր հեռացման և հավատքի, հոգևորի հանդեպ նկատվող իներտության ու պասիվության: Ղովտի պատմությունը Հին Կտակարանից ասում է, որ ո՛չ: Ղովտն իր ընտանիքով ապրում էր մեղսագործություններով լի, նույնասեռականությամբ, անբարոյականություններով պղծված Սո-

դոմ քաղաքում, սակայն իր ընտանիքով անգամ այդպիսի պայմաններում պահել էր Աստծո և Նրա խոսքի հանդեպ հավատարմությունն ու նախանձախնդրությունը (Ծմնդ. 19.1-3,6, 14, 16):

Արդի աշխարհի փորձություններին, գայթակղություններին դիմակայելու համար հարկ է շարունակել ապրել հավատքով, աղոթքով, պահեցողությամբ: Խոսքն ամենևին էլ այն մասին չէ, որ պետք է ճգնակեցությամբ զբաղվենք, թողնենք մեր առօրյան և ճգնավորներ դառնանք: Դրա համար առանձին մարդիկ իրենց հատուկ կոչումն ունեն: Սակայն մենք չպետք է մոռանանք, որ հավատքի ջերմությունը կենդանի է մնում սիրո և աստվածապաշտության զորությամբ, և մեր մտադրություններում ու ներաշխարհում միշտ առաջին տեղում պիտի լինեն բարձր արժեքները, և սրանցից վեր՝ Աստված: Այս կարգավորությունը մեծապես կօգնի՝ հաղթահարելու փորձությունները և ամուր պահելու քրիստոնեական կյանքով ապրելու վճռականությունը:

#### **4. Ինչու՞ է սերը համարվում առաքինությունների աղբյուր:**

Պողոս առաքյալն ասում է, որ անգամ հզոր հավատքն առանց սիրո ոչինչ է (Ա Կորնթ. 13.1-3): Նրա ուսուցումով հավատի, հույսի և սիրո համեմատության մեջ սրանցից մեծագույնը սերն է: Սերը բոլոր առաքինություններից համարվում է մեծագույնը, բայց այն նաև կարելի է համարել առաքինությունների աղբյուր, որովհետև առաքինությունները գործվում են սիրով: Հին Կտակարանի բազում պատվիրանները Նոր Կտակարանում Քրիստոս անփոփեց ընդամենը մեկ պատվիրանի մեջ՝ սիրեցեք միմյանց: Մերձավորների հանդեպ սիրուն Քրիստոս ավելացրեց նաև թշնամիների հանդեպ սերը, որպեսզի մարդու սիրո ամբողջական արտահայտումը կատարյալ լինի: «Սերն է օրենքի լրումը», - ասում է առաքյալը (Հռ. 13.10): Այսինքն՝ սիրո դրսևորումով արդեն իսկ կատարվում են բոլոր պատվիրանները, աստվածադիր օրենքները:

Սերն ավելի մեծ է հավատից ու հույսից, որովհետև սրանք վերանալու են, իսկ սերը մնալու է: «Բայց արդ, մնում են հա-

վատ, հույս, սեր. սրանք՝ երեքը. և սրանցից մեծագույնը սերն է» (Ա Կորնթ. 13.13): Հավիտենության մեջ հավատքն իր տեղը զիջելու է տեսությանը, իսկ հույսը՝ տիրապետությանը, քանզի ինչին որ հավատում ենք, արդեն տեսնելու ենք, իսկ ակնհայտ իրողությունը հավատի կարիք չի զգում: Ինչի հանդեպ որ հույս ենք տածում, այն ստանալու ենք, իսկ հույսը դադարում է հուսացվածի տիրապետությամբ: Միայն սերն է, որ մնալու է, և սիրով է, որ շարունակելու ենք միանալ Աստծուն, Ում մասին Սուրբ Գիրքն ասում է. «Աստված սեր է» (Ա Հովհ. 4.8, 16):

### **5. Ներելու կարողություն ունենալը և՞ առաքինության նշան է: Ներելը սիրո առկայության նշան է:**

Եթե առաքինությունը սահմանում ենք որպես բարոյական բարձր չափանիշների համապատասխան վարմունք, ուրեմն, ներելը ևս առաքինություն է: Ներելը նաև քրիստոսանմանության լավագույն ճանապարհներից է, որովհետև Քրիստոս ներեց մարդկանց մեղքերը, այդ մեղքերն Իր վրա վերցրեց և չարչարանք կրեց ողջ մարդկության փոխարեն:

Ներելը սիրո արտահայտության նշան է: Ինչի՞ համար ենք մենք ներում: Ներում ենք, որովհետև այս կամ այն չափով սիրում ենք նրան, ով մեր դեմ մեղք է գործել, սակայն ներում ենք նաև, որպեսզի մեղքն արգելք չլինի այդ անձի հետ հարաբերությունների վերացման կամ թշնամության հաստատման: Քրիստոս ներեց անգամ Իրեն խաչողներին (Ղուկ. 23.34)՝ սովորեցնելով, որ կարելի է ներել՝ անգամ խաչված լինելով: Ներման բացակայությունը մարդու մեջ առաջացնում է ժխտական զգացումներ՝ քեմ, վրեժխնդրություն, բարկություն, որոնք ավելի ծանր մեղքեր կարող են բերել: Մինչդեռ ներելը մարդուն հեռու է պահում մեղքերից, նրան նմանեցնում Քրիստոսին և օգնում մեղանչած մարդկանց ևս դարձնել ավելի լավ ու առաքինի:

**6. Ձեր կարծիքով ի՞նչ առաքինություններ են պակասում ժամանակակից մարդուն և հատկապես հայ մարդուն:**

Ժամանակակից մարդուն ու նաև հայ մարդուն պակասող առաքինություններից է ողորմությունը: Չնայած, կարելի է ասել, որ այս առաքինությունը հավանաբար միշտ էլ պակասել է մարդկության կյանքում: Դեռևս Յին Կտակարանում Աստված մարգարեի միջոցով ասում է. «Ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ» (Օսեե 6.6): Այս բառերը Նոր Կտակարանում կրկնում է նաև Քրիստոս (Մատթ. 9.13, 12.7): Ողորմության պակասն է, որ աշխարհն այսօր կանգնեցրել է ճգնաժամի, աղքատության, դժվարությունների առաջ: Ոմանք ասում են, որ դրա մեղավորը ներկա կապիտալիստական հասարակարգն է, որը հնարավորություն է տալիս ձեռներեցության հմտությունը կամ ճարպկությունն ունեցող մարդկանց ունեցվածք կուտակել և այն պահել իրենց պահեստներում: Այդ ունեցվածքի պահպանումն է, որ վնասում է աշխարհին, մինչդեռ դրա տարածումը կարող էր շատ ցավեր դարձանել: Այս կարծիքի մեջ ճշմարտության բաժին կա, քանի որ այսօր ամբողջ աշխարհի հարստության ութուն տոկոսը գտնվում է ողջ մարդկության քսան տոկոսի ձեռքում, և նրանք տնօրինում են իրենց մոտ կուտակված աշխարհի այդ հարստությունը՝ ըստ իրենց անձնական հաճույքների կամ հայեցողության: Սակայն կապիտալիզմի ջատագովներից մեկն ասում է, որ այս հասարակարգը ստեղծված կացության մեջ որևէ մեղք չունի. այն լավագույնս կատարում է իր առաքելությունը արտադրության, աշխատանքի կազմակերպմամբ, դրանց արդյունքների ապահովմամբ: Տնտեսական համակարգը որևէ կապ չունի բարոյականության հետ, իսկ ազահությունը, նյութական անենից ավելի արժևորելը մարդկանց մոլորություններն են, որոնցից Եկեղեցին պետք է իր քարոզներով հեռու պահեր և հորդորեր առավել շատ ողորմության գործեր կատարելու: Ուրեմն, ներկա իրավիճակը ոչ թե կապիտալիզմի մեղավորությունն է, այլ Եկեղեցու առաքելության ձախողման հետևանք է, որը չի կարողացել ողորմության, մարդասիրութ-

յան, աջակցության հորդորները ցանկալի չափով հասցնել մարդկանց:

Գուցե և եկեղեցին պատասխանատվության իր մեծ բաժինն ունի ներկա անցանկալի իրողությունների առնչությամբ: Սակայն մարդիկ անգամ ողորմության, նյութական շռայլություններից հեռու մնալու շարունակական խրատների պարագայում կարող են ականջալուր չլինել և անգամ մեծապես վնասել խրատողներին: Սուրբ Հովհան Ոսկեբերանի օրինակը ցույց է տալիս, թե ինչ կարող է լինել, երբ երկրի ազդեցիկ դեմքերին բացեիբաց մեղադրում են և հորդորում հարստությամբ չտարվել, այլ ողորմության գործեր անել: Հովհան Ոսկեբերանի հորդորները նրա դեմ լարեցին Արկադիոս կայսերը և հատկապես Եվդոքսիա թագուհուն: Ի վերջո, սրբին հալածեցին և աքսորեցին: Աքսորավայր գնալու ճանապարհին Սուրբ Հովհան Ոսկեբերանը եղավ Հայաստանում և աքսորողների ծաղրի, հալածանքների տակ ճանապարհին կնքեց իր մահկանացուն՝ ասելով իր հայտնի խոսքերը. «Փառք Քեզ Աստված, փառք Քեզ, ամեն ինչի համար փառք Քեզ»: Սուրբ Հովհան Ոսկեբերանի այս փառաբանությունն ամեն օր կրկնվում է ժամերգությունների ընթացքում, այն անբաժան մաս է կազմում ժամերգության մաղթանքի: Այս սրբի օրինակը ոչ թե պետք է վախեցնի հոգևորականներին լռելու երկրի ազդեցիկների ու հարուստների առջև, այլ նմանվելու նրան առաքինությունների հորդորով՝ ուղղված բոլոր մարդկանց՝ և՛ ունևորներին, և՛ կարիքավորներին:

Գաղտնիք չէ, որ մեր երկրի շատ ազդեցիկ մարդիկ, պետական պաշտոնյաներ, պատգամավորներ մեծահարուստ կամ մեծահարուստ ընտանիքների մարդիկ են: Սիրով պետք է նրանց քաջալերել, որպեսզի կատարեն կամ շարունակեն կատարել ողորմության գործեր՝ ողորմության մեջ ժլատություն չանելով, որովհետև հարյուրին կամ հազարին օգնելու կարողություն ունեցողի կողմից ընդամենը մեկին կամ տասին օգնելը ժլատություն է: Հարուստ լինելը մեղք չէ, Աբրահամը ևս հարուստ էր, Հոբ Երանելին ևս հարուստ էր, փարավոնի խորհրդական դարձած Հովսեփը ևս հարուստ էր, Քրիստոսի հետևորդ և Տիրոջ գերեզմանի քարանձավը գնած Հովսեփ Արիմաթացին ևս հարուստ էր: Աստված ոմանց տալիս է

հարստություն ունենալու հաջողություն՝ նրանց բարի լինելու համար, ոմանց էլ, ովքեր չար կամ անհավատ են, հնարավորություն է տալիս հարստություն կուտակելու, որպեսզի դատաստանի օրը, երբ նրանք դատապարտվեն, չասեն Աստծուն, թե՛ ինձ ի՞նչ էիր տվել, որ Քեզ հավատայի կամ սիրեի: Ամեն դեպքում նկատի ունենալով ողորմության առաքինության պակասն աշխարհում՝ պետք է ավելի բարձր հնչի եկեղեցու քարոզը՝ ողորմության գործեր անելու, իսկ ողորմություն անողներին հիշեցվի Քրիստոսի հորդորը. «Զգու՛յշ եղեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առջև չանեք, որպես թե այն լիներ ի ցույց նրանց. այլապես վարձ չեք ընդունի ձեր Հորից, որ երկնքում է: Այլ երբ ողորմություն անես, փող մի՛ հնչեցրու քո առջև, ինչպես անում են կեղծավորները ժողովարաններում և հրապարակներում, որպեսզի փառավորվեն մարդկանցից: Եշմարիտ են ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը: Այլ երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես» (Մատթ. 6.1-4):

ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՑԻՎ

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ,  
ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ,  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Սրբագրիչ՝ Մարտուն սարկավազ Շահվերդյան  
Էջաղրումը՝ Արմանուշ Վարդապետյանի

Թուղթ՝ օֆսեթ 80 գր., չափսը 60x84 1/16,  
ծավալը՝ 27.75 տպ. մամուլ, տպաքանակը՝ 300: